910.4(38)
F-36

21/27

VII 27/27

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԼԵՐՈՅՆ ԸՆԴՀԱՆՐԱՅԻՆ

ՑԵԼԼԸԴԸ

ՀԱՏՈՐ Գ.

2004

2004

910.4(38)
Բ-36
2242
3Ա3-ԱՂ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԼԵՐՈՅՆ ԸՆԴՀԱՆՐԱՅՆ

ՅԵԼԱԳՈՒԱ

ԳՐԵԼ ԴԻՄԱԹՈՒԹԵԱՄԲ

Ի Յ. Յ. ՊԸՐԹԵԼՅԱՆԵԱՅ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԼ

Ի Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

1006
27843

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1844։ ԱՄՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՀ — ԽՍՀՄ

9(38)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԸՆԴՐԸՍԵՐԱՅ

ՅԵՂԼԸԴԸ

ԳԼՈՒԽ ԻԹ

Վասն մատենադարանին աթենացւոյ ուրուն, և խմաստասէրական մատենից։

ՅԱՌԱՋ քան զամն իբր երկերիւր Պիսիստրատ տայ կառուցեալ էր մատենադարան աշխարհամուտ, զոր ապա Պտղոմէոս բարձեալ տարաւ զայն 'ի Պարսս [1]։ Իսկ յաւուրս իմ բազումք յաթենացւոց ժողովեցին մատեանս, այլ փարթամագոյն քան զամենեցուն Լաւկիդեայն էր ժողով մատենից [2], զորս առ 'ի հարցն էր ժառանգեալ. և արժանի իսկ էր ժառանգութեանն, քանզի գիտէր զյարգ նորա։

[1] Աւ. Գելլ. գիրք Զ. գլ. 17։ [2] Աթեն. գիրք Ա. գլ. 2. կէտ 3։

Ի մոսանեն անդր սաղմութիւն ընդ բերկրութեան կալաւ զիս. զի կայի ի մէջ գերահանձար արանցն Աղլադայ, յաւէժ կենդանեացն ի զիրս իւրեանց՝ որ շուրջ զինեւ զետեղեալ կային։ Ընութիւն նոցա յաձախեր յիս զմեծարանս, որպէս առաջի թագաւորաց ամենեցուն երկրի ի մի վայր ժողովելոց՝ ոչ այնպէս պատկառէի։ Սուղ ինչ զկայ առեալ, ասեմ. Աւաղ, ի քանի զիտութեանց վերջացեալ գտանին Սկիւթք։ Այլ ապա յաձախ եւս հարկ եղեւ ինձ ասել, թէ քանի զիտութիւնք են անօգուտք մարդկան։

Ոչ զամենայն նիւթոց, յորս զրեին մատեանք, ձառեմ աստանօր. մարդ այծենի կամ կաշի խոյոյ ի սկզբանն[1], և ապա ազգ ազգ կտաւոց ի կիր արկան[2]. և յետ այնորիկ յաձախեաց թուղթ պրտուեայ, որ են կուրդ նեղբինք եղէգնաձև բուսոյ՝ որ անձն յաղտիւրս Աղիպտոսի, կամ՝ ի ձահիճս թողեալս յոզողմանէ Ալեղոսի։ Ցոմն գալարածոյ յօրինեալ յայնմանէ, կախեն պիտակ ի ծայրին՝ զրաշմեալ ի նմա զանուն մատեանին։ Ի մի եւեթ դէմ պրտուոյն զրեն, բաժանեալ զայն առ հեշտի ընթեռնլեաց յերկս կամ ի գաւազանս*։

[1] Երոդոտ. գիրք Ա. գլ. 58։

[2] Պլին. գիրք ԺԳ. գլ. 11. հատ. 1. էջ 689։ Քէրլեաս, հաւաք. հնութեանց, հատ. 5. էջ 76։

* Որպէս է սեւանել ի ձեռագիր մատեանսն որ կան ի Հերկուլանան։

Օրինակողք արուեստիւ՝ պարապէն հանապազ՝ի գաղափարել զգիրս, որ անկանին՝ի ձեռս նոցա. և այլք դարձեալ առ՝ի վարժս հմտութեան վաստակեն՝ի նոյն։ Գեմոսթենեայ, որպէս ինքն իսկ ասէր ցիս, ութիցս զվէպսն Լուկիդեդեայ գաղափարեալ էր՝ առ՝ի կրթել՝ի տիպս կերպարանաց բանից մատենագրին[2]։ Այսպէս բազմանան օրինակք, այլ վասն ծախուցն[3] քանզի ձեռագիրքք են՝ ոչ երբէք յանձնին՝ի ձեռս ամենեցուն, նոքին իրի և յամի ծաւալին զիւտութիւնք։ Աստեանք տարաշխարհիկք, և որք զդժուարահասանելեաց հնութեանց՝ դժուարագիւտք են։ Պղատոնի, թէպէտ և ծաւնոթք բազումք էին նորա յոտալիա, հաղիւ զգիրս ինչ խմստասիրականս եղև՝ի ձեռս բերել, ընդ երից հանուօտ հնից Փիլոզայոսի հաստուցեալ հարիւր մնաս[3]։

Դժուարհնարաց ամենացուց ոչ զնոյն հոգս մարթի է յանձին բերել, և ոչ ձեռն նոցա բաւական է՝ի ծախսն։ Այսորութիւն է նոցա հաւաքել զգիրս ևեթ զբօսանաց, յորոց և՝ի գաւառս մերձաւորս յղէն, է զի և առ գաղթականս Հայոց բնակեալս առ ծովեզերքք Լաբսինեանն Պոնտո-

1 Պղատակ. գիրք Է. գլ. 33. յոգ. 211։

2 Գուկիան. ընդդէմ ագիտ. յոգ. Ա. հմ. 3. էջ 102։

* Ի մեռանել Սպարտոպ պէսայ աշակերտին Պղատոնի, Արիստոտել ասացաւ զգիրս նորա՝ որ ասկաւ ինչ էին թաւալ. երից քանդարաց։ (Դիոգ. լայերտ. գիրք Խ. յոգ. 80. Աւլ. Գելլ. գիրք Գ. գլ. 17։)

3 Դիոգ. լայերտ. Աբրիամ գիրք Ը. յոգ. 85. Աւլ. Գելլ. գիրք Գ. գլ. 17։

սի՝։ Բ։ իւն մատենագրութեան յաձախեաց զշա-
հաւետութիւն վաձառականութեան մատենից,
և կրթեցան Յոյնք յամենայն ազգի ազգի տե-
սակս բանասիրութեան. որպէս՝ի միտ առնուլ
է՝ի տեղեկութեանցն, զոր զմատենադարանէն
Լուկղիդեայ տաց։

Ակիզբն յիմաստասիրականացն առնեմ մատե-
նից։ Հնագոյնք՝ի նոսա էին յաւուրց Սողմնի,
որ յառաջքան զամն իբր երկերիւր և յիսուն պայ-
ծառանայր։ Հելլենաց՝ի սկզբանն էին դիցա-
բանք, և իմաստասէրք առ նոսա ոչ էին. քանզի
քերթողաց զհետազօտութիւն էիցս անտես ա-
բարեալ, զառասպելս և զնանրահաւատ կրօնս տի-
բապետեալս ռամկին հաւաքեալ՝ի տարս իւրեանց
պանծացուցանէին։ Բ։ յաւուրս օրէնսդրիս և
՝ի ժամանակս յիմաստասիրդի ողբմպիադին* յանկար-
ծակի ելին կերպարանափոխս եղեն միտք. Թաղէս
և Պիւթագոր արկին զհիմունս իմաստասիրու-
թեան իւրեանց. Կադմոս միլետացի գրեաց ար-
ձակ բանիւ զպատմութիւն. Թէոսպիս զառաջին
կերպարանն ետ ողբերգութեան, և Սոսարիոն
զկատակերգութեան։

Թաղէս միլետացի՝ի Յոնիոյ, մի յեօթանե-
ցունց իմաստնոցն Լուլադայ, ծնաւ յառաջնումն
ամի երեսնեւրորդի հինգերորդի ողբմպիադին** ։

1 Քանոնք. արշաւ. Կիւր. գիրք Ի. էջ 412։
* Իբր 580 ամաց՝ն. Ք։
2 Ագոզոդ. առ. Դիոդի.
Նեայ լայերտ. գիրք Ա. յոդ. 38։ Ֆրոմնի տարեգր. տասակ. հտ. 3. էջ 56։
** Իբր 640 ամաց՝ն. Ք։

Այլոց նախ փառօք զպարտս պաշտամանցն, յորս աղնուականութիւն և խնամատութիւն ածին զնա. և ապա հարկ վարժից ստիպեաց զնա ուղևորել ընդ ազգս օտարս։ Այս 'ի զառնալն իւրում տուեալ զանձն բոլորովին 'ի խուզարկութիւն բնութեան, հիացեալ զԱյլազադ՝ գուշակելով զնուաղումն արեգական[1], և կրթեաց զնա յերկրաչափական և յաստեղաբաշխական մեկայութիւնս՝ զորս ուսեալն էր Յոգիստոս[2]։ Այլեաց նա ազատ, վայելեաց խաղաղութեամբ 'ի համբաւ իւր, և գոհութեամբ զբաւեաց զկեանս*։ Այս 'ի մանկութեան ստիպեալ 'ի մերկ իւրմէ ամենանալ, և ապա յետ բազում ամաց դարձեալ 'ի նոյն յորդորեալ, զառաջինն պատճառեցաւ՝ թէ չև ևս հասեալ էր ժամ նորա, և ապա՝ զի տարաժամ էր[3]։

Որպա բազում պատասխանիք պատմին, զորս չկամիմ անյիշատակ առնել. զի զկերպարանս իմաստասիրութեան նորա յանդիմանն առնէն, և ցուցանեն՝ թէ խնամատունք ժամանակին քանի Ճգզրտիւ կրռէին հարցուածոց զպատասխանիս։

Օ՛ինչ գեղեցկագոյն. — Տիեզերքս աստուածագործք։ — Օ՛ինչ ճարտարագոյն. — Այրն բոլանդակիչ ամենայնի։ — Օ՛ինչ հզօրագոյն.

[1] Երոգոտ. գիրք Ա. գլ. 74։ Կիկերո. յոլ. ըղձ. գիրք Ա. գլ. 49. հտ. 3. էջ 41։ Պլին. գիրք Բ. գլ. 12. հտ. 1. էջ 78։

[2] Դիոգ. լայերտ. գիրք Ա. յոգ. 14 և 27։ Պայլէի պատմ. աստեղաբաշխ. Նախնեաց էջ 196 և 489։

* Իբր 548 ամաց Ն. Ք։

3 Դիոգ. լայերտ. գիրք Ա. յոգ. 26։

— Հարկն ամենայաղթ։ — Օ՜ ինչ դժուարա-
գոյն։ — Ո՛անաչեղ զանձն։ — Օ՜ ինչ դիւրագոյն.
— Խրատեալ զայլս։ — Օ՜ ինչ դժուարադէպ։ —
Բռնաւոր հասեալ 'ի ծերութիւն։ — Օ՜ ինչ խը-
տիր ընդ կեանս և ընդ մահ. — Լաւ ոչ ինչ։ —
Ինդէր ապա չմեռանիս. — Օ՜ ի նոյն է կեալ և
մեռանել։ — Օ՜ ինչ 'ի թշուառութեան սիր-
փումն. — Թշնամի թշուառագոյն։ — Օ՜ ինչ առ-
անստգիւտ կեանս կարևոր. — Ընտնեալ զոր յայլս
ոք պարսաւիցէ։ — Օ՜ ինչ առ երանելի կեանս
պէտք. — Ո՛տրմին առողջ, զոյգ 'ի լիութիւն բա-
ւականի, միտք հրահանգեալ', այլոլեքն հանդերձ։

Ոչիք ինչ բազմահոգակ քան զանուն Պիւթա-
գորի, և չիք ինչ անծանօթ քան զհանգամանս
կենաց նորա [2]։ Լրեւի աշակերտեալ նորա 'ի մանկ-
ութեան առ ոտս Թաղեսի և Փերեկիդեայ սիրի
բացոյ, և ասպա կացեալ նորա ընդ երկար Յդիպ-
տոս, և ընդ վերնագաւառս Ասիոյ ուղևորեալ,
կամ՝ տեղեկացեալ որոց անդ գիտութիւնքն բար-
գաւաճէին։ Խորհուրդք կրօնիցն եգիպտացւոց
խորինք, և երկար և ձիգ մտածութիւնքն իմաստ-
նոցն արևելեայց յիւրեանս ձգեցին զեռանդուն
միտս նորա, և զանցեղլի բարս նորա խստակրօ-
նութիւն՝ զոր յոլովագոյնք 'ի նոցանէ յանձին բե-
րէին։

[1] Դիոգ. լայերտ. գիրք Ա. յոգ. 35, 36 եւ։
[2] Նոյն անդ գիրք Ը. յոգ. 1։ Փորփիկ. մասանն. յուն. հա. 1. էջ 455։ Փրոբ. պատմ. ի. մասասան. հա. 1. էջ 994։

Լդառնալն իւրում Եկիա զՀայրենիս իւր նուա-
ՀՇալ 'ի Պողկիրատայ բռնաւորէ [1]. և տարադէմ
խոյս տուեալ 'ի ծառայութենէ, բնակեցաւ 'ի
Կրետան յԱտալիա։ Լչ էր յայնժամ Կրետան քա-
ղաք աւադելի. քանզի բնակիչք նորա ընդհանրք
'ի լսկրեցւոց՝ վերջացեալ էին 'ի սպառ յիմնստից
քաջութեան, և ոչ այլ ինչ թշուառութեան ի-
բեանց զտեալ սիփիւռն՝ զառաջանէին 'ի զեղ-
խութիւն։ Զեռն էարկ Պիւթագոր 'ի կանգնել
զկրաանս նոցա, զարձուցանելով յառաջին առա-
քինութիւնն։ Լպրատք նորա և օրինակք այնպէս
վաղվաղեցին զնորոգումն ուղղութեան ազգին,
մինչև կամանց կրետոնացւոց յորդորեալ 'ի Հար-
տարեսութենէ նորա՝ նուիրել 'ի մի 'ի մեհենից
զմեծագին զարդս իւրեանց, որոյ պՀնէին [2]։

Լչ ոչ շատացեալ յաղթանակաւն այնուիկ,
խորհեցաւ մեանջենաորել զայն, վարժելով ըզ-
մանկտին յիմնստս՝ որ զյաղթանակն զայն ետուն
կանգնել նմա։ Ո՞մնաւ ածեալ զի չիք ինչ հզօ-
րագոյն զօրավիգն պետութեան քան զուղղու-
թիւն բարուց, և իւրաքանչիւր ումեք՝ քան զՀրա-
ժեշտ 'ի խնդրելոյ զիւրն, երկնեաց կարգս ինչ
կրթութեան, որով հոգի 'ի զգայութեանցն ծա-
ռայութենէ ազատացեալ՝ յարդարի ընդունակ
Հնմարտութեան. և վասն այն զՀռչակաւոր ա-
զանդն սահմանեաց, որ մինչև 'ի ժամանակս յայ-

[1] Սարաք. գիրք ԺԴ. ԿԷ Ը. յոդ. 3։
638։ Դիոդ. լսյերբա. գիրք [2] Յուսեբի. գիրք Ի. գլ. 4։

սոսիկ տեսէ՝ փառաւորեալ 'ի մէջ աղանդոց իմաստասիրաց [1], զորմէ յետոյ լցցին մեզ բանք [*]։

Յերձ 'ի վախճան կենաց իւրոց յալեւորեալ ծերութեան՝ վիշտ եղև նմա տեսանել զվաստակս իւր եղծեալ զրեթէ 'ի սպառ 'ի նախանձուէ գլխաւորաց կրօտոնացուց։ Այլ ստիպեալ 'ի փախուստ՝ շրջեցաւ քաղաք 'ի քաղաքէ [2], մինչև մանհուն զբաւ արարեալ թշուառութեանց նորա՝ լռեցոյց զնախանձ, և հատոյց անուան նորա ըզփառ՝ զոր յիշատակ հալածանաց նորա տարապայման յաձախեաց։

Յոմիականն վարժարան սկիզբն 'ի Թաղեսէ էառ, իտալականն 'ի Պիւթագորայ. յերկուց աստի և այլք կազմեցան, և արք մեծամեծք յամենեսին կացին։ Որոց հաւաքեալ Այկղիդեայ զգրուածսն, բաշխեալ էր յայլ և այլ աղանդս իմաստասիրութեան։

Զհետ ձառից ինչ Թաղեսի, որ Թերևս չիցեն իսկ նորա [3], զետեղեալ կայցեն մատեանք այնոցիկ՝ որոց զվարդապետութիւն նորա առանդեալ էր միմեանց, յաջորդելով յառաջնորդութիւն վարժարանին։ Որք էին Անաքսիմանդր [4], Անաքսիմէն [5], Անաքսագոր՝ որ նախ զմնաստասիրու-

1 Պղատ. յՊ. հաս. գիրք ժ. հա. 2. էջ 600։

* Ի գլուխն հէ։

2 Պորփիւր յՊ. վարուց Պիւթագորայ. էջ 51։

3 Պլուտ. յՊ. պատմ. հա. 2. էջ 403։ Դիոդ. լայերտ. գիրք Ա. յոգ. 23։

4 Դիոդ. լայերտ. գիրք Բ. յոգ. 2։ Սուիդ. 'ի բառն Ա՛նաքսիմ.

5 Փաբրիկ. մատեն. յուն. հա. 1. էջ 814։

թիւն ուսոյց Ա՛թէնա՝, և Ա՛ղբեղայոս վարժապետ Սոկրատայ[2]։ Օ՛ղջինելութենէ աշխարհի, զընտութենէ էից, զերկրաչափութենէ և զաստեղաբաշխութենէ Ճառէն մատեանք նոցա։

Ա՛յլ զհետ զայլոց Ճառք զրեթէ առ հասարակ բարոյականք. քանզի Սոկրատ և աշակերտք նորա առաւել՝ի տեսութիւն բնութեան մարդոյ քան տիեզերաց պարապեցին։ Սոկրատայ չիք այլ ինչ զրուած, բայց միայն առ Ա՛ստղն երգեալ օրհնութիւնն, և առակք ինչ Լասովպոսի տաղաչափեալք՝ի նմանէ՝ի բանտին[3]։ Գոտի առ Լեկղիդեայ զերկոսին զայսոսիկ զրուածս նորա, և որ ինչ յաշակերտաց նորին երկասիրեալ Ճառք. որ զրեթէ առ հասարակ զրուցատրութեան պայմանեաւ յօրինեալ են, և Սոկրատ՝ի նոսա նախաբարբառ. զի առ՝ի բովանդակել զվարդապետութիւնս նորա զրեցան Ճառքն։ Ցեսի զզրուցատրութիւնս Պղատոնի, և զերիցագոյնս քան զնոսա զԱ՛ղեքսամենեայ[4], զԱ՛ռիստոտենի, զԼ՛սեոտիոնի, զԼ՛սքինեայ[5], զԱրիստոնի[6], զՎիմոնի[7], զՊղատկոնի[8], զՎիմիա-

1 Արիստոտ. յղ. հոգւոյ գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 620։ Կգ. ազէքս. յաՃախապատ. գիրք Ա. էջ 352։

2 Դիոգ. լայերտ. գիրք Ա. յօդ. 16։

3 Պլուտ. յղ. զօրութեան Ազէքս. հտ. 2. էջ 328։ Սիկերօ. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 16. հտ. 1. էջ 294։ Պլատ. ի Փեդոն. հտ. 1. էջ 60։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 42։

4 Արիստոտ. առ Ա՛թենէոսի գիրք ԺԱ. գլ. 15. էջ 505։

5 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 61։ Ա՛թէն. գիրք ԺԳ. էջ 611։

6 Դիոգ. լայերտ. անդ. յօդ. 121։

7 Նոյն անդ. յօդ. 122։

8 Նոյն անդ. յօդ. 124։

սայ [1], զԱՐԵԲԵայ [2], զՓԵՂՈՆԻ [3], և զԱԿՂԻԴԵայ [4] որ 'ի Մեզարա զվարժարանն կանգնեաց, ուր արդ Աբուղիդես աշակերտ նորա վարժապետէ։

Յիտալական վարժարանին բազմազոյնք յոյժ կացին մատենագիրքք քան 'ի յոնիականին [5]. զի բաց 'ի Ճառից ինչ, որ համարին Պիւթագորայ՝ այլ ոչ հաւաստեաւ [6], էին Ակղիդեայ մատենադարանին գրեթէ ամենայն մատեանք իմաստասիրաց՝ որք հետեւողք եղեն աղանդոյ նորա, կամ փոփոխմունս ինչ արարին 'ի նմա։

Ալեքսի որ Անդեդոկղէսն էր ակրագանդացի, որում բնակիչք մեծի այնր քաղաքին մատուցին զԹագ, իսկ նա լաւագոյն համարեցաւ հաւասարութիւն 'ի նոսա հաստատել [7]։ Ա Ի՛նակեալ հանՃարոյ՝ որ զնա մերձ Հռոմերի կացուցանէր, գեղով բանաստեղծութեան սքնեաց զկարի իսկ խնդալի Ճառս. և այնքան հռչակեալ, մինչև յողիմպիական խաղս զՅունաց ամենեցուն յինքն ձգել զաւա [8]։ Ասէր նա ցակրագանդացիս, թէ դուք յօրանայք 'ի զրգանա՝ ոչ թէ առ վաղիւ մեռանելոց իցէք, և շինէք ապարանս՝ իբր թէ անմահք իցէք [9]։

1 Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 124։

2 Նոյն անդ յօդ. 125։

3 Նոյն անդ յօդ. 105։

4 Նոյն անդ յօդ. 108։

5 Յամբղիք. վարք Պիւթագորայ. էջ 215։

6 Հերակղ. առ Դիոգինեայ լայերտ. գիրք Ը. յօդ. 6։ Պլուտ. յՍ. զբուլթեան Ա. զէքս. հտ. 1. էջ 729։ Փարբիկ. հտ. 2. էջ 328։ Ղուկիան. մատեն. յուն. հտ. 1. էջ 460։

7 Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 72։ Արիստոտ. առ Նոմին յօդ. 63։

8 Դիոգ. լայերտ. անդ. յօդ. 66։

9 Նոյն անդ. յօդ. 63։

Որպիսի որ և Յակոբաքամն էր, այր հանճարեղ հանգոյն յոլովագունիցն 'ի սիկեղացւոց[1], ընդ որ Հերոն արքայ ծանրացաւումն եղև վասն տգեղ ինչ բանից առաջի Թագուհւոյն խօսելոյ[2], և որ 'ի Թշնամութիւն իւր զայլ խիստաւէրս ձգեաց՝ նշանակելով զգաղտնիս աղանդոց նոցա 'ի կատակերգութիւնս իւր[3]։ Որպիսի որ Ոկեզան էր լուկանացի և Ցիմէոն լակրեցի, մատենագիրք ոչ յոյժ նշանաւորք՝ այլ ներհունք և համառօտախօսք քան զառաջինն։ Որպիսի որ Աբքիղան էր տարենտացի, հռչակաւորն մեքենականին կարևոր հնարագիտութիւնք[4]. որպիսի որ Փիլոդայան էր կրոտոնացի, մի յառաջնոցն 'ի Հոյոյ՝ որք համարեցան զերկիր հոլովական զտիեզերքս[5]. որպիսի որ Յոդրքան էր, զոր բազում անգամ տեսի առ Պղատոնի, և էր նա երկրաչափ և աստեղաբաշխ և բժիշկ և օրէնագիր միանգամայն[6]։ Լուեմ զԱկիսանոս և զԱրքիմէն և զԱպպասոս և զՀոյլը նախնեաց և արդեաց, որ ամենայնք կեցեալ՝ յետ մահուն իւրեանց պայծառացան։

Աւ միւմ 'ի դպանաց անտի զկոյ առի, զի էր 'ի նմա կարգ իմաստասիրական մատենից գրելոց 'ի կանանց, որ բազմագոյնք 'ի նոցանէ զՊիւ-

1 Սիկեր. տուսկուլ. գիրք Ա. գլ. 8. հա. 2. էջ 238։ Նոյն յզ. քաջ Ճարտ. գլ. 12. հա. 1. էջ 345։

2 Պլուտ. առակ. հա. 2. էջ 175։

3 Յամբղիք. վարք Պիւթագորայ. գլ. 36. էջ 215։

4 Դիոդ. լայերտ. գիրք Ը. յօդ. 83։

5 Նոյն անդ. յօդ. 85։

6 Նոյն անդ. յօդ. 86։

թագորայ ունին զաղանդն [1]։ Զատի անդ զնառս իմաստութեան Պերիկտիոնեայ [2], յորում բնա-զանցութիւն լուսատարագոյնս փայլէ. և որպէս վկայեացն ինձ Լուկղիդէս, մեծարէր զայն յոյժ Քրիստոսէ, և կարեւոր համարէր առնուլ անտի տեղեկութիւնս զբնութենէ էից և զորակու-թեանց նոցա [3]։

Լոյս յաւել զարձեալ Լուկղիդէս, զի յիտալա-կան վարժարանէն առաւելագոյն ծաւալեցաւ լոյս ընդ աշխարհս քան 'ի յունականէն, այլ ապա ծայ-լայեալ զառաջաւ 'ի մերոյս թիւնս՝ յորոց պարտ էր ասասի նորա զգոյշ կալ։ Զի երկոքին արք մեծամեծք աղանդապետք կացեալ, երկաքանչիւր զնկարագիր հանձարոյ իւրեանց զդրոշմեցին յա-զանդն իւրեանց։ Վանգի Լուսդէս խորագնին էր մտաք, և եղէն նորա աշակերտք՝ որք պարզ տե-սութեամբ խնամատար եղէն բնութեան. և վախ-ճան արարին աղանդոյ նորա, կացեալ 'ի վարժա-բանէ նորա Նեքսագոր ողջմտագոյնս յաստուա-ծաբանութեան, և Սոկրատ ամբիծ 'ի բարոյա-կանին։ Իսկ Պիւթագոր եռանդուն մտաքն զաս-տուածարերելոց ոմանց հաստատեաց աղանդ, որք 'ի սկզբանն ոչ այլ ինչ տեսին ընդ տիեզերս՝ բայց համեմատութիւնս և ներդաշնակութիւնս, և

1 Յամբղիք. վարք Պիւթա-գորայ էջ 218։ Փարրիկ. մա-տենադ. յուն. հատ. 1. էջ 524։

2 Ստոբ. յոգ. առաքինու. ճառ. 1։ Փոտ մատենադ. էջ 373։

3 Փրանկ. Պատրիկ. հակա-ճառ. ճեմարկ. հատ. 2. գիրք Բ. էջ 197։ Ընտ. Քոնթի բացատր. Պարմն. էջ 20։

ապա կեղծեաց 'ի կեղծիս մնացածինս անցեալ, զեղեկանն կանգնեցին վարժարան Յոտալիա, և զկարի իսկ խմնալին 'ի նմա բնաբանցութիւն։ Օ՛լ որք 'ի վարժարանէ աստի կացին խմնաստասերք, կրկին աղգք են նոցա. կիսոց որպէս Ռ՛ասնոփանեաց, Պարմենիդեաց, Մ՛ելիսեաց և Օ՛ենոնի բնաբանցութեան պարապեալ, և այլոց որպէս Եւկլիպդեաց, Դեմոկրիտեաց, Պրոտագորաց, այլովքն հանդերձ, պարապեալ բնաբանութեան։

Յղեկան վարժարանին առաջնորդ եկաց Ռ՛ասենոփանէս կողոփոնացի 'ի Յոնիս։ Այս հալածեալ 'ի հայրենեացն, զոր տաղիւք պանծացուցեալն էր, ջոգաւ բնակել 'ի Սիկիլիա. ուր երգովք տաղիցն ընդ փողոցս, որպէս սովորութիւն էր նախնի խմնաստասիրաց, հայթայթէր զպարէնս ընտանեացն։ Պարովքը և՛ զնաղս բախտի. և յանգոնեալ զնա ուրուք յայն սակս որպէս զերկչոտ և զկարձամիտ, ասէ. Ա՛ռ գործ, ընդ որ մնայ ինձ ամաչել, երկչոտ եմ՝ քան զամենայն մարդիկ։

Մ՛ակեբոտ նորա Պարմենիդէս 'ի միոջէ 'ի վաղեմի և 'ի փարթամագոյն ազգատոհմից եղեալ ցոյն էր։ Ելեհս այնպիսիս զերազանցս ետ նա հայրենեացն, զի դատաւորք ամի ամի երդմնի առնեն զամենայն այր քաղաքացի 'ի պահպանութիւն

1 Պրուք. պատմ. խմաստ. հտ. 1. էջ 1143։

* Ծնեալ իբր 556 ամաւք 'ն. Ք։ (Պրուք. պատմ. խմաստ. էջ 1144։)

2 Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 18։

3 Պլուտ. յդ. անարժան ամսթ. հտ. 2. էջ 530։

4 Պրուք. անդ էջ 1157։

օրինացն այսոցիկ [1]։ Այլ սոսա ձանձրացեալ 'ի պատուոյ և յիշխանութենէ, ետ զանձն բոլորովին յիմաստասիրութիւն, և կատարեաց զաւուրս իւր 'ի լռութեան և 'ի տեսութիւնս մտաց։ Յոլովազոյնք 'ի մատենից նորա չափաւ էն գրեալ [2]։

Օ՛ենան եղէ՛ացի աշակերտ էր նորա և որդեգիր [3]. սա զբռնաւոր յաստ քաղաքի տեսանելով տիրացեալ, դաւ ընդ համախոհս գործեաց նմա, և սպանաւ՝ ոչ յայտնելով զդաւակիցս իւր [4]։ Այս զժողովուրդն մեծարէր իբրև զանձն. և անսասանելի 'ի վտանգս գոլով, չհանդուրժէր զընդպատութեան. քանզի ասէր, թէ անհնար է ինձ չզգալ չարախօսութեան՝ ցորչափ չեցեմ անզգայ բարեաց ասացելոց զինէն [5]։

Այլն յիմաստասիրաց, մանաւանդ յեղէական աղանդոցն, որք զյանձանձանս իրաց պետութեան յանձն առին. որպէս Պարմենիդէս և Օ՛ենան [6]։ Այլն և այլք, որք զօրաւոր կացին. Այ՛ր իրիս առաջնորդ տարենտացւոց զօրաց կացեալ, տարաւ բազում յաղթութիւնս [7]. և Այ՛եղիսոս, ա-

1 Պլուտ. ընդդէմ Կոլոտ. հտ. 2. էջ 1126։ Սպեւսիպպ. առ Դիոգենէս լայէրտ. գիրք Թ. յօդ. 23։

2 Դիոգ. լայէրտ. գիրք Թ. յօդ. 22։

3 Նոյն անդ յօդ. 25։

4 Նոյն անդ յօդ. 26։ Կիկերո. առաւկուլ. գիրք Բ. գլ. 22. հտ. 2. էջ 294։ Վալ. Մաքս. գիրք Գ. գլ. 3։

5 Դիոգ. լայէրտ. անդ յօդ. 29։

6 Նոյն 'ի Պարմ. և 'ի Օ՛ենան։

7 Եղիան. զան. պատմ. գիրք Է. գլ. 14։ Աբիսատաս. առ Դիոգ. լայէրտ. գիրք Ը. յօդ. 82։

շակերտ Պարմենիդեայ, յաղթեաց սթենայուց 'ի նաւամարտի[1]։ Սոքիմբք, և որ հանդոյն սոցին այլովքն՝ զոր լուեմ, չէն ինձ կամք ցուցանել՝ զի խմաստասիրութիւն կարիցէ յարդարել արս քաջաբաւարս և զօրաւարս քաջս, այլ զի սոքա և նոքա կարող էն պարապել յիմաստասիրութիւն։ Լեւկիպպոս, աշակերտ Օենանի, խոտորեցաւ յօրինաց վարժապետին[2], և աշակերտեաց իւր զԴեմոկրիտոս աբդերացի 'ի թագակիր։ Դեմոկրիտոս Ճոխ էր 'ի ծնողաց[3], այլ զմանն ինչ ևեթ 'ի հայրենի ընչից կալաւ իւր՝ առ 'ի շրջել հանդոյն Պիւթագորայ առ ազգս՝ զոր Յոյնք առ խուժադուժս ունին, այլ առ նոսա էին առանդք գիտութեանց։ Ի դառնալ նորա յուղղորութենէ, մի յեղբարց նորա որ 'ի մանուկ ժառանգութեան նորա մեծացեալ էր, հայթայթեաց ըզպէտս նորա՝ որում կարեւորն ևեթ այնու հեռև պիտոյ էր։ Այլ առ 'ի զերծանել 'ի պատուհասէ օրինացն՝ որ հրամայէր թողուլ անթաղ զայր քաղաքացի վատնող հայրենի ժառանգութեանն, ընթերցաւ Դեմոկրիտոս 'ի լուր աբդերացւոց Ճառս ինչ՝ որով զմեծարանս և զզարմանս ունոյր ամենայն։ Եղեալ զայնոսիկ՝ ասեն զնա զաւուրս իւր 'ի խորհուրդս առանձնութեան, բարեբաստիկ կեանս։

1 Եղեան. զան. պատմ. գիրք Ի. գլ. 14։ Պլուտ. 'ի Պերիկլ. հատ. 1. էջ 166. և ընդդէմ Կոդտա. հատ. 2. էջ 1126։

2 Պլուտ. պատմ. խմաստ. հատ. 1. էջ 1171։

3 Նոյն անդ էջ 1177։ Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 36։

4 Դիոգ. լայերտ. անդ յօդ. 39։

նոքա. զի զկարևորագոյն իրեն իւր կարող էր ընուլ յամենայն ժամ, հրահանգելով զանձն իմաստասիրական տեսութեամբք, և զայլս զրովք։

Պրոտագորաս [1] աղքատ ծնողաց էր որդի, և 'ի ծառայական գործս պարապեալ. բայց Դեմոկրիտոս ծանեաւ զնա և աշակերտեաց, և պարզեալ ընդարձակեաց զհանձար նորա։ Այս նոյն ինքն է մի յերևելի իմաստակացն Աթենայ, ուր բնակէրն. սա օրէնս ետ բնակչաց Թուրիոն քաղաքի Իտալիա [2], զրեաց զիրս իմաստասիրականս, և ամբաստանեալ յանաստուածութիւն՝ աքսորեցաւ Աթենիկեայ, և մատեանքն նորա խստիւ ընդ ամենայն տունս որոնեալ, հրապարակաւ հրձիգ եղեն։

Ա՛ զիտեմ՝ 'ի հանգամանսն ժամանակին եթէ 'ի բնէ մտաց մարդկան պատահէն դէպքս այս, ընդ որ միշտ զարմանամ։ Ո՞ի այն ինչ ուրեք հանձար ինչ կամ՝ զօրութիւն մտաց 'ի վեր երևեալ, վաղվաղակի յանախսէն անդ և այլք, որք թերևս ոչ յերևան գային՝ եթէ առաջինն այն ոչ 'ի վեր երևէր։ Կաղմոս և Թաղէս 'ի Միլետոս, Պիւթագորս Իտալիա, Պարմենիդէս Էլէա քաղաք, Էսքիղոս և Սոկրատ Աթենս, զոգցես իմն ստեղծին յայլ և այլ գաւառսն յայնոսիկ զաղգս ազգս հանձարոյ՝ նախանձառորս 'ի գերազանցել քան զնախատիպս իւրեանց։ ՅԱբդերա իսկ քա-

[1] Պրուք. պատմ. իմաստս. հտ. 1. էջ 1200։

[2] Հերակղ. առ Դիոգ. Լայերա. գիրք Թ. յոդ. 50։

զաք փոքրիկ, հռչակեալ ցայդ ապրութեամբ մը-տաց բնակչացն՝, այն ինչ եկաց Զամակրիտոս՝ Պրոտագորաս անդէն՝ ի վեր երևեցաւ. և սա՝ ի նմին քաղաքէ կացցէ յաջորդ Նաքսաղքոս, որ այժմէն զգերահանձաք մտացն տայ զնշանակս[2]։

Ի մտաւորադիրս, որ զբերեցին զիմաստասիրութենէ, ոչ է պարտ անկիշատակ առնել և զՀերակղիտոս Եփեսացի, խրթին վասն դժուարիմաց բանիցն կոչեցեալ[3]։ Այրս այս տիտուր բնութեամբ, և անհանդուրժելի ամբարհաւաճութեամբ, ի սկզբան տարբ չգիտել ամենեին ինչ, և ապա ամենագէտ զանձն վարկանէր[4]։ Այժմ ասացիք խնդրելին իշխան հասարակապետութեան իւրեանց զնա կացուցանել, այլ նա հրաժարեաց՝ ցաւուցեալ ընդ նոսա, զի զՀրմոդոր բարեկամ իւր աքսորեալ էր նոցա[5]։ Այ՝ ի խնդրել նոցա օրէնս՝ ի նմանէ, ասէ. Կարի յոյժ ապականեալք էք[6]։ Այ դժուարի լեալ ամենեցուն, մեկնեցաւ Հայեսոսէ. և խոյս տուեալ՝ ի մերձակայ լերինս, խոտաճարակ լինէր անդ, բերկրանս մտացն արարեալ՝ ատել յամենայն սրտէ զմարդիկ։

Հարիսպիդեայ զնառս ինչ Հերակղիտոսի մա-

1 Կիկերո. յղ. բնութեան դէց. գիրք Ա. գլ. 43. հա. 2. էջ 433։ Յոռնալ երգիծ. 10. տող. 50։

2 Դիոգ. Լայերաս. գիրք Թ. յօդ. 58։

3 Կիկերո. յղ. կատաս. գիրք Բ. գլ. 3։ Սենեկա թուղթ 12։ Կղ. ազէքս. յանախասէր. գիրք Ե. էջ 676։

4 Դիոգ. Լայերաս. գիրք Թ. յօդ. 5։

5 Նոյն անդ. յօդ. 2 և 6։

6 Նոյն յօդ. 2։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ — ԵՐԵՎԱՆ
27373

տուցեալ Սոկրատայ յընթերցումն, նա իբրև ընթերցաւ զայն՝ ասէ. Որ ինչ փոքր 'ի շատէ 'ի միտ առի, բարւոք է և սահեալաւ. իսկ արդեօք և մնացեալն նոյնպէս, այլ վասնզի է անդնդասոյզ 'ի նմա լինելոյ՝ որում չիցէն աջողակ որպէս զլուղորդ դեղոսացի [1]։

Ընդ մատեանս արանցս նշանաւորաց էին և այլ յոլով մատեանք ամենանից։ Չէ մինչդեռ ուրախ լինէի ընդ Չէկղիդեայ վասն բազմութեան մատենիցն, եմուտ 'ի դիւան անդր այր ոմն պատկառելի դիմօք և տիրօք և հանդարտութեամբ. վարսք նորա զուսովքն անկեալ, թագ 'ի գլուխ, և պակեալ մրտենեաւ։ Չէ էր նա Կալլիաս կատարողապետ կամ քրմապետ դիցն Դեմետրեայ, մոերիմ բարեկամ Չէկղիդեայ. որում Չէկղիդէս ծանոյց զիս պատուասիրաբար հանդերձ գովութեամբ։ Ա՝այրիկ մի խօսեցեալ ընդ նմա, դարձայ 'ի գրեանս անդր. և այնու մտադիւրութեամբ անցանէի ընդ նոսա, մինչև Կալլիասայ զգալ զայն, և հարցանել ցիս՝ եթէ կամիցիս տեղեկանալ բովանդակելոց 'ի դոսա գիտութեանցն։ Որում եռանդեամբ պատասխանեալ, ասեմ. Օ՝ պատասխանի զոր ոմն 'ի նախնեաց իմոց ետ Սողոնի [2], զնոյն տայ. Զ՝ ինչ իսկ թողի զՍկիւթս, և ընդ բազում այնչափ

[1] Դիոգ. Լայերաս. գիրք Բ. յոգ. 22։ Նոյն գիրք Թ. յոգ. 11։ Սուիդ. 'ի բառն Δῆλ.

[2] Պուլիան. 'ի մրցմանեան յոգ. 14. հտ. 2. էջ 892։

լայնածաւալ աշխարհս անցի, զիմանգրաւեալ մրրկաց Լաքսինեանն Պոնտոսի, եթէ ոչ առ 'ի զալ այսր և կրթել 'ի միջի ձերում յուսումն։ Հաստատեալ եմ չեռանել 'ի տեղւոջէ աստի, մինչև անցեալ ընդ գրեանս իմանալոց ձերոց. զի ոչ ինչ երկեայիմ՝ եթէ զոն 'ի նոսա իմաստք կարևորք 'ի բարեբաստութիւն մարդկան։ Այլ տեցար Կալլիաս ընդ խորհուրդս իմ, թերևս և զթացար իսկ, որպէս 'ի խօսիցն իսկ նորա յայտ է՝ որ առաջի կայ մեզ։

ԳԻԼՈՒԽ Լ.

Դարձեալ 'ի նոյն մատենագրանն, և Կալլիասայ քրմապետին Դեմարեայ Ճառք զառաջին պատճառաց։

Լոյս ասէ ցիս Կալլիաս. Խուէր ինձ 'ի տեսլեան գնալ ընդ Ճանապարհ բազմամբոխ, 'ի խըռան ծերոց և տղայոց, արանց և կանանց, յամենայն կարգէ։ Լոյս գնայաք մեք իբր յարշաւս աչապակպեալք, կիսոց զաղաղակ ցնծութեան հարկանելով, իսկ այլք ծանրաթախիծք 'ի վշտացն և 'ի ճանձրութենէ։ Ես զիտէի ուստի գայի և յո՞ գնայի, և հարցանէի զամբոխս ուղեկցացն իմոց։ Ակսաք ասէին ցիս՝ թէ և մեք չգիտեմք, այլ զհետ բազմութեանս գնամք և կարապետեմք որոց ըզ-

հետն գան։ Բայլք ասէին. Օ՜ փոյթ է զՀանապարհն գիտելոյ. մղիմք յայլոց, և պարտ է մեզ մղել զայլս։ Իսկ իմաստնագոյնք 'ի նոցանէ ասէին. դատապարտեալք 'ի դից յասպարէզս յայս՝ հնազանդիմք հրամանաց նոցա, ոչ 'ի մտտի ուրախութիւն և ոչ 'ի տարապարտ ցնծութիւն խառնս միտեալք։ Այլ մինչ պարտասեալն էի ընդ ուղիս բազմութեանն վարեալ, լուայ բարբառ՝ որ ասէր. Այ՛կ զհետ լուսոյ և Հնարտութեան։ Ղ՝ամենի խնդութեամբ զհետ բարբառոյն. և առն ուրումն կալեալ զձեռանէ իմմէ, ելոյծ ըզկապ աչաց իմոց, և ածէ զիս յանտառ ուրեմն նսեմաստուեր, ուր ոչ ինչ առաւել քան զառաջինն տեսանէի։ Որոշապէս զհետս ուղղոյն՝ ընդ որ գընայաքն, և գտաք ամբոխս մնրրելոց իբրև զմեզ։ Բազմաջողոգք նոցա 'ի հանդիպելն միմեանց՝ գայլին 'ի կռիւ, յաւիշտակել կամելով 'ի միմեանց զհետուողս։ Այն 'ի ձեռս նոցա ջահք, յորոց բոցք ակնախտիղք երբէք երբէք հատեալ՝ շլացուցանէին զմեզ։ Բազումս փոխեցի առաջնորդս, բազում անգամ գահավէժ անկայ, և բազում այն էր՝ զի պարիսպք անթափանցք խափանէին զգընացս իմ. և անդ առաջնորդացն իմոց անտես լեալ, թողուին զիս յարհաւիրս յուսահատութեան։ Ա՝ստակաբեկ լեալ, ստրջացայ զի թողի զՀանապարհն՝ ընդ որ բազմութիւնն գնայր. և մինչդեռ 'ի ստրջանս յայս էի, զարթեայ։

Բ՝ազդ լուր ինձ որդեակ. ընդ բազում դարս կե-

ցին մարդիկ 'ի տգիտութեան, յորում՝ ոչ ինչ տաղնապէին միտք նոցա. քանզի շատացեալք նը սեմ աւանդութեամբքն՝ զոր ընկալեալ էր նոցա յառաջնոցն զլինելութենէ էից, ունէին զայն առանց հետազօտելոյ գիտել զառաւելն։ Այլ իբր յերկերիւրոց ամաց հետէ ապաժոյժք իմն բերին 'ի խելամտութիւն զաղտնեաց բնութեան, որ և ոչ 'ի միտս նոցա անկեալ էին յառաջագոյն. և նորոգս այս ախտակրութիւն մտաց փոխանակեաց մոլորութիւնս ծանուցս ընդ ծանուցս մտաց հաճութեանց։

Այնարհաւաճեցին միտք՝ իբրև առին խորհել մեծամեծս զԱստուծոյ և զմարդոյ և զտիեզերաց. զի չէր ինչ որ յայնպիսի բարձր կարծիս զանձնէ և 'ի մեծամտութիւն ածիցէ զմարդ՝ որպէս ըզխուզարկութիւն բնութեան։ Այլ ցանկութիւն մտաց ոչ ինչ նուազ քան զարտին սաստիկ և անյագ, կամեցաւ չափել զվայր, հասանել 'ի խորս անբաւին, և հետևել ընդ պարունակ շղթային որ յանսահման ոլորտս իւր բովանդակէ զէքս առ հասարակ։

Այնաջնոց իմաստասիրացն մատեանք ուսուցիչք եղեալ առանց զարդուց, և սահմանօք և հետևանօք հանդոյն երկրաչափից * աւանդէն զվարդապետութիւնսն. այլ մեծութիւն բովանդակելոց 'ի նոսա գիտութեանցն վսեմագոյնս յարդարէ

* Որպէս է տեսանել յՈՒկլիդոս Լուկանոս և 'ի Ցիմեոն լոկրեցի։

զնոսա. որպէս զի անդէն 'ի գլուխ գրոցն ազգել մեծարանս, խոստանալով Աստուել զընտրութենէ և զերկնից և զերկրէս և զհոգւոյ աշխարհիս։ Դէ մեկրիտոս զմի 'ի Աստուծոյն իւրոց սկսանի մեծապատումն այսպէս. Օ տիեզերաց առաջի կայ ինձ Աստուել'։

Յանցանել քո ընդ բազմախուռն ժողովս մանտենիցդ, ուր 'ի նսեմաստուերս մթան փայլէն պայծառագոյն Աստուածութիւն, ուր ցնորք աղճատանաց խառն են ընդ խորին իմաստութեան, ուր զօրութիւն և տկարութիւն մարդկեղէն մտաց միանգամայն դան 'ի յայտ, յուշ լիցի քեզ որդեակ՝ զի պէտքի քոզով ծածկի բնութիւն, և զի զօրութիւն ամենայն մարդկան և անցեալց դարուց առ հասարակ չկարեն զծայր մի նորին 'ի վեր առնուլ, և զի գիտութիւն իմաստասիրին սահմանի 'ի նկատել զծայր ևեթ գաղտնեացն, և իմաստութիւն նորա՝ 'ի յարգել զայն պատկառանաց։

Այլոյն յաւուրս մեր՝ որք ուրացան կամ յերկբայս արկին զգոյութիւն աստուածութեան, զայն որում միաբանութիւն ամենայն ազգաց 'ի սկզբանէ և այսր վերայ [2]։ Վասն յայտնապէս յուրատ կան յայտնանել, այլք սահմանօքն իւրեանց եղծանեն զայն. զի որք զեութիւն ամբաւ Լ՝ին

[1] Կիկերո. ակադ. 2. գլ. դիրք Ա. գլ. 3. հա. 1. էջ 23. հա. 2. էջ 31։ 434։

[2] Ենրիատոս. յգ. երկնից.

հետազօտեն, կամ զպատճառս զոյծոց նորա հը-նարին տալ, մնարին ամենեքեան։

Լսեմ հարցանիցես զնոսա՝ թէ զինչ է Աստուած, պատասխանեն. Ոգոյ չիք սկիզբն և վախճան[1]։— Հոգի սուրբ է[2]։— Լուսաւոր է ամենանուրբ, օդ է[3]։— Հուր է խմացական[4]։— Աշխարհս է[5]։— Այլ՝ թէ ոչ աշխարհս է, այլ շունչ աշխարհիս. զի Աստուած ընդ սմա է որպէս հոգի ընդ մարմնոյ միացեալ[6]։— Անակ պատճառ[7]։— Պատճառ բարւոյ, որպէս նիւթն չարին[8]։— Աստենայն ինչ հրամանի նորա մնայ. մերկասարանոց կայ ամենայն ինչ առաջի աչաց նորա[9]. զամենայն ի ձեռն սպասաւորակուսաց զոյծէ։ . . . Լրկիր պագ Աստուծոյ, որդեակ, և մի զլնութիւն նորա հետազօտեր։

Լսեմ խնդրիցես՝ թէ նոցանէ՝ թէ զինչ էն տիեզերքը, պատասխանեն. Աստենայն ինչ որ կանա՝

1 Թագէս առ. Դիոգենէսայ լայերաս. գիրք Ա. յօդ. 36։
2 Անաքսագոր. առ. Արիս. ստոտելի յդ. հոգւոյ, գիրք Ա. գլ. 2. հա. 1. էջ 621։ Կիկերոն. յդ. բնութեան գիր. գիրք Ա. գլ. 11. հա. 2. էջ 405։
3 Դիոգ. Լաերտի. առ. Կիկերոն. անդ գլ. 12։ Անաքսիմ. առ. Կիկերոնի անդ գլ. 10։
4 Պլութարգ. առ. Պրոնուքքեսրայ, հա. 1. էջ 1077։ Դեմոկր. առ. Պլուտարքեսայ յդ. անդ տրր. խմասաս. գիրք Ա. գլ. 7. հա. 2. էջ 881։
5 Արիստոտ. առ. Կիկերոնի անդ գլ. 13։ Հերակլ. պոնտ. առ. Կիկերոնի անդ։
6 Թագէս առ. Պլուտարքեսայ անդ։ Պիւթագոր. առ. Կիկերոնի անդ գլ. 11։
7 Քսենոփան. առ. Կիկերոնի ակադ. 11. գլ. 33. հա. 2. էջ 49։
8 Տիմ. լոկր. առ. Պլատոնի, հա. 3. էջ 93։ Պլատ. ի Տիմ. էջ 43։ Նոյն յդ. հաս. հա. 2. էջ 273։
9 Պլատ. անդ։

մեծանշենակացք էն, ապա աշխարհս 'ի յաւիտե-
նից է '։—Լակ այլք՝ թէ ոչ աշխարհս, այլ
նիւթն 'ի յաւիտենից է [2]։—Լուեթայ, որ ամե-
նայն կերպարանաց է ընդունակ, ոչ զոյր յատուկ
կերպարան [3]. մենակերպ էր և բազմակերպ, և
անբաւ կերպարանաց ունակ. զի ոչ այլ ինչ է
նիւթ, բայց ջուր [4], օդ [5], հուր [6], տարերքք [7], յա-
դուսած հիւղէից [8], և անբաւ բազմութիւն անա-
պական տարերաց և հոմանսեռ անհատ մասնիկանց՝
յորոց թանձրացեալ յօդին ամենայն տեսակք։
Լուեթս այս 'ի համապարփակ վիճն կայր ան-
շարժ. միտք հաղորդեցին 'ի նա շարժումն, և
երևեցան տիեզերքք [9]։—Լակ այլք՝ թէ չէր ան-
շարժ, այլ խառն 'ի խուռն շարժէր. և Լուստու-
ծոյ էուութենէ հաղորդեալ 'ի նա մասն, ուղղեաց
զշարժումն նորա, և եկաց աշխարհս [10]։—Ել

1 Ոկեղոս. Լուկանոս 'ի սկիզբն։ Դիոգ. գիրք Ա. էջ 6։ Պատմ. Նաթանիէլ պատմ. հտ. 1. էջ 387։

2 Արիստոտ. յդ. երկնից, գիրք Ա. գլ. 10. հտ. 1. էջ 447։

3 Տիմ. լսիր. առ. Պղատոն, հտ. 3. էջ 94։ Պղատ. 'ի Տիմ. անդ էջ 51, և այլուր։

4 Թալէս առ Արիստոտելի բնագանց. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 842։ Պլուտ. անդորր. խնամատաս. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 875։

5 Ընաքսիմ. և Դիոգ. առ Արիստոտելի անդ։ Պլուտ. անդ։

6 Խպղ. և Հերակլ. առ Արիստոտելի անդ։

7 Եմպեդոկլ առ Արիստոտելի անդ։

8 Թեմ. առ Դիոգենեայ լայերտ. գիրք Թ. յօդ. 44։ Պլուտ. անդ էջ 877։

9 Ընաքսագ. առ Արիստոտելի յդ. երկնից, գիրք Դ և Դ. հտ. 1. էջ 477, և զկնի։ Նոյն առ. Պլուտարքեայ յդ. անդորր. խնամատաս. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 876։ Նոյն առ. Դիոգենեայ լայերտ. յԱ. Նաքսագ. գիրք Բ. յօդ. 6։

10 Տիմ. լսիր. առ. Պղատոն, հտ. 3. էջ 95։ Պղատ. 'ի Տիմ. էջ 34։

այնպէս. այլ մարմինք անհատք խառն 'ի խուռն վարեցին 'ի դատարկի, և ըստ դիպաց յօդուածոյ նոցա եղեն արդասիք տիեզերքս'։ — Եւ այնպէս. այլ յերկուց եւեթ տարերաց ամենայն ինչ յօ-դեցան, և կան. 'ի հողոյ, և 'ի հրոյ՝ որ է շունչ նորա[2]։ — Եւ այնպէս. այլ 'ի չորեսին տարերս հարկ է յաւելուլ զսէր՝ որ յօդէն գնոսա, և զա-տելութիւն՝ որ զատանէն[3]։ . . . . Որ 'ի որդեակ, մի ծախեր զաւուրս քո 'ի խնդրել զպատճառս տիեզերաց, այլ 'ի ընալ որպէս պարտն է զվայրն փոքրիկ՝ զոր 'ի նմա գրաւեալ։

Իսկ եթէ հարցանիցես նոցա՝ թէ զինչ է մարդ, պատասխանեն. Հրամանքն երևոյթք և ներ-հակք անհաշտելիք որ 'ի տիեզերս, նոյնք և 'ի մարդուն են՝ որ նորին հանմտաւոր գիծն է պատ-կեր[4]։ Որոն որ 'ի նմա յամենայն ժամանակի յորջորջեալ հոգի և միտք, յարաշարժ է[5]։ — Թափ է նա ինքնաշարժ[6]։ — Շունչ յոտակ, անմահն յամենայն նիւթոյ։ — Չթէ այդպէս ինչ, ինքն զնիւթս ճանաչիցէ[7]։ — Զդ է ամենանուրբ[8]։

1 Պլուտ. յդ. անդորբ. ի-մաստաս. գիրք Ա. գլ. 4. հմ. 2. էջ 878։

2 Պարմեն. առ. Արիստոտ. տեսլի բնազանց. գիրք Ա. գլ. 5. հմ. 2. էջ 847։

3 Եմպեդ. առ. Արիստոտ. տեսլի անդ գլ. 4. էջ 844։

4 Ալբրք Պիւթագորայ առ. Փոտայ, էջ 1317։

5 Թազէս առ. Պլուտարքեայ անդ գիրք Դ. գլ. 2. հմ. 2. էջ 898։

6 Պիւթագ. առ. Պլուտարքեայ անդ։ Քսենոկր. առ նոին յդ. նախատ. հոգ. հմ. 2. էջ 1012։ Արիստոտ. յդ. պերճախօս. գիրք Զ. գլ. 3. հմ. 1. էջ 243։

7 Արիստոտ. յդ. հոգւոյ, գիրք Ա. գլ. 2. հմ. 1. էջ 621։

8 Պլուտ. անդ գլ. 3։

— Հուր թափանցիկ[1]. — բոց հատեալ յարեւ-
գահեղ[2]. — մանն արփւոյ[3]. — ջուր սահնաթեւ-
թեւ[4]. — խառնումն տարերաց բազմոց[5]։ — Լակ
այլք՝ թէ հողի է յօդուած գնտաձեւ և հրային
անհատ մանեկանց, հանդոյն այնմ՝ որ 'ի շաղ արե-
գականն յուղին հողամանդք[6]. Եակ պարզ։ — Լաւ
այլք դարձեալ՝ թէ ոչ պարզ, այլ յօդուածոյ՝
բաղադրեալ 'ի բազում մասանց և 'ի բազմապա-
տիկ որակաց հակառակաց[7]։ — Լ.բիւն է որ զբ-
նոյ յերակունս մեր[8]։ Հոգի համապիւռ կայ 'ի
մարմնի։ — Լակ այլք՝ թէ ոչ 'ի մարմնի, այլ յու-
զիչն ևԷթ է կայեան նորա։ Լ.յլք թէ ոչ յու-
զիչն, այլ 'ի սրտի. և այլք դարձեալ՝ թէ ոչ 'ի
սիրտն[9], այլ 'ի ստոծանեանցն[10]։ — Հոգի կորնչի ընդ
մարմնոյ։ — Ոչ, այլ անցանէ յայլ մարմին։ —
Ոչ, այլ 'ի հոգի տիեզերաց խառնի[11]։ . . . Որ-
զեակ, ուղղեա զչարժմունս հոգւոյդ, և մի փոյթ
լեցի քեզ զիտել զէութիւն նորա։

1 Արիստոտ. յդ. հոգւոյ, գիրք Ա գլ. 2. հա. 1. էջ 621։
2 Եպիփան. առ Վարդանի յդ. լատին բարբառոյ, գիրք Դ. էջ 17.
3 Պլեթագ. առ Դիոգենէ Նեապ լայերտ. գիրք Ը. յօդ. 28։
4 Պլպան. առ Արիստոտելի անդ էջ 620։
5 Եմպեդ. առ Արիստոտելի անդ էջ 619։
6 Դեմոկր. և Լեւկիպ. առ Արիստոտելի անդ. առ Սառբեռոսի Ծագեալքաղ բնաբ. գիրք Ա. էջ 93։ Պլուտ. յդ. անդրբ. իմաստասի. գիրք Դ. գլ. 2. հա. 2. էջ 898։
7 Արիստոտ. անդ. Պլուտ. անդ գլ. 3 և 4։
8 Կրիտիաս առ Արիստոտելի անդ. էջ 624։ Պակրոբ. յդ. Երաշ. Սկիպ. գիրք Ա. գլ. 14։
9 Եմպեդ. առ Կիկերոնի տուսկուլ. գլ. 9. գիրք Ա. հա. 2. էջ 239։
10 Պլուտ. անդ գլ. 5. էջ 899։
11 Նոյն անդ գլ. 7։ Կիկերոն. տուսկուլ. անդ։

Հաւասիկ քեզ համոզումամբ պատկեր կարծեաց, յորս մնաբերեցին խմոտասէրքն զկարեւորագոյն խնդրոցս։ Յանձխութիւն մտածութեանց նոցա՝ չքաւորութեան իսկ են հաւասիք. և շեղջակոյտ մտոնենիցս զոր տեսանես՝ կարծեցեալ զանձք բարձրագոյն գիտութեանց, են աւանդք հակառակաբանութեանց և մոլորութեանց՝ առիթք կորանաց։ Մի՛ կարծիցես զտաւնել 'ի նոսա, ոչ վարդապետութիւն ինչ՝ որ ինքն իւր համաձայն իցէ, և կասակցեալ ամենայն մասունք նորա ընդ իրեարս. ոչ մեկնութիւնս բացայայտս, և ոչ լուծմունս ըստ իւրաքանչիւրոց 'ի սքանչելեաց բնութեան։ Մատենագիրքս այսոքիկ զրեթէ առ հասարակ անիմանալիք են, զի յոյժ են համառօտք, և զի առ երկիւղի ոտիսելոյ ընդ կարծիս բազմաց՝ քօղարկեն զվարդապետութիւն իւրեանց այլաբանութեամբք և իւրեանց օրինացն հակառակաբանելով. և զի դարձեալ անիմանալի իսկ ցանկան լինել՝ առ 'ի խոյս տալ յանակնկալ կամ՝ յանլուծանելի դժուարութեանց։

Ասոյց սակայն եթէ չև ևս շատ համարեալ զլուսանդակութիւն բանից նոցա զոր լուար, կա միցիս հարևանցի ինչ տեղեկանալ աղանդոց նոցա, յապուշ լիցիս ընդ խնդիրս նոցա զոր անդէն առ սեաան բանիցն 'ի նեղբս ածէն, թէ արդեօք մի ինչ պատճառ իցէ տիեզերաց, և չկարիցեն զոլ բազումք. եթէ իցէ միակ, արդեօք շարժուն

իցէ թէ անշարժ. իսկ եթէ իցէն բազումք, սահմանաւորք իցէն թէ անսահմանք. այլովքն հանդերձ[1]։

Ամենաւանդ զլինելութենէ աշխարհի բազմացուցանէն զՀաւս, և հնարին զտանել զպատՀաւս անհնարին բազմութեան սեռից և անհատից՝ զորս բնութիւնն առաջի առնէ մեզ։ Ցեսակք և որակք մարմնոց փոփոխին անդադար և եղծանին և նորոգին, այլ բաղկացուցողին նիւթն կայ միշտ անեղծ։ Արթ է բաժանել զայն մնօք և ստորաբաժանել յանբաւս, մինչև ցՀասանել 'ի սպրդ էակ՝ յորմէ տիեզերք և մարմինք իւրաքանչիւր յօդին[2]։ Բաղինորդք յանիսկան աղանդոյն, և յայլոց եւս աղանդոց խնաստասէրք ոմանք զՀետ եղեն զտանելոյ զէակս զայս պարզ և անբաժին։ Ակսք 'ի տարր ջրոյ Հանարեցան զայն[3], այլք 'ի տարր օդոյ. և կէսք յաւելին 'ի սոսա և զՀող և զՀուր, և այլք դարձեալ Հանարեցան՝ զլ 'ի զանգուած սկզբնական նիւթոյն 'ի յաւիտենից գոյին անբաւ մասունք անշարժք, որոց իւրաքանչիւր այլ և այլ ձևք էին և տեսակք. յորոց օդական մասանցն 'ի մի Հաւաքեալ՝ կատարեցին զտարր օդոյ, և յասկեղէն մասանցն կազմեցաւ ոսկի, և այլ ամենայն ինչ յանձնիւր տեսակացն[4]։

[1] Արիստոտ. յՂ. բն. լսելեաց. գիրք Ա. գլ. 2. հա. 1. էջ 316։

[2] Նոյն. բնազանց. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 842։

[3] Նոյն անդ։ Պլուտ. յՂ. անգ. խնաստաս. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 875։

[4] Արիստոտ. անդ էջ 843։

Այս ամենայն աղանդք յածէլին գնիւթական և զկրաւորական պատճառօք էին. այլ ոչ յամենցին խմաստասէրքն հասու լինել՝ զի հարկ էր միւս ևս յաւելուլ պատճառ ներգործական յառաջինն։ Հրոյ տարր թուեցաւ բաղմաց դիպող 'ի բաղադրել և 'ի լուծանել զմարմինս. այլք նկատեն 'ի մանկունս սկզբնական նիւթոյն սիրելութիւն իմն և ատելութիւն, բաժանիչ նոցին և յօդիչ անընդհատաբար[1]։ Այլոց մեկնութիւնքս այսոքիկ, և որ սոցին տալա յաջորդեցին, չեղէն բաւական 'ի բովանդակել զամենայն այլակերպութիւնս էին, և հարկ եղև խմաստասիրաց յայլ ևս պատճառս ընթանալ, և կամ՝ նկուն լինել 'ի դժուարութեանցն. հանգոյն ըմբշաց, որ անկիրթ 'ի կռիւ դիմագրաւիցեն. որոց զոյգն յաղթանակք որովք մնափառինն՝ բախտին են ազգակք[2]։

Կարգ և գեղ, որ ամենայն օրէք երևին ընդ տիեզերս, ստիպեցին զնոսա այնուհետև դիմել առ պատճառ խմացական։ Արիստոտելոյնք յիմաստասիրաց յտնիական աղանդոյն վաղ իսկ ծանեան զայն[3]. բայց Ալեքսանդրոս, Թերևս Հրմոտիմեայ առեալ, համարեցաւ զայն օտար 'ի նիւթոյ, և ասաց յայտնապէս՝ զի ամենայն ինչ 'ի սկզբանէ

[1] Էմպեդ. առ Պլուտարքեայ յզ. անգրբ. խիմաստաս. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 878։

[2] Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 4. հա. 2. էջ 844։

[3] Նոյն անդ գլ. 3. հա. 2. էջ 843։ Պիկեր. յզ. բնութիւն դեց. գիրք Ա. գլ. 10. հա. 2. էջ 405։

'ի մշանջենաւոր նիւթն էր, և զի իմացականութեան ազդեալ 'ի նա շարժումն՝ ած զայն 'ի կարգ։

Մինչև յոնիական աղանդոյն հասու լեալ Հնմարտութեանս այսմիկ որ վաղեմի աւանդութիւնն էր ազգաց, Պիւթագոր կամ մնաւանդ աշակերտք նորա, զի անհնարին իմն է գուշակել զկարծիս նորանչան առնն՝ թէպէտ և չև ևս բաւական ժամանակք էն զի եկաց, պիւթագորեանք առեմ հանարեցան զաշխարհ նիւթ ընդաւոր, և շունչ 'ի նմա հանապիւռ և անլուծանելի 'ի նը-մանէ զիմացականութիւն՝ որ վարէն զայն, իբր պատճառ ամենայն էից, իբր հուր թափանցիկ և բոց յստակ, և իբր զօրութիւն՝ որոյ ընդ իւրև նուաճեալ զնիւթ, և սանձահարեալ ունի զայն [1]։ Այս քանզի էութիւն նորա անընկնելի է զգայութեանց, ոչ զգալի բարբառով՝ այլ իմանալեաւ առցուք նկարագրել զայն։ Կոչեսցուք զիմացականութիւնն կամ զներգործական պատճառ տիեզերացս միակ, զի միշտ նոյն իսկ է անփոփոխ. զնիւթն զկրաւորական պատճառ՝ երկեակ, զի կերպս 'ի կերպս է փոփոխելի. իսկ զաշխարհ կոչեսցուք երրեակ, զի իմացականութեան և նիւթոյ է արդասիք։

Ուսումն յաշակերտացն Պիւթագորայ յաւելին ըստ պիտոյից և այլ բացատրութիւնս, այլ զրեթէ միշտ 'ի թիւս կացուցանելով զյատկու-

[1] Յուսոյն. վկ. Հատ. ընդդէմ հեթան. էջ 18։

թիւնս՝ որոց գիտութիւն վերածէր զնոսա 'ի ծանօթութենէ։ զի հանդերձին զյատկութիւնսն զայնոսիկ գտանել յարգասիս ձայնաւորս մարմնոց'։ Լ.թէ զարք քնարի բաժանեսցես յերկուս և յերիս և 'ի չորս մասունս, կէսք իւրաքանչիւր զութեակ բոլորիցն իւրեանց հնչեն. երրեակ քառորդք զքառորդսն, երկու երրեակք զհնգեակսն։ Լ.այս ութեկին համեմատութիւն է որպէս 1 առ 2, քառորդին՝ որպէս 3 առ 4, և հնգեկին՝ որպէս 2 առ 3։ Լ. կարևոր տեսութենէ ասասի թիւքս 1, 2, 3, 4, առին անուանակոչել աբիա-ղան գառէակ։

Լ.այս են համեմատութիւնքն պիւթագորականք[2], և այս են օրէնքն յոր հաստատեալ կայր կարգ երաժշտութեան ամենայն ազգաց, և մանաւանդ այն զոր Պիւթագորոր եգիպտ առ Հոյնս, և ած 'ի կատարումն իւրովք հմտութեամբքն։

Լ.սա գիւտիցս ըստ այսոցիկ, որ եգիպտացւոցն էին արգեօք, յայտնի եղև զի օրէնք երաժշտական ներդաշնակութեան անյեղլիք են, և զի 'ի բնէ հաստատեալ կան անսահմանելի քանակք և միջոցք ստատնանաց ձայնի։ Լ.ԼԼ ընդէր բնութիւնն՝ միօրինակ յամենայն 'ի գործս իւր՝ ոչ զնոյն օրէնս կալաւ 'ի յօրինուած տիեզերաբաց առ հասարակ։ Լ.այս տեսութիւն ծագեաց լոյս մեծ

1 Արիստոտ. բնագանց. 2 Ռուսիկ յիշատ. վասն և. դերք Ա. գլ. 5. հա. 2. էջ 845։ բաժշտ. նախնեաց, էջ 39։

'ի միտս զգաստս, որք հեռի յամբոխէ ժուժկալութեամբ և խոկմամբ դիւրապատրաստք էին 'ի հիացումն, և այնոցիկ որք երկիւղածութեամբ զօր ամենայն պարապէն ժամն ինչ երաժշտութեան, մնանեանդ առ 'ի կրթել զձայն իւրեանց 'ի Ճիշդ ելևէջս[1]։

Ոչ յամենցին թիւքս այս 1, 2, 3, 4, ոչ միայն երաժշտական կարգաւորութեանն գոլ բաղկացուցուածքքն[2], այլ և ընդհանրութեան և բարոյականին։ Ամենայն ինչ հանդիսաւորութեամբ վճարէր և ներդաշնակութեամբ. ժամանակին, արդարութիւն, բարեկամութիւն և խնամատարութիւն կացին 'ի հանդիսաւորութիւնս թուոց[3]։

Յանկեղոկղէս չորս տարերս հանարի, ջուր, օդ, երկիր և հուր. այլք 'ի սկիզբանցդ քառակայ զօրութիւնս 'ի հոգւոջ մերում նկատեն[4], և ամենայն առաքինութիւնք 'ի մեզ 'ի չորից գլխաւորաց սերին։ Յա քանզի սրբազան քառակին բաղկացու թիւք գումարին 'ի տասն, վասն այնորիկ գերակատար թիւս այս[5] հանարեալ

1 Պլուտ. յղ. բարոյ. առաքին. հտ. 2. էջ 441։ Ա. Ամբակ. Կուինտիլ. յղ. երաժշտ. գիրք Գ. հտ. 2. էջ 116։ Բոեթի. յղ. երաժշտ. գիրք Ա. գլ. 1. էջ 1373։

2 Սիքստոս Էմպիրիկոս ընդդէմ թուոց. գիրք Դ. յօդ. 2. էջ 331։

3 Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 5. հտ. 2. էջ 845։ Դիոգ. Լայերտաց. 'ի պիւթ. գիրք Ը. յօդ. 33։

4 Պլուտ. յղ. անդորր. խմատատ. գիրք Ա. գլ. 3. հտ. 2. էջ 877։

5 Արիստոտ. առաքաբկ. յօդ. 15. հտ. 2. էջ 752։ Պլուտ. անդ էջ 876։

հարկ արար պարունակս տան յերկինս դնել, թէպէտ և չլցեն աւելի քան զինն[1]։

Լակ որք անձնաւոր զտիեզերս հանդերձեցան Պիւթագորեանքն, ոչ կարացին այլազգ զարժմունս երկնից մեկնել և զտարակայութիւն արփայեն մարմնոց յերկրէ, բայց 'ի ձեռն աստիճանաց ազդեցութեան հոգւոյ նորա 'ի միջակիտէ 'ի շրջապատն[2]։ Օր եթէ բաժանեսցես զվայրն զոյն անբաւ յերեսուն և 'ի վեց պարունակս, կամ մանաւանդ եթէ ստեղծանիցես մնոք լար իմն ձգեալ ծայր 'ի ծայր ընդ միջակետ երկրի, և բաժանեսցես զոյն յերեսուն և 'ի վեց մասունս՝ միով աստիճանաւ ձայնի կամ կիսով ըզմասն իւրաքանչիւր չափեալ, գտցես զերաժշտական սանդուղս տիեզերական հոգւոյն[3]։ Արդեայն մարմինք զետեղեալ կան յիւրաքանչիւր աստիճանս սանդղոցս, տարակաց յիրերաց ըստ հաւասարութեան հնգեկին և այլոց համաձայնութեանց։ Շարժմունք նոցա ըստ նոցին համաձայնութեանց ուղղեալ, զոծեն ներդաշնակութիւն քաղցր և աստուածային։ Աստղիցն պարկաց յաստեղս զետեղեալ են աթոռք, և նոքա ուղղեն զդաշնակաւոր շրջապայութիւն երկնայնոց պարունակացն, խնամակալք մեանջենաւոր և

1 Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 5. հտ. 2. էջ 845.

2 Տիմ. լոկր. առ Պղատոնի հտ. 3. էջ. 96։ Պղատ. 'ի Տիմ. էջ 36։

3 Պղատէս, Ծանօթ. 'ի Տիմէոս 'ի պատմութիւն նախկին պատմ. հտ. 2. էջ 97։

զմայլելի Հանճարայնութեանցն, որ 'ի լուութեան և եթե կրից լսելի լինին, և որք անապական խրդութեամբ ընուին զՀոգի Պիւթագորայ, որպէս ասի զնմանէ բան՝։

Օ Հանճարութիւնս զորս կէաք խնդրելին հաստատել 'ի տարակայութեան և 'ի շարժմանն երկնայնոց պարունակաց, այլք մտաբերեցին զբաստանել 'ի քանակ աստեղաց կամ 'ի տրամաղիծ ծրին զոր գործէն՝։

Օրէնք տիեզերաց եղծանեն զյօրինուածս զայս. այլ 'ի յօրինել սորա այնոքիկ յոյժ ընդ աղօտ Ճանաչէին. իսկ իբրև յայտնագոյն ծանուցան, դժուարին էր այնուհետև հրաժարել 'ի հրապուրանաց զեղոյ կարգաւորութեանն՝ զոր ցնորք մտաց ծնան և գեղազարդեցին։

Ո՛չ ինչ նուազ մտացածին և անիմանալի ևս է միւս ևս պատՃառ աղդեցական մուծեալ 'ի պիւթագորականաց բաղմաց։ Օ՝ի ըստ Հերակղիտեայ Եփեսացւոյ[3], մարմինք Հանապազ ծխեն և հոսեն. բաղկացու մասունք նիւթոյն ցնդին անդադար, տեղի տուեալ այլոց մասանց՝ որ ապա և նոքա սպառին մինչև 'ի լուծումն բոլորին, զոր կացուցանեն միութեամբն՝։ Այս շարժումն ան-

1 Եմպեդ. առ. Պորփիւրի յՂ. վարուց Պիւթագոր. էջ 35։ Յամբղիք. գլ. 15. էջ 52։

2 Պլուտ. յՂ. Նախասատ. հոգւոյ, հա. 2. էջ 1028։

3 Արիստոտ. յՂ. երկնից, գիրք Գ. գլ. 1. հա. 1. էջ 473։ Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 6. հա. 2. էջ 847. գիրք. ԺԱ. գլ. 4. էջ 957։

4 Պղատ. 'ի խրախՃ. հա. 3. էջ 207։

զգալն, այլ իրական և հաստատակաց բնաւից էից նիւթականաց, այլայլել հանապազ զորակ նոցա, և փոփոխել զնոսա յայլ էակս՝ որ կերպարանաւք վերս 'ի վերոյ և ներքոյ նմանին առաջնոցն։ Զոր որ ինչ յերկինս էիր, ոչ եւ նոցն ես այսօր. և որ ինչ 'ի սերկեան աւուր, ոչ եւ առ վաղիւ՝։ Յաւուն նմանիմք Աստեւայ, որ դեռ ևս սպասի առ մեզ, այլ բաղում անգամ փոփոխեցան կազմք նորա։

Զոր որ ստոյգ և յարատեւակ գիտութիւն մարթի կալ յայսպիսում անհաստատութեան իրաց, յայսպիսի ուղիս սրբութեանս, և 'ի մանկութեան և 'ի տեղատութեան յեղյեղուկ մնասանց էից։ Որպէս զչափ առնուլ կարիցես զմեծութեան, որ անդադար աճէ և նուազէ[1]։ Այս ուրեմն և գիտութիւնք մեր, հանգոյն գիտելեացն փոփոխականք, չմարթէին հաստատուն և անյեղլի գոլ, և չմարթէր մեզ հատու լինել Հրամարտութեան և իմաստութեան, եթէ ոչ բնութիւնն ինքնին յայտնէր մեզ զհիմունս գիտութեան և առաքինութեան։

Այս ինքն վերպէտցուցեալ զմեզ 'ի զօրութենէ նկատելոյ զանհատս իւրաքանչիւր, ետ մեզ 'ի դասս դասս նկատել զնոսա, ամբառնալով զմեզ 'ի տեսութիւն նախատիպ կերպարանաց էից[2]։

[1] Եպիփանիոս. առ. Դիոգենէս նեայ լսարան. 'ի Պղատ. գիրք Գ. յոգ. 11։

[2] Նոյն անդ յոգ. 10։ Պղատ. 'ի Թեետ. հա. 1. էջ 152։ Յամբղիք. գլ. 29. էջ 136։

3 Պլուտ. յղ. անդորդ. իմաստաս. գիրք Ա. գլ. 3. հա. 2. էջ 877։

Ամենի արդարև փոփոխելիք են զգալիքս, այլ հասարակաբար նկատեալ մարդ և ծառ և սեռք և տեսակք ոչ կրեն ինչ փոփոխումն. ապա ուրեմն տեսութիւնքս այսոքիկ անփոփոխելիք են, և ոչ է պարտ նկատել զնոսա որպէս լոկ տեսութիւնս մտաց անենթակայս, այլ իսկապէս էութիւնս իրաց՝։ Այսպէս ծառ, և խորանարդ զոր տեսանես, պատկերքք են խորանարդին և ծառոյ՝ որ 'ի յաւիտենից զոն յիմանալի աշխարհին, 'ի գերապայծառ և 'ի գերամաքուր կայեանսն՝ ուր բնակեն էութեամբ արդարութիւն, գեղեցկութիւն, առաքինութիւն և նախատիպք ամենայն էից և տեսակաց։

Այլ զինչ ազդեցութիւն մարթիցի ունել թուոց և համեմատութեանց նոցա 'ի տիեզերս։ Իմացականութիւնն համատիւռ 'ի մտաւնս նիւթոյն, ըստ Պիւթագորայ ներգործէ հանապազ՝ 'ի պէսպէս կերպարանս և 'ի ձև փոփոխեալ զնոսա, խնամելով զյաջորդական արագ նորոգումն էից, եղծանելով զանհատս և պահպանելով զտեսակս. այլ հարկաւորեալ յամենայնի, որպէս կէսք կարծեն, ուղղել զմեծասքանչ գործս իւր ըստ մշտնջենական համեմատութեան թուոց. կամ որպէս այլք վարկանին, ըստ յաւիտենական գաղտարարաց էից, որ են նմա որպէս նախատիպք ձեռագիտի։ Ըստ նմին օրինակի պարտ է խմաստ

։ Պղատ. 'ի Պարմ. հտ. 3. գլ. 3. հտ. 1. էջ 422։ էջ 132, 135։ Կիկերո. Ճարտ.

նոյ ակնկատոյց կալ 'ի մի յերկուց աստի իրաց. 'ի յարդարել 'ի հոգւոջ իւրում զներդաշնակութիւնն զարմանալի որ ընդ տիեզերս է, և 'ի սաբաստել յանձին իւրում զառաքինութիւնն՝ զոր ոչ նկատէ զաստուածային էութիւնն։

Ահա զգայն և ցիր բանս մատեանիցդ 'ի մի աձեալ, ջանացայ պարզել քեզ զկարծիս պիտաւ զորակամաց ոմանց. այլ մեթին է յոյժ և խորին վարդապետութիւն թուոցդ, և Ճարակ պարապորդ մնաց, որպէս զի 'ի բազմախուզն կարծիս պառակտել բազմաց։

Կէսք զանազանեն զԹիւս 'ի գաղափարաց և 'ի տեսակաց [1]. այլք նոյնս համարին զնոսա ընդ տեսակս, վասն բովանդակելոյ նոցա այլ և այլ անհատս [2]։ Մին զԹիւս զատ 'ի մարմնոց ասէ կալ, և այլ ոմն՝ թէ 'ի մարմինս անդ կան [3]։ Մերթ թուի նշանակել զտարբ տարածութեան, գոլով զոյացութիւն կամ սկիզբն և ծայր մարմնոց՝ որպէս կէտք գծից և մակերևութից և ատենայն քանակի [4]. և մերթ զտեսակ ևեթ սկզբնական տարերաց [5]։ Զոր օրինակ տարբ հողոյ ունի զտեսակ քառակուսւոյ, իսկ հուր՝ օդ և ջուր զայլաձև եռանկեանց. և այլ և այլ ձևքս այսոքիկ բաւական

1 Արիստոտ. բնազանց. գիրք ԺԱ. գլ. 1. հտ. 2. էջ 953։

2 Պղատ. 'ի Փիլեբ. հտ. 2. էջ 18։

3 Արիստոտ. անդ գլ. 2. էջ 953։

4 Նոյն անդ գիրք Ե. գլ. 1 և 8. գիրք ԺԲ. գլ. 3։

5 Նոյն անդ գիրք ԺԲ. գլ. 5։

էն 'ի մեկնել զարգասիս բնութեան [1]։ Այլ հա-
մառօտ իսկ ասացեալ, բառս այս խորհրդաւոր
յաձախս եւս ըստ կամի նշանակէ զբնութիւն կամ
զէութիւն սկզբնական տարերաց, կամ զտեսակս
նոցա, կամ զհամեմատութիւնս, եւ կամ դար-
ձեալ զգաղափարս կամ զնախատիպս մշտնջենա-
կացս ամենայն էից։

Բայց միտ դիր, զի Պիւթագոր ոչ զօրու-
թեամբ թուոց ասէր լեալ զամենայն, այլ ըստ
համեմատութեան թուոց [2]։ Իսկ ոմանք յաշա-
կերտաց նորա [3] հակառակ այսր բացայայտ ասա-
ցուածոյ տալով թուոց իսկապէս զոյութիւն եւ
ծածուկ զօրութիւն, համարեցան զնոսա պատ-
ճառս բաղկացուցիչս տիեզերաց, այլ զի անսխալութիւն
եղիցէ 'ի պարզել եւ 'ի բացատրել զկարծիս իւ-
րեանց, թողցուք զնոսա 'ի նմին յանձնմարելի մը-
թան։

Մթութիւն եւ նեղհակք, որ 'ի մատեանդ
յայդոսիկ ընդ առաջ լինին ընթերցողաց, յառաջ
դանեսցես 'ի խաւարէ՝ որով միշտ պաշարեալ կաց-
ցէն խնդիրքն 'ի նոցանէ յուզեալք։ Երկրորդ՝
յայլ եւ այլ նշանակութենէ բառից, էակ, ակիզբն,
պարձառ, տարբ, գոյացութիւն, եւ այլ ամենայն
բառից՝ յորոց իմաստասիրականն նոցա կազմի

1 Տիմ. լոկ. առ. Պղատո-
նի. հտ. 3. էջ 98։

2 Թէան. առ. Սոսրէոսի
ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա.
էջ 27։

3 Արիստոտ. յղ երկնից,
գիրք Գ. գլ. 1. հտ. 1. էջ
474։ Նոյն բնաբանից. գիրք
Ա. գլ. 5 և 6. հտ. 2. էջ
845 և 848։

բարբառ՝։ Լաղորդ՝ 'ի սեթևեթից որով երի-
ցագոյնք 'ի բնախօսաց պատուական զվարդապե-
տութիւնս իւրեանց. քանզի 'ի չափ տաղի զնառն
գրելով, առ երևակայութիւն բարբառին յանախ
քան առ միտս[1]։ Լաղորդ՝ 'ի զանազանութե-
նէ ոմոյ բանից որ 'ի վարժարանս ուրեք կալան։
Լաղումք յաշակերտացն Պիւթագորայ 'ի խըն-
դրել զպատճառս էից՝ ամենակատոյց եղէն յիւութիւն
գաղափարաց, որ 'ի միտս մեր էն, և 'ի զգալի
աշխարհէ անցին յանզգաստից յիմանալին. և նո-
բաձին գիտութիւն բնազանցութեան նախամե-
ծար եղև այնուհետև քան զբնաբանականն։ Լա-
վանն զի չև ևս հաստատեալ էին օրէնք խիստ
տրամաբանութենէն՝ որ խափանէ զմիտս 'ի մոլորու-
թեանց[2], փոխանակեաց բանն իշխանաբար զվը-
կայութիւն իւր ընդ վկայութեան զգայու-
թեանցս։ Լնտութիւնն որ միշտ յառանձնաւո-
րութիւն բերի[4], ամենայն ուրեք ընծայէ զբազ-
մութի և զփոփոխմունս. իսկ բանն որ հասարա-
կաբար սիրէ նկատել զամենայն, ամենայն ուրեք
գտանէ միութիւն և անշարժութիւն. և 'ի թը-
ուիչս հիացման երևակայութեան[5] գերատեսնա-

1 Արիստոտ. բնազանց. գիրք Ե. գլ. 1, 2, ևն. հտ. 2. էջ 883, ևն։ Նոյն յղ. հոդ. գիրք Ա. գլ. 7. հտ. 1. էջ 627։

2 Նոյն նշանք օդ. գիրք Բ. գլ. 3. հտ. 1. էջ 555։

3 Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 6. էջ 848։ Նոյն անդ գիրք ԺԱ. գլ. 4. էջ 957։

4 Նոյն անդ գիրք Է. գլ. 16. էջ 324։

5 Պարմենիդ. առ. Սէքստ. Եմպիրիկ. ընդդէմ տրամաբ. գիրք Է. էջ 392։

նեալ յիմանալեաց յիմանալիս, հասանէ մինչև 'ի բարձրութիւն դրութեան՝ յոր և խորագնին միտք դժուարաւ յառել կարէն։

Ասանաւանդ յեղեակսն վարժարանին արուեստ կամ համարձակութիւն հակառաւութեան զամենայն հնարս 'ի կիր արկ։ Ընդ կրկին աղքք տեսութեանց սահմանեցան. միումն ենթակայ՝ մանք մինք հանդերձ զգալի որակօքն, իսկ միւսումն՝ գոյութիւն անենթակայ։ Ասի յառաջ եկին կրկին ոճք. մին հաստատեալ 'ի վկայութիւն բանին և Հնմարտութեան՝ որպէս ասի, միւսն 'ի վկայութիւն զգայութեանց և կարծեաց '. և երկաբանչիւր դրեթէ զնոյն կալան շաւիղ։ Խնամտասէրքն որ յառաջագոյն վկայութեամբ զգայութեանցն վարեցան, կարծէին 'ի ձեռն երկուց ներհակաց յառաջ ածել բնութեանն զարգասիս, որպէս 'ի ձեռն հողոյ և հրոյ, այլոլքն հանդերձ։ Հանդոյն իմն և խնամտասէրքն որք բանին ևեթ վկայութեամբ վարեցան, նկատէին 'ի տեսութիւնս մտաց իւրեանց զգոյութիւն և զչգոյութիւն, զսահմանաւորն և զանսահման, զմին և զբազմն, զգարն և զկոնձառ [1], այլոլքն հանդերձ։

Ասացք զժուարութիւն մեծ յենթակացուցանել զիմանալի տեսական, և 'ի միաբանել զնանզանցութիւն ընդ բնաշնութեան։ Այս այնպիսի

1 Արիստոտ. յղ. բն. լեւ. ցաց. գիրք Ա. գլ. 6. հա. 1. 322։

2 Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 5. էջ 846. գիրք ԺԲ. գլ. 1. էջ 971։

մթին բանիւք զմիաբանութիւնս զայս հնարեցան առնել, զի գժուարին իակ է 'ի միտ առնուլ՝ եթէ բնաբանցօրէն թէ բնաբնաբար ձառիցեն։ Յեսանիցես Պարմենիդեայ մերթ բանալ զամենայն ստեղծմունս և եղծմունս էից 'ի միոջ[1], և մերթ վիճել՝ զի հող և հուր պատճառք իցեն ամենայն արգասեաց[2]։ Պատցես և զայլս որք անմիաբանելի համարին զզգայութիւնս ընդ բանին, և մտացն և եթէ տեսութեան միտ եդեալ՝ վարկանին զզգալիքս առ աչօք երևոյթս, և աղբիւրս անսպառս պատրանաց և մոլորութեանց։ Մինչև միոյ ուրումն 'ի նոցանէ ասել. Ոչիք ինչ ուրեք. և եթէ զոյր ինչ, չէր մարթ գիտել զայն. և եթէ մարթէր գիտել, չէր մարթ զգալ զայն[3]։ Այս այլոց ուրուք 'ի մտի եդեալ՝ զի չէ պարտ մերժել ինչ և ոչ հաստատել, թերահաւատէր ընդ բանս իւր, և նշանացի խօսէր[4]։

Պարտ է ինձ յաւելուլ և օրինակ զձևոյ տրամաբանութեան նոցա, և առնումք զայն 'ի Վասնոտիանեայ՝ որ եղէական աղանդոյն եկաց պետ։ Ի զգոյէ զոյանայ, ասէ, և ոչ ինչ[5]։ Զարդ օրի-

1 Արիստոտ. յդ. Երինից, գիրք Գ. գլ. 1. հտ. 1. էջ 473։

2 Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. Ե. էջ 847. յդ. բն. ըստ լեաց, գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 321։

3 Գորգիաս առ Արիստոտ. տելի, հտ. 1. էջ 1248։ Ի. սոկր. Հելինէ նեբր. հտ. 2. էջ 115։

4 Արիստոտ. բնազանց. գիրք Դ. գլ. Ե. հտ. 2. էջ 878։

5 Նոյն յդ. Քսենոփան. հտ. 1. էջ 1241։ Պիկեր. յդ. բնութեան գից, գիրք Ա. գլ. 11. հտ. 2. էջ 406։ Պղատէս, պատմութիւն նախկին պատմ. հտ. 1. էջ 231։

նացս այսմիկ, զոր ասեն՝ այս աշակերտք նորա հաստատեն, զՀետ գայ՝ զի որ ինչ էն, ի յաւիտենիցն է. և որ 'ի յաւիտենիցն է՝ անսահման է, ոչ ունելով սկիզբն և վախճան. և որ անսահմանն է՝ միակ է, զի եթէ միակ չէր՝ հարկ էր նմա բազումն լինել, և բազումքն լինէին միմեանց սահման, և ոչ էս լինէր նա անսահման. իսկ միակն միշտ նոյն է։ Այդ էն միակ և անսահման և միշտ նոյն՝ պարտի անշարժ գոլ, զի չմարթի խլտել նմա ոչ 'ի գաստարկի՝ որ չէն ինչ, և ոչ 'ի լութեան՝ զոր իւրեն ինչ։ Պարտ է նմա և անփոփոխ գոլ. զի թէ մարթէր և գոյն ինչ կրել նմա փոփոխումն, պատահէր ինչ 'ի նմա որ չգոյր յառաջագոյն, և եղծանէին օրէնքն կարևոր՝ թէ 'ի չգոյէ գոյանայ և ոչ ինչ՝։

Այդ յանսահման էակս յայս որ բովանդակէ զամենայն, և որում կիւ է անմեկնելի խնացակատութիւն և յաւիտենականութիւն՝, չկք յօդուած ինչ մասանց, ոչ զանազանութիւն տեսակաց, ոչ աճումն, և ոչ եղծումն՝։ Այլ թէր մարթի իցէ միաբանել զանփոփոխութիւնս զայս ընդ յարաբերութեան էից։ Փոփոխութիւնքն այնքիկ առաւելք են, ասէր Աստուածաբանն. տիեզերքս

1 Պրուք. պատմ. խմբագրաց. հտ. 1. էջ 1148։

2 Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 5. էջ 847։ Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 19։ Սէքստ. Եմպիրիկ. պիւռոնական կարգադր. գիրք Ա. գլ. 33. էջ 59։

3 Արիստոտ. յդ. երկնից, գիրք Գ. գլ. 1. հտ. 2. էջ 473։

ընծայեն մեզ տեսարան շարժուն. տեսարանն կայ, այլ շարժումն նորա զգայութեանցս մերոց են արդասիք։ Իսկ Օ՛ենան ասէր, թէ չկը և անհնարին իսկ է շարժումն. և յուցակութիւն բանիցն այնպիսի ածէր, ընդ որ զարմանային և կարկեին հակառակաբեր[1]։

Տես ինձ արդ, որդեակ, որպիսի խառարամած լոյս ծագեցին յաչխարհ արքն գերարհուչակք, որոց թուէր զբուսմբ ածեալ զշնութիւն[2]։ Իսանի կոբանաց լինէր առիթ խմստասիրականն մակացութիւն, եթէ երկրայութեամբք սկսեալ[3]՝ի նոր ընդշան վճիռս յայտոսիկ զկայ առնոյր։ Բայց զմեռոցն անբասիր արասցուք. քանզի բազումք՝ի նոցանէ ճշմարտասէրք էին, և կարծէին՝ի յայտ բերել զճշմարտութիւն՝ հրաժարեցուցանելով զչիտութիւնս՝ի նիւթոյ, և մոլորեցան վստահացեալք՝ի բանն՝ զորոյ ոչ զիտէին զսահմանս։ Իսկ իբրև սպառեալ զմոլորութիւնսն՝ առաւել խմաստնացան, ետուն զանձինս նոցին եռանդեամբ՝ի նոյն խնդիրս, քաջադէպս զնոսա համարեալ՝ի կրթել զմիտս, և՝ի ճշգրտել զտիպս իրաց՝ի միտս։

Դարձեալ և պարտ է ասել համարձակ, զի և յոգունք յիմաստասիրաց աստի, անարժանք

1 Արիստ. յոր. բն. ընդ. ացս, գիրք Զ. գլ. 14. հա. 1. էջ 395։ Նոյն յոր. պերճախաս. գիրք Ը. գլ. 8. հա. 1. էջ 274։

2 Նոյն բնազանց. գիրք Ա. գլ. 2. էջ 841։

3 Նոյն անդ գիրք Գ. գլ. 1. էջ 858։

պատկառելի անուանն, 'ի փոքձ ևեթ զօրութեան իւրեանց մնին յասպարեզ առ 'ի կանգնել յաղթանակ յամենի յաղթողին և պարտեալն առհասարակ։ Այլ քանզի բանին՝ կամ մանաւանդ բանական արուեստին հանգոյն այլոց արուեստից եղև տղայութիւն, սահմանք տարտամք և խառնավար իմաստք բառից աջողակ կամ կորուալի ըմբռնման զէնս նորանորս կազմէին միշտ։ Վրեթէ հասաք մեք յաւուրսն, յորս 'ի ցոյց համանշանակ մարթելոյ գոլ բառիցս Φ և Բաղամ, վիճեալ պէտք զէին՝ զի դու մի զոլով իբրև մարդ, երկու իցես իբրև մարդ և երաժիշտ '։ Այլ ոմանք և անտեղի խնդիրքս այսոքիկ անգոնեին արդ, իմաստակաց ևեթ պահեալ։

Ինոյ ինձ բացատրել քեզ և այլ ինն կարծիս, զարմանաւորութեամբն և հանբաւով կարծողացն երևելի։

Ոամիին ոչ այլ ինչ տեսանէ շուրջ զերկրաւս յորում բնակէ, բայց զիսորանանձև յարկս զայս՝ լուսապայծառ 'ի տունջեան, և աստեղազարդ 'ի գիշերի. անդ սահմանին նմա տիեզերքք։ Այլ ըստ իմաստասիրաց ոմանց անսահման են տիեզերքք. և զրեթէ յաւուրս մեր յայն անբաւութիւն ածեալ, մինչև պակնուալ մտաց ընդ այն։

Հանարեցան նախ բնակիչս 'ի լուսնի, և զաստեղս մի մի աշխարհս գոլ. և զաշխարհս դար-

1 Պղատ. 'ի Փիլեբ. հա. 2. էջ 14։

ձեալ անթիւ, զի և ոչ մի 'ի նոցանէ եզը կամ սահմանն է այլոց '։ Եւ աստպարէզ լայն և ընդարձակ բանայ առաջի մարդկեղէն մտաց։ Որ թեթև ընդ այն յամենայն յաւիտեանս, զգեցիր զթեւս արուսեակին, թռիր յերկնային և ընդ արփին որ 'ի վերոյ քան զնա տարածեալ, և գոցես միշտ նորանոր պարունակս, նորանոր գունս, և աշխարհս զմիմեանսիք կուսակեալ։ Որ մինոյն ուրեք գոցես զանսահմանն, 'ի նիւթն, 'ի վայրն, 'ի շարժմանն, 'ի թիւ աշխարհացն և աստեղաց՝ որ են նոցա 'ի զարդ. և յետ բիւրիցս բիւրուց ամաց հաղիւ կէտ մի յանբաւածաւալ սահմանս բնութեան ծանիցես։ Խաբէ, քանի յաձախեաց այսուիկ յաչս մեր բնութեանն մեծութիւն. և եթէ արդարև հոգիս մեր ընդ տեսութիւնս մտաց իւրոց ընդարձակի, և հաւասարէ իմն իրաց որոց հատս լինի, քանի 'ի դէպ է նման մեծամտել՝ զի 'ի խորս յայսոսիկ անհունս եհաս։

Խակ իմ լի եղեալ զարմացմամբ, ասեմ. Այլ 'ի դէպ ինչ նման մեծամտել. և զմէ, ով ծերունիդ պատկառելի։ Մի՞թէ իմ ընկճին յերեսաց սանսահմանն մեծութեանն, առ որով ամենայն ինչ 'ի չիք դառնան. դու, ես, և ամենայն մարդիկ ոչ ես ինչ թուին յաչս իմ, այլ ՀՀՀիք խորասոյզք

1 Քանոնք. առ Դիոգի. 879. գիրք Բ. գլ. 13. էջ նեայ լայերս. գիրք Թ. յոգ. 888։ Պիկեր. յղ. կատար. 19։ Պլուտ. յղ. անդորր. ի. գիրք Բ. գլ. 31. հա. 2. էջ մասասս. գիրք Ա. գլ. 3. 136։ Ցիշատ. բանաս. կա. հա. 2. էջ 875. գլ. 5. էջ Ամա. հա. 9. էջ 10։

յովկեան անբաւ. ուր թագաւորք և աշխարհա-
կալք ոչ իւիք ընդհատ են յայլոց մարդկանէ,
բայց զի կամիցս ինչ աւելի քան զնոսա յուզեն
զքուրցն յորս թաղեալ կան։ Օ՛այսոսիկ լսելով
Կալ իասայ՝ հայեցեալ յիս, և վայրիկ մի զմիտս
իւր յինքն ամփոփեալ, կալաւ ասպա զձեռանէ իմ
մէ և ասէ. Զ՛ձի որ նշմարէ զանսահմանն, որ-
դեակ, հաղորդ է մեծութեանն որ պակուցանէ
զքեզ։ Յ՛ յառաջ ածեալ զբանն, ասէ.

Ի ձեռագիտս որք զամենայն կենաս իւրեանց
պարապեցին յեղծանել և 'ի ստեղծանել զաշ-
խարհս, Լ՛ևկիպպոս և Դեմոկրիտոս հերքեալ
'ի բաց զթիւս, զտիպս իրաց, զերաժշտական հա-
մեմատութիւնս, և զամենայն կազմածս մեքե-
նայից զորս բնազանցութեան մինչև ցայսժամ
կանգնեալն էր, ոչ այլ ինչ պատճառս էից ըն-
կալան քան օրինակի իմաստասիրաց ոմանց, բայց
զդատարկութիւն և զՀիւղեայ. և զՀիւղեայն
իսկ յամենայն զերազանցութեանցն կապտեալ,
զձև և զարժումն ևեթ թողին նմա։ Ա՛ռ նո-
ցին իսկ բանիցն Լ՛ևկիպպեայ և Դեմոկրիտեայ։

Հնարահման են տիեզերքս, անթիւ աշխարհք 'ի
նմա բնակեն, և յորմանք որ հանապազ ծնանին
և կորնչին և անդրէն դարձեալ զոյանան[2]։ Իրք

[1] Արիստոտ. 'ի Բնութեանցն. գլ. 3. յոդ. 18. հա. 1. էջ 30։ Պրուք. պատմ. իմաստս. հա. 1. էջ 1173։

[2] Դիոգ. լայերտ. գիրք թ. յոդ. 30, ենթ։ Նոյն անդ. յոդ. 44։ Պրուք. անդ. էջ 1175։ Պաթիս, պատմ. էջ 363։

ոչ եթէ միտք ինչ զերազոյն իշխեն մեծամեծ յերազոփոխութեանցս, այլ ամենայն ինչ մեքենա-կան և պարզ օրինօք ներգործի 'ի բնութեան։ Կամիս զիտել թէ արպէս մի յաշխարհացս կազ-միցի. զնոսա՛ ած մտաստնս մարմնոց անթիւս, մշանջենակացս, անբաժինս, անայլայլելիս, ամե-նազանս 'ի ձև և 'ի քանակ, որ խառն 'ի խուռն օձտեղով երթևեկիցեն յանհուն զատարկու-թեան։ Զոգ 'ի յաձնախս և յուժգին բաղխմանէ նոցա ընդ միմեանս ստուարագոյնք 'ի մտանց մը-զեալ վարին 'ի մի ուրեք, գործելով միջակեա՛ յորձանացն. իսկ նրբագոյնք շուրջ 'ի բաց խու-սեն, այլք քան զայլս տարակացք։ Զայս յանցա-նել ժամանակաց առաջինք կազմին զհող և զջ-ուր, և նրբագոյնք զօդ և զհուր։ Հուր 'ի թափ-անցիկ և 'ի թեթև գնտակաց յօդեալ պատի զերկրաւ իբր զսարունակ լուսաւոր. օդ յուզեալ մշանջենաւոր հոսանմբ մանեկանց մարմնոց որ 'ի ստորև 'ի վերս ամբառնան, ուղղս ելն գործի սրընթաց, և ուղևորէն ձգէ ընդ իւր զատեղս՝ որ մի ըստ միոջէ կազմին 'ի ծոց նորա[2]։

Զ ամենայն ինչ 'ի բնաբանութեան որպէս 'ի բարոյականին մարթ է մեկնել մեքենական յար և նման օրինօք, առանց ինչ իմացական պատ-

1 Արիստոտ. յլ. ծննդ. գիրք Ա. գլ. 1. հա. 1. էջ 493։ Նշդն. յլ. երկնից. գիրք. գլ. 4. էջ 478։ Պիկեր. յլ. բնութեան գեց. գիրք Ա. գլ. 24. հա. 2. էջ 416։

2 Պլուտ. յլ. անգորդ. խնամասա. գիրք Ա. գլ. 4. հա. 2. էջ 878։

Ձառի։ Ի հիւղեայցն յօդուածոյ կազմի զոյս ցուլթիւն մարմնոյ. անդստին 'ի ձեռս նոցա և 'ի զաստակարգէ յառաջ զան ցուրտ և տօթ, զոյնք և ամենայն այլակերպութիւնք բնութեան'. անդրստին 'ի շարժմանէ նոցա զոյանան և փոփոխին անդադար և եղծանին էքս։ Այլ քանզի կարևոր իսկ է շարժումն նոցա, նմին իրի և բաշխս կոչեմք զայն և Ձակստադիր։ Օ գայսմանէք մեր և զաղափարք ներգործին 'ի մեզ յաղօտ պատկերաց՝ որ յեւից իւրաքանչիւր զիմն 'ի զգայարանս մեր։ Հոգիս մեր վախճանի ընդ մարմնոյ. զի է նա հանգոյն հրոյ յօդեալ 'ի նուրբ գնտակաց՝ զորոց լուծանէ մահ զյօդուած։ Այլ վասն զի չէք ինչ իրասէս 'ի բնութեան բաց 'ի հիւղեայց և 'ի դատարկութենէ, հարկ է ապա խոստովանել՝ զի առաքինութիւնք կարծեաք ևեթ զանազանին 'ի յոռութեանց։

Արկիր պագ Աստուծոյ, որդեակ, և ողբա առաջի նորա զմեղութիւնս մարդկեղէն մնաց, և

1 Արիստոտ. բնազանց. գիրք Ա. գլ. 4. հտ. 2. էջ 845։ Դիոգ. լայերտ. գիրք Թ. յօդ. 72։

2 Պսոր. 'ի Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. գլ. 8. էջ 10։

3 Դիոգ. լայերտ. անդ. յօդ. 44։ Պլուտ. յլ. անդորր. խնստաս. գիրք Դ. գլ. 8. էջ 899։ Կիկերո. յլ. բնութեան դից. գիրք Ա. գլ. 38. հտ. 2. էջ 429։

4 Պլուտ. անդ գլ. 7։

5 Արիստոտ. յլ. հոգւոյ, գիրք Ա. գլ. 2. հտ. 1. էջ 619։

6 Սեքստ. Էմպիրիկ. պիւռռոնական կարգադր. գիրք Ա գլ. 30. էջ 54. գիրք Է. էջ 399։

7 Քուտարքոս. յլ. արդար. և զգօն. յօդ. 2. հտ. 2. էջ 629։ Պրոբ. պատմ. խնստաս. հտ. 1. էջ 1199։

ռ-իտս զիր նմա լինել առաքինի գէթ որպէս զի-մատտաէրսն՝ որոց վարդապետութիւն նկրտէր յեղծումն առաքինութեան։ Օ՛ի ոչ՝ի մատեանս անծանօթս բազմաց, և ոչ՝ի ստեղծս ցնորից մը-տաց կամ հեռանդեան ոգւոյ կամ ըղձից համբա-ւոյ ուսանելի է զկերպարանս բարոյականին՝ զոր ունէին նոքա, այլ՝ի գնացս նոցա և՝ի գիրս՝ յորս զերծք յամենայն կրից զշնմարտութիւն և-թիւնդրեն, և ուր ոչ յայլ ինչ ուշ եդեալ բայց յօգուտ հասարակաց, մատուցանեն բարոյակա-նին և առաքինութեան զհարկ մեծարանացն՝ որ յամենայն ժամանակի և առ ամենայն ազգս ընտ-ծայի նոցա։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Ի նոյն մատենագարան ամենացուցն յաղագս ատենաբանութեան և աշխարհագրութեան։

Լ՝ի վախճանեալ զբանս իւր Կալլիաս մեկ-նեցաւ։ Լաբ ասէ ցիս Լաբկղիդէս. Ի բազմաց հե-տէ խոյզ և խնդիր առնեմ մատենիցն Պետրոնի հիմերացւոյ՝ի Ամիկլիա. զի սա ոչ միայն բազում աշխարհս մուծանէ, այլ և զթիւ նոցա իշխէ սահ-մանել՝։ Լաբ գիտիցե՞ս քանի՞ աշխարհք են ըստ նորա կարծեացն. հարիւր ութսուն և երեք։ Ըստ

1 Պլուտ. յղ. թերութեանց պատգամաց, հտ. 2. էջ 422։

օրինակի եգիպտացւոց համեմատեր նա զտիեզերս եռանկեան՝, վաթսուն աշխարհս՝ ի կողմն իւրաքանչիւր զետեղեալ, և մէկ մի յերեսին անկիւնս։ Այս օրինաց շարժման, որով ազգք ինչ կաքաւուց չափին առ մեզ, աշխարհացս այսոցիկ յուշիկ շրջագայեալ՝ հասանին առ միմեանս, և փոխանակեն՝ ի տեղի իրերաց։ Այնիցոց եռանկեանն է վայր Չինարտութեան. անդ համեմատութիւնք և նախատիպք էից՝ որ եղէնն և որ լինելոց են՝ կան հաստատիւն անշարժք. և շուրջ զպարզ էակօքս կան յաւիտեանք, յորոց բղխեալ ժամանակ որպէս անսպառ վտակ հոսէ և բաշխի՝ ի հոյլս աշխարհացն՝։

Ի սիւթագորական կարգաւորութենէ թուոց ունին սկիզբն կարծիքս այս. և ինձ թուի . . . Այս մինչ դեռ նա զայս ասէր, ընդմիջեցի և ասեմ. Զոքա խմաստասէրքդ ոչ ինչ երկբայիմ, զի նախ քան զյաճախել զթիւ բազմախուռն աշխարհացդ՝ տեղեկացեալ գիտէին զամենայն որ ինչ՝ ի մերումս յայսմիկ կան. և չգուցէ իսկ արդեօք զերկնաւս մերով մարմին, զորոց ոչ զինեալ իցէ նոցա և սահմանեալ զէութիւն, զչափ, զձև և զշարժումն։

Այս կրկնիգէս ասէ. Այժմ իսկ քեզէն՝ ի միտ առցես զայն։ Զևեռ՝ ի միտս քո բոլորակ կամ անուանձև ինչ, որոյ շրջանակ քանանութիւնս մեծ

[1] Պլուտ. Յիսիս և Յսիր. հտ. 2. էջ 373։

[2] Նոյն յդ. Թերութեանց պատգամաց, հտ. 2. էջ 422։

իցէ քան զերկրի, և ամիսփիցէ 'ի ծոց իւր հուր ամբառ։ Լինկանեմ անուշոյն, որոյ տրամագիծ հաւասար է երկայնոյս, Ճառագայթեն ուղիք լուսոյ 'ի լուսաւորել զաշխարհս [1]։ Այս է նկարագիր արեգական։ Այլ զլուսնոյ զնոյն իսկ, համարեալ զբնաբերութիւն նորա ինքնաստանպատիկ մեծ քան զերկրիս [2]։ Ասացայցատագոյն ևս պարզեցից քեզ. հրային մասունք որ ամբառնան յերկրէս՝ համանհաւաքեալ 'ի տունջեան 'ի մի կէտ երկնից՝ կազմեն անդ զարեգակն, և 'ի գիշերի 'ի բազում կէտս՝ փոխելով յաստեղս։ Այլ զի սղոիքս այսոքիկ հրայինք գիւրասպառք են՝ նոքոգին հանապազ, պատրաստել մեզ օր ըստ օրէ նոր արև 'ի տունջեան, և յիւրաքանչիւր գիշերի աստեղս նորս [3]։ Որով եղև երբեմն առ 'ի չգոյէ Ճարակի չլուսաւորել արեգական զամենօրեայ մի ժամանակ [4]։ Այսին իրի և պատի նա զերկրաւ. զի եթէ անշարժ էր, փոյթ սպառէին սղոիքն՝ զոլոր Ճարակի [5]։

Լակ իմ պլուցեալ զարմացմանէ ընդ երեսս Լաւկղիդեայ, ունկն զնէի նմա. և իբրև վախճա-

1 Պլուտ. յլ. անդ զրբ. խնամ. տաս. գիրք Բ. գլ. 20. հտ. 2. էջ 889։ Ստոբ. Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 55։

2 Պլուտ. անդ գլ. 25. էջ 891։

3 Պղատ. յլ. հատ. գիրք Զ. հտ. 2. էջ 498։ Պլուտ. անդ գլ. 24. էջ 890։ Բասնոսի. Ստոբ. Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 54։ Պլուտ. պատմ. խնամատաս. հտ. 1. էջ 1154։

4 Պլուտ. անդ։ Ստոբ. անդ էջ 55։

5 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 2. էջ 551։

նեաց զբանն, ասեմ. Լուեալ եմ զմոջէ յազգաց Թվակիոյ այնպէս Թանձրամիտ գոլ, զի անդր քան զքառասնից Թիւ համարել ոչ կարէ [1]. մի գուցէ 'ի նմանէ զօտարացուցիչս զայսոսիկ բերես ինձ զիտութիւնս։ Լաւկղիդէս ասէ. Ոչ այդպէս, այլ բազումք յերևելագոյն իմաստասիրացս մերոց առանդէն զայսոսիկ. և ընդ նոսին Նաքսիմանդր և Հերակղիտոս, յորոց երիցագոյնն երկերիւր ամաւ յառաջ քան զմեզ եկաց։ Յետ նոցա և այլ կարծիք եղեն, ոչ իբրև զառաջինսն անտեղիք, բայց դարձեալ անստոյգք, և կիսք յայնցանէ խոտվեցուցին զամբոխն։ Նաքսագոր որ ընդ Հարս մեր եկաց, ուսուցանէր՝ Թէ լուսին երկիր է հանգոյն իմն մերումն, և արեգակն վէմ հրացեալ. վասն որոյ կասկած ամենայնի Թեան լեալ զնմանէ, հալածեցաւ յԱթենայ [2]։ Դրանգն ռամիկն զերկոսին լուսատուսն աստուածս համարէր. և կրտսերագոյնք յիմաստասիրաց երբէք երբէք համձայնեալ նմա [3], ամբեցին զնմանէ հաւատ վերաժինդրութիւն որ նեղէ զամենայն որոց ողբքեն զնա։

Հարցի զնա, և ասեմ. Լաւ ուստի յայտ է, զի լուսին իբրև զերկիրս իցէ։ Լաւկղիդէս ասէ. Ոչ

1 Արիստոտ. առաջարկ. 15. հտ. 2. էջ 752։
2 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 815։ Պղատ. պատասխ. հտ. 1. էջ 26։
Պլուտ. յղ. մեռելութիւն, հտ. 2. էջ 169։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 8։
3 Պղատ. յղ. օր. գիրք Է. հտ. 2. էջ 821, և այլուր։

է յայտ, այլ կարծիք էն. քանզի այսպէս ուրուն գուշակեալ զլծացն որ 'ի նմա երևին, թէ մարթի նոցա ստուերս զոլ լերանց, եթէ գուցէն 'ի նմա լերինք, ասսի այլք առին հաստատել՝ թէ ի յոլեն 'ի լուսնի լերինք և ձորք, գետք, դաշտք և բազմութիւն քաղաքաց [1]։ Այսպա յետ այնորիկ պարտ էր հետազօտել՝ թէ սոյք բնակիչք քաղաքացն էին։ Ոստ Աբենոփանեայ հանգոյն մերումն է նոցա կենցաղ [2]. և ոմանք յաշակերտացն Պիւթագորայ համարին զերկրագոյն քան զմերս զոլ զտունկն որ անդ, և զկենդանիս ստուարագոյնս հնգետասանապատիկ քան զմերսն, և զաւուրսն հնգապատիկ երկայնագոյն [3]։ Իսկ ես ասեմ. Անշուշտ ասպա և հանձար բնակչացն անդ հնգետասանապատիկ գերազանց քան զերկրականացս իցէ. ախորժելի ինձ այս կարծիք։ Այլ քանզի բնութիւն ձոխագոյն է բազմակերպ զանազանութեամբ քան սեռիւք էից, հաճոյ թուի ինձ բաշխել յայլև այլ մնջրակս ազգս մարդկան՝ որ միով և երկու և երիւք և չորիւք զգայարանօք առաւելագոյն քան զմեզ. և ասպա համեմա-

1 Պլուտ. յղ. անդորբ. ի մասասաս. գիրք Բ. գլ. 13 և 25. հտ. 2. էջ 888 և 891։ Ստոբ. ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 60։ Աբիկ. Տատ. Նեբատ. առ. Պիսաւիսոսի, հտ. 3. էջ 83։ Կիկեր. ակադ. 2. գլ. 39. հտ. 2. էջ. 51։ Պրոկղ. 'ի Տիմ. գիրք Դ. էջ 283։

2 Աբենոփան. առ. Լակատանտիոսի կարգագրբ. գիրք Գ. գլ. 23. հտ. 1. էջ 253։

3 Պլուտ. անդ գլ. 30. հտ. 2. էջ 892։ Ստոբ. անդ։ Նեսեբ. պատրաստ. աւետ. գիրք ԺԵ. էջ 849։

տեալ զհանձար նոցա ընդ այնոսիկ որ Յոչլաղա պայծառացան, թշուառազոյնս յոյժ զտոնեմ առ նոքօք զՀոմերոս և զՊիւթագոր։ Լուկղնդէս ասէ. Պիսոկրիտոս խնայեաց զփառս նոցա 'ի թշնամանագիր զուզակշռոյդ. և խելամուտ արդեօք գոլով զերազանցութեան մարդկան սեռիս, նոյն ամենայն ուրեք համարեցաւ զանհատս նոցա։ Ուստի ըստ նորին կարծեաց, համաբուռնք իրեարաց մարդիկ և նովին կենցաղով Հնահատրեալք ամենայն ուրեք բնակեալք, յերկրի ատ, 'ի լուսի անդ, և յամենայն աշխարհս որ ընդ տիեզերս իցեն '։

Օ զիս խնամնկալս մոլորակաց կերպարանեալք հեծեալ 'ի կառս, զի պատուականագոյնք էն առ մեզ կառք։ Լոկ եգիպտացիք 'ի նաւս զնոսա կացուցանեն, զի զրեթէ ամենայն երթևեկ նոցա ընդ Նէղոս է [2]. վասն որոյ Հերակղիտոս զարեզարկն և զլուսին նաւաձև կերպարանս [3]։ Ոչ ևս երկարապատում առնեմ զնոսոսի և զյախուռն կարծիս զձևոյ ատտեղաց. այժմ զրեթէ ամենեքին միաբանին զնաւաձև զոլ նոցա [4]։ Լոկ զչափոյ նոցա, ոչ բազում ինչ ժամանակք էն՝ զի

1 Կիկերո. ակադ. 2. գլ. 17. հտ. 2. էջ 25։

2 Կուսկերոս Հարպոկր. էջ 14։ Քէյլիւս, հաւաք. հնուն թեաց, հտ. 1։ Մոնֆոքոն. մեկն. հնութեանց յաւել. հտ. 1։

3 Պլուտ. յոլ. անդորբ. խնասաս. գիրք Բ. գլ. 22 և 27։ Աբիւլ. Տատ. Ներսէ. գլ. 19. առ Պետասիոսի, հտ. 3. էջ 82։

4 Արիստոտ. յոլ. Երկնից, գիրք Բ. գլ. 8. հտ. 1. էջ 461. գլ. 11. էջ 463։

Ամենաբազոր զարեգակն մեծագոյն քան զԱղեղ-պանէս հանսրէր, և Հերակղիտոս ոչ ինչ աւելի քան զոմնաչափ մի զարամնգիծ նորա՝։

Ամեմ։ Լսատիանեսս զիս՝ի հարցանելոյ զչափուց այլոց մոլորակացն. այլ զոմնեա ծանօթեալ ինչն իւրաքանչիւր նոցա կայեանք յերկինս։ Լաւկղոդէս ասէ. Յոյժ աշխատ եղէն խնամտասելոք մեր՝ի սահմանել զկայս նոցա, և յայլ և այլ հերձան կարծիս։ Ակեաք՝ի վերոյ քան զերկիր զեսեղէն զլուսին, զփայլածու, զարուսեակ, զարեգակն, զՀրատ, զլուսընթաց և զերևակ.՝ի սոյն եղէն կարծիս՝ի սկզբանէ եգիպտացիք[2] և քաղդէացիք[3], և Պիւթագոր զսոյն վաղեմի կարգաւորութիւն եմոյծ յԱղլադա[4]։ Ամենայն որ այժմ առ մեզ հասարակաց կարծիք՝ այսպէս կարգաւորէն զմոլորակս. լուսին, արեգակն, փայլածու, արուսեակ, Հրատ, լուսընթաց և երևակ[5]։ Ի հռչակ ա-նուանն Պղատոնի, Լաւդոքսեայ և Ամբիստաեղի[6] մեծարի կարգաւորութիւնս այս, Թէպէտ և վերոյ՝ի վերոյ ինչ զանազանի՝ի միւսմէն։

1 Պլուտ. յղ. անդորբ. խնամտաս. գիրք Բ. գլ. 21. հա. էջ 890։

2 Դիոն. պատմ. հռոմ. գիրք ԼԷ. էջ 124։

3 Մակրոբ. անուրջք Սկիպ. գլ. 19։ Ռիչիոլի տրմաՀ. գիրք Թ. էջ 280։

4 Պլին. գիրք Բ. գլ. 22. հա. 1. էջ 86։ Կենսոր. յղ. աւուր ծննդ. գլ. 13։ Պլուտ. յղ. ծննդ. հոգ. հա. 2. էջ 1028։ Ռիչիոլի անդ գլ. 2. էջ 277։

5 Պղատ. ՝ի Տիմ. հա. 3. էջ 38։ Նոյն յղ. հաս. գիրք Գ. հա. 2. էջ 616։ Պլուտ. յղ. անդորբ. խնամտաս. գիրք Բ. գլ. 15։ Նոյն յղ. աշխարհի առ. Ամբիստաեղի, հա. 1. էջ 602։

6 Պրոկ. ՝ի Տիմ. գիրք Դ. էջ 257։

Վանզի խոիր զանազանութեանն է՝ ի գիւտս ինչ ևեթ եգիպտացւոցն, զոր Յոյնք հնարին յեղանակաւ իմն յարիշտակել՝ ի նոցանէ։ Բ.ստեղաբաշինք եգիպտացիք խելամուտ եղեն, զի փայլածուն և արուսեաին անմեկնելիք յարեգակնէ[1], զնոցն շարժումն ընդ նմա գործելով, պատին ևս զնուազ անդադար[2]։ Ըստ Յունաց, Պիւթագոր նախ գիտաց՝ զի աստղն Հերայ կամ Բ.ստղկան բազմափայլ՝ որ՝ ի մուտս արեգականն ծագէ գիշերավար, նոյն ինքն է երևեալն յելս արևու[3]։ Լ.ս վասն զի պիւթագորականք և այլոց աստեղաց և մոլորակաց զնոյն ընծայեն կրկնակ երևումն, ապա ոչ՝ ի խելամտութենէ անտի որ ընծայի Պիւթագորայ՝ ի պարծանս՝ ծանուցաւ աբուսեակին շուրջ զարեգակամբ հոլովումն։ Բ.յլ ըստ գիւտից քրմացն եգիպտացւոց հարկ է արուսեակին և փայլածուի մերթ՝ ի վերոյ և մերթ՝ ի ներքոյ արեգական երևել, և մարթ իսկ է առանց իրիք անտեղութեան ընծայել նոցա զկրկնակ դիրսն[4]։ Այսն որոյ եգիպտացիք ոչ ինչ փոփոխումն արարին՝ ի վաղնջական կարգաւորութիւն

[1] Տիմ. լոկր. առ Պղատ. հտ. 3. էջ 96։ Կիկերր. առ Նուրջք Սկիպ. հտ. 3. էջ 412։

[2] Մակրոբ. անուրջք Սկիպ. գլ. 19։

[3] Դիոգ. լայերտ. գիրք Դ. յօդ. 14։ Փաւորին. առ Նմին, գիրք Թ. յօդ. 23։ Սոսք. Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 55։ Պլին. գիրք Բ. գլ. 8. էջ 75։ Ցիշատ. բանաս. կանաս. հտ. 14. էջ 379 և 478։

[4] Մակրոբ. անուրջք Սկիպ. գլ. 19։ Պայլէի, աստեղաբաշխ. Նախն. էջ 170։

մոլորակացն յաստեղացոյց պատկերս իւրեանց՝,
Կարծիք նորանշանք՝ի վարժարանին Պիւթա-
գորայ՝ի վեր երևեցան։ Կատես դու՝ի մատեանս
յայս Լակետասայ սիրակուսեցւոյ, զի ամենայն ինչ
անշարժ կայ յերկինս, աստեղք, արեգակն, և
լուսին իսկ զլիսովին. և երկիր միայն շուրջ զիւրև-
արագ հոլովմամբն գործէ յաչս մեր զայն ամե-
նայն երևայեթս աստեղաց։ Բայց նախ զանշար-
ժութիւն լուսնի ոչ է մարթ միաբանել ընդ յեղ-
մանս իւր. և դարձեալ՝ զի եթէ երկիր շրջէր
զառանցիւքն, մարմինք ձգեալք՝ի գեր՝ի վեր
բարձրութիւն, ոչ՝ի նոյն տեղի ուստի ձգեցանն՝
դարձեալ՝ի վայր անկանէին. այլ զի՝ի նոյն տե-
ղի միտեալ լինէին, փորձ իսկ իրացն յայտ առ-
նէ։ Այլ թող զայս, ամպարշտութիւն է իշխել
վրդովել յանշարժ հաստատութենէն՝ զերկիր,
որ յամենայն ժամանակի համարեցաւ միջակետ
աշխարհի, որբարան դից, բազին, զօդ և կապ
միութեան էից։

Կարձեալ և՝ի Ճառս յայս Փիլոզայոս կապ-
տեալ յերկրէ զանկարատելի յառաջամտութ-
իւնսն, հրոյ ընծայէ զնոսա։ Այլ հուրս այս ար-

1 Զիշատ. կամառ. դի-
տութեց, տմ 1708. պատմ.
էջ 110։
2 Թէոփր. առ Պիկեր. ա-
կադ. 2. գլ. 39. հտ. 2. էջ
51։ Դիոգ. լայերտ. գիրք Ը.
յօդ. 85։
3 Արիստոտ. յղ. երկնից,
գիրք Բ. գլ. 14. հտ. 1. էջ
470։
4 Պլուտ. յղ. կերպաս. որ
՝ի լուսնին երևի, հտ. 2. էջ 923։
5 Տիմ. լոկր. առ. Պղատո-
նի, հտ. 3. էջ 97։ Պատ-
ճառակաթաղ բնաբ. գիրք Ա.
էջ 51։

փայլին վառարան եղեալ տիեզերաց, 'ի միջակէտ անդր նորին ունի զտեղն. և շուրջ զնովաւ հոլովվին անդադար պարունակք տասն. անմոլար աստեղայն, արևուն, լուսնին և հնգից մոլորակայն*, երկրիս, և միւս ևս երկրի որ անսերևոյթ է աչաց մերոց՝ թէպէտ և ոչ ինչ հեռի 'ի մէնջ'։ Ոչ ևս լոյս արեգականն իւր ինչ է, այլ եկամուտ. զի հանգոյն ինն հայելւոյ կամ բիւրեղեայ գնտի զհրոյն արփայնոյ ցոլացուցանէ 'ի մեզ անդրադարձ զՀառագայթս[1]։

Բ. Զի կարգաւորութիւնս այս, զորմէ Պղատոն ուրեք ուրեք ստրջանայ՝ զի ոչ սովին վարեցաւ կարծեաք 'ի գիրս իւր, ոչ 'ի փորձս ինչ հաստատեալ է՝ այլ 'ի Հահաւորութիւն ևեթ։ Զի որ պէս համախոհք նորա ասեն, հրոյ յատակագոյն գոլով քան զՀող՝ պարտ է նմա 'ի միջոցի տիեզերաց որպէս 'ի պատուականագոյն տեղւոջ զկայ առնուլ[2]։

Ոչ էր բաւական զկարգ ևեթ մոլորակացն սահմանել. պարտ էր և զայն ցուցանել՝ թէ որչափ տարակացք 'ի միմեանց զբջագայութիւնն

* Յառաջ քան զՊղատոն և յաւուրս նորա մոլորակ աստեղ խմանային զփայլածու, զարուսեակ, զՏիրատ, զլուսնն, թագ և զերկակ։

1 Սաղ. Ծաղկաբաղ բնաբ. գիրք Ա. էջ 51։ Պլուտ. յղ. անդորր. խմաստաս. գիրք Գ. գլ. 11 և 13. էջ 895։

2 Պլուտ. անդ գիրք Բ. գլ. 20. էջ 890։ Սաղ. Ծաղկաբաղ բնաբ. գիրք Ա. էջ 56։ Աբիլ. Ցաս. Ներատ. գլ. 19. առ. Պետաւիոսի, հատ. 3. էջ 81։

3 Աբիստոտ. յղ. Երկնից, գիրք Բ. գլ. 13. հատ. 1. էջ 466։

առնիցեն։ Այսպէս Պիւթագոր և աշակերտք նորա զամենայն ցնորս մնաց իւրեանց սպասէցին։

Այսորակք, քանզի ընդ արեգական և լուսնի եօթն են թուով, եօթնաղի 'ի նոցանէ կոչեցաւ։ Վասն իսկ զի քնարս այս 'ի կրկին քառաղեաց կցորդի՝ միացեալ միջնորդաւ միով աստիճանաւ, որք 'ի յարաձայն ազգ երաժշտութեան զայս կարգ ընծայեն հնչմանց. ան, ոն, ոէ, դ, քա, ոօլ, լա։ Այդ այսպէս համարեալ՝ զի ան զլուսին ցուցանիցէ, ոն ցուցանէ զփայլածու, ոէ զարուսեակ, դ զարեգակն, քա զՀրատ, ոօլ զլուսնութիւն, լա զերեւակ։ Որով խտիր տարակայութեան լուսնի՝ որ է ան, 'ի փայլածուէ՝ որ է ոն, գտանի կէս աստիճան. և ընդ փայլածուն կամ ընդ ոն և ընդ արուսեակն կամ ընդ ոէ՝ աստիճան մի. այս ինքն զի տարակայութիւն արուսեակին 'ի փայլածուէ գտանի կրկնապատիկ տարակայութեան փայլածուին 'ի լուսնոյ։ Այս է առաջին քնարն երկնային։

Յաւելան ապա այլ եւս լարք երկու առ 'ի ցուցանել զտարակայութիւն երկրի 'ի լուսնոյ, և զերեւակին յանմեղաբար աստեղաց։ Խաժանեցան երկոքին քառաղիքն՝ յորոց նորս այս յօդէր քնար, և յարդարեցան ըստ զունաւորն ազգի երաժշտութեան՝ որ 'ի կարգ ձայնիցն գործէ համեմատութիւնս անմանս յարաձայնին։ Հաւասիկ օրինակ նորոյ քնարիս '.

1 Պլին. գիրք Բ. գլ. 22։

Տարակայութեան ընդ երկիր և ընդ լուսին . . . աստիճան մի .
Ընդ լուսին և ընդ փայլածու . . . . կէս աստիճան .
Ընդ փայլածուն և ընդ արուսեակ . . . կէս աստիճան .
Ընդ արուսեակն և ընդ արև . . . . մի և կէս աստիճան .
Ընդ արեգակն և ընդ հրատ . . . . աստիճան մի .
Ընդ հրատն և ընդ լուսընթաց . . . կէս աստիճան .
Ընդ լուսընթաց և ընդ երեսակ . . . կէս աստիճան .
Ընդ երեսակ և ընդ անմոլար աստեղս . աստիճան և կէս ։

Այլ քանզի աստիճանքս այսոքիկ տան եօթեն ձայնս փոխանակ վեցից՝ որովք ուսեալքն կատարի , երբեմն առ բարեյարմար ևս համանձայնութիւն՝ բարձին աստիճան մի 'ի տարակայութենէ երևակին , թողեալ կէս աստիճան և ևեթ ընդ նա և ընդ հաստատուն աստեղս խորհր ՝ . նոյնպէս և ընդ արուսեակն և ընդ արև ։ Այլ այլ ևս փոփոխումունք եղեն յաստիճանսն 'ի զետեղել զարեգակն 'ի վայր քան զարուսեակն և զփայլածու , փոխանակ զետեղելոյ զնա 'ի վերոյ նոցին [2] ։

Այլ առ 'ի հաշիւ տարակայութեան արփային մնարմնոց , ետուն աստիճանաց իւրաքանչիւր հարիւր քսանևվեց հազար ասպարէզս [3] . և 'ի ձեռն այսր չափոյ դիւրին եղև առնուլ զչափ ընդարձակութեանն , որ ընդ երկիր և ընդ պարուսնակ անմոլար աստեղացն անջրպետ ։ Այլ միջոցս այս անձկանայ և ընդարձակի լաստ առաւել կամ նը-

[1] Կենսոր . յԶ . աւուր 3 . էջ 80 ։
Ծննդ . գլ . 13 ։
[2] Ալքիզ . Տաս . նեբաձ . հատ . 1 . էջ 86 ։
Գլ . 17 . առ Պեռաւիքոսի , հա .
[3] Պլին . գիրք Բ . գլ . 21 .

ւազ պատկառ կալոյ օրինաց ինչ երաժշտական համեմատութեանց։ Իսկ յառաջադրեալ սան-դղոցս՝ տարակայութիւն ստեղծաց յարեգակնէ, և արեգականն յերկրէ, ունին զհամեմատութիւն հինգերորդին կամ երից աստիճանաց և կիսոց. այլ ըստ այլազգ հաշուոյ երկոքին իսկ ան-ջրպետքս գտանին երից և ԼԵԹ աստիճանաց, այս ինքն երեքարիւր եօթանասուն և ութ ասպարէզ։

Օգաց Լուկղդէս զի տաղտկութիւն էր ինձ ընել, և ընդ քիմն ժպտելով՝ ասէ. Ցաղտկալի թուին քեզ բանքս։ Լաւ ես ասեմ. Բայց. մի թէ հարկ իցէ բնութեան փոխել զիւր օրէնսն ըստ հաճոյս ձեր. կէսք յիմնատասիրաց ձերոց վի-ճեալ սնդին՝ զի հուր յատակազոյն է քան զհող, և վաղ ընդ փոյթ պարտի երկիրս տեղն տալնմա և մեկնել ի միջակիսն աշխարհի։ Լթէ այլք զգունաւորն երաժշտութիւն կամ զյարաձայնն նախամեծար առնիցեն, հարկ է արփային մար-մնոց նոյնհետայն հեռանալ կամ մերձենալ մի-մեանց։ Լաւ զինչ արք գիտնաւորք զայսպիսեաց զմնաւ ածիցեն ցնորից։ Լուկղդէս ասէ. Ի՞երթ համարին զայնոսիկ՝ խաղս մնաց, և մերթ էս հնարից այնոցիկ՝ որք փոխանակ ուսանելոյ զլնու-թիւն էից՝ կամին զուշակել զայն։ Բայլ ես օրի-նակաւս այսուիկ ջանացայ ցուցանել քեզ, զի սա-

1 Պլին. գիրք Բ. գլ. 24. 2 Նոյն անդ։
հա. 1. էջ 86։

տեղաբաշխութիւն յաւուրս հարցն մերոց դեռ 'ի տղայութեան էր, և զարդիս իսկ ոչ ինչ աւելի զարգացեալ։

Լսեմ. Լալ էն ձեր չափաբանք, որ տքնին հանապազ 'ի քննել զշրջանս մոլորակաց, և 'ի խնդրել զտարակայութիւն նոցա յերկրէս[1]. ոչ ինչ երկբայիմ զի նոյնք և 'ի վաղնջուց ժամանակս լեալ էն ձեր. արդ զինչ շահ 'ի զիշերաջանն տքնութեանցն նոցա եղև։ Լակղիդէս ասէ. Ճառս բազումս արարաք, այլ զինութիւնս կարի սակաւս, և սակաւագոյն յոյժ գիւտս։ Լթէ իցեն ինչ առ մեզ ստոյգ գիտութիւնք զշրջանաց աստեղաց, ամենայն եգիպտացւոց և քաղդէացւոց էն վաստակք[2]. 'ի նոցանէ ուսաք կազմել զցուցակս տօնից տարեկանաց և զժամանակի հնձոց և սերմանեաց և գոլծելոյ զերկիր։ Լ նման և զել և զմուտ զլխաւոր աստեղաց նշանակեմք, և զյեղյեղակս ամպրայնոյ և ձմերայնոյ, և զգարնային և զաշնային հասարակաւորութիւնս, և զյեղմունս օդոց գուշակելով[3]։ Լաղուամք 'ի տումարաց աստի հաւաքեալ կան առ իս. կէսք վաղեմիք յոյժ, այլք այլոց նահանգաց երկրի պատկա-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Դ. էջ 814։ Արիստոտ. յլ. երկնից, գիրք Բ. գլ. 14. հտ. 1. էջ 470։

2 Երոդոտ. գիրք Բ. գլ. 109։ Նպէն. առ. Պղատոնի, հտ. 2. էջ 987։ Արիստոտ. անդ. գլ. 12. հտ. 1. էջ 464։ Սոփոք. գիրք ԺԷ. էջ 806։

3 Թէոն. զմիւռն. նոյն Ա. բաս. էջ 93։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 94։ Պլուտ. երկնաբան. հտ. 3։

նաւորք. բայց է ինչ յամենեսին՝ի նոսա զարմանալի, զի զմեղեալսն և զանարդսին փոխիսմանս և զգայնոցին և զաշնոցին հաստատակաւորութիւնս ոչ՝ի նոցին ստորինսն ստուերատանց կէնդամաբերին հաստատեն։ Յաւ պատճառք վերիպալ կիս այսմիկ կարծեմ՝ շարժումն ինչ յաստեղս զոլ ցայժմ անծանօթ[1], կամ՝ զգիտութիւն ստուերագիտացն։

Ի յօրինուած ցուցակացս այսոցիկ յերկուց զարուց հետէ պարապէն ստուերաբաշխք մեր, Կղեմոտրատ տեսնելոցսի՝ որ յԱղա լերին զաստեղագիտութիւնսն առնէր, Պատրիկեստաս մեթիմնեցի՝ որ՝ի Լեպեոտիմոն լերին, Փայինաս աթենացի՝ որ՝ի Լիկաբեդգա բլրին[2], Ղոսիթէոս, Լուկտեմոն[3], Ղեմոկրիտոս[4], և այլք զբաս աւելորդ է թուել մի ըստ միոջէ։ Ղաժուսրութիւն մեծ, կամ՝ մնասանդ միակ խնդիր զերաժուարագոյծ այն էր, ածել զոմնս տարեկանս՝ի նոցին յեղանակ, և՝ի նոցին օր՝ պատուիրեալ՝ի հրամանաց դից և յօրինաց[5]։ Վասն որոյ պարտ էր սահմանել ճշդիւ զչափ տարւոյ, զարեգակնայնոյն

1 Փիլոն Ջան. ժամանակագր. էջ 483։ Պաղլէի, աստեղաբաշխ. նախնեաց, էջ 191 և 421։

2 Թէոփր. ի բառն Περὶ Σημ. առ Սկալիգերայ յղուզ. գիրք Բ. էջ 72։

3 Պաղամ. յղ. երկ. յերկնաբան. էջ 53։

4 Դիոգ. լայերտ. ի Դիմոկր. գիրք Թ. յօդ. 48։ Կենսոր. յղ. աւուր ծննդ. գլ. 18։ Սկալիգ. անդ. էջ 167։

5 Գեմին. սկզբունք աստեղաբաշխ. գլ. 6. առ Պետասոսի, հա. 3. էջ 18։

և զլուսնականին, և միաբանել զնոսա ընդ միմեանս, որպէս զի ծնունդք լուսոյ՝ յորս կաստարին հանդէպք տօնից մերոց՝ հանդիպէին 'ի զլիաւոր կէտս տարւոյ 'ի սկիզբն յեղանակաց։

Բաղում ինչ ընդունայն փորձք՝ հորդեցին Ճանապարհ Աստուծոյ աթենացւոյ։ Յառաջնումն ամի ութսներորդի եօթներորդի ողիմպիադին* ամ սուք իբր տասնմբք նախ քան զպերզոպոլեսակսն պատերազմն[1], Աստուծոյ օգնականութեամբ Լիկոնեմնի զոր յառաջ յիշատակեցաք[2] դիտեալ զկէտն ժամանդիտակ ամանուամնոն, եզիտ զենեւատասներեակն շրջան արեգակնային ամաց, որ բովանդակէ երկերիւր երեսունեւհինգ ամիս լուսոյ. զի 'ի լրման ինեւատասներեկին՝ արեգակն և լուսին զրեթէ 'ի մի կէտ երկնից հանդիպին։

Այլ թէպէտ և կատարեալ երդիծանէին զնա[3], պայծառ յաղթութիւն պատեաց զՀունս նորա[4], մանաւանդ թէ զգողջոյս. քանզի ասէն առեալ նորա զշրջանս զայս յաղագաց, որ 'ի ժամանակին յայնմիկ հմուտք էին քան զմեզ յատեղաբաշխութիւն։ Այլ թէ այսպէս և եթէ այն, աթենացիք ետուն քանդակել 'ի ժողովարանն 'ի Պնիքս յորմն զժամանդիտակ կէտս հատարակօ-

* Ն. Բ. 432 ամք։ Ի յեակոյս մասանիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Ա։

[1] Թուկիդ. գիրք Բ. գլ. 2։

[2] Պղուտ. 'ի մեծի շարադրածին ասասելաբ. գիրք Գ. էջ 63։

[3] Ագիսասոփ. 'ի Հաւան, տող 998։

[4] Ագատ. 'ի բառն Διοσημ. էջ 92։ Պարապ. անդ։

բութեանցն և զյեղյեղակաց՝։ Յարեմուտնոցա հանդիպէր յառաջագոյն 'ի ծնունդ լուսնին յետ ձմերայնոյ յեղյեղակին, և սահմանեցաւ սկսանել յետ այնորիկ ցամն 'ի ծննդեան յետ ամառնամուտ յեղյեղակին[2], և յայնժամ Աղբինքն կամ աւագագոյն իշխանք կացին Լաթէնս[3]։ Բազմագոյնք յայլոց ևս ազգաց Նշաղագ փութացան 'ի կիր առնուլ զհաշիւս Մետոնի[4]. և նոքաք արդ յօրինին ցուցակք՝ որ 'ի բազում ուրեք քաղաքս կախին զսեռնոց, յեղանակաւ ինն յանդիման առնելով ընդ ամն ինն ևտասն զկարգաւորութիւն երկնից և զդէպս տարւոյն։ Օր էն 'ի նմա ըստ իւրաքանչիւր ամի կէտք սկզբան յեղանակաց, և ըստ աւուր աւուր գուշակութիւնք յեղման օդոց[5]։

Մինչև ցայս վայր զնոյութիւնք աստեղաբաշխին Յունաց 'ի կարևոր կէտս ամիսոցին և յեղումնաւ աստեղաց. այլ ոչ 'ի սմա է տիրապէս աստեղաբաշխութիւն. պարտ է նմա ընդ երկար կրթութեամբ հաստատ լինել շրջանաց արփայնոյ մարմնոց[6]։

Լուցուքս, որ յառաջ քան զամն ինչ վախճանել-

1 Փիլոք. 'ի Պարապմունսն Աբիստոտելեանց, 'ի հատսն, տող 998։ Եղիան. զան. պատմ. գիրք ի. գլ. 7։ Սուիդ. 'ի բառն Μέτων.

2 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հտ. 2. էջ 767։

3 Տատուէլ. յղ. շրջանաց, հատ. 3. յօդ. 35։

4 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 94։

5 Թէոն. զմիւռն. յԱրատ. երևութ. էջ 93։ Սամասոս, հրատ. 'ի Պլին. էջ 740։

6 Եփին. առ. Պղատոնի, հտ. 2. էջ 990։

ցաւ, եբաց նոր ասպարէզ։ Խաղում ժամանակս եղեալ նորա ՅԱգիպտոս, և փոքր 'ի շատէ գողացեալ զգաղանիս քրմաց աշխարհին, ած առ մեզ զգիտութիւն շարժման մոլորակաց[1], և առանձեաց զայն 'ի բազում գիրս իւր։ Եկա 'ի վերայ սեղանոյդ կոմն Ճառք նորա, մակագրեալն Հայելի, և որ յաղագս Լրագրութեան արփային մարմնոց[2], և Օփրն անուանեալ երկրի, և Լրևոյթքն[3]։ Մտերիմ բարեկամ էր նա ինձ, և զմնելոյ իմն 'ի սէր աստեղաբաշխութեան խօսէր ընդ իս բանս. զի ասէր ցիս՝ թէ Յանձն առնում հանդերձ վտանգաւ իսկ արկածիցն Փայեատնի՝ հուպ լինել յարեգակն, առ 'ի գիտելոյ զձև նորա և զչափ[4]։

Լբ. ասացի ցԼևկղեղէս. Զարմանամ զի Յոյնքդ հանդերձ այդչափ հանճարովդ կարօտացայք գնալ 'ի տար աշխարհ 'ի խնդիր գիտութեաց առ այլ ազգս։ Լևկղեղէս ասէ. Կասկածեմ թէ չիք մեր հնարագիտութիւն, այլ զգիւտս այլոց տուեալ է մեզ գեղեցկացուցանել և 'ի կատարումն ածել։ Ո՞ գիտէ թէ գուցէ երևակայութիւն խոչ և խափան իցէ զարգացման գիտութեանց։ Դարձեալ զի և սակաւ ժամանակք են յորմէ հետէ մեր զաչս յերկինս դարձու-

1 Սենեկա, խնդ. բն. գիրք Է. գլ. 3։

2 Սիմպլիկ. գիրք Բ. էջ 120։

3 Խպպարք. յերև. երկնաբան. էջ 98։

4 Պլուտ. հտ. 2. էջ 1094։

ցեալէ, ուր եղիսպասցիք և քաղդէացիք՝ի բա-
զում այնչափ դարուց հետէ, որ չհաստատելի ին
թուի, համապազորդեն՝ի հետապոտել և՝ի ջա-
փել զընթացս երկնից։ Լրդ սահմանք աստե-
ղաբաշխութեան՝ի զինութիւնս հաստատին.
զի որպէս՝ի բազում յայլ գիտութիւնս, նոյն-
պէս և՝ի սմա ճշմարտութեանց իւրաքանչիւր
կարապետէ խուժան մոլորութեանց. և լաւ է
կանխել նոցա, որպէս զի յամենի լեալ պարտու-
թեամբն՝ մի ևս անդրէն՝ի վեր երևեսցին։ Լա-
դարձեալ՝ կամիցիս զի՝ի նպաստ քեզ մասն եղեց
զաղանեաց մնափառութեան մերոյ. յորմէ հետէ
գիւաք այլոց ազգաց մուծան Ալեքսդա, որպէս
որդեգիրս զնոսա ունիմք, և ընդ հարազատ որ-
դիս հաւասարեմք զնոսա, և մերթ նախամեծար
իսկ առնեմք։

Լակ ես ասեմ Ակարծէի զի որդեգրութեան
հնարն այնչափ ընդարձակիցի։ Լալ թողեալ
զաղբերանն գիտութեանց ձերոց, կարիցես տալ
ինձ զմնասնոց այժմու աստեղաբաշխութեանդ
հասարակաբար տեղեկութիւն։ Յայնժամ Լա-
կղնդեայ առեալ զուստ մանեկաւոր, զմանեկացն
իւրաքանչիւր եցոյց ինձ զպէտս։

Լպա պարզեաց առաջի իմ երկնացոյց պատ-
կեր, յորում տեսի զգլխաւոր աստեղս՝ի տունս
տունս բաժանեալ, և ասէ ցիս. Լաստեղքս ամ
զմի տիւ և զմի գիշեր առաջեալ զառանցիւք
երկնից, յարևելից յարևմուտս շրջին՝ի նոյն տե-

ղն։ Բաց 'ի շարժմանէ աստղի, էն և արեգական և լուսնի և հնգեցունց մոլորակաց շրջանք յարևմտից յարևելս 'ի սահմանեալ ժամանակի։

Արեգակն անցանէ ընդ 360 աստիճանս ծրի խաւարման 'ի տարւոջ, որ ըստ Արեստոնի՝ ունի աւուրս 365 և $\frac{5}{19}$ մասունս աւուր *։

Շրջան լուսնի տևէ զաւուրս 29, ժամս 12, և 45 մանրամասունս և այլն. որով երկոտասան շրջանաց նորա զումարին աւուրքն 354, և սուղ ինչ աւելի քան զերրորդ մասն աւուր [2] 'ի քաղաքական ամն մեր և 'ի լուսնականն անտես առնեմք զկոտորակս զայս, և համարիմք երկոտասան ամիս **, յորոց կէսք երեսնօրեայք են, այլք ունին զաւուրս քսանեւինն, միահամուռ աւուրքն երեքարիւր յիսունեւչորք։ Այլ զքաղաքական զամն զայս միաբանեմք ընդ արեգակնայինն 'ի ձեռն եօթանց աւելեաց ամանց, զոր 'ի շրջան ինն և տասնեւերեակ ամանց յաւելումք յերրորդ, 'ի հինգերորդ, յութերորդ, 'ի մետասաներորդ, յերեքտասանեւերորդ, 'ի վեշտասաներորդ, և յինն և տասներորդ ամն [3]։

Այսեմ։ Իսկ ամն այն բաղկացեալ յերեքարիւր

1 Գեմին. սկզբ. աստեղաբաշխ. առ Պետափրոսի, հատ. 3. էջ 23։ Կենսոր. յղ. աւուր ծննդ. գլ. 19։ Տոմուէլ, յղ. շրջանաց, ճառ. 1. յօդ. 5։

* Յետոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Բ։

2 Պետաս. յղ. գիտ. ժամանակաց, գիրք Բ. գլ. 10 և 13. էջ 58 և 62։

** 'Ի վերջնում մատենի գրոցս գտցեն զայս ինդրոյք 'ի ցանկս աստրկեան ամանց։

3 Տոմուէլ, անդ. յօդ. 35։

և 'ի վաթսուն աւուրց, կարճ քան զարեգակ-
նայինն և երկայն քան զլուսնականն, որ առ վա-
ղընջուց ազգս վարի, և զոր ընտիրք 'ի մատենա-
գրաց ձերոց աւանդեն[1], թէր սահմանեցաւ այն,
ասա ինձ, և առ ինչ առ ձեզ իսկ չև և ես խա-
փանեալ[2]։ Լուսիդիոս ասէ. Զ. եղիպտացիս սահ-
մանեցաւ այն ըստ տարեւոր շրջանի արեգական,
զոր 'ի սկզբանն կարի սուղ չափեցին[3]. իսկ առ
մեզ ըստ տեղուութեան երկոտասան շրջանաց
լուսնի երեսնօրէից առ հաստատակ[4]։ Յետոյ յա-
ւելին եղիպտացիք յարեգակինային ամն իւրեանց
զաւուրս հինգ, և վեց ժամս. իսկ մեք բարձաք
'ի մերմէ լուսնական տարւոյս զաւուրս վեց, ո-
րով մնացին աւուրք 354, միով երբեմն աւելի։

Արկինեալ անդրէն ասեմ. Ա. յլ 'ի գիտել ձեր
զթերութիւն չափոյ տարւոյդ, պարտ էր ձեզ
խափանել զայդ։ Լուսիդիոս ասէ. Ել և ես վա-
բիսք նովաս 'ի յանձանձանս իրաց պետութեան
և իւրաքանչիւր ուրուք շահու. այլ յիրս դուշ-
նաքեայս ստիպէ հին սովորութիւն նախասահմանեալ
առնել երբեմն զհանուութիւն քան զչղբը-
տութիւն հաշուոյ, առանց ուրուք խաբելոյ նո-
վաս։

Լսեմ զինդիրս զոր արարի Լուսիդիեայ ըզ-

1 Երոգոտ. գիրք Ա. գլ. 32։
2 Արիստոտ. պատմ. կենդան. գիրք Զ. գլ. 20. հտ. 1. էջ 877։ Պլին. գիրք ԼԴ. գլ. 6. հտ. 2. էջ 644։
3 Երոգոտ. գիրք Բ. գլ. 4։
4 Պետաւ. յղ. գիտ. ժամանակաց, գիրք Ա. գլ. 6 և 7։ Տոտուէլ. յղ. շրջան. Ճառ 1. յօդ. 14։

տուսմարէ սթէնացւոց. զայն ևէթ սասացից որ ինչ ինձ զուաժանմանէ տուրընջեան սասց։ Ի բա-
բէրացւոց, սասէ, ուսաք բաժանել զայն յերկո-
տասան մասունս՝ մեծամեծս կամ փոքունս ըստ
փոփոխման յեղանակաց։ Ա՛սասունքս այսոքիկ
կամ ժամք, որպէս սկսանին արդ կոչել[2], ըստ
ասնոց նշանակին 'ի ժամացուցակ գործոջ երե-
կայնութեամբ ստուերաց՝ որ հանեմատին ժա-
մուցս[3]։ Զ՚ի որպէս գիտես իսկ, 'ի յայտնի ինչ
ամենեան ստուեր ցուցակին երկայնեալ այսչափ
ինչ ոտնաչափս յառաջ և յետոյ քան զմիջօ-
բեայն, ցուցանել զժամ աւուրն[4]։ Նմին իրի 'ի
ժամադիր լինել միմեանց 'ի վաղորդայն կամ ընդ
երեկս, պայմանեալք զչափ ստուերին, զոր օրինակ
զտասն կամ զերկոտասան ոտնաչափ՝։ ուստի և
սովորութիւն է առ մեզ հարցանել զժամուց ա-
ւուրն՝ թէ զինչ ստուերքդ ասեն[5]։ Այ տես զի
ստուերքդ մեր ասէպ երթևեկեն 'ի հրապարակին
գիտել զժամ աւուրն 'ի ժամացոյցն հասարա-

[1] Երոդոտ. գիրք Բ. գլ. 109։

[2] Գաղենոսի. յիշատ. գիրք Դ. էջ 800։

[3] Սկալիգ. յոդ. ուղղ. ժամանակի. գիրք Ա. էջ. 5։ Պիտատ. զան. Հաագ. գիրք Ի. գլ. 9. հա. 3. էջ 145։

* Յեսայեայ մատենէն 'ի տեղեկութիւնն. թիւ Գ։

[4] Արիստոտ. 'ի յոդով. տող 648։ Մենանդ. առ Ա-թենեոսի. գիրք Զ. գլ. 10. էջ 243։ Եւրուղ. առ Ա-թենեոսի. գիրք Ա. գլ. 7։ Հիպոքր. 'ի բառն Δωδεκ. կոյն և Սուիդ. 'ի բառն Δεκάπ. Պոլիտեկ. գիրք Զ. գլ. 8. յոգ. 44։

[5] Արիստոտ. առ Պոլիտեկիկայ, գիրք Թ. գլ. 5. էջ 46։

կաց, և պատմել մեզ[1]։ Լոյս չէ՞ ինչ այս դժուարին, այլ զիւրազոյն ևս ինչ խնդրի, և արդէն իսկ կազմին ժամանցեալք կրեալք[2]։

Բայց թէպէտ և մեռոնեանն շրջան Ն՚դագոյն քան զայլսն է՝ որ յառաջ քան զայն եղեն, այլ յաւուրս մեր ծանուցաւ՝ զի և սա կարօտ է ուղղութեան։ Լուդրաս ըստ հաշուի աստեղաբաշխիցն եգիպտացւոց եցոյց մեզ, զի արեգականային ամին են աւուրք 365 և $\frac{1}{4}$, որով գտանի նուազեալ քան զմեռոնեան ամն միով եօթանասուն և վեցերիր մնասամբ[3]։

Հաւատի եղև և այս, զի՛ է յեղյեղակս ամարայնոյ և ձմերայնոյ արեգակին ոչ զամենայն օր կշիռ՚ի նոյն կէտ ընդ ոլորտս երկրի զել և զմուտսն առնել[4]. և ասեն՝ զի՛ միտ առին, զի և ընթացից արեգական հանդոյն լուսնի և այլոց մոլորակաց է լայնութիւն[5], և զի՛ տարեւոր իւրում՝ շրջանին ոչ անխոտոր ընթանայ ընդ ծիրն խաւարման, շեղեալ՚ի հասարակածէն աստիճանս իբր քսանեւչորս[6], այլ զարտուղի և նա յայս կոյս և

1 Ամեն. գիրք Թ. գլ. 17. էջ 406։ Կասաւբ. անդ։ Եւսեբիոս. Յեղեակ. գիրք ԻԴ. էջ 1349։ Հիպարքոս՝ ի բառն Περάτρ.

2 Ամեն. գիրք Դ. գլ. 17. էջ 163։ Կասաւբ. անդ։ Պակիու

յայն ընդ լայնութիւն կենդանաբերին։

Մոլորակաց իւրաքանչիւր այլ և այլ չափ և երագութեան ընթացից, և ամբ զանազանք[1]։ Լուծոքս 'ի դառնալն իւրում Յոգիպտոսէ յաւել մեզ գիտութիւնս զընթացից նոցա[2]։ Փայլածուին և արուսեակին շրջան կատարի ընդ արեգական, հրատին յերկուս ամս, լուսընթացին յերկոտասան, և երևակին յերեսուն[3]։

Աստեղք ընդ կենդանաբերս կամարն թափառեալք ոչ շարժին իւրովի, այլ ձգեալք 'ի բարձրագոյն պարուսակաց, կամ 'ի նոցունց իսկ յորս բևեռեալ կան։ Ուրեմն եթե պարուսակքն երբեմն համարիին. հաստատուն աստեղացն, արեգականն, լուսնականն, և հնգից մոլորակացն[4]. այլ ապա 'ի յայտնել այլ և այլ շարժմանց ինչ նոցա, յաւելաթիւ պարուսակացն։ Այլ իւրաքանչիւր նոցա ընդ մէն մի պարուսակ հարկ թուեցաւ ունել շրջան, ոչ վասն այլ իրիք՝ բայց զի կատարելաձև է բոլորակ[5]. զորմէ 'ի դէպ համարիմ լուել, զի մի զկարծեաց իմաստասիրաց Հնութեամբ փոխանակ առաջի առնելոյ քեզ զօրէնս բնութեան։

Ունմի չիք իւր լոյս առանձինն, այլ լուսաւորի յարեգակնէ[6]։ Յորժամ կրկնէ դէպ արեգականն

1 Տիմ. լոկր. յղ. հոգւոյ առ Պղատոնի, հտ. 3. էջ 97։ Պղատ. 'ի Տիմ. էջ 39։

2 Սենեկա, խնդ. բն. գիրք Է. գլ. 3։

3 Աբիստոտ. առ Սիմպլիկիոսի. էջ 120։ Նոյն յղ. աշխարհի, հտ. 1. էջ 612։

4 Տիմ. լոկր. յղ. հոգւոյ, էջ 96։

5 Սիմպլիկ. յղ. երկնից. էջ 120։

6 Պլութարգ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յոդ. 27։

պատահիցէ, չծագէ առ մեզ արեգակն. իսկ յորժամ երկիրս խարոյց ընդ մէջ նոցա անկանիցի, խաւարի լուսին[1]։ Եւ ես խաւարել լուսնի և աբեգական զարհուրեցուցանէ զժողովուրդն, և զուշակէն նմա աստեղաբաշխք զժամ խաւարմանն։ Հաստատեսցեն զեւս աստեղաբաշխութիւն՝ զի էն աստեղք ոմանք ստուարագոյնք քան զերկիր[2]. այլ ընդ արեգականն ինքնատիպ մեծ քան զլուսնին ունել տրամագիծ, որպէս Հաղորդն վիճեալ պնդի, երկբայութիւն է ինձ[3]։

Արկնեալ անդրէն ասեմ. Հաւ ընդէր զվարսամն ոչ ընդ մոլորակ աստեղս կարգիցես։ Հաւ կղնդէս ասէ. Հաղորդքն յիսնատասիրաց ընդ մոլորակս կարգեցին զնոսա, ընդ որս և Հնաբսագոր և Պտղոմկրիտոս և ոմանք յաշակերտացն Պիւթագորի[4]. այլ հանձարեղքն այսուիկ քան թէ գիտունք ճանաչին։ Հոլորութիւնք ծանունք կը ցորդեալք ընդ կարծիս նոցա յայտ առնեն, զի չէն արգասիք աստեղագէտ հետազօտութեանց։ Հնաբսագոր և Պտղոմկրիտոս հանարին զգիսա-

Պարմն. առ. Պլուտ. Ի Կոզոս. հտ. 2. էջ. 1116։ Անաբսագ. առ. Պլատոնի Ի Կրատ. հտ. 1. էջ 409։ Պլատ. յդ. հտ. գիրք ժ. հտ. 2. էջ 616։

1 Արիստոտ. յդ. երկնից, գիրք Բ. գլ. 13. հտ. 1. էջ 466։

2 Նոյն անգ գիրք Ա։ Նոյն նշանք օգ. գլ 3. հտ. 1. էջ 529։

3 Աբիմեդ. յԱրան. էջ 451։ Պոլիբ. պատմ. աստեղաբաշխ. նախեհաց, էջ 238։

4 Արիստոտ. նշանք օգ. գիրք Ա. գլ. 6. հտ. 1. էջ 534։ Պլուտ. յդ. անգորդ. խմնատաս. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. էջ 893։

տոլս կցորդութիւն երկուց մնջորակաց, որ կարի մերձաւորութեամբն առ միմեանս՝ թուին մնջ-մին մի։ Յաւելու և Դեմոկրիտոս հաւաստիս, զի 'ի բաժանել նոցա անդրէն 'ի միմեանց, փայլեն յերկինս աստեղք նոքք մինչև ցայսժամ՝ անծանօթք։ Իսկ սիւթագորեանց երևի զնել միակ գիսաւոր, որ երբէք երբէք երևի, և դարձեալ ընկղմի 'ի լոյս արեգական[1]։

Արիստոտել անդրէն ասեմ՝ Իսկ զինչ տացես պատասխանի քաղդէացւոց[2] և եգիպտացւոց[3], որ զի քաջ աստեղագէտք էն՝ ոչ զք ժիտել կարէ, և նոքա առ հաստակ համարին գիսաւորաց ունել շրջան։ Այսպիսիս ասէ. Ի քաղդէացւոց աստեղաբաշխից կէսք պանծան գիտել զընթացս գիսաւորաց, այլք համարին զնոսա յորձանս իմն հիւթոց՝ յարագ շարժմանէն բորբոքեալ[4]։ Ի ռաջնոցն կարծիք ոչինչ աւելի է քան զկարելին, զի և ոչ զայլոցն եղծանել զկարծիս։ Իսկ աստեղաբաշխք եգիպտացիք թագուցին զկարծիս իւրեանց, 'ի հարցանելն՝ 'ի մերոց իմաստասիրաց թէ իցէ՞ն համանման քաղդէացւոցն։ Այդոքս ոչ ինչ իսկ ասաց զնոցանէ ոչ 'ի բանս իւր և ոչ 'ի գիրս[5]. և իցէ՞ արդեօք կարծելի թէ քուրմք եգիպտացւոց անձանց իւրեանց պահեցին զգիտութիւն ընթացից գիսաւորացն։

1 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 6. հա. 1. էջ 534։
2 Սենեկա, ենդ. բն. գիրք Ի. գլ. 3։ Սոսբ. Ծաղկաքաղ բնաբ. գիրք Ա. էջ 63։
3 Դիոդ. գիրք Ա. էջ 73։
4 Սենեկա անդ։
5 Նոյն անդ։

Խազում և այլ խնդիրս արարի Յովհաննէսեայ, և յամենայնի զտի հերձուածս կարծեաց, որով և անցեալութիւն Հնմարտին[1]։ Հարցի զծրէ կա-թին, և ասաց ցիս, թէ իցէ այն ըստ Նեաքսա-գորայ կուսակութիւն աստուեղայ, որոց լոյս նուա-ղեալ է 'ի ստուերէ երկրիս, որպէս թէ ստուերը երկրիս մինչև յաստեղս հասանիցեն. կամ թէ ըստ Դեմոկրիտեայ՝ յայն կողմն երկնից իցեն աս-տեղք բազմաք յոյժ մանուանք և մերձաւորք մի-մեանց, որոց նուազ Հնարագայթք խառնեալ յի-բեարս՝ ընդգոյն արձակեն նշոյլ[2]։

Յեյաձեալ շրջեալ ընդ երկինս՝ դարձաք ան-դրէն յերկիր, և ասեմ ցՅովհաննէս. Ի բազում երկայն երկնաչու Հանապարհորդութենէս չեղև մեզ կարևոր Հնմարտութեանց ինչ հասու լինել. լաւ իցէ մեզ չմեկնել 'ի բնակութենէս մերմէ. զի պարտ է մարդոյ քաջահմուտ գոլ տանն յո-բում բնակէ։

Յհարց ցիս Յովհաննէս՝ թէ իբր մարթի մե-ծաղանգուած երկրիս կալ 'ի վերայ օդոց 'ի հաս-տատութեան։ Ասեմ. Լինդ այդ ոչ ինչ էն ինձ զարմանք. կացցէ արդեօք որպէս աստեղք և մո-լորակք կան։ Յովհաննէս ասէ. Ալ նոքա առ 'ի չանկանելոյ՝ բևեռեցան 'ի պարունակս բիւր-

1 Սոփ. Ծաղկաքաղ բնաք. գիրք Ա. էջ 62։

2 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 8. հտ. 1. էջ 538։ Պլուտ. յդ. անգորբ. խնդասաս. գիրք Գ. գլ. 1. հտ. 2. էջ 893։

ղաձև Թափանցիկս ամրագոյնս, և համահոլով ընդ նոսա շրջին. այլ զմեզ չիք ինչ նեցուկ՝ յոր երկիրս յենուցու. և իբր ոչ ընկղմի 'ի լայծ տաբերն՝ որ շուրջ պատէն զնովաւ։ Կէսք ասեն՝ Թէ, ոչ ամենուստ շրջապատեն օդք զերկիր, այլ է սա իբրև զլեառն որոյ հիմունք կամ արմատք անզնդալիր հաստատեալ կան ամբաւածաւալ 'ի վայրի [1], և 'ի ծաղ լերինն բնակեմք յակաստանի։ Այլք տափարակ զառ 'ի նեղբոյս երկրի վարկանին, որպէս զի լայնանիստ 'ի վերայ օդոց բաղմիցի, և 'ի վերայ ջուրց մարթիցի կալ։ Այլ Թող զայն՝ զի զրեթէ հաւաստի ցուցեալ է երկրիս գնտաձև գոլ, եթէ 'ի վերայ օդոց համարիցին նմա կալ՝ կարի տկար հիմունս դնեն նմա. իսկ եթէ 'ի վերայ ջուրց, յեր վերայ ջուրքն կայցեն [2]։ Ինչպէսինք մեր այլ ինն հնարս գտին յառաջ քան զաւուրս զայսոսիկ առ 'ի փարատել զամենայն երկիւղ։ Օ՛ի ասեն՝ Թէ 'ի տիեզերական օրինաց մղեալ ամենայն մարմինք ծանունք դիմեն 'ի մի կէտ, և կէտն այն է միջակէտ տիեզերաց, կեդրոն երկրիս [3]. պարտ է ապա ամենայն մնասանց երկրի կուռ զիմեամբք սղղիլ առ 'ի մերձենալոյ 'ի միջակէտն, և ոչ երբեք օձտել 'ի բաց [4]։

Այսր 'ի միտ առնուլ է, զի մարդկան շուրջ

1 Արիստոտ. յղ. երկնից. գիրք Բ. գլ. 13. հա. 1. էջ 467։

2 Նոյն անդ։

3 Նոյն անդ էջ 470։

4 Պղատ. 'ի Փեդոն. հա. 1. էջ 109։

զերկրաւ բնակեալ, և մնասուանդ հակոտնեայն անուանելոյ[1], մարթի կալ անվասանգ՝ յոր կոյս և բնակիցեն։ Իսկ ես ասեմ. Լա՛ հանդիպիցես թէ արդարև զուցէն հակոտնեայք՝ ընդդիմատունք մեզ։ Լուկղնդէս ասէ. Ազիտեմ զայդ. զի թէպէտ և մատեանդիրք բազումք գծագրեալ թողին մեզ զձև երկրի[2], այլ չև ևս ոք ընդ ոլորտս նորա շրջեցաւ, և հաղիւ գոյին ինչ մասն երեսաց նորա ծանօթ է մեզ։ Ոչ փծագրել՝ի դէպ է ընդ յանդուգն վՃիռ նոցա, որով առանց իրիք հաւաստեաց սահմանեն զերկիր շուրջ պատեալ յամկիսական ծովէ, և զԼրոպէ հանդերձ հաւասար Ասիոյ[3]։

Հարցի և ասեմ. Որչափ ինչ կողմանք երկրի ծանօթք են Յունացդ։ Իսկ նա առ պատասիս զորս ընթերցեալ էր իմ՝ յղեր զիս. այլ՝ի յոյժ թախանձելն իմ զնա, ասէ. Պիւթագորս և Լուդէս բաժանեցին նախ զերկինս՝ի հնգեակ գօտիս. երկու՝ի նոցանէ ցրտայինք, երկու բարեխառն, և այրեցական գօտին որ ձգի ընդ հասարակածն[4]։ Ոչ բազում ժամանակք են, զի Պարմենիդէս զնոյն բաժանումն և զերկրաւ էած[5]. որ սահմանս սիկ գծեալ կայ զգնատաւդ։

Սակաւ ինչ մասն երեսաց երկրի բնակելի է

1 Դիոդ. լայերա. գիրք Գ. յօդ. 24. գիրք Ը. յօդ. 26։

2 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Ա. գլ. 13. հա. 1. էջ 545։

3 Երոդոտ. գիրք Դ. գլ. 8 և 36։

4 Պլոտ. Ծագիպաղ բնաբ. գիրք Ա. էջ 53։

5 Պարաբ. գիրք Ա. էջ 94։

մարդկան, զի սառնասառոյց ցրտութիւն և բո-
ցակիզ տօթ անընդհատ առնեն զկողմանս երկրի
մերձ 'ի բևեռս և 'ի հասարակածն [1]. 'ի բարե-
խառնհանգոյս յաձախեալ է բնակութիւն նոցա։
Այլոց սիալեն ոչք յաշխարհացոյց պատկերս բո-
լորակաձև սահմանեն զնոսն երկրի զմարդա-
բնակ. զի յոյժ անձկագոյն են բնակեալ 'ի մարդ-
կանէ սահմանք երկրի 'ի հիւսիսոյ 'ի հարաւ
քան յարևելից յարևմուտս [2]։

Ի հիւսիսոյ եւրոպինեանն Պոնտոսի կան ազգք
սկիւթացւոց, յորոց կէսք զոլծեն զերկիր, այլք
անկայուն վարեն կենաց թափառականք ընդ
լայնատիւռ սահմանս տեղւոյն թերեանց. և
անդր և քան զնոսա բնակեն այլ և այլ ազգք, յորս
և մարդակերացն ազգ։ Այլ նոքա, ասեմ, չեն
կիւթացիք։ Պիտեմ, ասէ. զի և ոչ պատմիչք
մեր խառն 'ի խուռն ինչ զնոցանէ աւանդեն [3]։ Ի
վերոյ քան զազգն խուժադուժ՝ ասեն լինել ա-
նապատ անհուն [4]։

Ինդ արևելս աշխարհակալութեամբքն Դա-
ղեհի ծանուցան ազգք, որ մինչև ցկնդոս տա-
բածանին։ Յայնկոյս գետոյս ասեն լինել երկիր
ընդարձակ հաւասար միոյց մասին Լիսոյ [5]։

1 Արիստոտ. Նշանք օդ. գիրք Բ. գլ. 5. հա. 1. էջ 562։ Դիոգին. և Ընդաքսագ. առ Սոսրէոսի ծագկաբաղ բնաբ. գիրք Ա. էջ 34։

2 Արիստոտ. անդ։

3 Երոդոտ. գիրք Դ. գլ. 18։

4 Նոյն անդ գլ. 17։

5 Կտեսիաս առ Սոտրաբոնի, գիրք ԺԵ. էջ 689։

Պոյդն ինչ կողմն աշխարհին հնդկաց նուաճեալ ընդ ձեռամբ Թագաւորացն Պարսից, մնստուցանել նոցա հարկս ամի ամի մեծագանձս 'ի փոշի ոսկւոյ [1]։ Այլն առնեցին անծանօթ է մեզ։

Ընդ արևելեան հիւսիս 'ի վերջ քան զկասպիական ծով են աղգք բազումք, որոց առանձին առ մեզ անուանք։ Եկեալ 'ի նոցանէ զամիսս վեց անընդհատ՝ ասի թէ հնձին [2], և կէսք միականիք են [3], և այլք զարձեալ նոխազոտունք [4]։ Յայսպիսեաց ասի զբուսցայ 'ի միտ առցես՝ թէ որպիսի ինչ տեղեկութիւնք խցեն մեզ զաշխարհէն։

Ընդ արևմուտս մինչև ցՀերակլի արձանսն հասաք, և աղօտ ինչ գիտութիւն է մեզ զաղգացն բնակելոց 'ի ծովեղերս Խերիոյ *. իսկ միջերկրայք աշխարհին բնաւին անծանօթք են մեզ [5]։ Ընդ ևս քան զարձանսն ատլանդականն ծաւալեալ ծով, հասանէ մինչև ցարևելեան կողմանս հնդկաց՝ որպէս թուի [6]։ Ընդ տիւրացուցն ևեթ և կարքեզոնացուց յաձախեն նաւք, և նոցին իսկ ոչ իշխելով հեռանալ 'ի բաց 'ի ցամաքէ. քանզի անցեալք ընդ կիրձն, կէսք իջանեն ընդ Հարաւ և քերեն զափամբք Աֆրիկեայ, այլք դառնան ընդ հիւսիս՝ երթալ փոխանակել զվաճառս իւրեանց ընդ անապի կասիտերեան ** կղզեաց, որոց վայր

1 Երոդոտ. գիրք Գ. գլ. 94։
2 Նոյն գիրք Դ. գլ. 25։
3 Նոյն գիրք Գ. գլ. 116։
4 Նոյն գիրք Դ. գլ. 25։
* Սպանիա։
5 Սորաբ. գիրք Ա. էջ 93։
6 Արիստոտ. յղ. երկրից. գիրք Բ. գլ. 14. էջ 472։
** Բրիտանեան կղզիք։

անծանօթ է Յունաց [1]։

Բազումք բազում մինչ փոքր փորձեցին ընդարձակելոյ ընդ հարաւ զաշխարհագրական տեղեկութիւն։ Հրամանաւ Ալեքսի, որ յառաջքան զամենեսին երկերիւր թագաւորեացն Յունական, ասեն նաւաց ունոյ փիւնիկեցի նաւասաւեաք մեկնեալ 'ի Ծոցոյ Արաբիոյ, և պատեալ զԱֆրիկեաւ, և յետ երկուց ամաց դարձեալ անդրէն Յունական ընդ կիրձն Կադիր * [2]։ Եւ այլոց ևս նաւորդաց ասեն շրջեալ ընդ այն կողմն երկրի [3]. այլ թէ անշնորհիւ խակ իսկեն նաւարկութիւնք նոցա, չեղեն մինչ յօգուտ։ Ոչ էր մարդ վաճառականութեան յաճախել զերկայն և զաստ ժամանաւոր ծովագնացութիւնս զժուարադէպ յուսով։ Պատյարևելեան և յարևմտեան ծովեզերս ևեթ Աֆրիկեայ յաճախէին երթևեկք, ուր և գաղթականք բազումք 'ի Կարբեդոնէ բնակեցին 'ի կողմն արևելից։ Խակ զմիջերկրայս աշխարհին պատմեն զի է անդ ճանապարհ որ 'ի Թեբայիդայ մինչև ցՀերակլի արձանն ածեալ հասուցանէ [4]։ Եւ ազգս մեծամեծս ասեն լինել անդ, այլ անուանք ևեթ նոցա ծանօթ են մեզ. և քեզէն խակ 'ի միտ առցես ըստ նախ ասացելոյս, զի ոչ արդ-

[1] Երոդոտ. գիրք Գ. գլ. 115։ Ցիշատ. բանաս. կանաչ. ուղի, հտ. 19. էջ 158։

* Որ այժմ կոչի Կադիքս։

[2] Երոդոտ. գիրք Դ. գլ. 42։ Ցիշատ. բանաս. կանաչ. ուղի, հտ. 28. էջ 309։

[3] Պարաբ. գիրք Բ. էջ 98։

[4] Երոդոտ. գիրք Դ. գլ. 181։ Ցիշատ. բանաս. կանաչ. ուղի, էջ 303։

դեօք յայրեցականն բնակիցն 'ի գօտուջ։

Ձատիաբանք մեր զշրջապատ երկրի ասեն լինել քառասուն բիւր ասպարիզաց[1]. չգիտեմ թէ ինչ հաշիւն անսխալ, այլ զի քառասուն մի շրջապատի նորա հաղիւ ծանօթ է մեզ՝ ընդ այս չիք ինչ երկբայութիւն։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Վասն Արիստոպպեայ։

Լի յետ բանիցս այսոցիկ 'ի վաղիւ անդր լուր եղև, թէ Արիստոպպոս կիւրենացի հասեալ է Յաթէնս. և իմ չէր տեսեալ զնա։ Յետ մանր վարժապետին իւրոյ Սոկրատայ շրջեցաւ նա ընդ ազգս բազումս, և հռչակեցաւ յոյժ անուն նորա[2]։ Բազումք հաւանեցան զնա աղանդապետ, և ամբաստանէին զնա՝ զի զայլանդակ կցորդութիւնն հնարէր առնել առաքինութեանց ընդ յոռութիւնս, այլ զհանճար նորա գովէին ամենեքին։

Ընդ հասանելն Յաթէնս, եբաց անդ վարժարան[3]. և ես խառն 'ի խուռն սպրդեալ անդր 'ի ներքս մտի. և առանձինն իսկ ապա եղև ինձ

[1] Արիստոտ. յդ. երկնից, գիրք Բ. գլ. 14. հտ. 1. էջ 472։

[2] Դիոգ. լայերտ. յԱրիստիպպ. գիրք Բ. յօդ. 79։ վ խոր. յառաջաբ. գիրք Զ. էջ 102։

[3] Դիոգ. լայերտ. յԱրիստիպ. գիրք Բ. յօդ. 62։

խօսել ընդ նմա. և որ ինչ զկարծեաց նորա և զկենացն զիտացի զՀանգամանս, զրեթէ նորին իսկ բանիւքն զօդեմ առասիկ[1]։

Մինչ մանուկն էի, ասէ, համբաւ Սոկրատայ ձգեաց զիս զՀետ[2], և գեղ խրատուց նորա կալաւ զիս առ նմա. այլ զի պահանջէր նա դժուարինս 'ի վեր քան զիմ կար, խորհեցայ առանց խոտորելոյ յօրինեաց նորա՝ զտանել այլ ուղի ի մուտս պատշաճեալ զօրութեան, ընդ որ զիւրաքանչիւր յեղջն ցանկալի ելցէ ինձ հասանել։

Յաճախ իսկ ասէր նա ցմեզ, զի առ 'ի չգիտելոյ զէութիւն և զՀանգամանս իրաց որ արտաքոյ մեր են, հասանէ մեզ հանապազ զբարին չար համարել և զչարն բարի[3]։ Լաւ խրատս այս զարհուրեցուցանէր զՀեղգութիւն իմ. զի շուրջ պատեալ յերկիւղալեաց և 'ի ցանկալեաց, հարկ էր ընտրել զնոսա առանց հայելոյ յերևոյթ նոցա բազմամբոխ, և 'ի վկայութիւն զգայութեանցս խաբեպատիր։

Խորհեցայ յանձն իմ, և անհաս ինձ թուէր միտումն այն 'ի հեշտալիս և 'ի վշտալեաց խորշումն՝ զոր բնութեան տնկեալ է 'ի սիրտ իմ՝ առհաւատ չեայ ստոյգ և զգալի ազդեցութեան կամաց

1 Մենդեսս յԱրիստոտ։ Պրուք. պատմ. խնասա. հտ. 1. էջ 584։ Յիշատ. բանաս. կաճառ. ոյն, հտ. 26. էջ 1։

2 Պլուտ. յոլ. հետաքնն. հտ. 2. էջ 516։ Դիոգ. լայերտ. յԱրիստոտ. գիրք Բ. յօդ. 65։

3 Քսենոփ. յիշատ. գիրք Գ. էջ 777. գիրք Դ. էջ 798։ Պղատ. 'ի Մենն. հտ. 2. էջ 88։

իւրոց[1]։ Օ՛ի եթէ մեղանչականք իղձքս այս էին, ընդէր իսկ զայնոսիկ անկեաց նա՝ի յիս. իսկ եթէ անմեղանչականք, ընդէր ջուղղիցեն զընտրութիւն իմ։

Սակաւիկ մի յառաջ տեսի նկարեալ ինչ՝ի Պարրասեայ, և լուայ նուագս ինչ յարդարեալս՝ի Ցիմոթեայ. պարտ էր ինչ զիտել ինձ զինչ երթն երթն երանգոցն ի՞նչ և ձայնից զանազանութիւն, զի մի տարապարտ զմոլեալ դատանիցի[2], և չէր ինձ մարթ առնել դատաստան՝ զի երգն այն և նկար, գէթ առ իս, արդարև պիտանիք էին։

Այսպէս ուսայ դատել զնմանէ ըստ բերկրութեան և ըստ վշտաց՝ զոր ազդէին յիս, խնդրել որպէս պիտանիս զախորժելիսն[3], և խորշել որպէս՝ի վնասակարաց՝ որ զներհակն ազդէին յիս։ Այդ՝ի միտ առ, զի՝ի բաց թողեալ զզգայմունս վշտալիս և որք անզգայեցուցանէին զհոգի, այլ ամենայն ազդմունք մեղմականք՝ որ յուզեսին զնա առանց աշխատ առնելոյ, անընդհատ յաջորդութեամբն իւրեանց յարդարեն ըստ իս զմարդկան բարօրութիւն. զոր և առ՝ի բացատրել զբերկրանս այնր կենաց՝ կոչեմ հեշտութիւն[4]։

Կանոն ուղղութեան առեալ ինձ զայս ազդումն նեղբին, զերկեակ ազգ շարժմանցս՝ զորոց ասացի, զամենայն ինչ տպա ինձ համեմատեմ. յայլ ամե-

[1] Դիոգ. լայերա. յԱրիստիպպ. գիրք Բ. յօդ. 88։
[2] Պիկեր. ակադ. 2. գլ. 24. հա. 2. էջ 32։
[3] Դիոգ. լայերա. անդ. յօդ. 86։
[4] Պիկեր. յլ. կատար. գիրք Բ. գլ. 6. հա. 2. էջ 107։

նայն մնասուս տիեզերաց առ անձին և եթէ օգուտ պատկանիմ, եղեալ կեղրուն և չարի ամենայնի [1]։ Բայց թէպէտ և յոյժ շքեղ է ինձ կայեանս, չկարեմ յանդգնիլս կալանդ առանց վարելոյ ըստ հանգամանաց ժամանակին և տեղւոյ և անձանց [2]։ Այլ քանզի չկամիմ վշտանալ, ոչ 'ի ստրջանաց և ոչ 'ի կասկածանաց, 'ի բաց մերժեմ 'ի մտաց իմոց զխորհուրդս անցելոյն և հանդերձելոց, և 'ի մերձակայն բոլորովին կեամ [3]։ Այլ սպառել զբերկրութիւնս 'ի միում նահանգի, 'ի միւս յայլ անցանեմ 'ի հունձս. և թէպէտ օտար առ ամենայն ազգս [4], չեմ և ոչ ումեք թշնամի. վայելեմ 'ի բարութիւնս նոցա, և օրինաց նոցա պատկառ կամ։ Այլ եթէ չլցեն իսկ օրէնք, առն իմաստասիրի պարտ է զգուշանալ 'ի վրդովելոյ զկարգ հասարակաց յանդուգն վշտոյն։ Կամ խառն 'ի խուռն գնացիւք [5]։

Ահաւասիկ յայտնեմ քեզ զծածուկս իմ, նշանակելով 'ի միասին և զայլոյն զրեթէ ամենեցուն։ Պարտք և պատշաճք միաբանութեան մարդկան են յայս իմ տուրևառք հանապազորդ. քայլ մի ոտին ոչ փոխեմ, առանց սին ունելոյ շահաւէտ փոխարինին. վաճառական լինիմ մտաց

[1] Դիոգ. լայերտ. յԱրիստոտ. գիրք Բ. յօդ. 95։
[2] Նոյն անդ յօդ. 66։ Ով ըստ. գիրք Ա. Թուղթ 17. տող 23։
[3] Աթեն. գիրք ԺԲ. էլ. 544։
[4] Քսենոփ. Յիշատ. գիրք Գ. էջ 736։
[5] Դիոգ. լայերտ. անդ յօդ. 68։

իսոց և հմտութեանց և իմաստից և բարեբարութեանց. ոչ ինչ անիրաւիմ առ նմանիսն իմ. մեծարեմ զնոսա ուր պարտիմ, և սպասաւորեմ նոցա յորժամ կարեմ. չխափանեմ զպահանջմունս նոցա, և զկարիս նոցա անբասիր առնեմ։ Եւ չեն ինչ նոքա՝ ապաշնորհք, և բազմաշահ տոկոսեօք դառնան զլուիսք 'ի գոգս իմ։

Բայց միայն պարտ վարկայ հեղքել 'ի բաց զձեւսն զայնոսիկ, որ կոչին աղնուականութիւն իմաստից և վսեմ գնացք։ Դղեն իմ աշակերտք, և պահանջէի 'ի նոցանէ վարձս. զարմացաւ ընդ այն վարժարանն Սոկրատայ, և բողոքք իսկ եբարձ, ոչ զմտաւ ածեալ՝ զի տապալէր այնու զաղատութիւն վաճառաւորութեան։

Յառաջնումն նուազի յանդիմանն լինելոյ իմոյ Դիոնիսեայ արքային սիրակուացւոյ, եհարց նա ցիս՝ թէ առ ինչ գաս։ Եւ ես ետուս պատասխանի. Փոխանակել զարդեւս քո ընդ դիտութիւնս իմ, և զպէտս իմ ընդ քոյդ։ Հաճեցաւ նա ընդ առաւտուրն, և մեծարեաց զիս առաւել քան զայլ իմաստասէրս՝ յորոց շուրջ պատեալն էր։

Հարցի յայնժամ զԱրիստիպպոս, և ասեմ. Եւ ձշմարիտ իցէ, զի մեծարանքն այն զմխիթարս նոցա 'ի քեզ ձգեցին։ Արիստիպպոս ասէ. Թէ դժնդակ կիրքդ այդ էին 'ի նոսա, չգիտեմ. այլ

1 Դիոգ. լայերտ. յԱրիստիպպոս տող 20։
տիպ. գիրք Բ. յօդ. 77։ Ոմ բաս. Թուղթ 17. գիրք Ա. 66։
2 Դիոգ. լայերտ. անդ յօդ.

ես զգուշացեալ եմ անձին ոչ միայն 'ի մեխանաց, այլ և յամենայն բռնաւոր կրից, որովք ոք զգաց ծինն՝ անձանց առաւել քան այլոց գործեն աղէտս[1]։ *Զիք իմ նախանձեալ երբէք, բայց միայն ընդ մահ Վոկրատայ*[2]. *և վրէժ չիք իմ յումեքէ խնդրեալ, բաց 'ի միոջէ որ թշնամանեցն զիս, որում առացի անխռով. Ցեղի տամ ստի, զի թէ դու կարիցես ժայթքել քանս թշնամանաց, կարեմ և ես չլսել զայնս*[3]։

Լակ բարեկամութիւն, ասեմ, որպիսի ինչ թուի քեզ։ Լ՚բիստիպպոս ասէ. Լ՚արեկամութիւն գեղեցիկ է համայն և ճշմարտակար քան զամենայն պարգևս երկնից. բերկրութիւնք նորա ցանկալիք, այլ ահագինք արկածք նորա։ Լ՚ութիւն՝ քեզ իմաստութիւն դնել զանձն'ի վտանգ կորստեան, որոյ վիշտք դառնացուցանեն զմնացուցածն կենաց մարդկան։ Պատմեցից քեզ երկու ինչ, և 'ի միտ առցես քանի զգուշութեամբ բերիմ յիղձս բարեկամութեան։

Մինչ էի ես Լ՚ակինա կղզւոջ, լուայ զի Սոկրատ սիրելի վարժապետն իմ դատապարտեալ՝ կայր 'ի բանտի, և պատուհաս մահուն յետ սմ սօրեայ ժամանակի կատարելոց էր, և հրամայն էր աշակերտաց նորա գնալոյ առ նա։ Լ՚ութիւ մանր թէր ինձ առանց իրիք անպատեհութեան գնալ

1 Դիոգ. Լայերա. Լ՚Արիստիպ. գիրք Բ. յօդ. 91։
2 Նոյն անդ յօդ. 76։
3 Նոյն անդ յօդ. 70։
4 Պղատ. 'ի Փեդոն. հատ. Գ. էջ 59։ Դիմեաթ. յոլ. գիրք. Հախսա. գլ. 306։

խզել զ-զլխայս 'ի նմանէ, զիմէի յօգնութիւն նորա. այլ չէի ձեռնհաս օգնել նմա, նմին իրի և կացի անդ Լոգինա։ Զ-Ի իմ օրէնս եղեալ է անձին, զի ուր թշուառութիւն բարեկամի աւ պաստամբ է 'ի հնարից՝ խնայեմ զանձն 'ի վշտաց տեսանելոյ զկիրս թշուառաւորեան նորա։

Աշակերտակից էր ինձ Լաբինէս առ ոտս Սո կրատայ վեհագոյն վարժապետին, և մտերիմ բաւ բեկամ սիրէի զնա վասն առաքինութեանցն, թերևս և վասն բարութեանցն զոր արարեալ էր ընդ իս՝, և վասն առաւել հաճելոյ նորա ընդ իս քան ընդ Պղատոն[1]։ Այլ 'ի գժտել մեր ընդ միմեանս, ասէ ոմն ցիս. Լաւ ուր է բարեկամութիւն, որոյ կապեալն էիք ընդ միմեանս։ Լակ ես ասեմ. Լիր հէ, այլ 'ի կասն իմ է զարթուցանել զնա։ Լաւ երթեալ առ Լաբինէս, ասեմ. Նզիխոացաք երկոքեան. այլ կարծիցես զիս անուղղայ, և անարժան ներելոյ թողութեան։ Լակ նա ասէ. Յաղթես ինձ յամենայնի, Եպիսկոպոս. ես անիրաւ եցի, և զու նախ խոնարհիս առ իս[2]։ Լաւ համբուրեցաք ընդ միմեանս, և զերծայ 'ի զոյգն ինչ դժկամակութենէն որ զժտեցուցանէրն զմեզ։

Յայնժամ ասացի. Եպա ուրեմն, թէ ոչ սխալեմ, պարտ է ըստ օրինացդ քոց առնել բարեկամութիւն ըստ պատշաճից և ի թ, անկարելիր ընդ

1 Դիոգ. լայերտ. ԺԱրիստոտել. գիրք Բ. յօդ. 61։
2 Նոյն անդ յօդ. 60։
3 Պլուտ. յզ. բարկ. հա. 462։ Դիոգ. լայերտ. անդ յօդ. 82։

վիշտս բարեկամաց։ Մնդ որ վարանեալ նորա, ասա ասէ. Մնկարեկիր... զԵրիպիդէայն ասա ասացից, զոր Փեդրայն իւրում տայ բարբառել. Դու ասես զայդ, և ոչ ես[1]։

Բայց Մրիստիպպեայ դիտելով զի արհամարհեալ էր յաչս ամենացուց, պատրաստ կայր հանապազ ի պատասխանել կշտամբանացն զոր առնէին նմա, և ստիպէր զիս պատճառս տալ նմա ջատագովելոյ զանձն։ Մսեմ Մմբաստանեն զքեզ յեղեռն սոսկալի, զի սպասս արարեր բռնաւորի։ Մյնպէս ասէ. Մյացի քեզ վասն որոյ իրաց եղև ինձ գնալ յարքունիս Ալիսկուսայ. զի էին արքունիքն խմաստասիրօք, իւրաքանչիւր ուրուք պետ մանկացուցեալ զանձն ընծայեցուցանելով. իսկ ես զոստանկի առի զդէմն առանց ի բաց մերկանալոյ զուղղութիւն։ Գոսկեի զլաւութիւնս նորա, զյոռութիւնսն ոչ գովելով և ոչ պարսաւելով. զի և չէր իսկ ինձ անկ։ Գիտէի և էթ զի դիւրագոյն էր համբերել նոցա, քան ուղղել զնոսա։

Ելեալ և համբոյր բնութեամբ ձգէի յանձն զմտերմութիւն նորա, և ճարտար հանճարաբանութեամբք որ երբէք երբէք յաջողէին ինձ զբօսացուցանել զնա։ Ոչ երբէք զրժեցի ճշմարտութեան ի հաղցանել նորա զիս զկարևորաց. և առ ի յայտ առնել նմա զմեծութիւն պարտուց իւրոց, և որպէս զի զբռնութիւն բարուց իւրոց

[1] Եւրիպիդ. Յիպպոլ. տող 352։

սանձահարեալ նուաստէր, ասէի յանձախ 'ի լուր նորա, զի այր զիտուն այնչափ ինչ ընդհատ է 'ի տխմարէ՝ որչափ երիվար զիւրատանձ յանասանձելոյն[1]։ Այլ ոչ զտեսչութիւնէ էին բանք, խօսէին ընդ նմա հանդարձակ, էր զի և յանդուգն։ Յաւուր միում յաղաչէլ ինձ առ նա վասն միոց ուրուք 'ի բարեկամաց իմոց, և յոչն լսելի լինել, անկայ առ ոտս նորա։ Այլ որոց վասն այնր էպե-ռեէին զիս՝ ասէր։ Այլ իցէն ինձ յանցանք խո-նարհել յոտս նորա, եթէ յոտս անդ իցէն նորա լսելիք[2]։

Զվէպ եղև երբեմն զի թախանձէի հնարս ինչ 'ի նմանէ. և նորա ոչ լսելով ինձ, Զզատոնի առնէր հնարս՝ որ հրաժարէրն յայնմանէ. յայնժամ ասէր հանդարձակ. Ա՛յ 'ի վտանգ արկանէ զքաջ զմեծութիւն իւր, պարգևէլով որոց հրաժա-ռեէն, և ժխտելով որոց խնդրեէն[3]։

Մնդիրս առաջի առնէր մեզ յանձախ, և ասա կարձէալ զլանս մեր՝ ինքնին փութայր տալ զլուծումն։ Ի միում աւուրց ասէ ցիս. Մնդիր 'ի մէջ առցուք, սկսիր դու։ Այլ ես ասէր. Ա՛ռաջ է, ես սկսայց՝ զի դու կատարեսցես, և ուսուս-ցես ինձ զոր ուսանելն կամիս։ Այլ դժուարեցաւ ընդ այն, և լընթերիս խնամարհագոյն քան զամե-նեսին ետ արկանել ինձ բարձ։ Լակ 'ի վաղիւ

1 Դիոգ. լայերտ. գիրք Բ. 'ի բառն Ἀρίστιπ. յօդ. 69։
2 Նոյն անդ յօդ. 79։ Սուիդ. էջ 965։
3 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1.

անդը Եհալոց զիս զայնմանէ, և ես ասեմ։ Հա-
ՀՀեցաւ արքայ զյետին տեղին վայրիկ մի նախա-
մեծար առնել[1]։

Յաւելի դարձեալ, և ասեմ։ Այսպերեն զսխոր-
ժակս քո յինչս, 'ի շուք, 'ի խնջոյս, 'ի կանայս,
յիւղս անուշունս, և յամենայն ազգի ազգի սպասս
զգայութեանց[2]։ Պատասխանի ետ Աքրիստիպ-
պոս, և ասէ. Օ սխորժակս այդոցիկ 'ի ծնէ
յանձին բերելով, համարիմ զանութեան և
զանձին միանգամայն կատարել զՀրամանն՝ չափով
զնոքօք եկեալ. վայելեմ 'ի բերկրանս կենցաղոյս,
և դիւրաբար հրաժարեմ յայնցանէ։ Յարքունիս
Դարեհի զգենուի ծիրանիս[3], իսկ այլուր մերթ
ասուիս միլետացի, և մերթ խարազն զգեցեալ[4]։
Դիոնեսիոս ըստ իւրաքանչիւր պիտոյից ինա-
մէր զմեզ. Պղատոնի պարգևէր դիրս, իսկ ինձ
արծաթ[5]. այլ ոչ յամէր այն առ իս միանգամ ցժան-
գոտել զձեռս իմ։ Այսու երբեմն գնել կաքաւ
մի յիսուն դրամակշռոց. և 'ի զայթակղել ոմանց
ընդ այն՝ ասեմ. Ո՞չ ապաքէն գնեիք դուք դան-
կի միոջ։ Ասեն։ Այո։ Եւ ես ասեմ։ Արթէ դուք
դանկի միոջ գնեիք զայն, ոչ ինչ աւելի քան
զդանկ մի յարգին առ իս յիսուն դրամակշիռք[6]։

[1] Եգեսանդ. առ Աթենէոսի. գիրք ԺԲ. գլ. 11. էջ 544։ Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յօդ. 73։

[2] Աթենն. գիրք ԺԲ. գլ. 11. էջ 544։

[3] Դիոգ. Լայերտ. անդ յօդ. 78։

[4] Նոյն անդ յօդ. 67։ Պլուտ. յՊ. զբարութեան Աղեքս. հա. 2. էջ 330։

[5] Դիոգ. Լայերտ. անդ յօդ. 81։

[6] Նոյն անդ յօդ. 66։

Պատրաստեալ իմ զուսանը ինչ արծաթոյ վասն ուղևորելոյ 'ի Լիբիա, իբրև ոչ կարէր սարու

սեղան բազմախորտիկ, զգեստք պայծառք, և բազմութիւն ստրկաց։ Խնամտասէրքք բազումք. նախանձայոյզք խոտակրան բարուց, պարսաւէին զիս դէմ յանդիմանս՝. իսկ ես ծաղրածութեամբ տայի նոցա պատասխանի։ Ի միում աւուրց Պողիքրատեսոս, որ զպարտութիւն առաքինութեանց կարծէր յանձին իւրում բերել, ետես զի էին առ իս կանայք երեք գեղեցիկք, և պատրաստութիւն մեծ ընթրեաց, և եհեղ անդ զամենայն դառնութիւն նախանձուն իւրոյ։ Իակ ես տեղի ետու նմա բարբառելոյ, և ասա հրաւիրեցի զնա կալ ընդ մեզ յընթրիս։ Ինկաալա ըզհրաւէրն, և յայտ արար զի թէպէտ և չախորժէր ընդ ծախս, այլ ախորժելի էին նմա կոչունք և հրապոյրք՝։

Ձկարեմ յայտնաղոյնս արդարացուցանել ըզվարդապետութիւն իմ՝ քան գործովք իմովք. արդ լուր։ Պիտեսիոս ետ ածել կանայս երիս գեղեցիկս, և պատուէր ետ ինձ ընտրել զմի՝ի նոցանէ. իսկ ես զերեսեան եւս ածի առ իս պատճառանօք, զի չար եղև յոյժ Պարիսի նախամեծար առնել զմի ոք յերից դիցուհեաց։ Ալ զնամապարհայն ածեալ զմնաւ՝ զի հրապոյրքք գեղոյ նոցա ոչ արժէն զբերկրութիւն յաղթելոյ անձին, արձակեցի զնոսա՝ի տունս իւրեանց, և մնի խաղաղութեամբ

1 Քսեն. յիշատ. էջ 733։ Ելթեն. գիրք ԺԲ. էջ 544։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 69։

2 Դիոգ. լայերտ. անդ յօդ. 76։

'ի տուն իմ[1]։

Յայնժամ ասեմ. Աբիստիպպէ, շրջէս դու զմիտս իմ. անջան ինն կարծէլի զխմաստասիրութիւն քո, և զի ջատագով ոք հեշտութեան մարթեր շուայլել զանձն համարձակ յամենայն գրքագանս զգայութեանց։ Աբիստիպպոս ասէ. Աչ ոչ զայս կարծեիր զի այր որ կարևորագոյն քան զամենայն զբարոյականին վարկանի զուսումն[2], ապաստ արարեալ զերկրաչափութիւն և զայլ գիտութիւնս՝ զի չէն ինչ կարևորք յուղղութիւն բարուց[3], խմաստասէր ոք՝ յորմէ ոչ ամօթ համարեցաւ Պղատոն 'ի կիր առնուլ բազում խմաստս և վճիռս[4], և աշակերտ ոք Սոկրատայ վարժեալս պոռնկութեան կարգեալ իցէ 'ի բազում քաղաքս Եկեղեայ, առանց ոսոխս յանձն իւր ձգելոյ զդատաւորս և զքաղաքացիս զկարի իսկ եղծագործս։ Ընուն հեշտութեան, որով կոչեմ զբերկրութիւն սրտի որ յարդարէն զբարեկենդանութիւն մեր, խոցէ զունկն ծանծաղատանց, որք զբառիւք սպատաղեալ՝ ոչ խելամտեն խմաստիցն։ Աբք խմաստասէրքդ, մուռացեալ զսէր արդարութեան, ձեռնտու եղեն թիւր կարծեացն. և գուցէ ոմանք յաշակերտացն խմոց արդարացուցեն զկարծիսն, ոչ 'ի չարիս կացեալ. այլ բարուոք խմաստ փոխիցի 'ի

1 Աթեն. գիրք ԺԲ. գլ. 11. էջ 544։ Դիոգ. լայերտ. գիրք Բ. յօդ. 67։

2 Դիոգեն. լայերտ. անդ յօդ. 79։

3 Արիստոտ. բնազանց. գիրք Գ. գլ. 2. հմ. 2. էջ 860։

4 Թէոպոմպ. առ Աթենէոսի, գիրք ԺԱ. էջ 508։

յոռութիւն այնու զի զառաջանիցին նովաւ ո-
մանք 'ի մոլորութիւն [1]։

Հաւատիկ պարզեցի քեզ զվարդապետութիւն իմ. համարիմ միակ գործի բարեկենդանութեան զկիրս որ մեղմով յուզին 'ի սիրտս մեր, և կա-
միմ զի նուաստեսցին 'ի յարուցանելն աղմուկ և անկարգութիւն [2]։ Այս չիք իսկ մեծ ևս արիու-
թիւն, քան դնել սահմանն զրկանաց և վայելից միանգամայն։

Ընտիրեցեալս 'ի միասին ընդ իս լսէր զդաս Սոկրատայ. տիսուր էր նա բնութեամբ և խիստ, իսկ ես զուարթ և ներող։ Տարազիր արար նա զամենայն բերկրանս, և ոչ իշխեաց գուսպարել ընդ կիրս որ ներգործեն 'ի մեզ զախորժ նուա-
զումն. այլ ինձ օգտակարագոյն թուեցաւ յաղ-
թել նոցա՝ քան 'ի նոցանէ 'ի փախուստ դառնալ։ Ընդարձ բողոքոյ նոցա, ձգեցի զնոսա որպէս ստրուկս զհետ իմ 'ի ծառայութիւն և յօգնու-
թիւն 'ի բառնալ զբեռն կենացս։ Հակառակ մի-
մեանց կալաք շաւիղ, և տհաւասիկ արգասիք ձգանց երկաքանչիւրոցս. Ընտիրեցեալս բարե-
բաստիկ զանձն վարկաւ, զի համարէր զինքն իմաստուն. իսկ ես իմաստուն զանձն վարկանիմ, զի եմ բարեբաստիկ [3]։

[1] Արիստոտ. առ Պիկերոն. Գ. գլ. 31. հա. 2. էջ 512։
[2] Դիոգ. Լայերտ. գիրք Բ. Նիւ յոգ. բնութեան գլուխ, գիրք յոգ. 75։
[3] Պլատոն, յիշատ. բանաս. կաճառոյն, հա. 26. էջ 6։

Բաստցեն թերևս յետինք, թէ Սոկրատ և Բ. ըիսատիպոս բանիւք և գործովք խոստովանեին երբեմն՝ ի հասարակաց սովորութենէ. այլ յաւելցեն իսկ, թէ զուշնաքեաց համարձակութեանցն փոխարէն ծաղեցին ըստ մեծ յիմնատասիրութիւն՝։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Գրգռութիւնք կրասերոյն Դիոնիսեայ արքային սիրակուսացւոց ընդ Դիոնի քեռառն իւրում, և ուղևորել Պղատոնի՝ ի Սիկիլիա *։

ՅՈՐՄԷՀԵՏ էի յԱթենաց, շրջէի ընդ գլխաւոր քաղաքս նորա, և տեսեալ իսկ էր իմ զամենայն հանդէսս մեծամեծս՝ որ խմբէին առ այլ և այլ ազգս Յունաց։ Բայլ ոչ շատացեալ ընդ հարևանցի աղաչանանն, խորհուրդ կալայ ընդ Փիլոտասայ՝ այց առնել հետազօտութեամբ ընդ ամենայն գաւառս, սկսեալ՝ ի Հիւսիսոյ։

Յերեկոյէ ուղևորութեանս մերոյ Բպողդոր և Փիլոտաս ածին զիս յընթերիս՝ ի տուն Պղատոնի. և էին՝ ի տան անդ Սպեւսիպպոս քեռորդի նորա, և բազումք յառաջնոց աշակերտաց նորա, և Ջիմոթէոս դերահռչակեալն յաղթութեամբք։ Եւ ասացաւ մեզ, զի Պղատոն խօսէր առանձինն

1 Կիկերոն. յզ. պատշաճ.

* Ի յետակոյս մատենիս՝ ի տեղեկութիւնսն. թիւ Դ։

ընդ Պիտնի սիրակու

թիւն հալածեսցէ զնա։

Լուսոփսեաց զնա Ցիմոթէոս մեկնել զբանն, ասէ. Լնձ յոյժ մեծարոյ է ՊՕիոն, այլ զպատճառս աքսորանաց նորա չգիտացի երբէք հաւատեաւ, խառն 'ի խուռն ինչ գիտեմ զշփոթիցն որ յուզին յարքունիս 'ի Ասիրակուսա։ Պղատոն ասէ. Կարի յոյժ 'ի մօտոյ ակամատես եղէ ես շփոթիցն այնոցիկ. յառաջագոյն զայրանալի ընդ մեղեգնութիւն և ընդ անկրաւութիւն ամբոխին 'ի ժողովս ուրեք առ մեզ. որչափ և զարհուրելի իցեն և բազմանվտանգ չարարուեստ հնարքք, որ 'ի վերին երեսս զխաղաղութիւն կեղծաւորեալ՝ եռան անդադար 'ի ներքոյ շուրջ զաթոռով։ Ի բարձրագոյն կայսն՝ յեղեռն հանարի Ճշմարտախօսել, և յոռիր մեծ՝ ախորժելի առնել թագաւորի ըզճշմարտութիւն. սիրելութիւն անպարտ առնէ անդ զսպիրատն, և անսիրելութիւն մեղսպարտ զառաքինին։ Արութիւն մեզ յուղղութիւն ածէլ զարքայն Ասիրակուսայ, այլ խոտորեցուցին զնա արք անարժանք։ Ոչ զբախտ ՊՕիոնի ողբամ, այլ զԱիկիլեոյ առ հասարակ։

Ի բանից աստի յաձնախեաց և ևս 'ի մեզ ցանկութիւն տեղեկանալոյ իրացն. և Պղատոնի զիջեալ 'ի թախանձանս մեր, սկսաւ պատմել այսպէս. Յառաջ քան զամն իբր երեսունևերկու* պատճառք երկարապատումք յոյժ ածին զիս 'ի

* Իբր 389 տարի 'ն. Փ։

Անկելնա՝ Լրեցն Յովհաննէսիս թագաւորեր յայն ժամ. և դուք ինքնին գիտէք զի սա նորացոյց իւրով հանճարովն լեալ զարհուրելի, զամենայն կեանս իւր պարապեաց 'ի կարկանդել 'ի շղթայս զազգս մերձաւորս և զիւրն։ Նգթութիւն նորա յառաջադէմ զոգցես նկրտել զոչ ընդ իշխանութեանն, որ ելհաս մինչև 'ի ծագ բարձրութենն։ Կոչեաց նա զիս առ ինքն, և փոխարէն խոստմանցն ակն ունէր յինէն մարդահաճութեան. այլ ելհաս այնմիկ։ Ոչեմ զարտմութիւն նորա զոր արհամարհեցի, և զվրէժինդրութիւնն յորմէ մաղապուր եղէ[2]։ Մտի եղեալ էր իմ լուել զանիրաւութիւնս նորա մինչև ցկեանս իւր. այլ արդ առանց այլոց իսկ նախատանաց գարշելի է յիշատակ նորա առաջի ամենայն ժողովրդոց։

Այլ եղև ինձ յայնժամ ստացուած գերապանծ խնամատարութեան Յովհան, այն որ այժմ ել 'ի բաց։ Օ քոյր նորա զԱրիստոմաքէ Յովհաննէսիս ընդ այլում ումեք 'ի միասին նոյնօրին հարսնացոյց իւր. և Խպարբինեայ հօր նորա ժամանակ բաղումս կացեալ էր իշխան հասարակապետութեան 'ի Սիրակուսա[3]։ Օ բուցատրութիւնն որ եղև ինձ ընդ մանկանն Յովհի՝ դարձուցէ զքաղաքն զայն յազատութիւն, եթէ իցէ բարեբախտ[4]։

1 Պղատ. Թուղթ 7. հա. էջ 360։
3. էջ 324 և 326։ Դիոդ. լոյս. էրտ. գիրք Դ. յոդ. 18։
2 Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. 327։
3 Նոյն անդ էջ 959։
4 Պղատ. անդ էջ 326 և

Մինչ նորա գերազանց բացան անդէն առ սկզբնաձագ Հառաջայթս գիտութեան, և վառեալ 'ի սաստիկ սէր առաքինութեան, հրաժարեցին անդանդաղ յամենայն ախտից որ նուաստացուցանէին զնա։ Այլ այնու մեծագիւրութեամբ զդիմանկս ծանուցեալ յանձն էառ հանդերձ անյողդողդ հաստատութեամբ, որպէս ոչ զոք 'ի մանկտւոյն տեսեալ էր իմ հանդոյն նմին։

Յայնմ հետէ հեծեալ ընդ ծառայութիւն հայրենեացն[1]. այլ յոսով ազդելոյ զնմանատս առաքինութեանցն իւրոց 'ի բռնաւորն՝ որ ոչն կարէր կասել 'ի սիրոյ նորա և 'ի ծառայութենէ[2], եկաց մնաց առ նմա, և ոչ դադարէր 'ի խօսելոյ ընդ նմա համարձակ, և զզեղջ արքունեացն արհամարհէր զոխութիւն[3]։

Օրուեցաւ ապա Պիտեսիոս 'ի կենաց[4], լի արհաւրօք, տաղնապեալ 'ի կասկածանաց, և թշուառական հանդոյն ժողովրդեանն՝ որ զամ երեսունեւութ ընդ թագաւորութեամբ նորա թշուառացեալ էր[5]։ Այլ ընդ այլ որդիսն եթող զհամանուն իւր, զոր էր ծնեալ նմա Պորիս մի յերկուց կանանց նորա, որ և կալաւ զաթոռն հայրենի[6]։ Օ այն ժամ սատեհ գտեալ Պիտեսի, աշխատ եղև 'ի բարեբաստութիւն Սիկիլիոյ.

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 324 և 327։
2 Նեպ. 'ի Դիոն. գլ. 1.
3 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1.
4 Ս. Ք. 367 ամք։
5 Նոյն անդ էջ 361։
6 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 384։

խրատեր զմանուկ աղքային, և ասեր. Հայր քո նե-
ցուկ եղիսանութեան իւրոյ կալաւ զնաւատորսն
ահարկուս որ ընդ քոյով ձեռամբ են, և զսիր
մի խուժադուժ թիկնապահաց որ շուրջ կան զքեզ.
և համարեր նոքօք իբր աղամանդեայ շղթայիւք
պարարանդել զամենայն մնասունս պետութեանն.
այլ խաբեր։ Օ՛ի չիք, որպէս ասեն կարծեմ, զօդ
անլուծանելի 'ի կցորդել զնոսա, բայց միայն արդա-
րութիւն թագաւորի և սէր ժողովրդեան։
Այս յաւելոյր զարձեալ. Անի՛ կորանաց իւրք իցեն,
եթէ սերմ և պայծառ ծիրանեօք ևեթ և արքունեօք 'ի վեր իցես քան զայլս, և յետինն 'ի
ժողովրդենէ քումմէ զլեսցէ զքեզ զիտու-
թեամբք և խնամատիւք առաքինութեան։

Այս ոչ միայն խրատեալ զթագաւորն, այլ և
յանձանձանօք խնամեր զիրս աշխարհին. և բա-
ղեգործելոյն յանձախեր իւր ասոյս[2]։ Ի զուր եղէն
առ ժամանակ մի ամենայն ջանք նոցա, այլ ոչ
յամենցին ընկղմել զթագաւորն յեւս ամենաթալ
ախտս[3]։ Այս զի ոչ ևս բաւական էր Պիսոն հակա-
ռակ կալ նոցա, մինչդեռ այնուհետև պարապոյ. և
եղիտ հնարս սիրելի առնելոյ զնս թագաւորին։
Իսկ որ յամենայն բաղձանս իւր ստստիկն էր թա-
գաւորն՝ բաղում զիրս գրեաց առ իս հարկեցու-
ցիչս, և թախանձեր զնս թողուլ զամենայն, և

[1] Պլուտ. 'ի Դիսոն. հա. 1. տոմի, հա. 3. էջ 309։ էջ 962։
[2] Թուղթ Դիսոն. առ Պլա-
[3] Պլուտ. անդ էջ 960։

վաղագոյն փութալ'ի Արքակուսս։ Յաւելցը և Դիոն յիւրսն՝ մի յամել ինձ և վայրկեան մի, մինչդեռ զոյր յոյս կացուցանելոյ զիմաստասի-բութիւն յաթոռ, և թէ Դիոնեսիոս կազմ և պատրաստ կայր առ բարին, և ազգականք նորա յօժարագոյնս նպաստամատոյցք լինէին 'ի բա-ւուոջն հաստատել զնա[1]։

Խորհեցայ ուշի մտօք 'ի զրեալսն. զմտահէի 'ի խոստմունս մանկան՝ որում ծայրայեղ մար-թէր փոփոխել 'ի վայրկենի. այլ պարտ էր ինչ թերահաւատել և ընդ կատարեալ իմաստու-թիւնն Դիոնի, և ապախտ առնել զլարեկամն 'ի կարևոր վտանգին։ Զ'ի թէ վասն անտրիկ տուեալ էր իմ զանձն յիմաստասիրութիւն, զի 'ի կարդալ նորա առ իս՝ մնասն լինէին նմա[2]։ Դարձեալ և զայն իսկ ոչ ծածկեցից, զի յուսայի յարդիւնս ածել զերկնեալն 'ի միտս իմ զլաւագոյն կարգ տեսչու-թեանն, և թագաւորեցուցանել զարդարութիւն 'ի տերութեան արքային Սիկիլիոյ[3]։ Զ'սոքիկ եղէն պատճառք ուղևորութեան իմոյ*, ընաւին օտարք յայնցանէ զոր պարտաւադէտք չարախո-սեցին զինէն[4]։

Եւ զտի ես զարքունիս Դիոնեսեայ յուղեալ

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 327։ Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 962։ Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 18։
2 Պղատ. անդ, էջ 328։
3 Պղատ. անդ էջ 327։
Դիոդ. լայերտ. գիրք Դ. յօդ. 21։
* Իբր 364 ամաւ Ն. Ք։
4 Պղատ. անդ։ Թեմիստ. Ճառ. 23. էջ 285։ Դիոդ. լայ-երտ. գիրք Գ. յօդ. 8։

'ի հերձուածս և յաղմուկս չիսոթի, և զԼիսոն դժնդակ զրպարտութեանց կացեալ նշաւակ '։ Յայն բան Պաւեսիպոսս քեռորդի Պղատոնի ընդ միջեալ, ասէ. Լ.Լ զմեծարանսն որ արարան քեռւոյ իմում 'ի հասանել նորա անդր, և զյաջողութիւնսն որ եղէն նմա անդ, չհամարձակի նա ինքնին պատմել '։ Յինքանէն 'ի նաւէ անտի ընկալաւ զնա Թագաւորն, և հեծուցեալ զնա 'ի կառս շքեղս ընթաց 'ի չորից սպիտակ երիվարաց, ած զնա յաղթանակաւ ընդ միջ անթիւ ժողովրդոց որ ծածկէին զծուլեզին։ Լա հրամանն ետ զի դրունք արքունեացն բաց կացցեն նմա հանապազ. և մատոյց զոհս 'ի գոհութիւն դիցն՝ վասն բարերարելոյ նոցա Սիկիլեոյ։ Ա աղվաղակի աւա զանէն ամենայն դիմեաց ընդ առաջ ուղղութեանն, տարագրեցին զզեղխութիւն 'ի սեղանոց իւրեանց, և փութային ուսանել զձևս երկրաչափաց կանս գծեալս 'ի վարժատեսացն 'ի փոշւոջ՝ որ 'ի գաւիթս արքունեացն իսկ ցանեալ կայր։

Ժողովուրդն զարմացեալ ընդ արագ փոփոխումն, արծարծանէր 'ի յոյս. և Թագաւորն դիւրալուր ևս զանձն ընծայեցուցանէր առ բոլոր նոցա։ Դաջալերէին այնու զի եմուտ նա 'ի կարգ քաղաքացեացն Լ.թենայ՝, աղաստագունէին քան

1 Պղատ. Թուղթ 7. հա. 3. էջ 329։

2 Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 963։ Պլին. գիրք Ի. գլ. 30. հա. 1. էջ 392։ Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 18։

3 Դիմոսթ. Թուղթ Փիլիպ. էջ 115։

զամենայն քաղաքս Լշլադայ, և զի 'ի պաշտամունս դից մինչ քարոզն զսովորութեան աղօթսն մատուցանէր վասն կենաց բռնաւորին, նորա ցասուցեալ ընդ բռնաւորութեանն անուն՝ ընդ որ յառաջն ոչ դժկամակէր, աղաղակեաց անդէն. Դադարեա յանիծիցդ[1]։

Ընդ այն բարբառ զսէր հարան կուսակիցք բռնաւորութեան. և Փիղիստաս էր առաջնորդ նոցա, այն որ զզատմութիւն պատերազմացն Ալեքսանդրոյ արար, և այլ հանգոյն նմին գիրս։ Նրբիցոյն Դիոնեսեայ աքսորեալ էր զնա 'ի սահմանաց տերութեան իւրոյ. այլ զի այր ճարտարախօս էր և յանդուգն, դարձուցին զնա յաքսորանացն՝ հակառակ կալ Պղատոնի[2]։ Ընդ հասանել նորա յաճախեցին դառն զրպարտութիւնք զԴիոնեսէ. կասկածելի եղև հաւատարմութիւն նորա, և ամենայն բանք նորա և գործք թիւրեալ կամ կորեին։ Լթէ խրատ տայր կաղմել 'ի խաղաղութեան զզօրս և զնաւս, ասէին՝ թէ տկարացուցանէ զիշխանութիւնն արքունի առ 'ի փոխել զթագն 'ի քեռորդիս իւր 'ի համահայր եղբարս արքայի։ Լս եթէ խրատէր զսան իւր՝ խոկալ յօրէնս իմաստուն տեսչութեան, ասէին թէ թագաւորն ոչ ևս է իշխան՝ այլ աշակերտ Պլատոնայ, այլ իմաստասէր դատապարտեալ մինչև

[1] Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 963։
[2] Պլուտ. անդ. էջ 962։ Նեպ. 'ի Դիոն. գլ. 3։

ցկեանս 'ի խոյզ և 'ի խնդիր մնացածին բաբուոյ '։

Եւ Պղատոնի յառաջ ածեալ զբանն ասէ. Ոչ զայլ ինչ իրաց 'ի Սիրակուսա ձառ արկեալ խօսէին, բայց զիմաստասիրութիւն հակառակամարտ կացուցանելով ամենայն, և զՀոյլս ախտից հակառակամարտ իմաստասիրութեան։ Ասէր տանեցայ և ես նպաստատանտոյց առաջնումն, և իբր թէ համարձակութեամբս իմով առաջի թագաւորին՝ լարէի նմա որոգայթ։ Ապաքէն ձայնակից լեալ Դիոնի խրատէի զնա, զի եթէ կամէր ընդ փառս իւր և ընդ հաստատութիւն իսկ իշխանութեանն՝ պարտ էր նմա պատրաստել իւր զանձս առաքինի բարեկամաց, առ 'ի վստահանալ 'ի նոսա զաւագութիւնս և զգործս աշխարհին [2], պարտ էր կանգնել վերստին զքաղաքս Հունաց կործանեալս 'ի Կարքեդոնացւոց, և տալ նոցա օրէնս հանձարեղս՝ խնդրելով պարապ դարձուցանելոյ զնոսա յառաջին աղատութիւնն. և պարտ էր դարձեալ դնել սահման իշխանութեան իւրոյ, և լինել թագաւոր ժողովրդեան իւրոյ և ոչ բռնաւոր [3]։

Այլբէք երբէք խոնարհեալ թուէր թագաւորն 'ի խորհուրդս մեր. այլ կանխակալ կասկածանքնոցա ել մտերիմն իմ բարեկամ, զրգռեալ

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 332 և 336։

էջ 333։ Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 962, և այլուր։

2 Պղատ. Թուղթ 7. հտ. 3.

3 Պղատ. Թուղթ 3. հտ. 3. էջ 315, 319։ Պլուտ. անդ։

հանապազ 'ի նենգաւոր սաղրամնաց, ոչ տեղի տային 'ի սրտէ նորա։ Յառաջին ամիսս բնակութեան իսկ 'ի Վերակուսս զամենայն փոյթ 'ի մէջ առի փարատել զայնոսիկ 'ի մտաց նորա. բայց ոչ միայն չկարացի օգնել, այլ և օր ըստ օրէ տեսանէի զնա ցրտացեալ 'ի սիրոյ Դիոնի'։

Զև և զսգարեալ էր պատերազմն ընդ Կարքեդոնացիս. և Թէպէտ հարեւանցի ինչ գործէին նորա ասպատակս, այլ հարկ էր զրաւ առնել թշնամութեանն։ Դիոն առ 'ի յորդորել զզօրավարս թշնամեաց 'ի սէր խաղաղութեան, զրեաց առ նոսա՝ խնդրելով զիտել զպայմանս հաշտութեան, որպէս զի կարասցէ անշարժ 'ի միջի հաստատել զխաղաղութիւն։ Յամենայնին, չգիտեմ՝ որպէս, ելհաս 'ի ձեռս արքայի. 'ի խորհուրդ կոչեաց վաղվաղակի զՓիղիստոս, և պատրաստեալ զվերժինդրութիւն ընդ խորամանկ պատրանօք, կեղծաւորեցաւ հաշտել ընդ Դիոնի, և մեծապարգև մեծարեալ զնա՝ աճ 'ի ծովեղը, և անդ ցուցեալ նմա զնամականին չարաշուկ՝ կշտամբեաց զնա իբր տիրադաւ, և ոչ տուեալ նմա տեղի պատասխանւոյ՝ հրամայեաց հանել զնա 'ի նաւ, և առ ժամայն մեկնեցաւ նաւն 'ի բաց [1]։

Պակեաւ Սեկիլիա իբր 'ի Ճայթիւն ամբարհա-

[1] Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 329։

[2] Պլուտ. 'ի Դիոն. էջ 962։ Պղատ. անդ։

բութեան, և արհաւիրք կալան զամենայն բարեկամն Դիոնի. երկիւղ էր անկանելոյ զմեօք շանթիցն, և համբաւ մեռոյ տարածեցաւ զինէն ընդ Սիկիլիա։ Այլ զհետ դառնալոյն մնրկին յաջողեաց յանկարծ խորին խաղաղութիւն. զի առ քաղաքավարութեան եթէ առ ամենեսին, ոչ զիտեմ, յղեաց Թագաւորն Դիոնի արծաթ բազում. զոր նա ոչ ընկալաւ[1]։ Այլ ոչ միայն չարար ինչ խստութիւն ընդ բարեկամն աքսորելոյն, այլ և զամենայն իսնամ կալաւ 'ի փարատել զերկիւղ նոցա[2]. և մանաւանդ Ջանայր սիրել զնս, և առաջեր զնս կալ մեծաւ առ իւր։ Այլ թէպէտ առաջանք նորա խառն էին ընդ սպառնալիս, և զգուանք նորա ընդ սրտմտութեան, այլ ես հաստատուն զպայմանս զայս առաջի եղի, կամ դարձ Դիոնի և կամ ինձ հրաժեշտ։ Այլ ոչ կարացեալ խոնարհեցուցանել զնս 'ի կամն իւր, ետ ածել զնս 'ի միջնաբերդն ուր էին արքունիք իւր, և պատուէր արձակեաց ամենայն ուրեք, զի ուր և գտանիցեն զնս փախուցեալ՝ ածցեն 'ի Սիրակուսա. և նաւապետաց պատուէր հրամանի 'ի վերայ եդաւ չընդունել զնս 'ի նաւս իւրեանց, բայց միայն ինքնագիր հրամարտակաւ արքայի։

Ի գերութեան կայի և 'ի զգուշութեան, այլ խնամք նորա և սէր յամախեին առ իս[3]։ Յան-

1 Թուղթ Դիոն. առ Պղատոն, հա. 3. էջ 309։
2 Պղատ. Թուղթ 7. հա. 3.
3 Նոյն անդ էջ 330։

կայր մեծարանաց առ յինէն և բարեկամութեան, և ոչ ևս հանդուրժէր ընդ նախամեծար լինել Դիոնի առ իս քան զինքն, մերթ բռնի պահանջելով և մերթ ողբանօք հայցելով զնախապատուութիւն։ Հանապազ կայի 'ի թատր նորատեսիլ։ մերթ սրամտութիւն, մերթ աղերս, մերթ թշնամանք և մերթ արտասուք փոխանակէին՝։ Լոյս զի օր լոյս օրէ յաձախէին զրոյցք մեր ընդ միմեանս, զՀանքաւի հարաւ՝ իբր թէ էր սոյլ ոք բաց յինէն մտերիմ և սիրելի թագաւորին։ Լոյս հանքաւս այս խորամանկութիւն Փիղիստեայ և համախոհից նորա հաստատեալ, ձգեաց յիս զատելութիւն ժողովրդեան և զզօրականին, և համարեցայ ես սպրտաւոր անկարգութեանց թագաւորին և ոչ բարոյ խնամելոյ զիրս աշխարհին։ Լոյլ ես ամենևին անպարտ էի յիրացն. զի բաց 'ի սկզբնաւորութենէ օրինաց ինչ, յոր անզգաստին յօրէ հասանելոյ իմոյ 'ի Վիկիլիա աշխատեղէ[1], զգուշացեալ էի չխառնել ամենևին յիրս հասարակաց 'ի ժամանակին իսկ՝ յորում մարթ էր ինձ բաժանել զբեռն զայն ընդ մտերիմ բարեկամին իմոյ։ Օ՛նա կորուսի. Դիոնեսիոս անձնատուր լեալ էր անդրին 'ի ձեռս մարդելուզաց բազմոց շուայլելոց 'ի զեղխութիւն. և մարթ էր ինձ յայնպիսում ժամանակի խրատել զմանուկ անհանձար՝ որ իշխել կարծէր, այլ իշխեին նմա

1 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 964։

2 Պլատ. Թուղթ 3. հտ. 3. էջ 316։

խորհրդականք չարք և ոչ ինչ նուազ քան զինքն անհանձարք։

Գիմնեսիոս 'ի կշիռ ոսկւոյ ցանկայր ստանալ զիմ բարեկամութիւն. այլ ես առաւելագոյն խնդրեի զինս. կամիլ զի խելամուտ լինիր 'ի վարդապետութիւնս իմ, և իշխիր անձին իւրում՝ առ 'ի կարող լինելոյ իշխել այլոց. այլ նմա խնամատարութիւն ըստ այնմ և ելեթ մնասին հանդոյ է՝ որ զմիտսն հրահանգէ, զի մարթի նուաւ պայծառանալ նմա։ Ի ջանալ խնամ ածել զնա յիմաստութիւն անդր որ ուղղիչն է շարժմանց հոգւոյ, շինչանէր եռանդն նորա, և նեղեալ տագնապէր 'ի լել ինձ։ Օ գայթ զի պարսպեալ էր սիրտ նորա ընդդէմ յարձակմանց խնոյ, քանզի սաղրեալ էին նմա զի 'ի հաւանել բանից խնոյ՝ յաջողէր անվրէպ դարձ և յաղթանակ Գիմնի[1]։

Ինութեան պարգևեալ նմա միտս խորագնին, ճարտարախօսութիւն զարմանալի, սիրտ դիւրազգայ, իղձս առատաձեռնութեան, և միտումն 'ի լաւութիւնս, ժխտեալ է նմա զանցողդոյդ բարս. և դատարարակութիւն անիմաստ ամենեքին[2] ժանտացուցեալ զբողբոջս առաքինութեանց նորա, ծնուցեալ է 'ի նմա թերութիւն՝ որք ըստ բախտի տկարացուցանեն զախտս նորա։ Լիիստ է նա, այլ ոչ հանապազ, և զոռոզ առանց մեծա-

[1] Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 330։

[2] Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 961։

րոյ զանձն ընծայեցուցանելոյ։ Այլ վատութեան զատութիւն և գնեանդ 'ի կիր արկանել, և զաւուրս ողջոյն կայ յարբեցութեան և 'ի հեշտութիւնս։ Լռեալ հաստատութիւն ևս էր նմա, անագորոյն զանելոյ քան զամենայն մարդիկ։ Ազգիտեմ 'ի նմա այլ զօրութիւն բաց յանմեղկելոյ յամառութենէ, որով պահանջէ զի ամենայն ինչ յեղյեղուկ կամաց իւրոց հնազանդեսցի. պատնառք, կարծիք, ախորժակք, պարտեն առ հասարակ հպատակել զիտութեան նորա յորժամ կամիցի։ Տեսի ես զնա խոնարհեալ 'ի նուաստութիւն և 'ի վատութիւն առ 'ի չհանդուրժելոյ թշնամանաց մերժելոյ ուրուք զկամն նորա կամ ընդդիմաբանելոյ։ Ոչ առ այլ ինչ զակատեալ է նա արդ խելամուտ լինելոյ գաղանեաց բնութեան, բայց զի մի ինչ ծածկիցի յինքենէ։ Յայն սակս խակ և կարի դժպհի է նմա Դ'ին, զի գնացիւքն իւրովք և խրատուք հակառակի կամաց նորա։

Մինչ դեռ ես խնդրեի 'ի զուր զրաւ առնել աբսորանաց նորա և խնդս, մարտ պատերազմի գրգռեալ՝ յաձախեաց նմա հոգս։ Ոչ զի ոչ ևս զոյին նմա պատնառանք արգելոյց զնա առ իւր, հրաման ետ ինձ մեկնելոյ։ Ոչ դարձին իմն ընդ միմեանս եղաք. զի ես խոստացայ նմա դառնալ առ նա զհետ խաղաղութեան պատերազմին, և նա խոստացաւ ինձ դարձուցանել յայժամ զԴ'ին։ Ոչ 'ի լինել խաղաղութեան՝ ազդ արար նա առ մեզ. առ Դ'ին զրեաց յամէ ևս դառնալ,

իսկ առ իս՝ փութալ հասանել առ ինքն՝։ Պա-
տասխանի ետու նմա անդէն, զի ընթերէր հասակն
իմ վասնզել զանձն յերկայն ուղղորութիւնն,
և զի ինքն զրժէր խոստմանն՝ աղատ էի և ես յիմ
մէջ։ Բնդ այս պատասխանի ոչ ինչ նուազ քան
զԹագաւորն զարմացաւ Պիոն[2]։ Իմ՝ ի մտի ե-
դեալ էր մի ևս խառնել յիրս նոցա, այլ Թա-
գաւորն առաւել ևս յամառեալ էր՝ ի խորհուրդս
իւր. ամենայն ուստեք հնարէր ստիպել զիս, զրեր
առ իս հանապազ իւրովի և՝ ի ձեռն բարեկամաց
իւրոց որ էին՝ ի Վիկիլիա, և խնդասիրաց խտալա-
կան վարժարանին։ Բ.քիտաս առաջնորդ սոցա
երԹեալ էր առ նա[3]. և ազդ արար ինձ, որում և
այլք վկայէին զրով, զի Թագաւորն դարձեալ
վառեալ էր՝ ի սէր խնդասիրութեան, և զի եԹէ
ոչ վաղվաղէի՝ ի զարձ՝ հասանէր վասնզ ամենե-
ցուն որ՝ ի սահմանս նորա պարապէին յիսնաս-
տասիրութիւն։ Դարձեալ և Պիոն ստիպէր զիս
Թախանձանաւքն։

Բայց Պիոնեսիոս չդարձուցեալ երբէք զՊիոն,
զի երկնչի՝ ի նմանէ. և ոչ երբէք լցցի նա խնաս-
տասէր, զի ինդրէր երևեալ խնդասիրէ[4]։ Ի մնաս
ածէր զի առաջի Ճշմարիտ խնդասիրացն յա-
Ճախէին նմա պարծանք յուղղորութենէ իմմէ,
և հրաժարեալն իմ՝ ի նախատինս էր նմա։ Բ.յս

[1] Պղատ. Թուղթ 3. հա. 3. էջ 317. Թուղթ 7. էջ 338։
[2] Նոյն Թուղթ 7. էջ 338։
[3] Նոյն անդ։
[4] Նոյն, Թուղթ 2. հա. 3. էջ 312. Թուղթ 7. էջ 338։

էին զանխուլ պատնՃառք այնու փութով հետա-
մուտ լինելոյ նորա ինձ։

Ել 'ի գէպ թուեցար ինձ հաստատակ կալ միա-
բան խորհրդոյ բազմոց. զի մարթէր ինձ ըստ-
գտանելի լինել, իբր անտես առնելով զմնուակ
արքային որ երկրորդ անգամ ՃեռՃն կարկառէր յիս
առ 'ի կանգնել 'ի գլորմանէն, մատնելով 'ի
սրմանութիւն նորա զբարեկամն իմ որ էին 'ի
տար աշխարհին, և ապախտ առնելով զոգուտ
Դիոնի՝ ընդ որում բարեկամութիւն և առ-
պնջականութիւն և շնորհապարտութիւն կը-
ցորդէր զիս 'ի բազում ժամանակաց[1]։ Սոփոսաց
նորա խափանեալ էր զՀատս նորա[2], և Հալածէին
զնա առ 'ի զրգռել յապստամբութիւն. և բազմա-
ցուցանէին զյանցանս նորա առաջի թագաւո-
րին, առ 'ի յարդարել զնա անողոքելի։ Այ՚ սան ո-
ըոյ զրէր առ իս թագաւորն[3]. Խօսեցուք ընդ
միմեանս նախ զիրսոյն Դիոնի. անտես արարից
զամենայն որ ինչ և կամիցիս, այլ յուսամ զի ոչ
անիրաւս ինձ կամիցիս։ Իսկ եթէ ոչ գայցես, ոչ
լուայց աղերսանաց քոց զնմանէ։

ԴիաՃանօթ էր ինձ Դիոն, զի զամենայն բար-
ձրութիւն առաքինութեան բերէ նա յանձին,
և զի խաղաղութիւն տարաւ նա ամենայն բռնու-
թեանց. այլ եթէ ժպրհէին յանիրաւութիւնս առ

[1] Պատմ. Թուղթ 2. հտ. 3. հտ. 1. էջ 965։
էջ 328։
[2] Նոյն Թուղթ 3. հտ. 3. էջ 318։ Պլուտ. 'ի Դիոն.
[3] Պատմ. Թուղթ 7. էջ 339։ Պլուտ. անդ.

ընկՃելոյ զնա, հարկ էր ուղխից արեան լուանալ զԹշնամանսն։ Լինդ արիական վեհ կերպարանս բերել նա զամենայն գեղ մտաց և սրտի[1]։ Լն նորա 'ի Սիկիղլա մեծութիւնք անբաւ[2], և կուսակիցք անթիւք յաշխարհին. և Հայլադա համբաւ այսպիսի, զի մարթ է նմա զինուորել ընդ իւրև զկարի քաջ պատերազմողս[3]։ Տեսանէի չարիս մեծամեծս մտալուտ 'ի վերայ հասեալ Սիկիղլոյ, և թերևս մարթէր ինձ խափանել զայն կամ յամեցուցանել։

Յայժ դժուարին եղև ինձ թողուլ անդրէն զանզգաստական կեանս իմ, և յեօթանասնամենի ուրեմն գնալ զիմանգրաւել գոռոզ Իշխանին՝ որպ հաՃոյք հանդոյն իմն ծովուն՝ ընդ որ առաջի կայր ինձ նաւել, մերկալոյգք են։ Բայլ չեք առաքինութիւն անվերջ, և ոչ անգործ իմաստասիրութիւն։ Պատեսիպոս կամեցաւ գալ ընդ իս, և ես ընկալայ զնուէրն[4], յուսացեալ զի գեղով հանՃարոյն յանկուսցէ զԹագաւորն, եթէ զօրութիւն բանիցս իմոց ոչ կարասցէ յաղթահարել զնա։ Յուղն անկեալ այնուհետև, հասի յաջողութեամբ 'ի Սիկիղլա*։

Յանձացաւ Թագաւորն և դշխոյն հանդերձ ա-

1 Պղատ. Թուղթ 7. էջ 336։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 410։ Նեպ. 'ի Դիոն. գլ. 4։

2 Պղատ. անդ. էջ 347։ Պլուտ. 'ի Դիոն. հատ. 1. էջ 960։

3 Պղատ. անդ. էջ 328։ Պլուտ. անդ, էջ 964։

4 Պղատ. Թուղթ 2. հատ. 3. էջ 314։ Պլուտ. անդ, էջ 967։

* Ի սկիզբն ամին 361 Ն. Ք։

մեծայն աղգատոհմանն ազբունի[1]։ Ի՝նակու-թիւն ինձ պատրաստեալ էր նորա՝ի պարտեզ ար-քունեացն[2]. և յառաջնումն անդ նուադել զու-ցատուութեանս մերոյ ընդ միմեանս՝ եղիւ առաջի նորա, զի ըստ դաշին մերում ընդ հասանելն իմ՝ի Վերակուսս հարկ էր նմա վախճան առնել աբ-սորանացն Ղ՝ոմնի։ Պատասխանի ետ թագա-ւորն և ասէ. Ղ՝ոմն ոչ է աբսորեալ, այլ հեռա-ցուցի զնա յաբքունեաց[3]։ Լ՝սեալ ես ասեմ. Լ՝սել արդ ժամ է մերձեցուցանելոյ զնա անդրէն, և դարձուցանելոյ՝ի նա զինչս իւր՝ որ մնանեալ կան՝ի ձեռս արանց յսիրտակողաց[4]։ Ի՝ երկուց զայս-ցանէ բաղում անգամ և յերկար վէճ՝ եղեն մեզ. և երբէք երբէք հնարէր պատուով և պարգևօք ցրտացուցանել զնս՝ի սիրոյ բարեկամին իմոյ, և հաւանեցուցանել զնս ընդ մերժումն նորա[5]. այլ ես հրաժարեալ՝ի պարգևացն՝ ընդ որս հարկ էր ինձ փոխանակել զպատիւ և զբարեկամութիւն։

Ի՝սկզբ՝ի հետազօտել իմում զսիրտ նորա և զկամն առ իմնատասիրութիւն[6], սկսաւ Ճառս՝ի մէջ արկանել զգաղտնեաց բնութեան, և մանա-ւանդ յաղագս չարեացն պատճառի։ Ուեալ էր նո-րա՝ի սիւթագորականաց որ էին Յ՝ոտալիա, զի իմ բազում ժամանակս պարապեալ էր՝ի խնդիրս

1 Պլուտ. ՝ի Դիոն. հտ. 1. էջ 965։
2 Պլատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 349։
3 Պլատ. անդ էջ 338։
4 Նոյն, Թուղթ 3. հտ. 3. էջ 317։
5 Նոյն, Թուղթ 7. էջ 333 և 334։
6 Նոյն անդ, էջ 340։

յայս. և վասն այնր իակ ստիպեաց զնս 'ի դարձ'։ Ամենադատէր զնս բացատրել ինչ ինչ 'ի կարծեաց իմոց, և ես ոչ հրաժարեցի. այլ պարտ է ինձ ասել և զայն, զի ոչ ինչ ցանկալի էին այնոքիկ Թագաւորին[2], այլ առաւել ցանկայր նա Ճանապարհակել զվարկպարազի ինչ խնդրոց՝ զորս 'ի բերանոյ այլոց ունմոյ խմնոտասիրաց գողացեալ էր։

Բայց ես անդրէն ստէպ դառնայի, թէպէտ և 'ի զուր, 'ի հնարս հաշտութեան Թագաւորին ընդ Ովսանի՝ որ 'ի յաջողութիւն իրաց աշխարհին կարեւորն էր, և յոր առաւել քան յամենայն ինչ ուշ ունէի։ Այլ ոչ ինչ նուազ քան զԹագաւորն ես ինքնին տաղտկացեալ 'ի ժողովեանէ, սկսայ ստրջանալ ընդ ուղևորութիւն իմ ընդունայն և տաժանաւոր։ Մարային էր ժամանակն, և խորհեցայ չկորուսանել զպատեհ դարձի. և յայտնեալ Թագաւորին զնորհուրդ իմ, ասեմ. Լէ՞ մարթ ինձ կեալ յարքունիս Թագաւորի, որ զհետ մնոտեալ հալածէ զբարեկամն իմ՝։ Ամենայն հրապոյրս 'ի կիր էարկ նա առ 'ի խափանել զնս, մինչև խոստանալ ինձ յուղարկել զնս միով 'ի պատերազմիկնաւաց իւրոց. այլ զի մարթէր նմա յապաղեցուցանել զկազմութիւն նորա, եղի ես 'ի մտի նաւարկել նաւաւ՝ որ նախ առաջին զառաքաստ ձգիցէ։

1 Պղատ. Թուղթ 7. հա. 3. էջ 338։ Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 965։

2 Պղատ. անդ. էջ 341։

3 Նոյն անդ. էջ 345։

Յետ երկուց աւուրց եկեալ առ իս, ասէ՝. Բանսղի տարաձայնութեանս մերոյ իրքն Դիոնի միայն են պատճառք, հարկ է վճարել զայն. ա-հա զայս ինչ՝ ի հնարս քո առնեմ ընդ նմա. կաց-ցէ՝ ի Պեղպոմնես մինչև ժամանակ դարձի նորա սահմանեսցի ընդ նա, ընդ իս, ընդ քեզ և ընդ բարեկամս քո։ Խոստասցի նա քեզ մի ևս հակա-ռակել իշխանութեան իմում, զնոյն խոստումն տացէ և առ բարեկամս քո և առ իւրսն, և ամե-նեքին՝ ի միասին երաշխաւոր լինիք նմա։ Մնչ-ք նորա ածցին Ադլադա, և աւանդեսցին ում և կամիցիք, և նա ընկալցի զհասն, և մի կարասցէ ձեռն արկանել՝ ի գլուխ արծաթոյն առանց ձերոյ հրամանիդ. զի ոչ վստահիմ Թողուլ՝ ի ձեռին նորա օձան վնասակար լինելոյ ինձ։ Բայց պարտ է քեզ զամ մի ևս կալ առ իս. և՝ ի մեկ-նելդ քում՝ ի ձեռս քո յանձնեսցուք զարծաթնո-ցա։ Յուսամ՝ զի հաճ գտցի նա ընդ այս. և դու հաճ ի՞ցես, ասէ՞ ասա։

Ո՞չ էր ինձ ընդ առաջարկութիւնն, և խընդ-դրեցի ժամ տալ ինձ օր մի՝ ի խորհել։ Այս քաջ կրեալ զօգուտ և զտոյժս, ասեմ։ Հաճոյ են ինձ սպասմանքդ, միայն եթէ հաճեսցի ընդ դոսա և Դիոն։ Հաստատեցաւ ապա խորհուրդս այս, գրել երկաբանչիւրոցս առ Դիոն, առանց ձեռն արկանելոյ առ ժամն յինչս նորա։ Այս երկրորդ դաշն էր զոր եղաք ընդ նմա. այլ ոչ առաւել

1 Պղատ. Թուղթ 7. հտ. 3. էջ 346։

քան զառաջինն պահեցաւ երկրորդս այս՝։

Մինչ այս մինչ այն, Ժամանակ նուաստկութեանն էանց, և մեկնեցան առ հասարակ նաւք։ Զկարելի խոյս տալ՝ի պարտիզէն զանխուլ՝ի պահասանացն, որոց զգուշութիւն զրանն յանձն էր։ Լիագաւորն ընդ ձեռամբ ունելով զնս, սկսաւ ներ հանարձակ յայտնել զխորհուրդս իւր. ՝ի միումաւուրց ասէ ցիս. Ա՛յ յուշ եղիւ մեզ մի՝ի պայմանաց դաշնին, զի զկէս միայն զընչեցն Գիտնի պարտ է ինձ յղել, զմիւս կէսն պահելով որդւոյ նորա՝ զոր ինձ անկ է հայրաբար յանձանձել զի Աբրեակ մայր նորա քոյր իմ է՝։ Ա՛յլ ես զայս միայն ետու պատասխանի, թեալ պատասխանուցոյն Գիտնի առ առաջին գրեալն, և ապա գրով դարձեալ զեկուցանել նմա և զայն պայման։

Ա՛յլ նորա ժպրհեալ անպատկառ վասնեալ զնչ չըս Գիտնի. զկէսս ետ ըստ կամի՝ի վաճառ՝ ում և կամեցաւ, առանց հարցանելոյ զնս, և առանց ըսելոյ զբողոք իմ՝։ Ծանրանայր ինձ օր ըստ օրէ թեալ անդ, և դէպք անակնկալ յաձախեցին ըզխստութիւնն մինչև՝ի սպառ։

Լիվինասարէք նորա զայրացեալք՝ զի կամէր նուազել զթոշակ ծերազունեցն՝ի նոցանէ, հաստեն ամբոխիւ՝ի ստորոտ միջնաբերդին՝ որոյ ամրափակ էին դրունք։ Պարտնալքք նոցա և մարտամբոխ աղաղակ և պատրաստութիւնք՝ի յարձա-

[1] Պրպտ. թուղթ 7. հատ. 3. [2] Նոյն անդ. էջ 347։

կումն այնպէս զարհուրեցուցին զԹագաւորն, զի առաւել քան զոր խնդրէին՝ խոստացաւ տալ նոցա[1]։ Օ՜հ երակղնտեաց, որ մի յառաջնոցն էր 'ի սերակուսացիս, եղև կասկած առաջնորդ խռովութեանն զոյց. և փախեաւ նա 'ի քաղաքէն, և 'ի ձեռն ազգականացն՝ որոց համարձակութիւն էր առաջի Թագաւորին, փարատեաց զկասկածանսն 'ի մտաց նորա։

Յետ աւուրց 'ի զգնաալն խմբամ 'ի պարտիզին[2], մտին անդր Պիտեսիոս և Լիվոդոտ՝ զոր էր նորա կոչեալ առ ինքն։ Խօսեցան վայրիկ մի ընդ միմեանս, և մատուցեալ առ իս Լիվոդոտ ասէ. Խնդրեցի և ընկալայ 'ի Թագաւորէն վասն Հերակղնտեաց ազգականի իմոյ զալ պատասխանի առնել վասն իւր, և զի եթէ չկամիցի զնա արքայ 'ի սահմանս իւր՝ կարասցէ գնալ 'ի Պեղոպոնես հանդերձ կնաւն և որդւով և ստացուածովք։ Այսն որոյ 'ի դէպ համարեցայ կոչել այսր զՀերակղնտոս, և առաջի կայ ինձ գրել և ես առնայ. այլ իցէ՞ նմա անվտանգ կալ 'ի Այրակուսս և Հուրջ 'ի սահմանս նորա, ասաս Պիտեսիէ։ Լաւ Թագաւորն ասէ. Անվտանգ է, այլ և 'ի տան քում մարթի բնակել նմա անկասկած։

Լակ 'ի վաղիւ անդր մտին առ իս Լիվոդոտ և Լաբիբիոս, արտմութիւն և արհամարհանք 'ի դէմս նոցա նկարեալ, և ասէ ցիս Լիվոդոտ. Պղատոն,

1 Պղատ. Թուղթ 7. հա. 2 Կոյն անդ։

լուար դու երկիկ զխոստումն Թագաւորին. և արդ լեսմք զի շրջին ամենայն ուրեք զինուորք 'ի խնդիր Հերակղիտեայ, ունել զնա։ Ել է ժամն դանդաղելոյ, եկ ընդ մեզ 'ի պալատն։ Ոգայ զՀետ նորա. և իբրև յանդիմանն եղեալ Թագաւորին, կարկեալ կացին նորա անշարժ՝ ի ջուցանելով զարտասուս։ Բ։ սեմ ցԹագաւորն. (Ա)Վպիտ և խոստացար, այլ տակաւին կասկածեն դոքա՝ Թէ գուցէ Հերակղիտեայ վասնդ ինչ դիպիցի 'ի Ալիսակուսս, քանզի հանիւաւ այսր հասեալ։ Լ։ Լ։ եղև Թագաւորն բարկութեամբ, և շրջեցաւ գոյն երեսաց նորա. յայնժամ Լ։ երիբիոս և (Ա)Վոդոտ անկան յոտս նորա, և 'ի Թանալ նոցա զձեռս նորա արտասուօք, ասեմ ցԱ(Վոդոտ. Բ։ ներկիր զ Լերուք, ոչ է մարթ արքայի զրժել խոստմանն իւրում։ Լակ Թագաւորն բարկացայտ դիմաք ասէ. Լամ չիք ինչ երբէք տուեալ խոստումն։ Լ։ ես ասեմ. Ա կայ են զիք զի ետուր, վասն որոյ դոքա բողոքին չդրժել խոստմանդ։ Լ։ Թիկունս դարձուցեալ նման, գնացի 'ի բաց '։ (Ա)Վոդոտեայ այլ ինչ ելս իրացն չկարացեալ գտանել, ազդ արար զաղտ Հերակղիտեայ՝ որ մնաստուր եղև 'ի ձեռաց զօրականին։

Բ։ զա այնուհետև Դիոնեսեայ ոչ ևս 'ի չափս կացեալ, մեղկանաբար յարիշտակէր զինչս Դիոնի [2]։ Լ։ հան զիս յարքունեացն, և արդել խրս-

[1] Պղատ. Թուղթ 7. հատ. 3. էջ 349։ [2] Պլուտ. 'ի Դիոն. հատ. 1. էջ 966։

տիւ մի ու�եր 'ի բարեկամաց իմոց մերձենալ առ իս, և մի ինձ մոտչել առ ինքն։ Հանապազ պատ մեկին ինձ գանգատք նոցա և կշտամբանք և սպառնալիք '. և ոչ առ այլ ինչ դեպ լինելը ինձ տեսանել զնա, բայց 'ի կրել զառն երգիծանս և հեգնութիւնս անպատեհս [1]։ Պանդղի թագաւորը, և ըստ օրինակի նոցին զրանիկք առ հասարակ, 'ի մնի եղեալ զի ամենայն վաստակք մեր 'ի սիրելութեան նոցա կայցէ, ոչ ևս յարգեն զանկեալս 'ի սիրոյ իւրեանց։ Այլ եղև ինձ զի կեանք իմ 'ի վտանգի կային. քանզի արքանեկայ բռնաւորին սպառնացեալ էր, 'ի հանդիպելն ինձ՝ արկանել զիս 'ի կենաց։

Հնարս զտեալ, զեկուցի Գրիգորասայ և այլոց բարեկամաց իմոց 'ի Ցարենտան զվտանգն [2]։ Օ 'ի նախ քան զգնալն իմ 'ի Ակիլիա, թագաւորին խոստացեալ էր նոցա՝ թողուլ զիս 'ի կամելն իմում մեկնել անտի, և նոքա երաշխաւոր լեալ էին առ իս բանից թագաւորին [3]. նմին իրի 'ի նոցանէ խնդրեցի օգնութիւն։ Ա աղվաղակի հասին հրեշտակք 'ի Ցարենտանէ. և յետ տալոյ զպատգամն՝ զոր 'ի պատրուակ հրեշտակութեանն պատճառէին, յայծողեաց նոցա առնուլ վասն իմ հրամանն ազատութեան։

Դարձ արարեալ 'ի Ակիլիոյ, ելջի 'ի նաւէ յԱ-

1 Պղատ. թուղթ 7. հտ. 3. էջ 349։
2 Նոյն, թուղթ 3. էջ 319։
3 Նոյն, թուղթ 7. հտ. 3. էջ 350։
4 Պլուտ. 'ի Դիոն. հտ. 1. էջ 965։ Դիոգ. լայերտ. 'ի Պղատ. գիրք Դ. յօդ. 11։

զիս, և չոգայ յողիմպիական տօնս խաղուցն, ուր Պիտնի խոստացեալն էր մնալ ինձ[1]։ Պատ-մեցի նմա զամենայն իրս ուղևորութեան իմոյ, և վախճանեալ զբանս իմ, ասեմ. Լաց'ի միտ առ թէ սրչափ ինչ զօրէ խմնտասիրութիւն 'ի սիրտ Թագաւորին Ալիսակուսայ։

Արտմոեալ Պիտնի ընդ նոր թշնամանն զոր յանձն իմ ընդունէր, ասէ զայրացեալն. Ել ես 'ի վարժարան խմնտասիրութեան 'ի դէպ է ածել զՊիտնեսիոս, այլ 'ի վարժոց թշուառութեան. և առաջնորդեցից նմա անդր։ Այս ես ասեմ. Կա-տարեցի որ ինչ ինձ անկն էր. և եթէ կարող իսկ էի զէն առնուլ, ոչ զինուորէի ընդդէմ Թագա-ւորի՝ ընդ որում բնակակից եղէ և սեղանակից և հաղորդ զօհից, որ ոչն լուաւ չարախօսելոյ ոսոխացն իմոց, և խնայեաց 'ի կեանս իմ՝ մինչ կարէրն բառնալ զայն. և որում բաղում ան-գամ խոստացեալ է իմ չտալ ումեք ձեռն ընդ-դէմ իւր։ Այեթէ եկեսցէն աւուրք, զի 'ի հաշ-տութիւն կամիցիք խօսել ընդ միմեանս, և միջ-նորդ խնդրիցիք զիս, պատրաստ եմ մնադիւրա-զոյն սպասաւորել ձեզ. այլ ցորչափ յաւեր և 'ի կործանումն խորհիք, մի ակն ունիցիք յինէն ոչ խրատու և ոչ օգնականութեան[2]։

Այս զերեսամ պէսպէս պատճառանօք կալայ զնա անդործ. այլ ապա ասէ ցիս համարձակ.

[1] Պղատ. Թուղթ 7. հա. [2] Նոյն անդ։
3. էջ 350։

Յամ է արդ հասանելոյ յօգնութիւն հայրենեաց. զլխաւորքն 'ի բնակչաց Վերակուսա, պարտասեալք 'ի ծառայութենէ, մինան հասանելոյ խնդ անդր առ 'ի խորտակել զլուծն։ Այս եցոյց ինձ զնամականէնն նոցա. ոչ զօրս խնդրեն և ոչ նաւս, այլ զանուն և զթեթ նորա՝ զի օրէն իցէ նոցա ձեռն ամբառնալ, և զտեսիլ նորա՝ առ 'ի հանախմբել զնոսա'։ Օ Եկուցանէն նմա և ևս, զի կին նորա ոչ ևս կարացեալ կալ հակառակ սպառնալեաց և սրտմտութեան թագաւորին, յանձն առեալ է տանուտնանալ ընդ այլում'։ Լցեալ է այսուհետև չարի չարեացն. Պոնն դառնայ 'ի Պեղոպոնես՝ զօրաժողով լինել, և ընդ կազմել սպառազինութեամն՝ դիմեսցէ 'ի Սիկիլիա։

Օ այս ամենայն պատմեաց մեզ Պլուտոն. և մեր հրաժարեալ 'ի նմանէ, 'ի վաղիւ անդր յուղի անկաք գնալ 'ի Դիոմեդիա։

ԳԼՈՒԽ Լ.Դ.

Ուղևորել Ենաքարսեայ 'ի Բիովիա. և յաղագս տրոփոնեան պատգամատեղւոյն, և վասն Եսխոդեայ և Պինդարոսի։

ԶԻՐ ինչ ամենևին վասնդ ուղևորելոյն ընդ Լիլադա. ամենայն ուրեք 'ի զլխաւոր քաղաքս և

1 Պլուտ. 'ի Դիոն. հատ. 1. 2 Նոյն անդ էջ 966։ էջ 967։

ընդ արահետ Հանապարհս էն օթևանք[1]. այլ կողոպտին ուղևորք 'ի զօշաքաղութենէ անխնայ պահանջողաց։ Լաւ զի զրեթէ ընդ ամենայն աշխարհն խիտ առ խիտ լերինք և բլուրք էն, 'ի հուպ վայրս ուղևորին կապք, և անդ իսկ անուսուցեալ 'ի կիր արկեալ[2]։ Իսկ 'ի հեռաւոր վայրս ջորեօք հարկ է ուղևորել[3], ստրուկս կարասեկիրս ածելով զհետ[4]։

Հիւրասէրքն էն Յոյնք առ հասարակ. 'ի վերայ այսորիկ և 'ի գլխաւոր քաղաքս կան հիւրընկալք հոգաբարձուք եկաց։ Իսկ 'ի նոցանէ սուկականք էն, վաճառականութեան կամ ատպնջականութեան զօգիս կցորդեալք ընդ սուկականս այլոց քաղաքաց։ Լաւ կէսք զհասարակաց բերեն դէմս, իբր հազարապետք քաղաքի ուրուք կամ ազգի հրովարտակաւ 'ի նմանէ կացեալք, հանդերձ հաւանութեամբ ժողովրդեանն յորմէ էն[5]։ Իսկ կէսք դարձեալ զայլոց ուրուք քաղաքի ունին զհոգ, յանձանձելով և զքաղաքակցացն իւրեանց զիրս[6]։

Հիւրընկալ ուրուք 'ի քաղաքաց ասպնջականէ զհրեշտակս նորա, ամենայն ուրեք ընկերէ նոցա,

1 Պղատ. յղ. օր. գիրք ԺԱ. էջ 919։ Եպիֆան. յղ. վրէպ. հրեշտ. էջ 410։

2 Ագաթն. գիրք Գ. էջ 99։

3 Եպիֆան. 'ի Կաթսիփ. էջ 440։

4 Նոյն. յղ. վրէպ. հրեշտ. էջ 410։ Կասաւ. 'ի Թէոփիլ. գլ. 11. էջ 103։ Ցիւփոռ. անդ. էջ 385։

5 Թուկիդ. գիրք Բ. գլ. 29. գիրք Ե. գլ. 53։ Քսեն. պատմ. յուն. գիրք Ա. էջ 432։

6 Ցոն. առ. Ագաթնէոսի, գիրք ԺԳ. էջ 603։ Դամասթ. 'ի Կալիպ. էջ 1099 և 1101։

և համբաւովն իւրով պատսպարան լինի 'ի յաջողութիւն գործոց նոցա [1]։ Պարձեալ և ուղևորաց բնակչաց այնր քաղաքի, պատրաստէ զամենայն դիւրութիւն յոր ձեռնհաս իցէ։ Ի բազում քաղաքս Անլաղայ եղև մեզ զփորձ առնուլ նպաստիցս. և ուրեք ուրեք արք սոսկականք իւրովի կանխէին պատրաստել զպէտս մեր [2], առ 'ի գտանել շնորհս առաջի աթէնացւոց՝ որոց գործակալք ցանկային լինել, և առ 'ի վայելել 'ի գնալն իւրեանց յԱթէնս 'ի շնորհս պաշտամանն, մնաւնել 'ի ժողով հասարակաց, առընթեր կալ պաշտամանց կրօնիցն և հանդիսից խաղուց [3], այլովքն հանդերձ։

Յերրորդում ամի հարիւրորդի յիսներորդի ողիմպիադին 'ի սկիզբն ամենեանն մունիքիոնի * մեկնեալք յԱթենայ, 'ի նմին երեկոյի հասաք յԱրոպ. և էր ձանապարհն անհարթ, այլ ուրեք ուրեք հովանաւոր 'ի սարդենեաց [4]։ Ի մէջ սահմանաց Փոսիտիոյ և Աթտիկեայ կառուցեալ կայ Արոպ քաղաք, հեռի 'ի ծովէ ասպարէզս իբր քան [5]։ Խիստ են յոյժ պահանջք մաքսից, և պարէնք իսկ բնակչաց քաղաքին մաքսին [6]։ Աղաժուարահամբոյրք են քաղաքացիքն և զօշաքաղք։

1 Գ. սեն. պատմ. յուն. գիրք Է. էջ 570։ Եւսեբեայ. յԵղիսակ. գիրք Գ. էջ 405։
2 Թուկիդ. գիրք Գ. գլ. 70։
3 Սէնդ Գ. ուս. յղ. գաղթական. էջ 89։
* Ն. Գ. 357 ամք. 'ի գարնանի։
4 Դիկէարք. յղ. Յունաստ. յաշխարհագր. հա. 2. էջ 11։
5 Սորաբ. գիրք Թ. էջ 403։
6 Դիկէարք. անդ։

Մերձ՝ի քաղաքն անդր առ աղբերբք ակամակիտ ջրոյ՝, է մեհեան Աստիսարաւեայ՝ միոյ՝ ի զօրավարաց պատերազմին Թէբայ։ Օ՛ի որ անդ հրամայէին, համարեցան յետ մահուն տալ հրամանս պատասխանւոյ։ Որք միանգամ՝ հանդերձեալն իցեն գնալ հարցանել զնա, պարտ է նոցա զաւուրս երիս հրաժարել՝ ի գինւոյ, և ժամն քսան և չորս յամենայն Ճաշակաց[2]։ Օ՛ենուն ապա նոքաւ առ դրօշելով նորա, և զմարթ նորա տարածեալ անդ՝ ի գետնի՝ ննջէն՝ ի վերայ նորա։ Եւ ասի բան, թէ աստուածն երևեալ նոցա յերազի՝ տայ նոցա զհրամանս պատասխանւոյ։ Բազում՝ աքանչելիս՝ ի մեհենի անդ ասէն գործեալ. բայց բիոմատացիք յոյժ զսկատեալ էն զհետ գիցն պատգամաց, և չիք հաւատալ բանից նոցա։

Հեռի՝ ի տեղւոջէն երեսուն ասպարիզաւ, ՝ի վերայ միոյ՝ ի բլրոց՝ Ցանագրա քաղաք կառուցեալ կայ, որոյ գեղեցկատեսիլ էն շինուածք. բաղումք՝ ի նոցանէ արծնեալ այրեցական նկարուք և անդաստակօք զարդարեալ. և երկիրն գնու

առոգեալ՝ ի Թերմոդոն գետոյ փոքուէ՝, ծածկի ճիթենեօք և այլ ևս ազգի ազգի ծառուք։ Ընդ է ազնուագոյն գինի Լիմոլիոյ, այլ ցորեան սակաւ բերէ երկիրն։

Բայց Թէպէտ և բնակիչք քաղաքին Հոիք էն,

[1] Լիվ. գիրք Խե. գլ. 27։
[2] Փիլոստրատ. վարք Ապոլոն. գիրք Բ. գլ. 37. էջ 90։
[3] Դիկկարք. յդ. Յունասատ. յաշխարհագր. հա. 2. էջ 12։
[4] Երոդոտ. գիրք Թ. գլ. 42։

ոչ է առ նոսա զեղխութիւն, և ոչ որ նորին արգասիքն են անօրէնութիւնք։ ԼսեսանՁուտս զնոսա ասեն զոլ՝ • բայց մեք սիլ ինչ՝ի նոսա ոչ տեսաք, այլ անկեղծութիւն, սէր արդարութեան և հիւրասիրութիւն, և փոյթ ձեռն տալոյ թշուառաց՝զորս ստիպէ հարկն քաղաքաց՝ի քաղաքս շրջել պանդխտութիւն։ Լսեան նոքա զդատարկութիւն, զարշին՝ի զօշաքաղութէ, և հաւանք են ընդ բախտ իւրեանց. և չեք ընդ ամենայն Լփոխոխս տեղն անքոյթ քան զայն՝ի հարստահարութենէ[2]։ Լմտի ինձ զի և գաղտնեաց առաքինութեան նոցա եղէ հասու • զի զերկրաւորութիւն նախամեծար առնեն քան զամենայն արուեստս։

Լմենպէս բազմամեծարք զից, զի հեռի՝ի բնակութենէ մարդկանացուց կանգնեն նոցա մեհեանս[3]։ Համարին Հերմեայ կեցուցեալ զբաղաք իւրեանց՝ի սրածութենէ, շուրջ եկեալ զնովաւ նոխազ՝ի յուս. վասն որոյ՝ի նոյն ձև սատակերի զրօշեալ զնա՝ի մեհենին, յաւուր տօնի նորա առնեն զայիշատակ արարողութեանն՝ կացուցեալ փոխանակ նորա չքնաղագեղ զոք սատանի[4]։ Լանդի համարին Հայնք ընդունելի և զոլ զից զպաշտամունս ընծայեալս՝ի ձեռն մանկըսուց, և զեղեցկութեան յաձախել զյարգ նուիրացն։

1 Դիկեարք. յդ. Յունասա. յաշխարհագր. էջ 18։
2 Դիկեարք. անդ. էջ 13։
3 Պաւսան. գիրք Թ. գլ. 22. էջ 753։
4 Նոյն անդ. էջ 752։

Օկորինեայ տանագրացւոյ՝ որ եկաց քերթող զուտի քաջ, տեսաք մեք անդ զգերեզման յերևելի տեղւոջ քաղաքին, և զկենդանագիր պատկեր նորա 'ի կրթարանի։ Ընթերցողք տաղից նորա զարմանան՝ թէ ընդէր այնոքիկ 'ի վէճս քերթողաց բազում անգամ քան զՊինդարայ տաղն պատուեցան. այլ 'ի տեսանել զպատկեր նորա՝ զարմանան թէ որպէս ոչ միշտ այնոքիկ նախամեծար եղէն[1]։

Ցանագրացիք որպէս և այլ ազգք Յունաց, ախտաւորաբար իմն ախորժակաք բերին 'ի զնին աքաղաղին մենամարտութեան։ Բանզի հաւքս այսոքիկ յոյժ ստուարք և գեղեցիկք էն առնոսա[2]. այլ յեղծումն ազգի իւրեանց քան թէ 'ի սերունդ թուին ձգնել պատերազմաւէր բարոյիւքն[3]։ Բ. ծէն անտի աքաղաղ 'ի քաղաքս բազում, և արկանէն զնոսա ընդ միմեանս 'ի կռիւ. և առ ա-ռիւնահեղ ևս գործելոյ զկատաղութիւն նոցա, զինեն զբիտս նոցա շեշտիւք պղնձեօք[4]։

Մեկնեցաք 'ի Ցանագրայ, և գնացեալ աս-պարէզս երկերիւր[5] ընդ առապարս դժուարինս՝ հասաք 'ի Պղատիէս. քաղաք երբեմն հզօր, և արդ թաղեալ ընդ աւերակաք իւրովք։ Բ. ստ

1 Պաւսան. գիրք Թ. գլ. 22. էջ 753։
2 Կոլումելլ. յոյց. իրաց գեղջ. գիրք Ը. գլ. 22։ Վարր. յոյց. իրաց գեղջ. գիրք Գ. գլ. 9։
3 Պլին. գիրք ժ. գլ. 21. հտ. 1. էջ 554։
4 Արիստոտ. 'ի հաւան. տող 760։ Պարապ. անդ, և տող 1365։
5 Դիկկարք. յոյց. Յունաստ. յաշխարհագր. էջ 14։

բոտով Լեթերն լերին կառուցեալ էր՝ 'ի գե-
ղեցկածաւալ դաշտին. զոր Պօսոպ գետ ոռոգա-
նէ, ուր Պարդենիոս երեսուն բիւրուքն պարսկաց
'ի պարտութիւն մատնեցաւ։ Եւ այնպէս առա-
քինացեալ պղատացւոց 'ի Ճակատամարտի անդ,
մինչև այլոց ազգաց Յունաց 'ի վարձս քաջու-
թեան նոցա և առ 'ի խափանել զամենայն նա-
խանձ, նոցա ընծայել զպարծանս յաղթութեան։
Եւ տունք առ նոսա սահմանեցան 'ի մշանջենա-
ւոր յիշատակ, ամի ամի առնել հանդէս դամ
բանական 'ի փառս անկելոցն 'ի Ճակատամարտին
Յունաց [1]։

Բազումք են հանդոյն ամին տունք առ Յոյս.
քանզի նոքա ոչ բաւական համարին զարձանս
յանմահացուցանել զպայծառ յաղթանակս, և
կամ գէթ 'ի յառաջ բերել այլ։ Վասնզի ար-
ձանք կոմսին կամ զանխելանան, և բազում այն
է զի հանձարոյ Ճարտարին են ցուցակք և փա-
ռասիրութեան կանգնողացն։ Զ.յլ քաղաքաժո-
ղով հանդէսք, յորում ամի ամի անուանք նուի-
րելոցն 'ի վերայ հայրենեաց 'ի ձայն բարձր յի-
շատակին, ուր զներբող առաքինութեան նոցա
արտասանեն լեզուք Ճարտարախօսք, և ուր հայ-
րենիք նոցա պանծացեալ ընդ այնպիսի որդիսն՝
ցօղէ արտօսր զգերեզմանաւ նոցա. այսոքիկ են
առ նոսա արժանապատն վարձք քաջութեան։ Եւ

[1] Պարաբ. գիրք Թ. էջ 411։
[2] Պլուտ. յԱրիստիդ. հատ. 1. էջ 332։

այս կարգ էր հանդիսին առ պղատացիս։

Ի ծագել առաւօտու՝ փող հրաւիրակ ազգ առնէր՝ ի չու, և երևէին կառք բազումք զհետ միմեանց լի պակաւք և ոստովք մրտենեաւք։ Այսպս ցուլ սեաւ, և զհետ նորա մանկտի՝ բարձեալ դաշ խուրանս կաթին և զինւոյ և ազգի ազգի իւղս անուշունս։ Այլ ապա իշխանապետ պղատացւոց ծիրանազգեաց, անօթ՝ ի միւմ ձեռին և՝ ի միւսումն սուսեր։ Ելցանէր հանդէսն ընդ մէջ քաղաքին. և՝ ի հասանել՝ ի Ճակատուն տեղի աւագանին առեալ ջուր՝ ի մերձակայ աղբերէն՝ լուանայր զշիրիմն կամ՝ զսիւնս կանգնեալս՝ ի վերայ գերեզմանացն, և ցանէր զնոքաւք անուշահոտութիւն, և զոհէր զզուարակն։ Այլ յետ մատուցանելոյ զաղօթս Աբրամազդայ և Հերմեայ, հրաւիրէր՝ ի խառնելիս քաւութեան զհոգիս պատերազմողացն անկելոց՝ ի Ճակատամարտին. և լցեալ բաժակ գինւով, հեղոյր մատն ինչ՝ ի բաժակէն՝ ասելով՝ ի ձայն բարձր. Բաժակս այս վասն քաջացն, որք՝ ի վերայ ազատութեան Հայաստանեայ ետուն զանձինս՝ ի մահ։

Յետ Ճակատամարտին Պղատեայ բնակիչք քաղաքիս միաբանեալ ընդ ամենացիս, ընկեցին զլուծ թեբացւոց՝ որք հիմնադիրս քաղաքին հաւ մարէին զանձինս [1], և որք յայտմհետէ անհաշտ թշնամիք եղեն պղատացւոց։ Այլ այնչափ յա-

[1] Պլուտ. ԱՆրիսոՓդ. հատ. 1. էջ 332։ [2] Թուկիդ. գիրք Դ. գլ. 61։

Ձախեաց ստելութիւն նոցա, մինչև 'ի պեղծութեանական մարտին միաբանեալ նոցա ընդ սպարապետացիս՝ յարձակել 'ի Պղատիէս, և կործանել զքաղաքն 'ի սպառ[1]։ Այլ ապա ընդ հուպ շինեցաւ. և զի միշտ յաթենացիսն հակամիտեր, վերստին առեալ զայն թեբացւոց աւերեցին յառաջ քան զառն եօթնեւտասն[2]։ Այս արդ մեհեանք ևեթ քաղաքին կան անկործան խնայեալք 'ի յաղթականէն, և տունք սակաւք, և օթեան մեծ 'ի բնակութիւն եկեղեցին անդր 'ի մատուցումն զոհից։ Արքերբիւ ոսնաւոր է երկայնութիւն նորա, և լայնութիւն նոյնչափ. և բնակարանք բազում յոյժ են 'ի նմա 'ի վայրայարին և յառաջնում յարկին[3]։

Տեսաք մեք զմեհեան Աթենասայ կանգնեալ յաւարէն Պարսից, որ առաւ 'ի Մարաթոն։ Պողիզնոտի 'ի նմա նկարեալ է զդարձ Ոդիսեայ 'ի սահմանս իւր, և զկոտորած տուիղացոյն Պենելոպեայ. և Ոնատեայ դարձեալ զառաջին աստպատակն արդիացւոց 'ի Թրոյէ[4]. և նկարքս այսոքիկ կան անեղծք ոլորեալ դեռ ևս նկարեալք[5]։ Իսկ պատկերք դիցուհւոյն հսկայաձև՝ Փիդիասայ ձեռին զրօշուած է, փայտակերտ ոսկիազօծ, այլ դէմքն նորա և ձեռք և ոտք կՃեայք[6]։

[1] Թուկիդ. գիրք Դ. գլ. 68։
[2] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 362։
[3] Թուկիդ. անդ։
[4] Պաւսան. գիրք Թ. գլ. 4. էջ 718։
5 Պլուտ. յԱրիստիդ. հտ. 1. էջ 231։
6 Պաւսան. անդ։

Տեսաք 'ի մեհենին Լատեմեայ զԱքիդասայ պղատացւոյ զշիրիմն. և պատմեցաւ մեզ պատգամ լեալ 'ի գլխոյն առ Յոյնս յետ պարտութեանն Պարսից՝ անցուցանել զկրակ մեհենին, քանզի պղծեալ էր 'ի խժիցն, և առնուլ վերստին 'ի Դեղփեայ 'ի մատուցումն զոհիցն յայնմհետէ. նմին իրի և ամենայն ուրեք շուրջանակի շինուցին զհուր։ Եւ վաղվաղակի Աքիդաս երթեալ 'ի Դեղփիս, էառ հուր 'ի բաղնէն, և առ օրին քաջապինդ ընթացիւք դարձեալ 'ի Պղատեա նախ քան զմեռաս արեւու՝ վայրիկ մի յետոյ անկաս մեռեալ', ասպարէզս հաղար 'ի միում աւուր հեռաւակազնաց լեալ։ Եւ ոչ ոք զարմացի ընդ անհնարին երաղընթացութիւնն, եթէ զիտիցէ ըզ Յունացն ասպարիզական կրթութիւն յընթացս, և զի յոլովից 'ի քաղաքաց են սուրհանդակք[3] սովորք յընթանալ 'ի միում աւուր ուղի ամբաւ։

Ելցաք ապա ընդ աւանն Եւկտրա և ընդ Թեսպիսիս քաղաք, զորոց արիացք մեծամեծք անմոռ հայցուցին զանուանս։ Օ 'ի մերձ 'ի Եւկտրա յառաջ քան զամն քանի մի մղեցաւ Ճնակատամարտն բազմաղէտ, որ զիշխանութիւն ապարտացուցն փոյզ. իսկ Թեսպիսիս 'ի միասին ընդ Պղատեայ 'ի վերջին պատերազմունս կործանեալ

[1] Պլուտ. յԱրիստիդ. հատ. 1. էջ 331։

[2] Երոդոտ. գիրք Զ. գլ. 106։

[3] Լիւ. գիրք ԼԱ. գլ. 24։ Պլին. գիրք Ը. գլ. 20. հատ. 1. էջ 386։ Սոլին. գլ. 1. էջ 29։ Ակիտ. բանաս. կամաս. հատ. 3. էջ 316։

ցաւ [1]։ Ի սրբազան Լեթ յիշատակս խնայեցին անդ թերացիք, յորս երկու ինչ առաւել զաչս մեր յիւրեանս ձգէին. մի հեռանն Հերակլեայ, որոյ քրմուհին սպասաւոր 'ի կուսութեան կայր մինչև 'ի սպառ [2]. և պատկերն Աքրոսի՝ զոր կեսք այլ ընդ այլոց առնուն ընդ Միրոյն պատկերի։ Աչ էր պատկերն վեմ անկերպարան, որպէս այն ինչ 'ի լեռնէ հատեալ [3]. զի այսպէս 'ի վաղ ժամանակս ածէին զդիս 'ի պաշտօն հասարակաց։

Զոգաք երեկոթեալ Մարկար, հեռի 'ի թմբսպեայ ասպարէզս իբր քառասուն [4]. վայր անբնակ կելի յամնարայնի և 'ի ձմերայնի [5], այլ անդ եղեն խանձարուքք Աստուծոյ։ Աչ 'ի վաղիւ անդր հասաք ընդ ուղի անձուկ յանտառն նուիրեալ Մուսայից [6]. և յելանելն անդր զկայ առաք առաղերքն Աղամիպպաչ, և ապա առ անդրեանն Լինոսի նախնոյ քերթողին Յունաց, որ յայրի ուրեմն [7] իբր 'ի փոքրիկ մեհենի կանգնեալ կայ։ Յաջ և յահեակ տեսիլ ակնահաճոյ ընծայեին խրճիթք դաշտականացն խիտ առ խիտ 'ի վերայ բլրոյ կառուցեալք [8]։

Մտաք ապա 'ի ծառատունկ վայելչագեղ Հեմելիս, ուր յամենազուարճ աղբուտիս Մուսայիք

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 362 և 367։
2 Պաւսան. գիրք Թ. գլ. 27. էջ 763։
3 Նոյն անդ էջ 761։
4 Սարաբ. գիրք Թ. էջ 409։
5 Եպիդ. գործք, տող 658։
6 Սարաբ. անդ էջ 410։
7 Պաւսան. անդ գլ. 29. էջ 766։
8 Նոյն անդ գլ. 31. էջ 771։

ցին թուէր մեզ հասեալ։ Բանզի անդ զորութիւն նոցա և ազդեցութիւն յայտնապէս պատմի յաղանացն ոչք զանայի վայրն զարդարեն, և շունչ ինն և հոգի ընծայեն նոցա։ Ընդրիք Մուսայիցն դրօշեալք յայլ և այլ Ճարտարաց՝ ստեպ ընդ առաջ լինին աչաց. ասա Պլոդոն ընդ Հերմեայ յերգ քնարի վիճեալով[1], և անդ քաջաց քերթողաց և երաժշտաց դեռ ևս զսիրդ կենդանութեան ունելով, Թամիրեայ, Արիոնի, Լսիոդեայ և Ոլիէոսի՝ զորով պար առնուն ամբոխ գազանաց, 'ի քաղցրաձայն երգոց նորա զգօնացեալք[2]։

Շուրջանակի կանգնեալ կան եռոտանիք պրղնձիք բազումք, ազնուական մրցանակք հանճարաց պսակելոց 'ի վիճս քերթութեան և երաժշտութեան[3], և 'ի նոցունց յաղթականացն 'ի վայրս անդր նուիրեալք։ Արևելեն է 'ի նոսա Լսիոդեայն կալեալ 'ի Բաղկիս Լեբիոյ[4]։ Յառաջ ժամանակաւ թեսպացիք ամի ամի գնային յանտառս անդր զիցանուէր՝ բաշխել զմրցանակս զայսոսիկ, և կատարել տօնս 'ի պատիւ Մուսայից և Ակրոյ[5]։

Ի վերնակողմն անտառին ընդ ձոր ծաղկաւէտ հոսէ վտակն Պերմէս, և աղբերքք Լպպոկրենեայ և Արկիսեայ. զի անդ պատմին պատանուոյն

[1] Պաւսան. գիրք Թ. գլ. 30. էջ 767։
[2] Նոյն անդ էջ 768։
[3] Նոյն անդ էջ 771։
[4] Էսիոդ. գործք, տող 658։
[5] Պաւսան. անդ։

Լարկիսեաց անշնչացեալ՝ի տարփանաց, ՝ի ջուրս ընդ խաղաղանիստեալ զսատկեր իւր՝ մինչև ՝ի սպառ պշուցեալ՝ ։

Լաք մեք յայնժամ Յղկիկն լերին, որ յոյժ հաչակաւորն է վասն անապականութեան օդոյն, և ջուրցն առատութեան, և հովտացն լիութեան, և զուարար հովանեաց, և սաղարթագեղ վաղեմի ծառոց որ ծածկէն զնա ։ Շ Լինականք ոչք մերձ անդր բնակէն, պատմէին մեզ՝ զբանջարս վայրաց այնպէս առողջարարս զոլ, զի և իժից Հարակելով զայնս՝մերկանան զգաստութիւն թուլնիցն ։ Լբ քաղցր յոյժ և ախորժահամ թուէին նոցա պտուղք ծառոցն, և մանաւանդ անմեռուն՝ անդրաքնէ՝ ՝ի Յունաց անուանեալ ։

Ա՞ուսայիցն անդ է աթոռ · վէպք առասպելք ևեթ առանդէն զնոցանէ անտեղիս, այլ անուանք նոցա զսկիզբն նոցին յայտ առնեն ։ Օ՝ի որպէս թուի, քերթողքն առաջինք հիացեալք ընդ գեղ տիեզերաց, կարդային յօգնութիւն զյաւերժաւ հարսունս անտառաց, զլերանց և զաղբերաց, և տեղի տուեալ ախորժակաց այլաբանութեան՝ որ մեծարէին յայնժամ յամենեցունց, ետուն նոցա անուանս ըստ իւրաքանչիւր աղդեցութեան յերկս մնաց ։ Ի սկզբան երիս ևեթ ծանեան Ա՞ուսայս, զԱ՞ղեմտի, զԱ՞նիմէ, և զԱ՞յիտէ [2] · այս ինքն են Մարախոմոնիան՝ որով յօրինին քերթածք, յէ-

1 Պաւսան · գիրք Թ · գլ · 2 Նոյն անդ գլ · 28 · էջ 765 · 29 · էջ 766 · գլ · 31 · էջ 773 ։

ՂՈՂՈՒԻՆ՝ որով յաւերժանան վաստակք քաջութեան, և Երգ՝ որով արտասանին։ Ըստ զարգանալ արուեստի տաղից, անճնաւորեցան տիպք կերպարանաց նոցա և արգասիք. բազմացաւ թիւ Մուսայից, և անուանք Եղան նոցա պատկանաւորք 'ի գեղ բանաստեղծութեան, 'ի ծնունդ նորա գերաշխարհիկ, 'ի քաղցր բարբառ նորա, 'ի զբօսանս և 'ի զուարթութիւն զոր ընծայէ, յերգս և 'ի կաքաւս որ յաձախեն զչուք նորա, և 'ի փառան որովք պսակի*։ Այս ապա յաւելան Շ նորհք՝ որոց պարտ է վայելուչ յօրինել զքերթածս, և Ամէն՝ զորովք յաձախ յածի բանաստեղծութիւն՝։

Այս ծնան մնացածին Էակքս այսոքիկ յերկիր խուժադուժ 'ի Թրակիա, ուր 'ի խորս տգիտութեան յանկարծ 'ի վեր երևեալ պայծառացան Որփէոս և Լինոս և աշակերտքնոցին։ Պատուէին անդ Մուսայք 'ի լերինս Պիերիոյ, և անտի տակաւ ընդարձակեալ զսահմանս իւրեանց՝ տիրեցին 'ի Պինդոս և 'ի Պարնաս և Հելիկոն, 'ի վայրս առ հասարակ ամպիս, ուր նկարիչք բնութեան շուրջ պատեալ 'ի բազմազարդ պատկերաց՝ աստուածարեալ զմայլին։

Մեկնեալք 'ի զուարձալի վայրացն, հասաք 'ի Լիբադիա՝ կառուցեալ առ ոտամբ լերին, ուստի Հիպոկրենէ վտակ բղխեալ՝ բազում ուրեք գահա-

* Յեսիոդ. Ծննդաբան. դից, զեկութիւնն. Թիւ Ե։

։ Ցսիոդ. Ծննդաբան. դից, տող 64։

վէժ անկանի [1]։ Բ՚մենայն ուրեք ընդ քաղաքն կանգնեալ կան արձանք մեծազործութեան և կիրթ ախորժակաց բնակչացն [2], յորոց ՚ի ընկին զբօսաք։ այլ փութայաք տեսանել զայրն Տրոփոնիոսի՝ զմի ՚ի բազմահռչակ պատգամատեղեաց՝ որ էն Լեղադա։ Բայց ոչ կարացաք ելանել անդր առ անզգուշութեան Փիլոտայ։

Բանզի յընթրիս ուրեք առ միում՚ի գլխաւորաց քաղաքին, ուր Ճառք անկան զբանչելեաց որ ՚ի բազմախորհուրդ այրին զործէին, Փիլոտաս երկրայելով իմն ասաց՝ թէ ՚ի աքանչելեաց անտի յոլովք արգասսիք էն բնութեան։ Յաւել ևս պատմել, և ասէ. Լ՚ի ես երբեմն ՚ի միում ուրեք ՚ի մերհենաց, և թուէր հոսել քրտանց ՚ի պատկերէ զիրն, և ամբոխն աղաղակէր՝ Հրաշք են. այլ ապա զիտացի, զի կերտեալ էր պատկերն ՚ի փայտէ՝ որ երբէք երբէք տամկանայ [3]։ Այս իբրև ասաց, այլազգունեցան զէմքն միոյ ՚ի բազմանկանացն, և յետ սակաւ միոյ եղ արտաքս. զի էր նա մի ՚ի քրմաց Տրոփոնեայ։ Եւ խորհրդակից եղեն մեզ այլք մի մտանել զանձինս վրէժ խնդրութեան նորա, և մի իջանել ՚ի գետնափոսն՝ որոյ աղամող շաւիղք քրմացն ևեթ ծանօթք էին *։

1 Պաւսան. գիրք Թ. գլ. 39. էջ 789։ Ովիդ. գիրք Դ. էջ 327։ Սփոն. հատ. 2. էջ 50։ Փոքոք. հատ. 3. էջ 158։

2 Պաւսան. անդ։

3 Թէոփր. բուսաբ. գիրք Ե. գլ. 10. էջ 541։

* Յետոյս մատենիս՚ի տեղեկութիւնն. Թիւ Զ։

Լրբև աւուրք սակաւք 'ի վերայ անցին, ազգ եղև մեզ զի մի 'ի Թեբացւոց հանդերձեալ էր ի՝ջանել յայրն. և Ամնապարհ արարեալ ընդ լեռնակողմն հանդերձ ոմանքք 'ի բարեկամաց մերոց, և ասա բանմուԹիւն լիբադացւոց յաւելան 'ի մեզ, հասաք վաղվաղակի 'ի մեհեան Տրոփնեայ կառուցեալ յանտառի՝ որ նմին ինքեան դիցն է նուիրեալ ՝։ Պատկեր նորա, որ 'ի կերպարանս Ասկղեպեայ դրօշեալ, Պրաքսիտեղեայ ձեռին է գործ։

Տրոփնիոս Ամարտարապետ էր արուեստիւ, և միաբանուԹեամբ Զամեղեայ եղբօր իւրոյ կառոյց զմեհեան Դեղփեայ։ Այլ կկաք պատմեն գործեալ 'ի նմա գողուղի ելս, առ 'ի բառնալ զի՝ շերայն զգանձս որ առանդեին 'ի մեհեան անդր. և Թէ Զամեղեայ ըմբռնեալ 'ի ծուղակ որ լարեալ էր նմա, Տրոփնիոս առ 'ի խափանել զամենայն կասկածանս՝ զլեռատեաց զնա. և յետ սակաւ միոյ ընկրաւ յանդունդս՝ պատառելով երկրի ընդ ոտիւք նորա [2]։ Այլք պատմեն, զի եղարցն երկոցունց 'ի կատարել զկառուցումն մեհենին՝ խնդրեալ Ապողոնէ տրիտուր, և աստուածոյն խոստացեալ տալ նոցա զայն յետ եօԹն աւուրց, յաւուրն եօԹներորդի վախճանեցան 'ի ննջելիս քաղցր 'ի քուն [3]։ Ել ինչ նուազ պատակ-

[1] Պաւսան. գիրք Թ. գլ. 39. էջ 789։

[2] Նոյն անդ գլ. 37. էջ 785։

[3] Պլինդար առ Պլուտարքոսի յլ. մեթ. հա. 2. էջ 109։

տին 'ի միմեանց կարծիք յաղագս Տրոփնեայ աստուածական ընդունելոյ պաշտօն. այլ գրեթէ ամենայն պաշտամանցն Յունաց սկիզբն անհաստատելի ինն է, և ընդունայն հետազօտել զայն։

Օ Հանապարհան որ 'ի Լիբադեայ երթայ յայրն Տրոփնեայ, են խիտ առ խիտ մեհեանք և անդրիք։ Բ. դեռնատիպ այրիւն սուղ ինչ 'ի վերոյ քան զանտառն մեհենական՝ անդաստակ իմն երևի նախ շրջափակեալ 'ի սղիստակ կռեայ սիւնակաց, յորոց վերայ կանգնեալ կան կոթողք պղնձիք '։ Ներսի էն մուտք 'ի ծերպ ուրեմն կուսծոյ, ութ կանգուն 'ի բարձրութիւն, և չորք 'ի լայնութիւն, և անդ է դուռն այրին՝ յոր ընդ սանդուղս իջանեն։ Բ. յլ 'ի խորս սանդղոցն անձուկ էն յոյժ էջք, և հարկ է զոտս նախ 'ի ներքս արկանել, և ապա բազում աշխատութեամբ զիւրանն. և ընդ մտանել անդր՝ ուղիւօրէն իմն սահմանք մինչև 'ի յատակ այրին ձգեալ վայրաբերին։ Ցոյն զօրութիւն և յելսն դարձեալ մղէ զնոսա զլխ'ի վայր 'ի վերս. և փոխիսդ մեղրախառն 'ի ձեռին կալեալ նոցա, չկարեն զդէմ ունել բբռնութեան գործեացն՝ որ մղեն զնոսա յելս և 'ի մուտս։ Բ. յլ քուրմք առ 'ի փարատել զամենայն կասկած հարատահարութեան՝ օձիւք լի ասեն լինել զքարայրն, և զի զփոխինդն զայն մեղու

1 Պատան գիրք Թ. գլ. 39. եջ 791։ Փիլոսոփ. վարք Ապոլոնիոս. գիրք Ը. գլ. 19։

պարտ է արկանել նոցա խանձ՝ զի մի մեղցեն[1]։

Գիշերայն Լեթ՝ի քարայր անդր մարթ է մտանել, և բազում պատրաստութիւնք են և քնանիք մտելոյն։ Թէ բացին որ հանդերձեալն էր առնուլ հրամանն պատասխանւոյ, կոչէր Տերսիդաս. և էր նորա կացեալ զաւուրս ինչ՝ի խորան մի նուիրեալ Աղդի և Ոգւոյ բարւոյ, մտանելով՝ի ցուրտ բաղանիս, և հրաժարեալ՝ի գինւոյ և յամենայնէ որ՝ի մատենի օրինացն արգելեալ էր, և կերակրելով՝ի զոհիցն զոր ինքն մատուցանէր[2]։

Ի մուտս արեգական զենաւ նոխազ մի. և ընդառաջիցեալ զընդերս նորա և զայլոց պաշտարագացն յառաջագոյն մատուցելոց, գուշակեցին ընդունելիս լեալ Տրոփոնեայ զպատարագն Տերսիդայ, և զի հանդերձեալ էր տալ նմա հրամանս պատասխանւոյ զորոց հարցանէրն։ Ոչ ինչ գնա յԵզր գետոյն Աչիկնեայ, ուր մանկուանք երկու երեքտասանամեայք օձին գնա իւղով, և հեղին գնովաւ ջուրս սրբութեան։ Ոտի ածաւ՝ի մերձակայ աղբիւրսն Լեթեայ և Մնեմոսինեայ. զի առաջինն մոռացումն առնէ անցելոց, իսկ երկրորդն տպաւորէ՝ի միտս զամենայն որ ինչ յայլի անդ տեսանէ և լսէ։ Ապա մուծաւ միայնակ՝ի խորան մի, ուր է վաղեմի պատկերն Տրոփոնեայ. առ որ Տերսիդայ աղօթս մատուցեալ, անց յառաջ

1 Պարապ. Արիստոտ. 2 Պաւսան. գիրք Թ. էջ ՅԱմպան, տող 508։ 790։

'ի քարայրն կոյս՝ զզեցեալ կտաւի։ Եւ մեք զՀետ նորա գնացաք յաղօտ նշոյլ ջահիցն որ առաջի նորա ածէին. և եմուտ նա յայրն, աներևոյթ լեալ յաչաց մերոց '։

Եւ մինչ դեռ զՀետաւին կալեալ մնայաք դարձի նորա, լսեաք խօսիլ այլոց և և եկելոց 'ի զնին. յորոց բազումք լեալ էին յայրին։ Ակաք պատ- մէին և ոչ մի ինչ տեսեալ անդ, այլ ընկալեալ զոչ- հրամանս պատասխանւոյ 'ի բարբառս կենդանի. այլոց ընդ հակառակն էր ինչ լուեալ, բայց միայն տեսիլս ինչ նոցա երևեալ տարակուսանացն լու- ծիչս։ Մ'ի 'ի լերադացւոց, Թոմն Տիմաքեայ և աշակերտ Սոկրատայ, պատմեաց մեզ որ ինչ անցք ընդ հաւոյն իւրում անցեալ էին. և էր ուսեալ նորա զայն 'ի Կերբեայ Թեբացւոյ խնա- տասիրէ, որ յար և նման զլուսաւն 'ի Տիմաք- քեայ առանդեալ էր նմա [1]։ Եւ էր բանիցն Տի- մաքեայ օրինակ այս.

Զոգայ հարցանել զընտանեակ ոգւոյն Սոկրա- տայ զՏրոփոնիոս. և էր զառաջինն անդ յայրին խաւար ամենազիշեր, և կայի ժամն ձիգս անկեալ յերկիր՝ պաղատանս մատուցանելով Տրոփոնեայ, 'ի քՀն Թէ յարԹուն՝ ոչ գիտեմ։ Եւ ահա լուայ հնչմունս քաղցրալուրս, այլ զգոյր 'ի նոսա բարբառ յօդաւոր. և տեսի կղզիս մեծամեծս բազումս պայծառացեալս ՀնՀնչագեղ, յարա-

1 Պաւսան. գիրք Թ. էջ 790։

2 Պլուտ. յդ. գլխին Սո. կրատայ, հա. 2. էջ 590։

փոփոխս տեղի՛ի տեղւոջէ, և շրջէ զքէնն անդադար զոյնք նոցա, և ինքեանք առաձէին զինքեանսիք, և ծփէին ընդ ծովՔ որ երկուստեք հոսէր ուղիս հրեղէնս։ Այլ բանային առ ինև անդունդք անյատակք, յորմէ ծուխք թանձրախիտք դիզադէզ ամբառնային, և՝ ի խորոց անտի ելելի լինէին մինչիւնք կէնդանեաց խառն՝ ի խուռն ընդ Ձիւս մանկանց և ընդ հեծուԹիւնս արանց և կանանց։

Մինչդեռ յայս ամենայն արհաւրաց սասանեալ էր անձն իմ, եղև առ իս ձայն տխուր, և ասէ. Ցիմաղքէ, զի հարցանես։ Այլ ես խելացեղեալ իմն, ասեմ. Օ՜ ամենայն իսկ, զի բնաւք սասանօր զարմանալիք Թուին ինձ։ Այլ ասէ ցիս ձայնն որ խօսէր. Կղզիք զոր նշմարեսդ՝ի բացի, են վերնագաւառք՝ որոց իշխեն դիք. այլ քեզ հրաման է շրջել ընդ սահմանս Պերսեփոնեայ որ ընդ մերոյս են տերուԹեամբ, անջրպետեալք՝ի նոցանէ Սոիքսեաւ։ Հարցի և ասեմ։ Այ Սոիքսոն զինչ է։ Այլ ձայնն ասէ ցիս. Ճանապարհ է որ ածէ՝ի դժոխս, և շաւիղ որ բաժանէ ընդ լոյս և ընդ խաւար։

Այլ պատմեաց ինձ զծնունդ և զփոփոխումն հոգւոց. զի որ մեղաւքն շաղախեալ լցեն, ասէ, անկանին՝ որպէս տեսանեսդ՝ի վերՔ, և պատրաստին՝ի վերստին ծնունդ։ Պատասխանի ետու և ասեմ։ Ի՞ սուտ ելեԹ տեսանեմ յեղեալս անդընդոցդ յուզեալ, որ կէսք այդր՝ի վայր իջանեն, և կէսք՝ի վեր ամբառնան։ Այլ նա ասէ

ցիս. Բ՝ստեղծդ այդոքիկ հոգիք են, և երբեակ ազգ է դոցա. որք միանգամ՝ ի հեշտութիւնս ընկղմեալ՝ խառարեցուցին զբնական լոյս մտացն. որք մերթ ընդ ախտս և մերթ ընդ բանին պա-տերազմեալ ոչ սուրբք և ոչ պիղծք են՝ ի սպառ. և որք բանին ևեթ հնազանդեալ՝ զնախա-տիպն իւրեանց անտխեղծ կալան զպատկեր։ Բ՝ռաջինքն են աստեղծդ որ թուին առկայծեալք. երկրորդքն՝ աստեղծդ աղօտացեալք մառախլաւ, զոր թուի՝ ի բաց փարատել նոցա. իսկ երրորդքն՝ աստեղծդ լուսաձաձանչք, որ զեր՝ ի վերոյ քան զայլն ամբառնան։ Զորս յետինքդ են ոգիք ընտանեալք մարդկան, որ յորդորեն զարե-բատիկս՝ ի մահկանացուաց զաստուածամերձս։

Լ՝ և ես սուղ ինչ զայսոսիկ պարզաբանեալ, ասա ասէ. Որդեակ, առաւել ևս յետ երից սմ-սոց խելամուտ լցիս բանիցս այսոցիկ. առ այժմ զնա խաղաղութեամբ. և զայս ասացեալ, լռեաց։ Լակ ես դարձայ տեսանել՝ թէ ուստի զայր ձայնն. այլ անդէն և անդ ցաւք սաստիկ անկեալ զգլխով իմով՝ խոշտանգէին զիս, յորմէ նուա-զեցայ իակ. և իբրև լինէր ինձ անձին զգալ, գտայ արտաքոյ այրին։ Զայս մինչև ցայս վայր Տիմար-քեայ պատմեալ էր. և թոռն նորա յաւել, զի՝ ի զառնալ նորա անտի Յ՝թէնս՝ զրաւեցաւ յետ երից ամսոց՝ ի կենաց, որպէս պատգամն գուշա-կեաց։

Զամենայն զգիշերն զայն, և զայգդ աւուրն

զմասն ինչ, լսէաք վէպս այսպիսիս. որոց բաղդաւորութեամբ եղև մեզ 'ի միտ առնուլ, զի քուրմք մեհենին ընդ գողուղի մուտս 'ի քարայրն սպրդեալ, բռնութեամբ և ուրուարար պատրանօք յուզեալ աղմկէին զցնորս մտաց եկեղցին 'ի խրդիր պատասխանւոյ։

Մտեալքն անդր մերթ առաւել և մերթ նուազ յամեն 'ի ներքս [1]. և են որք զտիւ մի և զերկուս գիշերս կան անդ [2]։ Որն ընդմիջեցաւ, և Ցերսիդաս չև ևս երևէր, և մեք դեգերէաք զայրիւն։ Յամ մի 'ի վերայ անցեալ, և ահա դիմէր ամբոխն 'ի շրջափակն կոյս. և մեք զհետ երթեալ տեսաք զթեբացին, և զքուրմն որ ձեռն տային նմա, և բազմեցուցանէին զնա յաթոռ Մնեմոսինեայ. քանզի անտի պարտ էր նմա ասել որ ինչ ետեսն և լուաւ ընդ երկրաւն։ Այլ էր նա զարհուրեալ, և աչք նորա առկայծեալ՝ չգնանա չէին զոք. և բարբառս ինչ ընդհատս 'ի շրթանց նորա ժողովեալ՝ որպէս պատգամն դիցն, ապա ածին զնա իւրքն 'ի խորան հրեշտակին բարւոյ և Յաստին։ Ընդ տակաւ ուշաբերեալ զգաստացաւ [3], այլ խառն 'ի խուռն ինչ ևէթ տիսք տեսելոցն յայրի անդ ճնացին 'ի միտս նորա, և թերևս ոչ ինչ այլ՝ բայց արհաւիրք տագնապին. զի ոչ է մարթ հարցանել զաստուածն զայն անպատ-

1 Պարապ. Աբիսաոր. կրատայ, հտ. 2. էջ 590։ յԱմպան, տող 508։
2 Պլուտ. յդ. դիւին Սո. 39. էջ 792։
3 Պաւսան. գիրք Թ. գլ.

տուհաս։ Բազմազոյնք 'ի մոելոցն յայր անդր զամենայն աւուրս կենաց իւրեանց կեան 'ի տրխրութեան՝ ոչ երբեք զուարթացեալք. որով յառակս պատշաճեցաւ ասել զկարի տխուր մարդկանէ, իբր յայրէն Տրոփոնեայ ելեալս[1]։ Ի բաղում այնչափ պատգամաստեղիս որ էին 'ի Բիսով տիա, ոչ ուրեք այսպիսի թանձր և նշաւակ գործի խաբէութիւն, սակայն և ոչ ուրեք այնչափ յաճախեն եկաւորք։

Իջեալք 'ի լեռնէն, յետ աւուրց յուղի անկաք գնալ 'ի Լիմերէ։ Այս անցաք ընդ Բերոնեա, ուր 'ի վեր քան զամենայն ինչ պաշտի գաւազանն դարձնեալ 'ի Հրեիստեայ՝ պատուիրանաւն Աբրամազդայ. զոր Պեղոպս կալաւ նախ, և 'ի Պեղոպայ յաջորդութեամբ Աթրէոս և Լիմուեստ և Գամեմնոն։ Ել 'ի մեհենի ուրեք, այլ 'ի տան միոյ ուրուք 'ի քրմաց պաշտի գաւազանն այն. և զօրհանապաղ զոհք մատուցին նմա, և սեղան բազմախորտիկ[2]։

Ի Բերոնեայ անցաք 'ի Լիմերէ, Ճանապարհ ալարեալ ընդ անտառս, ընդ բլուրս, ընդ անդաստանս բերրիս և ընդ բազում վտակս։ Լիմերէ, մի 'ի մեծամեծ քաղաքաց Այլազգայ, պատեալ է պարսպաւ, և աշտարակօք ամրացեալ։ Ընդ եօթն դրունս են մուտք 'ի նմա[3]. և շրջապատ

[1] Պարապ. Արիստոփ. 40. էջ 795։ Ամոգն, տող 108։
[2] Պաւսան. գիրք Թ. գլ.
[3] Նոյն անդ գլ. 8. էջ 727։

նորա * քառասուն և երեք ասպարէզ՝։ Մինչև-բերդն կառուցեալ կայ՝ ի բլրի, ուր նախնի բը-նակիչք Թերայ զտեղի կալան. և անտի բղխեալ աղբիւր ջրոյ, զոր անդստին՝ ի վաղ ժամանակաց ընդ գետնատիոր ջրանցս ածին՝ ի քաղաքն։

Շուրջ զքաղաքաւն գնան գետք կրկին, և մնրգագետինք և բուրաստանք յօրինեն զարդ։ Փողոցք նորա ոչ են ուղղորդք, որպէս և ամե-նայն իսկ հնոց քաղաքաց։ Ի հրաշակերտս որսալք զարդարին շինուածք հասարակաց՝ են ան-գրիք չքնաղք. ՝ի մեհենին Հերակլեայ պատկեայ ընդ հսկայաձև պատկեր նորին գրօշեալ Յ՚ցկա-մենեայ, և ընդ նահատակութիւնս նորա գրօ-շեալս՝ ի Պրաքսիտեղեայ՝. և՝ի մեհեան Լամ-նեանն Ը՚ստղենի զարմանցեալ կացի ընդ պատկեր Հերմեայ քանդակեալ՝ ի Փիդիայ, և ընդ Ը՚թե-նասայն՝ ի Ակոպայ։ Եւ վասն զի ակամաւորաց եւս ոմանց թերացուց էին անդ անդրիք, խնդրեի զՊինդարայն. և պատասխանի ետուն ինձ՝ թէ չիք նորա անդրի, այլ ահաւասիկ Կղէոնին՝ որ քաջ քան զամենայն երգիչս յաւուրս իւր եկաց։ Մատեայ առ նա, և ընթերցայ յարձանագրին՝ Կղէոն որ զՀայրենիսն պայծառացոյց։

* Ցեակոյս մատենիս՝ ի տե-զեկութիւնն. թիւ Ը։

1 Դիկեարք. յոլ. Յունասա. յաշխարհագր. տող 95. էջ 7։

2 Նոյն անդ էջ 15։

3 Նոյն անդ։

4 Պաւսան. գիրք Թ. գլ. 11. էջ 732։

5 Նոյն անդ գլ. 10. էջ 730։

6 Ալթեն. գիրք Ա. գլ. 15. էջ 19։

Ի մեհեան Յովհաննէսեան Լպրոդնի ընդ եռոտաւ նիսն պղնձիս բազումս է միւս եւս ոսկեղէն, նուիրեալ անդր 'ի Կրեսեայ արքայէն լիդացւոց [1]։ Իսկ այլքն նուէրքդ են ժողովրդոց կամ իւրաքանչիւրոց ոմանց. և ծխին 'ի վերայ նոցա բուրմունք խնկոց. և զի զեղեցկաձևք են՝ յաճախեն զարդս մեհենաց։

Որպէս 'ի յոլովագոյնս 'ի քաղաքաց Լդլադայ, է և 'ի Թեբէ տեսարան [2], և կրթարան մանկտոյ [3], և հրապարակ մեծ. և շուրջ զհրապարակսն մեհենք, և այլ բազում շինուածք, որոց պատուարք ծածկեալ են 'ի զինուց՝ զորս Թեբացիք կողոպտեցին յաթենացւոց 'ի Ճակատամարտին որ 'ի Պեղեոն։ Լե 'ի մեհենացորդաց գերապանծ աւարին կառուցին 'ի նմին տեղւոջ կամարայարկ գաւիթ հզայակաց, զարդարեալ բազմաթեամբ պղնձի պատկերաց [4]։

Բազմանմարդ է յոյժ քաղաքն [*], և բնակիչք նորա յերիս դասս որոշեալ են որպէս Լ.Թենս. առաջին դաս՝ քաղաքայնոցն, երկրորդ՝ եկացն բնակելոց 'ի քաղաքին, և երրորդ՝ ստրկացն [5]։ Լրկոքին պատակք յաճախագոյնս ընդ միմեանս զրզռեալ, յարուցին ամբոխ մեծ յաշխարհին [6]. կէսք համախոհութեամբ սպարտացւոց նուազ

[1] Երոդոտ. գիրք Ա. գլ. 92։
[2] Լիվ. գիրք Լ.Դ. գլ. 28։
[3] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 366։
[4] Նոյն գիրք ԺԲ. էջ 119։
[*] Յետոյս մնասնէս 'ի տեղեկութիւնսն. Թիւ Ը։
[5] Դիոդ. գիրք ԺԷ. էջ 495։
[6] Թուկիդ. գիրք Դ. գլ. 62։ Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 3. հա. 2. էջ 388։

իշխանս կամելով, այլք օգնականեալ յաթենա-
ցւոց՝ կուսակիցք կալով ռամկաց պետութեան[1]։
Յամենայն ինչ հետէ յետնոցս այսոցիկ հզօրագոյն
գտեալ[2], ռամիկն ունի զամենայն իշխանութիւն[3]։

Թէբէ ոչ միայն պատնէշ է Թիվանիոյ[4], այլ և
մայրաքաղաքն Նոցին՝ ի դէպ է կոչել զայն։ Այս ինքն
է առաջնորդ մեծի նիզակակցութեանն զլխաւոր
քաղաքաց Թիվանիոյ. օրէն է ամենեցուն արձա-
կել հրեշտակս յաշխարհաժողովն, ուր ուր զին
իւրք աղգին, չորիցս՝ ի քննութիւն առեալ յայլ և այլ
խորհրդեան[5]։ Պահապետքն մետասան բազմին
անդ անուանեալ բիոտարպետք[6]. աղգն տայ նոցա
զիշխանութիւնն, և նոքա զօրութիւն մեծ է
նոցա՝ ի խորհուրդս, և զրեթէ միշտ նոցա անկ
է զօրավարել[7]։ Այնքէ մեքանիկնատոր էր իշխա-
նութիւնն, բազմանալանգ մարթէր լինել. նոքին
իրի մարհապարտք գտանին բիոտարպետք, եթէ
ոչ՝ ի լրանալ ամին՝ ի բաց զնեն զիշխանութիւնն,
թէպէտ և կացցեն՝ ի գլուխ յաղթող բանակաց
և մերձք՝ ի կանգնել զօրութիւնս մեծամեծս[8]։

Պաղաքք իւրաքանչիւր՝ ի Թիվանիա պահանջ-
ին, և իրաւունք իսկ են նոցա կալ ինքնիշխան.

[1] Պլուտ. ՝ի Պերոպ. հտ. 1. էջ 280։
[2] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 388։
[3] Դեմոսթ. ՝ի Ղեպտին. էջ 556։ Պոլիբ. գիրք Զ. էջ 488։
[4] Դիոդ. անդ էջ 342։
[5] Թուկիդ. գիրք Ե. դլ. 38։ Դիոդ. անդ էջ 389։ Լիվ. գիրք Լ. դլ. 6։
[6] Թուկիդ. գիրք Դ. դլ. 91։
[7] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 368։ Պլուտ. ՝ի Պերոպ. հտ. 1. էջ 288։
[8] Պլուտ. անդ. էջ 290։

այլ թեբացիք ընդդէմ Ճգանց նոցա և այլոց աղ-
գաց Լեզուաց կացեալ, ոչ երբէք թողին զնոսա ա-
զատս ամենևին։ Օ՛ի՛ վերայ քաղաքաց՝ զորս
ինքեանք հիմնեցին զնոցն վարեն զիշխանութիւն,
զոր մայրաքաղաքք՝ ի՛ վերայ գաղթականաց իւ-
րեանց[2]. իսկ այլոց ընդդէմ կացուցանեն զզօրու-
թիւն[3], որում կարի յաճախ պատահէ զեր՝ ի՛
վերայ կալ ամենայն իրաւանց, կամ զժառան-
գութիւն՝ որ բարեբերին է քան զամենայն։ Կոր-
ծանեցին զԱթենասիէս և զՊղատէա վասն յեռս
կալոյ նոցա՝ ի՛ բիւսական նիզակակցութենէ[4],
որոյ ինքեանք են այժմ ուղղիչք, և որում մարթ
է աւելի քան զերկուս բիւրս զօրաժողով լինել։
Լաւ այնչափ ևս առաւել ահարկու է զօրուն նոցա,
որչափ Լիսիմաքոսիք գրեթէ առհասարակ քաջք են
և պատերազմողք և խրոխտք յաղթութեամբքն՝
զոր առաջնորդութեամբն Լիսիմաքոսեայ կարան։
Յոյժ կորովիք՝ ի՛ բնէ գոլով, և՝ ի՛ հրահանգս
կրթալանաց յաճախեն զկորով մարմնոյ[5]։

Լրկիր բնակութեան նոցա արգաւանդահող է
քան զԼոտիկէ[6], և բերէ ցորեան ատոր և առատ[7].
և նաւահանգստին բարեբաստիկ վայրք բանան

1 Քանոնոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 594։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 355, և այլուր։
2 Թուկիդ. գիրք Դ. գլ. 61 և 62։
3 Քանոնոփ. անդ, էջ 579։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 62։
4 Քանոնոփ. անդ, գիրք Ե. էջ 558։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 389։
5 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 119. գիրք ԺԵ. էջ 341 և 366։
6 Ստրաբ. գիրք Թ. էջ 400։
7 Պլին. գիրք ԺԸ. հատ. 2. էջ 107։

առաջի նոցա զտուբևառիկ շահաբերութիւն, ասասի ընդ Լատալիա, ընդ Ակիկիա և ընդ Փրիկէ. և անտի ընդ Լդիպտոս, ընդ Կիպրոս կղզի, ընդ Մակեդոնիա և ընդ Հելլեսպոնտ[1]։

Բայց 'ի հանաշխարհական տնտիցն՝ զորս խրմ-բեն 'ի միասին 'ի Կորնթա մերձ 'ի մեհեանն Լթենասայ[2], են և քաղաքաց իւրաքանչիւր տնք յանձախառորք, և բաղումք ևս 'ի թեքացուց սահմանեալք՝ որոց եղէ իսկ ականատես. այլ ես զի ևեթ 'ի բազմաց յիշատակեցից, որ 'ի տնտի սարդենեաց պաշտի արարողութիւնս այս։ Հան դէս իմն կամ թափոր տեսի զի հասանէր 'ի մեհեան Խամենեանն Պղոնսի։ Որմի աստուածոյն տարևոր ժամանակաւ սահմանի իշխանութիւն, և ընդ զեղոյ կերպարանացն պարտ է նմա ունել և զմանկութիւն և զաղնուականութիւն[3]։ Այնէր նա 'ի հանդիսին, պատկ ոսկի 'ի գլուխ, և ոստ սարդենի 'ի ձեռին, վարսքն զուսովքն գեղաձևեալք, և զգեցեալ պատմուճան շքեղ[4]։ Օ հետ նոցա գայր պար օրիորդաց, ոստ դաղնոյ և 'ի ձեռին նոցա, և երգէին զօրհնութիւնս։ Յաջ գականաց նորա ոմն երիտասարդ գնայր առաջի նորա, բարձեալ 'ի ձեռին ոստ երկայնաձիւղ ձիթենւոյ՝ պատեալ ծաղկամբք և տերևովք դափնոյ, և 'ի ծաղ նորա գունդ պղնձի պատկեր

1 Ստրաբ. գիրք Թ. էջ 400։
2 Նոյն անդ, էջ 411։ Պլուտ. հա. 2. էջ 774։ Պաւսան. գիրք Թ. գլ. 34. էջ 778։
3 Պաւսան. անդ, գլ. 10. էջ 730։
4 Պրոկ. Ծաղկաբաղ առ Փոտայ, էջ 988։

սրբեղական։ Օ ջնդէ անտի կախեալ կայէն և սկլ և ս բաղում գնդակք ոսկիք 'ի ձև սյլոց աստեղաց, և նարօտաք երեքարիւր վեթասունևհինգ ծիրանեղոյնք՝ 'ի թիւ աւուրց տարւոյ. և սկլ գունդ փոքրագոյն քան զառաջինն ընդ նոսա կայր 'ի տիպ լուսնի։ Օ ի որովհետև Ասպղնի՝ այս ինքն է սրեղական կատարէին տօնք, ասայեն նաև այնուհիկ նշանակէր գերազանցութիւն նորա քան զայլ աստեղս առ հասարակ։ Այ էին տօնքն այն սահմանեալ վասն յաղթութեան կանգնելոյ ընդդէմ բնակչաց քաղաքին Ասնեայ։

Յօրէնս թեբացւոց են ինչ ինչ արժանի յիշատակի. զի ոչ է օրէն ամբառնալ յաւագութիւն զայր քաղաքացի, որոյ չկցէ հրաժարեալ 'ի տան ամոյ հետէ 'ի դուռնաքեայ տուրևառուից։ Տուգանք են նկարչաց և քանդակագործաց, եթէ անպատեհս ինչ գործիցեն պատկերս։ Այ դարձեալ արգելուն օրէնքք թողուլ 'ի բացի զտղայս նորածինս, որպէս սովորութիւն է 'ի քաղաքս ուրեք Այլազգայ։ Պարտ է հօր մանկանն յանդիմանն առնել զնա դատաւորին, և ցուցանել զի չէ բաւական ձեռն իւր 'ի մնուցանել զնա. և դատաւորն տայ զնա դիւրազնի, որ ոք 'ի քաղաքայնոց խնդրիցէ գնել զնա, որ և ապա ընդ ստրուկս իւր ունի զնա։ Օրէն է առ թեբացիս տալ

1 Արիստոտ. յդ. հաս. գիրք Գ. գլ. 5. հա. 2. էջ 344։

2 Եղիան. զան. պատմ. գիրք Դ. գլ. 4։

3 Նոյն անդ. գիրք Գ. գլ. 7։

4 Պետ. յդ. օր. առաքիչ. էջ 144։

5 Եղիան. անդ։

փրկանաւ զգերին կալեալ 'ի պատերազմի, եթէ միայն չիցէ ծնեալ 'ի Լիսովտիա. զի զծնեալսն անդ տպանանեն[1]։

Լնսոսը էն օրք Յուտիկէ, իսկ 'ի Լիսովտիա կաբրի թանձունք[2], թէպէտ և Պիթերսն ևեթ լեառն բաժանել ընդ նոսա։ Լաբ զանազանութիւնս այս օրոց թուի զմտացն ևանեղզոծել 'ի բնակիչս երկուց գաւառացն, հաւատոի առնելով զտեսութիւնս իմաստասիրաց ոմանց զզօրութենէ նահանգաց[3]։ Վասնզի Լիսովտացիք զրեթէ առ հասարակ վերջացեալ զտանին յարագամտութենէ և յաշխատութենէ հոգւոյ՝ որով բնաւորեալ էն ամենայնիք. այլ թերևս դաստիարակութենէ նոցա տալի է զայս քան թէ բնութենէ։ Օ՛ի առ տգիտութենէ իւրեանց և տխմարութենէ թուին թանձրամիտք և ապուշք[4]. զի առաւել 'ի հրահանգս մարմնոյ քան մտաց պարապեն[5], նմին իրի և չիք առ նոսա Ճարտարիմաստութիւն[6], ոչ վայելուչ կարգաւորութիւն բանից[7], ոչ հմտութիւնք՝ որ յառ միմեանս թղթելոյ[8], և ոչ տարազ յանկուցցող՝ որ կրթութեանն էն արգասիք քան բնութեան։

1 Պաւսան. գիրք Թ. էջ 740։
2 Պիկեր. յղ. Ճակատագր. գլ. 4. հա. 3. էջ 101։
3 Խրոնիկ. յղ. օգոյ ջարբ. տեղ. գլ. 55. և այլն։ Պլատ. յղ. գիրքն. հա. 2. էջ 747։
4 Պինդ. օլիմպ. 6. տող 152։ Դեմոսթ. յղ. պսակ. էջ 479։ Պիկեր. յղ. Ճակատագր. գլ. 9. հա. 3. էջ 101։
5 Նեպոս յԱգիսիլ. գլ. 11։
6 Պլատ. 'ի Խրատն. հա. էջ 182։
7 Գուլիան. 'ի Յոյ. ոգեբզ. հա. 2. էջ 679։ Պարապ անդ։
8 Սարաբ. գիրք Թ. էջ 401։

Բայց միոք կարծեսցէ զԱֆոլախս անբերբ լեալ և անուղ յարանց հանճարեղաց· քանզի բազում թեբացիք յաճախեցին փառս վարժարանին Աթենացոց[1]։ Յապամինոնդ ոչ ինչ նուազ պայծառացաւ զիտութեամբք, քան իրաց պատերազմի աջողակութեամբ[2]։ Տեսի ես անդ յուզեորէն խմում որս ներհունս ոչ սակաւս, ընդ որս և զԷնաքսիս և զԱֆմենիսիոգոր՝ որք զվէպս Լեղապայ նորոգ մատենագրեին։ Դարձեալ և Լսիոդ և Կորինթոս և Պինդար բիուղտացիք էին։

Լսիոդ էթող հանիւսաւ մեծ և մատեանս զերբապանծս։ Յամենակակից Հոմերի զնա հանրեալ[3], կարծեցին ոմանք զնմանէ՝ ասոսս նմին կացեալ· բայց Հոմերի չմարթէր ունել ասոսս։ Ինդաբանութիւն զիցն քերթեալ'ի նմանէ, որպէս զբազմաց նախնի մատենագրացն։ Յունաց զիցաբանութիւնս, են հիւսք իմն առասպելաց կամ անհասանելի այլաբանութեանց։

Բայց բնակեալք մերձ Յորդանան հայրենի աւանդութիւնք այլ ինչ ոչ ընծայեն նմա գրուած, բաց'ի թղթոց միոջէ զոր առ Պերսէս եղբայր իւր գրեաց՝ առ'ի յորդորել զնա'ի գործ։ Որինակ առաջի զնէ նմա զՀայրն իւրեանց, որ առ'ի հայթայթել զպէտս ընտանեացն՝ բազում անգամ զկեանս իւր եդ'ի վտանգ'ի նաւ մի վա-

1 Դիոգ· ըստերս· գիրք Բ· 403։
յոդ· 124։
2 Նեպոս Յնպամ· գլ· 2։
3 Դիոգ· գիրք ԺԵ· էջ 53։ Ելատեան վերք, գար 29
4 Երոդոտ· գիրք Բ· գլ· 4 30։

Հառական, և 'ի Ծերութեան մեհեսեալ 'ի Կումայ քաղաքի Լաւոդեայ՝ եկն բնակել մերձ Յղլիկոն [1]։ Լսիոդ ոչ միայն խրատս ողջամիտս զսպաստուց մարդկան [2], և սրտառուչս զանխրաւութենէ նոցա 'ի գիրս յայս 'ի նեղբս մուծանէ, այլ և պատուէրս բազումս զերկրագործութենէ [3] յոյժ կարևորս, վասն չև և ուրուք 'ի ժամանակին յայնմիկ աւանդելոյ գրով զօրէնս արուեստին [4]։

Ել շրջեցաւ նա ընդ աշխարհ [5], այլ մինչև յալիս Ծերութեան պարապէր 'ի քերթութիւն [6]։ Լղանակ բանից նորա ընտիր և նեղդաշնակ քաղցր է 'ի լսելիս [7], և բերէ յինքեան զնախնին պարզութիւն, որ ոչ այլ ինչ է՝ բայց համեմատութիւն առաջարկութեանն ընդ խմացուածս և ընդ ասացուածս։

Լսիոդ գերազանցեաց յաղգի քերթութեան, յորում խմաստք ոչ յոյժ բարձունք խնդրին [8]. իսկ Պինդար 'ի բարձրագոյն քերթութեան [9]։ Պինդար յաւուրս արշաւանացն Խսերքսեայ պայծառանայր [10]. և եկեաց նա զամն իբր վեթասուն

1 Եսիոդ. տիւք և գործք, տող 633։

2 Պլատ. յղ. հատ. գիրք Ե. էջ 466։ Կիկերոն. առ իւրան, գիրք Զ. Թուղթ 18. հտ. 7. էջ 213։

3 Եսիոդ. անդ, տող 383։

4 Պլին. գիրք ԺԴ. գլ. 1. հտ. 1. էջ 705։

5 Պաւսան. գիրք Ա. գլ. 2. էջ 6։

6 Կիկերոն. յղ. Ծերոյ. հատ. 7. հտ. 3. էջ 301։

7 Դիոն. ասիկ. յղ. Նախն. մատեն. հտ. 5. էջ 419։

8 Կուինտիլ. կարգագրք. գիրք Ժ. գլ. 1. էջ 629։

9 Նոյն անդ. էջ 631։

10 Պինդար խոմմ. 8. տող. 20։ Պարապ. անդ։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 22։

և հինգ՝։ Վարժապետը այլ և այլ եղէն նմա՝ի վարժս քերթուածէ և երաժշտութեան, և մանաւանդ Այիրսկ կին նշանաւոր աջողութեամբք հանձարոյ, և հռչակաւոր ևս վասն ունելոյ ընդ աչակերտս իւր զՎինդար և զգեղաւորն Կորինթա[2]։ Յոգնա աչակերտակիցք երկու կապեցան ընդ միմեանս սիրով արուեստից, թէ արդեօք և առաւելաւ ևս իւիք։ Վինդար մանկագոյն գոլով քան զԿորինթա, խորհրդակից իւր ունէր զնա. և ուսեալ՝ի նմանէ՝ զի պարտ է զարդարել զքերթածս առասպելեօք, այսպէս միւսմ՝ի տաղիցն արար սկիզբն. Օ՜ պարտ իցէ ինձ երգել, զԼամենոս գետ թէ զյաւերժահարսին Այելիա կամ զԱդոնիս կամ զՀերակլէս և կամ զԱմենս. և իւրաքանչիւր սոցա՝ այլովքն հանդերձ, յաւել մանկիւրս։ Այնդ որ Կորինթայ ժպտեալ, ասէ. Յաւելքս զպարկ լի ցորենով՝ սերմանել յածու մի փոքրիկ, փոխանակ ցանելոյ անդր ձեռամբ զհատս սերմանց, անդէն յառաջնում քայլափոխի ամացեր զբովանդակն յերկիր[3]։

Վարժեցաւ նա յամենայն ազգի ազգի քերթածս[4]. և առաւելագոյն ստացաւ պարծանս երգովքն, զորս՝ի խնդրոյ այլոց արար յօրինու-

1 Թոմ. յդ. Պենդ։ Քրտիկ, տարեգր. առտիկ. հա. 2. էջ 56։

2 Սուիդ. ՝ի բառն Κορίν. և ՝ի բառն Πίνδ.

3 Պլուտ. յդ. փառաց Ա. Թեն. հա. 2. էջ 347։

4 Սուիդ. ՝ի բառն. Πίνδ. Փարիկ. մատեն. յուն. հա. 1. էջ 550։

թ'ես դից և 'ի պանծացուցանել զդուստրայաղթ նահատակս Լուսաւորչի, որ թերևս զժուարագոյն է քան զամենայն երգս տաղից։ Օ՛ի պարտ է քերթողին զենդրեալ հարկ նեբբողին ունել պատրաստ 'ի պայմանեալ աւուրն. նայնք միշտ առաջի կան նոցա պատկերքը 'ի նկարագրել, և 'ի վասանգի կայ միշտ առաւելագունց կամ նուազ քան զառաջարկութիւնն գտանելոյ։ Բայց Պլինդարայ այնպիսի էին խանդք, զի խուչբս այսոքիկ և խութք չխափանէին զնա, և անդը ևս քան զկրիս ակն մնաց մերոց ձգէին սահմանք տեսութեան նորա։

Ոչի նորա կորովի և անբռնադատ՝ յախուռն և խրոխտ և սաստիկ շարժմունքն 'ի վեր երևի։ Լեռնէ զդիս առաջի կայցէ նման երգել, ամբառնայ որպէս զարծուի մինչև յաթոռ նոցա. իսկ եթէ զմտրդիկ, յարձակի յասպարէզ անդը որպէս ամէհի երիվար. և ուղեսրէն ինն ընդ երկինս և ընդ երկիր հոլովէ պատկերս վեհս, այլասացութիւնս յանդգնութեան, խնամոտս զօրաւորս, և մնիոս լուսաձանձանս[1]։

Լաւ առ ինչ ուղիս այս երբեմն զթուութս պատառել, և անդրէն 'ի ձոր իւր ամիսոի. և զոյրագին ևս վերատին զեղեալ, միատանգամ անդր դառնայ կատարել խաղաղ զընթացս իւր։ Օ՛ի զոր օրինակ առիւծ բազում անդամ ընդ

[1] Ովասա. գիրք Դ. տաղ. գաղր. գիրք Ժ. գլ. 1. էջ երգ. 2։ Կոմինակ. կար. 631։

աղամեղ շաւիղս յարձակեալ ոչ դադարէ մինչև ըմբռնիցէ զո

, այսպէս և Պիտոյ զայլասկին զՀետ մնասէ առաջարկութեանն՝ որ մերթ և ելի և մերթ անդարձի ելնի աչաց նորա [1] Վասն սքանչելի զՀետ փառաց, առ ըղձի ակնարկս կացուցանելոյ զայն. և եթէ 'ի նահատակին զոր ներբողէ՝ ոչ պայծառ նշոյլն փառք, հետաքննեալ 'ի նախնիս նոցա և 'ի հայրենիս և 'ի սահմանակիս խաղուց՝ ուր և նշողիցեն Ճառագայթք, զոր գաղանաձաձուկ ինն արուեստիւ խառնեալ ընդ այնոսիկ՝ որոյք պտակի զղիւցազունս իւր [2]։ Ի տեսիլ նոցա անկանէի ինն 'ի ցնորս՝ ոչ ինչ իւիք խափանեալ. Հանգուցանէի զիայլուսին նոցա Ճառագայթից տունջենայնն ատեղն [3]. և զընկալուչ նոցա կացուցանի 'ի ծաղ բարեբաստութեան [4]։ Ի եթէ մեծութիւնք ընդ զեղջ կցորդեալ լցեն 'ի նմա, յաթոռ անդր Ի քանդղայ բաղմեցուցանի զնա [5]. և առ 'ի պարսպել զնա յամբարատանութենէ՝ յիշեցուցանի նմա անդէն առ նմին, զի մարկանացու զգեցեալ է մարմին, և զգեստ վերջին լցի նմա երկիր ընդ հուպ [6]։

Ի այս բարբառ անասելոյ համեմատէր ոչ ոչ ժամանակին. յաղթութեամբք զոր այն ինչ կալեալ էր Յունաց ընդդէմ Պարսից՝ և ևս հաստատեալ էին 'ի կարծիս. զի չիք ինչ որ զարիանան վեհ հանդարտակութիւն ազդիցի 'ի հոգի, որ-

1 Պիտ. ոչիսոյ. 1. տող. 7։
2 Նոյն անդ. տող 157։
3 Նոյն խեթմ. 5. տող 18։
4 Նոյն նեմ. 11. տող 20։

պէս զպանծալի վկայութիւնս հատարակաց գո-
վութեան։ Պինդարոս զերս ժամանակին 'ի Նահ
առեալ, և կուսակութեամբ զօրաւոր ասացուա-
ծոց և բազմախայլ ձևոց՝ թուէր իմն իբր յամ-
պոց որոտալով ասել պետութեանց Աղլադայ.
Ա՛ի շինուցանէք զՀուն դիւցական լուցեալ 'ի
հոգիս մեր, արծարծեցէք զեռանդն բարենա-
խանձ, յարգեցէք զամենայն ազգի ազգի վաս-
տակս, մնացէք արութեանց և մեծագործու-
թեանց յայնցանէ՝ որ վասն փառաց կեան։ Լա-
ռա Հոյնս ժողովեալս 'ի դաշտս Ողիմպեայ ասէր.
Տեսէք զնահատակդ, որպիսի խիստ աշխատանս
յանձն առնուն առ 'ի ստանալ տերևս մեր ձիթե-
նոյ առաջի ձեր. և զինչ ապա չգործիցէք ուր
զվերէժ հայրենեաց խնդրել առաջի կայցէ։

Զարդիս իսկ հանդիսատեսք պայծառ տա-
նախմբութեանցն Աղլադայ, որ 'ի ժամ յաղթա-
նակին տեսանեն զնահատակն, և ուղեկից լինին
նմա 'ի մտանելն 'ի քաղաք ծնողեան իւրոյ, որք
լեան զաղաղակն շուրջ զնովաւ հնչեալ, և զձայն
սքանչանաց և ցնծութեան խառն ընդ անուանս
նախնեաց նոցա որք զնոյն պարծանս կալան, և
ընդ անուանս դից խնամակալաց՝ որք շնորհեցին
հայրենեաց իւրեանց զյաղթութիւնն զայն,
ամենեքին ասեմ նոքա փոխանակ զարմանալոյ
ընդ աշխոյժս և ընդ խանդս մտաց Պինդարայ,
համարեսցին արդեօք զքերթածս նորա հան-
դերձ ամենայն վսեմութեամբն յոյժ ստորև քան

զտարտարութիւն մնաց իւրեանց։

Պենդարոսի յամենայազգեան ըմբռնեալ 'ի զարմացումն ընդ հոգեշարժ և ընդ մեծաշուք տեսիլն, հաղորդ զտաւ հասարակաց արբեցութեան մնաց. և 'ի նկարագրութիւնս իւր խառնեալ զայն, եկաց զովաբան և բարբոսող փառաց. որով ամենայն առաջարկութիւք տաղից նորս ազնուացան, և առին կերպարանս վեհմութեան։ Այսպէս եղև նմա և զարքայս մեծազօրս և զանձնչան քաղաքացիս պանծացուցանել. բայց յերկոսին եւս ոչ զմարդ նկատեալ, այլ զյաղթող։ Պատճառանաւք դիւրատարտուսի բնութեան մարդկան ընդ գովութիւնս՝ որ ոչ իւրեանց պատկանին[1], այսմ յամենական առաքինութիւնս նահատակայն. այլ զի առաքինութիւնք արքայից են փառք նոցա, գովք զբարեգործութիւնս նոցա[2], և ցուցանել որ ինչ մարթ է նոցա բարեգործել. Լերուք, ասէ, արդարք յամենայն գործս ձեր, և Ճշմարիտք յամենայն 'ի բանս[*]. զիտասջիք զի բիւրք բիւրուց կան ձեզ զէտք, և թեթև ինչ թերութիւն լեցի ձեզ աղիտաբեր[3]։ Լ. յոսիսի էին գովութիւնք Պենդարայ. ոչ շուայլեր նա զրուատիս,

1 Պենդ. գլուխ. 1. տող 160. գլուխ. 8. տող 473. խոնար. 5. տող 65. նեմ. 10. տող 37։

2 Նոյն. գլխագ. 1. տող 18. գլխագ. 2. տող 10 և 180։

[*] Բանքն Պենդարայ, որով զիմաստս զայսոսիկ բացասրէ։

տացեն զկերպարանս ինչ քաջայանգուշտացուածոցնորա, զի ասէ. Ազաջնորդեցէք զեկաւ արդարութեան, դարձնեցէք զլեզու ձեր 'ի սալ Ճշմարտութեան։

3 Պենդ. գլուխ. 1. տող 165։

և ոչ սահմանեցուն համարէր անկ յօրինել զրուա-
տիս։ Զանազի զրուատիք, ասէր, են վարձք
բարեգործութեանց[1]. հեղիկ ցօղով նոցա աՀեն
առաքինութիւնք, որպէս տունկք 'ի ցօղոյ եր-
կնից[2]. այլ լուաց և եթ անկ է զովել զառաքի-
նիս[3]։

Բայց թէպէտ և դժուարիմացք են յոյժ տաղք
Պինդարայ, և խառն 'ի խուն կերպարան բա-
նից նորա յերևմանն, այլ յամենայն դէպս պա-
տուեցան։ Զմբոխն զարմանայ ընդ այնս՝ առանց
հասու լինելոյ խնամոխին[4]. այնու և եթ զի պատ-
կերք կենդանատիպք արագ արագ յաչս նորա
փայլակնաբար ցոլանան, և բառք մեծավայելուչք
և քաջահնչողք բախեն ստէպ զլսելիս նորա և
թմբեցուցանեն։ Այլ դատաւորք հանճարեղք
զբերթող տաղին այնոցիկ նախապատիս 'ի քնար
երգակ քերթողս միշտ դասեցեն[5], և այժմէն
իսկ խնամոտասերք զմիտս նորա 'ի կիր արկանեն,
և մեծարեն զվկայութիւն նորա[6]։

Արթ էր ինձ մանրապատում առնել զիսիտ
առ խիտ գեղեցկութիւնս տաղից նորա, այլ ես
շատ համարեցայ ասել զաղնուական խնամոտին՝
որ շունչ իմն և հոգի տաղին նորա են։ Լոյսի

1 Պինդ խոթմ. 3. տող 11։
2 Նոյն. Նեմ. 8. տող 68։
3 Նոյն Նեմ. 11. տող 22։
4 Նոյն ոգեմագ. 2. տող 153։
5 Ովիդան։ Դուինեալ։ Գոնդ-
դին։ Դիոն. ազիկ։ Ցիշան.
բանաս. կանճառոյն, հա. 15.
էջ 369։
6 Պղատ. 'ի Մենն. հա. 2.
էջ 81. յլ. հաս. գիրք Ա. էջ
331։

ինձ սպա զնորայն երկրորդել. Լ՝ինն ինձ նեռք բաղուսքի՝ ի ձգել, այլ ես զայն ընտրեցի՝ որ զլաշմ պատուական՝ ի նպատակ անդր սպասուրէ՝ ։

Ինայ ինձ ասել սակաւուք զկենաց նորա և զբարուց. զգլխաւոր տեղեկութիւնս առ այս՝ ի կիր առի՝ ի զրոցս, զոր նորին իսկ զրեալ ասէն թեբայիք, անձամբ զանձն՝ ինամանկարագրելով։ "Լ՝ էր երբեմն, զի զօշաքաղութիւն ոչ շաղախէր զարբաւ քերթողական՝ ։ Լ՝այլ արդ թող շլաս ցինայլք՝ ի ձանձրոյ ոսկւոյ, և լայնածաւալ ընդարձակեացեն զարհմանս կալուածոց իւրեանց՝ ։ Ոչ արդոյ են ինձ մեծութիւնք, եթէ ոչ ուղղեալք և պնեալք առաքինութեամբք. սոքօք զանմահական կարող եմք ժառանգել զփառս՝ ։ Ընդ խորհուրդս իմ և ընդ բարբառ չեք խտիր։ Ամրելի են ինձ բարեկամք, և ատելի չարակամն. այլ չհալածեմ զսա զինուք զրպարտութեան և երգիծանաց՝ ։ Լ՝ախանձուն չգտեալ յիս սոյլ ինչ՝ բայց միայն զարհամարհանս, կորանոր՝ ի բաց դառնայ. և՝ ի քէն վրիժու լքեալ թողում զնա՝ ի քաղցկեղ իւր, որ ձարակի՝ ի սիրտ նորա՝ ։ Լ՝սիկար ձիչ երկչոտ և նախանձոտ ձեռնկի ոչ կասեցուսցեն երբէք զյանդուցն

1 Պինդ. ողնոյ. 2. տող 149. պիւթ. 1. տող 84։
2 Նոյն խոհմ. 2. տող 15։
3 Նոյն. նեմ. 8. տող 63։
4 Նոյն ողնոյ. 2. տող 96. պիւթ. 3. տող. 195. անդ. 5. տող 1։
5 Պինդ. խոհմ. 6. տող 105։
6 Նոյն նեմ. 7. տող 100. պիւթ. 2. տող 154 և 155։

գնացս արծուոյ ընդ օդս [1] ։

Ի զբօսանս և 'ի ծուիս խնդութեան և վշտաց՝ որ իբրև զալիս անցանեն 'ի վերայ մարհկանայ-ցուաց, ո՞ յուսալ կարիցէ վայելել յանշարժ բարե-բաստութեան [2] ։ Պարձուցի զաչս իմ շուրջանա-կի, և տեսի զի բարեբաստագոյն են կեանքք 'ի չա-փաւոր գոյս քան յայլ կենցաղս, և ողացի զաղդ հզօրաց, և խնդրեցի 'ի զից՝ մի ընկնել զիս ընդ ծանրութեամբ այնպիսւոյ յաջողութեան [3] ։ Ինչ-թանամ ընդ անկամակոր շաւիղս, հաճ և հա-ւան ընդ բախտ իմ, և սիրելի քաղաքացոց իմոց [4]. ամենայն ցանկութիւն իմ է հաճոյ լինել նոցա. առանց հրաժարելոյ յաղատութենէ ասելոյ համ արձակ որ ինչ ինձ համեստն թուի կամ ոչ այնպիսի [5] ։ Յայսպիսի յօժարութիւնս սրտի մերձ ձիմ խաղաղութեամբ 'ի ծերութիւն [6]. և երա-նի ինձ, եթէ հասեալ 'ի տխուր վախճան կենացս՝ թողուցում որդւոց իմոց զպատուականագոյն 'ի ժառանգութիս զժառանգութի բարի անուան,, [7] ։

Կատարեցան իրքք Պինդարայ, և եկեաց նա 'ի ծոց խաղաղութեան և փառաց ։ Օ՛ի թէպէտ և թեբացիք պարտաւորեցին զնա 'ի տուգանս վանն զոմեալոյ նորա զաթենացիս զսոփոս նոցա [8],

1 Պինդ. պիւթ. 2. տող 168. Նեմ. 4. տող 65 ։
2 Նոյն Նեմ. 3. տող 138 ։
3 Նոյն ոլիմպ. 2. տող 62. Նեմ. 7. տող 81 ։
4 Նոյն պիւթ. 11. տող 76 ։
5 Պլուտ. յՊ. Նախատատ. հոգւոյ, հատ. 2. էջ 1030 ։
6 Պինդ. Նեմ. 8. տող 64 ։
7 Նոյն իսթմ. 7 տող 58 ։
8 Նոյն պիւթ. 11. տող 76 ։

և հնդիկս՝ի վերն քերթողաց պատուեցան տաղք Կորինթայ քան զնորայսն՝, այլ զհետ վաղանցուկ մրրկացն յաջորդէին հուպ ընդ հուպ տիւք զուարթք։ Աթենացիք և ամենայն ազգք Յունաց մեծապատիւ մեծարեցին զնա. և Կորինթա իսկ ինքնին զպարտութիւն խոստովանեցաւ առաջի հանձարոյ նորա[1]։ Ի Դեղփիս՝ի պիւթեան խաղսն, բռնագատեալ՝ի թախանձանաց յոգնախուռն բազմութեան տեսողաց, պսակեալ սաղենեաք բազմեր յաթոռ բարձրութեան[2]. և առեալ քնար, հնչեցուցանէր նուագս զմայրելիս՝ ընդ որ յամենայն կողմանց հնչէին բարբառք սքանչանաց, և ոլովք գեղեցկազոյնս զարդարէին տօնքն։ Այս՝ի կատարել զոհիցն, քուրմն Պոլոնսի հրաւիրեր զնա հրապարակաւ՝ի Ճաշն դիցանուէր. քանզի հարցկին երևելի ինն և նորաստքանչ պատուով պատուիրեալ էր հանել նման բաժին յերախայրեաց, որ նուիրեին՝ի մեհեանն[3]։

Կիսոլատացիք սիրողք են յոյժ երաժշտութեանէ, և զրեթէ ամենեքեան ուսանին նուագել զնոգաւ[4]։ Յորմէհետէ յաղթանակեցին՝ի Եւկտրա, մինչ զնագոյնս զակատին՝ի ինքեանս[5]։ Հաց գերմակ է

1 Եղեան. զան. պատմ. գիրք ԺԳ. գլ. 25։
2 Փարրիկ. մատեն. յուն. հատ. 1. էջ 578։
3 Պաւսան. գիրք Ա. գլ. 24. էջ 858։
4 Նոյն գիրք Թ. գլ. 23. էջ 775։
5 Արիստոտ. Աբաբան. տող 863։ Պարապ. անդ տող 862։ Պոլիբ. գիրք Դ. յօդ 65։
6 Պոլիբ. առ Ամենէոսի, գիրք Ա. գլ. 4. էջ 418։

նոցա, և ունդք և միրգք առատ, և որք վայրի և ձկունք բազում յոյժ՝ մինչև ածել անտի ՅԹԷնս[1]։

Զմեռն 'ի Լիսովտիա սաստիկ է յոյժ, և 'ի Ամերեկ զոգցես իմն անհանդուրժելի[2]։ Զիւն, հողմն և չքաւորութիւն փայտի դժնեայ առնեն զբնակութիւն նորա 'ի ձմերայնի, որչափ ախորժելի է յամարայնի քաղցրախառնութեամբ օդոյն 'ի շունչ, և ցրտագին զովութեամբ ջուրցն՝ որ առատ են անդ, և զուարճալի տեսլեամբ դաշտացն՝ որ դալարագեղք երկարատևեն[3]։

Ամբացիք քաջասիրտք են, ստահակք, յանդգնութիւնք և մնասիտք. 'ի ցասմանէ 'ի թշնամանս արագ անցանեն, և յարհամարհութենէ օրինաց 'ի մուռացօնս մարդասիրութեան։ Բռ դոյզն ինչ շահ օգտի գործեն անիրաւութիւնս դժնդակս, և առ թեթև ինչ պատճառանաց 'ի սպանութիւնս անկղխտանան[4]։ Կանայք նոցա յաղթանդամք են և կայտառք, և բազումք քան զսակաւս խարտեաշք. սիպաձեւք են, և զարդք նոցա ազնուականք։ Բրտաքոյ 'ի փողոցի ծածկեն զերեսս իւրեանց, զաչս ևեթ թողեալ 'ի բաց. և զհիւսս վարսիցն ժողովեալ ամիսիեն զգլխով. և կօշկս ծիրանիս նեղազարշապարս ագանին, որպէս զի բնաւ իսկ անկօշիկս երևեալ։ Զայն նոցա քաղցր է յոյժ և

[1] Արիստոտ. յԱբարն. տող 873։ Եւթուլ. առ Ամենեոսի. գիրք Բ. գլ. 8. էջ 47։
[2] Պղատոն. յՊ. իրաց գեղ. գիրք Ա. գլ. 4։
[3] Դիոկեսիոս. յՊ. Յունաստ. յաշխարհագր. էջ 17։
[4] Նոյն անդ, էջ 15։

խանդաղատելի, իսկ արանցն խիստ և անախորժ՝ հանգոյն իմն բարուց նոցա՝։

Բայց՝ ի բարուց աստի ընդհատք են մանկտին մարտիկ, որ սրբազան դումբն կոչի[2]։ Օր ի են նոքա պատանիք երեքարիւր մենդակիցք, դաստիարակեալք՝ ի միջնաբերդին՝ ի գանձուց աշխարհին։ Զայն ներդաշնակ սրնգի ուղղեն զհրաշահանդես նոցա, և և զզբօսանս. և զի մի քաջութիւն նոցա զառաջանիցի՝ ի մոլեկան կատաղութիւն, իմաստս աղնուականս և զօրաւորս ազդեալ տպաւորին՝ ի հոգւոջ նոցա։

Խրաքանչիւր ոք՝ ի մարտկաց ընտրեն՝ ի գնդէն զմի ոք իւր համհարզ, կալ ընդ նմա անմեկնելի։ Մենայն ցանկութիւն իւր է՝ ի հաճոյ լինել նմա և մեծարգոյ, և կցորդ զբօսանաց նորա և աշխատութեանց՝ ի մարտի։ Եթէ մարթ իցէ իսկ ումեք՝ ի նոցանէ ոչ ակն ածել յանձնել, սակայն անմարթ է նոցա չարտկառել՝ ի բարեկամէն, որոյ ստգիւտքան զամենայն տանջանս դժնդակագոյն է նոցա, և գովեստ նորա սիրելի քան զամենայն բարութիւն։ Սովին զերաշխարհիկ իմն կցորդութեամբ զմնհ քան զնախատինս լաւ համարին, և քան զամենայն շահ օգտի նախատեմ ար առնեն զկիսաս։ Ի խուռն սաստկացեալ պատերազմի մի՝ ի մարտկաց աստի՝ ի վերայ երեսաց կործանեալ յերկիր, իբրև ետես զթշնամին առ կուռն՝ զի ձգէր զսու-

1 Դիկիարք. յզ. Յունաստ. յաշխարհագր. էջ 16 և 17։
2 Պլուտ. ի Պելոպ. հտ. 1. էջ 287։

սեր, ասէ. Կայ մնա վայրիկ մի։ Եւ յոսն կա-
ցեալ Մխեա արդ, ասէ, զսուսերդ 'ի սիրտ իմ.
զի մի ամաչեսցէ յոյժ բարեկամն իմ, կարծելով
թէ 'ի փախստի իցեմ սպանեալ։

Յառաջ ժամանակաւ երեքարիւրմարտիկքաշ-
խէին ըստ դումարտակաց 'ի գլուխ գնդից գնդից
բանակին. բայց Պեղոպիդաս 'ի բաղումս պատե-
ղազմունս զօրավար կացեալ, և համարձակ
գնասս մղեալ 'ի Ճակատ, նոքօք զրեթէ զամե-
նայն յաղթութիւնսն եւ կանգնել թեբացւոց
ընդդէմ սպարտացւոց։ Փիլիպպոս 'ի Վերմոնէա
եբեկ զգունդս զայս մինչև ցայսժամ անսկուն, և
'ի Ճակատամարտին տեղւոջ տեսանելով տապաստ
անկեալ զմանկտին թեբացի, ծածկեալ փառու-
նակ վիրօքն, և կուռ զմիմեանսիք մածեալ անշարժ
յիւրաքանչիւր կայիցն, չկարաց ժոյժ ունել ար-
տասուաց, վկայեալ 'ի տեսիլ ամենեցուն զառա-
քինութիւն նոցա և զքաջութիւն։

Պարտէն ազգաց իւրաքանչիւր և քաղաքաց և
ազգատոհմից էն յոռութիւնք ինչ և թերու-
թիւնք բռնադոյնք, հանգոյն ախտից հիւանդու-
թեան ածանցականք որդւոց յորդիս, յոմանս ա-
ռաւել և յոմանս նուազ սատակութեամբ։ Պատի
է ստգտանել նոցա զմիմեանս, և ստգտանացն յա-
ռակս իսկ պատշաՃել։ Որպէս առ բիսոլտացիս
համարի նախանձուն ունել զընակութիւն իւր 'ի

1 Պլուտ. 'ի Պեղոպ. հտ. 1. էջ 287։

Տանակրա, զոչաբաղութեան յԱրոպա, կռուա-
սիրութեան'ի Ֆռանսիէս, բռնութեան'ի Ֆռ-
բէ, անյաղ ցանկութեան յԱնթեղոն, կեղծ փու-
թայ'ի Կորնէա, մնասարծութեան'ի Պղատէա,
և ասղութեան յԱղիարտ'։

Մեկնեալ'ի Ֆերայ, անցաք առ եղերք Լճին
մեծի որ անուանեալ կոչի Կղիկա. զեռք որ
շուրջ զքաղաքաւն առոգանեն զերկիրն՝ անդր
յանգին։ Ինտի ուղևորեցաք զՎոտիայիս Լճիս,
զորով չեղև մեզ հարևանցիկ առնել։

Վոտիայիս որպէս զծոց ինն ծովու լայնատարը,
շուրջ պատի'ի լերանց՝ որ բլրաձև բարձամբք
կցորդեալ ընդ միմեանս կազմեն այլ և այլ գօտիս։
Եւ այլ ևս լերինք ընդ միջերկրայս աշխարհին
ձգին. և զեռք որ'ի նոցանէ ինքանեն, զրեթէ առ-
հասարակ ժողովին'ի Կոտիայիս լիճ, որ շրջաբերի
երեքարիւր և ութսուն ասպարէզս [2], և չիք նորա
և չէ իսկ մարթ թէ իցէ ջրադարձ երևելի. և եթէ
ոչ բնութեանն, կամ մանաւանդ Հարտարու-
թեան մարդկանն կազմեալ էրնան գոցուղի ջրանցս՝
ողողանէին ջուրք ընդ հուլ զՎոտիայիս [3]։

Ի կողմն մերձաւորագոյն'ի ծով երբեակ խորշք
են Լճին ընդարձակեալք մինչև'ի ստորոտս Պտո-
վայ լերին, որ'ի միջոցին կայ ընդ ծովն և ընդ
լիճ։ Ի խորս խորշից իւրաքանչիւր են ջրանցք,
որ ընդ բովանդակ լայնութիւն լերինն հատեալ

1 Դիկէարք յոյ. Յունաստ. յաշխարհագր. էջ 18։
2 Սարաք. գիրք Թ. էջ 407։
3 Նոյն անդ, էջ 406։

անցանէն, էն որ երեսուն ասպարէզս, և էն որ առաւել և յոյժ՝ ։ Բռ 'ի պեղել և 'ի մաքրել զայնս էն ուրեք ուրեք 'ի լերինն գուրք, որ անյատակք թուէին մեզ։ Որ 'ի տեղի անդր որ երթայցէ, զարհուրի ընդ դժուարութիւն գործոյն, և ընդ գանձն և ընդ ժամանակն ծախեալ յայն։ Այլ մեծ և զարմանք, զի վաստակքն այնոքիկ՝ անկիշատակք 'ի վերպ և յաւանդութիւնս՝ վարձքնականք յոյժ պարտին զոլ, թէպէտ և 'ի վաղեմի դարսն յայնոսիկ չգոյր 'ի Ասիոտիա պետութիւն՝ բաւական 'ի խորհել և 'ի կատարել զմեծ գործն։

Այլ այս որպէս և է, այլ ջանացքս այսոքիկ կարօտեն մեծի խնամոց, և զարդիս կարի անխնամ լեալ*. բաղմազոյնք 'ի նոցանէ խցեալ էն, և երևի ընդ զերեալ ընդարձակել շուրջանակի զերեսոք դաշտին։ Այլ աներկբայելի իսկ թուի, զի ջրհեղեղն կամ մանաւանդ յորդութիւն ջուրց՝ որ յաւուրս Ավգիգեայ ողողեցին զԱսիոտիա՝ 'ի խցանելոյ ջրանցիցս պատահեալ լիցէ։

Այլ անցեալք ընդ Ասիոտ և ընդ այլ քաղաքս ինչ լոկրեցւոց, հասաք 'ի պահանն Ամերմալիլեայ։ Սարապի զսակերոքս խմով խլրտեալ ընթանայր 'ի մուտս հռչակաւոր կրճին, ուր Յոյնք

1 Սարաբ. գիրք. Թ. էջ 406։ Ուիլբր. օրագր. էջ 466։

* Յաւուրս Աղեքսանդրի այր ոմն քաղկեսացի յանձն էառ մաքրել զայնս։ (Սարաբ. գիրք Թ. էջ 407։ Սանփ. 'ի բառն Ա՛Ղ՚Ղ.)

չորեքհազար զաւուրս բազումս կասեցուցին ըզ-
պարսկախումբ զանթիւ Ճամբարս, ուր և Լեւ-
նիդաս, երեքարիւրովք սպարտացւովք որոց զ-
բաւարէրն, կորեաւ։ Նշանաւոր է կիրճն, աստի
բարձրաբերձ լերամբք պարսպեալ, և անտի ծո-
վով, որպէս զայս 'ի նախաշաւիղ գրոցս նկարա-
գրեալ է *։

Բազում անգամ անցաք մեք ընդ այն, և ընդ
ջերմուկն ևս շրջեցաք՝ յորոց կիրճն այն զա-
նուանն կալաւ Թերմոպիլէ [1]։ Տեսաք մեք զբլրակս,
ուր ընկերքն Լեւոնիդայ ամրացան յետ անկանելոյ
քաջին [2]. և ընդ շաւիղս նոցա ցմիւս ծայր կրճին [3]
հոգաք մինչև 'ի խորանն Քսերքսեայ, ուր խոր-
հէին խողխողել զնա յանողիսան բանակին։

Բազում ինչ իրք անդանօր յուզեալ աղմկէին
զսիրտս մեր. ծոմն երբեմն ներկեալ յարիւն աղ-
գաց, լերինք երկնաբերձք, խոր ամայութիւն
շուրջանակի, յիշատակ բազում այնքան քաջու-
թեանցն՝ զորս տեսիլ վայրացն առաջի առնէր մեզ,
և զորովագին կարեկցութիւն ընդ տառապանս
առաքինութեան։ Այս մինչ դեռ այն ամենայն
'ի զարմացումն կամ 'ի փղձուկ հարկանէր զմեզ,
և ահա գտաք առ շիրիմն՝ զորս Միթիկտիոնաց
ատենին կանգնեալ էր յահա ատացեալս բլրի [4]։

* Յառաջնումս մատենի դրոցս, էջ 219։

[1] Երոդոտ. գիրք Է. գլ. 176։

[2] Նոյն անդ, գլ. 225։

[3] Պլուտ. յդ. էար. Երոդոտ. հտ. 2. էջ 866։

[4] Երոդոտ. անդ գլ. 228։

Որ են մահարձանք փոքրիկք 'ի պատիւ երեքաբիւրոց սպարտացւոցն, և այլ և այլ գնդիցն Յունաց՝ որ անդ եւոուն պատերազմ։ Պատուցեալ ընթերցաք 'ի միումն, որ նախ առ ական դիպաւ, զի էր գրեալ այսպէս. "Ոչ ոստ ընդ երեքարիւր բիւրուն Պարսից չորեքհազար Յոյնք 'ի Պեղոպոնեսոյ մարտեան,,։ Պատեաք և առ միւս մայր, և զՄիմնիդեայ տողն 'ի նմա ընթերցաք. "Օ ընոյց զմինչ տար 'ի Սպարտա, ո՛ հիւր, զի գնիցք ասա հնազանդեալք օրինաց իւրոց սրբոց՝,,։ Բանի ազնուական խորհրդովք, և որպիսի մեծախոհութեամբ զայսոսիկ աւանդեցին արդեաք հաւք որդւոց։ Զիք յիշատակ իսկ Լեւոնիդայ և երեքարիւրոց մարտակցաց նորա յերկրորդումն յայսմիկ արձանագրի. զի և ոչ կասկած ումեք 'ի միտս անկանիցէ, թէ գուցէ անուանք նոցա մոռացեալ ժամանակաւ։ Պատահեցի Յունաց բազմաց, որք զանուանս նոցա 'ի բերանոյ աւանդէին միմեանց[1]։ Ցեսի և միւս եւս արձանագիր 'ի Մեգիստիաս սպարտացի կիւսահմայ, յորում գրեալ էր զնմանէ, թէ կանխագէտ լեալ մեռանելոյ արկածիցն՝ յանձն էառ զմահ քան զդասալիք փախուստ[2]։ Արդ 'ի մահարձանսն է և ասոյեան 'ի Պսերքսեայ կանգնեալ, որ պարտեալոյն առաւելագոյն գործէ փառս քան յաղթողաց։

[1] Երոդոտ. գիրք Է. գլ. 228։ Սպարտ. գիրք Թ. էջ 429։ Պիկեր. տուսկուլ. գիրք Ա. գլ. 42. հտ. 2. էջ 268։

[2] Երոդոտ. անդ. գլ. 224։ [3] Նոյն անդ. գլ. 228։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Ուղղորդել Ազաքարեայ ընդ Թեսաղիա *, և յաղագս Ամֆիկ-տիոնացն և մոգաց. և վասն Աղէքսանդրի արքային Փերե-ացւոց, և տեմենեան հովանին։

Յետ Թերմոպիլէայ կրճին են մուտք 'ի Թես-սաղիա։ Զգաւառս զայս, յորում է Մագնեսիա և այլ ևս գաւառք փոքրիկք՝ այլ ազգ իւրաքան-չիւր անուանակոչեալք, յարևելից սահմանէ ծով, 'ի հիւսիսոյ Դիւցընկէց լեառն, յարևմտից Պինդոս, և 'ի հարաւոյ Լաստս լեառն։ Ի մէջանջ-նաւոր ամբարտակաց աստի մեկնեալ այլ ևս գօ-տիք լերանց և բլրոց, զեռան ընդ միջերկրայս աշխարհին։ Լս ուրեք ուրեք ոլորտացեալ զպար-զաւէտ անդաստանօք, առնեն նոցա ձևովն և շրջապատիւ զընդարձակատարը կրկիսացն շուրջ տեսանելեաց՝ բերել զնմանութիւն։ Շուրջա-նակի զդաշտիւքն 'ի վերայ բարձանց ամբառնան քաղաքք մեծապարթամք. և ոռոգանեն զաշ-խարհն գետք, յորոց բազումք բերանացեալ յան-գին 'ի Պինէոն, որ ընդ հովիտն հոլչակաւոր ան-ցեալ ընդ Ցեմպէ՝ հասէ 'ի ծով։

Ոչ բազում ինչ ասպարիզք հեռի 'ի Թեր-մոպիլէայ՝ հասաք յԱնթեղա աւան փոքրիկ, ա-

* Յամարայնի 357 ամին։ Պլին. գիրք Դ. գլ. 8. Ն. Գ։ Հտ. 1. էջ 199։

նուանի Դաւանութեայ մեհենական, և վասն ամ-
փիկտիոնեան ատենին անդր ամի ամի Ժողովելոյ[1]։
Այնմ մարդասիրութիւն՝ որ սահմանելոյ Ժողո-
վոյս եղև պատճառ՝ ոչ հարկաւորեր տեղի տալ
փառասիրութեան իշխանաց ազգաց, օգտակա-
րագոյն քան զամենայն Ժողովս լիներ ատեանս
այս, նմին իրի և քան զամենայն սահմանադրու-
թիւնս չքնաղ և գեղեցիկ։ Որմանք Ամփիկտիո-
նէ ասեն զայն սահմանեալ, որ շուրջ զվայրաբն
թագաւորեր[2]. իսկ այլք Ամբիսեայ աղբայրն
արդիացւոց[3]։ Այլ այն հաւաստի իսկ է, զի
'ի վաղնջուց Ժամանակաց երկոտասան ազգք բնա-
կեալք 'ի հիւսիսակողմն Յալադայ[4]* դորացիք,
յոնիացիք, փոկիացիք, Թեսաղացիք, այլովքն
հանդերձ, ուստ եղին ընդ միմեանս խոսանել
զաղէտս՝ զոր զՀետիւբ առեալ ձգէ պատերազմ։
Սահմանեցին արձակել ամի ամի հրեշտակս 'ի
Դեղփիս, և զանօրէնութիւնս գործեալս ընդ-
դէմ մեհենին Պղտղոնի որում երդումն, և
զամենայն անիրաւութիւն գործեալ ընդդէմ
իրաւանց ազգաց որոց ինքեանք պաշտպան կային,
ածել յատեան անդր. և զի դարձեալ միում մի-
ում յերկոտասան ազգաց իցեն կրկին քուեայք 'ի

[1] Երոդոտ. գիրք Է. գլ. 200։ Յիշատ. բանատ. կա-
ճառ. հա. 3. էջ 191։

[2] Ոբսոնեան վէմք, դար 5։ Թէոպոմպ. առ. Հարպոկր. 'ի բառն Ամփէտ։ Պաւսան. գիրք ժ. գլ. 8. էջ 815։

[3] Սորաբ. գիրք Թ. գլ. 420։

[4] Եպէին յղ. վրէպ հրեշտ. էջ 413։ Սորաբ. գիրք Թ. էջ 420։ Պաւսան. անդ։

* 'Ի վերջկոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Թ։

ձեռն հրեշտակաց իւրաքանչիւր, և խոստանալ ամենեցուն զկատարումն վճռոց մեծափառ ատենին։

Լ. Հաստատեցին զուխտն երդմամբ, որ յայնմ հետէ նորոգի միշտ. և էր օրինակ երդմանն այս. Լիզնումք մի զոք 'ի քաղաքաց ամիֆիկտիոնականացն կործանել, և մի զաղբիւրս կարևորս պիտոյից նոցա դարձուցանել մի 'ի խաղաղութեան և մի 'ի պատերազմի. և եթէ այլ ոք յազգաց մտաբերեսցէ յայն, խաղալ 'ի վերայ նորա, և աւերել զքաղաքս նորա. և եթէ անպարիշտք բառնայցեն ինչ 'ի նուիրաց մեհենին Պղոզնի, երդնումք՝ ոտիւք և ձեռօք և բանիւ և ամենայն զօրութեամբ խնդրել վրէժս 'ի նոցանէ, և յամենայն գործակցաց անօրէնութեան նոցա '։

Պտեանս յայս կայ մինչև ցայսօր 'ի նոյն օրէնս որպէս և սահմանեցաւն. իշխանութիւն նորա տարածեցաւ ընդ ազգս՝ որ գաղթեալ 'ի հիւսիսայ Լիզադայ, և ոչ յետս կացեալ յամիֆիկտիոնեան դաշնակցութենէն, ածին ընդ իւրեանս 'ի նոր բնակութիւնն զիրաւունս մնանելոյ 'ի ժողովն և տալոյ զվարկ իւրեանց [2]։ Որպիսիք էն սպարտացիք, երբեմն բնակիչք Թեսաղոյ, որոց փոխեալ զբնակութիւն իւրեանց 'ի Պելոպոնես, կալան զիրաւունս միոյ յերկոցունց քուէիցն՝ որ անկ էին համագգեացն իւրեանց դորացոյ։

1 Նոբին. յդ. վրէպ հրեշտ. էջ 413։ 2 Ցիշատ. բանատ. կանոն. հտ. 21։

Այնպէս և քուէայք կրկին՝ որ 'ի սկզբանէ անկ էին յոմիացւոց՝ բաժանեցան ապա յաթենացիս և 'ի գաղթականս նոցա բնակեալս 'ի փոքրն Ասիա։ Բայց թէպէտ և ոչ է մարթ քուէիցն յաշխարհաժողովն անդ առաւելուլ քան զքսանևչորս, այլ թիւ հրեշտակացն ոչ է սահմանեալ. և է երբեմն զի աթենացիք երիս և չորս արձակէին հրեշտակս[2]։

Յողովն ամիկտիոնեան գումարի գարնայնայն 'ի Դեղփիս, և աշնայնայն Անթեղա աւան[3]։ Ընդ խռնի ամբոխ բազում 'ի զնին. և 'ի սկիզբն հանդիսին մատչին զոհք վասն խաղաղութեան և բարեկենդանութեան Աստուծոյ։ Բայց 'ի յանցանաց յիշատակելոց յերդմանն՝ զոր 'ի նեբքս ածի, յատենի անդ դատին և վէճք ազգաց ընդ ազգս զգահերիցութենէ յաշխարհախօսաց հանդէս զոհից, և կամ յետ յաղթութեան՝ զփառս հաստատակաց կամելով միոյ ուրուք յազգաց իւր սեփականել[4]։ Եւ այլ ևս դատք ածին անդրբաղաքականք և եղեռնականք[5], այլ մնանանդ բռնութիւնք զործեալք ընդդէմ իրաւանց ազգաց[6]։ Հրեշտակք ազգաց քննեն զդատաստանն, և ատեանն տայ զվճիռն ըստ բազմութեան թուոցն

1 Եպիֆանէս. յԼ. վրէպ հրեշտ. էջ 413։
2 Եպիֆ. 'ի Կոռնիթ. էջ 446։
3 Սորաբ. գիրք Թ. էջ 420։ Եպիֆ. անդ.։
4 Դեմոսթ. 'ի Նեար. էջ 877։ Պիկեր. յԼ. գիւտից, գիրք Բ. հտ. 1. գլ. 23. էջ 96։
5 Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 5. էջ 405։
6 Պլուտ. 'ի Պիմ. հտ. 1. էջ 483։

արկելոց, և տուգանս արկանէ ազգացն յանցուցելոց։ Այս ժամանակ 'ի վերայ եղեալ, միւսանգամ ժողովի ատեան, և կրկնապատկին տուգանքն[1]։ Այս եթէ հետտ ոք, օրէն է ատենին կոչել յօգնութիւն վՀոյոյ և զինուորել ընդդէմ հետտելոյն զամենայն ամիրիսխանեան նիզակակցութիւնն, որ մնան մի մեծ է Յունաստանի։ Օրէն իսկ է նման մերժել զՀետտեալն յուխտէ նիզակակցութեանն, կամ 'ի հաղորդութենէ միաբանութեան մեՀենին[2]։

Ամէն ազգք Հզօրք ոչ միտ Հնազանդին վըՀՀոյոյ նորա, որպէս 'ի սպարտացւոյն իսկ արդի անՀնազանդութենէն յայտ է։ Օր 'ի խոր խաղաղութեան բռնակալեալ նոցա զմիջնաբերդ քաղաքին Թեբացւոց, 'ի բողքել աւագանւոյ քաղաքին յաշխարՀաժողովն, դատապարտեցան նոքա 'ի տուգանս ՀինգՀարիւրոց քանքարաց, և ապա Հաղարաց։ Ամէն նոքա ստուգանեցին վՀոյոյ, անիրաւ Համարեալ զայն[3]։

ԱմՀաղինք և են դատակնիքք տուեալք 'ի նմանէ ընդդէմ ազգաց անիրաւելոց մեՀենին Պելոպոնեայ. և զբռնականոնցա գԺՀամանակութեամբ բռնի մղի 'ի պատերազմ, զի մանՀու պատուՀասեալ զրկի 'ի թաղմանէ, եթէ զէն 'ի ձեռին զերեսցի 'ի թՀնամեաց[1]։ Ամ հրաւէր աշխարՀա-

1 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 430։
2 Պլուտ. 'ի Թեմիստ. հատ. 1. էջ 122։ Պաւսան. գիրք Ժ. գլ. 8. էջ 816։
3 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 430։
Հնոյն անդ, էջ 417 և 431։

ժողովցն 'ի վրէժխնդրութիւն բարկնաց՝ մոա-
դիւրազոյնս դիմեն ամենեքին, զի հանարին հա-
զորդք ամնարաշտութեան, նպաստամատոյցք և
նեղողք նոցին։ Եւ 'ի դէպսն յայնոսիկ երկիւղ է
ազգաց յանցուցելոց, զի ընդ անէծն ընդ որովք
փակէին՝ խառնեսցին և հնասք քաղաքավարու-
թեան իշխանաց, որք զշահ օգտի իւրեանց ընդ
կրօնսիցն կցորդէն 'ի սպասաւորութիւն փառա-
սիրութեան իւրեանց։

Եւ մեկնեալք Յունեղէց՝ մնաք յաշխարհն
տրաքինացուց. և տեսաք շուրջանակի զբազմու-
թիւն երկրագործաց պատաղեալ 'ի ժողովել
զեղջորտն ազնիւ, որ անէծ 'ի լերինն Նոյա[1]։
Լողնք տեսանելոց զՀիւպատ քաղաք՝ ձգեցին զմեզ
ընդ Ճանապարհ որ երթայր անդր. զի ասէին
վհուկս բազումս լինել 'ի Թէսաղիա, և մնա-
ւանդ 'ի քաղաքի անդ[2]։ Եւ տեսաք իսկ անդ զբա-
զումն 'ի կանանց ժողովրդեան, որոց կարծէին
ունել զօրութիւն նահանջելոց զարեգակն, և
զլուսին յերկիր իջուցանելոց, յարուցանելոց և
ցածուցանելոց զլերինս, դարձուցանելոց զմե-
ռեալս 'ի կեանս, և զկենդանիս յուղարկելոց 'ի
գերեզման[3]։

Եւ ուստի արդեօք կարծիք այսպիսիք։ Այլ
'ի նոր ինչ իրաց կարծէն այսոցիկ առեալ պատ-

[1] Թէոփր. բուսարան. հտ. 2. էջ 523։ գիրք Թ. գլ. 11. էջ 1063։
[2] Արիստոտ. Այնման, տող 747։ Պլին. գիրք Լ. գլ. 1.
[3] Եմպեդ. առ Դիոգ. լայերտ. գիրք Ը. յօդ. 59։ Վիրգիլ. մէկ. 8. տող 69։

Հառս, զԱ՛զդայնմիկ ոմն կին Թէսաղացի ասէն կացեալ 'ի յետին դարս, որոյ ուսեալ զժամանակ խստարմանց լուանի՝ դիւթական զօրութեան ընծայէր զարփային երևոյթն. և անտի կարծեցաւ կախարդանաց իշխել 'ի վերայ օրինաց բնութեան։ Բայց զայլմէ ևս ուսումնէ հնոցէ թեսաղացւոյ աւանդէն կացեալ 'ի դարս դիւցազանց, և իշխեալ լուանի՝. և բազում իսկ ցոյցք էն 'ի վաղնջուց ժամանակաց մուծանելոց վհկութեան յԱյլազգս։

Բայց մեզ ոչ ինչ փոյթ լեալ հետազօտելոյ զսկիզբն արուեստին, խնդրելաւք գիտել զարգասիսն՝ որչափ ժամանակս եղեալ 'ի Հիւսպատ։ Այլ զմեզ առ պատուունս ոմանս տխմարս և վատշուէրս, որք բժժանս կախարդանաց խոստանային առնել ընդդէմ խածուածոց կարձաց և իժից[1], և շինուցանելոց և անպտղութ առնելոց զբոց ցանկութեան նորատէր ամուսնաց, և խաշնամահ արկանելոց և կոտորած 'ի սպառս մեղուաց[2]։ Ցեսաք զոմանս 'ի նոցանէ, որոց պատկերս մոմեղէնս գործեալ՝ անիծակուրս գնոսա առնէին, և առամբք զսիրտս նոցա ծակոտէին, և գնէին գնոսա 'ի տեսիլ այլ և այլ ուրեք ընդ քաղաքն[3]։ Եւ որք միանգամ զկերպարանս իւրեանց 'ի ձևան յայնոսիկ նկատէին, զարհուրեալք՝ իբր թէ հարկ

1 Սենեկա 'ի Հերկուլ. Եւ տէր, տող 525։
2 Պլատ. յԵւթիգեմ. հատ. 1. էջ 290։
3 Երոդոտ. գիրք Բ. գլ. 181։ Պլատ. յդ. օր. գիրք ԺԱ. հատ. 2. էջ 933։
4 Պլատ. անդ։

էր նոցա մեռանել, էր երբէք զի երկիւղէն այնուիկ կարձէին 'ի կենաց։

Յանկարծակի 'ի վերայ հասաք միոյ 'ի կանանց անտի, մինչ արագ արագ հոլովէին զաղօրեակ[1], և զանիմանալս բարբառէր։ Զանազի կամէր[2] դարձուցանել զմնանուն Պողկիլետ, որ 'ի բաց արձակեալ էր զՍաղամիս զմի 'ի կանանց հռչակաւորաց 'ի քաղաքին։ Նա 'ի քաջահմուտ լինել իրացն կարգաւ, պարգևս ինչ տուաք Միկաղեայ, զի այս անուն էր վէճին, և յետ աւուրց ինչ ասէ ցմեզ. Սաղամիս զքեզ առաջնոց հմայիցն խնոց, յաւելից նման այլ յերեկոյիս. և դուք կացեալ 'ի Թագատի, տեսջիք և լուիջիք զամենայն։ Նա ըստ ժամադրութեանն հասաք անդէն, մինչ Միկաղէ զհանդերձանս խորհրդոցն պատրաստէր։ Նա էին շուրջ զնովաւ[3] ոստք սարդենեաց, և տունկք խնկահոտք, և 'ի տախտակս զգնձիս զրոշմեալ տառք անծանօթք, և գեղին խաչին ծիրանանկերկ, բևեռք կորզեալք 'ի կսկաղանէ դեռ ևս արիւնաշաղախք, գլուխք մարդկան կիսակերք 'ի գազանաց վայրենեաց, և կոտորակք մնատանց և ընչաց և ականջաց ծայրատեալք 'ի գիականց, ընդերքք զոհից, և շիշ լի արեամբ բրնտանհիկ մեռելոյ, և պատկեր Նկատեայ մամզէն սպիտակ և սեաւ և բոստոպային՝ խարազան 'ի

1 Պինդ. պլեթ. 4. տող. 330։ Պարապ. անդ։ Ասպղ։ Արդն. գիրք Ա. տող 1139։

2 Ղուկան. 'ի պոռնկ. հտ. 3. էջ 288։

3 Թէոդրիտ. գեղն 2։ Ասպուշ. սպանկերպ. գիրք Գ. էջ 54։

ձեռին և զամբար և տուսեր օձապատ՝. դարձեալ և անօթք լցեալք աղբերական ջրով և կաթամբ արջառոյ և լեռնային մեղու, աղօրեակ դիւթական, գործիք պղնձիք, հերք՝ի վարսից Պողիկրատայ, և՝ի քղանցից հանդերձի նորա կոտորակ[1], և բազումս՝ այլ ինչ սպասք։ Յորս մինչ դեռ սրուցեալ կայաք, և ահա ազդ եղև շշունջ հասանելոյ Սաղամեայ։

Խոյս տուաք՝ի սենեակ մի մերձակայ. և մնեալ թեսաղուհին գեղանի լի մելեղնութեամբ և տոփանօք, բոլոր սրտառուչ կալաւ զտարփածուին և զմիկին, և ասպա արարողութեանցն սկիզբն եղև։ Պարտ է նոցա հանեմնտ առաջարկութեանն դոլ, զի աղջողագոյնք իցեն։

Մ՝իկաղէ եհեղ բազումանգամ՝ի վերայ ընդերաց զոհիցն ջուր քաւութեան խառն ընդ կաթին և ընդ մեղու. և ապա առեալ զհերս Պողիկրատայ՝ հիւսեայ, և հանդոյցս բազմադիմիս գործեայ՝ի նոսա. և խառնեալ զնոսա ընդ խոտս ինչ, ընկէց՝ի կրակարան բորբոքեալ[2]։ Պարտ էր Պողիկրատայ անդէն՝ի նմին վայրկենի երևել՝ի միջի անդ առ ոտս սիրուհւոյն, ձգեալ յանբնդդիմակայ զօրութենէ։

Սաղամիս՝ի ժամանակայ ինչ հետէ ընծայեալ էր՝ի խորհուրդս արուեստին. և իբրև շատ

1 Եւսեբ. պատրաստս. աւետ. գիրք. Ե. գլ. 14. էջ 202։

2 Թեոկրիտ. գեղն. 2։

3 Ապուլէյ Ալլակերոյ. գիրք Գ. էջ 55։

ակն կալեալ՝ եղ՝ի դերև. ասէ. Զքդ ինձէն իսկ դիւթեցիս. օգնեա՛ ինձ, Միկաղէ, ՝ի կիրս իմ՝ առ ինձ այսր զանօթդ քաւութեան, խիս զգա բրգուղդ [1]։ Լուսատուդ գիշերոյ, ծագեա՛ ՝ի մեզ լոյս բարերար. և դու շահապետդ գժոխոց, որ շուրջ գաս զշիրմաքս և՝ի վայրս ոտգեալս յարեանէ մահկանացուաց, ահաւորդ Լկատէ, երևեա՛ց, և հմայքս լեցին զօրաւորքս որպէս զՄեղեայն և զՎիրկեայ։ Միկաղէ, ցանեա զաղդ՝ ՝ի հուր [2], և ասա. Յանեա՛ ցին ոսկերքս Պողիկրատայ, և սիրտ դրուժ անին ըմբնեսցի՝ ՝ի տարփանս, որպէս սարդ դենիս այս սպառեալ՝ ՝ի բոցոյ, և որպէս մոմն այս հալեալ՝ ՝ի հրոյ [3]։ Շուրջ գայցէ զմնակութեամբս իմով որպէս զանիւս զայս շրջեալ զառանցիւքն։ Զ՛ոկ բռնալիր՝ ՝ի հուրդ զթեփ, հմր զանօթդ պղնձիս։ Զհա լսեմ զկաղկանձել շանց. յերբ ուղղդ հասեալ կայ Լկատէ. քեզ ասեմ, հմր, և գիտասցէ նա՝ ՝ի շահինդն հարուածոյդ՝ զի զօրութիւն երեսացնորա ազգի՝ ՝ի մեզ։ Զհա հողքն ոչ ևս հնչեն, ՝ի բազում խաղաղութեան են տիրեալքք, և սիրտ իմ միայն՝ ՝ի յոյզս, եղա՛ւկ ինձ [4]։ Զստուածուհիդ ահաւոր Լկատէ, ՝ի փառս քո խառնեմ զխառնելիս՝ հեղեալ երեքկին, անիծեալ լեցին անէծս երրեակ Պողիկրատայ օտարասէր տարփանքն. լքցէ՝ ՝ի բաց զնա-

[1] Թէոկրիտ. դեղն. 2։
[2] Հմմտ. ՝ի Թէոկրիտ. դեղն. 2. տող 18։
[3] Թէոկրիտ. անդ. տող 28։ Վիրգիլ. մշակ. 8. տող. 80։
[4] Թէոկրիտ. անդ։

խանձորդն իմ, որպէս Թէոսէոս զԹշուառն Աբրա-
դնէ։ Օ Հզօրագոյնն 'ի դիւթական դեղոցս փոր-
ձեսցուք. լեսեալ զմողէսդ յանկանի, և շաղեալ
ընդ ալեր, խառնել Պողնկլեւտայ ընկերի։ Եւ
դու Միկաղէ, առ զՀոյզ բանՁարոցդ, և երթ ընդ
այր ցողել զայդ զսեմՁք նորա։ Եւ եթէ ամե-
նայն զօրութեանցս այսոցիկ ջատցէ տեղի,
զդժնդակագոյնն ևս 'ի գործ արկիցս, և մա-
հուամբ նորա զիջցի վրէժխնդրութիւն իմ՝։
Եւ զայս ասացեալ, խոյս ետ Սաղամիս։

Այս ամենայն արարողութեանց, զորս նկա-
րագրեցի, կցորդէր Միկաղէ երբէք երբէք ձեւ
խորհրդական բանից[2], զորս ոչ արժան համարիմ
ածել այսր. զի 'ի խաղտալուր և 'ի խանգար բա-
ռից շարադրեալ, ոչ բերեն խնդստս։

Մնայր մեզ տեսանել զՀանդէս մեռելակոչու-
թեան։ Պատուիրեաց մեզ Միկաղէ գնալ գի-
շերայն 'ի բացեայ 'ի քաղաքէն յամայի ուրեք 'ի
գերեզմանս։ Եւ զտաք գնա անդ պատաղեալ 'ի
պատրաստութիւն. քանզի փոս հատեալ[3], կու-
տէր շուրջանակի բանՁարս և ոսկերոտի և նշխարս
մարդկեղէն մարմնոց, պաՁուՁնապատանս ատուիս
և մոմեղէնս և յայլերէ զանգեալ, հերս զԹեսա-
զացւոյ ուրումն մեզ ծանօթի՝ զոր կամէին երևե-
ցուցանել մեզ։ Եւ լուցեալ կրակ, և հոսեցու-

1 Թէոկրիտ. գէզն. 2. տող 18։
2 Եղիոգ. Եղիոտ. գիրք Ա. երգիծ. 8. տող 22։
3 Հոմեր. Ոդիս. գիրք ԺԱ. տող 36։ Ովիտ. գիրք Ջ. էջ 293։

ցեալ 'ի փոս անդր զարիւն սեւակիսն ոչխարի զոր ընդ իւր ածեալ էր, կրկնէր և երեքկներ հեղուլ քառութիւնս, կարդայր առ դիս, և ձեւս ինչ բանից դաշն ձայնիւ յեղյեղէր։ Այրբէք երբէք երթեւեկէր Ղեպրնթաց բոկ և հերարձակ, անկծս ահագինս կարգալով, և բարձրաձիչ կանչիւք՝ որ մնան եղեն նմա։ Վանդի հասին 'ի վերայ նորա խնդրակք արձակեալք յաւազանոյն, որք 'ի բազմաց հետէ հետազօտէին զնա. և կալեալ ածին զնա 'ի բանտ։ Ի վաղիւ անդր հնարէաք զերծուցանել զնա, այլ խրատ ետուն մեզ թողուլ զնա յարժանահաս պատիժս պատուհասիցն', և խոյս տալ 'ի քաղաքէն։

'Ի սխատելի է առ Յոյնս արուեստն որով վարէրն, և ժողովուրդն զարշի 'ի վհկաց՝ պատճառս ամենայն թշուառութեանցն զնոսա վարկուցեալ։ Համարի կրկտել նոցա զգերեզմանս, առ 'ի ծայրատել զդիակունս՝. և յիրաւի իսկ բազմազոյնք 'ի կանանց անտի դժնդակագոյն անօրէնութեանց են գործօնեայք, և մահացու դեղով քան թէ դիւթութեամբ սպասաւորին։ Այմն իրի զրեթէ ամենայն ուրեք խստանան 'ի վերայ նոցա դատաւորք։ Մինչ դեռ Մթէնս էի՝ տեսի զմի 'ի նոցանէ դատապարտեալ 'ի մահ. և աղգականքն նորա զործակիցք եղեալ նմին, զնայն կրեցին պա-

1 Ղուկան. յԻշն, հա. 2. էջ 622։
2 Ղուկան. փարսաղ. գիրք Զ. տող 538։ Ալուել. Ալլակերպ. գիրք Բ. էջ 33 և 35։

տաւհաս՝։ Բայց օրէնքը արգելուն չգեղծանել և եթ մեռոյ արուեստին, նեբելով զգիւթութիւնս առանց գեղատուութեան, և որք յօգուտ մարդկան գործիցին։ Օ՛ի յանձնէ ևս վարին սոքօք՝ ի բժշկել զլուսնոտս[2] և զգլխացաւս[3], և զաղգի ազգի ախտս հիւանդութեանց[4]։ Պարձեալ և իղձք հրամանաւ աւագանւոյն կոչեն զոգիս մեռելոց և հաշտ առնեն զնոսա[5]։ Բ՛յլ ամենալաց կոչութենէ երկարաբարբառում արարից՝ ի Ճնոս ուղղութեան իմոյ՝ ի Լ ակոնիա։

Ի Հիւսպատեայ յոգաք՝ ի Լ ատիա, և յառաջ անց ցեալ ընդ արխարէն վայրէնի ընդ առապարս և ընդ խորտաբորտս՝ հասաք՝ ի Թաւմանկիա, ուր յանդիման եղև մեզ մի՝ ի չքնաղագոյն տեսարանս Նաց Լչլադայ[6]։ Բ՛անցի քաղաքս այս կայ՝ ի վերայ ընդարձակատարդ տարտաձև հովտի, որոյ տեսիլ անաւրինակալ հիացուցանէ զտեսօղս։ Բ՛նդ՝ ի Ճոխ և՝ ի գեղապանծ դաշտին են քաղաքք բազմաբ, անդ է և Փարսաղս՝ մի՝ ի մեծամեծ և՝ ի փարթամ քաղաքաց Թաւսաղեոյ։ Շ ըջեցաք մեք ընդ նոսա, տեղեկացեալք ըստ կարի առանցդութեանց նոցա և կարգաց տեսչութեան, և բազմաց և սովորութեանց բնակչացն։

1 Դեմոսթ. յԱրիստոգ. էջ 840։ Փիլոքոր. առ. Հարպոկրատեայ՝ ի բառն Θεωρ.

2 Դեմոսթ. անդ։

3 Պղատ. ՝ի Քարմ. հտ. 2. էջ 155։ Նոյն՝ ի Խրախճ. հտ. 3. էջ 202։

4 Պլինդ. պլեթ. 3. տող էջ 91։ Պլին. գիրք ԻԸ. գլ. 2. հտ. 2. էջ 444։

5 Պլուտ. յդ. մեթթ. հտ. 2. էջ 109։

6 Լիւ. գիրք ԼԲ. գլ. 4։

Օ՜աչս ուրուք շուրջանակի զվայրոքն ածեալ խելամուտ լինի անդէն, զի էին երբեմն բնակեալ անդ զրեթէ ըստ թուոյ լերանցն և հովտաց ազգք կամ՝ ցեղք։ Ոչոց պատսպարեալ ամուր պատնիշօք, հանապազօր 'ի վերայ նոցին յարձակմամբ կամ՝ մարտնչելով 'ի պահ, եղեն արիք և յանդգնութիւն. և 'ի զգօնանալ բարուցնոցա, Թէսաղիա օթևան եղև դիւցազանց, և Թատր քաջայաղթ արութեանց։ Անդ Կենտաւրոսքն և Լապիթայք 'ի վեր երևեցան, անտի արդիական նաւաստիքն պարզեցին զառագաստս, անդ Հերակղէս մեռաւ և ծնաւ Աքիլլէս, անդ եկեաց Պիրիթոյս, և անդր 'ի տար աշխարհաց դիմէին արք պատերազմողք հանդիսանալ 'ի մարտի։

Աքայեցիք, Եւոլացիք, դորացիք՝ յորոց սերեցան սպարտացիք, և այլ ևս ազգք հզօրք Յունաց 'ի Թէսաղիա առին սկիզբն։ Ազգք 'ի նմա արդ երևելիք են բնիկ Թեսաղացիքն, Եռացիք, փթիոտացիք, մանիացիք, մանտնեսացիք, պեռեբացիք, այլովքն հանդերձ։ Յառաջ ժամանակաւ ընդ Թազաւորօք կային, այլ ապա կրեցին և նոքա զյեղափոխութիւնս մեծացաղր և սակաւաւոր պետութեանց. և այժմ բաղմազոյնք 'ի նոցանէ ընդ նուազ իշխանօք կան՝։

Ի դեպս ուրեք քաղաքք դաւառաց իւրաքանչիւր կամ ազգաց արձակեն հրեշտակս 'ի ժողով, խորհուրդ 'ի մէջ առնուլ զկրաց աշխար-

[1] Թուկիդ. գիրք Դ. գլ. 78։

հին՝. այլ վճիռք ժողովոցս այսոցիկ նոցա և եթ հրամայեն, որոց ստորագրեալն ի նոսին վճռոցն։ Ա-բով ոչ միայն զաւառք իւրաքանչիւր ինքնիշխանք են, այլ և քաղաքք իւրաքանչիւր զաւառաց։ Օ որ օրինակ ետացուցն զաւառ՝ի ջրեքտասան վիճակս բաժանեալ[2], բնակիչք միոյ՝ի վիճակացն ազատք են չերթալ ընդ այլս՝ի պատերազմ[3]։ Ի. յս առաւելագոյն ազատութիւն տկարացուցանէ զզաւառս իւրաքանչիւր՝ խափան լեալ հանախմբութեան զօրութեանց նոցա. և այնչափ յամենցուցանէ զհաստատութիւն հասարակաց խորհրդոց, մինչև դադարել նոցա յաձախ՝ի գումարելոյ ժողովս[4]։

Ակզակցութիւն բնիկ թեսաղացւոցն հզօրագոյն է քան զամենեցուն, բազմութեամբ քաղաքացն որ են ընդ նոսաւ, և միաբանութեամբ մանեսացւոցն և պեռեբացւոց՝ որք զրեթէ՝ի սպառ նուաձեալ կան ընդ նոսաւ[5]։

Այն և այլ ևս քաղաքք ազատք, որ ոչ պատկանին և ոչ միում ումեք յազգաց. և առ յոյժ տկարութեանն ոչ զօրելով անմնաւելի ունել զիշխանութիւն իւրեանց, միաբանեալ կան ընդ այլ երկուս կամ՝ երիս քաղաքս մերձաւորս՝ հանդոյն իւրեանց մենաւորս և տկարս[6]։

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 78։ Լիւ. գիրք Լ.Ե. գլ. 31. գիրք Լ.Զ. գլ. 8։

2 Սարաք. գիրք Թ. էջ 434։

3 Դիոդ. գիրք ԺԸ. էջ 595։

4 Լիւ. գիրք Լ.Դ. գլ. 51։

5 Թէոփ. առ Ալթենէսի. գիրք Զ. էջ 265։

6 Սարաք. գիրք Թ. էջ 437։ Լիւ. գիրք ԽԲ. գլ. 53։

Բ. Ձեռն պատրաստ կայ Թեսաղացւոց կաղմել վեցհազար հեծեալս, և բիւր մի հետեւակաց[1]. Թող զաղեղնաւորս նոցա քաջաձիգս, զորս մարթէ նոցա յաձախել ըստ կամի. զի 'ի մանկութենէ սովորի ազգն յաղեղնաւորութիւն[2]։ Զիք ինչ հուչակաւոր քան զհեծելազն Թեսաղացի[3], ոչ համբաւոմն և էթ ահարկու, այլ զի և ամենեցուն իսկ վկայեալ անհնարին ինն է զդէմ ունել զօրութեան նորա։

Բ. Ամենեն՝ նոցա նախ Հնիեալ 'ի դանդանաւանդս զկզակ երիսարի, և մղեալ գնա 'ի պատերազմ. և անտի ասեն լեալ կարծիք՝ ձիախառն մարդկան զոլոյ երբեմն 'ի Լեսաղիա, որ Կենտաւրոսքն կոչէին կամ Ձիացուք[4]։ Բ. Ասասպէլքս այս յայտ առնեն, եթէ ոչ աւելի ինչ՝ զէթ զի 'ի վաղնջուց ժամանակաց զոյր հեծելութիւն առ Թեսաղացիս. և ախորժակք նոցա 'ի հրահանգս ձիավարութեան սրբազանեալ ինն են արարողութեամբն որ 'ի հարսանիս նոցա կատարի։ Օր յետ զոհիցն և այլոց օրինաւոր արարողութեանց, ընծայէ փեսային հարսին իւրում երիսարի մի 'ի զէն և 'ի զարդ պատերազմի կազմեալ[5]։

Լեսաղիա բերէ զինի և ձէթ և միրգս ազգի

1 Քսեն. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 581։ Խսկր. յղ. խաղաղ. հտ. 1. էջ 420։

2 Քսեն. անդ։ Սոզին. գլ. 8։

3 Պաւսան. գիրք ժ. գլ. 1. էջ 799։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ. 435։ Լիւ. գիրք Թ. գլ. 19։

4 Պլին. գիրք Է. գլ. 56. հտ. 1. էջ 416։

5 Եղիան. յղ. հոգւոյ, գիրք ԺԱ. գլ. 34։

ազգի. արգաւանդաւոր է յոյժ երկիրն, որպէս զի հնձել երկրագործին զգալարի ցորենոյ կամարաձել 'ի նմա խաշենս՝ զի մի կամուս քան զժամանակն յոմ կացցէ։ Հունձք անդ զրեթէ միշտ առատք են, այլ բազումայն է զի որդունք 'ի նոսա ձարակին՝։ Յայլ և այլ նուաճանգիստս, և մանաւանդ 'ի Ամեբայն և 'ի Փթիսվտիայն, բարձեալ տանին սայլիւք ցորեան բազում յոյժ, ուստի 'ի տար աշխարհս ածեն՝։ Լա վաճառականուն այս, որ բերէ գանձս յոլովս, շահաւետագոյն ևս այնու է աշխարհին՝ զի դիւրին է նմա առնել զայն և յամախսել և ևս բազմութիւն ստրկայն իւրոց, որ կոչին Պենեստք։ Բազմագոյնք 'ի նոցանէ սերեալ ինքանեն 'ի պեռեբացւոց անտի և 'ի մանկեսացւոց, զորս Թեսաղացիք նուաճեալ՝ արկին 'ի կապանս, զներհակախոհութիւն մարդկեղէն մնաց բացայայտակի յանձինս բերեալ զտարացոյց։ Բանզի Թեսաղացիք առաւելագոյն արդեօք քան զամենայն ազգս Յունաց պնծան յաղտութիւն[3], և նոքա նախ ածին զՅոյնս 'ի գերութիւն. հանգոյն նոցին և սպարտացիք վրէժխնդիրք ազատութեան, զնոյն ետուն օրինակ Լակեդայ[4]։

Պենեստք բազում անգամ ապստամբեցին[5].

1 Թէոփր. բուսաբան. գիրք Ը. գլ. 10։

2 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 581։ Լիս. գիրք ԼԹ. գլ. 25։

3 Ե. Բիւրեղ. յԱղիկսս. տող. 677։

4 Թէոփ. առ Ամենէոսի, գիրք Զ. գլ. 18. էջ 265։

5 Արիստոտ. յոլ. հատ. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 328։

և յոգնախստուն բազմութիւն նոցա յաւելու միշտ կասկածանս, և օրէն է տեսոց նոցա շահել նոքօք՝ վաճառելով զնոսա այլոց ազգաց Հելլադայ։ Բ. Յլ այն մեծ ևս ամենեցուն իրք են՝ տեսանել զարս զօշաքաղս, զի զատրուկս այլոց գողացեալ, և գքաղաքացիս իսկ ազատս յափշտակեալ, շղթայակապս ածեն բարձեալ 'ի նաւս՝ զոգս ցանկութիւն շահու ձգէ 'ի Թեսաղիա։

Տեսի և Յ. ընդ քաղաք ստրուկս, որոց գիւրագոյն են կեանք. և սերին նոքա 'ի բիոմատացւոց անտի, որք եկին բնակել յաշխարհի անդ. և ապա 'ի Թեսաղացւոց 'ի բաց հալածեալ, բազմագոյնք 'ի նոցանէ դարձան 'ի բնիկ աշխարհն իւրեանց. իսկ այլոց ոչ կարացեալ Թողուլ զընակութիւն իւրեանց, դաշն եդին ընդ յաղթողս իւրեանց՝ լինել նոցա 'ի ծառայս, բայց միայն զի մի մեղուցեն կենաց իւրեանց, և մի 'ի տար աշխարհ փոխեսցին։ Եւ յանձն առին զոյժել զերկիր, հատուցանելով ամի ամի զհաս կալուածոյն. և բազումք 'ի նոցանէ փարթամագոյնք են արդ քան զտէրս իւրեանց[2]։

Թեսաղացիք ասպնջականեն զոտարս բազում հոգաբարձութեամբ, և մեծարեն զնոսա առատութեամբ[3]։ Օ. Եղկութիւն ակնարկ 'ի զգեստս

[1] Արիստոտ. 'ի Պլուտ. տող 520։ Պարապ. անդ։

[2] Աբեմ. առ. Ամենէոսի, գիրք Զ. էջ 264։ Թուկիդ. գիրք Գ.։

[3] Գեանոտ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 579։ Ամեն. գիրք Գ. գլ. 5. էջ 624։

նոցա և 'ի բնակարանս տեսանի [1], զնանաւոր պեր-
ճանաց և զխրախճանաց զՀետ զակատեալ էն. սեղանք նոցա չքնաղ և ցանկալի իրօք և շռայլութեամբ պատրաստին, և վարձակք յաձախեալք 'ի խնջոյս չէն ինչ նոցա հաձոյ՝ եթէ ոչ զրեթէ 'ի սպառ զքօղ պատկառանաց մերկանայցեն [2]։

Խռունք էն և անհանգիստք [3], և գժուարին է յոյժ հնազանդել զնոսա, որպէս զի զբազումս 'ի քաղաքաց նոցա տեսի պառակտեալս յիւրեանս [4]։ Գրժողք ամբաստանին գոլ բանիցն իւրեանց որպէս զամենայն բարգաւաձեալ աղէնս, և դիւրապատրաստք 'ի բքանել զնիզակակիցս [5]։ Խանգի դատարակութեան նոցա յաւելլով 'ի բարս նոցին մնահաձութիւնս և խաբէութիւնս մնաց, վաղվաղէ զնոցա զեղծումն. և օրինակք արագ 'ի վերայ հասեալ՝ զիւրեն զոՀիլս, և ազատութիւն 'ի պատուհասէ զառաձանէ զնոսա 'ի ստահակութիւն [6]։

Ի վաղնջուց ժամանակաց հետէ պարարեցին նոքա 'ի քերթութիւն, և հայրենակիցս իւրեանց պանծացեալ կոչէն զԱմարիս և զԱրիստոս և զԼինս, և զայլս բազումս ոչք 'ի դարս դիւցազանց փառակիցք նոցա կացին. այլ յետ այնր ժա-

1 Պղատ. 'ի Կրիտ. հա. 1. էջ 53։ Ամեն. գիրք. ԺԳ. գլ. 23։
2 Ամեն. գիրք ԺԳ. գլ. 9. էջ 607։
3 Լիւ. գիրք ԼԴ. գլ. 51։
4 Խոսք. Թզթ. 2. առ Փիլ. հա. 1. էջ 451։
5 Դեմոսթ. ողնեթ. 1. էջ
4։ Նոյն յԱրիստոտել. էջ 743։
6 Պղատ. 'ի Կրիտ. անդ։

մանակի ոչ մատենագիր ոք և ոչ ձեռագէտ ա-
նուանի եկաց 'ի նոսա։ Յառաջ քան զամն իբր
հարիւր և յիսուն Ամենիդէս եգիտ զնոսա ան-
զգայս զեղջ տաղիցն իւրոց՝ · այլ'ի յետին ժա-
մանակս հլու և զտան վարժից Պորգիայ հռե-
տորի։ Բայց տակաւին նախամեծար առնեն զՀո-
ռոմ Ճարտարիսօսութիւն, յորում Պորգիաս ա-
նուանի եկաց, և որ ոչն կարաց ուղղել զմոլորու-
թիւնս մնաց նոցա զօրինաց արդարութեան և
առաքինութեան [2]։

Յոյժ ախորժելի էն առ նոսա և արդոյ հրա-
հանգք կաքաւուց, մինչև զկարի աղնուական պաշ-
տամունս կաքաւս յորջորջել, և ուրեք ուրեք զօրա-
վարքս և դատաւորքս կոչին կաքաւապետք կամ պա-
ռագլուխք [3]։ Լրաժշտութիւն նոցա միջակ է դո-
բացւոյն և յոնիականին, և ըստ բարուց և ըստ
բնաւորութեան ազգին Ճահաւորի՝ մերթ զվ ըս-
տահութիւն յանձնապաստանութեան 'ի ներքս
ածեալ և մերթ զմեղկութիւն հեշտութեան [4]։

Ոչ է օրէն հաւրտաց ըմբռնել զարագիլ · և
սնմարթ էր ինձ գիտել զնրս զայս, եթէ ոչ 'ի
վերայ սպանողաց նորա նոյն պատուհասք կային՝
որ ինչ մարդասպանից [5]։ Լոյդ նորանշան օրէնսն

1 Պլուտ · յղ · ունկնդր · քերթ · հտ · 2 · էջ 15։

2 Պլատ · 'ի Կրիտ · հտ · Ն. Ոյն 'ի Մենն · հտ · 2 · էջ 70։

3 Ղուկիան · յղ · պարուց։

* Ղուկիանոս ածէ արձանագիր զթեսաղացւոյ ումեմնէ արարեալ զայս ձև օրինակի · ԱԻԼ · տաբանի, որ բարբարն կաքաւեաց 'ի մարտի, ժողովուրդն կանգնէ պատկեր »։

4 Աթեն · գիրք ԺԴ · էջ 624։

5 Պլին · գիրք Ի · գլ · 23։ Սոլին · գլ · 46։ Պլուտ · յԽոխ և յՊոմպիս, հտ · 2 · էջ 380։

զարմացեալ՝ հարցաք զվանն էին. և տուաւ մեզ պատասխանի, զի արագաւոր սրբեալ էր զԱմենա-զնա յահագին օձիցն որ հարկանէին զընակիչս. և եթէ չէին օրէնքս այս, հարկ էր բնակչացն մեկնել զնալ յաշխարհէն՝, որպէս 'ի բազմաթիւ թենէ խլոցից հարկ եղև խոյս տալ բնակչաց միոյ յայլոց քաղաքաց Ամենաղիոյ, զորոյ ոչ ևս յիշեմ զանունն[2]։

Աշխատութիւն իմն եկաց յաւուրս մեր 'ի Փեր-սէս պերճ և պայծառ, այլ վաղանցուկ յոյժ։ Լիկոփրոն զՀիմնենորա էարկ[3], և յաջորդն նո-րա Յասոն կանգնեաց զնա ահարկու Աղազայ և աղգաց հեռաւորաց։ Աղզում ինչ զարմանալիս լուայ զառնէս զայսմանէ, որպէս զի 'ի դէպ հա-մարիմ հանուռատել որ ինչ արարն և զոր առնէին կարող էր։

Յասոնի էին ամենայն քաջութիւնք անկատարք 'ի կանգնել զմեծազօր պետութիւն։ Կանխաւ վարձեալ էր նորա գունդ մի վեցհազար թիկնա-պահաց, զորս հանապազօր հրահանգէր 'ի զէնս, և յինքն յանկուցանէր զնոսա, պարգևս քաջացն ընձեռելով, դարմանելով զխօթացեալսն անդուլ խնամով, և զվախճանեալսն յուզարկելով փա-ռօք[4]։ Պարտ էր զենուորելոյն 'ի գունդ անդր՝

1 Արիստոտ. յդ. պարագ. ունկնդր. հա. 1. էջ 1152։
2 Պլին. գիրք Բ. գլ. 29. էջ 455։
3 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Բ. էջ 461։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 300։
4 Քսենոփ. անդ. գիրք Զ. էջ 580։

բերել յանձին զիտրձ քաջութեան, և անվեհեր արութեան՝ ոպպիսի ինքն՝ ի նահատակութիւնս և՝ ի վանդակս մատուն ցուցանէր։ Լուայ՝ ի ծանօ-թեց նորա, զի կոտրվի էր յոյժ մարմնով, բաւական՝ ի տոկ ամենայն աշխատութեանց, և հզօր՝ ի կոխել առ ոտն զամենայն խոչ և զխութ։ Ել քնոյ և ոչ այլոց ինչ կարեաց կենցաղոյս հպա-տակէր, յորժամ գործ ինչ նմա առաջի կայր. անզգայ կամ մանաւանդ անմատոյց իսկ էր հրա-պուրանաց հեշտութեան. խոհական, ոչ ձեռն երեց լինելով՝ ի գործ՝ առանց վստահութեան ընդ ելից իրացն յաջողութի. Ճարտար որպէս զԱն-միտոկդ՝ ի գուշակել զխորհուրդս թշնամեցն, և՝ ի թագուցանել՝ ի նմանէ զլուրն, և՝ ի փո-խանակել զօրութեան զխորագիտութիւն կամ զգաւ[1]. և զի երկարեմ, զամենայն ինչ ընծայէր նա փառասիրութեան իւրում, և ոչ ինչ զիպուա-ծոյ բախտի։

Հանդերձ սոքիմքք և իշխանութիւն նորա քաղցր էր՝ ի վերայ ժողովրդեան[2]. և սէր բա-ւական՝ ի թեամանութեան այնպիսի, զի իբրև Ցիմոթէոս զօրավար աթենացւոց՝ ընդ որում զօդիւ ասպնջականութեան կցորդեալ էր՝ ամբաստանեցաւ յատենի ժողովրդեան, Յասոնի՝ ի բաց մերկա-ցեալ զսպասս արքունի՝ ելին Ա՛թենս, և որպէս հասարակապատիւ ոք խառնեալ ընդ բարեկամ

1 Կիկերոն, յՊ. պատգամ. Ճից, գիրք Ա. գլ. 30. հա. 3։

2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 373։

ամբաստանելոյն՝ օգնեաց Թախանձանօք 'ի կեցուցանել զնա[1]։

Լուաձեալ զոմանս յայդպայ, և ընդ այլս կըռեալ դաշինս նիզակակցութեան, յայտնեաց զնոր հուրդս իւր զլեսաւորաց 'ի Թեսաղացւոց անտի[2]։ Բ. Ռաջի ապար նոցա զվատթարել զօրութեան սպարապետաց 'ի Ճակատամարտին Լեկորայ, և զանբաւականութիւն Թեբացւոց 'ի ժուժկալել ընդ երկար, և զզօրութիւն աթենացւոց ամենափեալ 'ի ծով և մերձ 'ի կործանումն յերեսաց նաւատորմիցն կառուցանելեաց 'ի Ֆեսաղիա։ Գաւել և ևս, զի 'ի ձեռն աշխարհակալութեանց և նիզակակցութեանց զիւրին էր նոցա ինքնակալել Յունաստան, և զՊարսիցն կործանել զինք նակալութիւն, որոց այն ինչ նշանակեալ էր տկարութեան արշաւանօքն Գրեսիոյսոսի և կրտսերոյն Կիւրոսի։ Բ. մենեցուն միաբ 'ի բանից ասոյ վառեալ, ընտրեցին զնա զօրագլուխ և սպարապետ ամենայն Թեսաղականնիզակցութեան, և վաղվաղակի եկաց 'ի վերայ երկուց բիւրուց հետեւակաց, և առաւելագունից քան զերիս հազարս հեծելոց, և յոգնախուռն ամբոխի մերկաստաղէն զօրաց[3]։

Ի ժամանակին յայնմիկ Թեբացիք խնդրէին 'ի նմանէ օգնութիւն ընդդէմ սպարտացւոց[4]. և

1 Դիոդոր. 'ի Տիմոթ. էջ զիրք Զ. էջ 580։
1075։ Նեպ. 'ի Տիմոթ. զլ. 4։ 3 Նոյն անդ, էջ 583։
2 Քսեն. պատմ. Յաւն. 4 Նոյն անդ, էջ 598։

թէպէտ ընդ փոկիսացիսն տայր պատերազմ, առեալ զընտիրս 'ի զօրացն՝ չու արար փայլակնասբար, և զրեթէ ամենայն ուրեք կանխեալ քան զհամբաւ չուցն՝ եհաս առ Թեբացիս, մինչ Ճակատեալ կային ընդդէմ սպարտացւոց։ Լ.յլ ոչ կամեցեալ ոչ զսոսա և ոչ զնոսա զօրացուցանել յաղթութեամբ, զի երկաքանչիւրոցն էս զօրութիւն ՀԱՍԱԿԱՐ էր իւրոց խորհրդոցն, հարկեցոյց զնոսա դուլ առնել զինուց։ Իսկ ինքն փութացեալ 'ի Փոկիս, յաւէր դարձոյց զաշխարհն. և յետ այլոց էս արագայաղթ արութեն՝ դարձաւ լի փառօք 'ի Վերէս. և բազումք յազգաց ցանկային և թախանձէին նիզակակիցք լինել նմա։

Երբ 'ի վերայ կային տօնք պիւթեան խաղուցն, և խորհուրդ կալաւ Յասոն ածել անդր զզօրս իւր '։ Իսկ ասէին՝ թէ իշխել կամի ժողովոյն, և վերակացու խաղուցն կալ. այլ զի և հնարս անսովորս 'ի կիր արկանէր առ 'ի հայթայթել զոռՃիկ զօրաց [2], կասկած կալան դեղփացիք՝ թէ 'ի կողոպտել զայր զգանձս մեհենին, և հարցին զդիան՝ թէ ՀՐԱԿ զսեղանակապտութիւնն խափանել կարասցեն. և Լսպողոն ետ պատասխանի՝ յինքն զհոգն զայն ապաստան առնել։ ԼՀ յետ աւուրց սպանաւ Յասոն 'ի գլուխ բանակին դաւակցութեամբ Եօթանց պատանեաց,

1 Քսենոփ. պատմ. Յուն. դիրք Զ. էջ 600։

2 Պողիբն. 'ի մարթանան, դիրք Զ. գլ. 1։

ոչ հանդուրժելով նոցա՝ որպէս պատմէն՝ ընդ խստութիւն զօրավարին[1]։

Կէսք 'ի Յունաց ուրախ եղէն ընդ մահ նորա, զի երկնչէին ընդ կորուստ ազատութեանն. այլք տխրեցան, զի յուսացեալ կային յառաջարկութիւնս խորհրդոց նորա[2]։ Ազգիտեմ է թէ Յասոն յանձնէ[3] խորհրդակից եղև Յունաց՝ միաբանութեամբ ածել պատերազմ 'ի վերայ Պարսից, թէ խրատեալ յումեքէ յիմնատակացն՝ որք 'ի ժամանակաց ինչ հետէ պարծանս իւրեանց համարէին զրով և նմանութիւք յաշխարհաժողովս Լակեդայ առաջարկել զխորհուրդն զայն[4]։ Բայց հնարաւոր իսկ էր խորհուրդն. և եթէ իրացն վկայեցին այսմ. զի տեսի ես ապա զՖիլիպպոս մակեդոնացի, զի օրէնս տայր Լակեդայ. և յետ դարձին իմոյ 'ի Ալիւթիա գիտացի, զի որդւոյ նորա կործանեալ էր զինքնակալութիւնն Պարսից։ Լրկաքանչիւր իսկ զշաւղացն Յասոնի չոքան զՀետ, որ թերևս չէր ինչ ընդհատ քան զՖիլիպպոս աջողութեամբ մնայ, և ոչ քան զորդի նորա ժրութեամբ 'ի գործ։

Օ Հետ առնոյ ինչ վախճանելոյ նորա հասաք մեք 'ի Փերէս, քաղաք մեծ յոյժ, շուրջ պատեալ 'ի պարտիզաց[5]։ Յուսայաք գտանել անդ

[1] Վաղ. Մագ. գիրք Թ. գլ. 10։
[2] Նոյն անդ։
[3] Փիլոսոփ. յղ. վարուց և մաստակաց, գիրք Ա. էջ 493։
[4] Խոսկր. համաձեն. հտ. 1. էջ 209։
[5] Պոլիբ. գիրք ԺԷ. էջ 756։ Լիւ. գիրք ԼԳ. գլ. 6։

հետս ինչ զպայծառութեանն որով նշողէրն յա-
ւուրս Յասոնի. այլ իշխէր անդ Մելքիսեդեկ,
տեսարան ինն կացուցեալ Ամենազաւ՝ նոր ինձ
ամենեքին, զի չէ՛ ես տեսեալ էր իմ բնաւորս
զոք։ Պահէր, յորոյ վերայ բազմէրն, դեռ ես
ծխէին ջերմջերմ արեամբ նախորդացն իւրոց
Թաթաւեալ։ զի Յասոն, որպէս ասացէ, 'ի դա-
ւանանաց սպանեալ. և երկոքին եղբարք նորա
Պողիդոր և Պողիփրոն յաջորդեալ նմա, Պողիփ-
ռոն սպան զՊողիդոր՝, և ինքն ես վաղ սպանեալ
Մելքիսեդեկ, որ յամաց իբր մեռասանից բբռ-
նակալէր 'ի Վերէս[2] իբրև հասեալ մեք անդր։

Ի սիրտ անգութ բռնաւորին չգոյր ինչ 'ի բա-
ւոյն մասանց, այլ կիրք դրսվելիք թանձրամած
յախտս համակեալ. դժոխոյ դաշանց, վատ և
տաղտուկ 'ի պատերազմ, և ոչ առ այլ ինչ իրիք
ցանկայր նա աշխարհակալութեան՝ բայց 'ի յա-
գուրդ ագահութեան իւրոյ, 'ի լրումն հաճոյիցն,
և 'ի շռայլել զանձն 'ի պղծալից հեշտութիւնս[3]։

Պատմարտակ մի տարագրելոց սրիկայից լցեալ
անօրէնութիւք, այլ ապաժամանն 'ի չարութիւն
նորա, լեալ նմա 'ի զլինուորս և 'ի թիկնապահս՝
խուժան աւերանաց զարշարհաւն իւրով և զսահ-
մանակցօքն զեղջոյ։ Այնուհետև նա նոքօք 'ի մի 'ի նի-
զակակից քաղաքաց, և համախմբեալ պատճառաս
նոքա զենակիցս քաղաքին՝ 'ի հրապարակ՝ ետ սրակոս

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 600։
2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 374։
3 Պլուտ. 'ի Պելոպ. հա. 1. էջ 293։

առնել զնոսա, և զտունս նոցա մատնեաց յաւար[1]։ Յաջողեցին 'ի սկզբան զկնք նորա. այլ ապա պարտեալ առաջի Թեբացւոց միաբանելոց ընդ բազումս յազգայ Իսրասաղոյ[2], յիւրսն ևեթ ապաւէնս 'ի Ժողովուրդս բռնանայր։ Օկէսս կենդանւոյն տայր Թագել[3], զայլս արքենեաւ կամ կենձնեաւ ծածկեալ՝ տայր արձակել 'ի վերայ նոցա բարակս ոստականս։ Օջանոյր 'ի կրատանս նոցա, և Ձիք նոցա և ևս յաւելուին խրատացուցանել զնիրտ նորա։ Վակայն յանկարծ ուրեմն 'ի փղձուկ հարեալ 'ի զնին ողբերգութեանն Լաբիպիդեայ տրովացւոց կանանցն, եկ վաղվաղակի 'ի տեսարանէն. ամենի հանդերձեալ զորովիլ առաջի այլոց ընդ աղէտս Լիկաբայ և Ղրոմնաբեայ, որ անխոտոր ակամբ զնիրոյ Ժողովրդեանն տեսանէր զարեան Հապաղիս[4]։

Փերեսացիք կէին հանապազօր յարհաւիրս, 'ի վհատութեան՝ յոր մտէն ծայրայեղ ջարիք, և որ յաւելուած աղիտիցն գործէ։ Հառաչել իսկ յայտնապէս ոչ համարձակէին, և խղձք սրտից նոցա առ ազատութիւն՝ վախճանէին 'ի յուսահատութիւն ապիկար։ Իսկ Ղեքսանդր տագնապեալ յարհաւրաց որովք զայլս զարհուրեցուցանէր, ժառանգէր զլաժինս բռնաւորի՝ ատեցող այլոց և ատելի լեալ։ Ղանուկ և խեթք և

1 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 385։ 'ի Պերսոպ. հա. 1. էջ 293։ Պլուտ. գիրք Զ. էջ 463։

2 Դիոդ. անդ. էջ 390։

3 Պլուտ. անդ։

4 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 40։ Պլուտ. անդ։

տագնապք որովք տանջէրն սիրտ նորա, յայտ-
նի երևէին յաչս նորա՝ թէպէտ և անգթու-
թիւն պատրուակեալ. և ամենայն ինչ յաւելցոյ
նմա կասկածանս։ Ոտղայր յերեսաց Թիկնա-
պահացն, և 'ի կնոջէն իսկ իւրմէ 'ի Ա՛վերեաց
զգուշանայր, զոր մոլենախանձ սիրովն սիրէր, և-
թէ օրէն իցէ սէր կոչել զմոլեգնութիւնն՝ որով
զՀետ իւր 'ի քարշ ածեալ ձգէրն զնա։ Օ՜ զիրեաս
'ի բարձու պալատանն կայր 'ի վերնատան, յոր
ընդ սանդուղս ելանէր. և զմուտս վերնատանն
պահէր շուն գամիւռ, ոչ յայլոք խնայելով բայց 'ի
Թագաւորն և 'ի դշխոյն, և 'ի ստրուկն դարմա-
նիչ իւր։ Ինքդ ընդ երեկս ամբանայր, սուսերա-
մերկ առաջի նորա գնալով ստրկին և հետազօ-
տելով զամենայն խորշ վերնատանն [1]։

Յաւելից պատմել և զայս ինչ, ընթերցանե-
լեացն Թողեալ խելամտել 'ի նոյն։ Լուգեմոս
կիսպացի ուղևորելով 'ի քաղաքէն աթենացւոց 'ի
Մակեդոնիա, անկեալ կայր հիւանդագին 'ի Փե-
ղիս [2]։ Լա՛ վասն զի բազում անգամ տեսեալ էր
իմ զնա առ Արիստոտելի՝ որում բարեկամն էր,
զամենայն խնամն ըստ կարի իմում կալայ զնմանէ
'ի հիւանդութենն։ Լա՛ իբրև զիտացի զի բժշ-
կացն հատեալ էր յոյս զկենաց նորա, նստայ առ
մահիճն, և էր երեկոյ։ Լա՛ նորա կարեկցեալ

[1] Կիկերո. յղ. պատշաճ. գիրք Զ. դլ. 7. հա. 3. էջ 233։ Վաղ. Մաքս. գիրք Թ. դլ. 13։

[2] Արիստոտ. առ Կիկերոն. դիր. յղ. հմայ. գիրք Ա. դլ. 25. հա. 3. էջ 22։

ընդ թախծութիւն իմ, կարկառեաց յիս զաջ իւր և ասէ նուաղ ձայնիւ. Ընդեմ ինչ յայտնել քեզ զաղտնիս 'ի մտերմութիւն քո վստահացեալ, զոր վասնզ է ինձ յայտնել այլում։ Յաւուրս յայսոսիկ երևեցաւ ինձ 'ի տեսլեան գիշերոյ երիտասարդ մի չքնաղագեղ, և յայտնեաց ինձ զի կեցից 'ի հիւանդութենէ ասսի, և յետ հնգից ամաց դարձայց 'ի Հայրենիս իմ։ և 'ի հաւատարմութիւն բանիցն յաւել զի բռնաւորին յետ աւուրց ինչ հասանելոց էր վախճան։ Ցնորս իմն առ տաղնապ ցաւոյն համարեցայ ցնորել Լուդեմեայ, և դարձեալ ընկղմեալ կայի 'ի տրտմութեան։

Լս ահա 'ի վաղիւ անդր ընդ առաւօտն զարթեաք 'ի յանախ աղաղակէ ամբոխին. զի ասէին թէ մեռաւ, և ոչ ևս է բռնաւորն, սպանաւ 'ի ձեռաց դշխոյին։ Ընթացաք վաղվաղակի յարքունիսն, և տեսաք անդ զդիակն Ղեքսանդրի մնտնեալ 'ի թշնամանս սիկլքոր խուժանին՝ որ զնա առ ոտն կոխէր[1], և ցնծութիւն հռչակէր զքաջութիւն դշխոյին։ Օ! նա ինքն առաջնորդ լեալ էր զաւոյն, յատելութենէ բռնաւորութեան եթէ 'ի վրէժխնդրութիւն անձին՝ ոչ գիտեմ։ Բանզի կէսք ասեն՝ թէ Ղեքսանդր խորհէր արձակել զնա 'ի բաց, և այլք թէ ետ սպանանել զթեսաղայի զսին երիտասարդ սիրելի նմին[2], և

1 Պլուտ. 'ի Պեզոպ. հա. 2 Քսենոփ. պատմ. Յուն. 1. էջ 298։ կուինտիլ. գիրք գիրք Զ. էջ 601։ Լ. գլ. 1. էջ 410։

այլք զարձեալ թէ Պեղոպիդաս ամօք ինչ յա-
ռաջ անկեալ 'ի ձեռս Պղէքսանդրի, և 'ի ժա-
մանակի գերութեանն յանդիման լեալ դշխոյին՝
խրատեալ էր զնա ազատել զՀայրենիս իւր, և
երևեալ արժանի բնիկ ազգատոհմին[1], զի էր նա
դուստր Յասոնի։ Կալցի ոք զայս որպէս և ախոր-
ժէ. բայց Թերեայ զխորհուրդն զայն եղեալ 'ի
մեծ՝ ազգ ազար երեցունց եղբարցն իւրոց, Տիսկ-
փոնեայ Պիթողայոսի և Լիկոփրոնի, զի խորհէր
բռնաւորն սպանանել զնոսա. և յայնմ հետէ
խորհուրդ կալան ինքեանք իսկ սպանանել զնա։

Յերիկն Թագոյց զնոսա Թերէ յաղքունիս[2].
և բռնաւորն 'ի նմին երեկոյի արբեալ զինի յոյժ,
եքանէ 'ի վերնատունն, և անկեալ 'ի վերայ անկ-
կողնոյ՝ Թմբրի։ Լակ դշխոյին ինքեալ փութանա-
կի, և զտարուին հանդերձ շամբն 'ի բաց կացու-
ցեալ, դառնայ անդրէն ընդ դաւաճանսն, և
յափշտակէ զսուսերն կախեալ զգարձէ մահ-
ճայն։ Ընդ դաւաճանացն Թողանայր քաջութիւն.
այլ 'ի սպառնալ դշխոյին զարթուցանել զԹա-
գաւորն՝ եՀԹ այլ ևս վատասրտէին, անկան 'ի
վերայ բռնաւորին, և հարին զնա 'ի հարուածս
բազումս։

Փութացայ իրազեկ առնել զԱրիստոս, և ոչ
ինչ զարմանք Թուեցան նմա իրքն։ Հաստատե-
ցաւ նա յառաջութիւն, և յետ հնգից ամաց կո-

1 Պլուտ. 'ի Պեղոպ. հտ. 1. 2 'Նոյն անդ։
էջ 297։

բեաւ 'ի Միկիզնա։ Բայց Աբիստոտելն զուցա-
տրութիւն իմն ասարեալ ասպա զՀոգւոյ յանուն
բարեկամին իւրոյ [1], ցուցանէր զտեսիլն ամենայն
մնասամբք կատարեալ՝ դարձ 'ի Հայրենիսն Տան-
բեալ զմեկնեալ նորա յերկրէ ատի [2]։

Դաւաճանացն Թողեալ առ Ժամանակ մի ոգի
առնուլ փերեսացւոց, ապա բաժանեցին յիւ-
բեանս զգերազոյն իշխանութիւնս. և այնչափ բռնա-
ցեալ, մինչև Հարկ լինել Ժողովրդոց յետ ամաց
հինգ ուղևորութեամբ իմն 'ի Թէսաղիա՝ կոչել զՓի-
լիպպոս մակեդոնացի յօգնութիւն [3]։ Որոց եկեալ
Հալածեաց ոչ միայն զբռնացեալսն 'ի Փերէս,
այլ և որ յայլ քաղաքս կային բռնաւորք։ Լս
բարեբարութեամբս այսուիկ այնպէս յինքն յա-
բեցոյց զթէսաղացիս [4], զի զբեթէ յամենայն ապա-
տերազմունս գնացին զհետ նորա, և օգնական
եղեն նմա 'ի յաջողութիւն խորհրդոյն [5]։

Լս անցեալք ընդ մերձակայ վայրս շուրջ զքա-
զաքաւն փերէսացւոց, և ընդ նաւահանգիստն նո-
բա՝ որ կոչի Պագասա՝ հեռի 'ի քաղաքէն ինքնուն
ասպարիզաւ [3], շրջեցաք ապա ընդ Հարաւային կող-
մանս Մագնեսիոյ. և ապա դարձաք ընդ հիւսիս,
ունելով յաջմէ զգաստս լերինն Պելիոնի։ Օր-

1 Պլուտ. 'ի Դիոն. հատ. 1. էջ 967։
2 Պիկեր. յղ. հմայ. գիրք Ա. գլ. 25. հատ. 3. էջ 22։
3 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 418։
4 Խսակր. Հատ. առ. Փիլիպպոս. հատ. 1. էջ 238։
* Տես 'ի ԿԱ գլուխ գրոցս 'ի պատճէն Թէմոյն գրեալ 'ի Հորորոդուսամի հարիւրերորդի վեցերորդի ոգեմպիադին։
5 Սարաբ. գիրք Թ. էջ 436։

ւարձալի են վայրքն քաղցրախառնութեամբ օդոյ նահանգին և բազմակերպ տեսարանօքն, և հովտացն բազմութեամբ, մանաւանդ 'ի հիւսիսակողմն, որք 'ի թեւոց լերանցն Պեղինոնի և Ղասայ կազմեալք։

Յ միում ուրեք 'ի գահաւանդից Պեղինոնի լերին կառուցեալ կայ մեհեան Աքամանդայ. և հուսաւանմին այրն հռչակաւոր, ուր ասեն Աքիրոնի երբեմն բնակեալ', յորմէ զանուն իսկ զմարդացքն կրէ։ Այլք անդր 'ի վեր ընդ հանդիսի մանկտուց, որ ամի ամի գնան անդր 'ի միոջէ 'ի մերձակայ քաղաքաց՝ մնտուցանել զոհս վեհագունին դից։ Թէպէտ և ամենն խոր էր, և տօթ սաստիկ 'ի ստորոտս լերինն, հարկ եղև մեզ զգենուլ հանդոյն նոցին զգաթ թաւ. զի 'ի բարձու լերինն է ցուրտ դժնդակ, այլ զգաւնութիւն նորա մեղմէ տեսիլն վսեմ՝ զոր ընծայեն աստի կապուտակ գաշտք ծովուն, և անտի արօտք Թեսաղիոյ։

Եղևին և նոճ և մայրի և այլ ևս ազգի ազգի ծառոց բազմութիւն ծածկեն զլեառնն, և բանջարք խոտոց ախտաբոյժք՝ որ յաձախագոյն սպասմնտուցանեն բժշկութեան[2]։ Տեսաք մեք անդ ազգ արմատոյ հոտեան խրբև զթիւմ, որում օձասպան ասեն ունել զօրութիւն, և բժշկել 'ի խածուածոյ օձից՝ խոտն ընդ գինւոյ ձաշակեալ[3]։

1 Պլին. պլեթ. 4. տող 181։ Դիկէարք. յաշխարհագր. հա. 2. էջ 29։

2 Դիկէարք. անդ. էջ 30։

Թէոփր. բուսարան. գիրք Դ. Դէ. 6. էջ 367։

3 Դիկէարք. անդ. էջ 28։

Լ։ անդ և թուփ՝ որոյ արմատ դեղ է ոտնառութեան, և կեղև նորա բժշկէ զխիթս, և տերևք զցաւս աչաց ։ Այլ Հարտարութիւն զեղոյն խառնման միւմ և ևս պահեալ է ազգատոհմն, որ համարի որդի ՚ի հօրէ ընկալեալ զայն աւանդութեամբ անդստին ՚ի նախնոյն իւրմէ ՚ի Դիրոնէ մարգացլոյ ։ Իբր ոչ եթէ առ շահ ինչ օգտի զդեղագործութիւնն առնելով, այլ պարտ անձին վարկուցեալ ձրի դարմանել զՏիւանդս որ զիմեն առ նա ։

Օ՚հեթ բաղմութեան մանկտոյն ինչեաք ՚ի լեռնէն, հրաւիրեցաք ՚ի Հաշ՝ յոր հանդիպեն թափօրոյն լիներ վախման ։ Ուր տեսաք ազգ իմն պարու պահեալ ազգաց ոմանց թեսաղացւոց, զարթուցիչ արիութեան և ժրութեան դաշտակատնաց ՚։ Այ՚ ոմն ՚ի մանկեսացւոց ՚ի մէջ անցեալ սպառազէն, զնե յերկիր զդէնս իւր, և ձեւացուցանէ զշարժումն և զգնացս երկրագործի՝ որ յաւուրս պատերազմի սերմանիցէ և հերկիցէ զերկիր։ Նրկիւղ՚ի զէմենորա տպաւորեալ, յայս կոյս և յայն զաչս իւր յածեալ տեսանէ զմի՚ի զինուորաց թշնամեաց՝ որ ինդրէ ՚ի վերայ հասանել ։ Յափշտակէ անդրէն զդէնս իւր, յարձակի ՚ի վերայ նորա, պարտէ զնա, և կապեալ զՀետ եղանցն՝ վարէ զնա առաջի իւր ։ Այլ զայս ամ շարժմունս կատարէ ՚ի չափ ոտին ՚ի ձայն սրնգի ։

1 Դիկիաբք. յաշխարհագր. հտ. 2. էջ 30։

2 Փանենոփ. արշաւ. Կիւր. գիրք Զ. էջ 371։

Լբ յառաջ անցեալ հասաք 'ի Միկուրիոն քաղաք, որ 'ի ստորոտ Ոստայ լերին կառուցեալ 'ի բլրի՝ հայի 'ի բարելից դաշտավայրս։ Ընդարձակ նուիրեալ ուղղոյն և ջուրցն առատութիւն մի 'ի բազմաղուարձ բնակութեանցն աշխարհին։ Լբ լաւագոյ կացուցանեն զնա '։ Ընտի մինչև 'ի Լաբիսոս բերրի է երկիրն և բնակաւէտ. և ըստ մերձենալ 'ի քաղաքն յաճախեն վայրք զուարճալիք։ Յիրաւի իսկ մի 'ի բազմամարդ քաղաքաց Թեսաղիոյ համարի Լարիսոս. և զարուարճանեալս նորա պէտք ասել Պենեոն, շուրջ զպարսպաւն նորա ականակիտ ալեօքն հոսեալ[2]։

Բ. Ընդարձակ ինքաք ազանել, և ընդարձակ նոյ զմեզ ամենայն մեծարանօք՝ որ ակնկալել էր 'ի նախնի բարեկամութենէ հօր նորա Փիլոստայ ընդ մեզ, և փութայաւք դնալ 'ի Տեմպէ։ Հովիտք բազումք են 'ի կողմանս Տեմպէ անուանակոչեալք, այլ զընդեին Տեմպէ կազմեն Ոլիմպ և Ոստա լերինք յիրեարս մերձեալ, և ընդ այն է 'ի Թեսաղիոյ 'ի Մակեդոնիա արահետ։ Ընդարձակ կամեցաւ գալ ընդ մեզ. և վարձեալ նաւակ, մնաք անդր ընդ արշալոյսն՝ նաւել ընդ Պենեոն 'ի հրնդեւտասանեերորդում աւուր ամսեան մեր[1]։

[1] Լբ. գիրք ԽԲ. գլ. 54։
[2] Պլին. գիրք Դ. գլ. 8. հա. 1. էջ 200։

* Ի տասներորդում աւուր ամսեան օգոստոսի, 357 թուականն։

մողես, և այլ ևս քաղաքք, կէսք 'ի գետեղերան կառուցեալք, այլք 'ի մերձակայ բլուրս[1]։ Լ՚ սանցեալք ընդ գետախառնուն Ցիտաբեսեայ, որոյ ջուրք պղտորագոյնք են քան զՊենեկենի[2], հասաք 'ի Պոմնոս՝ որ հեռի է 'ի Լարիսայ իբր հարիւր և վեթասուն ասպարիզաց[3]։ Ընդ թողաք զնաւակն, զի անտի հոսիցն սկսանի, և անձկանայ գետն ընդ լերանցամէջս Լոսայ՝ որ կայ յաջմէ, և Ալնմեայ՝ որ յահեկէ, և բարձրութիւն նոցա սուղ ինչ աւելի քան զտասն ասպարէզ*։

Լոստ վաղնջուց աւանդութեան 'ի սասանութենէ երկրի համարին փեռեկեալ լերինքն, և տուեալ անցս ջուրց որ ողողեալ ծածկէին զդաշտավայրս[4]։ Լ՚այլ այն հաւաստի իսկ է, զի 'ի խնուլ զկիրճն զայն՝ ոչ ևս իցեն անցք Պենեկենի. քանզի երկիրն՝ ընդ որ գետս այս հոսէ, ընդունելով յինքն 'ի գնացս իւր և այլ գետս բազումս, տակաւ 'ի գետեղերացն 'ի վեր ամբառնայ մինչև 'ի բլուրսն և 'ի լերինս որ շուրջ զգաւառանն կան։ Լ՚ուսաք իսկ, զի եթէ թեսաղացւոց չեր հնազանդեալ Լարսերքսեայ՝ առնոյր նա զՊոմնոս, կանգնել անդ թումբ անտեղիտալի հոսանայ գետոյն[5]։ Կարևոր է յոյժ քաղաքն՝ տեղւոյն

1 Լիւ. գլուխ ԽԲ. գլ. 61։
2 Հոմեր. Եղեակ. 2. տող. 754։ Սարաբ. գլուխ Թ. էջ 441։
3 Լիւ. գլուխ ԼՋ. գլ. 10։
* Յետոյս մասնեմ 'ի տեղեկութիւնսն. թիւ Ա.։
4 Երոդոտ. գլուխ Է. գլ. 129։ Սարաբ. գլուխ Թ. էջ 430։
5 Երոդոտ. անդ. գլ. 130։

ամբութեամբ, և է դուռն Աստուծոյ 'ի կողմանէ աշխարհին մանկեդնացուց, որպէս Աստուծոյ է 'ի կողմանէ աշխարհին փոփոխացուց։

Լիս տարածանի հովիտն յարևելս հիւսիսի՝. երկայնութիւնոցա քառասուն ասպարէզ, և ընդարձակագոյն լայնութիւնոցա իբր երկու ասպարէզ և կէս. այլ ուրեք անձկանայ, իբր ոչ ինչ աւելի քան զՀարիւր ոտնաչափ[2]։

Ծառք սաղարթագեղք զարմանալիք կաղամախ և սօսի և հայի ծածկեն զլերինսն՝. և առ ստորոտովք նոցա բղխեն աղբերք ջուրց վճիտք իբրև զբիւրեղ. և ընդ մէջ ծայրից նոցա բարձանց սահեալ անցանեն օդք զովարարք հեշտալիք 'ի շնչել։ Լակ գնացք գետոյն զրեթէ ամենայն ուրեք խաղաղ, և ուրեք ուրեք զկղզեկօք ոմանք փարեալ՝ մեծադարաս գնոսա զորձէ։

Արարայքք ներգործեալք 'ի կողս լերանցն, և գետեզերք երկուստեք դալարագեղ ծածկեալ, զոգցես իմն պատսպարանք պատրաստեալ կան հանդստեան և զբօսանաց։ Լիս առաւել յաՀախեին 'ի մեզ զարմանք ընդ հանՀարեղ կարգաւորութիւն զարդուցն, որովք պՀնին վայրքն. զի այլուր արուեստ Հզնի նմանել բնութեան, իսկ անդ կամի իմն բնութիւն նմանել արուեստի։ Արդենիք և աղգ աղգ թռչոց կազմեն անձեռա-

1 Պլին. գիրք Դ. գլ. 8. հա. 1. էջ 200։ Լիս. գիրք Խ՚Դ. գլ. 6։

2 Պլին. անդ։ Էղիան. զան. պատմ. գիրք Գ։

3 Թէոփր. բուսաբան. գիրք Դ. գլ. 6։

զործ կամարս և թաւուտս, նախանձ գեղեցիկ բերեալ ընդ ծառաստանս մնկեալս 'ի ստորոտս Ողիմպեայ լերին։ Զորդոյ իմն օրինակաւ ծածկէ բաղեղն զժայռս, և պատուղնքն զբունսովք ծառոց սողսկեալ՝ զգեցուցանեն զնոսա[1], և կողերքն նոցա հիւսեալք ընդ միմեանս՝ կախին որպէս զգեղ բոստանդս և իբրև զՆՕՆՏԱԿՍ։ ԼՕ համառօտիւ իսկ ասացեալ, ամենայն ինչ 'ի չքնաղ վայրսն յաւելու շուք գեղասպնծ. ամենայն ուստեք պաբարին աչք, և հոգին կենդանանորոգ զուարթանայ։

Ոչ ինչ են զարմանք զի Հոյակք, եռանդունք զգայութեամբք, և բնակեալք 'ի ջերմայոյտ նահանգս, յիսարին 'ի տեսիլ և 'ի յիշատակ իսկ չքնաղագեղ հովտին։ Լ՝ համառօտագիծ պատկերս յայս, զոր ահա նկարագրեցի, պարտ է յաւելուլ և զգարնայնոյն կիտուածս ծաղկանց՝ որովք հովիտն այն ծածկի, և զդայլայլիկս բաղմերամ անհամար թռչնոցն որ անդ գեղգեղեն[2], ամայութեան վայրացն և քաղցրախառնութեան եղանակին մատուցանելով նոցա նուագս զողտրիկս և յոյժ խանդաղատելիս։

ԼՕ գնայսք մեք մեղմաբայլ ընդ գնացս Պենեոն գետոյ, և աչք իմ թեպէտ ձգեալ 'ի բաղում սՅլ ինչ զուարճալի տեսարանաց՝ 'ի գետ անդր

[1] Եղիան. զան. պատմ. դիրք Գ. գլ. 1։ Պլին. գիրք ԺԲ. գլ. 44. հա. 2. էջ 41։

[2] Պլին. գիրք Գ. գլ. 8. հա. 1. էջ 200։

ստէպ դառնային։ Արեւի զցոլս ալեաց նորա նըշ-
մարէի ընդ մէջ տաղարթաց՝ որ զեղեցիք նորա առ-
նէն հովանի՝, և մերթ՝ ի գետեղն մատուցեալ՝
զխաղաղ ընթացս ալեացն նկատէի, որ զոգցես
ինն օգնեալք իրերօք՝ անձիկն և անխռով զոր-
ծէին զնուրեանց ասպարէզն։ Այսմ ցՄինտոր.
Ա. յսպիսի է սուրբ և խաղաղ հոգի. առաքինու-
թիւնք՝ ի նմա յիրերաց ծնանին, և գործակիցք
են միմեանց. և ստուերք յոռութեանց օտարք
՝ի նոցունց՝ պայծառագոյնս ևեթ զնոսա գործեն
ներհակաւն։ Այս Մինտոր ասէ ցիս. Ա. յԺամ իսկ
և զպատկեր փառամոլութեանն տեսցես, հան-
դերձ դժոգեակ արգասեօքն։

Այս տարաւ զիս՝ ի կապան մի Ասսայ լերին,
ուր Ցիտանացոյն ասեն մարտուցեալ ընդ դիս։
Այդ ուղիս ինն սրընթաց գահավիժի՝ ի ձոր քա-
ւրաժայռ, թափով հոսանացն զժայռն գղրդեալ։
Այս հասաւ՝ ի տեղի մի, ուր կոհակք ջուրցն բրբ-
նադատեալ, Ձգնեին յանցս. և բաղխեալք ընդ
միմեանս՝ փրփրագեղ՝ ի վեր ամբառնային, և ան-
կանէին մանելով՝ ի վիհ՝ ուստի յորձանապտոյտս
մոլեգնագոյնս անդրէն յիրեարս յարձակեալ
խորտակէին ցնդեալք ընդ օդս։

Այս մինչդեռ պակուցեալ կայի ընդ ահագին
տեսիլն, ամբարձի զաչս իմ և տեսի, և ահա լե-
ռինք աստի և լերինք անտի ամբառնային առ ինև
նսեմանուտերք, անջղիկք, և ակօսաձև խորտոր

[1] Պլին. դերք Դ. գլ. 8. հա. 1. էջ 200։

մինչև 'ի բարձունսն սեպացեալք։ Զանջիւք նոր
ցա ամպք թանձրադանդաղք ընդ մէջ տիւռ մայ-
բեայն տատանեին, կամ զանազ ոստոլքն թան-
ձրամածեալ կային։ Տեսի 'ի ստորև զընութիւն
եղծեալ. լերինք փլուզեալք՝ ծածկեին աւերակօք
իւրեանց, ժայռս եւեթ ընծայելով 'ի տեսիլ սպառ-
նալեցս և խառն 'ի խուռն շեղջակուտեալս զմի-
մեանսն։ Լա՛ռ զօրութիւն խզեաց զզոդ մեծա-
զանդուած բլրոցն. հնոցք ամենեքին հիւսիսոյ,
եթէ դղրդումն երկրի 'ի հիմանց, կամ թէ մե-
ծատաստ վրէժխնդրութեան դիցն ընդդէմ Հակայ-
ից, ոչ գիտեմ։ Սակայն 'ի ձոր անդր տեսանէր
տեսցէն աշխարհակալք զնկարագիր աւերանացն՝
զոր ածեալ զեղուն զաշխարհս։

Փութացաք մեկնել 'ի վայրացն, և հնչիւն
նեբրաշնակաւոր լարից՝, և խանդաղատելի եւ
ձայնք երգոց ձգեցին զմեզ յիւրեանս. քանզի
հասեալ գայր թափօր կամ նուիրակութիւն
դեղփացւոցն, զոր յիենեբեակ ասն արձակէն 'ի
Տեմնէ՝։ Զանազի համարին Պղտոնի եկեալ 'ի
քաղաք իւրեանց պսակ 'ի գլուխ և ուղէշ 'ի ձե-
ռին 'ի սարդենեաց հոլանին. և 'ի յիշատակ ա-
նուրիկ արձակէն զնուիրակութիւնն, որում եղաք
սկանատես։ Զնտիր մանկաւոյն դեղփացւոց
կազմէր հանդէսն. որք առ եղերբք Պենեոսն գե-

1 Պլուտ. յոյ. երաժշտ. հտ. 2. էջ 1136։ Ցիշատ. բանաս. կաճառաւոյն, հտ. 13. էջ 220։

2 Եղիան. զան. պատմ. գիրք Գ. գլ. 1։

տոյ ուղղեալ բազին, մատուցին անդ զոհ շքով մեծաւ. և հատեալ ոստս 'ի սարդևնայ անտի որով Պղտոմն էր պատկեալ, անկան 'ի չու երգով օրհնութեամբ։

Յելս հովտին յանդիման եղև մեզ տեսարան չքնաղագոյն. դաշտ բնակաւէտ և ծառախիտ, ուր գետն լայնաձոր և խաղաղագոյն 'ի գնացս, բաղմապտոյտ կամակորութեամբն ոչ ևս զմիոյ՝ այլ զբազումս գետոց բերել զկերպարանս։ Պսպարիզոբ ինչ 'ի բացեայ երևի ծոցն Թերմպեան, և անդրը ևս նշմարի ցամաքն կղզին Պաղնեէ, և 'ի հեռաստանէ լեառնն Պթոս՝ եղը մեծավայելուչ տեսարանին։

Խորհեաք դառնալ ընդ երեկս 'ի Պոմնոս, այլ մրրիկ սաստիկ հարկեցոյց զմեզ կալ զգիշերն զայն 'ի տան Թեսաղացւոյ ուրումն առ ծովեզերբն, որ մարդասիրութիւն ընկալաւ զմեզ։ Եւ էր նորա լեալ ժամանակս ինչ յարքունիս արքային Պոտիւսայ. և մինչդեռ բազմեալ էաք յընթրիս, պատմեաց մեզ զհանգամանս ինչ իրաց նորա անցանօթս։

Ասէ. Զիք 'ի Թագաւորս Թրակիոյ փարթամ և բարեկեցիկ և զեղխ քան զՊոտիւս. 'ի վերայ այլոց բազում ուստեք հասեալ, զան նման ամի ամի քանքարքը աւելի քան զերկերիւր 'ի նաւահանգրաստից որ են նորա 'ի Վերսոն՝. սակայն հաղիւ մեծութիւնք զանձուց նորա բաւեն 'ի սպառ խա-

1 Դեմոսթ. յԱրիստոկր. էջ 743։

հարութեանն։ Յմարայնի զեզերեալ շրջի արքունեաքն ընդ անտառս, ուր էին ծառատունկ Ձեմելիք. և 'ի դտանել ուրեք առ վասակաւ տեսիլ զուարճալի կամ հովանի զովարար, անդ զկայ առեալ շուայտի 'ի խնջոյս զեղխութեան։ Այս արդ մոլի 'ի ցնորս իմն՝ որ կարեկցութեան եւեթ արժանի էր, եթէ յիմարութիւն զուգակցեալ ընդ զօրութեան չվայրենացուցանէր զկիրս յանգութիւն։ Դիտիցես ում տուիցի. ՅԹեհնասայ տուիցեալ է։ Հրամանն ետ նախ միւսմ 'ի սիրուհեաց իւրոց զնամ անուանս ածուհւոյն կրել. այլ և էս սմանու պատրանաբն բորբոքեալ 'ի ցանկութիւն, խորհեցաւ ածել կնութեան զնոյն ինքն զաստուածուհին։ Հանդերձեցան հարսանեաքն շքով մեծաւ յոյժ, յոր և ես իսկ հրաւիրեցայ անդր. և մինչ դեռ դէտ ակն կալեալ սպասեր նա հարսինն, զինեհարեալ արբեցաւ։ Այս մերձ 'ի վախճան խնջոյիցն մի 'ի թիկնապահաց նորա երթեալ պատուիրանաւ նորա 'ի վրանն՝ ուր առաջատն պատրաստեալ էր, դարձաւ և եբեր զոյց՝ զի չև էս հասեալ էր ՅԹեհնաս. և թագաւորն նեռտահար սպան զնա։ Օ հետ նորա միւս էս 'ի թիկնապահաց զնոյն օրինակ սպաւնաւ։ Այլ երրորդին խրատեալ օրինակաւ առաջնոյն, եկին և պատմեաց՝ տեսեալ զդիցուհին յառաջագոյնն, և զի վաղ իսկ հասեալ՝ սպասէր արքայի։ Օ այն իբրև լուաւ թագաւորն, կասկածեալ թէ դուցէ զուցաբերէն սիրելի լեալ

էր Հարսինն՝ զայրագին 'ի վերայ նորա յար-
ձակեցաւ, և կեղեքեաց զայրն ձեռօք իւրովք՝։
Օ. այսոսիկ պատմեաց մեզ Թեսաղացին։ Իսկ
յետ սակաւ միոյ Հերակղեդէս և Պիեթան եղ-
բարք զաւակից լեալ ընդդէմ Պոտիւսայ, զուսե-
ցին զնա 'ի կենաց։ Բ. Թէենացիք հնարհապարտք
երբեմն նմին և ապա դժգամեալք ընդ նմա, 'ի սկզբ-
բան Թագաւորութեան նորա հրամայեցին նմա
պսակ ոսկի և գբաղաքացւոյ կարգ և պատիւ ու-
նել. իսկ յետ մահուն նորա զնոյն պատիւս և սպա-
նողաց նորա եռան՝։

Պատարեաց մերիմն 'ի գիշերին, և զարթեաք՝
և ահա հանդարտեալ էր ծովն, և երկինք պայ-
ծառացեալք։ Պարձաք 'ի հովիտն, և տեսաք
զհանդերձանս տօնիցն՝ զոր Թեսաղացիք ամի ամի
կատարեն 'ի յիշատակ սատանութեան երկրի,
որով բացան անցք Ջուրցն Պենէոսի, և երևե-
ցան գեղապարոյր դաշտք։ Արիսսայ։

Ինակիչք Պոմնոսի և Ամոլեայ և այլոց մեր-
ձաւորքաղաքաց հասանէին 'ի հովիտ անդր զհետ
միմեանց. բուրմունք խնկոց ծխէին շուրջանակի,
և գեսն ծածկեալ էր 'ի նաւակաց որ երթևեռ-
կէին անընդհատ։ Ի ծառաստանս, 'ի դաշտս,
յեղերս գետոյն, 'ի կղզեակս, և առ աղբերբք
որ 'ի լերանցն բղխէին, ամենայն ուրեք պատրաս-
տեալ էին սեղանք։ Յա այս ինչ առանձինն տե-

[1] ԱԹԵՆ. գիրք ԺԲ. գլ. 8. էջ 531։ [2] Դիոդոր. Սիցիլացւոյ. գիրք Դ. էջ 744։

նիցս է, զի և ստուկք ասա ընդ տեսարան խոսնին, մանաւանդ զի և սպասաւորին 'ի տերանցն. և զնորոգ իշխանութիւն այնու համարձակութեամբ 'ի կիր արկանեն, մինչև երբեմն զաւածանել 'ի ժողովուրդն. սակայն և այնու զինչոցս ուրախութեանն յանձնեն։ Ի բերկրանս սեղանոյ յաւելան պար և երաժշտութիւն և բազում այլ ևս հրահանգք, ընդ ժամն ձիգս զիշերոյ երկարաձգեալ։

Ի վաղիւ անդր դարձաք մեք 'ի Յարիսսա, և յետ աւուրց ինչ դէպ եղև մեզ կալ 'ի գնին ոգորելոց ցլուց։ Յ յայլ քաղաքս Յլաղոյ տեսեալ էր իմ զայն', այլ լարիսացիք ձարտարագոյնք են յայնմ քան զայլ աղգս Յունաց։ Ի բացատայրս բազաքին էր ասպարէզ մարտին. արձակեցին զուարակս բազումս, և հեծեալք ըստ թուոց զուարակացն զհետ մտեալ նոցա մնրակէին զնոսա սլաքաձև խթանաւ։

Հեծեալք իւրաքանչիւր մէն մի վարեն զուարակ՝ առ երկն նորա արշաւեալ, մերթ մնելով զնա և մերթ խոյս տալով 'ի նմանէ. մինչև պարտասեցուցեալ զնա, բուռն հարկանեն զեղջերացն, և յերկիր զնա տապալեն, առանց ինքանելոց յերկիր վարեն։ Ի զի և զիրարեարս զայրագնեալ զանն, յոգորեն իսկ ուժգին՝ զգեանեն յանդի-

1 Պլին. գիրք Ը. գլ. 45. Եթիոպ. գիրք Ի. էջ 498։ Հա. 1. էջ 472։ Սուետոն. Սալմաս. 'ի Պոլլիոն. էջ 286։ 'ի Կլաւդ. գլ. 21։ Եղիոդ.

ման անթիւ բազմութեան 'ի զնին կացելոյն՝ որ զյաղթանակ նոցա զրուատեն։

Տեսչութիւն քաղաքիս է 'ի ձեռս սակաւուց ոմանց դատաւորաց ընտրելոց 'ի Ժողովրդենէ, որք պարտ հմտարին փայփայել զնա, և փոխանակել ընդ անձնահաճ կամսց նորա զբարին իւր և զոգուտ[1]։

Համարին բնակաստու�ք, զի յորմէ հետէ բացման անցք ջուրցն լճացելոց բազում ուրեք զքաղաքաւան, օդք նորա անսպականք և իցեն և ցրտագոյնք, երկու ինչ ունելով կարծեացն իւրեանց պատսպարան. մի՝ զի յառաջագոյն ստածիչ էր երկիրն ձիթաստանեաց, և արդ ոչ ևս ձիթենիք անդ խստութեան ձմերայնի տեւեն. և միւս ևս՝ զի այդիք պաղին անդ յաձախ 'ի ցրտոյ, որ յառաջ այսպիսի ինչ ոչ դիպէր[2]։

Այս էին աւուրք աշնայնոյ. և քանզի բարեբաստ է յոյժ աշունն 'ի Լիւսաղիս և երկարատև[3], շրջեցաք ուրեք ուրեք 'ի մերձակայ գեօղս նորա մինչև եհաս ժամ մեկնելոյ մերոյ անտի։ Այս խորհուրդ կալեալ անցանել ընդ Նապիրոս, յուղի անկաք 'ի Գոմիի քաղաք կառուցեալ 'ի ստորոտ Պինդեայ լերին։

[1] Արիստոտ. յղ. հաս. բուս. գիրք Ե. գլ. 20։ գիրք Ե. գլ. 6. հա. 2. էջ 394։

[2] Թեոփր. յղ. պատճ. գիրք Ե. գլ. 7։

[3] Նոյն բուսաբան. գիրք Գ. գլ. 7։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Ուզիայիայ Աստաքարսեայ Յեպիրոս, յԱկարանանիս և Յեռոզլիս. և վասն Դոգոնեայ պատգամաւորութեան, և զբեւեռադեան սարիւն վաղք։

Պէտ Դոն ս լեառն բաժանէ ընդ Լեսաղիա և ընդ Լպիրոս. և անցեալք ընդ այն 'ի վերոյ քան զԼոտմիի[1], մնալք յաջխարհն Թամանաց։ Արալ Թէր մեզ անդ գնալ 'ի պատգամաւորին Դոգոնեայ, որ ոչ ինչ հեռի է 'ի տեղւոջէն. այլ քանզի ընդ ձիւնախառնաղաղ լերինս հարկ էր անցանել, և ձմեռն իսկ սաստիկ է յերկրին[2], և զի պատգամաւորիս այնչափ էր տեսեալ 'ի Խիվատիա՝ մինչև տաղտկանալ մեզ և ոչ ևս ցանկալ տեսանելոյ, խորհեցաք գնալ դէպ ուղիղ Լմբրակիա ընդ կարճոյ ճանապարհ, այլ ընդ դժուարութիւն[3]։

Լաղաքս այս հատուած 'ի Կորնեթացւոց գաղ Թեալ, սա Լմբրակեան[4] համանուն ծոցոյն կայ։ Յարևմտից նորա հոսէ Լբեթոն

[1] Լիւ. գիրք ԼԲ. գլ. 14։
[2] Հռոմեր. Էջիակ. 2. տող 750։
[3] Լիւ. անդ. գլ. 15։
[4] Ծոցս այս այն իսկ է, յորում սուրա հաշտակուսք ճանկատատարան Ակափոնի մեկեան։ Գոցեն ինքդրոյք զանազանիկ պատկեր նորա և զնքակարգրութիւն 'ի գիրս միջատակաց բանասիրական կանանոյն. հա. 32. էջ 513։
[4] Սարաբ. գիրք Ի. էջ 325։

գետ, և յարևելից միջնաբերդն կայ 'ի բլրի։ Շրջապատ պարսպաց նորա են սոսպարեղք իբր քսան և չորք՝. առ 'ի ներքս՝ մեհեանք և այլ ևս գեղեցիկ կերտուածք ձգեն յիւրեանս զաչս տեսողաց[1], իսկ արտաքոյ դաշտք լայնածաւալք բազմաբերք[2]։ Օ աւուրս ինչ եղեալ անդ, տեղեկացաք վեր 'ի վերոյ ինչ զ'Այիրեայ։

Լեառն Պինդոս յարևելից, և 'ի հարաւոյ ամբարձեանն ծոց անջրպետեն իմն ընդ Այիրոս և ընդ այլ սահմանս Այլադայ։ Գօտիք բազումք լերանց ծածկեն զմիջերկրայս աշխարհին, և 'ի ծովեզերս նորա զուարճալի տեսարանք են և պտղալից դաշտավայրք[3]։ Ի գետս որ զաշխարհն ոռոգանեն՝ անուանի է Լիսերոն, որ 'ի հանանուն իւր անկանի ծովակն՝. և Լոկիսոն, որոյ ջուրք անսխորժք են 'ի Ճաշակ[4]։ Նոր է և վայրն անուանեալ Լոտնա կամ Լերնա, ուստի սողնիք ապականիչք օդոյ ելանեն[5]։ Ի կերպարանսաց աստի տեղւոյն յայտնի է, զի անդ եղին հինք զգժոխս։ Օ 'ի վաղնջուց ժամանակս անդր քան զ'Այիրոս չգոյր ընդ արևմուտս այլ տեղի ծանօթ, նմին իրի և հանարեցաւ գաւառ ստուերաց։ Լայլ ընդ հեռանալ եղերաց երկրի ընդ մուտս արևու,

1 Լիւ. գիրք ԼԸ. գլ. 4։
2 Դիկեարք. յաշխարհագր. հտ. 2. էջ 3։
3 Պողիբ. հատուածք, գլ. 27. էջ 827։ Լիւիոս. անդ, գլ. 3։
4 Սարաբ. գիրք Ի. էջ 324։
5 Պաւսան. գիրք Ա. գլ. 17. էջ 40։
6 Նոյն. գիրք Թ. գլ. 30. էջ 768։ Պլին. գիրք Դ. գլ. 1. էջ 188։

փոխոխեցան վայրքը զԺոխոց, մերթ Յոտակա և մերթ ՅԿբերիա, այլ միշտ 'ի կողմն՝ ուր Թուէր տուընջեան շինմանէ։

Լպիրայ նաւահանգիստը բաղումք են քաջագէսք. և բերէ երկիրն ընդ այլ բերս և ձիան թեթեւընթաց, և զաղգ զամիոանց 'ի պահպանութիւն հօտից, և որք հանդոյն իմն եպիրացւոց՝ առ զոյգն ինչ իրաց բրդին 'ի կառաղութիւն։ Լին անդ և չորքոտանիք ոմանք անարդիկք մեծութեամբ. որպէս զի մարթեալ յոտիս կալալ կամ սակաւ ինչ խանարհեալ կթեալ զկաթն կովուց, որք յոյժ առատաբերք են կաթին։

Լուայ զի 'ի սահմանս Կաւմանացւոց է աղբիւր, որոյ աղի են ջուրք. և առ 'ի հանել 'ի նմանէ զաղն, եռացուցանեն զայն. և ջրոյն 'ի գոլորշի ցնդեալ մնայ աղն սպիտակ իբրև զձիւն։

Լսայ 'ի գաղթականաց ոմանց Յունաց որ 'ի կողմանս կողմանս Լպիրայ բնակէին, են յաշխարհի անդ չորքոտանն ազգք վաղերիք, բազմադոյնք 'ի նոցանէ խուժադուժք, սիրելիք յաւանս։ Վէրք 'ի նոցանէ 'ի ժամանակս ժամանակս կացին ընդ զանազան կարգօք տեսչութեան. իսկ այլք, որպէս մնղոսացիք, իբր յինանց դարուց հետէ հնազանդին թագաւորաց անդատին 'ի նմին ազ-

1 Եղեան. յղ. կենդան. գիրք Գ. գլ. 2։ Սուիդ. 'ի բառն Μόλοσσ.

2 Աբիստոտ. պատմ. կենդան. գիրք Գ. գլ. 21. հմ. 1. էջ 812։

3 Նոյն. նշանք օդ'. գիրք Բ. գլ. 3։

4 Թէոփ. առ Պարաբոնի, գիրք Է. էջ 323։

զատոհմէ։ Լաւ ապդատոհմն այն մի՛ ի վաղնջա-
կանացն է և յերևելագունից Հղլադայ, սերեալ
՝ի Պիւռոսէ որդւոյ Աքիլլեայ. և զաւակք նորա
որդի՛ ի հօրէ ժառանգեցին զանթոռն, որ եկաց
միշտ անդրդուելի։ Խնամատարեալք ոմանք պատ-
ճառս երկարատևելոյ պետութեան խնամն զանձ-
կութեան գաւառացն, որ էին երբեմն ընդ նովաւ.
քանզի համարին ըստ նուազագոյն զօրութեան իշխա-
նաց՝ նուազ՝ ի նոսա գոլ զփառասիրութիւն և
զերերումն՝ ի զոռոզութիւն։ Սովորութիւնն իմն
անյեղլի հաստատուն ունի զպետութիւնն. զի՝ ի
թագաւորել ազգային՝ ժողովի ազգն՝ ի մի՛ ի գլխ
խաւոր քաղաքաց. և յետ օրինաւոր պաշտամանց
կրօնիցն՝ երդնուն թագաւորն և ժողովուրդն
յանդիման բազմաց, նա՛ի թագաւորել ըստ օրի-
նաց, և սոքա՝ ի պահպանել զթագաւորութիւն
նորա ըստ նոցին օրինաց։

Սովորութիւնս այս յանցեալ դարու սկիզբն
կալաւ, և արար փոփոխումն մեծ՝ ի կարգ տեսչու-
թեան և՝ ի բարս մարդասացուց՝։ Մի՛ ի թագա-
ւորաց նոցա եթող՝ ի մեռանելն իւրում որդի միա-
ծին. նոցա ոչ ինչ կարևորագոյն քան զդաստիա-
բակութիւն արքայի մանկանն համարեալ, յանձն
արարին զայն ազանց խնամանոյ. որք խնամ՝ կա-
լան դաստիարակել զնա ազատ յամենայն զրգա-
նաց և՝ ի մարդահաճութենէ։ Ոչ՝ զնա՛ յԱթէնս

՝ Պլուտ. ՝ի Պիւռ. հտ. 1. էջ 383։ Յուստին. գիրք
ԺԷ. գլ. 3։

և անդ 'ի հասարակաց սկետութեան ուսեալ զպարտս իշխանաց և ժողովրդոց առ միմեանս, 'ի դառնալ իւրում ետ օրինակ մեծ, ասելով ժողովրդեանն. Արի և իշխանութիւնս, կամիմ սահմանել զայն։ Այլ կացցոյց իւր առեան խորհրդոյ և օրէնս և դատաւորս։ Ապ բարգաւաճեցին զիտութիւնքն և արուեստք խնամովք նորա. և մեղսասիրք 'ի սէր նորա զբաւեալ, և 'ի վայրենի բաբուցն զգծնացեալ, կալան 'ի մէջ խուժադուժ ազգաց եպիրացւոց զգերակայութիւն՝ զոր զիտութիւնքն մատուցանեն։

Ի հիւսիսային կողմանս Աղիրոսի է քաղաքն Դոդոնէ, ուր է մեհեան Լաքամազդայ, հեադոյն քան զամենայն դաբիրայս Աչլադայ։ Ենդատին 'ի ժամանակաց, յորում աղօտ ինն էր առ բնակիչս երկրին զկոյակրօնութիւն, դաբիրն այն կայր, և աչք նոցա 'ի հանդերձեալն ձգտէին հետաքրքրութիւն. զի է և է իսկ ցանկութիւն կանխագիտութեան մի 'ի վանդիկական ախտից մարդկեղէն մնաց, և մի 'ի դժնդակագունիցն։ Յոր և միւս սյլ յաւելում ոչ ինչ թեթեւագոյն առ Յոյնս լեալ մոլութիւն, խմանալոյ պատճառս զերբնականս՝ ոչ միայն արդասեաց բնութեան, այլ և սովորութեանց և սահմանդրութեանց՝ որոց անծանօթ է սկիզբն։ Որ ընդ կարգս աւանդութեանց նոցա ոչ անցանիցէ, գտանէ զամենայն ինչ 'ի հրաշից առեալ պատճառս. հարկ էր ապա

[2] Նրոդոտ. գիրք Բ. գլ. 52։

քէն և Պոդոնեայ պատգամատեղւոյն հանդոյն ինն ունել սկիզբն, և ահա այսպէս քրմուհիք մեհենին աւանդէն զայն՝ ։

Պշանիք երկու թխատիպք թռուցեալք յեգիպտական թագաւորէդայ, զկայ առին՝ մին՝ ի Լիբիա, և միւսն՝ ի Պոդոնէ։ Որ՝ ի Պոդոնէ եկայն, դարեալ՝ ի կաղնւոջ՝ յստակ բարբառով պատուէր ետ կանգնել՝ ի տեղւոյն դաբիր Պրամանզայ։ Օնոյն պատգամ և միւսն Լիբէացւոց ետ. և հանարեցան երկաքանչիւր պատգամաբերքն յերեսաց դից։ Այլ թէպէտ և այսոքիկ առասպելք, այլ զոյցս Հնմարտութեան իրայն ունին յինքեանս. քանզի առ քուրմն եգիպտացւոց ասանդութիւն է, քրմուհեաց երկուց զարբազան արարողութիւնս նոցա բերեալ երբեմն՝ ի Պոդոնէ և՝ ի Լիբիա. և՝ ի լեղու հին եգիպտացւոց՝ նոյն և մի բառ նշանակէ զաղաւնի և զկին պառաւ՝ ։

Պոդոնէ առ ստորոտով Ցոմարայ լերինն կայ, ուստի բղխեն աղբիւրք բազումք անապառք՝ ։ Ի մեծայն փառաք նորա և մեծութիւնք յեկայն է օտարաց, որք դիսեն անդր առնուլ հրամանս պատասխանւոյ։ Մեհեանն Պրամանզայ և որ շուրջ գնուալս դաւիթքն զարդարեալ պՀնին յանթիւ

[1] Երոդոտոս, գիրք Բ. գլ. 55։

[2] Սարաք. յաշխարհագր. գիրք Է. հտ. 2. էջ 103։ Սեբուխոս, ի մշակ. Վիրգիլ.

[3] Սարաք. գիրք Է. էջ 328։ Թէոպ. առ Պլինիոսի, գիրք Դ. գլ. 1։

9. տող. 13։

բազմութիւնք անպրեւաց և նուիրաց, որ զրեթէ յամենայն ազգաց երկրի էն անդր նուիրեալ՝։ Այլ նմին ամենառնոյ անտառն մեհենական տնկաւ խիտ կաղնեօքն, յորոց մին կոչի դիւցական կամ մարգարէական, զոր կրօնասիրութիւն ժողովրդոց 'ի բազմահոլով դարուց սրբազանեաց[2]։

Ել ինչ հեռի 'ի մեհենէն է աղբիւր, որ զմի-ջաւուրք ցամաքէ զոր հանապազ, և 'ի հասարակ գիշերի յորդէ առատագոյն. որպէս զի օր ըստ օրէ առնել ջուրցն և նուազել, տակաւ յերկրաքանչիւրսն ածեալ ծայրայեղ փոփոխմունս։ Յաւելուն և այլ ինն զնմանէ զարմանահրաշ. զի ցրտաշունչն ջուրցն զջահս բորբոքեալս յընկղմէն անդր շիջուցանելով, զշիջուցեալսն և լուցանեն 'ի մատուցանել 'ի ջուրսն զոյգն ինչ 'ի բացէ[3]*։ Օ անտառաւն Պատմեալ Ճահիճք են, այլ երկիրն զրեթէ առ հասարակ բերրի է յոյժ, և բազմերամբ խաշանց Ճարակաւորք 'ի գեղեցիկ արօտսն շրջին[4]։

Վրմունիք երեք կան անդ տալ զհրամանս պատասխանւոյ դիցն[5]. այլ բիսոլտացւոյ պարտ է առնուլ զայնս 'ի քրմանց պաշտօնեայց մեհենին[6]։

1 Պոզիք. գիրք Դ. էջ 331. գիրք Ե. էջ 358։
2 Պաւսան. գիրք Ը. էջ 643։
3 Պլին. գիրք Բ. գլ. 103. հա. 1. էջ 120։ Մելա, գիրք Բ. գլ. 3։
* Յեսոկոյս մատենիս 'ի սեղեկութիւնսն. թիւ. ԺԱ։
4 Ստրաբոն. առ Սարպարոնի, գիրք Ի. էջ 328։ Եսիոդ. 'ի Պարսաց. Սոփոկլ. 'ի Տրաքին. տող 1183։
5 Երոդոտ. գիրք Բ. գլ. 55։ Սարաբ. գիրք Ի. էջ 329։
6 Սարաբ. գիրք Թ. էջ 402։

Քանզի հարցեալ երբեմն նոցա զդիսն վասն առաջիկայ պատերազմին, առին պատասխանի 'ի քրմուհւոյն՝ թէ Լինելոցն է և յաջողեսցի ձեզ։ Լաւ կասկածեալ զի կուսակից թշնամեացն էր հարցուին, արիին զնա անդէն 'ի հուր. զի ա-սէին, Լիթէ ստէ քրմուհին, մեռհապարտ է. իսկ եթէ խօսի զշնմարտութիւն, հնազանդեսցուք նմա 'ի գործել զամենայն։ Իսկ այլոց երկուց քրմուհեացն պարտ վարկուցեալ ջատա-գով կալ եղկելոյն, ասէին՝ թէ պատգամ դիցն էր բիսվանացւոց բառնալ զեռատանին նուիրեալ 'ի մեհեան իւրեանց, և բերել Լ՚Լամազդայն 'ի 'Լոդունէ։ Լաւ յայտնեցաւ մի և այլ հարցկին հրամանն պատասխանւոյ բիսվանա-ցւոց։

Քաղում օրինակաւք յայտնեն զկիր զգաղանիս իւրեանց քրմուհեաց մեհենին։ Լ զի 'ի սրբա-զան անտառին կալով քրմուհեաց առ դիւցական կաղնեառն', լսել զՀրշիւն տերևաց նորա շարժե-լոյ 'ի զեփիւռից կամ 'ի ճարճատիւն ոստոցն բախելոց 'ի միմեանս. և է զի զկայ առեալ առ աղ-բերբ՝ որ առ արմատ կաղնոյն բղխէ[2], 'ի լուր խոխոջմանց յորձնեռանդն ալեաց նորա փախուս-տէից, և քաջ 'ի միտ առեալ զաստիճանս և զկցող-դութիւն ձայնիցն՝ որ հնչեն 'ի լռելիս իւրեանց, դա-

[1] Հմմտ. Ոգիս. գիրք ԺԴ. տող 174։ տող 328։ Եպիկ. 'ի Պոմ. տող 831։ Սոփոկ. 'ի Տրոպին.

[2] Պերուիս, յԵնեականն Վիրգիլ. գիրք Գ. տող 466։

շակէն նոքօք զՀանդերձեալսն, մեկինելով զնոսա ըստ կամանաց՝ զոր ինքեանց սահմանեալ է, և յաճախագոյն ևս ըստ ցանկութեան հարցողացն։

Օրէնսն օրինակ զուշակէն և՝ի զոզանջիւն բախման յիրեարս անօթոց պղնձեաց կախելոց շուրջ զմեհեանսն՝ որ զի խիտ առ խիտ կան զեռեզեալ միոյն ևեթ բաղխմամբ՝ հանցին անօթոցն բազմութիւն շարժեալ դղրդիւն։ Լաբքմանհէսին ուշ եդեալ խառնման և եղանակի և նուագման ձայնիցն, բաղում՝ ինչ՝ի խառնաձայն դաշնակութենէ առնու զուշակել։

Լաբ ոչ այսչափ միայն, այլ և սիւնք կրկին մեր՝ի մեհեան անդր կանգնեալ կան՝։ ՝ի վերայ միոյ՝ ի նոցանէ է անօթ պղնձի, և՝ի վերայ միւսոյն պատկեր մանկան, և խարազան ձնսպուկ՝ ի ձեռին նորա յերկոյ շղթայիւ մանուցեալ պղնձեաց, և կոճակք՝ ի ծայրս նոցա։ Լաբ վասն զի յաճախ են հողմք՝ ի Դոդոնէ, զրեթէ միշտ անընդհատ բաղխեն շղթայք զանօթն՝ հնչիւն առնելով ձիգ՝։ և քրմուհիք յաճախամբ ամենայն հնչմանն յարմարեն զայն՝ ի պէտս իւրեանց։

Լ. և այլ օրինակ հարցանելոյ զդիս վիճակաւ։ քանզի պիտակս կամ՝ վարիս՝ ի սափորի եդեալ, հանեն ըստ բախտի։ Դեպ եղև սպաս-

1 Մինեդ. առ Սուփ. ծաղկաքաղ՝ ի Դոդոն։ Եբաստամ. յՈդիս. գիրք ԺԴ. հա. 3. էջ 1760։

2 Աբիստոտ. առ Սուիդ. ՝ի բառն Դաոնոն.

3 Փիլոսոր. պատկեր. գիրք Բ. գլ. 34. էջ 859։ Սարաբ. յաշխարհագր. գիրք Է. հա. 2. էջ 10։

տացուց 'ի դիմէն ուրեք 'ի պատերազմ՝ հարցանել ըստ սմին օրինակի զդիս վասն եղից արշաւանին. և կապիկ արքային Պողոսաց ստուցեալ 'ի սեղան անդր յորոյ վերայ սափորն կայր, կործանեաց զայն, և զվիճակսն ցրուեաց։ Յայնժամ քրմուհւոյն զահի հարեալ աղաղակեաց, փութալ սպարտացւոց յապահովել զիրկութիւն իւրեանց՝ 'ի բաց եղեալ զցանկութիւն յաղթութեան։ Լաւ հրեշտակացն դարձեալ 'ի Սպարտա, զուժեցին զայն. և արհաւիրք հանգոյն այնմ էին երբեք լեալ 'ի պատերազմող ազգին'։

Պատգամք բազումք դողմնեան հարցկին պահին առ աթենացիս. զմի յայնցանէ ածեմ, առ 'ի քաջայայտ առնել որպիսի ինչ էին. "Օ՜այս հրաման պատասխանւոյ քուրմն Լամանզդայ աթենացւոց տայ։ Ընդ ժամանակ զահից և հրեշտակութեան, և ընդ՝էր տարաժամէք. յղեցէք վաղագոյն հրեշտակս, որք ընդ նուէրս սահմանեալս 'ի ժողովրդենէ բերցեն Լամանզդայ եղինս ինն ակօսաձիգս, և ընդ միում միում յեզանցն ոչխարս կրկին. և Պիտանեայ նուիրել բազմն պղնձի և եղն մի և այլ զոհս"[2]։ Լաւ էր Պիտանէ զուսար Լրկնից. և ընդ նմա Լամանզդ բաժանէ զկուսնկան՝ որ ծխին 'ի մեհեանն 'ի Պաղանէ[3], փառակցութեան նոցա օգնելով 'ի յաձախութիւն զահից և նուիրաց մատուցման։

[1] Կիկերոն. ՅԴ. հմայ. հա.
[2] Դեմոսթ. 'ի Միդ. էջ 611.
[3] Սորոբ. գիրք Ա. գլ. 34. էջ 30։
[3] Սորոբ. գիրք Ա. էջ 329.

Օ այս ամենայն պատմեցին մեզ Ամբրակիա։ Բայց ձմեռն մերձենայր, և հանդերձեաք մեկնել 'ի քաղաքէն. և գտեալ նաև մի վանական՝ որ գնայր 'ի Լաւպակոն քաղաք կառուցեալ 'ի ծոց Արիսայ, մնաք անդր ընդ այլ ուղեկիցս. և 'ի հաստատել պարզութեան օրոյն, ելաք 'ի նաւահանգստէն Ամբրակիոյ։ Ընդ առաջ եղև մեզ անդէն ցամաք կղզին Եւկադեայ, որ ընդ նեղուց մի անձուկ յոյժ կցորդի ընդ ցամաքի։ Ցեսաք մեք անդ նաւատոխ, որք առ 'ի չպատելոյ զցամաքն կղզեաւն՝ զօրութեամբ բազկի ածէին զնաւն ընդ ցամաքն յայնկոյս նեղցին[1]։ Այլ զի ստուարագոյն էր նաւս մեր, խորհուրդ կալաք քերել զարևմտեան ափամբք Եւկադեայ, և հասաք 'ի ծայրն անդր նորա ուր սարաւանդ բարձրաբերձ ամբառնայ ուղղորդ սեպացեալ, և 'ի կատար սարին մի հեան Ապոլոնի, զոր նաւաստեայ 'ի հեռուստ նշմարեալ՝ ողջունեն։ Ընդ յանդիման եղև մեզ տեսարան քան զամենայն տեսիլս ահարկու[2]։

Բազմութիւն նաւակաց շուրջ պատեալ կային զստորոտովք հրուանդանին, և ամբոխ բազում՝ ճգնեին 'ի ծաղ անդր նորա հասանելոյ։ Եկեաք առ մի հեռեաւն զկայ առնուին, այլք ընդ սեպս ժայռից սողոսկեին, լինել ակամատես նորանշան տեսլեանն։ Շարժմունք նոցա ոչ արդ

[1] Թուկիդիդէս, գիրք Գ. [2] Պարբ. գիրք Ա. էջ 452։ գլ. 81։

կածից ինչ էին գուժկանք. և մինչ զեռ աներ-
կեան 'ի զնին կայաք, և ահա տեսաք 'ի միում 'ի
սեպոց ժայռին զբաղումն յամբոխեալ անտի, զի
բուռն հարեալ զառնել միոջէ մղեցին զնա 'ի ծով.
և հնչեաց յամենեցուն աղաղակ ցնծութեան, որ
'ի վերայ լերինն և որ 'ի նաւակն կային։ Եկ
այլն ընկերցիկ շուրջ պատեալ էր փետրովք, և
թռչունք 'ի նա կապեալ էին՝ որ թեւօքն սա-
ւառնելովք յամեցուցանէին զանկումն նորա։
Զ.ին ինչ եհաս նա 'ի ծով, և ահա անհապարեալ
հասին նմա նաւակք յօգնութիւն. և առեալ
զնա 'ի ծովէ, զամենայն խնամն գթոյ բարեկա-
մութեան արարին ընդ նմա։ Եկ իմ 'ի սկզբ-
բանն այնպէս պակուցեալ, զի աղաղակեցի և ա-
սեմ. Զ.յսպէս խաղ առնէք զկենօքս մնրդկան, ո՛
անողորմք։ Զ.յլ որք 'ի նաւին էին ընդ իս՝ զուար-
ճանային ընդ պակուցումն իմ և ընդ ցասումն։ Եւ
ասա մի ոմն, քաղաքաւ ամբրակեցի, ասէ ցիս.
Սովորութիւն է ժողովրդեանս ամի ամի 'ի սմին ա-
ւուր կատարելով զտօն Զ.սրողնի, նուիրել աս-
տուածոյն զոհ քաւութիւն, որպէս զի ամենայն պա-
տիժք պատուհասից սպառնացեալք 'ի վերայ ազ-
գին՝ 'ի գլուխ զոհելոյն թափեսցին։ Զ.մին իրի ըն-
տրեն զայր մի մահապարտ, և դուն ուրեք պա-
տահէ նմա հեղձանել յալիսն. այլ 'ի կեանս 'ի
վտանգէն՝ աքսորի անդարձ 'ի սահմանացն Լեւ-
կադեայ։

[1] Սարաբ. գիրք ժ. էջ 152։ [2] Նոյն անդ։

Լբ յաւել ամբրակեցին. Բռաւել ևս յոյժ զարմացիս, եթէ զիտիցես որպիսի ինչ նորա նշան կարծիք են առ Յոյնս. քանզի Հանարին զեղ հզօր 'ի բժշկութիւն մելենտութեան սիրոյ վազել ընդ Լեւկադ[1]։ Բազումք 'ի տարբա ծուսց չարաբաստից եկեալ 'ի Լեւկադ, և 'ի սար այդր ելեալ, և զոհս 'ի մեհենին Ապողոնի մատուցեալ, և եղեալ ուխտ անդարձ հոսել զանձինս 'ի ծով, գահավէժ 'ի վախից այսր մեղեցան անդր։ Լբ առանդեն բժշկութիւն լեալ ոմանց յախտիցն որոյք ելիցեն. և թող զայլս, պատմեն զեպիրաց յոյ ումեմեն որ էր 'ի Թոթրոտան քաղաքէ, զի առ ամենայն տեսիլ բորբոքելով 'ի տափանս, ջրիցս անց ընդ վտանգն Հանդոյն յաջողութիւն[2]։ Ամլ բազմոց ոչ զգուշացեալ 'ի մեղմել զթափ գահավէժ անկմանն, գրեթէ առ հասարակ կորեան, և յաՀախ իսկ կանայք եղեն Հարակք ողորմելիք վտանգին։

Լ. Իսկ տեսանել անդ 'ի Լեւկադ զգերեզման Ամբրեմիսիայ բազմահռչակ դշխոյին Կարիոյ, այն որ զբազում արութիւնսն 'ի Հակատամարտին Սալամինայ գործեաց[3]։ Որոյ վառեալ սատիկ տափանօք 'ի սէր ուրումն պատանւոյ, և զի նա ոչ փոխադարձեր իւր զսէր, եՀաս 'ի վերայ նորա մինչ ենջերն, և խլեաց զաչս նորա։ Լբ ապա

1 Պոլոմ. Հեփեստ. առ Փոտայ, էջ 491։
2 Նոյն անդ։
3 Արրիանոս, գիրք Ը. գլ. 87։

Թախիծք մնացն խղճի և յուսահատութիւն վարեցին զնա 'ի Լեւկադ, և անդ յալիսն կոբեաւ՝ հանդերձ ամենայն Ձգամբք այլոց 'ի փրկել զնա[1]։

Լոյն և եղկելոյն Սափիովայ եղև վախճան. քանզի լքեալ 'ի Փաւոնէ տարփածուէ իւրմէ, դիմեաց այսր 'ի սիրուն վշտացն, և եղիտ ըզմահ[2]։ Յարկածից սոցա այնպէս անհամբառեալ վազիցն ընդ Լեւկադ, մինչ զրեթէ ոչ ևս ումեք 'ի տարփածուաց նմանել անհանձար ուխտից նոցա։

Լաւ յառաջ կոյս նաւարկեալ տեսաք յաջմէ զիթակեան և զկերպաղենեան կղզիս, և յահեկէ զծովեղերս Կարնանիոյ։ ՅԱկարնանիա են քաղաքք ոմանք երևելիք[3], և բազմութիւն ամուր ամուր սանոց[4], և ազգք բազումք այլաբանք միաբանեալք 'ի միոնիզակցութիւն. որք զրեթէ միշտ 'ի պատերազմի կան ընդ սահմանակիցս իւրեանց ետոզացիս, զոյս անջրպետեալ 'ի նոցանէ Քեղոյոս գետ։ Լաւ են ակարնանացիք հաւատարիմք 'ի բանս իւրեանց, և յոյժ նախանձախնդիրք ազատութեան[6]։

Լաւ անցեալք առ տեղեաւն՝ ուր Քեղոյոս բերանացեալ թափի 'ի ծով, քերեալք զօրն ողջոյն

1 Պղտմ. Հեփեստ. առ գլ. 102։
2 Պոսոյ, էջ 491։
3 Մենանդր առ Սարաբոնդի, գիրք ա. էջ 452։
4 Դիոդոր. գիրք ԺԹ. էջ 708։
5 Սարաբ. գիրք Ի. էջ 321։
6 Պոլիբ. գիրք Դ. էջ 299։

զծովեղերքք Լատողից՝ ։ Յետողնա են դաշտք արգաւանդք, և բնակեալ անդ ազգ պատերազմող։ Ամ և այլ ժողովուրդք են՝ ինանա. և բազմազգիք՝ ի նոցանէ ոչ են բնիկ Հայոց, և ոմանք՝ ի նոցանէ զհետս խժդժութեն բերեն յիւրեանս, խօսելով՝ ի բարբառս դժուարալուր, և հմակերք զողով, և յանպատասպար առանս բնակեալք՝։ Ամ ամենեցուն՝ ի մի օգուտ հասարակաց միաբանեալ կազմեն նիզակակցութիւն հզօր որպէս զբիոմատացոցն և զթեսաղացւոց և զակարնանացւոց։ Ամի տմի՝ ի ժողով գումարին հրեշտակք յիւրաքանչիւրոցն արձակեալ՝ ի Ամերմոս քաղաք, ընտրել իւրեանց պետս՝ ի տեսչութիւն՝։ Սպառք երևելք, խաղք և տճնք և խուռն բազմութիւն վաճառողաց և հանդիսատեսից յաճախեն զշուք և զփառս ժողովոցն՝։

Լատողացիք ոչ ինչ ակն ածեն՝ ի դաշանց նիզակակցութեան և յուխտից. յորմէհետէ զրդեցաւ պատերազմ յերկոսին ազգս սահմանակիցս նոցա, թողուն վատթարել երկաքանչիւր՝ ի միմեանց, և ապա հասեալ՝ ի վերայ նոցա՝ յափրշտակեն զաւար նոցա՝ և կոչեն զայն աւար աւարայ՝։ Հինաբար արշաւեն նոքա յաճախ ընդ

1 Դիոկլեսիոս. յաշխարհագր. Պողիբ. Ծաղկաբաղ. հրեշտ. Յունասա. տող 63. էջ 5։ գլ. 74. էջ 895։
Սկիւլ. յաշխարհագիրս, էջ 14։ 4 Պողիբ. անդ, գիրք Ե. էջ 357։
2 Թուկիդիդէս, գիրք Գ. գլ. 94։ 5 Նոյն անդ, գիրք ԺԷ. էջ 746։
3 Սարաբ. գիրք Ժ. էջ 433։

ծով, որպէս և ակարնանացիքն և ըկրեցիք Ա-զոլք. զի առ բնակիչս այնր կողման ծովեզերացն ոչ ինչ անիրաւութիւն հանդիպի կամ նախատինք ելուզակութիւնն այն։ Լ.յսորիկ հեռք են բա-ղուց նախնի Հելլենացն. վասն այսորիկ իսկ և ի ժամանակի խաղաղութեան ոչ երբեք դնեն զզէնս 'ի բաց'։ Հաղինք են հեծեալք նոցա 'ի գունդ առ գունդ պատերազմ, այլ 'ի Ճակատեալ ռազմի ոչ այնպիսիք. իսկ Թեսաղացի այրուձին հակառակ նոցին ամենևին։

Յարևելից կողմն Լ.քեղոյս գետոյ գտանին աղ ուռծունք, ևս և 'ի կողմն հիւսիսոյ մինչև 'ի գետն Լ.եստոս 'ի Թրակիա։ Ի ծայրս ևեթ երկայնաձիգ սահմանաց երկրին Թուի գազանացն տիրապետեալ 'ի վայրս՝ զոր սահմանեն գետքն երկոքին, Լ.քեղոյս յարևմտից, և յարևելից Լ.եստոս. քանզի յայլ կողմանս Լ.ուրոպայ անծաւ նօթ ասեն գոլ գնոսա։

Օ.ասուրս ջրոս նաւարկեալ՝, հասաք 'ի Լ.ա-պակոնն քաղաք՝ կառուցեալ 'ի ստորոտս լերին՝, յաշխարհին ըկրեցւոց Ոլոլոց։ Լ.ս ծովեզերքն է մեհեան Պլխիդոնի, և հուպ առ նմին միւս այլ Լ.ստղկան՝ լի նուիրօք։ Լ.ս տեսաք անդ այրիս ոմանս, որ զայնն խնդրել յաստուածուհւոյն դարձեալ ամուսնոս։ Ի վաղիւ անդր վարձեցաք

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 5։
2 Պոլիբ. գիրք Դ. էջ 278։
3 Սկիւլաքս. յաշխարհագրութիւն, հա. 1. էջ 12։
4 Սփան. ուղեւորութիւն, հա. 2. էջ 18։
5 Պաւսան. գիրք Ի. էջ 898։

նաև մի փոքր, որ ած զմեզ 'ի Պագէ նաւահան-
գիստ Մեգարիդեայ, և անտի անցաք Յաթէնս։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Ուղևորել Անդրեասեայ 'ի Մեգարա, 'ի Կորնթոս, 'ի Սիկիոն
և Յաքիայ։

Յետ ձմերեալ Յաթէնս, մնայաք ժամ 'ի ժամ
ուղևորելոյ վերստին։ Մեղ հիւսիսային գա-
ւառս Յլլադայ շրջեալ, մնայր մեզ անցանել և
ընդ պեղոպոնեսականն. և 'ի հասանել աւուրց
դարնայնոց՝ անկաք յուղի*։

Եւ անցեալք ընդ Յելեսիս քաղաք, զորմէ յե-
ւոյ լիցին մեզ բանք, մնաք 'ի Մեգարիդ՝ որ բա-
ժանէ ընդ սահմանս աթենացւոց և կորնթացւոց։
Եւ անդ քաղաքք և աւանք սակաւք. Մեգարա, որ
է մայրաքաղաք նորա, կոչիցէր երբեմն ընդ Լի-
սեայ նաւահանգստին երկոքին մեծ երկայնաձիգ
պատուարօք. այլ յառաջ քան զամն իբր հա-
րիւր, ընտիրք քաղաքին պարսս հանմարեցան կոր-
ծանել զնոսա՝։ Մեղ բազում ժամանակս կացին
անդ թագաւորք՝, և ապա յաջորդեաց ռամկա-
պետութիւն. այլ իբրև Ճարտարախօսք հասարա-

* Յամենան մարտի, 356 և 392։ ամաւ Ղ. Բ։
1 Թուկիդիդէս, գիրք Դ. գլ. 109։ Սարաբոն, գիրք Ի.
2 Պաւսան. գիրք Ա. գլ. 39. և 95։

կաց առ 'ի հաձոյ լինել սմբոխին՝ հրապուրեցին զնա գրաւել զինչ փարթամ քաղաքացոց, այնուհետև կացին նուազ իշխանք[1]. իսկ յաւուրս մեր ռամիին անդրէն կալաւ զիշխանութիւն[2].

Վաղաքս այս մարդ էր երբեմն տէրութեանն ասթենացւոց[3]. և յիշելով նոցա զայս՝ ցանկան վերստին ունել զայն, զի 'ի կարևոր ժամանակի մարթի լինել նոցա 'ի պատանէ[4]։ Այլ նա բազում անգամ զզէնս նոցա յինքն ձգեաց, վասն նախասահմանեալ առնելոյ զնիզակակցութիւն սպարապետացւոց քան զնոցայն։ Այլ պերզպոմնեսական պատերազմանն 'ի նեղ մեծ արկին զնա աւարառութեամբ անդաստանանց նորա[5], և խափանելով զվաճառս նոցա 'ի տարմանաց իւրեանց։

Ի ժամանակի խաղաղութեան մեզարացիք ածեն զվաճառս պարենից յԱթէնս, և մանաւանդ զաղ՝ զոր առատութեամբ ժողովեն 'ի ժայռից շուրջ զնաւահանգստին։ Թէպէտ և անձուկ է յոյժ երկիր նոցա և ապաշնորհ առ քիրսն մշակին որպէս զԼոտիկէ, այլ բազումք են անդ մեծացեալք խոհական տնտեսութեամբ[6], և կէսք ուղղութեամբ[7] որով համբաւին ոչ այլ ինչ 'ի

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 74։ Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 3. հա. 2։

2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 357։

3 Սարաբ. գիրք Է. էջ 392։ Պաւսան. գիրք Ա. գլ. 42. էջ 101։

4 Դեմոսթ. 'ի Փիլիպպ. 3. էջ 93։

5 Թուկիդ. գիրք Ա. գլ. 67։ Արիստոտ. յԱքարն. տող 520։

6 Խոսր. 'ի խաղաղ. հա. 1. էջ 480։

7 Դեմոսթ. 'ի Նեէր. էջ 866։

զաշնս և 'ի տուրևառս 'ի կիր առնուլ՝ բայց զլաս, զնենգութիւն և զզոշաբաղութիւն՝։

Զանցեալ զարու կանգնեցին յաղթութիւնս ինչ պայծառս. այլ իշխանութիւն նոցա այժմ անհետ լեալ է, և մնափառութիւն նոցա բան նուազել զորութեանն յաճախեալ. զի զայն առաւել յիշեն որ ինչ եղենն՝ քան զոր ենն այժմ։ Ինդ երեկս աւուրն յորում հասաք մեք անդր, բազմեալ յընթրիս ընդ գլխաւորս 'ի քաղաքացոց, հարցաք զնոսա զծովամարտ զորութենէ իւրեանց, և ասեն. Զաւուրս պատերազմին Պարսից՝ էին մեր քան նաւք պատերազմիկ 'ի Ճակատամարտին առ Սաղամէաւ[2]։ Ասեմք. Կարիցէք կազմել բանակ հզօր։ Ասեն. Այն մեր երեք հազար զօրք 'ի Ճակատամարտին Պզատեայ[3]։ Ասեմք. Հազմանմարդ է երկիրդ։ Ասեն. Ինպէս երբեմն էր մարդաւէտ, զի հարկ եղև մեզ գաղթականս արձակել 'ի Սիկիլիա[4], 'ի Պրուսիասս, 'ի Թրակեանն Պոնտոս։ Չէ ապա ջանալով 'ի ջրմերս լինել զնենգութեանց ինչ զրոյք զարահամբաւին, պատմեցին մեզ զիրս զայս լուեցեալ յայլոց, որ արժանի զրոցս է յիշատակի։

Ինակչաց աշխարհին մեզարացւոց զէն առեալ ընդդէմ միմեանց, միաբանեցին՝ զի մի 'ի պատ-

1 Արիասոի. յԱ. քարն. տող 738։ Սուրդ. 'ի բառն Μεγαρ.

2 Երոդոտ. գիրք Ը. գլ. 45։
3 Նոյն. գիրք Թ. գլ. 28։
4 Սարար. գիրք Զ. էջ 267։

Հնաց մեղանչեն լեցի գուլ վաստակոց երկրագործութեան։ Օ՛նեսորի ուրուք գերի վարեալ զաք յերկրագործաց, ածեր զնա 'ի տուն իւր, և 'ի սեղան իւր բազմեցուցանէր, և արձակեր զնա առանց առնլոյ 'ի նմանէ զսակեալ փրկանսն։ Այլ գերեալն փութայր ածել զփրկանսն ընդ բաւական լինել ձեռին իւրոյ. և որ դրժէրն դաշին իւրում, չգայր մինչ յօրինաց 'ի վերայ նորա պատուհաս, այլ ամենեցուն ամենայն ուրեք ատելի էր վասն ապերախտութեանն և նախատանաց'։

Յայնժամ ասեմ. Այս ուրեմն ոչ այժմ մինչ առ մեզ գործին իրեղ։ Այլ նորա ասեն. Ա՛յլ, այլ յաւուրսն առաջինս պետութեան մերոյ գործեին։ Այլ ես ասեմ. Վաղ իսկ կասկածելի, զի 'ի դարս անցիսութեան այդոքիկ 'ի ճահ գան։

Ի վաղիւ անդր, և յաւուրսն որ զինի, ցուցին մեզ անդրիս բազուսն. է որ փայտակերտս[2] կարի յոյժ վաղեմս, և է որ ոսկեզէնս և փղոսկրեայս[3] ոչ յոյժ գեղեցիկս, և այլս կճեայս և պղնձիս՝ քանդակեալս 'ի Պրաքսիտեղեայ և 'ի Ակորայ[4]։ Ցեսաք մեք և զկորհրդարսն աւադանսն[5], և այլ շինուածս քարաշէնս 'ի սպիտակափայլ գեւբատաշ կճոյ, յորում կոքղեայ և խրոնամնջնայ երևին կոյսք վիմատաւեալք[6]։

1 Պղատ. ինդ. յան. հա. 2. էջ 295։

2 Պաւսան. գիրք Ա. գլ. 42. էջ 102։

3 Նոյն անդ. գլ. 40. էջ 97. գլ. 42. էջ 101։

4 Նոյն անդ. գլ. 43. էջ 105։

5 Նոյն անդ. գլ. 42. էջ 101։

6 Նոյն անդ. գլ. 44. էջ 107։

Լ'ի քաղաքի անդ զպրոց խմնատասիրութեան հռչակաւոր [1], հիմնեալ Յաւելիգեայ, որ մի'ի բազմաջան աշակերտացն էր Սոկրատայ։ Զի ոչ տարակայութիւն տեղոյ, և ոչ պատուհաս մնհոս սպառնացեալ յաթենացւոց՝ զն մի որ մեզարացի յանդգնեացի կոխել'ի սահմանս նոցա, խափանեին զնա'ի գնալոյ առ վարժապետն. այլ զիշերայն'ի ձև կանացի երթեալ առ նա, և վայրիկ մի ընդ նմա ճառս արկեալ, ապա ընդ այգն դառնայր անդրէն [2]։ Խնդրեին նոքա ընդ միմեանս, թէ յո՞ւր ինչ կատարած բարութիւն հասատատեալ կայցէ։ Սոկրատ որ զամենայն խոյզ և խնդիրս յայն ևեթ ուղղէր, հնարս պարզս'ի կիր արկ առ'ի հասանել այնմ՝. այլ Լաւելիգեա բազմացած'ի գիրս Պարմենիդեայ և ընդելացեալ եղէական աղանդոյն [3], յիմանալեայն ապատանն եղև ուղղ բազմելանդ և յանճարագոյն ևս անգնալի։ Ա՝ Ճնոք նորա հանմանմանք են պղատոնա կանացն. զն ասէր՝ թէ Ճշմարտութեանն պարտ է գոլ մի և միշտ նոյն և անցեալ'ի ինքն իւր նման [4]։ Հարկ էր ապա սահմանել զայլ և այլ յատկութիւնքս. այլ կարեւորագոյնն'ի գիտութիւն գտաւ գժուարիմանալի քան զամենայն։

1 Պրուքք. պատմ. խմատ. հա. 1. էջ 610։

* Զայլոց գպրոցաց գոյցն խնդրողք ասացեալ'ի Թ գլուխ գրոցս։

2 ԱՀ. Դեպ. գիրք Զ. գլ. 10։

3 Դիոգ. Լայրտ. գիրք Բ. յոգ. 106։

4 Կիկերո. ակադ. 2. գլ. 42. հա. 2. էջ 54։

Ալեքսանդրեան դիտութեանս այսորիկ առիթ եղև կարգն վաղու ևս մուծեալ՝ առաջից իւրաքանչիւր զհակառակն մերձ դնելոյ, և վիճելոյ ևեթ զայնցանէ ընդ երկար։ Պարտկոց ինն 'ի ժամանակին յայնմիկ 'ի վեր երևեալ, յաճախեաց 'ի բազում վէճս զշփոթն. զհաւաքաբանութեն ասեմ կանոնս, որոյ հարուածք ահաւորք և անակնկալք զգեանեն զհակառակորդն՝ որոյ չիցէ աջողակութիւն 'ի բաց դարձուցանելոյ զնոսա։ Այս վաղվաղակի բնազանցական նրբաբանութեանցն զտրամաբանականին խորամանկութիւն պատրաստարան գտեալ, բարք զիրաց կալան գտեղի, և մանկտին ոչ յայլ ինչ 'ի դպրոցս վարժէր՝ այլ 'ի գժտութիւն և 'ի հակաճառութիւն։

Այսկղնդէս եմոյծ զայն 'ի դպրոց իւր, այլ թերևս ակամայ իսկ. զի ինքն բնութիւնքն հեզ էր և անհակառակող։ Որոյ եղբայրն նորա պատճառանօք ինչ գժգոհեալ ընդ նմա, յաւուր միում ասէ ցնա ցասմամբ. Զն և ես արասցեն ինձ դիպ, եթէ ոչ խնդրեցից 'ի քէն վրէժ։ Այս Այսկղնդէս ասէ. Այս ինձ ես և ես արասցեն, եթէ ոչ ձգեցից զքեզ 'ի հաշտութիւն։ Այլ նա յաճախագոյնս տեղի ետ ախորժակաց բազմացուցանելոյ զերկբայութիւնս և հերքելոյ զնոսա, ոչ ածեալ զմբտաւ՝ զի խնամտը ստէպ խախտեալք անկանին յեղանակաւ ինն 'ի հաստատութենէ։

Այբոլնդէս միլետացի յաջորդ նորա ած զա-

1 Պլաս. յՍ. Եղբայրսիրութեան, հա. 2. էջ 489։

շակերտս նորա ընդ շաւիղս առաւել և լայնծս և աղաստոց. քանզի Յաղագս հրահանգէր զմի-տս, իսկ Յաբողութիւնս ուժգնեն տատանէր զնոսա. այլ երկաքանչիւր ներհունք 'ի զիտութիւնս և բազմահմուտք էին. և զայս հարկ էր ինձ ազգ առնել ատոտին, մինչև զՅաբողութեայ ձա-ռեալ։

Տեսաք մեք զնա պար առեալ 'ի մանկուց, որք յակՀիռս կացեալ՝ միտ դնէին ամենայն բա-նիցն նորա, և և ակնարկութեանց։ Լոսեցաս նս ընդ մեզ նովին օրինակաւ՝ որով կրթէին զման-կրտին. և՝ 'ի միտ առաք, զի ախորժելի էր նմա վերի-ժականն քան զաղահպանական մնրտ։ Յա աղա-չեցաք տեսանել զՀանդէս ձակատամարտի. և մինչդեռ պատրաստէին հանդերձանք մնրտին, պատմեաց մեզ զի բազումազգի ազգի հաւաքա-բանութիւնս էր իւր հնարեալ 'ի կարի ինն պայ-ծառութիւն խնացուածոց մնաց. ոմն քօղաւոր, այլ ոմն ձաղատ, միս այլ խաբուսիկ, և այլք այլ ազգ անուանակոչեալք'։

Յա ասէ. Ա.յժմ իսկ յանդիման ձեր զոմանս 'ի նոցանէ ածից 'ի հանդէս. և ապա զՀետ եկեսցէ ձակատամարտն զոր խնդրէք տեսանել։ Մի վեր 'ի վերոյ դատիցիք. զի են 'ի նոցանէ որք և զիտս հանձարեղս կարկեն, և արկանեն զնոսա 'ի նեղ՝ ուստի յոյժ դժուարին է նոցա 'ի բաց ելանել[2]։

1 Դեոդ. լայերա. գիրք Բ. գիրք Ի. գլ. 2. հա. 2. էջ յոգ. 108։ Մենադ. անդ։ 87։ Պիկեր. ակագ. 2. գլ. 30. հա. 2. էջ 40։

2 Արիստոտ. յգ. բարոյ.

Եւ ահա երևեցաւ կերպարան մարդոյ սքողեալ յոտից ցղլուխ, և ասէ ցիս Եւբոզիոս. Հա՞ նաչիցես զդա։ Եւ ես ասեմ. Ոչ։ Եւ նա ասէ. Այս ուրեմն լուր ինձ զիարդ խնամատարիս. Դու ոչ ճանաչես զայրդ. իսկ արդ այրդ այդ բաբեկամ քո է, ապա դու ոչ ճանաչես զարբեկամ քո՝։ Եւ 'ի բաց էառ զքօղն, և տեսի՝ զի էր արդարև մի 'ի մանկանց ամենացուց, ընդ որում կապեալ էի մոեբսմանութեամբ։ Եւ ապա դարձեալ Եւբոզիոս 'ի Փիլոտաս, ասէ. Օ՞րինչ է ճաշատն։ Եւ Փիլոտաս ասէ. Ոչ ունի կուսդ զգլուխն։ Եւբոզիոս ասէ. Իսկ եթէ մազ մի 'ի նմա կայցէ, սակայն իցէ՞ ճաղատ։ Փիլոտաս ասէ. Եւ կարի իսկ քաջ։ Եւբոզիոս ասէ. Իսկ եթէ երկու կամ երեք կամ չորս։ Եւ մի ըստ միոջէ յաւելցը զթիւ հերացն, մինչև խոստովանել Փիլոտաս՝ զի այլն, զորմէ խնդիրն էր, ոչ էր ճաղատ։ Կրկնեալ ապա Եւբոզիոսեայ ասէ. Այս ուրեմն մազ մի եւեթ բաւական է առ 'ի չինելոյ ճաղատ, այլ դու զՀայաստանն ասեիր նախ[2]։ Այսր 'ի միտ առցես ինձ, զի ըստ սմին օրինակի և ոչխար մի բաւական է 'ի կազմել զՀօտ՝ և հատ մի ցորենոյ զդրիւ ամբողջ։ Իսկ մեք զարմացեալ կայաք ընդ երկրիմութիս բանիցն նորա գնուն, և այնպէս թուէաք սաղէալ և զումարեալ՝ մինչև հանդիպայն ամենեցուն զբբքիջ բառնալ։

[1] Դ՚ՕՎԿԻԱՆ. յաւելուած լայելոս. գրքի Բ. յոգ. 108. վարուց, հա. 1. էջ 563։ էջ 122։

[2] Մինոգ. առ Դիոգ.

Իսկ խմաստասէրն անխոնջ կրկնեալ անդրէն ասէ. Լ՚հաւասիկ ինձ՝ հոն քան զամենայն հանգոյցս դժուարագոյծ. Կրետացիք հանապազաստուք, ասաց Յովհաննիդէս. իսկ արդ և ինքն կրետացի էր, ապա ուրեմն ստեաց. ապա ուրեմն կրետացիք չեն հանապազաստուք. ապա ուրեմն Յովհաննիդ ոչ ստեաց, ապա ուրեմն կրետացիք հանապազաստուք են՝։ Լա՛ ընդ ասելն զայս, գոչեաց. Ի զէն՝ ի զէն, արիք, կալէք պարհ ստութեան Յովհաննիդեայ։

Յայն բարբառ կողմանք երկոքին, հրընկէց առջք սպառնանկատաք՝ ի մէջ անցեալ բաղխէին ընդ իրեարս, և զդէմ ունէին, և ածէին զմիմեանսիք տարափս հաւաքաբանութեանց և խմաստակութեանց և թիւք տրամաբանութեանց։ Հուպ ընդ հուպ թանձրանայր խաւարն, շփոթէին ռազմք, և յաղթօղք և յաղթեալք ընդ իրեանց զէնս ելանէին՝ ի նոյն ըմբռնեալք յորոգայթ։ Ոչնամանաց բանք ընդ օդս երկուստեք պնդանկէին, մինչև խափանեալ կացին մեծաձայն աղաղակաւն՝ յորմէ սրարն դղրդեցաւ։

Լա՛ իբրև անդրէն սկիզբն լինէր մարտին, փիլ լուտաս ասէ ցՅովհաննիդէս. Ա՛ւ է բարւոք օրինակ մարտիդ, զի կողմն երկաբանչիւր Ձգնի առաւել յեղծումն կարծեաց հակառակ կողմանն քան՝ ի հաստատել զիւրն։ Յաւելի և ես, և ասեմ՝ Ալ ը

1 Գաւանդ. յդ. սպասաք. հա. 1. գլ. 3. եվ 40։ Պայլ. բառարան յարուեանն Եւրոպեայ։

նատակար ինձ թուի տարազ մարտիդ, զի համբակքդ արիագոյնք մարտնչին 'ի յաղթանակ մեր ըրուութեանց քան ՀՀմարտութեան '։ Այլ իբրև պատրաստէր պատասխանի առնել, ազգ եղև մեզ չու կառայն մերոց. և տուեալ նմա ողջոյն հրաժարական, մեկնեցաք 'ի նմանէ՝ ողբալով զդրժպատեհ զառաջանս իմաստակացն, որ զեղծանէին հանճարո

վրվրագէզ աստ անդ բլուրս գործէին սպիտակ, հարթ և խաղաղ մնալով ջուրցն 'ի միջոց վայրս։

Հ աւրն ընդ որ գնայաք՝ երկարաձգի ընդ ասպարէզս իբր քառասուն և ութ[1], խիտ առ խիտ եղևէջիւք մինչև 'ի Արոմիոն նաւահանգիստ և ամրոց կղզնեթացւոց, հեռի 'ի մայրաքաղաքէ նոցա հարիւր և քսան ասպարիզաւ[2]։ ԼՆ ընդ եղը ծովուն յառաջ խաղացեալ ընդ Հանապարհ գիւրին և գեղեցիկ, հասաք 'ի վայրս՝ ուր ընդարձակութիւն նեղցին ոչ ինչ աւելի է քան զքառասուն ասպարէզ[3]։ ԼԶզէր ընակեալք 'ի Պեղոպոնես անդր երբէք երբէք ամրանային, 'ի դիմել 'ի վերայ նոցա հինից թշնամեաց[4]. անդ և խութմեան քրն կատարին տուն խաղուց առ մեհենաւն Պիսիդոնի մերձ յանտառն սոՀեաց նուիրեալ նմին[5]։

ԼՀարհին կղզնեթացւոց անձուկ են յոյժ սահմանք. զի ծովեզերք նորա, ուր առաւել ընդարձակի, աւուր գնացք են նաւու[6]։ Լայն 'ի նմա անդաստանք բերրիք, այլ բազմագոյնք են առասպարք և անբերք[7]. և կութք երկրին յոռի են յոյժ[8]։

1 Պլին. գիրք Դ. գլ. 7. էջ 196։
2 Թուկիդիդէս. գիրք Դ. գլ. 45։
3 Սկիւլաքս յաշխարհագրութ. հտ. 1. էջ 15։ Սորաբ. գիրք Բ. էջ 334։
4 Եբոդոտ. գիրք Բ. գլ. 40։ Խոսկր. հանմեթեն. հտ. 1. էջ 166։
5 Պլինդ. ոգնմպ. տաղերգ. 13. տող 5։ Պաւսան. գիրք Բ. գլ. 1. էջ 112։
6 Սկիւլաքս, անդ, էջ 15 և 21։
7 Սորաբ. գիրք Բ. էջ 382։
8 Ղուկաս. ԱՌԹՆ. գիրք Ա. գլ. 25. էջ 30։

Ի ստորոտ բարձու լերին կառուցեալ կայ քաղաքն, և միջնաբերդ՝ի կատար նորին [1]։ Ի հարաւոյ պարսպի գնա նոցն ինքն լեառն, դժուարագոյն ընդ այն կողմն սեպացեալ. իսկ ընդ այլ կողմանս պատնէշք ամուրք և բարձրաբերձք պատսպարեն զնա։ Շրջապատ նորա է քառասուն սասպարէզ. այլ զի պարիսպքն զկողուք լերինն տապածեալ՝ պարփակէն զմիջնաբերդն, մնրթ է բովանդակ զշրջապատն հասնելոյ ութսուն և հինգ սասպարէզս [2]։

Ի՝ ոտս նորա կրիսականն և սարմնեան եղբերին ծովք, իբր խանարհեալք առաջի երեսաց նորա։ Կրիսականին նաւահանգիստ է՝ Էքեա կոչորդի ընդ քաղաքին կրինակ պատուարաւ, որ ընդ երկոտասան սասպարէզս երկարաձգի [3]։ Իսկ սարոնականին նաւահանգիստ Վենքրեկ հեռի է՝ի Վորնթոսկ սասպարէզս եօթանասուն։

Շինուածք բազումք սրբազանք, և այլք վաղեմիք և արդիք զարդարեն զքաղաքն։ Տեսաք նախ զՀրապարակն՝ պար առեալ շրջէս զայլոց քաղաքաց բազմաց մեհենաք և անդրեաք, և ապա զԹէատրոնն ուր Ժողովուրդն գումարի խորհել զնրաց աշխարհին, և ուր երաժշտութեան և այլոց մրցութեանց լինին գուսպարք՝ կոչորդք տօնեցն [4]։

1 Սարաք. գիրք Բ. էջ 379։ Պաւսան. գիրք Բ. գլ. 4. էջ 121։
2 Սարաք. անդ. էջ 379։
3 Գեան. պատմ. Յուն. գիրք Դ. էջ 522։ Նոյն ՅԱ. գէս. էջ 661։
4 Պաւսա. ՅԱբատ. հտ. 1. էջ 1034։ Պողիեն. յատնատ. գիրք Դ։

Տեսաք մեք անդ և զգերեզման երկոցունց որդւոցն Մեղեայ, զորս կորնթացւոց քարկոծ արարեալ էր, յսոփշտակեալ՝ի բաղնաց՝ ուր մայրն Թշուառական աւանդեաց զնոսա։ Ի պատուհաս անպարշտութենն ախտ ժանտ կորուսանէր զմանկունսն նոցա՝ի խանձարուրս, մինչև հնազանդեալք զիցական հրամանին՝ ուխտեցին առնել ամի ամի զյիշատակ սպանելոցն, որ մեղեգնութեան նոցա լեալ էին Ճարակ՝։ Ա՛յլ ես ըստ Լուրիպիդեայ բանիցն կարծեմի, ասեմ, իւրովի իսկ զշնոյին խողխողեալ զորդիսն՝։ Լա՛ մի ոմն յորոց անդն կային ասէ ցիս. Լուեալ է իմ՝ զի յաւագանւոյն մերմէ կաշառեալ էր քերթողն հինգ քանքարաւ՝։ Ա՛յլ այս որպէս և է, զինչ օգուտ իցէ ծածկել. ՝ի հինաւանդ սովորութենէն իսկ յայտ է, զի մեզոն հաբքն մեր. զի՝ի յիշատակ և՝ի քաւութիւն մեղաց նոցա մանկունքն մեր մինչև՝ի հատակ և՝ի միտս լինել՝ գերծ գըլխով և թիւազգեացք կան՝։

Շաւիղն որ՝ի միջնաբերդն ածէ՝ կամակոր է յոյժ, երեսուն ասպարէզս ցկատար լերինն ազամոդելովն գործեալ՝։ Լա՛ հասաք մեք յաղբերակն որ կոչի Պիրենէ, ուր Ռեղերոփոնի զՊե-

1 Պաւսան. գիրք Բ. գլ. 3. էջ 115։ Եղիան. զան. պատմ. գիրք Ե. գլ. 21։

2 Եւրիպ. ՝ի Մեգ. տող 1271։

3 Պարմեն. ՝ի պարապ. Եւրիպ. ՝ի Մեգ։

4 Պաւսան. գիրք Բ. գլ. 3. էջ 118։

5 Սարաք. գիրք Ը. էջ 379։ Սփոն, Ճանապարհորդ. հտ. 2. էջ 175։

գաս երիվարն ասէն գտեալ։ Յուրտ էն յոյժ և վՃիտ ջուրք նորա[1]. և վասն զի չերևէին եթք ջուրցըն, կարծի ջրանցս անձեռագործս վիմափոր ընդ ժայռս գործելովք ի ջանել նոցա 'ի քաղաքն, և բղխել աղբիւր՝ որոյ ջուր նորա անուանի է Թեթեւութեամբն, և բաւական 'ի պէտս բնակչացն, առանց իսկ յոլով բազմութեան ջրհորոցն որ էն նոցա ամենայն ուրեք գործեալ[2]։

ՊՀուարամնտոյց է յոյժ միջնաբերդն և պատնէշք նորա, և առանց մատնութեան[3] կամ սովոյ անառիկ։ Տեսաք 'ի մուտս նորա զմեհեան Պտղղիան, որոյ պատկեր լուսաձաձանչ զմիւռք պաբածածկի. և առ նմին պատկեր Դրոսի և Պրեզական, որք յառաջագոյն 'ի տեղւոջ անդ պաշտեին, մինչ չև Պտղղիանն պաշտաման մուծեալ անդր։

Ի բարձրադիտակ տեղւոջէն Թուի ՀՀուՀայոյն Թեւարկեալ լինն տիրել ընդ ծով և ընդ ցամաք, ամենարհաւաՀ տեսլեանն կախարդելով զաչս մեր։ Ի հիւսիսոյ մինչև ցՊարնաս և ցԴրիկոն ձգէին աչք. ընդ արևելս ցԴրկնա կղզի, և մինչև 'ի միջնաբերդն քաղաքին սաՀմանացոյց և 'ի հրուանդանն Սունիոն. և յարևմտից ընդ դաշտս պտղաբերս Սիկիլոնի[4]։ Յածէաք զաչս մեր զուար-

[1] Սարաք. գիրք Ը. էջ 379։ ԱԹեն. գիրք Բ. գլ. 6. էջ 43։
[2] Սարաք. անդ։
[3] Պլուտ. յԱրատ. հտ. 1. էջ 1034։
[4] Սարաք. անդ։ Սիսոն. հտ. 2. էջ 175։

ձալեցք ընդ երկաբանչիւր ծոցս, որոց ալիք բա-
խեալ խարտակին 'ի նեղուցն՝ զոր Պինդար նմա-
նագոյնս հանգուցանակէ կամրջի, բնութեանն 'ի
մէջ երկուց ծովուց կառուցեալ զայն՝ առ 'ի կցոր-
դել ընդ միմեանս զերկոսին զլեռսն մասունս
Յելադայ[1]։

Այլ նովին իսկ անհնարին թուի երկուց ցա-
մաքացն ունել ընդ իւրարս կցորդութիւն՝ ա-
ռանց թողութեան կորնթացւոց[2]. և յիրաւի է
համարել զկորնթոս պատնէշ Պեղոպոնեսայ, և
մի 'ի պահակաց Յելադայ։ Բայց նախանձայու-
զութիւն այլոց աղգաց չեթող երբէք կորնթա-
ցւոց արգելուլ զանցս նեղցին, և նոցա զպատե-
հութիւն տեղւոյն յօգուտ արկեալ՝ մեր երեցին
զանձս բազումս։

Որպէս զոյգ ընդ աղաւնեաց եղէն անգեղք յաշ-
խարհի, հանգոյն ինն և ընդ երեւել նաւորդաց 'ի
վեր երևեցան հէնք 'ի ծովս։ Յս վասն զի ընդ
ցամաք միայն էր Յունաց 'ի սկզբան վաճառական
նութիւն, ընդ նեղուցն ևեթ Կորնթոսի էին նման
մեաք 'ի Պեղոպոնես, ընդ նոցն և եղք. և կորնչ-
թացիք 'ի մաքսից անտի երթևեկի վաճառաց
Հոխացան ոչ սակաւ[3]։ Յս յեղծանել իսկ հինից
ծովակամաց, նաւք դեռ ևս 'ի տակաւ հմտութենէ
ղեկավարեալք՝ ոչ իշխէին դիմադրաւ լինել մրբ-

1 Պինդ. խոթմ. տաղերգ. 4. տող 34։ Պարապ. անդ։
2 Պլուտ. Արատ. հտ. 1. էջ 1044։
3 Հոմեր. Եղիսկ. գիրք Բ. տող 570։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 13։

կաց ծովուն, որ 'ի կղզւոյն Կրետայ տարածանի մինչև 'ի գլուխ Մալեայ 'ի Լակոնիա[1]։ Որպէս զի ասէին յայնժամ յառակս. Մոռա զյանկալիս քո 'ի պատել զՄալեաւ[2]։ Այսմն իբրև դիմէին նաւք 'ի ծովս, որ 'ի նեղուց անդր սահմանին։

Վաճառք Խտալոյ և Սիկիլիոյ և ազգաց արևմտեայց զային 'ի նաւահանգիստն Լեքեայ, և վաճառք կղզեաց եգեան ծովուն և ծովեզերաց փոքրուն Ասիոյ և փիւնիկեցւոց[3] 'ի նաւահանգիստն Կենքրեայ։ Այսպէս յետ ժամանակաց սկսան 'ի միոջէ 'ի միւս նաւահանգիստն անցանել ընդ ցամաքը, բարձեալ բերելով զնաւս[4]։ Այլ Կղոնեթոս ընդ Ասիա և ընդ Աբրոսպա ամբարանոց կացեալ[5], ոչ դադարէր 'ի մաքսելոյ զվաճառս օտար ազգաց. և ծածկեաց զծով բազմութեամբ նաւաց իւրոց, և կազմեաց տորմիղ պատերազմիկ նաւաց 'ի պաշտպանութիւն վաճառականութեան։ Յաջողութեամբքն յաւելեալ 'ի հարստութիւն, նորա ձև զնաւս կառոյց. և եռաթիւք նախակառոյցք 'ի նմանէ հարստապետեցան[6]։ Այլ ծովամարտ զօրութիւնն մեծարոյ եղեալ 'ի ծոց իւր ձգեաց զբերս պլոց աշխարհաց։ Ցեսաք մեք անդ 'ի ծովեզերն

[1] Հոմեր. Ոդիս. գիրք Թ. տող 80։ Սոփոկլ. 'ի Տրաքին. տող 120։
[2] Սաթաբ. գիրք Ը. էջ 378։
[3] Թուկիդիդէս. գիրք Բ. դլ. 69։
[4] Նոյն. գիրք Դ. դլ. 15։
Սաթաբ. անդ. էջ 335։
[5] Արիստոտ. խոթմ. 'ի Նեպ. հա. 1. էջ 41։ Պլոս. գիրք Ե. դլ. 3։
[6] Թուկիդիդէս. գիրք Ա. դլ. 13։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 269։

հանապիւռ՝ բեռնոս թղթոց սրտուեայց և առաքաստիցնաւաց ածեալս յԱրգիպտոսէ, փոքրս կոր՝ ի Լիբիոյ, և՝ ի Կիւրենեայ մասէն, խաղոս յԱսորւոյ, արմաւ՝ ի Փիւնիկեայ, զորոս՝ ի Կարքեդոնէ, ցորեան և սմնիր՝ ի Սիրակուսայ [2], տանձ և խնձոր յԱրաբիոյ, և սորուկս՝ ի Փռիգիոյ և՝ ի Լիդեաստիոյ։ Լիմոն զայլ ամենայն աղխատանդիս վաճառաց՝ որ զոր հանապազ զերազուն՝ ի նաւահանդիստս Արլադայ [3], և մանաւանդ՝ ի Կորնթեայն։ Ա՛ ճանաչանք տարաշխարհիկք՝ մանաւանդ փիւնիկեցիք՝ անդր ցանկութեամբ շահու ածեալ ձգին [4], և՝ ի տեսիլ հանդիսի խեթմեան խաղուցն անհամար բազմութիւն տեսողաց [5]։

Եւ վասն զի այս ամենայն յաճախեին զմեծութիւնս ազգին, ձեռագէտք որ՝ ի գործ արկանէին զայնս՝ գտին օգնականութիւն [6], և յաւելին յորդորել զմիմեանս՝ ի նախանձ [7], որք վաղ իսկ անուանիք էին հնարագիտութեամբք պիտանեօք, որպէս ունին զբոյգք զնոցանէ [8]։ Ա՛յլ չկարեմ մանրապատում առնել. քանզի չգիտեմ իսկ հաւաստեաւ որ ինչ՝ ի նոցանէ հնարեցանն։ Ա՛բուեստք՝ ի դուզնաքեայ փորձոյ առնուն սկիզ-

1 Ամոիմ. և Հեբրայեցի առ. Ամենեսոսի, գիրք Ա. գլ. 21. էջ 27։

2 Արիստոփանէս յիմն, տող 834։

3 Ելթեն. անդ։

4 Պինդ. պիւթ. տաղերգ. տող 125։

5 Սոփոք. գիրք Ը. էջ 378։

6 Երոդոտ. գիրք Բ. գլ. 167։

7 Որոս. գիրք Ե. գլ. 3։

8 Պարսպ. Պինդ. ոդեմն. տաղերգ. 13. տող 17։

բէն, ուրեք ուրեք 'ի կիր արկանելով. իսկ իբրև 'ի կատարումն գան, գտիչք նոցին Հանարին այնոքիկ՝ որք յաջողութեամբն 'ի նոսին դիւրեն զնոցայն պիտառութիւն։ Որինակ ինն զդրդանե, որով անօթս բոլորշիս գործէ բրուտն, Լ. փորոս պատմիչ Հմուտ սովորութեանց նախնեաց ասէր ցիս՝ խմաստնոյն Լ.նաբարսեայ մուծեալ զայն 'ի Յոյնս։ Լ.յլ մինչդեռ էի ես 'ի Կորնթոս, 'ի զանծալ իմամ ընդ այն, կորնթացիք Լ. պերբեայ քաղաքացի իւրեանց ետուն զպարծանս Հնարագիտութեան։ և մեկնիչ ոմն Հոմերի եցոյց մեզ 'ի տողից ինչ քերթողին, զի անիւն այն գոյր յառաջ իսկ քան զՎպերբիոս։ Դարձեալ և Փիլոստաս պնդէր, թէ Թաղոսի ուսմանն երիցագունի ժամանակաւ քան զՀոմեր՝ Թոռին Դեդաղեայ ասթենացւոյ՝ Հնարեալ զայն։ Լ.ոդ զնոյն է իմանալ և զբաղմնդունից այլոց Հնարագիտութեանց, զորոց Յոյնք իւրեանց տան զպարծանս՝ Հակառակ միմեանց բերելով վէճ։ Լ.յլ այս ևեթ յայտ է 'ի վերնոյն, զի 'ի վաղնջուց ժամանակաց զարգացուցին նոքա զարուեստս՝ որոց կոչին Հնարագիտք։

Դազումք են 'ի Կորնթոս խանութք և գործարանք։ ընդ ձեռակերտս քաղաքին ցանկալիս

1 Եփոր. առ Սարաբոնի, գիրք Ի. էջ 303։
2 Թէոփր. 'ի Պարապ. Պլնդ. ոլմեպ. տաղերդ. 13. տող 25։ Պլինիոս, գիրք Ի. գլ. 56։
3 Հոմեր. Եղիակ. գիրք ԺԲ. տող 600։
4 Դիոդ. գիրք Դ. էջ 277։
5 Սարաբ. գիրք Ը. էջ 382։ Որոս. գիրք Ե. գլ. 3։

խնդրին վերմակը անկողնոց յամենայն ազգաց՝։ Յանձն յոլովս ծախեալ հաւաքէ նա պատկերս նկարեալս և անդրիս՝ ձեռագործս Ճարտարաց[2]. այլ ինքն չև ևս եցոյց զոք՝ի ձեռագիտաց՝ որ զայն պիսի փառն յանձախեն Լեզուագոյ։ Օ՛ի կամ առ՝ի պերձանս ևեթ զՀետ լինի նա հրաշակերտից արուեստին, և կամ՝ զի բնութեանն անհաղորդական ունելով զիշխանութիւն բաշխելոյ զՀանձարս՝ զնիզրեն ևեթ զայնոսիկ և զյառաջ մատուցանել թողու իշխանաց։ Սակայն՝ի յարգի են կերտուածք ինչ կողնեթականք պղնձիք և խեցեղէնք թրծեալք։ Զեն բոլք պղնձահատք՝ի Կողնեթս, այլ գործաւորք ընդ օտար պղինձն խառնեն խառն ինչ ոսկի և արծաթ[3], և գործեն հրահալ փայլուն և զրեթէ անարատ՝ի ժանգոյ։ Եւ դարբնեն՝ի նմանէ զրահս և սաղաւարտս, պատկերս փոքրիկս, բաժակս և անօթս արդոյս առաւել վասն նիւթոյն ազնուութեանն քան վասն Ճարտարութեան արուեստին. և բազմագոյնք՝ի նոցանէ տերևաձարդք յօրինեալ, և բազմաքանդակք։ Զոլին Ճարտարութեամբ և յանօթս խեցեղէնս ինոյն գործեն զարդս[5]. և նուաստագոյնն՝ի նիւթս՝ի վայելուչ ձևոյն և՝ի զարդուցն որովք յօրինի՝ առեալ զյարգ, լինի նախապա-

1 Հերմիոն. առ Ամենէոն. գիրք Ա. գլ. 21. էջ 27։
2 Պողիբ. առ Սարաբ. գիրքն Ը. էջ 381։
3 Պլին. գիրք ԼԴ. գլ. 2. էջ 640։ Որոս. գիրք Ե. գլ. 3։
4 Կիկերո. տուսկուլ. գիրք Դ. գլ. 14. հա. 2. էջ 340։
5 Սարաբ. անդ։

տիւ քան զքարինս և զՀրահաղ ցանկալս։

Կանայք կորնթացիք անուանի են գեղով[1], և ողբ շահաբերութեամբ և զեղխութեամբ։ Իսան-գարեն զառողջութիւն իւրեանց շուայտեալք 'ի կերակուրս[2], իսկ սեր առ նոսա բնաւ իսկ ապե-բասան ցոփութիւն է[3]. և ոչ միայն չամնչեն ընդ այն, այլ և հնարին բարեքեալ զայն օրինաղրու-թեամբ իմն՝ որ պարտ առնէ նոցա զայն։ Ա՝ և հա-զայն 'ի դիս նոցա է Աստղիկն, և նուիրեն նմա կանայս պոռնիկս հայցել զմնտանկալութիւն նորա, որք յանձկութիւնս մեծամեծս և 'ի մե-տալուտ վտանգս առաջի կան զոհից, և եթանեն 'ի թափօր ընդ այլ քաղաքացիս՝ երգելով օրհնու-թիւնս։ Ի գալ հասանել Աստերքսեայ, ամենե-քին 'ի մաղթանս նոցա ապաւինեցան. և տեսի ես զպատկեր նկարագործ ուղերձելոյ նոցա ուխտս զիցուհւոյն, և ներքնագրոյնն տողք Ալմենիդեայ նոցա մաղթանացն ընծայեն զփառս փրկութեան Յունաց։

Զքնաղ յաղթանակաւն բազմացաւ ազգ քրիս-տուհեացն. և զարդիս որք անշուշտ յաջողութեան իրաց իւրեանց ցանկան, ուխտեն նուիրել Աստղ-կան պոռնիկս թուով, յայլ և այլ կողմանց ածեալ զնոսա[4]։ Այն 'ի նոցանէ աւելի քան զՀազար 'ի Կորնթոս. որք անդր զվաճառականս օտարս ա-

1 Անակր. տաղերգ. 32։
2 Պղատ. յդ. հաս. գիրք Գ. հա. 2. էջ 404։
3 Արիստոտ. 'ի Թեսմոփ.
տոց 655։ Սուտ. 'ի Կորնթ.
4 Աթեն. գիրք ԺԳ. գլ. 4. էջ 573։

ծեալ ձգէն, և 'ի սակաւ աւուրս զնաւորդս ողջոյն ապականէն. ուստի յառակս եղև, թէ ոչ ամենեցուն է գնալ 'ի Կորնթոս[1]։

Այլ պարտ է և ոչ զայն անյիշատակ առնել, զի ընդ ամենայն Աղլադաս կանայք անձնատուրք յայսպիսի պղծութիւնս՝ ոչ ևս իշխէն խնդրել զպատիս. և անդ իսկ 'ի Կորնթոս, ուր բերկրութեամբ ինն ցուցանէն միմեանց զշիրիմ նախնոյն Այիսի[2], 'ի տօնսն զոր պարկեշտ կանայք խմբէն Աստղկան՝ ոչ ումեք 'ի պոռնկաց օրէն է մտանել[3]. և կորնթացիք ողբ զայնպիսի արութիւնս քաջութեան ցուցին 'ի պատերազմին Պարսից[4], մեղկեալք ապա 'ի գրգանս՝ անկան ընդ լծով արգիացւոց, և ստիպեցան խնդրել զօգնութիւն մերթ 'ի սպարտացւոց, մերթ յաթենացւոց և մերթ 'ի թեբացւոց[5]. և յայն վատթարութիւն զառաջեալք՝ զի ոչ այլ ինչ մնացին նոցա պարծանք, բայց Ճոխութիւն և մեղկութիւն և կնատութիւն քան զամենայն ազգս Աղլադայ։

Այնպէս ինձ ասել սուղ ինչ և զիսոխութեանց կարգի տեսչութեան աշխարհին. վասն որոյ հարկ է ինձ յետոյս յառաջին դարս 'ի վեր ընթանալ, այլ ոչ ընդ երկար զկայ առից անդ։

1 Սարաբ. գիրք Ը. էջ 378։
2 Պաւսան. գիրք Բ. գլ. 12. էջ 115։
3 Աղեքս. առ Աթենէոսի, գիրք ԺԳ. էջ 574։
4 Երոդոտ. գիրք Թ. գլ. 104։ Պլուտ. յլ. գիրքն Ե. Երոդոտ. հա. 2։
5 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Դ. էջ 521։

Յամին իբր հարիւրերորդի տասնեւրորդի զկնի տրուվական պատերազմին, երեսուն ամաւ յետոյ քան զդարձ Հերակղեանց, Ալեքսաս 'ի զաւակէ Հերակղեայ կալաւ զթագաւորութիւն Կոստանդնոսի, և զաւակ նորա Ժառանգեաց զայն ընդ ամս չորեքհարիւր եօթնեւտասն, անդրանկին միշտ յաջորդելով զհայրն[1]։ Այսպէս բարձաւ թագաւորութիւն, և անց դէպ զոյն իշխանութիւն 'ի ձեռս երկերիւր քաղաքացոց, որոց ընդ միմեանս եւեթ մարթ էր ասել իսանութիւն[2], և պարտ էր ամենեցուն նոցա լինել յարենակ Հերակղեանց[3]։ Այն ամ մի 'ի նոցանէ ընտրեսան վերակացու լինէր իւրաց աշխարհին, և անուն կոչէր նմա Կաղհապետ։ Որքա արկին մեքս վաճառաց անցաւորաց ընդ նեղուցն, որով Խոնսացեալք՝ չարաչար զեղխութեամբն կորեան։ Յետ ինքեանն անց իշխանութեան նոցա Ալիսեղոս զամիին զիւրեւածեալ[4], յինքն զլաւեաց զիշխանութիւն նոցա։ և կանգնեաց անդրէն զթագաւորութիւն, որ էկաց 'ի տան նորա զամս եօթանասուն և երիս և զվեց ամիս[5]։

Օսկիզն թագաւորութեան իւրոյ արար նշանաւոր հալածանաց և անդթութիւնք, բռնացեալ յամենայն քաղաքացիս՝ որոց հանդիպեաց

[1] Դիոգ. առ Սիմնիկղեայ, էջ 179։
[2] Երոդոտոս, գիրք Ե. գլ. 92։
[3] Դիոգ. անդ։
[4] Ն. Գ. 658 ամաց։
[5] Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 10. հա. 2. էջ 403։

կածելի էր նմա, զկիսս աքսորեաց, զայլոց զրա-
մեաց զինչս, և զբազումս էառ սպանանել՝։ Այլ
առ՚ի տկարացուցանել և էաս զկողմն մեծատանց՝
զամն տասն էնար տասանորդս յամենայնէ, պատ-
ճառանօք իբր թէ ուխտեալ էր նախ քան զթա-
գաւորելն[2], և պարտ էր նմա կատարել զուխտն,
կանգնելով առ ողնմպիական մեհենին անդրի
հոկայաձև ոսկիազօծ[3]։ Այլ իբրև բարձաւ՚ի նը-
մանէ երկիւղ, ապա այնուհետև հնարէր սիրելի
լինել, և առանց թիկնապահաց և պատրաստու-
թեան արտաքս ելանէր[4]։ Այլ ժողովուրդն վստա-
հութեամբն նորա քաղցրացեալ, ներեաց դիւրա-
բար անիրաւութեանցն որոց չէր ինքն լեալ նշա-
ւակ, և եթող նմա խաղաղութեամբ վէճարել
զկեանսն՝ թագաւորեալ զամն երեսուն[5]։

Պերիանդրի որդւոյ նորա սկիզբն թագաւորու-
թեանն եղև իբրև զվախճան հօրն, աւետելով
աւուրս բարեկենդանութեան և խաղաղութիւն
անշարժ։ Զարմանալի էր հեզութիւն նորա և
խնամատութիւն և խոհեմութիւն, և օրէնք զորս
սահմանեաց՚ի վերայ այնոցիկ որոց բազմութիւն
ստրկաց էին, և որոց եկք յաւելային քան զմա-
տրս, և՚ի վերայ այնոցիկ որք անկղնտանային՚ի

Երոդոտ. գիրք Ե. գլ. 92։ Պողլեն. ՚ի մարթանան, գիրք Ե. գլ. 31։

2 Արիստոտ. յդ. խնամոց ընտանեաց, գիրք Բ. հտ. 2. էջ 501։

3 Պլատ. ՚ի Փեդր. հտ. 3. էջ 236։ Սոքրատ. գիրք Ե. էջ 378։

4 Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 12. էջ 411։

5 Երոդոտ. անդ։

գժնդակ ոճիրս և 'ի զեղծ բարս։ Կացոյց նա ա-
տեան խորհրդոյ, և ոչ ինչ յաւել հարկս՝ շատ
հանդրեալ զմնաքս վաճառացն. կացոյց նաւս բա-
զումս, և առ 'ի բազմաւաճառս վաճառականու-
թեան խորհեցաւ հատանել զնեղուցն, և զծով
'ի ծով խառնել[1]։ Յուժկալ եղև պատերազմաց, և
յաղթութիւք նորա զերահաչակ արարին զքաջութի
նորա[2]։ Յս որոց ուղղութեաց չէր օրէն ակն ունել 'ի
թագաւորէ, որոյ շրթունք նորա թուէին զործա-
բան իմաստութեան։ Սովորութիւն իսկ էր նորա
ասել, թէ առաւելագոյն սէր մեծութեանց զըր-
պարտիչ է բնութեան. և թէ անցանեն հա-
ճոյք, իսկ առաքինութիւնք կան և մնան յաւի-
տեան[3]. և թէ աղատութիւն ճշմարիտ յամբիծ
խիղճ մնաց է[4]։

Ի կարևոր վտանգի խնդրեաց նա խորհուրդ 'ի
Ավասիբուղեայ որ թագաւորէրն 'ի Պիկետն, և
ընդ որում էին նորա զոգբ բարեկամութիւն[5]։ Ավա-
սիբուղ ած զՀրեշտակ նորա 'ի դաշտ, և ՀԵմ
առեալ ընդ որայս բազմահունձս, հարցանէր զնա
վասն որոյ իրաց եկեալն էր. և 'ի զգնաալն իւրում
հարկանէր զՀասիս 'ի վեր քան զայրն ամբար-
ձեալ։ Յս Հրեշտակն ոչ ինչ խմացաւ, զի Ավա-
սիբուղ յանդիման առնէր նմա ակնարև զօրէնս
յոլովից կարգաց պետութեան, և և ռամկապե-

[1] Դիոդ. լայբրա. գիրք Ա. յոդ. 99։
[2] Արիստոտ. գիրք Ե. գլ. 12. էջ 411։
[3] Պատ. Հառ. 3. էջ 46։
[4] Գոյն. Հառ. 25. էջ 192։
[5] Երոդ. գիրք Ա. գլ. 20։

տականին, յորս չէ օրէն իւրաքանչիւրոց ունոյց կարի պայծառանալ և գերարգոյս լինել[1]։ Պայց Պերիանդրս քաջ 'ի վերայ եկայ բանիցն, և յաւել 'ի չափու ունել զանձն[2]։

Պայծառ յաղթութիւնք, և փառաբաշխն զոլեստք ընդոստուցին յետոյ ուրեմն զբռնութիւն բարուց նորա, զոր միշտն սանձահարեալ ունէր. և 'ի ժամ բարկութեանն, սրտմտեալ թերևս առ մեղնախանձ սիրոյ, սպան զՊՊելիսա կին իւր զոր ոգւով չափ սիրէր[3]. և անդ վախճան եղև բարեկենդանութեանն նորա և առաքինութեանց։ Դառնացեալ ընդ երկար սգոմ յաւել և ևս 'ի նոյն, իբրև զիտաց զի ժողովուրդն փոխանակ կամ ըեկիցս լինելոյ ընդ նմա՝ ամբաստանէր զնա պղծեալ երբեմն զանկողնոյ հօրն[4]։ Այս առ կասկածանաց ոչ ևս մեծարելոյ 'ի ժողովրդենէ, բնաւ իսկ իշխեաց արհամարհել զմեծարանս նորա. և ոչ զմնաւ ածեալ, զի են անիրաւութիւնք զորոց պարտէ թագաւորի գթութեամբ ևեթ խնդրել զվրէժ, ծանրացոյց զձեռն իւր 'ի վերայ ամենայն ժողովրդեան, կացոյց զնուրբ թիկնապահս[5], բրնոնացաւ յայնոսիկ յորս հօր նորա խնայեալ էր, կամ զոսպտեաց մնոտի պատճառանօք 'ի տիկնայ կորընթացոց զչքնաղ զարդս և զամ՝որ ինչ ցանկալի

1 Արիստոտ. յդ. հաս. գիրք Գ. գլ. 13. էջ 355։
2 Պլուտ. 'ի կոչունսն, հատ. 2. էջ 147։
3 Երոդոտ. գիրք Գ. գլ. 50։ Դիոդ. բիբլիոտ. գիրք Ա. յոդ. 94։
4 Դիոդ. բիբլիոտ. անդ։
5 Նոյն անդ, յոդ. 98։

էր նոցա՝, և չարչարեր զժողովուրդն՝ի խիստ զոր-
ծս ծառայութեան։ Իսկ ինքն անդադար՝ի կաս-
կածանս և յարհաւիրս կայր, և պատուհասէր
զամենեղ քաղաքացին որ նստէին խաղաղ՝ի հրա-
պարակի[1], և դատապարտեր որպէս մեղապարտ
զամենայն ոք որ կարէին մեղանչել նմա։

Զչէտք առանին յաձախեցին զահափետս նո-
ցա. քանզի Իկոփրն՝ հուսկ կրտսերագոյն յոր-
դիսնորա՝ գիտացեալ՝ի հաւոյ իւրմէ զողորմ մահ
մօր իւրոյ, այնպէս ոխայր ընդ սպանողին՝ մինչև
չհանդուրժել տեսոյ նորա, և ոչ պատասխա-
նել բանից նորա։ Գոգումանք և թախանձանք
ընդունայն վասնեցան, և հարկ եղև Պերիանդրի
պատաքսել զնա՝ի տանէ. արգել քաղաքայ-
նոց՝ մի ումեք ընդունել զնա՝ի տուն, և մի խօ-
սել ընդ նմա, և որ ոչ հնազանդեսցի հրաման-
նին՝ տուժեսցի տուգանս մահենին։ Զբ-
քայորդին պատասխանեցաւ՝ի կամարակալ գաւառ-
թին հասարակաց անօգնական և անտրտունջ, լաւ
համարեալ կրել զամենայն վիշտս՝ քան մատնել
զաբարեկամն իւր՝ի մոլեգնութիւն բռնաւորին։
Չ յետ աւուրց դէպ եղև հօրն տեսանել զնա,
և յուզեցան գութքն հայրենի. և ընթացեալ առ-
նա, զամենայն ողբանս՝ի կիր էարկ, այլ՝ի զուր.
զի պատասխանի ետ նմա որդին և ասէ. Հակա-

[1] Երոգոս. գիրք Ե. գլ. 1104։
92։ Վեղ. լայերս. գիրք Ա. յոգ. 97։ Պլուտ. հտ. 2. էջ 1104։
[2] Նիկոդ. գամասկ. ի Ծաղ. կարաղ. Վ. ջրէսի, էջ 450։

ռակ հրամանիդ քում գործես, և պարտապան ես տուզանաց։ Այլ իբրև խորհուրդ կալաւ հայրն ազատել զնա 'ի Կորկիւրա կղզի, զոր ընդ իւրև նաւաձեալ էր[1]։

Զրտմնութիւն զիցն ետ նմա երկայն աւուրս, որպէս զի 'ի խղձէ չարեաց ընդ երկար տանջեսցի։ Եւ ես ժամանակ էր նմա ասելոյ որպէս յառաջն, թէ լաւ իցէ նախանձ արկանել յայլ քան զգութ[2]. վշտակրութիւնք հարկեցուցին զնա խոստովանել՝ զի լաւ է ռամկապետութիւն քան զբռնաւորութիւն[3]։ Եւ 'ի խորհրդակցելն ուրուք նմա հրաժարել յաթոռոյ, ասէ. Զղուկ եմ ես, զի հաւասար վտանգ է բռնաւորի ինքնել յաթոռոյ և անկանել[4]։

Եւ իբրև բեռն իրաց աշխարհին ես քան զես ծանրանայր 'ի վերայ նորա, և անդրանիկն նորա ապիկար էր ձեռնտու լինել նմա[5], խորհուրդ կալաւ կոչել առ ինքն զ Լիկտիրոն. այլ նա մերժեաց ցաստմամբ զամենայն հրաւէրս նորա։ Եւ նորա յանհնարս լեալ՝ եդ 'ի մտի հրաժարել 'ի թագաւորութենէ, և ինքնահալած գնալ 'ի Կորկիւրա, որպէս զի որդի նորա մեկնեալ անտի գնասցէ թագաւորել 'ի Կորնթոս։ Եւ մինչդեռ խորհուրդն 'ի կատարումն գայր, կորկիւրա-

1 Երոդոտոս, գիրք Գ. գլ. 52։
2 Նոյն անդ։
3 Պոլ. Ճառ. 3. էջ 46։
4 Նոյն, Ճառ. 41. էջ 247։
5 Երոդոտոս, անդ. գլ. 53։

ցիք զարհուրեալ յերեսաց բռնաւորին՝ կարձեցին զկեանս որդւոյ նորա[1]։ Զեհաս հայրն նորա և ոչ սփոփանաց՝ի լուսն ածելոյ զարժանի վրէժխնդրութիւն վատ դատաձանութեանն։ Օ՛ի իբրև պատանիս երեքարիւր յաղատաց կորկիւրացւոց հանեալ՝ի մի՝ի նաւաց իւրոց յղէր արքային լիւդացւոց, ՝ի հասանել նաւուն՝ի Սամոս՝ բնակիչք կղզւոյն զթացեալ՝ի թշուառութիւն եղկելեացն, զերծուցին զնոսա հնարիւք առ իւրաքանչիւր ընտանիս[2]։ Պերիանդր առ զայրոյթ ապիկար սրտմտութեանն մաղեալ, վնասեաց զկեանս իւր առնոյ իբրև ութսնից, թագաւորեալ զամս քառասունեւչորս[3]*։

Լ՚նդ խնամեալ նորա զաչս՝ բարձան յիշատակարանք և հետք իսկ բռնաւորութեան՝ի միջոյ[4]։ Այլ անծանօթի ուրումն զհետ նորա յաջորդեալ, զերեսամեանթ թագաւորեաց[5]. քանզի յետ սուղ ժամանակին գումարեալ կորնթացւոց ընդ սպարտացիս[6], կանգնեցին զկարգ տեսչութեանն՝ որ մինչև ցայժմ եկաց մշտատև, զի նուազունք՝ի նմա իշխեն քան թէ ռամիկն, և իբր կարևորք ոչ՝ի մտահաձոյ վնիռ ամբոխին հաստատեալ կան անդ[7]։ Պաւաւեալ քան յայլ ամենայն քաղաքս

[1] Երոդ. գիրք Գ. գլ. 53։
[2] Նոյն անդ, գլ. 48։
[3] Արիստոտ. յղ. հաս. գիրք Ե. գլ. 12. էջ 411։
* Ն. Ք. 585 ամաւ։
[4] Պլուտ. յղ. չար. Երոդոտեայ, հատ. 2. էջ 860։
[5] Արիստոտ. անդ։
[6] Պլուտ. անդ, էջ 859։
[7] Նոյն՝ի Դիան, հատ. 1. էջ 981։

Յշատակս կացին 'ի Կոստանդնուպոլիս արք քաջք յառաջ-նորդութիւն[1]. և նոքա խնամութեամբն իւրեանց և հմտութեամբ այնպէս հաստատուն կալան զահմնադրութիւնն, զի նախանձայուզութիւն ոմանցին ընդդէմ ազատանուցն ցկարաց էր բէք զրդուեցուցանել զայն[2]։

Ի խորհրդանշանութեան երկոցունց դասուցս քաղաքացոց էբարձ Լիկուրգոս 'ի Սպարտայ. իսկ Փիլոն մի յօրէնսդրացն կոստանացոց, և որպէս թուի՝ ժամանակակից Լիկուրգեայ կացեալ, պարտ վարկաւ պահել զայն 'ի Կոստանդնուպոլիս։ Բանզի քաղաքի կառուցելոյ 'ի տեղւոջ՝ ընդ որ արահետ Ճանապարհն էր վաճառականութեան, և որում հարկ էր հանապազ ասպնջականել զՀելլս, ոչ էր պարտ զնոյն ունել զգուշութիւն՝ որ ինչ քաղաք մեկուսի յանկեան ուրեք Պեղոպոնեսայ կացեալ։ Այլ Փիլոնի թողեալ զանհաւասարութիւն բաղդի նոցա, զնոյն հոգ զգուշութեան կալաւ 'ի սահմանել զքիւ ազգատոհմից և քաղաքացոց[3]։ Որ ինքն այս 'ի Ճահ գային վաղնջուց դարուցն, յորս մնարդիկ 'ի սակաւաւոր միաբանութիւնս բաժանեալ էին, և ամենայն պէտք նոցա սահմանեին 'ի պարէնս կենաց, և ամենայն ցանկութիւն նոցա յասպահովութիւն անձանց. շատ էր ազդաց իւրաքանչիւր ունել բազուկս բա-

[1] Պարար. գիրք Ը. էջ 382։ Պլուտարք. 'ի Դիոն. հատ. 1. էջ 981։

[2] Պոլիբն. 'ի մարքիանան, գիրք Ա. գլ. 41. յոդ. 2։

[3] Արիստոտ. յղ. հատ. գիրք Բ. գլ. 6. էջ 321։

ւականս 'ի մշակել զերկիր, և զբարութիւն բաւա-
կան զգէմ ունելոց հինից արշաւանաց։ Բ. յս
խնամք անցեալն կացին միշտ առ Յոյնս. խնամ-
տասէրքն նոցա և օրէնադիրքն գիտելով՝ զի բազմա-
մարդութիւն պատճառք են մեծութեանց և ան-
լուռելի պատերազմաց, ոչ միայն չօժանդակեցին
այնմ՝ այլ և զամենայն խնամ կալան 'ի խափա-
նել զառաւելագոյն բազմութի[1]։ Խնամտասէրքն
այնու իսկ զի ոչ կարի արդոյ հանդերձն զկեանս,
յայտ է թէ չհանդերձն կարևոր զանձուն ազգի
մարդկան. իսկ օրէնադիրքն յանձուկ ևեթ սահ-
մանս ամիտիւեալ զուշ իւրեանց, երկեան միշտ
խնդել զայն բնակչաց՝ որ սպառեն զբարութիւնս
երկրին։

Բ. յս էին կարևորագոյն պատճառք, վասն ո-
րոյ երբեմն 'ի նաւահանգստիցն Աղլադոյ բազ-
մագունդ գաղթականքն չուեալ տարադէմ գնայ-
ին բնակել 'ի ծովեղերս ամպիս[2]։ Բ.ստի 'ի Կորին-
թոսէ եկ գաղթական Միրակուսա, զարդն Սի-
կիլիոյ. ստի Կորկիւրա, որ երբեմն զշնոյ եկաց
ընդ ծով[3]. ստի Բ.մբրակիա Հ.ալիրոս, զորմէ
խօսեցայ 'ի վերոյ *, և բազում այլ ևս քաղաքք
սառաւել կամ նուազ բարգաւաճք։

Ոչ մեր կարի հեռի 'ի Կորնթոսէ կայ Սիկիոն.
և անցեալք ընդ գետս բազումս, հասան անդր։

[1] Պղատ. յՊ. գրք Ե. գլ. 3.
Հմ. 2. էջ 740։
[2] Նոյն անդ։
[3] Թուկիդ. գրքք Ա. գլ. 25. գրքք Զ. գլ. 3։
* Յերեսուն և վեցերորդ գլուխ գրոցս ուղղութեանս։

Միկիոն բերէ ցորեան և գինի և ձէթ առատ[1], և է մի 'ի գեղեցկազոյն և 'ի Հոխազոյն գաւառացն Լեղեայ[2]։

Զոր կնոջն են խիստ 'ի Միկիոն, մի զոր Թաղէլ 'ի քաղաքին[3]. և տեսաք մեք զՀանատպարհայն յաջմէ և յահեկէ շրիմն, որոց ձեռք ոչ անդրացուցանեն զգեղ վայրացն։ Ի սուղ ինչ որմ սիւնք շուրջանակի ամբարձեալ յարկածածուկ շրջապատեն զերկիրն՝ ուր գերեզմանքն են. անդ աւանդեն զմեռեալս ընդ հողով, և յետ օրինաւոր արարողութեանցն՝ յանուանէ զնոսա ողջունեն յուզարկաւորքն, զվերջինն տալով նոցա հրաժարական ողջոյն[4]։

Լա է էին բնակիչք քաղաքին 'ի հանդերձանս տարեկանաց ինչ տճնից, զոր 'ի գիշերին յայնմիկ կատարէին։ Ընդրիս բաղումն վաղեմիս 'ի խրդկանէ ուստեք ուր պահեալ կային՝ հանին արտաքս, և ընդ փողոցս գնոսա ածեալ՝ աւանդէին 'ի մեհեան Դիոնիսեայ։ Բազմի գնայր պատկեր աստուածոյն, այլք զկնի հետևէին. և բազմութիւն ջահիւ պայծառացուցանէր զհանդէսն, և երգէին եղանակօք օրհնութիւնս՝ որ ոչ այլ ուրեք են ծանօթ[5]։

1 Ուրբաթ, օրագր. գիրք Զ. էջ 443։
2 Աթէն. գիրք Ե. գլ. 19. էջ 219։ Լիս. գիրք ԻԵ. գլ. 31։ Պարապ. Աբիստոփ 'ի Հաւան, տող 969։
3 Պլուտ. Արատ. հա. 1. էջ 1051։
4 Պաւսան. գիրք Բ. գլ. 7. էջ 126։
5 Նոյն, էջ 127։

Ակիմանացիք զՀիմնարկութիւն քաղաքին իբրեանց յոյժ 'ի վեր ածեալ երիցայուցանեն հաստակ իմն աւանդութեաց այլոց ազգայ։ Արիստրատ՝ առ որում իջևանեալն էաք, եցոյց մեզ զգաւազանս բազմութեան թագաւորաց որ կալան զաթոռն ընդ ամս հազար, և կրտսերագոյնն 'ի նոցանէ եկաց զրեթէ ժամանակակից տրոյական պատերազմին[1]։ Այլ մեք աղաչեցաք զնա՝ մի յոյժ անդուստ 'ի վերուստ առնել սկիզբն պատմութեանն, այլ յերիս կամ 'ի չորս դարս և էթ 'ի վեր ընթանալ. իսկ նա ասէ. Ոչ այնու ժամանակաւք կացին կարգ թագաւորացն՝ որ բռնաւորքն կոչին, զի ամենեքին ինքնիշխանք էին. և ոչ զտին նոքա այլ հնարս հաստատուն ունելոյ զիշխանութիւն իւրեանց ընդ դար մի, բայց 'ի չափս ունել զայն՝ պատկառ կալով օրինաց[2]։ Որ թագաւորաս առաջին 'ի նոսա եկաց, և Ալեսթենէս վերջին։ Դիք որք դէղս սաստիկս ուրեք ուրեք 'ի սաստկանալ չարեաց 'ի կիր արկանեն, յարուցին զնոսա զերկոսին թագաւորս՝ առ 'ի բառնալ 'ի մէնջ զազատութիւնն դժնդակ քան զծառայութիւն։ Որթագորաս հեզութեամբ և խոհակաութեամբ իւրով սանձահարեաց զանդգնութիւն խռովարարաց պառակտելոց[3]. իսկ Ալեսթենէս

1 Կատարք, 'ի ժամանակագիր. Եւսեբ. գիրք Ա. էջ 11։ Պաւսան. գիրք Ի. գլ. 7. էջ 127։

2 Արիստոտ. յոլ. հատ. գիրք Ե. գլ. 12. էջ 411։

3 Պլուտ. յոլ. յամբ վիթ. ժուց գիր, հատ. 2. էջ 553։

սիրելի եղև առաքինութեամբքն, և քաջութիւնն իւրով ահարկու։

Մինիկոնեան աշխարհաժողովն՝ի գումարել զազգս Հայաստանեայ ընդդէմ կիսացուց* ամպարշտեալ՝ի մեհեանն Դեղփեայ՝ կացոյց մի՝ի զօրավարաց զԿիսթենէս, որ մեծախոհութեամբն իւրով խոնարհէր յաձախ՝ի խորհուրդս Աստուծոյ՝ որ՝ի բանակի անդ էր՝։ Եւ՝ի կատարած մարտին Կիսթենէս զմտն աւարին որ նմա անկ էր՝ ծաւխեաց՝ի կառուցանել գաւիթս բազմակամարս կապ մեծաբերձս՝ի մայրաքաղաք Թագաւորութեան իւրոյ[1]։

Դէպք ինն յաձախեցին և ևս զհամբաւ իմաստութեան նորա։ Ի կառաջնում ողիմպիական տօնից յաղթեալ նորա՝ի քառաձին, և այն ինչ անուն նորա հռչակեցաւ, քարոզ՝ի մէջ անցեալ՝ լու՝ի լու անհամար բազմութեան՝ի զնին կացելոցն հրատարակեաց, զի որոց օրէն էր ցանկալ հարսանեաց Գարիստեայ դստեր Կիսթենեայ՝ գայցեն ամենեքին՝ի Ակիկոն մինչև ցաւուրս վաթսուն, զի յամէ ևս յայտնեսցի փեսայ արքային[2]։

Ի աղվաղակի յամենայն կողմանց Հայաստանեայ և Խաղիոյ դիմեցին անդր ամենեքին, որ պատ-

* Իբր 596 ամաց՝ն։ Փ։

1 Պաւսան. գիրք Ա. գլ. 37. էջ 897։ Պղնձեն՝ի մարմանն, գիրք Գ. գլ. 5։

2 Պաւսան. գիրք Բ. գլ. 9. էջ 133։

3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 126. էջ 496։

Հառանոք ինչ արժանի համարէին զանձինս փա-
ռաց խնամութեանն։ Զնդ նոսա էր և Օ մինդի-
ընդէս փարթամագոյնն և բարեկեցիկ քան զա-
մենայն սիբարացիս. և եկն նա պատերազմիկնա-
ւաւ միով որ իւրն էր, ածեալ ընդ իւր հազար մի
'ի ստրկաց իւրոց՝ ձիոտոս, հաւրոս և խահման-
քըս՝։ Այս թէ տեսանէր շինականի ուրուք ձգեալ
ուժգին զբրիչն, թուէր նմա թէ կեղեքէին աղիք
իւր. և ոչ կարէր 'ի բուն լինել եթէ մի՝ 'ի թերթից
վարդենեաց՝ որովք ծածկէին պատատակաքն սն-
կոլոց նորա՝ զտանէր ծաղեալ՝։ Վարկութեան
նորա ոչ ինչ այլ հաւասարէր՝ բայց սնափառ
պերճութիւն նորա, և ոչ ինչ այլ մնափառու-
թեան նորա՝ բայց յանդգնութիւն իւր։ Յաւուր
յորում եհաս նա 'ի Միկիսն, ընդ երեկս 'ի ժամ
ընթրեացն չկամէր թէ որ առ իւր բազմեսցի,
բայց միայն 'ի զատերկ արքայի՝ եթէ լցցի նա իւր
'ի հարստութիւն։

Զնդ ոսոխս նորա էին Լաւոկեդէս արգիայցի
'ի վաղնջուց ազգատոհմէ, Լափան արկադացի
'ի զաւակէ Լաբիրինթի՝ զորմէ ասէն զդիսակաւ-
բացիսն ասպնջականեալ զԼաստոր և զՊողիկեւ-
տիս, Այ՝ Եգակղէս 'ի տանէ աղվմէոնեանց՝ որ հզօ-
բագոյնն էր յԱթենս, Լպոկղեդէս ծնեալ 'ի նը-
մին քաղաքի՝ երևելի հանճարով և մեծութիւնք

1 Դիոդ. 'ի ծաղկաց. վա-
զես. էջ 230։ ԱԹԵՆ. գիրք
Զ. գլ. 21. էջ 273։

2 Սենեկա, յղ. բարկ.
գիրք Բ. գլ. 25։ Եղիան.
զան. պատմ. գիրք Թ. գլ. 24։

և գեղով[1], և այլք ուրեքին պէսպէս բարեմասնութեամբք բաւականք՝ ի մաքառել ընդ այնպիսի ոսոխս։

Օ՛ որ հանապազ տօնք և խրախուսանք էին յարքունիս Ալիկիանի, և բաց եր ասպարէզն առաջի ախոյանաց՝ մրցել՝ ի հետի ընթացս և յայլ ազգի ազգի մրցութիւնս։ Ալսութենէս տեղեկացեալ նախ ազգատոհմից նոցա իւրաքանչիւր, ՝ի զնին կայր մարտից նոցա, և խնամով միտ դնէր բուսոյ բարուց նոցա, մերթ՝ ի հասարակաց զրուցատրութիւնս, և մերթ՝ ի խօսելն ընդ նոսա առանձինն։ Օ՛անխուլ ինն բերմամբ ձգէր զառաջինն յերկոսին և սութենացիսն, այլ ապա շնորհք և վայելչութիւն Պոկղիդեայ բովանդակ զրաւեցին զսիրտ նորա[2]։

Յաւուր յորում զընտրութիւնն առնելոց էր, ընդ առաւօտն արջառք հարիւր մատուցան՝ ի զոհ, և ապա ետ Ձաշ մեծ՝ յոր հրաւիրեցան սիկիոնացիք ամենեքեան ընդ հանդերձեալսն՝ ի փեսայութիւն։ Յարեան՝ ի սեղանոյ, այլ չև և վախճանեալ զինեղբուսաց. և լինէին վէճք երաժըշտականք և այլ և այլ մրցմունք։ Պոկղիդէս որ յամենայնի գեր՝ ի վերոյ գտանէր, յամենայն՝ ի զրոյցս. և ապա յանկարծ պատուէր ետ նուագածուին ածել յայտնի ինչ նուագ, և սկսաւ կայթրս տափակաս հարկանել այնու ինծանօք՝ զի

[1] Երոդոտ. գիրք Զ. գլ. 127։ [2] Նոյն. գլ. 128։

'ի ցասումն զրգէր զԱլեսթենէս։ Այլ ետ 'ի մէջ բերել բեմ, և անդր ընդոստուցեալ՝ նախ զսպարտական յօրինէր կաքաւս և ապա զաթենական։ Իսկ Ալեսթենէս զայրացեալ ընդ անձամբ գործս նորա և ընդ թեթեւամտութիւն, ժայժ ունէր. այլ երբեմն ետես զնա զլե'ի վայր յափս 'ի թերս յեցեալ՝ շարժուածս առնելով ոտիւքն պէսպէս, գոչեաց առ նա և ասէ. Օ՜ աւակդ Տիսանդրի, 'ի լուծումն հարսանեաց քոց կաքաւեցեր։ Լսեսթենացւոյն պատասխանի տուեալ, ասէ. Լրդուեալ 'ի դիս, տէր արքայ, զի Խպոկղիդէս ոչ կարի ինչ հոգայ ընդ այն։ Յայն բան՝ որ յառակս իսկ պատշաճեցաւ', Ալեսթենէս լուեցոյց զամենեսին, և պատուասիրեալ զընկերս նորա՝ պարգևեաց իւրաքանչիւր նոցա քանքար մի արծաթոյ, և ծանոյց փեսայ իւր զԼեգակղէս որդի Զկմէնի։ Լսէ 'ի զառակէ սոցա ծնաւ մեծն Պերիկղէս ըստ մայրենի ազգին[2]։

Յաւել Լրիստոտոտ, զի յետ Ալեսթենեայ մեռանելոյ ատելութիւն մեծատանց և ռամկին ընդ միմեանս, ախտն այն անբուժելի հասարակապետութեանցն Լակեդայ, ոչ դադարէր պատակտել զհայրենիսն, և զի 'ի յետին ժամանակս Լսփրան ոմն սիկիոնացի ճարտարութիւն զբռամբ ածեալ զամենայն իշխանութիւնն[3], կարաւ զայն առ ժա-

[1] Պլուտ. յԼ. էաք. Երոդոտ. հա. 2. էջ 867։

[2] Երոդոտոս. գիրք Զ. գլ. 131։

[3] Քսեն. պատմ. Յուն. գիրք Ե. էջ 623։ Դիոդ. գիրք Ժ. էջ 382։

մանակ մի, և ապա կորոյս. և սպանաւ յանդի-
ման աւազանուոյն Ավերայ, ուր երթեալն էր խըն-
դրել՝ի նմանէ զօգնութիւն։ Ոչ իշխեցին թեբա-
ցիք խնդրել զվրէժ՝ի սպանողաց ամբաստանե-
լոյն՝ի բռնաւորութիւն. իսկ ժողովուրդ Վիկիո-
նի, որում Լևփրոն թեւարկէրն միշտ, կանգնե-
ցին նմա շիրիմ՝ի հրապարակի, և պատուէն գնա
ցարդ որպէս գերազանցեալ՝ի քաղաքացիս և մի
յահոյանաց իւրոց[1]։ Սակ ես ոչ գովեմ զ Լևփրոն,
ասէր Էրիտրատ, զի՝ի նենգութիւնս բազում
անգամ՝ ապաստանեցաւ, և ոչ ջանացաւ հաՃել
զկողմն ազնուականաց. բայց սակայն յընկերա-
հաւատ ազատութեան կարևոր է պետ։ Ի բանից
աստի յայտնի եղէն միտք նորա. և յետ ասաց
ինչ գիտացաք՝ զի զգերագոյն իշխանութիւն զբը-
ռանմբ ածեալ էր[2]։

Շ ըմբեցաք մեք ընդ քաղաքն և ընդ նաւահան-
գիստն և ընդ միջնաբերդն[3]։ Վիկիոն պանծացի
՝ի վէպս ազգաց ընդ ինամն՝ի բարգաւաՃութի
արուեստից։ Յանկալի է ինՃ ասել հաւաստեաւ՝
որչափ ինչ օգնեաց նա՝ի ծնունդ նկարչութեան
և՝ի զարգացումն քանդակագործութեան. այլ
որպէս վաղ իսկ ասացի, արուեստք ընդ դաս
բազումն գնան՝ի ստուերս, և գիւտք նորանշանք
ոչ այլ ինչ են՝ բայց պարառութիւն բազմաց ան-

1 Քսենոփ. պատմ. Յուն. հէ 1032։ Պլին. գիրք Լէ· գլ· 7· հէ 632։
գլ· 10· հա· 2· հէ 700։
2 Պլուտ. յԱրատ. հա· 1·
3 Քսենոփ. անդ, հէ 629։

նշանաւոր գիւտից կարապետելոց։ Եւ վասն զի անհնար է զշաւիղս նոցա հետազօտել, շատ լոյսի նկատել զերևելիսն, և յեղ իրացն ամփոփել ըստ հաւս։

Օրագիրն 'ի գիպաց կալաւ պատճառս, քանզակ 'ի կրօնից, և նկար 'ի զարդացմանէ այլոց արուեստից։

Ի վաղնջուց ժամանակաց ուշ 'ի կուրծս անկեալ ուրուք զծագրել 'ի գետնի կամ 'ի վերայ որմոյ զծիր ստուերաց մարմնոց հանդիպակայից արեգական կամ որ և պէտ լուսոյ, անտի հնարեցաւ զպատկեր ելից ծրագրութեամբ յանգիսման առնել աչաց։

Նղատին դարձեալ 'ի վաղ ժամանակաց, վասն եռանդն կրօնից ածելոյ ժողովրդեան՝ յանդիսման առնելով նմա զնշանակ կամ զպատկեր պաշտամանն, 'ի սկզբան վեմ ինչ՝ կամ կոճղ ծառոյ ա ծաւ 'ի պաշտօն. ապա վերին ծայր նոցա 'ի ձև գլխոյ կոկեալ և ապա գիծք 'ի նոսա գրոշմեցան 'ի տիպս ոտից և բազկաց։ Յայս վայր քանդակագործութեանն ժամանեալ էր արուեստ առ ի գիպտացիս՝ յորժամ աւանդեցին զայն Յունաց[3]. որք ընդ բազում ժամանակս շատ համարեցան գնահատելոն և ի նմանութիւն։ Այսր ազգ ազգ անդրեացն՝ որ յաճախ ուրեք գտանին 'ի Պերսպոլիս 'ի ձև շլիմնոց և սեանց և բրգանց[1], վեր-

[1] Պաւսան. գիրք Է. գլ. 22. էջ 579։

[2] Նղոդոտ. գիրք Բ. գլ. 4։

[3] Պաւսան. գիրք Բ. գլ. 9. էջ 132։

բերելով զկերպարան մարդոյ, և ոմանք զձեռաց և զուրուական ինչ բերելով զտիպս, և զբաղձից առ միմեանս կցելոց։ Ընդրիքն անուանեալ Հերմեանք զնշմարանս վաղնջականիս այսորիկ բերեն սովորութեան։

Այգիպտացիք համարին յառաջ քան զամն աւելի քան զբիւր ժառանգեալ զպարծանս հնադրից քանդակագործութեան՝. և զնկարչութիւնն 'ի նմին իսկ ժամանակի, և կամ գէթ վեց հազար ամաւք նախ քան զերեւումն Նորա առ Յոյնս[2]։ Իսկ Յոյնք թէպէտ և զքանդակագործութեանն զիւտի զպարծանս թողեալ, այլ զնկարչութեանն համարին իւրեանց անկ[3]։ Զ'ի միաբանել զհակառակ միմեանց պարծանս սոցա, կրկին ազգս զանազանելի է նկարչութեան. մի՝ որ զծրագիրն ևԷթ պատկեր ներկեր համակ միագոյն, և միւս ևս՝ որ յոլով Ճգամբք բուսական եղև տալ Ճշգրտիւ զկերպարանս բնութեան։

Զաջնոյն եգիպտացիք եղեն գտիչք. զի և զրամանին 'ի Մեբայիդ երանգք պայծառք և ակնապարարք 'ի վաղնջուց ժամանակաց ներկեալք յորմոց քարանձաւաց՝ որ թերևս դամբարանք նոցա էին, և 'ի ձեղունս մեհենաց, 'ի մեհենական տաս նոցա, և 'ի ձևս մարդկան և կենդանեաց։ Զոգ յերանգաց աստի, յորս և թիթղուանք ոս-

1 Պղատ. յղ. օր. գիրք Բ. հտ. 2. էջ 656։
2 Պլին. գիրք Լէ. գլ. 3. հտ. 2. էջ 681։
3 Դոյն անդ։ Սորաք. գիրք Բ. էջ 382։

կոյ զտանին յոմանս յեռեալք մնձոլատ 'ի զարդ, քաջայայտ է՝ զի Այգիպտոս զոյր արուեստ ներ-կուածոյ, եթէ այսպէս հաճոյ Թուեցի ասել, քան թէ արուեստ նկարելոյ։

Յաւուրս տրովական պատերազմին ոչ ինչ ա-ռաւել Թուի Հելլենաց զարդացեալ յարուես-տին[1]. այլ զառաջնով ողնմպիադիան* ճարտարք սիկիոնացիք և կորնԹացիք, որոց վաղ իսկ զիարձ առաւելագոյն հանճարոյ իւրեանց տուեալ էր[2], նշանաւորք կային վաստակովք՝ որոց պահին յի-շատակք, և որք նորաձևութեամբն ածին զար-մանս։ Մինչդեռ Դեդալոս սիկիոնացի** զուտս և զձեռս անդրեաց զատուցանէր[3], Այէսոփան կորնԹացի զտիպս դիմաց նկարագրէր՝ զփոշի աղիւսոյ Թրծոյ 'ի կիր արկեալ[4]։ Յորմէ 'ի միտ առնուլէ, զի անծանօԹք էին յայնժամ առ Յոյնս զեղք երանգոց՝ որովք արդ նկարին զոյնք մար-մնոյ։

Ա՛ւ ժամանակօք մարաԹմնական մարտին նը-կարչութիւն և քանդակ զբազմաժամանակեայ տղայութիւնն 'ի բաց եդեալ, արագ զարդաց-մանքք հասին 'ի կատարեալ չափ հասակի և զե-ղջ՝ յորում արդ տեսանեմքն զնոսա։ ԴրեԹէ յաւուրս մեր եկաց 'ի ԱՒկիսն ԱՒսպանոյ վարժա-

1 Հոմեր · Եղիակ · գիրք Բ · տող 637։

* Իբր 776 ամաւ Ն · Ք ։

2 Պլին · գիրք ԼԷ · գլ · 3 · հա · 2 · էջ 681։

** Ի յետոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն · Թիւ · ԺԲ ։

3 Դիոդ · գիրք Դ · էջ 276։ Սուիդ · 'ի բառն Δαιδάλ ·

4 Պլին · անդ , էջ 682։

պետ, երրորդ իմն հաստատեալ վարժարան նը-
կարչութեան. զի յառաջ քան զնա Յ.Թ.ին
ևեթ և'ի Յունիա գոյին վարժարանք։ Ա՛ղ իսկ
'ի վարժարանէ նորա ելին նկարիչք Ճարտարք,
որպիսի որ և Պաւսիան էր, և Պանիկոս՝ որ վար-
ժապետէրն անդ՝ մինչդեռ էաք մեք 'ի Աիկիոն։
Ա՛ջողութիւնք մնաց նորա և հանբաւ ձգիին սա-
նա բազմութի յոյժ աշակերտաց, որք նախ քան
զաշակերտեին նման հատուցանէին մէն մի քա-
քար. և ինքն խոստանայր վարժել զնոսա զամ
տան 'ի ներքուն հմտութիւն արուեստին, որում
վկայէին վաստակք նորա պանծալիք։ Այ յորդո-
ւիքր զնոսա 'ի վարժս բանասիրութեան և գիտու-
թեանց, յորս ինքն ներակրթեալ էր'։

Ա՛ւագանին Աիկիոնի խորհրդով նորա հրա-
մայեաց, զի յայնմհետէ վարժք գծագրութեան
ընդ մնասունս դաստիարակութեան մանկտւոյն
սահմանեսցին, և մի ևս գեղարուեստք թողցին 'ի
ծառայական ձեռս. և օրինակաւ նոցա այլ ևս
քաղաքք Ա՛ղադայ յորդորեալ, սկսանին արդ նը-
մանող լինել նոցա։ Ցեսաք մեք զերկուս յաշա-
կերտաց նորա, որք ապա անուանի եղեն յոյժ,
Ա՛ելանթոս և Ա՛ստերէս'։ Ա՛ինկալութիւն մեծ
էր նորա յառաջինն, այլ մեծագոյն ևս յեր-
կրորդն. և սա բարեբախտ զանձն համարէր, զի
այնպիսում վիճակեցաւ վարժապետի. այլ վաղ

[1] Պլին գիրք Լ.Ե. գլ. 18. [2] Պլուտ. Ա՛ՆՐատ. հտ. 1. էջ 694։ էջ 1032։

ընդ փոյթ Պամփիլ զանձն բարեբախտ համարե-
ցաւ վասն այնպիսումն վիճակելոյ աշակերտի։

Եւ շրջեցաք մեք ուրեք ուրեք շուրջ զքաղա-
քաւն սիկիմնացւոյ. և 'ի Տիտան աւանի՝ որ 'ի
վերայ լերին կառուցեալ, տեսաք յանտառի ու-
րեք նոճեաց զմերհեան Աստղեպեպ. որոյ պատ-
կեր պարածածկի սպիտակ ասուէիս, և դէմքն նո-
րա միայն և ձեռք և ծայրք ոտիցն տեսանին։
Հուսկ առ նմին կայ պատկեր Աստղիայ՝ դիցուհւոյն
առողջութեան, պատեալ և նա հանդերձիւ, և
գիսակօք՝ զորս կանայք հատեալ 'ի վարսիցն նուի-
րեն նմա[1]։ Սովորութիւն զգեցուցանելոյ զդրո-
շեալս, և 'ի հանդերձս իսկ մեծագոյնս, յանձ-
խեալ է Յաղագա, և բաղում այն է՝ զի անա-
խորժելի իսկ է, զողանալով յաչաց զգեղ արուեստ-
ին։

Օ կայ առաք 'ի Գլիոն քաղաք[2], որոյ բնակիչք
յաւուրս մեր ժառանգեցին զհամբաւ՝ զոր մե-
ծութիւնք և աշխարհակալութիւնք չկարեն մա-
տուցանել։ Վանդի նիզակակիցք գոլով ընդ
Ասպարտայ՝ մինչդեռ նա 'ի պայծառագոյն փառսն
էր, յետ Լեկտրայ ճակատամարտին իբրև ըս-
տրուկք նորա և բազմագոյնք 'ի դաշնաւորացն յա-
ղեան ընդդէմ նորա, փլիսնացիք դիմեցին յօգ-
նութիւն նմա. և 'ի դառնալ իւրեանց 'ի հայրե-
նին՝ ոչ ահ զօրութեան թեբացւոյ և արդիա-

[1] Պաւսան. գիրք Բ. գլ. 11. էջ 136։ [2] Նոյն. գլ. 12. էջ 138։

ցուց, և ոչ արհաւիրքը պատերազմի և սովոյ կա-
ռացին քակել զնոսա 'ի նիզակակցութենէ սպար-
տացւոց[1]։ Ի ժամանակի յորում ուխտը և դա-
շինք խաղաղութիւն լեալ, այսպիսւոյ արիու-
թեան եկաց օրինակ քաղաք մի փոքրիկ և մի յաղ-
քատագոյն քաղաքացոյն Լակեդայ։

Օաւուրս քանի մի կացեալ 'ի Սիկիոն, և ա-
պա մնաք Ա՛քայիսն՝ որ ընդարձակի մինչև 'ի
սարաւանդակն Ա՛ռաքս հանդէպ Կէփալենեայ
կողջոյն։ Օերկիրս զայս սահմանեն 'ի հարաւոյ
Ա՛ռկադիա և Լակոնս, և 'ի հիւսիսոյ Կրիսսա ծով։
Ծովեզերքը նորա զրեթէ ամենայն ուրեք սեպա-
ցեալ ժայռիւք, են անմատչելի. իսկ 'ի միջեր-
կրայս աղաղուն է երկիրն և սակաւաբեր[2], սակայն
գոսանին անդ ուրեք ուրեք այգեստանք ազնիւք[3]։

Յոմիսացիք, որք արդ 'ի ծովեզերս Ա՛սիոյ բնա-
կեն, ունէին երբեմն զերկիրն. այլ իբրև աքայե-
ցիք հարկեցան թողուլ զԱ՛ռգոս և զԼակեդեմոն
զաւակին Հերակլեայ, վանեցին Ա՛քայիոյ զյո-
նիացիս[4]։ Այլ 'ի նորոգ բնակութենն ամրացեալք,
ոչ ևս խառնեցան յիրս Լակեդայ, ևս և 'ի սպառ-
նալ Պարսկեայ զերկար ծառայութիւնն[5]։ Պե-
ղոպոնեսական պատերազմն վերոյլեայ զնաղա-

1 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Է. էջ 624։
2 Պլուտ. Արատ. հա. 1. էջ 1031։
3 Պաւսան. գիրք Է. գլ. 26. էջ 593։
4 Երոդոտ. գիրք Ա. գլ. 145։ Պաւսան. անդ. գլ. 1. էջ 522։
5 Պաւսան. անդ. գլ. 6. էջ 536։

ղութիւնն՝ յորում կէին բարեբաստք. և միա-
բանեցին նոքա մերթ ընդ սպարտացիս՝, և մերթ
ընդ աթենացիս՝ յորս առաւել միտէին [2]։

Ի ժամանակին յայնմիկ Ալկիբիադ յորդորեր
զընակիչս Պատրայ՝ ածել երկայնել զպարիսպս
քաղաքին մինչև ՝ի նաւահանգիստն, որպէս զի
տորմիղք նաւացն աթենացւոց կարասցեն հասա-
նել անդր յօգնութիւն. և մի ոմն ՝ի միջոց խոր-
հրդեանն աղաղակեալ՝ ասէ. Ինձ զայդ առ-
նիցէք, կլցեն զձեզ աթենացիք։ Ու Ալկիբիադ
ասէ. Մարթի իսկ թէ կլանիցեն, այլ աթենա-
ցիք ընդ ոտս, իսկ սպարտացիք ընդ գլուխս սկսա-
նիցին կլանել [3]։ Քայեցիք և ընդ այլս ոմանս
յետ այնորիկ միաբանեցին. և յետ ամաց ինչ
ուղևորութեանս մերոյ առաքեցին երկու հազար
այր յօգնութիւն փոխկիսացւոց, և ՝ի Ձակատա-
մարտին Ամերոնեայ նշանաւոր եղեն գունդք նո-
ցա՝։

Պելլենէ քաղաք, փոքրիկ որպէս զայլ ամե-
նայն քաղաքս Քայիոյ [5], կառուցեալ կայ ՝ի կող
բլրի միոջ. որոյ այնպիսի անձև է կերպարան, զի
երկոքին կողմանք քաղաքին՝ աստի և անտի բլրոյն
կացեալք՝ անկցորդք են միմեանց՝ Նաւահանգիստ
նորա հեռի է վաթսուն ասպարիզաւ. քանզի ՝ի

[1] Թուկիդ. գիրք Բ. գլ. 9։
[2] Նոյն. գիրք Ա. գլ. 111։ Պաւսան. գիրք Ի. գլ. 6. էջ 537։
[3] Պլուտ. Անգիր. հտ. 1. էջ 198։
[4] Պաւսան. անդ։
[5] Պլուտ. Ամբատ. հտ. 1. էջ 1031։

վաղ ժամանակս բնակիչք կողմն միայ երկրի յա-
հէ հինից ծովայնոց միաբանեալ ամրանային 'ի
բարձունս, առաւել կամ նուազ հեռի 'ի ծովէ·
և ամենայն քաղաքք հինք Լեռլադայ ըստ այսմ
օրինակի կառուցան։

Յելանելն 'ի Պելենեայ տեսաք զԱֆոնիսեայ
մեհեանն, ուր ամի ամի զՋահալոյց տօնն գի-
շերային կատարեն՝ զամբարս բաղումս յոյժ լե-
ցեալ, և մնտուուակեալ ամենեցուն առատապէս
գինի։ Հանդէպ նորին պահպանողին Լատե-
մեայ կայ անտառն գիւղանուէր, ուր ոչ է օրէն
մտանել՝ բայց միայն քրմաց։ Լա մերձ անդր 'ի
մեհենին Լաթենասայ տեսաք զպատկեր գիւղա-
հուոյն յոսկւոյ և 'ի փղոսկրէ հրաշակերտ, զոր 'ի
Փիդիասայ ասեն գրօշեալ։

Լա ջոգաք յԱդիրա, հեռի 'ի ծովէ ասպարի-
զաք իբր երկոտասան։ Լա մինչդեռ 'ի գնին յի-
շատակարանացն շրջեաք՝ պատմէին մեզ, զի յա-
ռաջ ժամանակաւ բնակչաց երկրին ոչ ունելով
զօրութիւն զդէմ ունելոյ սիկիոնացւոց՝ որք 'ի
վերայ նոցա դիմեալ գային, կալան հօրանս այ-
ծից, և կապեալ ջահս բորբոքեալս յեղջերս նո-
ցա՝ յառաջ մնտուցին զնոսա դիշերային հանդէպ
թշնամեաց։ Որոց կասկածեալ՝ թէ գունդք օգ-
նականք եկիրացւոց գային, խորհուրդ կալան
դառնալ յետս[2]։

1 Պաւսան գիրք Ի· գլ· 27· էջ 595։
2 Յոյն անդ գլ· 26· էջ 591։

Ինտի յառաջ խաղացեալ՝ մնաք 'ի քարայր մի, ուր վիճակաւ հարցումն պատմէր զՀանդերձեալս։ Ու զրոշելովն Հերակլեայ կուտեալ կան քուեայք, 'ի դէմս իւրաքանչիւր այլ և այլ բերելով նշանս. առնու անտի ըստ դիպի քառեակ քուեայս, և արկանէ զնոսա 'ի տախտակի՝ ուր նոքին դրոշմեալ կան նշանակք, հանդերձ մեկնութեամբքն[1]։ Ու յս և աղգ պատգամաց որպէս զայլսն յաճախեալ է, և հանգոյն նոցին հաւատարիմ։

Յառաջ և անցեալ՝ շրջեցաք յաւերակս Եղլիքս քաղաքի, հեռի երբեմն 'ի ծովէ ասպարիզաբ երկոտասան, որ յաւուրս մեր 'ի սասանութենէ երկրի կործանեցաւ։ Ու յս ահագին յեղափոխութիւնք յաճախագոյն պատահէն 'ի վայրս մերձակայս ծովու[2], և բազում այն է՝ զի նշանք ահաւորք կարապետեն այնոցիկ. քանզի հեղեղք անձրևաց զամիսս յոլովս ողողանեն զերկիր, կամ փակին երկինք առ ակնկալութիւն երաշտոյ. նուազ ի փայլումն ճառագայթից արեգական, կամ շաւաղումն իբրև զՀրատ բորբոքեալ. հողմք սաստկաշունչք խառնեն զանդաստանս, բոցք փայլակնաձևք ցոլանան ընդ օդս, և այլ և այս երևոյթք յառաջընթացք ահեղ պատահարաց[3]։

Յետ կործանման Եղլիքս քաղաքի պատմիչն

[1] Պաւսան. գիրք Ը. գլ. գիրք Բ. գլ. 8. էջ 567։ 25. էջ 590։
[2] Աբիստոտ. Նշանք օդ. էջ 585։
[3] Պաւսան. անդ. գլ. 24.

սքանչելիս բաղումս զուժկանս արկածիցն լեալ. զ'Լեղոս կղզի սասանեալ, և սիւն մեծ հրեղէն մինչև յերկինս ամբարձեալ[1]։ Կալցի զայս որպէս ոք և ախորժէ. քայց սուղ ինչ յառաջ քան զԼեկտրայ Ճակատամարտն[2] զիշերային 'ի ձմեռանէ[3], ստուի հողմն հիւսիսոյ և անտի հարաւահողմն հնչեալ, յետ ուժգին և արագ արագ սասանութեանց՝ որ յաճախեին մինչև ցառաւօտ, կործանեցաւ քաղաքն հիմնայատակ, և հուպ ընդ հուպ ծածկեցաւ ընդ ալեօք՝ ընդարձակելով ծովն զսահմանս իւր[4]։ Լաւ այնպէս 'ի խոր ընկղմեալ, զի մինչև ցծայրս մայրեաց անտառին նուիրականի Պիսիդեայ ամբարձան ջուրքն։ Լաւ ապա տակաւ զիջան ջուրքն, այլ դեռ և ծածկէն զաւերակս քաղաքին, և հաղիւ հետք ինչ նորա նշմարին[5]։ Մնակիչք քաղաքին կորեան առ հասարակ, և ընդուռնայն եղեն ջնանք ամենեցուն 'ի վաղիւ անդր և յաւուրս որ զկնի՝ զդիակունս նոցա 'ի թաղումն[6]։

Լաւ որպէս լուաք, ոչ հասին սասանութիւնքն Անգիոն քաղաք[7], որ քառասուն և եթ տապա-

1 Կալլեսթ. առ. Սենեկայ խնդ. բն. գիրք Զ. գլ. 26։
2 Պոլիբ. գիրք Բ. էջ 128։ Ստրաբ. գիրք Ը. էջ 384։
* Ի կատարած ամին 273 'ն. Ք. կամ 'ի սկիզբն յաջորդին։
3 Հերակլ. առ Ստրաբոնի, անդ։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 363։
4 Արիստոտ. յդ. աշխարհի, գլ. 4. հա. 1. էջ 608։ Դիոդ. անդ, էջ 364։
5 Պաւսան. գիրք Ի. գլ. 24. էջ 587։ Պլին. գիրք Բ. գլ. 92. հա. 1. էջ 115։
6 Հերակլ. անդ։
7 Սենեկա, խնդ. բն. գիրք Զ. գլ. 25։

բիղաւ հեռի է 'ի տեղւոջէն՝. այլ ընդ միւս կողմն ձգեցան, և 'ի Խորա քաղաք՝ որ ոչ ինչ աւելի քան զԼդիոն մերձ է Յղլեքս՝ պատուարք և տունք և մեհեանք և անդրիք և մարդ և անասուն եղծան կամ յերկիր կործանեցան։ Խաղաքացիք որ 'ի բացեայ կային 'ի քաղաքէն, զարձեալ անդր կանգնեցին զքաղաքն՝ որ կայ մինչև ցայսօր[1]. իսկ 'ի տեղւոջ Լղլեքս քաղաքի կառուցաւ սան փոքրիկ, ուստի մնեալ 'ի նաւակ մի՝ շրջեցաք տեսանել 'ի մեծագոյն զմնացուածս քաղաքին աստ անդ առ ոտն ծովուն։ Լս առաջնորդքն մեր 'ի հեռուստ շրջան առեալ ածէին զմեզ, առ երկիւղի բախեալց նաւուն ընդ պղնձի պատկեր Պիսիդոնի՝ որ մինչև 'ի միանուն ծովուն հասանէ, զեռ ևս կանգուն կալով 'ի խարսխի[2]։

Լդիոն յետ կործանման Լղլեքս քաղաքի ժառանգեալ զսահմանս Նորա, եկաց գլխաւոր 'ի քաղաքս Լքայիոյ։ Մնդր գումարին ժողովք զաւառին 'ի մերձակայ անտառն Նուիրական Լքամազդայ առ մեհենաւ Նորին զծովեզերքն[3]։

Լքայիա անդստին 'ի վաղնջուց ժամանակաց յերկոտասան քաղաքս բաժանի, որոց իւրաքանչիւր եօթն կամ ութ աւանք են շուրջանակի։ Լմենեցուն նոցա օրէն է արձակել հրեշտակս 'ի սահմանեալ ժողովն, որ գումարի 'ի սկիզբն տա-

[1] Պաւսան. գիրք Է. գլ. 24. էջ 583։
[2] Նոյն անդ, գլ. 25. էջ 590։
[3] Եբրատոսթ. առ Սթրաբ. գիրք Ը. էջ 384։
[4] Սթրաբ. անդ, էջ 385։ Պաւսան. անդ. էջ 584։

բաց նոցա 'ի հասարակել գարնայնոց։ Լինդ սահմանին կարգք ըստ հարկի իրաց ժառանգակին, անդ ընտրին իշխանք 'ի կատարել զսահմանեալ կարգսն, և 'ի գումարել ժողովս ըստ ոչ սովորութեանէ յորժամ պատերազմ 'ի վերայ կայցէ կամ խորհուրդ նիզակակցութեան այլոց ազգաց '։

Տեսչութիւն իրաց աշխարհին, եթէ այսպէս 'ի դէպ եկեալ ասել, իւրովի ուղղի. և է կարգ տեսչութեանն ընկերահաշտ ազատութիւն, զանիրաւն և զպահպանութիւն իւր 'ի բարեպատեհ հանգամանաց ունելով։ Վասնզի ազքատ է երկիրն և վերջացեալ 'ի վաճառականութենէ, զրեթէ և յարուեստից իսկ Հայաստանութենէ. քաղաքացիք առ հասարակ ժառանգէն խաղաղութիւն զհաւասարութիւն և զազատութիւն՝ զոր մատուցանէն նոցա օրէնք։ Այլ զի չէ յարուցեալ 'ի միջի նոցա անիրաւաղասեր ոք [1], ցանկութիւն աշխարհակալութեանց անծանօթ է առ նոսա. և զի սակաւ է նոցա կցորդութի ընդ ազգս զերծս, հեռի է 'ի նոցանէ ստութիւն և նենգ, և առ թշնամին իսկ ոչ վարին նոքա [2]. և վասն զի ամենայն քաղաքաց նոցա նոյն օրէնք են և նոյն իշխանութիւնք, ամենեքին զմի կատարեն մտրմին և միակ պետութիւն. և տիրէ յամենեսին 'ի նոսա միաբանութիւն, ծաւալեալ և 'ի զանազան դասս քաղաքացոյց [3]։ Պետրազանցութիւն կար-

1 Պողիբ. Ծաղկաբ. հրեշտ. էջ 855։
2 Նոյն, գիրք Բ. էջ 125։
3 Նոյն, գիրք ԺԳ. էջ 672։
4 Յուսաքն. գիրք ԼԴ. դլ. 1։

գաց նոցա և ուղղութիւն աւուգանուցն այնպէս վկայեալ է յամենեցունց, զի քաղաքաց Յունաց կամ Խաղիոց պարտասեալ երբեմն 'ի գժտութեանց՝ զիմիէն ՅԱքայիա զտանել զխաղաղութիւն, և ոմանք 'ի նոցանէ հանգոյն նմին կաղմէին միաբանութիւն։ Ոչ բազում ինչ ժամանակք են, զի և սպարտացիք և Թեբացիք վիճեալք ընդ միմեանս զպարծանաց յաղթութեան Լեւկտրայ ճակատամարտին, զնա կացուցին իբառաբար վիճին՝ յոր հաստատեալ կային փառք նոցա, և անաչառութիւն զերծ յամենայն կողմնաւոր բարուց խնդրեր առ վճիռն։

Տեսանէաք յաճախ առ ծովեզերքն մանկունս, զի գայլախաղիւք պարսաքարէին. քանզի աքայեցիք յօժարագոյն 'ի հրահանգս յայս տան զանձինս, և այնպէս աջողեալք յայն, զի զնդակ կապարեայ ճարտար 'ի պարսատիին զետեղեալ՝ ձգի սլանայ հարկանէ 'ի քթթել ակն զկէտ նպատակին '։

Լաւ 'ի գնալն մերում 'ի Պատրա, անցաք մեք ընդ քաղաքս բազումս և ընդ աւանս. քանզի բազմաբնակ է յոյժ ՅԱքայիա[2]։ Ի Փարա տեսաք մեք 'ի հրապարակի վիմս երեսուն քառակուսի, որ պաշտին փոխանակ գից՝ զորոց ոչ ևս յիշեմ զանուանսն[3]։ Մերձ առ այնոսիկ է անդրի Հերմեայ շիրմանձև երկայնատարուս, և 'ի

[1] Լիւ. գլուխ ԼԸ. գլ. 29։ [3] Պաւսան. գլուխ Ի. գլ. ԺԸ.
[2] Սարաբ. գլուխ Ը. էջ 386։ 22. էջ 579։

հանդիպոյց Նորա պատկեր Լատեայ՝ պար առեալ 'ի կանթեղաց պղնձեայց։ Լա պատմեցաւ մեզ՝ զի Հերմէս անտի տայր պատգամս, և զի յումեկանէ ևեթ առնելով նմա հարցուածս՝ նոյնհետայն տայր զհրաման պատասխանւոյն։ Դայնվայր եհաս ոմն շինական հարցանել զնա. նախ մատոյց խունկս դիցուհւոյն, արկ իւղ 'ի կանթեղն և ելոյց զնոսա, եդ 'ի վերայ բազնին դրամ մի արծաթի փոքրիկ, և ապա մատուցեալ առ Հերմէս՝ եհարց զնա անձայն, և ունկնասիրց լսելապակ 'ի բաց եկայ 'ի նմանէ. և ապա ինքեան ազդելոյ նախաբարբառ պատասխանւոյն[1]։ Յաղագս որոյ եկ զհետ Նորա, և մեք դարձաք 'ի բնակութիւն մեր։

Մինչ չև հասեալք 'ի Պատրա, զկայ առաք 'ի դալարագեղ ուրեք անտառի՝ ուր մանկտւոյ բազմութիւն հրահանգէին յարշաւ[2]։ Ի մի 'ի ծառատունկ Ձեմելեացն ընդ առաջ եղև մեզ մանուկ երկոտասանամեայ կամ երեքտասանամեայ, զգեցեալ հանդերձս գեղեցիկս, և հասկօք պսակեալ։ Հարցաք զնա, և ասէ ցմեզ. Տօն է այսօր Դիոնիսի Լաքինեետեայ, քանզի այս անուն է Նորա*. մանկունք քաղաքիս առ հասարակ ժողովեալ յեզր գետոյն Միղքեայ, անդ յօրինեալք թափօր, գնալ 'ի մեհեան Լը-

[1] Պաւսան. գիրք Է. գլ. 22. էջ 579։

[2] Նոյն անդ. գլ. 24. էջ 577։

* Եպիմենա 'ի վաղնջուց Ժամանակս Նշանակէր Թագաւոր։ (Արիստոտ. գլ. հատ. գիրք Գ. գլ. 14. հա. 2. էջ 336)։

տեմեայ՝ որ 'ի ստորև կայ. զնեմք զսպակքս զայ-
սոսիկ առ ոտս սատուածուհւոյն, և լուացեալք
'ի վասին և պսակեալք բաղեղամքք՝ զնամք
անտի 'ի մեհեան Դիոնիսեայ, որ անդր ևս կայ։
Հարցի զնա և ասեմ. Իսկ առ ինչ պսակդ այդ
'ի հասկաց։ Ասէ. Զի այսպէս երբեմն 'ի բա-
զին Ադրեմեայ մատչեաք 'ի զենումն։ Ասեմ. Այ-
դպէս, զմեք 'ի զենումն ածեալ։ Ասէ. Զգիտի-
ցես ուրեմն զիրս գեղանուոյն Մելանիպպեայ և
զչքնաղագեղին Կոմեթովայ քրմուհւոյն Ադրե-
մեայ. արդ լուր.

Սիրելիք էին նոքա յոյժ միմեանց, որպէս զի
միշտ 'ի խնդիր լինել իրերաց, և 'ի բացեայ ևս կա-
լով 'ի միմեանց՝ յանդիման աչաց ունել զիրեարս։
Այնդրեցին ասպ 'ի ծնողաց իւրեանց ամուսնանալ
ընդ միմեանս, և ծնողքն անզգամք չետուն նոցա
հրամանն։ Յետ սակաւ ժամանակի սով սաստիկ
եղև յաշխարհին, և ախտք ժանտք հարակէին։
Հարցան զիք, և եղև հրամանն պատասխանւոյ՝ զի
ծանրացասումնէր Ադրեմիս վասն Մելանիպպեայ
և Կոմեթովայ լինելոյ ընդ միմեանս անդէն 'ի մե-
հենի իւրում՝ 'ի գիշերի իսկ ոտնիցն. և զի առ 'ի
հաշտ առնել զնա՝ հարկ էր ամի ամի զոհել նմա
պատանեակ մի և օրիորդ 'ի կարի չքնաղագեղիցն։
Այս ապա խոստացաւ մեզ հարցուէն զի խուժա-
դուժ սովորութիւնն դադարեսցէ 'ի բերել անծա-
նօթի ուրուք այսր զպատկեր Դիոնիսեայ։ Այլն
անծանօթն, և դրօշեալն կանգնեցաւ 'ի մեհենին,

և փոխանակ զոհիցն Թափօրս այս և արարողութիւնքս սահմանեցան։ Վասն խաղաղութեամբ, հիւրդ՝։

Վասն էպքս այս, վկայեալ և յիմաստնոց, ոչ ինչ անհաստատութիւն մեղ. զի և ընդ բազում ժամանակս զօրաւորագոյն հնարք անցուցանելոյ զցասումն երկնաւոր համարեին նոսպաղիք մարդկեղէն արեամբ զբաղնօք, և մանաւանդ արեան օրիորդաց։ Վասն ինչ անտեղի էր ընտրութիւնն, այլ յամարիշտ իմաստից յառաջ ածեալ՝ իբր թէ զից առաւել հաճոյ իցեն զինք զոհից՝ քան զյօժարութիւն մատուցանելեացն։ Վասն զի յանձն առնուլ զդժնդակ մահուրութիւնս զայս, հարկ է ասել զընտիրս՝ ի բերոց երկրի և զպատուականագոյնս՝ ի զենդեաց մատուցանել նոցա. և վասն զի արիւն մարդոյ պատուականագոյն է քան զկենդանեաց, հեղանէր արիւն օրիորդի՝ յորում՝ հասակ մանկութեան և գեղ և աղնութիւն տոհմի, և ամենայն բարեմասնութիւնք մեծարեալք՝ ի մարդկանէ՝ պարարեալ կցորդեին։

Եւ շրջեալ՝ ի զինն հինաւուրց տանդիցն՝ ի Պատրա, և՝ ի միւս կաքաղաքն՝ ի Ղոմմէ, անցաք ընդ Լարիսոս, և մնաք Յղէս։

1 Պաւսան. գիրք Է. գլ. 19. էջ 571։

ԳԼՈՒԽ Լ.

Ուղղութիւն Անապարսեայ Նղիս, և յաղագս ողնմղիական խաղուցն։

ԼՂԻՍ գաւառ է անձուկ, զոր յոմիական ծովուն բախեն ալիք, և բաժանի յերրեակ հովիտս։ Ի հիւսիսայնումն է քաղաքն Նղիս կառուցեալ յեզր գետոյն որ կոչի Պենէոն, համանուն Թեսաղական, այլ ոչ որպէս զնա նշանաւոր։ Հովիտն միջին հուսկաւոր է վասն Աքամանդայ մեհենին որ է 'ի նմա յեզր գետոյն Աքիեայ. և հովիտն երրորդ կոչի Տրիփիլա։

Մնակիչք գաւառիս վայելեցին 'ի բաղում խաղաղութեան ընդ երկայն ժամանակս. զի սոքա նայն ազգք Նղլադայ համարէին զնոսա նուիրեալս Աքամանդայ, և այնպէս մեծարէին զնոսա, զի դունդք օտարք 'ի մնանելն անդր՝ զնէին զդէնս 'ի բաց, և յեղն անտի դարձեալ զինուորէին[1]։ Իսկ զարդիս դուն ուրեք պատիւս այս ընծայի նոցա. բայց Թէպէտ և բազում պատերազմունս համառօտս 'ի յետին ժամանակս կրեցին, և դեռ ևս 'ի քաղաքս քաղաքս նոցա Ճարակին հերձուածք, սակայն Նղիս բարելոյ և մարդաւէտ քան զնմա գաւառս է 'ի Պելոպոնես[2]։ Ընդաստանք նորա,

[1] Սարաք. գիրք Ը. էջ 358։ [2] Պօղիբ. գիրք Դ. էջ 336։

զրեթէ առ հասարակ արդաւանդաւորողք՝, ծածկեալ էին 'ի ստրկաց աշխատաւորաց։ Լրկրագործութիւն բարգաւաճէ անդ, զի պետութիւնն ընծայէ մշակաց զյարգ՝ որում արժանի է ազգն այն քաղաքացոց պիտանի։ Լուտեանք առանձինն էին նոցա, դատել զվէճս անբողոքելի. և ոչ է հարկ նոցա թողուլ զվաստակս ձեռաց իւրեանց, և գալ'ի քաղաքս՝ խնդրել'ի դրունս դատաւորաց վէճիս անիրաւս կամ տարաժամեալս։ Լզգաստոմբ բազումք փարթամք վարէն զկեանս իւրեանց յանդորրու 'ի դաշտս. և տեսի ես ազգատոհմն շուրջ զԼղիս քաղաքաւ երկուք և երիւք ծննդովք ի ջեալս 'ի խնայրէ, ոչ ուրուք 'ի նոցանէ կոխեալ զմայրաքաղաքն[3]։

Ի բառնալ միապետութիւնէ յաշխարհէն՝ ուխտ նիզակակցութեան եղին ընդ միմեանս քաղաքք. այլ Լղիս քաղաք հզօրագոյն քան զայլսն՝ տակաւ նուաճեաց զնոսա ընդ իւրև[3], և զարդիս զկերպարանս ևեթ ազատութեան թողեալ է նոցա։ Լմենեքին նոքա միահամուռ յուեթ ցեղս որոշին[4], և իշխէ նոցա աւագանին ինքնուն այր՝ որոց իշխանութիւնն մինչև ցկեանս է, և 'ի պակասել ուրուք՝ ինքեանք ինքեանց ընտրեն իշխանակից։ Որով իշխանութեանն 'ի կարի նուազունս ամիս-

1 Սարաք. գիրք Ը. էջ 344։ Պաւսան. գիրք Ե. գլ. 4. էջ 381։
2 Պողիբ. գիրք Դ. էջ 336։
3 Երոդոտոս, գիրք Դ. գլ. 148։ Թուկիդիդէս, գիրք Ե. գլ. 31։
4 Պաւսան. գիրք Ե. գլ. 4. էջ 397։

փեալ՝ ի կարգ անդր սակաւ ապետութեան սպրդեալ եմուտ սակաւ ազգունից պետութիւն, որ մի ի յոռութեանցն է ապականչաց կարգիս այսորիկ տեսչութեան[1]։ Մին իբրև ի յետին ժամանակս Ձգնեցան հաստատել զընկերահաշտ ազատութիւն[2]։

Այլիս ոչ վաղեմի ինչ քաղաք է, այլ նորակերտ, ըստ օրինակի բազում քաղաքաց Այլազգայ և մանաւանդ պեղպմնեասականաց՝ ի յոլովից անապատական տանց կազմեալ[3]։ Օր ի դարս անդիտութեանն բնակութիւն մարդկան էր՝ ի գիւղս անապատսպարս և դիւրամատոյցս. իսկ՝ ի յաճախել գիտութեաց ի քաղաքս պարսպաւորս ամփացան մարդիկ։

Ի հասանել՝ ի քաղաք անդր, դէպ եղև մեզ տեսանել զՀանդէս բազմութեան որ երթայր՝ ի մեհեան Աթենասայ. և էր մնան արարողութեանն մրցանաց եղեսացի մանկտուոյն զգեղջ, և ածէին յաղթանակաւ՝ որոց զմրցանակ գեղեցկութեան տարեալ էր։ Յաղթողն ամենեցուն, վարսակալ՝ ի գլուխ, ածէր զզէնս՝ նուիրել դիցուհւոյն։ Եր կրտրդն ածէր զզոհ, իսկ երրորդն զայլ նուէրս[4]։

Ի Հանդոյն սմին բազում ուրեք եղև ինձ տեսանել Այլազգայ, ոչ միայն մանկտուոյն մրցելով զգեղոյ, այլև կանանց և օրիորդաց։ Այս առ աղ-

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Ե. գլ. 7. հա. 2. էջ 394։

[2] Բոլենոփ. պատմ. Յուն. գիրք Ի. էջ 635։

[3] Պարաբ. գիրք Ը. էջ 336։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 40։

[4] Աթեն. գիրք ԺԳ. գլ. 2. էջ 565։ Թէոփր. առ Նը. մին, էջ 609։

զը իսկ հեռաւորս տեսի զկանանին 'ի հանդէս մեռեալ. այլ այս խտիր զանազանութեան է 'ի նոսա՝ զի Յոյնք զեղեցկազունին տան զմիցանակն, իսկ այլ ազգք առաքինազունին[1]։

Մեհեանք և շինուածք մեծածախք զարդարեալ պայծառացուցանեն զքաղաքն, և բազմութի անդրեաց՝ յորոց ոմանք ձեռակերտք են Փիւիւայ։ Լիմն յանդրիս անդ, յորս ոչ ինչ նուազ քան զնարտարութիւն հանճար ձեռագիտին և բեւեր. որպէս կիցք անդրեաց Շ նորհայն, զոր 'ի մեհենին նոցա տեսաք։ Բեհեղ նուրբ և փայլուն արկեալ է զնոքօք. միումն 'ի ձեռս ոստ մերտեսնի 'ի պատիս Բ՝աղկան, միւսումն վարդ զարդեալ նշանակ, և երրորդին լիցք խաղալիկ մանկլուսոյ. և 'ի լուսին գեղջ յօրինուածոյն պատկեր Աիրոյ յաւելեալ 'ի նմին պատուանդանի առընթեր Շ նորհայ[2]։

Բ՝ուաեալ քան զամենայն ինչ յաճախեն շուք և պայծառութիւն գաւառիս խաղքն ողնմպիականք որ 'ի լուսին քառից ամաց կատարին անդ 'ի պատիս Բ՝ամանդղայ։ Բ՝աղաքաց Բ՝ղաղայ իւրաքանչիւր տօնք են, յորս խմբին բնակիչք նոցա 'ի միասին. այլ քառեակ մեծահանդէս տօնք զամենայն ազգս Բ՝ղաղայ 'ի մի վայր ածեալ հանմխմբեն, որ են պիւթեան խաղքն կամ դեղփականք, խոթմեանքն կամ կոմնթականք, նեմեանքն

[1] Թէոփր. առ Բ՝ԹԷն. գիրք Ժ. գլ. 2. էջ 609։
[2] Պաւսան. գիրք Զ. գլ. 24. էջ 514։

և ողխմպիականք։ Օ առաջնոյն ասացի 'ի վերս ուղեւորութեան իսկ ընդ Փովկիս. մնայ ինձ ասել արդ զյետնոյն՝ թողեալ զայլս 'ի բաց, զի զրեթէ զնոյն տեսարանս յանդիման կացուցանեն։

Խաղք ողխմպիականք սահմանեալք 'ի Հերակլեայ, և խոտանեալք ընդ երկայն ժամանակս՝, դարձեալ վերստին նորոգեցան խրատուք Լիկուրգեայ և խնամովք Իփիտոսի՝ որ իշխէրն մնում՝ 'ի կողմանս Լակեդեմոնի[1]։ Յետ հարիւրոց և ութից ամաց 'ի գլուխ հասարակաց մատենի եղիսացուց արձանագրեցաւ անուն Կոռիբեայ, որոյ առաջին յընթացս ասպարիզին տարեալ էր զմրցանակ[2]։ Լա՛ 'ի յաջորդելոյ սովորութեանն կաղմեցան գաւազանք արձանագրութեան գուպարայաղթ նահատակացն, որոց անուանք այլ և այլ ողխմպիադից լեալ նշանակք, կացուցանեն թուականս 'ի ժամանակագրութեան։ Ի հարիւրորդի վեցերորդի նուագին կատարելոյ խաղուցն հասաք մեք յԱնդիս[*]։

Ինակիչք գաւառին առ հասարակ պատրաստին 'ի մեծափառ հանդէսն, և վաղ իսկ հրատարակեալ էր հրովարտակն 'ի բաց զնելոյ զամենայն թշնամութիւն[3]։ Օ օրաց մնելոց յայնժամ

[1] Արիստոտ. առ Պլուտարքեայ 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 39։

[2] Գրեբէ, Ջոսագով. Ժամանակագր. էջ 162։

[*] Յամարայնի 356 ամին

Ն. Գ։

[3] Եսբին. յՊ. վրէպ հրեշ. էջ 397։ Պաւսան. դիրք Ե. գլ. 20. էջ 427։

յերկիր անդր սուրբ[1], տուգանք 'ի վերայ կայնն իւրաքանչիւր զնմուտրի մնասք կրկին[2]։

Ի չորից դարուց հետէ եղկսացիք ունին զտեսչութիւն ողբմնիական խաղուց, և յաւելին 'ի տեսարանն յայն զամենայն որ ինչ մարթէրն յաճախել զշուք հանդիսին, մուծանելով 'ի նեղքս նորանոր աղգս մրցութեանց, և 'ի բաց բառնալով որ ինչ ստորև քան զանկալութիւն ժողովելոյն էր[3]։ Լոցա անկ է մերժել անտի 'ի բաց զամենայն հնարս և զնորամանկութիւն, կացուցանել զկրաւունս 'ի դատաստանի, և խափանել զմեռս մրցութեանցն առ աղգս օտարս[4], և առ Յոյնս զորոց ամբաստանութիւն լեալ ի նոցանէ զոր օրինաց բարեկարգութիւն ասնիցն[5]։ Զի այնպէս մեծ թուին նոցա օրինադրութիւնքն, զի արձակեցին երբեմն հրեշտակս առ եգիպտացիս՝ հարցանել զիմաստունս նոցա զի մի թերի ինչ յայնս կացցէ։ Լոցա կարեւոր յոյժ թուեցաւ յաւելուլ և զայն, զի ցորչափ դատաւորքն 'ի խաղն եղկսացիք կային՝ մի մնցէ եղկսացի 'ի մրցմունսն[6]։ Բայց թէպէտ և նոքա զայս պատասխանի ետուն, այլ մինչև ցայժմ եղկսացիք մնանեն 'ի խաղն, և բազումք 'ի նոցանէ տանին զմրցանակն, առանց

1 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 248։

2 Թուկիդիդէս, գիրք Ե. գլ. 49։

3 Պաւսան. գիրք Ե. գլ. 8. էջ 394։

4 Երոդ. գիրք Ե. գլ. 22։

5 Թուկիդ. անդ։ Պաւսան. անդ, գլ. 21. էջ 431։

6 Երոդոտ. գիրք Բ. գլ. 160։ Դիոդ. գիրք Ա. էջ 85։

կասկածանաց ինչ աշառութեան զգաստաւորացն լինելոյ՝։ Սակայն վասն անկասկածելի և առնելոյ զգաստատանն, օրէն է նահատակաց զրկելոյ՝ի պսակէն բռնոցելոյ յաւագանին Ոլիմպիայ[2]։

Յողմանվադս իւրաքանչիւր ընտրին վիճակաւ դատաւորք կամ հանդիսադիրք խաղուցն[3]. և են ութ թուով, զի մէն մի յութից ցեղից ընտրին[4]։ Մինչև զնաղան հրատարակեալ՝ Ժողովին նոքա Յոգին և զամիս տասն վարժեալ՝ի միտ առնուն զպաշտամունս զոր պարտ է նոցա լնուլ. և վարժապետք նոցա են դատաւորք աւանդապահք և մեկնիչք օրինադրութեանցն՝ զորոց ասացի[5]։ Լաւ առ՝ի յաւելուլ զփոքձ՝ի գիտութիւն, հրամանդէն՝ի նմին ժամանակի զմարտիկս եկաւորս առ՝ի մնանել՝ի հանար ասոիելոցն յարշաւանդէս և՝ի բաղումս՝այլ ևս հետի մրցութիւնս։ Ոնդ յոգունս՝ի նահատակացն էին ազգականք և բարեկամք նոցա, և մանաւանդ մարտուսոյց վարժապետք նոցա։ Ոնձք մրցանակին փայլատակէին յաչաց նոցա, և եղիսացիք առհասարակ հրբ-ՀՈՒԱԼ ցնծային։ Ոնդ այնպիսի փոյթ նոցա՝ի կատարումն խաղուցն զարմանալ էր ինձ, եթէ ոչ ուսեալ զիտէի զեռանդն թատերասիրութեան Յունաց, և զշահ օգտին՝ զոր հանդէսն այն մա-

1 Դիոն. ոսկիաբ. Ի Ռոդ. գիրք Գ. գլ. 30. էջ 121։ էջ 344։
2 Պաւսան. գիրք Զ. գլ. 9. էջ 397։
3. էջ 458։
4 Պաւսան. գիրք Ե. գլ.
5 Նոյն, գիրք Զ. գլ. 24.
5 Փիլոսոր. վարք Աղոլ. էջ 514։

տուցանեալ եղեսայոց։

Այլ շրջեալք 'ի գնին ամենայնի որ ինչ ցանկալի իրք են 'ի քաղաքն Այլոց, և 'ի Կիլիկեայ՝ որ ոչ ինչ աւելի հեռի է 'ի քաղաքէն քան զՀարիւր և քսան տասպարեզս, և է նմա փոխանակ նաւահանգստի[1], յուզի անկաք գնալ Յոզիմպիա։ Արկին են Ճանապարհք որ ածեն անդր. մին ընդ դաշտ, և երկայնութեամբ նորա իրք երեքարիւր տասպարեզ[2]. իսկ միւսն ընդ լերինս և ընդ աւազն Լեսիէն, ուր ամոյ ամոյ լինին տօնք վաճառաց մեծահանդէս[3]։ Առաջին Ճանապարհն կալաք, և գնայաք ընդ անդաստանս բաղմաբերս և քաջ մշակեալս, ոռոգեալս յայլև այլ գետոց։ Յետաք զՃանապարհայն զքաղաքսն Դիսպոնտ և Լետկին, և ապա հասաք Յոզիմպիա։

Քաղաքս այս որ կոչի Պիսա[1], կառուցեալ բայ յաջոյ եզը գետոյն Լիբեայ, 'ի ստորոտ բլրին՝ որ Կրոմեեայ լեառն կոչի*։ Լիբեոս բղխեալ Լեռնակաղիա[5], և մերթ անտեսս լեալ և մերթ անդրէն երևեալ[6], և զյոլովից գետոց ջուրս յինքն ընկալեալ[7], թափի 'ի ծով անդր մերձակայ[8]։

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 26. էջ 518։

2 Սարաբ. գիրք Ը. էջ 367։ Պաւսան. անդ, գլ. 22. էջ 510։

3 Սարաբ. անդ, էջ 341։

4 Երոդոտ. գիրք Բ. գլ. 7։ Պլին. գլխոց. 2, 3, 8, և այլն։

* Զայսմանէ գայլն իրն. գրոցք 'ի համառօտ աւելկութենն զտեղագրութենէ Ոլիմպեայ։

5 Պաւսան. գիրք Ե. գլ. 7. էջ 790։

6 Նոյն, գիրք Ը. գլ. 34. էջ 709։

7 Նոյն անդ։ Սարաբ. անդ, էջ 344։

8 Սարաբ. անդ, էջ 343։

Օ ընտիրս 'ի ցանկալեաց ընծայէ Աստուծոյ 'ի տեսիլ. և է Աստուծոյ անտառ դիցանուէր[1] ընդարձակ յոյժ, պատեալ շուրջանակի ոստմամբ[2]. և էն 'ի նմա մեհեանք Աբրամազդայ և Հերայ, տաճար խորհրդոց առագաստոյն, տեսարանն[3], և բազում այլ ևս շինուածք գեղեցկակերտք, և բազմախուռն սնհամար անդրիք։

Մեհեանն Աբրամազդայ յանցեալ դարու կառուցաւ յաւարէն՝ զոր առին եղեսացիք յազգաց ոմանց վտարանդելոց 'ի նոցանէ[4]։ Պորտցի կարգաւ Ճարտարապետեալ է շուրջանակի սեամբք, 'ի մերձակայ քարահատից զվէմն շինուածոյն ածեալ. որ թէպէտ և թեթեւք էն, այլ փայլունք և արաստոյք քան զկիճն պարոսեան[5]։ Պարձրութիւնն նորա վեթասունեւութ ոտնաչափ, երկայնութիւն նորա երկերիւր և երեսուն, և լայնութիւն ութսունեւհինգ։

Լերան քաջ Ճարտարապետ կացուցաւ վերակացու գործոյն, և քանդակագործք երկու ոչ ինչ նուազ Ճարտարք զարդարեցին հանճարեղ յօրինուածովք զկատար երկուց Ճակատուցն եռանկիւնի։ Լիսուին դրօշեալ կան պար առեալ 'ի բազմութիւնէ մարդկան Յնտանուս և Պեզոսիս, կազմք յընթացս ասպարիզին յանդիման Աբրամազդայ.

1 Պենդ. ոգեմոլ. 8. տող 12։ Պարապ. անգ։ Պաւսան. դիրք Ե. գլ. 10։
2 Պաւսան. անգ, էջ 441։
3 Քսենոփ. պատմ. Յունա. դիրք Է. էջ 639։
4 Պաւսան. անգ, էջ 397։
5 Նոյն անգ, էջ 398։ Պին. դիրք Լ.Զ. գլ. 17. հա. 2. էջ 737։

'ի միաբանութիւն Հակատամարտ Կենտաւրայցն ընդ Լապիթայս'։ Պղնձի է դուռն մտից, հանգոյն նմին և հանդիպակաց կողմանն. և յերկաթանչիւրն մի 'ի նահատակութեանցն Հերակլեայ քանդակեալ[2]։ Այնքան կղմինդրաձևք ծածկեն զտանիսն, և 'ի ծաղ եռանկեանց Հակատուցն պատկեր յաղթութեան պղնձի ոսկեզօծ կանգնեալ, և յերկաթանչիւր ծայրս անկեանցն ա-նօթք մեծամեծք պղնձիք դարձեալ ոսկիազօծք։

Յերիս խմբարանս բաժանի մեհեանն սեամբ[3]. նուէրքն բազումք 'ի ներքս և յանդաստան մեհենին զետեղեալ կան ընծայեալք աստուածոյն 'ի կրօնասէր և 'ի հնոցհաստատ ժողովրդենէ'. այլ ոչ ուրեք 'ի նոսա զկայ առեալ աչք, արագ ա-բաց 'ի պատկեր և 'ի գահոյս Աքրամաղդայ բեբրին։ Քանզի հրաշակերտս այս զլուխ գործոց Փի-դիասայ և քանդակագործութիւն այնպիսի ինչ ընդ նախկին տեսին գործէ աղգումն 'ի տեսօղս, որ տակաւ զնութեամբ խորագոյն ևս տպաւորի։

Այս է նիւթ պատկերին ոսկի ընդ փղոսկր յեռեալ. և թէպէտ բազմեալ կայ, այլ գրեթէ 'ի յարկ մեհենին հասանէ բարձրութիւն նորա[4]։ Յաջոյ ձեռին նորա է պատկեր յաղթութեան՝ դարձեալ յոսկւոյ և 'ի փղոսկրէ, և 'ի ձախումն

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 10. էջ 399։
2 Նոյն անդ. էջ 400։
3 Նոյն անդ։
4 Նոյն անդ. էջ 405։
Սարաք. գիրք Բ. էջ 353։
5 Ցարաք. անդ։

գաւազան գեղեցկակերտ յօրինեալ յաղգի ազգի հրահալից, և արծուի 'ի ծաղ գաւազանին[1]։ Կոշիկք նորա ոսկեղէնք էին, նոյնպէս և կրունոց նորա յորում քանդակեալ կան կենդանիք և ծաղկունք, մանաւանդ շուշանք[2]։

Վառոտանի է աթոռն, և 'ի մէջ չորեցունց ոտիցն սիւնք չորք զուգաչափք ամրարձել։ Լիւթք մեծագունք և ազնուականագոյնք յարուեստից մրցին 'ի յօրինուած նորա. նշողէն 'ի նոսա ոսկի, փղոսկր, ոսնիաղ և գոհար ականք, և պՀնի ամենուստ նկարուք և բարձր քանդակօք։

Ոչք 'ի բարձր քանդակաց 'ի դէմն միոյ միոյ յաւաջոյ ոտիցն գրոշեալ կան, բերելով 'ի բարձու պատկերս չորս յաղթութեան իբր 'ի կաքաւս, ապա տիենգայս՝ որ յարիշտակէն զողայս թեբայցոց, և ապա զԱպոլոն և զԱրտեմիս՝ զԱիովսկեայ մանկունսն նետահար առնելով, և հուսկ 'ի վայր երկուս սպլ և պատկերս յաղթութեան։

Եւ ոչ զոյգն ինչ տեղի եղեալ Փիղիպոս 'ի վերայ աթոռոյն անզարդ. զչորիւք գօտուվքն որ կապէն զոտս աթոռոյն ընդ միմեանս՝ երեսուն և եօթն թուեցի պատկերս, յորոց կէսք գօտեմարտիկս, և կէսք զՀերակլեայ պատերազմն ընդ Ամազնս ընծայէն 'ի տեսիլ*։ Ի վերոյ գլխոյն Ամրամազդայ 'ի կատար թիկանց աթոռ-

1 Պաւասն. գիրք Ե. գլ. 11. էջ 400։ Պլին. գիրք ԼԴ. գլ. 8. հա. 2. էջ 648։

2 Պաւասն. անդ. էջ 404։

* Յեսիոյս մատենիս 'ի անգլեկութիւնսն. թիւ ԺԳ։

ռայն, աստի դրօշեալ կան երեքին Հ նորՀք՝ զոր Լուսինամէ ետ նոմա, և աստի երեքին Յեղանակք՝ զոր Լուսիս մատոյցնոմա[1]։ Բազում այլ ևս բարձրը քանդակք են 'ի պատուանդանի աՀթոռոյն և 'ի խարսխին կամ յատակնոմ՝ որ զանՀեթեթ կերտուածն 'ի վեր ունի. բազմազոյնք 'ի նոցանէ ոսկեղէնք, զոյն ողիմպիականաց բերելով զպատկեր։ Ոչ ոտ Բրամանզայ դրոշմեալ կայ արձանագիր. Փիղիայ աՀենացւոյ որդւոյ Բարմիդեայ ձեռակերտ եմ[2]։ Եւ ոչ շատացեալ Հնարարին զիւր անունն դրոշմելով, յաւելու և զՊանտարկեայ ուրուն պատուոյ զիւրոյ մոռերմի[3], առ 'ի յաւերժ յիշատակ գեղոյ նորա, 'ի վերայ միոյ 'ի մատանոցն Բրամանզայ[4]։

Ել է մարթ մատչել Հուսալ 'ի պատկեր անդր, զի 'ի բացէ սիՀնակք խիտ առ խիտ պարուսնակեալ պահեն զանցս[5], զարդարելք Հրաշազան նկարքուք 'ի Պանեհեայ՝ յեղբօրէ և յաշակերտէ Փիդիայ։ Զոյն ինքն Պանեհնոս, 'ի միասին ընդ աշակերտացն իւրում Կոլոտեայ աշխատ եղև 'ի դլխաւոր մատունս Հրաշակերտ պատկերին։ Եւ

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 11. էջ 402։ Եսեբիոս. Ծննդաբ. գիրք, տող 800։

2 Պաւսան. անդ. գլ. 10. էջ 397։

3 Կլեմ. ազէքս. յորդոր. առ. Հեթ. էջ 47։

4 Եւ արձանագիրն էր այս. ՊոՀՔՔՐՅԷՔ ԳԷՂԱՒ. զոր ոմանք 'ի յանցանս համարելով Փիդիայ, նա զանձն արդարացոյց՝ Բրամանզայ զգովութիւնն յաւելով. քանզի Պանտարկէս նշանակէ ամենարաւական։

4 Պաւսան. անդ. գլ. 11. էջ 401։

5 Նոյն անդ. էջ 405։ Աստրաբ. գիրք Ը. էջ 353։ Պլին. գիրք ԼԳ. գլ. 8. հա. 2։

պատմեն, զի 'ի կատարել այնորիկ 'ի քաց էառ Փիղիպոս զառագաստն որ աքօղէրն զայն. և խրն-դրեալ զդատաստան հատարակաց, ըստ հաճոյից բազմութեանն յերիւրեաց զայն[1]։

Օ. ապմացան առմենաքին ընդ մեծախոհութիւն գործոյն, ընդ վարթատութիւն նիւթոյն, ընդ վաստակոյն ճարտարութիւն, և ընդ զեզապատշաճ յարմարութիւն ամենայն մասանցն. այլ առաւել ևս զարմանային ընդ վսեմ կերպարանն, յոր ճարտարին կերպարանեալ էր զդէմն Աբրահամոզայ. զի աստուածպետականն 'ի նմա զօրութիւն, հանդերձ մեծաստատ իշխանութեամբն և խորին իմաստութեամբն և նեղոյ քաղցրութեամբն տպաւորեալ էին էր։ Յառաջքան զնա ճարտարքն զվերին աստուածոց կերպարանէին 'ի տիպս հատարակաց մարդկան, առանց տալոյ նմա գեղաշնորհիկ իմն և առանձնաւոր տիպս կերպարանաց. Փիղիպոս նախ զոգացեալ հատու լեալ աստուածային մեծվայելչութեանն, յաւել պատճառս երկիւղածութեան ժողովրդոց՝ զմնելի առնելով նոցա զոր երկրպագելին[2]։ Այս ուստի արդեօք զայնպիսի բարձրագոյն տիպս յղացեալ երևիցեալ։ Պատասխանեն քերթողք՝ թէ զի յերկինս էլ կամ թէ զկիր առ նա իջին 'ի յերկիր[3]. այլ նա ինքն պարզա-

1 Ղուկիան. յղ. պատկ. Լիւ. գիրք Խե. գլ. 28։ գլ. 14. հա. 2. էջ 492։
2 Կուինթիլ. հրահ. ճարտ. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 744։
3 Դաղկոք. գիրք Դ. գլ. 6. էջ 301։

գոյն և ամենաագոյն տալով պատասխանի որոց հարցմանն զնա[1], զՀոմերոսին 'ի նեղբս ած զտողն՝ ուր քերթողն ասէ, թէ Կասուտակային յօնոքն ակնարկեաց Օրուանեանն, և մեծապէս շարժեալ տատանեցաւ Ղևմպոս[2]։ Ուստի տողիցս այսոցիկ տպաւորեալ 'ի յոգւոջ Փիղիպայ զպատկեր ստոյգ գեղեցկին, այն որ քաջահանճար մնաց է ազգելի, զողիմպիականն ստեղծին զԼրանազդ[3]։ Լաւ որ ինչ կրօնք և տիրեսցեն Յունաստան, ողիմպիական պատկերն Լրանազդայ կացցէ նախատիպ հանճարապայ՝ որք ըստ վայելուչն արժանեաց զգեղաբուն էն յանդիման առնել կամիցին։

Լոլիսացիք քաջ հանդէն զյարգ աւանդոյն զոր ժառանգէն, և ցուցանեն դեռ ևս հիւրոց զգործարան Փիղիպայ[4]. որք և զաւակի իսկ քաջի հարտարին բարեբարեալ, յանձնեցին նմա զհոգ պատկերին՝ ունել միշտ զայն 'ի բնիկ պայծառութեանն[5]։ Լաւ վասն զի մեհեանն այն և շրջափակ մեհենին 'ի հախճախուտ վայրս է, մի և զայս առնեն զգուշութիւն առ 'ի պահել զփղոսկրն 'ի խանաւոյ, զի հեղուն յանձախ շուրջ զաթոռոնն ձեթ՝ առու 'ի գետնի գործեալ[6]։

1 Սարաբ. գիրք Բ. էջ 354։ Պաւսա. յԵրիկ. հա. 1. էջ 270։

2 Հոմեր. Եղիակ. գիրք Ա տող 530։

3 Պիկեր. յդ. հարս. դլ. 403։

4 Հա. 1. էջ 421։

4 Պաւսան. գիրք Ե. դլ. 15. էջ 413։

5 Նոյն անդ. էջ 412։

6 Նոյն անդ. դլ. 11. էջ 403։

Ի մեհենէն Լ.բամազդայ անցաք 'ի Հերային [1], որ և այն դորացի կարգաւ Ճարտարապետեալ շուրջ պատի 'ի սեանց. այլ վաղեմի է յոյժ քան զԼ.բամազդայն։ Լաղմազդինք յանդրեաց որ են անդ ոսկեղէնք և փղոսկրեայք, դեռ ևս անհարթ յանդիման առնեն զարուեստն, թէպէտ և չիցեն քանդակեալ յառաջ քան զսոն առելն քան զերբեհարիւր։ Յուցին մեզ անդ զարկղն [2], յորում Ալիսեզոս արքայ՝ որ ապա տիրեացն 'ի Լոմնթոս՝ փակեցաւ 'ի մօրէն, պահեալ 'ի ձեռաց հալածչաց տան իւրոց։ Ի մայրի փայտից կազմեալ է արկղն, և 'ի վերայ նորա և 'ի չորեսին դէմս են բարձր քանդակք, կէսք անդամին 'ի մայրւոյն, և կէսք յոսկւոյ և 'ի փղոսկրէ. և յանդիման առնեն մարտս պատերազմաց և խաղս և զայլ իրս դարուց զիւցազանց, հանդերձ արձանագրութեամբք 'ի տառս վաղնջական։ Ի տաղիւրագոյն ուշ եղեալ զնեալք զգործածն, զի ցուցանեն եթէ քանի անկերպարան էին արուեստք Այլազգաց յառաջ քան զերիս դարս։

Ի մեհենաւս այսուիկ կատարին խաղք [3], որոց հանդիսադիրք կան տիկնայք վեշտասան ընտրեալք յուԹեցունց ցեղից եղիսացւոց, մեծարոյք առաքինութեամբ և տոհմիւ։ Արկին պարք են նոցա երաժշտականք, որ նուագին

[1] Պաւսանիաս, գիրք Ե. գլ. 17. էջ 418։
[2] Նոյն անդ, էջ 419։
[3] Նոյն անդ, գլ. 16. էջ 417։

օրհնութիւնս Հերայ. և զմեծարութիւն վարա-
զոյրն որ յաւուրս տօնի սրբոյն ձգի՝ նոքա ասղ-
նեգործեն, և նոքա սահմանեն զմրցանակս արշ-
ջաւահանդիսի օրիորդացն Եղիսացւոց։ Ի տալ
նշանին՝ յարձակին օրիորդքն ախոյեանք ընդ
սասպարէզն զրեթէ կիսամերկք, և վարքս նոցա
զուսովքն ծփեալք. և որ յաղթէն՝ առնու սպակ
ձիթենի, և հրամանն՝ որ ցանկալին էա է նոցա՝
գնեալ զկենդանագիր իւր 'ի մեհենին Հերայ։

Լքեալք 'ի մեհենէն, շրջեցաք ընդ ամենայն
շրջափակն սուրբ. ընդ մէջ սօսեաց և ձիթե-
նեաց որք հովանի առնեն վայրացն ', ամենայն
ուրեք յանդիսանն լինէին աչաց մերոց սիւնք և
ախոյեանք և կառք յաղթականք և անդրիկ
անհամանքք պղնձիք և կռեայք դից և յաղթո-
ղաց[2]. քանզի 'ի մեհեան անդր փառաց չիք մուտ,
բայց միայն որոց արժանի են անմահութեան։

Լաղումք յանդրեաց աստի յեցեալ կան 'ի
սիւնս, կամ 'ի խարսխի զետեղեալ, հանդերձ
իւրաքանչիւր արձանագրութեամբք վասն որոց
իրաց նուիրեալ էին։ Ցեսաք անդ զրօշեալս Լրա-
մաղդայ աւելի քան զքառասուն, ձեռակերտս
այլ և այլ Հարտարաց, նուիրեալս 'ի Ժողովրդոց
կամ՝ յիւրաքանչիւրոց ոմանց. և էն՝ 'ի նոցանէ բար-
ձունք մինչև զքսանեւեօթն ոտնաչափ։ Լակ նա-

[1] Պաւսան. գիրք Ե. գլ. 429։
27. էջ 430։ 3 Նոյն անդ. գլ. 24. էջ
[2] Նոյն անդ. գլ. 21. էջ 440։

հատակայն անդրեաց անթիւ է բազմութիւն, և էն 'ի մեհենի անդ կանգնեալ 'ի նոցունց իսկ[1], կամ 'ի քաղաքաց ծննդեան նոցա[2], կամ 'ի ժողովրդոց բարեբարելոց 'ի նոցանէ[3]։

Պատկերքս այսոքիկ 'ի ջրից դարուց հետէ տակաւ բազմապատկեալք՝ յանդիման առնեն յեանոց զնախատիպսն, 'ի շրջան քառից ամաց ածեալ զնոսա 'ի տեսիլ անթիւ բազմութեան եկելոց յամենայն աշխարհաց 'ի զնին փառաց յաղթականացն, և 'ի լուր պատմութեան մարտի նոցա, և 'ի ցուցանել միմեանց խնդութեամբ զայնոսիկ՝ յորս պանծան հայրենիքնոցա։ Բարեբախտութիւն կարի յոյժ մեծ էր մարդկութեանս, եթէ 'ի սրբարան անդր՝ առաքինեաց և էթ էին մուտք։ Բայլ սխալեմ՝ զի ոչ յամէին խառնակոխ առնել զայն դաւ և կեղծաւորութիւն, որք յանձխագոյն յոյժ քան զառաքինութիւն մեծարին 'ի ժողովրդոց։

Որ՝ինչդեռ զարմանայաքն ընդ վաստակս քանդակագործութեան, և հետաղօտեալ տեսանէաք զկարգ բարգաւաճութեան և զվերջին Ինդն ապրուեստին, առաջնորդքն մեր վէպս երկայնս, և իբս որ ոչ յականջալուր եկեալ էին՝ պատմէին մեզ զայնցանէ, զորոց զպատկերսն ցուցանէին։ Եւ յանկարծոյց լինել մեր 'ի կառս կրկին պղնձիս, յորոց 'ի միումն բազմէր Վեղոն արքայ սի-

[1] Պաւսանիաս, գիրք Զ. էջ 497։
[2] Նոյն անդ, էջ 493։
[3] Նոյն անդ, էջ 480։

բակուսացուց, և 'ի միւսումն Հերոն եղբայր նո-
րա և յաջորդ[1], ասեն ցմեզ. Տեսանէք մերձ 'ի
կուսն Պետրոսի զանգրիդ. Պղեսմերդեայ է դա
ըմբշի, որ ըստ արկածիդ իմն սպան 'ի գօտեմարտի
զոսոին. և զրկեալ 'ի պսակէն առ 'ի պատուհաս,
խեղդաբերեցաւ առ վշտին։ Այլ յետ աւուրց
մնեալ 'ի վարժոց ուրեք մանկտւոյ, բուռն եհար
զսեանսկ յորոյ վերայ տուն հաստատեալ կայր, և
կործանեաց զայն. և կորեան մանկունք իբր վեթ-
սուն ընդ աւերակօքն[2]։

Այլ միւդ այդ անդրի Տիմանթեայ ըմբշին
է պատկեր, այն որ 'ի Ծերութեանն իւրում
հրահանգէր զօրհանապազ յաղեղնաւորութիւն։
Այլ դադարեալ առ ժամանակ մի 'ի հրահանգացն
վասն ուղղութեան, և 'ի դարձին իւրում
անդրէն կամեցեալ հանապազորդել 'ի նոյն, իբրև
ետես զի նուազեալ էր 'ի զօրութենէ, արար
իւրովի խարդախ, և ընկէց զինքն 'ի բոց[3]։

Օ ամբիկդ զոր տեսանէք, վասն թեթև ըն-
թացիցն Հողմն կոչէր։ Ընթանալ դորա յաս-
պարիզին, Փիլոտաս վերելեալին իւր անկաւ յեր-
կիր. իսկ ինքն ոչ կասեալ յընթացից՝ պատե-
ցաւ զնպատակաւն, և եկաց առաջի դատաւո-
րաց։ Որոց զաւէր նորա պսակեալ հրամայն ետուն
նմա կանգնել իւր անդրի հանդերձ յաղթական
երիվարաւն[4]։

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 9. էջ 473։
2 Նոյն անդ, էջ 474։
3 Նոյն անդ. գլ. 7. էջ 471։
4 Նոյն անդ, գլ. 13. էջ 484։

Ի՝մ թիշդ այդ Գողաւկոս է՝, և էր դա պատանի, և գործէր զերկիր։ Հայր դորա զարմացեալ, տեսանելով զի փոխանակ ուռան բուռն՝ի գործ արկանէր՝ի մահ անդրէն զխոսին քեցեալ յարօրցոյն, ած զդա այսր, և եմոյծ՝ի մրցանս բռնամարտակաց։ Գողաւկոս խուճապեալ յերեսաց ասոխին՝ որ մերթ զաջողակութիւն և մերթ զկորով՝ի կիր արկանէր, մինչդեռ ահա նկուն լինէրն՝ աղաղակեաց հայր նորա. Հա՛ր որպէս զխոսի որդեակ իմ։ Լա՛ մանկանն կրկնեալ վաղվաղակի զհարուածն, յաղթող հռչակեցաւ։

Ի՝հաւասիկ Ավագենեա, զորմէ հաղար և երկերիւր մրցանակս ասեն կալեալ յազգի ազգի խաղս Լեզադայ՝ի հետի ընթացս՝ի գօտեմարտի և յայլ մրցմունս։ Լա՛ յետ մահուն իսկ անդրի նորա կանգնեալ՝ի հայրենիս իւր՝ի Ավասոս, զրդեր զնա խանձ մեղ յոսոխացն՝ որ հանապազոր եկեալ գիշերի զզայրացուցիչ իւր ընդ անդրին սղնձի հանէր. և այնքան զրգուեալ զայն հարուածովք, մինչև անկաւ՝ի վերայ նորա, և ջաղխջախեաց զնա։ Ի՝ծաւ անդրին՝ի դատաստան, և ընկեցաւ՝ի ծով։ Յետ այսորիկ նեղէր Ավասոս՝ի սովոյ, և բնակչացն հարցեալ զդիս՝ ընկալան հրաման սպատասխանուց, զի զԱվագենեայ տարապարտուց անարդեալ էր նոցա զայիշատակն[2]։ Լա՛ հանեալ զանդրի նորա՝ի ջրոյ՝ կանգնեցին անդրէն յիւրաքո՛ տեղւոջն, սա-

[1] Պաւսան. գիրք Զ. գլ. 13. էջ 475։
[2] Նոյն անդ. գլ. 11. էջ 479։

տուաձական սահմանեալ նման պաշտօն *։

Լակ ըմբիշդ այդ բարձեալ՝ի յուս զիւր անդրի եբեր կանգնեաց զայն աստ իւրովն։ Լաւ է դա հռչակաւորն Միրոն, այն որ՝ի մարտի քաղաքա-կցայն իւրոց կրոտնացուց ընդ սիբարացիս զորա-վար կացեալ՝ կանգնեաց յաղթուն մեծ, երևեալ՝ի Ճակատամարտին լաիտիւ և այլոյք զինուն Հե-բակլեայ՝ զորոյ նորոգեաց զայիշատակ՝։ Լաղում՝ անգամ՝ի խաղս մեր և՝ի դեղ փականն տարառ նա զյաղթութիւն, և զնորանչան զորութեանն իւրոյ յաՃախ տայր անդ զփոքՃ։ Լչ զի զկայ առ-նոյր՝ի վեմ կոր դիւրասահ լարծաղոյն գործեալ զայն իւղով, և ընդդէմ ՀամուՃգին մղմանց կայր անդրդուելի[2]. և էր զի նուռն՝ի բոմն կալեալ, և առանց բեկանելոյ զայն՝ի Ճնշմանէն՝ այնպէս պինդ ուներ, զի ըմբիշք կորովագոյնք ոչ կարէին փեռեկել զնմանուն նորա առ՝ի կորզել զայն. այլ միայն սիրուհին նորա կարէր[3]։ Պատմին զնը-մանէ եղն ըստ անՃին բերելով ընթացեալ ընդ աստղաբէզն՝. և զի յաւուր միում՝ի տան ուրեք հանդիպեալ ընդ աշակերտս Պլեթագորայ՝՝ի տա-պարել սեանն յորոյ վերայ շինուածն հաստա-տեալ կայր՝ կալաւ զայն, և կեցոյց զնոսա՝ի մա-

* Ցաւալեցաւ ապա պաշ-տն թէագենեայ, և մանա-ւանդ ախտաՃեաւք կարգոյին զնա յոգնութիւն։ (Պատան. գիրք Զ. գլ. 11. էջ 479)։

1 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 77։

2 Պատան. անդ. գլ. 14. էջ 486։

3 Եղեան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 24։

4 Ամենեոս, գիրք Ի. էջ 412։

հուանէ[1]. և զի 'ի ծերութենն իւրում եղև որս զաւ-
զանաց վայրենեաց, կաշկանդեալ ձեռաց նորա 'ի
կոնձղ ծառոյ ձեղքեալ 'ի սեպոց՝ մինչ կամէրն
հերձուլ զայն[2]։

Տեսաք ապա զսիւնն, յորս դրոշմեալ կային
դաշինքն Իսրայելական ցեղ այլ և այլ ազգաց Լա-
ւադայ[3], և աւանդեալ անդ առ 'ի սրբազանել։
Լ. յլ այն ամենայն ուխտք լուծեալ էին, և դրբ-
ժեալ երդմունքն առ հասարակ՝ որ անլուծանելի
վնասս առնէին. և սիւնքն որ դեռ ևս պահին անդ՝
վկայեն ահագին ՀՀմարտութեանս, զի ազգք
բարգաւաճեալք հաւատարդութիւն ևս յայնժամ
գտանին՝ յորժամ ուխտ դնեն կալ հաշտք ընդ
միմեանս։

Ի հիւսիսոյ մերմենին Հերայ 'ի ստորոտ Կամ-
նեայ լերին[4] է թուանք երկայնաձիգ մինչև ցաս-
պարէզն, յորոյ վերայ յազգաց բազմաց 'ի Յու-
նաց և յօտարաց կառուցեալ կան անուանեալ զան-
ձարանքն։ Հանգոյն սոցին և 'ի Դեղափիս կան,
այլ դեղափականքն լի են նուիրօք ցանկալեօք, իսկ
յողնմպիականսն զրեթէ չիք ինչ այլ բաց յան-
զրեանց և 'ի հին աւանդից՝ որ և ոչ ըստ կիրթ ա-
խորժակաց և մեծարգոյք ինչ են։ Լա՛ իբրև
զարտաՀանն կամեցաք գիտել այսր զանազանու-
թեան, մի յառաջնորդացն մերոց ասէ. Լ՝ մեր

[1] Սորաբ. գիրք Զ. էջ 263։ էջ 407։
[2] Պաւսան. գիրք Զ. գլ. 14. էջ 487։
[3] Նոյն, գիրք Ե. գլ. 12.
[4] Նոյն անդ. գլ. 19. էջ 497։

ատ հարցուկ մի, այլ ոչ յոյժ հաւատարիմ, և թերևս դադարեսցէ նա ընդ հուպ 'ի պատասխանելոյ. իսկ առ դեղիական հարցուկն երկուց կամ երից գուշակութեանց ըստ դիպուածոյ ինն լրումն՝ ձգեցին զնստահութիւն թագաւորաց ոչ մանց, և առատաձեռնութիւնք նոցա յորդորեցին 'ի նոյն զաղգս ամենայն։

Այլ ոչ դադարէր ժողովուրդն գալ խնդել Յիզնմպիա՝ ընդ ծով և ընդ ցամաք յամենայն կողմանց Աշխարհաց, և 'ի հեռաւոր աշխարհաց, փութացեալք 'ի տօնն՝ որոյ պայծառութիւն անցանել զանցանէ զեր 'ի վերոյ քան զամենայն հանդիսից, այլ պակասէ 'ի նմա ինչ՝ որում մարթէր արդեօք պայծառագոյն գործել զհանդէսն։ Վանդն չիք անդր կանանց մուտ, վասն մերկամարտիկ մրցութեան նահատակացն՝ որպէս ոչ ինչ է երկբայելի։ Այլ այնպիսի խիստ էն օրէնք արտաքսելոյ անտի նոցա, զի ոչք իշխեն անցանել զօրինաւքն՝ ընկեցիկ լինին գահավէժ 'ի ժայռէ բարձուէ [2]։ Ասացք քրմուհեաց միոյ 'ի մեհենաց է անդ սահմանեալ տեղի [3], և օրէն է նոցա կալ 'ի զնին իրիք իրիք մրցութեանց։

Ակիզբն տօնիցն հանդիսի 'ի մետասանեերորդի աւուր ամենեան եկեղեցոյն, որ սկսանի ընդ Ծննդեան լուսնի յետ ամառնային յեղյեղակին։

1 Փիլոսոփ. վարք Ապող. էջ 389։ գիրք Ը. գլ. 18. էջ 361։
2 Պաւսան. գիրք Ե. գլ. 6.
3 Նոյն. գիրք Զ. գլ. 20։

Օ աւուրս հինգ տեւեն տօնք, և 'ի կատարած աւուրն հինգերորդի յորում լուսն է լուսնի՝ քառորդն յաղթողք։ Սկիզբն եղև տօնիցն յերեկոյէ* զգիմ պատարագաց, որ մատուցան 'ի բագինս կանգնեալս այլ և այլ դից 'ի մեհենին Բ.ամնադայ և շուրջ զնովաւ[2]։ Այս էին բազինքն առ հաստակ զարդարեալք սաղարթաց և բոլորիւք ծաղկանց[3], և ամենեքին մի ըստ միոջէ ոռոգեցան արեամբ զոհից[4]։ Այս յատուկ բազինն Բ.ամնադայ մատուցաւ, որ կանգնեալ կայ 'ի միջի ընդ մեհեանն Հերայ և ընդ բանն Պեղոպայ[5]։ Ընդ է գլխաւորագոյն տեղի հանդիսից կրօնասիրութեան ժողովրդոյ. անդ եղեսացիք հանապազօր մատուցանեն զոհս, և օտարք յամենայն ժամանակի։ Ի խարիսխս քառակուսի կանգնեալ կայ բագինն, ուր ընդ աստիճանս քարեղէնս են եւք։ Այս է ամբարտակ իմն անդ, յորում զենմունքն լինին. 'ի միջի անդ ամբառնայ բագինն, բարձրութիւն նորա քսանեւերկու ոտնաչափ. և էլանեն անդր 'ի վեր ընդ աստիճանս կազմեալս 'ի մոխրոյ զոհիցն, զանգեալ զայն ջրով Բ.ալիեայ։

1 Պինդ. ոգեմոյ. 3. տող 33։

* Յառաջնումն ամի 106 ոգեմոլիագին՝ առաջին օր ամսեանն եկատոմբէոնի հանդիպէր յերեկոյն 17 աւուր յուլիսի 356 կանխաթուական յուլիսն ամին Ն. Փ. և մատատեարորդ օր եկատոմբէոնի սկսանէր յերեկոյէ 27 աւուր յուլիսի։

2 Պաւսան. գիրք Ե. ԳԼ. 14. էջ 411։

3 Պարապ. Պինդ. ոգեմոյ. 5. տող 13։

4 Պաւսան. անդ։

5 Նոյն անդ, էջ 409։

Լրկարաձգեցան պաշտամունքն մինչև ցմոր զիշէր, և կատարէին 'ի ձայն արուեստական տաս 'ի լուսնակի, զի էր լուսինն մերձ 'ի պատա- ռումն. և բարեկարգութիւն և շուք հանդի- սին պակուցումն և պատկառանս միանգամայն ա- ծէին տեսողաց։ Լրա 'ի մէջ զիշերի ընդ կատա- րել պաշտամանցն, բազմազոյնք 'ի հանդիսատե- սաց փութով մեծաւ, որ ընդ ամենայն աւուրս տօնիցն տեւէ[1], ընթացան յասպարէզն առնուլ դիպողազոյն տեղի 'ի զինին խաղուցն՝ որ ընդ ար- շաղոյն հանդերձեալ էին սկսանել։

Ասպարէզն ողիմպիական որոշի յերկուս մա- սունս, որ էն ընթացարանն և ձիընթաց[2]։ Ան- թացարանն է իբրև զթուամբ վեց հարիւր ոտնա- չափ յերկայնութիւն[3], և համեմատ 'ի լայնու- թիւն. անդ կատարին արշաւահանդէսն և բազ- մազոյնք յայլոց մրցութեանց։ Լակ 'ի ձիընթացն առնին կառարշաւք և ձիարշաւք։ Ասի ընդար- ձակի կողմն ասպարիզին ընդ բլուր մի, և անտի երկայնագոյն ևս որպէս զթուամբ[4], լայնութիւն նորա վեցհարիւր ոտնաչափ, և կրկնապատիկ երկայնութիւն նորա[5]. և բաժանել ընդ նա և ընդ ասպարէզն շինուած՝ որ արձակարանն կոչի։

1 Յիշատ. բանաս. կաձառ. հա. 13. էջ 481։
2 Պաւսան. գիրք Զ. գլ. 20. էջ 502.
3 Երոդոտ. գիրք Բ. էջ 149։ Կենսոր. յդ. աւուր ծննդ. գլ. 13։
4 Պաւսան. անդ, էջ 504։
5 Նոյն անդ, գլ. 16. էջ 491։ Պլուտ. 'ի Սոլոն, հա. 1. էջ 91։

Լա՛ւ է զաւիթի կամարակապ. բակ ընդարձակ ա-
ռաջի ունելով 'ի ձեւ առաջնից նաւու, որոյ որմք
շրջապատք մերձեալ առ միմեանս՝ խտրոց մեծ 'ի
միջի թողուն յանցս կառաց բազմաց միանգա-
մայն։ Ի բակի անդ կայարանք են կառաց և ձիոց
ուղղորդ անջրպետեալք, և վիճակաւ բաշխին
կայք. զի այլք քան զայլս դիպողագոյնք են։ Յբն-
թացարանն և 'ի ձիընթաց են անդրիք և բաղնիք
և այլ ևս ձեռակերտք', յորս կախեալ կայր
կարգ և ցուցակ մրցանացն՝ որ 'ի տօնսն անդ ա-
ծելոց էին 'ի հանդէս[2]։

Կարգի մրցանացն յայլ և այլ ժամանակս փո-
փոխումն եղև*. այլ ըստ այժմու յաճախ սովո-
րութեան, ընդ առաւօտս կատարին թեթեւքն
անուանեալ հրահանգք, որպէս ազգի ազգի արշ-
աւք. և յետ միջօրէի ծանունքն կամ բռունք,
որպէս գօտեմարտն և բռնամարտ այլովքն հան-
դերձ։

Յառաւօտուն ընդ արևածագս փութացաք
յասպարէզն. ուր վաղ իսկ խոնեալ նահատակաց՝
նախաձեռն առնէին մրցութեանցն[3], պար ա-
ռեալ 'ի բազմութենէ տեսողաց. և բազմագոյնք
ևս կային 'ի զնին խառն 'ի խուռն 'ի բլրին, որ
իբրև զգետակ տեղիս կրկիսից շուրջ տեսանելեաց

[1] Պաւսան. գիրք Զ. գլ. 20. էջ 503։
[2] Դիոն. գիրք ԿԹ. էջ 1359։
* Ցեսակոյս մատենիս 'ի տե-
ղեկութիւնսն. թիւ. յԴ։
[3] Փարբ. յԺ. ըմբշամարտ.
գիրք Բ. գլ. 34։

հայէր յասպարէզ անդր։ Սուրային կառք 'ի դիւրոջն, շանդն փողոց, խրխնջիւն երիվարաց խառն ընդ աղաղակի բազմութեանն հնչէին։ Լաւ իբրև վայրիկ մի 'ի տեսարանէ անտի զաչս 'ի բաց դարձուցեալ, և բազմանդրդով աղմկի հասարակաց ցնծութեան համեմատեաւք զանդրդրդ և զանշը-շունջ լուութիւն տիեզերաց, զոր ազդումն չտպա-ւորէին 'ի սիրտս մեր ջինջ պարզութիւն երկնից, և օդոց հեշտալի զովութիւն, տեսիլ Լաֆիեայ՝ որոյ մեծավայելուչ գնան անդ ալիք՝, և անդաստանք պտղալիցք որք 'ի սկզբնածագ ձառագայթից արեգականն պճնին։

Վայրիկ մի յետոյ դադարեցին նահատակք 'ի հրահանգացն, և յուղի անկեալ երթային 'ի շրջափակն մեհենական։ Գնացաք և մեք զկնի, և գտաք 'ի սենեակ աւագանւոյն զութեանն հանդիսաւորս խաղուցն, զգեցեալ հանդերձս շքեղս, և զամենայն օրէնս պատուոյ արկեալ զանձամբ՝։ Անդ նահատակք առ ոտս Լրամնդդայ պատկերին, 'ի վերայ ձառագեայ արեան զոհիցն՝ կոչեցին զգիս 'ի վկայութիւն՝ զի զամիսս տասն հրամայեալ էին 'ի միցմանն, որ առաջի կային նոցա. և երդուան չառնել ինչ նենգութիւն, այլ ամենայն ուղղութեամբ վարել։ Օնոյն երդումն և ազգականք նոցա և վարժիչք երդուան՝։

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 7. էջ 389։

2 Փարբ. յղ. ըմբշամարտ. գիրք Ա. գլ. 19։

3 Պաւսան. անդ. գլ. 24. էջ 441։

4 Նոյն անդ։

Այ 'ի կատարել արարողութեանն դարձաք յասպարէզն։ Այ նահատակացն մնեալ յարձակարանն 'ի գլուխ ասպարիզին, մերկացան յամենայն զգեստուցն, և արկին կօշիկս յոտս, և ետուն օծանել իւղով զմարմին իւրեանց[1]։ Պաշտօնեայք սպասահարկուք ամենայն ուրեք հասանէին, յարձականոցն և ընդ կարգս բազմութեանն խոնարհեալ 'ի գնին, առ 'ի զգուշութիւն բարեկարգութեան[2]։

Այ իբրև հանդիսաղիրքն կալան զկայս իւրեանց, քարոզն աղաղակեաց. Յառաջ անցցեն ընթացողք[3]։ Այ վաղվաղակի 'ի մէջ անցեալ բազմութիւն յոյժ հետեւակաց, կարգեցան կացին տողաբար՝ իւրաքանչիւր վիճակաւ կալեալ զտեղին[4]։ Այ քարոզն կարդաց զանուանս նոցա և զհայրենեացն. օրք յառաջագոյն պայծառացեալքն էին յաղթութեամբ, առաւելագոյն կայթիւք ցնծութեան ընդունելի եղեն։ Այ յաւել քարոզն հարցանել, եթէ ուրուք զոք 'ի նահատակացն տեսեալ էր 'ի կատան, կամ՝ վկայէր զեղծ կենացն նոցա. և եղև լռութիւն խոր. և զգայի 'ի ներքս յիս զձիրս՝ որ 'ի սիրոս ամենեցուն յուզէին, և զոր տեսարանք այլոց ազգաց ոչ ազդէն։ Այ և ես տեսանէի 'ի գլուխ ասպարիզին արս ոմանս յամբոխէն յառաջ մնոտուցեալս առ 'ի մրցել զդոյզն

1 Թուղթք. գիրք Ա.՝ գլ. 6։ Պոլիկար. գիրք Դ. յոգ. 155։

2 Սաուգաբ. 'ի բառն Αὐταρχ.

3 Պղատ. յդ. օր. գիրք Ը. հատ. 2. էջ 833։

4 Պաւսան. գիրք Զ. գլ. 13. էջ 482։

ինչ տերևոց ձիթենեաց, այլ սրա ազատս որք 'ի միաբանութենէ կամաց ամենայն Լչեաղայ ստանձնեալք զիտաս կամ զանձթ հայրենեաց, զի մնացուցանէին 'ի նախատինս կամ 'ի պարծանս յանդիման բազում բիւրուց ականատեսից, որք յաշխարհ Իւրեանց տանելոց էին զանուանս յաղթողացն և զպարտելոց։ Բայց և երկիւղ նկատեալ էին յանհնազանդ հայեցուածս տեսողաց, և յայտնագոյն ևս երևէին ընդ մերձենալ պահուն՝ որ զնոսա լուծանելոյն էր։ Որ իբրև եհաս, փող հարաւ 'ի նշան մատնին[1], յարձակեցան քաջութացք, և 'ի քթթել ակն հասին 'ի նպատակն՝ ուր հանդիսաղիրքն խաղացն կային։ Եւ քաղաքն կարդաց զՊորոս կիւրեանցն[2], և բիւրք բիւրուց ձայնից կրկնեալ անդրէն հնչեցին զանունն։

Պատիւն զոր կալաւ, զերագոյն և պայծառագոյն յողջմտական խաղն է. քանզի հետի ընթացք յասպարիզին՝ է հնագոյն քան զամենայն հանդէսս արշաւանաց մուծեալք 'ի տօնսն։ Ուստ անցանել ժամանակաց բազմայեղանակ փոփոխեցաւ այն, այլ մեք ըստ այսմ յեղանակի տեսաք զայն. նախ մանկանց ահա հասելոց 'ի տիս երկոտասան ամաց, և ապա արանց զընթացսն կատարելով, սաղաւարտ 'ի գլուխ, ասպար 'ի ձեռին, և մոկք իմն կօշկաձևք յոտս[3]։

1 Սոփոկլ. Յեղեկար. տող 713։ 406։

2 Դիոդ. գիրք Ժ.Զ. գլ. 2. 475։

3 Պաւսան. գիրք Զ. գլ. 10. էջ 475։

Լա՛ յաւուրսն որ զկնի՝ ձայն տուաւ այլոց նա-
հատակաց յընթացս կրկնակ ասպարիզին, զի 'ի
հասանել 'ի նպատակն՝ պարտ էր նոցա պատել
զնուաճս, և դառնալ անդրէն ուստի մեկնեցանն[1]։
Լա՛ ասցա յաջորդեցին նահատակք, որոց երկոտա-
սանեկի պարտ էր զընթացս ասպարիզին կատա-
րել[2]։ Յղէն ոչք 'ի բազումս 'ի հանդիսից ատի-
մնեալ, տարան բազմապատիկ մրցանակս[3]։ Մնդ
պատահարս, որ երբեք երբեք ընդոստուցանէին
զուշ հանդիսատես ժողովրդն, դէպ լինէր նահա-
տակաց ոմանց յանկարծ 'ի միջոց 'ի բաց ելանել՝
խոյս տուեալ 'ի պարսաւանաց տեսողաց, և
այլոց հուպ 'ի լրումն ըղձիցն՝ սահեալ անկանել
ընդ լայնք գետինն։ Յուցանէին մեզ զայլս, ո-
րոց հազիւ հետք 'ի փուլոջն նշմարէին[4]։ Կրոտո-
նացեալք երկու յերկեայս կալան ընդ երկար զմիտս,
յառաջեալք կարի յոյժ քան զոսոխսն. այլ 'ի
մղել միոյ 'ի նոցանէ զմիտս և յընկենուլ բոլորք
եբարձ ամենայն բազմութիւնն ընդդէմ նորա,
և զրկեցաւ նա 'ի փառաց յաղթութեան։ Ան-
զի խստիւ արգելեալ էն հնարք այսպիսիք առ 'ի
յաղթութիւն. բայց միայն օրէն է 'ի զնին կա-
ցելոց խրախուսել աղաղակաւ զնահատակս, որոց
ցանկան յաղթութեանն[6]։

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 17. էջ 420։
2 Ցիշատ. բանաս. կանոնոյն, հտ. 3. էջ 309։
3 Պաւսան. գիրք Զ. գլ. 13. էջ 482։
4 Սոքն. գլ. 1. էջ 9։
5 Ղուկիան. յղ. ամբաստ. գլ. 12. հտ. 3. էջ 141։ Պաւսան. գիրք Ե. էջ 441։
6 Պղատ. 'ի Փեդոն. հտ. 1. էջ 61։ Խաղր. յԵւագ. հտ. 2. էջ 111։

Պարտ էր յաղթողացն 'ի վերջնում՝ առաւ տո-
նին պսակել՝ · այլ 'ի կատարել անդ զընթացսն՝
ընկալան, կամ՝ մանաւանդ յաջողակիցին զոսա
յաղթանակին՝ որ իւրաքանչիւր նոցա սահման-
նեալ էր [1] · և այն եղև նոցա սկիզբն բազմապատիկ
յաղթանակաց։ Վանդն ամենայն բազմութիւնն
փութայր 'ի տեսանել զնոսա, և ուրախ լինել
ընդ նոսա · ազգականք նոցա և բարեկամք և դա-
ւառակիցք արտասուելով առ խանդաղատանացն
և խնդութիւն, 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ
բերելին զնոսա 'ի տեսիլ շրջակայից, և 'ի դրուա-
տս ամենայն Ժողովոյն՝ որ բնակիր ամենայն ծա-
ղիկս զնոքօք [2]։

Ի վաղիւ անդր չոգաք վաղ քաջ ընդ առաւօտն
'ի ձիրնթացն, ուր արշաւահանդէս ձիոցն և կա-
ռաց լինելոց էր։ Պարթամանց պահեալ էին մրցու-
թիւնքս վասն ծանանոց ծախուցն՝ որոց պէտք
էին առ այն [3]։ Օրօսանք իմն և պարծանք էն
ընդ ամենայն Լաւադա՝ յանձնեալ իւրաքանչիւր
ումեք ազգս ազգս ձիոց քաջընթացից, մարզել
զնոսա, և ածել 'ի գուպար 'ի տօնս խաղուց [4]։
Լաւ վասն զի ցանկացողաց մրցանակին ոչ է պարտ
իւրովի մնանել 'ի հանդէս, բազում այն է զի և

1 Պարապ · Պենդ · ողիմպ · 3 · տող 33 ։
2 Պլուտ · խրախտ · գիրք Ը · խնդ · 4 ։
3 Պաւսան · գիրք Զ · գլ · 7 · էջ 469 ։
4 Խոսկր · յդ · ձիրնթաց · հտ · 2 · էջ 437 ։
5 Պենդ · խոմմ. 2 · տող 55 ։ Պաւսան · անդ · գլ · 1 · էջ 453 ։

թաղաւորք և պետութիւնք զրին ոսոիք, ապաստանեալ զփառս իւրեանց 'ի հմուտ ձիավարս։ Լ տեսանել 'ի կարգս յաղթողաց զԱվերոն արքայ ակրագանդացւոց, զԱեղոն և զՇերոն արքայս սիրագուսացւոց՝, զՄրբեղայոսարքայ մանկեղենացւոց, զՊաւսանիաս արքայ սպարտացւոց, զԱլսիթենէս արքայ սիկիոնացւոց, և զայլ բազում թաղաւորս և քաղաքս Յունաց։ Լ ոչ է հարկ ասել՝ թէ ոսոիք այսպիսիք քանի եռանդն նախանձու արծարծանիցեն։ Լ զքա հանդէս առնեն սպասուց պերճութեան, և իւրաքանչիւր որ ջանայ հաւասարել նոցին, է զի և գերազանցել։

Յաւուրն պատմի, զի 'ի խաղ՝ յորում Մէջիբիադ պսակեցաւ՝ եօթն կառք սնցին յասպարէզ յանուն բազմահռչակ աթենացւոյն, և երեքին 'ի նոցանէ կալան զառաջին և զերկրորդ և զչորրորդ մրցանակն[1]։

Մինչ դեռ ակն ունէաք նշանին տալոյ, ասացաւ մեզ դէտակն կալեալ հայել 'ի դրիին մի պղնձի՝ որ կայր 'ի գլուխ ասպարիզին, և յարձիւ մի անդրստին 'ի նմինութեամբ դարեալ 'ի բացնի 'ի մէջ արձակարանին։ Լ ահա տեսաք զգլխիին ընկլուզեալ ծածկեալ ընդ երկրաւ, և զարձուին սմ բարձեալ սաւառնեալ 'ի տեսիլ սմենեցուն[2]. և

1 Պինդ. ոլմպ. 1, 2։ Պաւսան. գիրք Զ. գլ. 1. էջ 473։ Պլուտ. առակ. լակոն. հմ. 2. էջ 230։

2 Թուկիդ. գիրք Զ. գլ. 16։ Խակր. յղ. ձիրանեաց. էջ 437։ Պլուտ. Ալգիբ. հմ. 1. էջ 196։

3 Պաւսան. գիրք Զ. գլ. 20. էջ 503։

ահա բաղմութիւն հեծելոց յարձակեալ 'ի ձիընթաց անդը, անցանէին զառաջեաւ մերով հանգիստարաց փայլական, և սպառեալք զնպատակաւն՝ որ է 'ի ծայր ասպարիզին, կէսքը դանդաղէին, այլք և ևս երագէին, մինչև միաւն 'ի նոցանէ կրկնապատկեալ զՀիգն՝ եթող զՀետ իւր զամենայն մարտակիցսն տխուր։

Այս յաղթականին մոռեալ էր 'ի մարտ յանուն Փիլիպպեայ արքային մանկեդմանացոց, որ ամենայն ազգի ազգի փառաց հետամուտ էր. և այնպէս յեղակարծում յայրացեալ նորա փառաք, զի խնդրէր 'ի Բախտէն արկածս ինչ ընդ անչափ բարեբարութիւնսն խառնել '։ Բանզի 'ի սուղ ինչ աւուրս ոչ միայն զյաղթութիւնս զայս յաղնմիական խաղն տարեալ, այլ և Պարմենիոն մի 'ի զօրավարաց նորա՝ էբեկ զլիւրիկեցիս, և Ողնմպիա կին նորա ծնաւ նմա որդի զմեծն Ալեքսանդր [2]։

Յետ ասպարիզելոյ նահատակաց ոմանց, որ այն ինչ յարբունս հասեալ էին [3], լցաւ ապա ասպարէզն բաղմութեամբ կառաց, որք զՀետ միմեանց անցին 'ի հանդէս։

Այս երկիրք [4], ապա 'ի կրկին յովանոցաց ընդեալ, և հուսկ յետոյ քառաձիք՝ որոց հանդէս

1 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 177։
2 Նոյն յԱղէքս. հտ. 1. էջ 666։ Յուստին. գիրք ԺԲ. գլ. 16։
3 Պլուտան. գիրք Զ. գլ. 2. էջ 455։
4 Նոյն, գիրք Ե. գլ. 8. էջ 395։

շքեղազգոյն է և մեծափառ քան զամենայն արշաւահանդէս։

Բ։ Ի քաջ տեսանել զհանդերձանս նոցա, մտաք յարձակարան անդր. և կային անդ կառք բազումք մեծաշուքք, արգելեալք ի պարանոց ոչխք ընդ կարգս իւրաքանչիւր ձգտին, և հետ զհետէ անկանին ի վայր։ Կառավարացն կերպաս ինչ ևեթ թեթև արկեալ էր զիւրեամբք. և երիվարք՝ զորոց հազիւ նուաձել կարէին զաժխոյժս՝ ձգէին յիւրեանս զամենեցուն զտեսանելիս գեղոյն իւրեանց, ոմանք և կանխակալ յաղթութիւնքն[2]։ Ի տալ նշանին, յառաջ մատեան մինչև ցերկրորդ կարգն[3], և համակարգեալ ընդ այլս կացին տողաբար առ սեամն թողարանին։ Լուահա տեսաք զնոսա ծածկեալս փոշւով[4], զմիմեանց զառաջս կալեալ, բախեալ ընդ իրեարս, և այնպէս սաստիկ զկառն ձգեալ՝ զի հազիւ զհետ նոցա ժամանէին աչք։ Յաստիանայր և ևս թափ յարձակման նոցա առ դրօշելով միոյ յանմանիցի Վրաջացն, զորմէ ասէն սարսուռ ինն զանխուլ ի նոսա ազդել[5]. և բազմապատիկը ի հնչել ահաւորագոչ փողոցն[6], որ առ նպատակաւն զետեղեալ կան, ի վայրն հոչակաւոր վանն կառաբեկու-

[1] Պաւստան. գիրք Զ. գլ. 20. էջ 503։
[2] Եղոդոտոս, գիրք Զ. գլ. 103։
[3] Պաւստան. անդ։
[4] Սոփոկլ. Յնչեկոր. տող 716։ Ովիդիոս. տաղերգ. 1։
[5] Պաւստան. անդ էջ 504։
[6] Նոյն անդ, գլ. 13. էջ 484։

թեանց անդ գործելոց։ Վանդն ընդ լայնութիւն ասպարիզին կառուցեալ կայ՝ դղեակն ինչ կերդ յանոյս կառայն թողուլով, ուր վարչայն յաՀախ վտանգի Հարստարութիւն։ Այս այնչափ ևս առաւել ահագին է վտանգն, որչափ զի պարտ է երկոտասանեկի պատել զնպատակաւն. քանզի Հարկ է երթևեկս երկոտասան գործել կառաց ընդ երկայնութիւն ձիրնթաց ասպարիզին՝։

Ի նուազս իւրաքանչիւր պատելոյ նոցա՝ արկածք ինչ կամ դէպք պատահէին, որք՝ ի գութ կամ՝ ի ծաղր երգիծական շարժէին զբազմութիւն ժողովելոյն։ Վէսք՝ ի կառաց արտաքոյ քան զկրկէսն վազէին, այլք ընդ իրեարս բաղխեալ խորտակէին. և ցան և ցիր ընդ ասպարէզն սփռեալ կային բեկորք խորտակելոց կառացն, բազմաւտանգ ևս գործելով զարշաւանս։ Հնդեակ ևեթ մնացին մնրտակիցք, մին թեսաղացի, միւսն լիբէացի, ոմն սիրակուսացի, և միւս ոմն կորընթացի, և հինգերորդն թեբացի. երբեակ առաջինքն մերձ էին՝ ի պատել զվերջին շրջանն. բայց թեսաղացին հարաւ ընդ նպատակն, խորտակեցան կառք նորա՝, և ինքն ընդ սանձն պատատեալ անկաւ թաւալգլոր։ Այլ մինչդեռ ձիանն կործանէին՝ ի վերայ ձիոց լիբէացւոյն՝ որ կից առ երի արշաւէին, և երիվարք սիրակուսացւոյն հո-

1 Պինդ. ոգիմց. 3. տող 59։ Պարապ. անդ. ոգիմց. 747։ 2 Սոփոկլ. յԷլեկտր. տող 6. տող 126։

սէին 'ի խոխոմն՝ որ զայնու տեղեաւն շուրջ կային՝, և հնչէր վայրն առ հատարակ 'ի բազմագոչ ձիչ աղաղակի, հասին կոմնթացին և թեբացին, և պարապ զտեալ՝ ձախր առին զնպատակաւն, և մնրակ 'ի կուշտ ամէհի երիվարացն արարեալ՝ եկին կացին առաջի դատաւորացն. զառաջին մրցանակն կալեալ 'ի նոցանէ կոմնթացւոյն, և թեբացւոյն զերկրորդն։

Յաւուրս անդ տօնիցն 'ի պարապոյ ժամանակս մեկնեալք 'ի տեսարանէն, և շուրջ զքաղաքաւն ողնմպիացւոց դեգերեալք, մերթ 'ի զնին կայաք հանդիսից նուիրակութեանցն՝ որ զային գրեթէ յամենայն ազգաց Լաղադայ սպաս մատուցանել Լրամանդայ[3], և մերթ զարմացեալ կայաք ընդ հանձար և ընդ ժրութիւն տարաշխարհիկ վաճառականացն՝ որ զային բանալ սիրել զնայրօքն զվաճառս իւրեանց[4]։ Այլ էր զի ակամատես լինէաք հարկի մեծարանացն՝ զոր ընծայէին միմեանց քաղաքք[5]։ Հրովարտակօք սահմանեալ ի բերաց անդրիս կամ պսակս, տալով ընթեռնուլ զայնոսիկ 'ի խաղն ողնմպիականս՝ վասն հնոր հաղակութեանն ոչ ինչ նուազ քան զբարերարութիւնն աշխարհալուր հրատարակելոյ։

Ի միում աւուրց 'ի զգնալն մերում զսրամիք

1 Ցիշատ. բանաս. կաճառ. հտ. 9. էջ 384։
2 Դիմարք. 'ի Դեմոսթ. էջ 100։ Պաւսան. գիրք Ե. գլ. 15. էջ 414։
3 Վիկեր. տուսկուլ. գիրք Ե. գլ. 3. հտ. 2. էջ 362։
4 Դեմոսթենէս, յոր պսակ. էջ 487։

գեասյն Աշիեայ, որոյ եղերք յամենայն աղգի աղգի ծառոց հովանաւորք՝ 'ի գունագոյն վրանաց թուին ծածկեալ [1], տեսաք պատանեակ մի գեղեցիկ, զի մանրեալ ընկենոյր 'ի գետ անդր զոստ արմատենաց՝ զոր 'ի ձեռին ունէր, իսկ անմռունչս ընդ նաւէրսն կցորդելով։ Եւ էր նորա այն ինչ յընթացս ասպարիզին կալեալ մրցանակ, զհրաշագեղատանանմենիք ուրեմն զոլով։ Հարցաք մեք զնա, և ետ մեզ պատասխանի. Վասն այս Աշիփէոս, որ յորդառատ և վճիտ ջրոցն արգասաւորէ զգաւառս, էր որսորդ Յունկարիա [2]. և տարփայր նա Աբեթուսայ, այլ սա փախչէր 'ի նմանէ. և առ 'ի խուսել յերեսաց նորա՝ զերծաւ 'ի Սիկիլիա, և այլակերպեցաւ անդ յաղբիւր. և Աշիփէոս կերպարանափոխ եղև 'ի գետ։ Այլ զի բոց բաղձիցն ոչ շիջաւ 'ի նմա, զիրն առ 'ի պակել զանցեալ լի հաստատութեամբ նորա ետուն նմա անցս ընդ ծոց ծովուց, գնալ խառնել ընդ Աբեթուսայ։ Եւ զայս ասացեալ, յոգւոց եհան պատանեակն։

Այլ սակայն 'ի շրջափակն մեհենական զարձ առնէաք։ Ասա ուրեմն մարտիկք, չև ևս մնեալք յասպարէզ, յընդդէմս զոհից խնդրեին զբախան որ մնայր նոցա [3]. և անդ փողք զետեղեալք 'ի բաց զին մեծ, ընդ հակառակս միմեանց հնչէին վասն

1 Աշգոսկիդ. Յաղկեր. էջ 33։ 3 Պինդ. ոգեմոլ. 8. տող
2 Պաւսան. գիրք Ե. գլ. 3։ Պարապ. անդ։
7. էջ 390։

մոցանակին՝ որ միակ ցանկալին էր նոցա։ Այլ հեռագոյն ուրեք բազմութիւն եկաց խոնարհալ մերձ 'ի մի 'ի կամարակապից, ունկն դներ ձայնի արձագանգաց՝ որ մինչև ցեօթն անգամ կրկնեալ՝ վերըստին հնչէին զաւանդեալ նոցա զաղօթառն[1]։ Մինոյն ուրեք յանդիման լինէին մեզ ցոյցք ամենեքեան մնապատ պերճանաց. քանզի 'ի խաղս անդր ածեալ ձգին առ հասարակ, որք միանգամ համբաւեալքն են կամ ցանկան համբաւոյ աջողութեամբքն իւրեանց կամ գիտութիւնք և կամ մեծութեամբք[2]. զի ամենեքին գան անդր 'ի տեսիլ աշխարհաժողով բազմութեան, որ միշտն փութայ զհետ զերազանցելոցն արդեամբք կամ կարծեօք։

Օհետ ձակատամարտին Սաղամինայ յերևեալ Թեմիստոկղեայ 'ի միջի անդ, հնչեաց ասպարէզն 'ի ձայն ծափոյ 'ի պատիւ նորա։ Այլ ամենեցուն զաչս 'ի բաց դարձուցեալ 'ի խաղուցն՝ 'ի նա ևեթ պշուցեալ հայէին, ցուցանելով օտարաց ձայնիւ ցնծութեամբ և զարմանալեօք զվերկինն Այլադայ. մինչև խոստովան լինել Թեմիստոկղի, զի բարեբաստագոյն 'ի կեանս իւր եղև նմա օրն այն[3]։ Պիտացաք զի և Պղատոնի 'ի նա խորդ ողնմիադին հանգոյն ինն ընկալեալ էր

[1] Պլուտ. յղ. շաղփոգի. հտ. 2. էջ 436։
հտ. 2. էջ 502։ Պաւսան. գիրք Ե. գլ. 21. էջ 434։
[2] Խսկր. յղ. ձիրնեթայ.
[3] Պլուտ. 'ի Թեմիստ. հտ. 1. էջ 120։

յաղթանակ։ Օ՛ի յերևեալ նորա՝ի խաղս անդ՝ ամենայն բազմութիւնն ակնկառոյց եղև՝ի նա, և բարբառովք կարի յոյժ ախորժելեաք եցոյց ըզ խնդութիւն իւր ընդ տեսիլ երեսաց նորա՝։

Դէպ եղև մեզ տեսանել միւս այլ խաղաղաստելի և տեսիլ։ Ծերունի ոմն խնդրեր իւր տեղի, և անցեալ ընդ բազում կարգս կայից, և ամենայն ուստեք մերժեալ կատարանաքս, եկն՝ի կայս սպարտացւոց։ Յոտն կացին ամենայն մանկըտին և բազմագոյնք ևս յարանց մեծարանաքս, և ետուն նմա տեղի։ Այնդ էր ըստ զկայութիւն ձեռաց անհմանաք բազմութեանն. և ծերունւոյն գորովեալ, ասէ. Հելլէնք հմուտք կարգաց բարեձևութեան, սպարտացիք ուղղութեամբ նոցին[2]։

Կարիւ զոմն տեսի՝ի շրջափակի անդ աշակերտ Օ՛եքսեայ, զի հանդոյն վարժապետին իւրում[3] զգնայսր արկեալ զիւրեաւ շքեղ ծիրանի՝ յորում ոսկեղիր զրոշմեալ էր անուն իւր։ Եւ ամենայն ուստեք ասէին ցնա. Վնասակարութեանն Օ՛եքսեայ նմանեալդ, դու ոչ ես Օ՛եքսիս։

Ցեսի և կիւրենայի զոմն և զայլ որ կոչնթայի, զի մին զանծութիւնս իւր թուէր, միւսն զնսխինս։ Եւ ցսմոյր կիւրենային ընդ մնասարարութիւն կոչնթացւոյն, և սա ընդ կիւրենացւոյն ծիծաղէր ամբարհաւաճութիւն։ Ցեսի և զոմն

1 Կնեանթ. առ Դիոգ. հտ. 2. էջ 235։
լայերտ. գիրք Գ. յոդ. 25։ 3 Պլին. գիրք ԼԵ. գլ. 9.
2 Պլուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 691։

յանիացն , որ փոքու հանձարով յաջողեալ 'ի գործ ինչ դուշնաբեայ՝ յանձնեալ նմա 'ի հայրենեացն , այնպիսի ինն բարձր կարծիս բերեր զանձնէ՝ որպիսի ինչ յիմանալ զամբարձելոցն յանկարծ 'ի ծաղ մեծութեան։ Լաւ մի ոմն 'ի բարեկամաց նորա թողեալ զնա , եկն և ասէ ցիս յոնկանէ . Լաւ ոչ հաւատալի էր նմա , զի գործ մի այսքան դիւրին իցէ լինել այր մեծ։

Ոչ ինչ հեռի 'ի տեղւոջէն իմաստակ ոմն ունէր 'ի ձեռին զտուփ օծանելեաց և զքերոց , որպէս թէ 'ի բաղանիս գնալով։ Լաւ ծաղը արարեալ զպարծանս այլոց , եւ եկաց 'ի կողմն մի մեհենին Աբամանդայ 'ի մէջ սեանցն ' , և 'ի բարձուէ անտի աղաղակէր առ ամբոխն և ասէր . Ցեսանէք զմտանիս զայս , իմ է քանդակ . և զտուփս զայս և զքերոց ես արարի . և կօշիկքս այսոքիկ և կրկնոց և պարեգօտ , և զօտիս այս որ զսպէն զհանդերձս , իմ են ձեռագործք։ Ընթերցայց ձեզ , թէ ա խորժէք , և քերթուածս զիւցազնականս և ոգեբերգականս և զերկրմնեղին երգս , և զամենայն ազգի ազգի շարագրեալս և զտաղ՝ զոր իմ իսկ արարեալ է զամենազան իրաց . Հառեցիս ձեզ և զերաժշտութենէ և զքերականութենէ , և ահաւասիկ կամ 'ի պատասխանել առ ամենայն խնդիրս։

Լաւ մինչ դեռ իմաստակն մնասխառէր պարծա-

[1] Փիլոսոր . վարք Ապող . [2] Պղատ . յԹպղ . հա . 1 . դիրք Դ . գլ . 31 . էջ 170 ։ էջ 363 և 368 ։

նոքա, նկարիչք 'ի տեսիլ հասարակաց ածէին պատ-
կերս տհա հասեալս 'ի կատարումն [1], և հագներ-
գուք երգէին հատուածս 'ի Հոմերոսի և Յոսի-
գեայ տաղէն. և մի 'ի նոցանէ արտասանեաց 'ի
լուր մեր զբերեալ ածն Լամպեդոկղի ողջոյն [2]։ Վեր-
թոգք, Ճարտարախօսք, իմաստասէրք և վիպա-
գիրք կացեալք 'ի վերայ շուրջանակի սեանց մե-
հենաց և 'ի վայրս բարձունս, ընթեռնուին զգիրս
իւրեանց [3]. կէսք Ճառս բարոյականս արկանէին,
այլք ներբողս զողիմպիականացն առնէին խաղուց,
կամ զՀայրենեաց, կամ զԼեզուացն՝ զորոց մու-
բանային զպաշտպանութիւն [4]։

Յառաջ քան զամն իբր երեսուն, Պոմպեոսիս
բռնաւորն Միթրիդատայ ցանկացաւ զզարմանացումն
բազմութեան ժողովոյն յինքն ձգել։ Լիկին հա-
սին անդր 'ի դիմանց նորա, առաջնորդութեամբ
եղբօր նորա Թէոֆիլդեայ, հանդէս հրեշտակու-
թեան՝ մատուցանել նուէրս Աստուծոյ, բազ-
մութիւն կառաց քառաձիոց՝ ասպարիզէ 'ի կա-
ռարշաւս, և խորանք բազում յոյժ մեծագինք՝
որ 'ի դաշտի անդ կանգնեցան, և արտասանք
ընտիրք՝ ընթեռնուլ 'ի լուր ամենեցուն զբերեալ ա-
ծրս թագաւորին։ Աղոտակութիւն նոցա և պեր-
Ճութիւն ձայնի ձգեցին անդէն զուշ Հելլենաց,

[1] Ղուկիան. յԵրոդոտ. գլ. 4. հմ. 1. էջ 834։
[2] ԼԹԷՆ. գիրք ԺԴ. գլ. 3. էջ 620։
[3] Ղուկիան. անդ, գլ. 3։
Պաւսան. գիրք Զ. գլ. 17. էջ 495։
[4] Պլուտ. 'ի տան Ճարտ. հմ. 2. էջ 845։

որոց միաք վաղ իսկ մեծաշուք հանդերձանօքն զրաւեալ էին. այլ նոյն հետայն պարտասեալ 'ի լուր անհամ տաղնոյն, արձակեցին երդիծանս կա-ըի յոյժ դառնս ընդդէմ Ղիմնեսեայ. և ոչ անդ զկայ առեալ արհամարհանացն նոցա, կործա-նեցին իսկ ոմանք զնորանս նորա և աւար հարին։ Այլ 'ի լուսն արկածից Թշուառութեան Թագա-ւորին, կէսք 'ի կառայ նորա 'ի դուրս ոստեան յասպարիզէն, այլք ընդ միմեանս հարեալ խոր-տակեցան. և նաեւ որ բարձեալ բերէր զհան-դիսականն և զսպասս հանդիսին, վարեցաւ 'ի մերկէ 'ի ծովեղերս Լտալիոյ։ Այլ մինչդեռ հուշակ հարկանէր 'ի Ալիրակուսա՝ թէ 'ի տաղնոյն Ղիմ-նեսեայ հասին արկածք արտասանիցն և ձիոց և նաւուն, դրանիկքն ասէին ցԹագաւորն՝ թէ նա-խանձ հալածէ միշտ զհանճար՝։ Յետ չորից ա-մաց դարձեալ առաքեաց Թագաւորն այլ քեր-Թածս և զուսանս ամբողջակազմս, այլ սոքա ա-ռաւել քան զառաջինսն գտան տանջեցեալք։ Զ զոյժ առեալ Ղիմնեսեայ, խելայ ծիսուն առ-նէր. և ոչ այլ ազգ կարացեալ զԹախծութիւն մտացն փարատել՝ բայց բռնաւորական սիրտս-նոք, զորս աքսորել և զորս դլխատել հրամայեաց 'ի Ժողովրդենէն՝։

Բայց հանապազորդեաք մեք 'ի լուր ընԹեր-ցուածոցն ՅՈղնմպիա. էր զի և հանդիսարարքն

1 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 318։ 2 Նոյն անդ, էջ 332։

խաղալոյն առընթեր կային անդ, և ժողովուրդն փութայր անդր անձկանօք։ Ի միում աւուրց մինչ դեռ յակձիրս կայր 'ի լուր, հնչեաց յամենայն կողմանց անուն Պողիդանայ. և վաղվաղակի բաղմանդանք յորոց անդն կային չոգան զհետ նորա։ Այլ էր նա ընթիր թեսաղացի, անձնոնի հատակաւն և կորովով։ Պատմիչն զնմանէ, Յողիմ պոս լերին անգէն՝ ընկձեալ ընդ հարուածովք զառիւծ վիթխարի. և զի 'ի բուռն հարկանել նորա զոտից զուարակի մոլելոյ, չկարաց գազանն զերծանել՝ առանց թողլոյ զկձղակսն 'ի ձեռս ըմբշին. և զի կասեցուցանէր զերիվարս ամենիս՝ կալեալ ձեռամբ միով զյետուստ կառաց։

Բազմապատիկ 'ի տօնս խաղոց տարեալ էր նորա մրցանակս. այլ յողիմպիականն տարաժամ հասեալ, չկարաց մտանել։ Այլ գիտացաք ապա զեղերական վախճան նորանշան առնս այսորիկ. զի մինչդեռ ընդ ոմանս 'ի բարեկամացն յայրի ուրեք մտեալ կայր զովանալ 'ի տօթոյ, հերձան ժայռք կամարին. խոյս ետուն բարեկամք նորա, այլ նորա զքարաժայռն լեռնաձև 'ի վեր կամեալ ունել՝ ձմեցաւ ընդ նովաւ '*։

Որչափ դժուարին է անուանի լինել առ բարգաւաճեալ ազգինս, նոյնչափ և առաւել խլրտի փառասիրութիւն և 'ի ծայրայեղ անչափութիւնս զառաջանի։ Ի միւսանգամ ուղևորելն իմում Յո-

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 5. էջ 463։

* Յեսկոյս մատենիս 'ի տե. զեկութիւնսն. թիւ ԺԵ։

զնմանիսն տեսի անդ զՄենեկրատ բժիշկ սիրա-
կուսացի, զի ընդ իւր ածեալ ձգէր զբազումս 'ի
բժշկելոյն յիւրմէ, նախ քան զդարմանելն խոս-
տումն առեալ 'ի նոցանէ՝ շրջելոց ամենայն ուրեք
զհետ իւր։ Մի 'ի նոցանէ գնայր 'ի կերպարանս
Հերակլեայ, և միւս ոմն Պսոզնսի, և այլք Հեր-
մեայ և Պսկղեպեայ. իսկ ինքն զգեցեալ ծիրանի,
և պսակ ոսկի 'ի գլուխ, և գաւազան արքունի 'ի
ձեռին, յանուն Պրատեզայ տալով զանձն 'ի
տեսիլ շրջէր ընդ երկիր՝ առաջնորդեալ 'ի նո-
բաձև զիւն։ Գրեաց նա առ Թագաւորն մակե-
դոնացւոց այսպէս.

Մենեկրատ Պրատեզայ առ Փիլիպպոս ողջոյն.
Դու 'ի մակեդոնական աշխարհին Թագաւորես,
ես 'ի բժշկականին. դու զառողջս 'ի մահ մատ-
նես, ես զհիւանդս կեցուցանեմ. քեզ մակեդո-
նացիք Թիկնապահք, ինձ դիք զլեռովին։ Իսկ Փի-
լիպպոս հակիրճ ետ նմա պատասխանի. Ողջա-
միտ լինել քեզ ըղձանամ*։ Այլ յետ ժամա-
նակի լուեալ՝ եթէ Մենեկրատ 'ի Մակեդոնիա
եկեալ է, կոչեաց զնա առ ինքն և հրաւիրեաց
յընթրիս։ Այլ էին Մենեկրատ և ընկերքն նորա
բազմեալք 'ի բաստեռուտնս շքեղս և բարձրագա-
հոյս, և կայր առաջի նոցա բազին, և 'ի վերայ
բազնին երախայրիք հնձոց։ Այլ մինչդեռ խորս-

* Պլուտարքոս (Առակ. Ալեքսիոյսի, առ որ գիրն այն ուղղեալ էր ըստ Նորին պատմութեանն։ լակոն. հա. 2. էջ 213.) զպատասխանիս զայս հանդերձ

վոյք ասղնիւք պաշտեին այլոց բազմականաց, նը-
ւէրք խնկոց և քաւութեան ընծայեին նորոց զիմն-
որոց չհանդուրժեալ ընդ նախատինսն, երկն դառ-
նացեալ 'ի սրտէն, և ոչ դարձան անդրէն։

Ոչ ինչ նուազ զբարս Յունաց և զթեթևու-
թիւն բնաւորութեան նոցա յանդիման առնէն
իրքս այս։ Յառաջ քան զամս ութ 'ի տօնս ողիմ-
պիական խաղուցն եղև պատերազմ 'ի մեհենա-
կան շրջափակի անդ։ Արանզի պիսացւոց յարիշ-
տակեալ յեղիսացւոց զվերակացութիւն խաղու-
ցըն', և սոցա կամելով թափել զերաւունս իւ-
րեանց, կողմանք երկաքանչիւր հանդերձ նիզա-
կակցօքն խուժեցին 'ի շրջափակ անդր, և եղև
անդ մարտ սաստիկ, և բազում Ճապաղիք արեան։
Այս բազմութիւն յոյժ եկելոց 'ի տօն անդր, զրե-
թէ առ հասարակ պսակեալք ծաղկամիք, կային
անխռով 'ի զնին շուրջ զտեղեաւ Ճակատամար-
տին՝ որպէս գրեթէ 'ի մրցանս ըմբշաց զբօսնլով,
և ծափս հարկանելով 'ի հանդոյն իմն յոյզս կրից
ընդ յաղթութիւն մերթ այսր և մերթ այնր
կողման[2] *։

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 4. էջ 460։

2 Քսեն. պատմ. Յուն. գիրք Ի. էջ 639։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 387։

* Հանդոյն իմն տեսարան, այլ սոսկալի ևս յոյժ, ցուցաւ 'ի Հռոմ 'ի սկզբան ինքնակալութեան։ Քանզի զոլոր վեսպասիանոսի և վիտելիոսի ետուն ընդ միմեանս մարտս սաստիկ 'ի տեղւոջն անուանեալ դաշտ Արիսի։ և ժողովուրդն շուրջ զերկոքումբք բանակաքն 'ի զնին կացեալ, կայթս հարկանէին ձեռամբք ընդ յաղթութիւն մերթ ընդ այսր և մերթ ընդ այնր կողման (Ցակիտ. պատմ. գիրք Գ. գլ. 83)։ Այլ 'ի զուգակիցս երկոցունց

Մնաց ինձ ասել զՏրահանգաց, առ որս խնդրի առաւելագոյն կորով քան յայլն. զգօտեկոռուցն ասեմ և զբռնամարտէն և զամենախուսմբ և զՏրն զամարտիկ մրցութեանցն։ Բռանց ունելոց զկարգն՝ որով մարքաբ այսոքիկ հանդիսացան, 'ի գօտեմարտէն սկիզբն կալայց։

Ուշ գօտեմարտիկին է զգեստնել զոսոխն, և ստիպել զնա 'ի յանձն առնուլ զպարտութիւն։ Պարտիկք՝ որոց առաջի կայր ոսոխել, կային 'ի մերձակայ ուրեք գաւթի. և ձայն տուաւ նոցա 'ի միջօրէի[1]։ Լօթն էին թուով, և արկան վիճակք եօթն 'ի սափորի որ կայր առաջի հանդիսաւորաց խաղուցն[2]։ Յերկուս 'ի վիճակաց անտի զրոշմեալ էր տառս Բ. յերկուս յայլս Ր. և յերկուս յայլս Գ. և յեօթներորդումն Դ.։ Ցատսմնեցին զսափորն, և իւրաքանչիւր որ 'ի մարտկաց եհան իւր վիճակ. և մի 'ի հանդիսաւորաց զուգեաց էր կուս երկուս՝ որոց նոցն տառ վիճակեալ էր։ Լ. եղեն երբեակ զոյգ գօտեմարտկաց, և եօթներորդն պահեցաւ մենամարտել ընդ յաղթականս այլոց[3]։

տեսարանաց՝ խոիր մեծ զանազանութիւն տեսանի։ Քան զի Յոլիմպիա ցանկութեամբ եւեթ տեսութեանն ձգեալ ժողովուրդն կայր 'ի զնին. իսկ 'ի գաւառ Արիսն տեսողք զեղուին խուժադուժ խնդութեամբ։ Եւ թող զանիր զանազանութիւն բարուց և բնաւորութեան, մարդն է ասել. զի 'ի գեպան յայնոսիկ տարբ էր մարան Յոլիմպիա տեսողաց. իսկ 'ի Հռոմ՝ ընտանի պատերազմացն նոցա մասն։

1 Փիլոստր. վարք Ապող. գիրք Զ. գլ. 6. էջ 235։

2 Դուլիան. 'ի Հերմոս. գլ. 40. հմ. 1. էջ 783։ Փարբ. յդ. բարբաստաբ. գիրք Ա. գլ. 24։

3 Յուլիոս Կեսար. էջ 317։

Մերկացան յամենայն զգեստուցն. և օծեալք իւղով՝, թաւալեցան յաւազն լինել դժուարակոիւ 'ի ձեռաց ոսոխացն[2]։

Ընդէն վաղվաղակի կացին յասպարիզին ախոյեանք, մին թեբացի և միւսն արգիացի։ Մատեան առ միմեանս, և վայրիկ մի յածեալ զաչս զիրեարօք՝ բուռն հարին զբազկաց միմեանց։ Մերթ ձակատ ընդ ձակատ հարեալ[3] մղէին զիրեարս հաւասար զօրութեամբ անշարժք, և պարտասէին 'ի ձիգն ընդունայն. և մերթ զրզրդէին զիրեարս ուժգին հարուածովք, զալրեալք զմիմեանսիք որպէս զօձս, ձգտեալք, ամփոփեալք, յետ և յառաջ և առ 'ի կողմն՝ յաջ և յահեակ ընդդձեալք[4]։ Վերստին յորդեալ իջանէր ընդ անդամս նոցա վաստակեալս. իսկ նոցա վայրիկ մի ոգի առեալ, ապա բուռն հարին զմիջոց միմեանց. և երկաբանչիւր զամենայն ոյժ և հնարս 'ի կիր արկեալ, ամբարձ թեբացին զոսոխ իւր 'ի վեր. այլ ընդ բեռամբն ընկձեալ անկաւ համակոծման ընդ ոսոխին, և թաւալէին 'ի փուշոջ՝ ելեալք զմիմեանսիք առնելով։ Այսպէս թեբացւոյն պատատեալ զոսոխիւն ծնգաջք և բազկաջք, արգել զնա անշարժ ընդ իւրև. և կալեալ զփոզին, հարկեցոյց զնա աջ 'ի վեր ամբառնալ 'ի

1 Փարբ. յդ. ընբշամարա. գլուք Բ. գլ. 5։

2 Ղուկան. ԺԱ. գլ. հտ. 2. էջ 910։

3 Նոյն անդ, էջ 884։

4 Ձիշատ. բանաս. կամառ. հտ. 3. էջ 237։

նշանակ պարտութեան[1]։ Այլ և այս չէ բաւական առ 'ի ստանալ զպսակն. պարտ է յաղթակա-նին զեթ երկիցս զգետնել զոսոխն[2], զի ըստ յա-Հախ սովորութեան՝ երիցս դառնան առ միմեանս 'ի կռիւ[3]։ Օ՛ օրացաւ արդիացին յերկրորդումն մարտի, և թեբացին կալաւ յերրորդումն զյաղ-թութիւնն։

Այլ երբեմն միւս և զոյգք երկու կատարեցին զմարտն, մեկնեցան պարտեալքն տխուր կորա-կոր[4]։ Այլ կացին յաղթողք երեք, մին ակրագան-դացի, միւսն եփեսացի, և թեբացին՝ զորմէ յա-ռաջ ասացի. կայր և եօթներորդն պահեալ վի-Հակաւ՝ հռոդացի։ Որ թէպէտ և անխոնջ մնա-ներ 'ի կրկէսն, այլ երեքկին մարտիւ պարտ էր նմա առնուլ զմրցանակն[5]։ Օ՛ օրացաւ նա 'ի վե-րայ ակրագանդացւոյն, այլ զգետնեցաւ յեփե-սացւոյն. և զնա թեբացւոյն ընդ իւրև տապա-լեալ, կալաւ զյաղթանակն։ Այնպէս առաջնումն յաղթութեան պարտ է զայլսն զհետ բերել. և է ուրեք՝ զի 'ի գուապար եօթանց ոխորմանց հարկ լինի յաղթողին ընդ քառեակ ոսոխս մենամար-տել, և ընդ իւրաքանչիւր 'ի նոցանէ երեքկին տալ մարտ[6]։

[1] Փարբ. յՊ. ըմբշամարտ. գիրք Ա. գլ. 8։
[2] Յիշատ. բանաս. կաՀառ. հտ. 3. էջ 250։
[3] Եպիպ. յԵւմեն. տող 592։ Պարտալ, անդ։ Պղատ. յԵւթիդ. հտ. 1. էջ 277։
[4] Պինդ. ոլմպ. 8. տող 90։
[5] Եպիպ. 'ի Գ. ոլմպ. տող 866։
[6] Պինդ, անդ։

Ի գօտէմարտի ոչ է օրէն հարկանել զոտին, իսկ 'ի բռնամարտի հարկանել եւթ օրէն է։ Պահատակը ուեթ բռնամարտիկը յառաջ կացին, եւ իբրեւ զգօտէմարտիկսն վիճակաւ զուգեցան։ Գոդակ պղնձի[1] ծածկէր զգլուխս նոցա, եւ ձեռէս պահպանակս ձեռացն՝ փոկս պատ 'ի պատ ամենուստ զմիմեանսն ածեալ էր[2]։

Բազմայեղանակք եղեն յարձակմունք եւ պատահարք մարտին։ Այր զի ոսոխք Ճգնէս ոգւով չափ գործէին՝ առ 'ի չկալոյ հանդէպ Ճառագայթից արեգական, եւ ժամն ձիգս զէտ կային առ 'ի գտանել մնան ինչ անպատսպար 'ի մարմնոս իւրեարց[3]. ձգտեալ զլաղուկս իւրեանց ունէին 'ի վերս յամրութիւն զլեայ իւրեանց, եւ արագ արագ շարժէին զնոսա՝ առ անմատոյցս լինելոց յոսոխացն։ Վերթ եւս յարձակեալ յիրեարս մոլեգին տեղատարափս հարուածոց զմիմեանսն ածէին։ Այդոն՝ որոց բազկարձակ 'ի վերայ ոսոխացն դիմելով, 'ի խուսել նոցին 'ի բաց՝ սաստկապէս յերկիր կործանեալ ջաղջախեցան. և այլք անկեալք պարտասեալք և կարեվէրք՝ յանկարծ յոտին կանգնէին, յուսահատութեանն արծարծեալ 'ի նոսա զկորով։

Տեսաք և զայլս 'ի տեղւոջէ մարտին 'ի բաց

1 Եւսեբիոս. Յեղիսկ. 23. էջ 1324. տող 38։
2 Ցիշատ. բանաս. կաՃառ. հտ. 3. էջ 267։
3 Ղուկիան. յոլ. ամբաստ. հտ. 3. էջ 139։
4 Ցիշատ. բանաս. կաՃառ. հտ. 3. էջ 273։

ածեալ[1], ոչ ունելով'ի դէմն տիպս կերպարանաց. և ոչ այլ ինչ ցոյց կենդանութեան, բայց զաբիւնն որ 'ի բերանոյ նոցա զունդաղումդ հոսէր։

Մանդէի 'ի սրտէ ընդ ողորմ տեսարանն, և աղմկեալ յուզէին զութք իմ, տեսանելով զմանկլուսին հրահանգեալ յանդթութիւն[2]. զի նախ քան զարս՝ զնոսա յառաջ մատուցանէին 'ի զոտեմարան և 'ի բազկամրցութիւն[3]։ Լակ Յոյնք զբնանուն 'ի զնին սուկալի իրացն, և խրախոյս բարձեալ յորդորէին զՀէքան զայրագնեալս ընդդէմ միմեանց[4], Յոյնք բարեգութքն և մարդասէրք։ Այսպէսն զիք գժնդակ հին և կորանաց արժանի եւուն մարդկան կար կրթելոյ առ ամենայն ինչ, մինչև զգաղանութիւն և զյոռութիւն առնել մեզ զբնանս։

Ի տարաժամ հասակի հիւծի մանկտին յանագորոյն հրահանգացն յոլս մարդի. որպէս զի 'ի դպրութիւնս յաղթականացն 'ի խաղ ողնմկիս կանս հազիւ գտանին երկու կամ երեք ոմանք, որոց 'ի մանկութեան միանգամայն և յերիտասարդութեան տարեալ իցէ մրցանակ[5]։

Յայլս 'ի հրահանգաց դիւրաւ Ճանաչի յաղթութիւն, իսկ 'ի բազկամրցութիւն հարկ է զի մի 'ի մարտակցաց խոստովանեսցի զպարտութիւն.

1 Ծաղկաբաղ. գլուխ Բ. գլ. 1։
2 Պատան. գլուխ Ե. գլ. 8. էջ 395։
3 Պլուտ. խրախտ. գլուխ Գ. գլ. Բ. գլ. 5. հտ. 2. էջ 639։
4 Փարբ. յղ. ընդ. մարտ. գլուխ Բ. գլ. 30։
5 Արիստոտ. յղ. հատ. գլուխ Ը. գլ. 4. հտ. 2. էջ 453։

և ցորչափ է 'ի նմա խուն ինչ զօրութիւն՝ չյուսահատի 'ի յաղթութենէ, զի մարթի Հզամբքն իւրովք և հաստատութեամբ ստանալ զայն մինչև 'ի սպառ։ Պատմեն զբանչէ ումեմնէ, զի զատամնանն խորտակեալս յահագին հարուածոյ ոսոխին եկուլ. և ոսոխին տեսանելով 'ի դերև լեալ զյարձակումն իւր, հանարեցաւ անկիսատիեալ 'ի վերայ իւր հասեալ կորուստ, և յանձին կալաւ զպարտութիւն[1]։

Սովին յուսով թագուցանէն մարտիկք զցաւս իւրեանց ընդ սպառնալից դիմաց և ընդ վայրագ ժուժկալութեամբ, որ ածէ յանախ 'ի վերայ նոցա վանդ կորստեան, և է ուրեք զի կորուսանէ իսկ զնոսա[2], թէպէտ և զգուշանայ կենաց նորա յաղթականն. զի խոտիւ արգելուն օրինք հարկանել 'ի մահ զոսոխն, պատուհաս սպառնալով զրկումն 'ի պակէն[3]։ Բ. յլ բազմանդոյնք, թէպէտ և զերծեալք 'ի վտանգէն, զամենայն աւուրս կենաց իւրեանց կեան խեղանդամք, կամ զսպիս տգեղութեան 'ի կերպարանսն բերելով[4]։ Յայն սակս արդեաք քան զամենայն հրահանգս մտցութեանց անարգագոյն թուի սա, և գրեթէ սինլքոր խուժանին պահեալ[5]։

Սակայն բիրտ և վայրագ մարդկանն գժոխքմ

1 Եղիան. զան. պատմ. գիրք Ժ. գլ. 19։
2 Պարապ. Պինդ. ոգեմոյ. 5. տող 34։
3 Պաւսան. գիրք Զ. գլ. 9. էջ 474։
4 Դաղկաբաղ. գիրք Բ. գլ. 1։
5 Խոսիր. յդ. Ձիլնեթայ. հա. 2. էջ 437։

բեր քան զՀարուածն զայնոսիկ և զվերս է տօ-
թելն՝ որ ընկՃՃն զնոսա [1]. քանզի մեցութիւնքս այ-
սոքիկ յայսպիսում ուրեք կողմանն Լեզադայ, և
յայսպիսում յեղանակի և 'ի ժամու կատարին,
յորում բոցակիզադոյն է տապ արեգական, մինչ-
և 'ի զնին իսկ կացելոցն հազիւ հանդուրժել [2]։

Իսկ առնեսխումբ մարտն 'ի սաստիկ եւ տօ-
թաժամու ածաւ 'ի հանդէս։ Լոյս է մարտս այս
խառն յերկուց, 'ի գօտեկռուոյն և 'ի բռնամար-
տէն [3]. այսու և էթ զանազանեալ, զի ոչ է օրէն
'ի սմա մարտակաց կռուել յիրեւոյս, և ձեռաց
նոցա ապաշէն 'ի քեմիստապատ ձեռէիցն գոլով՝
ոչ յոյժ վտանգաւոր են Հարուածք նոցա։ Փու-
թով վախՃան եղև մարտին. յերեկոյէ եկեալ
էր անդը Սոստրատ ոմն անուն սիկիոնացի, հռչա-
կաւոր բազմութեամբ ամբարելոց պատկացն, և
աջողութեամբքն որովք զայնոսիկ ստացեալ էր [4]։
Լաղմադոյնք յոսոխացն խոյս ետուն յերեսաց
նորա, և այլք ընդ նախաձեռն առնել նորա 'ի
մարտ. զի 'ի նախաշաւիղ մեցութենն անդ, որովք
ըմբիւք աջ տուեալ միմեանց՝ պատրաստին 'ի
մարտ, այնպէս ուժգին սեղմէր և պրկէր զմա-

1 Կիկէր. յղ. Երև. Ճար-
տասանից. գլ. 69. հտ. 1.
էջ 394։

2 Արիստոտ. առաջարկ.
38. հտ. 2. էջ 837։ Եղիան.
զանազան պատմ. գիրք ԺԳ.
գլ. 18։

3 Արիստոտ. յղ. Ճար-
տասան. հտ. 2. էջ 524։
Պլուտ. խրախՃ. գիրք Բ.
գլ. 4. հտ. 2. էջ 628։

4 Պլուտան. գիրք Զ. գլ.
4. էջ 460։

տունս ասիսայն, զի նոյն հետայն տային նմա զյաղթութիւն։

Այարտիկք, զորոց ցայս վայր ասացի, 'ի հրահանգս այսոցիկ ևեթ մոցութեանց մարզեալ էին. իսկ զորոց առաջի կայ ինձ ասել, յամենայն ազգի ազգի յոգնամրցիկ հրահանգս կրթին։ Այանզի հնգամարտիկն մոցութիւն բովանդակէ յինքեան ոչ միայն զհետի ընթացս, զգօտեկռիւ, զբաղկամրցութիւն և զամենախուռն մարտն, այլ և զվազս և զբոլորակաւ խաղն և զարդնընկեց տեղընկեց խաղարկութիւնս[1]։

Ի վերջնումն շատ դիպեցուցանել զգեղարդն 'ի նպատակն։

Ակուտեղն կամ բոլորակ՝ է վէմ մեծ կամ 'ի հրահալական նիւթոյ ոսկնաձև բոլորշի, ստուա՜ ղագոյն ընդ մէջ քան զեղերսն, ծանր յոյժ և կա՜ լի ողորկ, որով և դժուարակիր[2]։ Բոլորակք է՜ ղեք պահեալք Յողնմկիս, 'ի հանդէս խաղուց ածին 'ի մէջ[3]. և 'ի միումն 'ի նոցանէ ծակ գործեալ է՝ անցուցանել փոկ ընդ այն[4]։ Այ՝մբշին կացեալ 'ի բարձուանդակի՝ զոր յասպարիզի անդ գործեն, բառնայ զբոլորակն ձեռամբ կամ կա՜ լեալ զփոկոյն. և շրջանակեալ զայն[5], արձակէ ամենայն զօրութեամբ ուժոյ։ Լոյանայ բոլորակն

1 Ցիշատ. բանաս. կա՜ ՀԱռ. հտ. 3. էջ 320։

2 Ինդ. էջ 334։

3 Պաւսան. գիրք Զ. գլ. 19. էջ 498։

4 Եւստաթ. Յեղիակ. 8. էջ 1591։

5 Փիլոստր. պատկեր. գիրք Ա. գլ. 24. էջ 798։

ընդ օդս, և անկեալ յերկիր՝ թաւալի ընդ կրկէսն. և ուրանօր զկայ առնու՝ նշանակի տեղին, և այլք 'ի մարտկաց մի ըստ միոջէ անտի և անդր ձգնին հասուցանել զբոլորակն։

'Այսոր օրէնք են յաղթութեան և 'ի վարս, ա-մենայն շարժմանց նորա 'ի ձայն սրնգի կատա-րելով։ Այլոս 'ի ձեռին ունին ատաղձ, որով հե-ռագոյն ևս զվարսն ասեն գործել նոցա[2]. և են որք անդր ևս քան զյիսուն ոտնաչափս վազեն։

Զգ 'ի տանել զմրցանակ հնգամարտին՝ պարտ է մարտկաց յաղթանակել զեթ յերիս նախա-մարտիկ մրցութիւնս, զորս յանձն առնուն[3]։ Այլ թէպէտ ոչ զօրեսցեն կալ առաջի ըմբշաց 'ի մարտս իւրաքանչիւր կրթելոց, սակայն յոյժ մե-ծարին՝ այնու՝ զի հրահանգեալք ոչքան է հնար 'ի կորով և յաջողակութեան և 'ի թեթևութիւն, կատարեն զամենայն սահմանադրեալ խաղս և զմրցութիւնս միանգամայն։

Ի վերջնում՝ աւուր տօնին սահմանեցաւ պա-կել զյաղթողս[5]. և կատարեցաւ հանդէս որ պանծալին էր նոցա 'ի շրջափակին մեհենական[6], մատուցանելով նախ զոհս բազում երևելի սպա-սաւք։ Այլ 'ի վախճան լինել պատարագացն՝ ահա

1 Հոմեր. Եղեակ. գիրք Թգ. տող 840։
2 Արիստոտ. առաջարկ. 5. հտ. էջ 709։
3 Պլուտ. Խրախճ. գիրք Թ. հտ. 2. էջ 738։
4 Ցիշաս. բանաս. կա-ճառ. հտ. 3. էջ 322։
5 Պարսպ. Պինդ. յոլմոլ. 3. տող 33։
6 Փիլոսոր. վարք Ապող. գիրք Ը. գլ. 18։

դայլն յաղթողք ընդ հանդիսապիրս խաղուցն 'ի տեսարան անդր, զգեցեալք հանդերձ շքեղ', և ոստ արմատեսի 'ի ձեռին[1]։ ԼՀ զնայլն զմնալեալք ուրախութեամբ 'ի ձայն սրնգաց, պար առեալ յանթիւ բազմութենէ ժողովրդոյ՝ որոց կայթք ձեռացն դղրդէին զօդս։ Օ հետ նոցա զայլն այլ նահատակք հեծեալք 'ի կառս և յերիվարս. ձիաւնքն նոցա ահիպարանոց զիորոխտուն յաղթութեանն 'ի դէմս բերէին. և էին զարդարեալք ծաղկամբք որպէս փառակիցք յաղթանակին։

Լորբև հասին 'ի տեսարանն, հրամանն եռուն հանդիսաւորքը խաղուցն՝ նուագել զօրհնութիւն արարեալ երբեմն ՅՀ.քիղբեայ քերթողէ 'ի պայծառութիւն փառաց յաղթող նահատակացն և շքոյ հանդիսին։ ԼԽ 'ի ծայրայանդս իւրաքանչիւր՝ ձայնակից լինէր երաժշտաց ժողովուրդն առ հասարակ. և ապա քարոզ'ի միջի կացեալ, կարդաց զՊորոս կիւրեղեայն՝ որոյ յընթացս ասպարիզին տարեալ էր զմրցանակն. և նահատակն յանդիման եղև աւագ հանդիսադրին[3], և նա եդ 'ի գլուխ նորա պսակ 'ի վայրի ձիթենւոյ, հատեալ որպէս զայլն ամենայն որ բաշխին ՅՀղեմնիան 'ի ծառոյն որ կայ յետկոյս մեհենին Լ.բամաղդայ[4], և մեծարեալ պաշտի 'ի ժողովրդենէն վասն

1 Ղուկիան. 'ի Դեմոն. հա. 2. էջ 382։

2 Պլուտ. խրախճ. գիրք Ը. գլ. 4. հա. 2. էջ 723։

3 Պինդ. ոլեմպ. 3. տող 21։

4 Պաւսան. գիրք Ի. գլ. 15. էջ 414։

որոյ իրաց սահմանեալն է։ Պարձեալ վերըս-
տին նորոգեցան անդէն ամենայն ցնծութիւնք
և զրուատիք՝ որք 'ի յաղթութեանն պահու ա-
բարան յաղթողին. և այնպէս յամենեցունց ամե-
նայն զօրութեամբ յաձախեալ, զի 'ի ծայր փա-
ռաց թուէր ինձ Պողոս ամբարձեալ՝։ Այլ ստու-
գիւ խոկ 'ի նմին բարձրութեան նկատէին զնա
ամենայն առընթերակացք հանդիսին. և ոչ
ևս զարմանալի ընդ անհնարին ձգունն՝ զորս
յանձն առնուն նահատակք, և ոչ ընդ յեղակարծ
արգասին՝ որոց համաչխարհական զրուատիքն
ետուն բազում՝ անգամ՝ պատճառս։ Պատմիչն
մեզ, զի խնամանոյն Վիղոնի 'ի դէպս անդ զրա-
ւեալ էր 'ի կենաց առ խնդութիւն, գիրկս արկա-
նելով որդւոյն՝ մինչ զայր նա 'ի յաղթութենէ՝,
և թէ հանդիսատեսք խաղուցն առ հատարակ
պարտ համարեցան առընթեր կալ դամբանական
հանդիսի նորա։ Յաւելին և զայս. ասեն. Գո-
րովագոյն ևս տեսարան յառաջ քան զայս դար
տեսին հարքն մեր.

Գիտագորաս հռոդացի, որոյ զշուք ազգատոհմի
յաղթանակաւն իւրով 'ի խաղս մեր ատ պայ-
ծառացուցեալ էր՝, ած այսր զերկուս յորդւոց
իւրոց, որք մարտեան և պտակի արժանի եղեն՝։

1 Պլնդ. ողիմպ. 3. տող 77։ Պարապ. անդ։
2 Դիոդ. լայերտ. գիրք Ա. գլ. 72։ Պլին. գիրք Ե. գլ. 32. հտ. 1. էջ 394։
3 Պլնդ. ողիմպ. 7։
4 Պաւսան. գիրք Զ. գլ. 7. էջ 469։

Լ. Յլ ընդ առնուլ նոցա զայն՝ եղին 'ի գլուխ հօր իւրեանց, և 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերէին զնա յաղթանակաւ 'ի տեսիլ ամենեցուն։ Ապա ուրախ լեալ ընդ նմա՝ ցանկէին զնովաւ ծաղիկս, և կէաք ասէին. Օ՛ն և կեաս Պիտգոր, զի չիք այլ ևս ինչ քեզ ցանկալի։ Լ. Ծերունեայն ոչ կարացեալ զզեղումն բարեբաստութենն բերել, ելհան զոգի յանդիմանն ժողովրդոյն որ գոր-ծովէր ընդ տեսիլն, և 'ի գիրկս որդւոցն՝ որ թաղեալին զնա արտասուաք[2]։

Լ. ուրեք, զի զրուատիցս այսոքիկ տուեալք յաղթողաց՝ աղմկին կամ մանաւանդ պատուին 'ի մղեգնութենէ նախանձու։ Օ՛ն ընդ աղաղակս ցնծութեանն հասարակաց լսեի երբեք երբեք և զչիւն սուլելոյ բազմաց, որք 'ի քաղաքս հակառակորդս հայրենեաց յաղթականացն ծնեալ էին[3]։ Լ. զոգ ընդ արգասիս նախանձու տեսի և զհանդոյն իմն նորանշան արգասիս մարդահաճութեան և առատութեան. զի ոմանք յայնցանէ, որոց 'ի ձիրնթացս կամ 'ի կառաքշաւս տարեալ էր զմրցանակ, փոխանակ անձանց տային քարոզել զայլ՝ առ 'ի ձգել զհնամն նոցա յիւրեանս և առ 'ի տածել զբարեկամութիւն։ Լակ յաղթականացն յայլ մրցութիւնս ոչ կարելով փոխանակել զայլս ընդ անձանց, զօշաքաղու-

1 Կիկիր. տուսկուլ. գիրք Ա. գլ. 46. հա. 2. էջ 272։ Պլուտ. 'ի Պիզոսոյ. հա. 1. էջ 297։

2 Ամբ. Գեղ. գիրք Գ. գլ. 15։

3 Պլուտ. առակ. լակոն. հա. 2. էջ 230։

թե իբրեանց հայթայթեն Հարակ. զի՛ քարո-
զին ազգմանն պահու՝ ընծայեցուցանեն զինքեանս
ընկիս քաղաքաց, յորոց առնուն կաշառս[1]. և
արկանեն զանձինս 'ի վտանգ տարադիր լինելոյ
'ի հայրենեաց, խորտանկելով զփառս նոցա[2]։
Ռանաւորն Պիսնեսիոս դիւրագոյն համարեալ
պայծառացուցանել զմայրաքաղաք իւր քան յարդ-
արել զբարեկենդանութիւն նորա, բազում
անգամ պատուիրակս Մղնմնիա առաքեաց՝ յոր-
դորել զյաղթող նահատակս, զի քաղաքացիս Ամ-
բակու�յոյսն զանձինս[3]։ Ռ.Յ պատիւ ոչ
ստացանի արծաթոյ. և ամենեքին առ հասա-
բակ, որք կաշառաբերեն եղեն 'ի նմանէ, և որք
մերժեցին զկաշառս նորա, եղեն նմա 'ի նախա-
տինս։

Ռազումք զՀրապոյրս զայսոսիկ 'ի կիր արկա-
նեն և առ 'ի նահանջել զոսոխս արքունս, կամ
առ 'ի համոզել զնոսա յանձն առնուլ զպարտու-
թիւն՝ թուլութեամբ մարմնչելով[4], և կամ առ
'ի փոքձել զուղղութիւն դատաւորաց. այլ մար-
տիկք պարտեալք 'ի հրապուրանաց աստի գանա-
կոծ լինին[5], կամ 'ի տուգանս ծանումս դատա-
պարտին։ Այն աստ առասիկ անդրիկ բազումք
Ռ.բամանզդայ 'ի տուգանաց անտի զրօշեալք, որոց

1 Պատմութիւն, գիրք Զ. էջ 459։
2 Նոյն անդ, էջ 497։
3 Նոյն անդ, էջ 455։
4 Պատմ. գիրք Ե. գլ. 21. էջ 430։
5 Թուվկիդ. գիրք Ե. գլ. 30։ Պատմ. գիրք Զ. գլ. 2. էջ 454։

արձանագիրը յաւերժացուցէն զյիշատակ յանցանացն և զյանցաւորաց[1]։

Յաւուր յորում պակեցան յաղթողք, մատուցին զոհս գոհութեան. և անուանք նոցա զրոշմեցան յարձանագրութիւնս եղեսացւոց, և տուաւ նոցա Հաշ մեծ 'ի միում ուրեք 'ի սրահից նահապետանոցին[2]։ Լաւ յաւուրսն որ զկնի ինքեանք եռուն ընթրիս, յորս երաժշտութիւն և պար յաՀախեցին զերթալնս[3]։ Այսպէս այնոքիկ քերթողաց յանձն եղև անմահացուցանել զանուանս նոցա, և անդրիսագործաց յանդիմանն առնել զնոսա 'ի վէմ կամ 'ի պղինձ, և զոմանս 'ի նոցանէ 'ի նմին կերպի՝ յորում կալան զյաղթութիւն[4]։

Բստ նախնի սովորութեան նահատակքս այսոքիկ ըստ գեալք փառօք 'ի տեղւոջ մարտին, դառնան 'ի հայրենիս իւրեանց ամենայն սպասուք յաղթանակին[5], պար առեալ 'ի բազմութենէ, զգեցեալք ծիրանիս[6], և մերթ ևս հեծեալք 'ի կառս երկձիս կամ 'ի քառաձիս[7], մտանելով ընդ խրամատ գործեալ 'ի պարիսպս քաղաքին[8]։ Տաւկաւին յիշի Աբսենեաց սիկիլիացի Աղրագանդ

1 Պաւսան. գիրք Զ. գլ. 2. էջ 454։
2 Նոյն, գիրք Ե. գլ. 15. էջ 416։
3 Պլինգ. ոգիմպ. 9. տող 6։
4 Պաւսան. անդ, գլ. 27. էջ 450։
5 Յիշատ. բանաս. կաՀառ. հտ. 1. էջ 274։
6 Արիստոփանէս Յանգան, տող 70։
7 Վ խարով. յաւաջաբ. գիրք Թ. էջ 173։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 204։
8 Պլուտ. խրախճ. գիրք Բ. գլ. 3. հտ. 2. էջ 639։

քաղաքէ, որ եմուտ անդր հեծեալ 'ի մեծաշուք կառս՝ պար առեալ յայլոց կառաց բազմաց, յորս էին երեքարիւր սպիտակաձիք։

Ուրեք ուրեք 'ի զանձուց աշխարհին ելանէ նոցա ռոճիկ ըստ վայելուչն պայմանի, այլ ուրեք ազատք կեան 'ի բաց արձակեալք յամենայն հարկաց։ Ի Պարտա պահի նոցա պատիւ 'ի միում ուրեք Ճակատամարտի կալ պատերազմակից առընթեր արքայի. զրեթէ ամենայն ուրեք նախագահք բազմին 'ի տեսարանս խաղուց[1]. և մեծամանաց անուանն ողիմպիայաղթ յաւելեալ 'ի նոսա՝ պատուական և պատկառելիս առնէ զնոսա առաջի ամենեցուն, երանաւետեալ զկեանս նոցա[2]։

Ամենք 'ի նոցանէ փառացն իւրեանց հաղորդս առնելով և զձիանն՝ որք զօրավիգն եղեն նոցա 'ի ստանալ զայնս, ծերատածէն զնոսա 'ի հանգըստեան, և թաղէն զնոսա պատուով[3]. էն որք և բրգունս 'ի վերայ դերեզմանաց նոցա կանգնեն[4]։

1 Պլատոն. առ Ամենէս. տե, գիրք Ժ. գլ. 2. էջ 414։
2 Պղատ. յղ. հայ. գիրք Ե. հտ. 2. էջ 465։
3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 103։ Պլուտ. 'ի Պատան. հտ. 1. էջ 339։
4 Պլին. գիրք Ը. գլ. 42։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Շարայարութիւն ուղղութեանն Ազատարսեայ Յեղիս, և երթ նորա 'ի Սկիզն քաղաք առ Քսենոփոն։

ՔՍԵՆՈՓՈՆ էր բնակարան 'ի Սկիզնքաղաք փոքրիկ, հեռի Յաղնմղեայ քսան ասպարիզաւ [1]։ Այլ ամենք ինչ յառաջ 'ի յոտնել խռովութեաց 'ի Պեղոպոնես՝ հարկ լեալ էր նմա մեկնել անտի [2] և գնալ բնակել 'ի Կորնթոս, ուր և գտի զնա 'ի հատանելն խնձոր Յաղլադա *։ Այս իբրև դադաբեցին խռովութիւնք, դարձաւ նա 'ի Սկիզն **. և 'ի վաղիւ անդր յետ ոտնին չոգայ առ նա ընդ Դիոդորի որդւոյ նորա, որ ընդ մեզ էր 'ի ոտնան անմեկնելի։

Ընդարձակ էր յոյժ կալուած Քսենոփոնի. զմնան ինչ նորա 'ի սպարտացւոց անտի ընկալեալ էր նորա 'ի պարգև [3], և զմիւսն գնոց ստացեալ նուիրեալ Աբոլեմեայ, որպէս ուխտեալն էր 'ի դառնալն իւրում 'ի Պարսից։ Օ տատասնորդս բերոյ երկրին Ծախէր 'ի պահ մեհենին՝ զոր 'ի պատիւ

1 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350։
2 Դիոդ. լայերա. գիրք Բ. յոդ 53։
* Տես 'ի Թ. գլուխ գրոցս։
** Յետոյս մասնէիս 'ի սեզեկութիւնսն. Թիւ Ժ.Զ։
3 Պաւսան. գիրք Ե. ԺԷ. 6. էջ 388։ Դիոգենէսայ լայերա. գիրք Բ. յոդ. 52։

աստուածուհւոյն կառուցեալ էր. և ամի ամի մատուցանէր անտի զոհ մեծահանդէս։

Բռ մեհենաւն է Ծառաստան, որ բերէ պտուղս աղգի աղգի. և Սելինոս վտակ՝ առատաբեր ձըկանց, ականակիտ ալեօքն գնայ խաղաղ առ ստորոտով արգաւանդի միոջ բլրոյ ընդ արօտս՝ ուր Ճարակին յանդորրու կենդանիք պատրաստեալք 'ի զոհ։ Ելբոյ և արտաքոյ սրբազան երկրին անտառք 'ի դիւրի և 'ի զան 'ի վայրս տնկեալք, ապաւէնք են այծեմանց և եղջերուաց և վարազուց[1]։

Ընդ յերանաւէտ վայրսն գյոլսվագոյնս 'ի մատենագրութեցն գրեաց Ռաֆենոիսն[2], և անդ 'ի բազում ամաց հետէ պարապէր յիմաստասիրութիւն, 'ի բարերարել այլոց, 'ի մշակութիւն երկրի, 'ի սթափումն որսոց, և յամենայն հրահանգս՝ որ մատուցանէն ազատութիւն մտաց և առողջութիւն մարմնոյ։ Այս քան զամենայն ինամ կալաւ 'ի հայթայթել զամենայն զբօսանս պատկանաւորս մերոյ հասակիս, և որ ինչ ընծայէ երկիր կատարելագոյն տիոց զբաղումն։ Յուցանէր մեզ զձիանն իւր և զձեռաստունկս և զանտեսութեանն իւրոյ կարգս իւրաքանչիւր. և գրեթէ ամենայն ուրեք տեսանէաք զարդիւնս հրահանգացն, զորս յաճախ ուրեք 'ի մա-

1 Ռաֆենոիսի. արշաւ. Կիւր. դիրք Ե. էջ 350։ Պաւսան. դիրք Զ. գլ. 6. էջ 388։

2 Պլուտ. յղ. աբսոր. հտ։ 2. էջ 605։ Դիոդ. լայերտ. դիրք Բ. յոդ. 52։

տեսանս իւր տանդէ՝[1]։ Լոր զի և յորդորէր զմեզ գնալ յորս, զոր և հանապազ պատուիրէր մանկրաւոյ՝ իբր դիպողադոյն քան զամ հրահանգս 'ի կրթել զնոսա յաշխատութիւն մարտի[2]։

Լոյ ածէր զմեզ Դիոդոր ասելով յորս լաղանարգեաց և կաբաւուց և այլոց ազգի ազգի հաւուց[3]։ Հանեալ զոմանս 'ի լաղանոցաց կապէաք 'ի մէջ վարսմի. և համազգեաց նոցին թռչնոց ձգեալ անդր 'ի ձմուռղելոյ նոցա՝ անկանէին 'ի ծուղակն, զրկեալք 'ի կենաց կամ յաղաստութենէ[4]։

Զ Հետ զբօսանացս այսոցիկ յաջորդէին այլք զուարթագոյնք և բազմանազանք։ Դիոդորի էին հոյլք բարակաց, կէսք որսականք նասպաստակաց, այլք եղջերուաց, և այլք լակոնացիք կամ լակրեցիք վարազուց[5], զորոց գիտէր նա զանուանսն իւրաքանչիւր[6], զյոուութիւնսն և զբաջութիւնս[7]։ Մենահմուտ էր նա հրահանգաց մարտիս այսորիկ, և այնպէս բարւոք ճառէր զայնմանէ՝ որպէս հօր նորա զրեալն էր[8]։ Լոյ էր նասպաստակացն որսոյ օրինակ այս.

Ամակարդք մեծամեծք և փոքունք լարեալ կայ-

1 Քսենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 818։ Նոյն յդ. հեծելոց, էջ 932։

2 Նոյն յդ. որսոյ, էջ 974 և 995։

3 Նոյն յդ. յիշատ. գիրք Բ. էջ 734։

4 Արիստոտ. 'ի Հաւան, տող 1083։ Պարապ. անդ։

5 Քսենոփոն, յդ. որսոյ, էջ 991։

* Անուանս սուզս ըստ կարի և երկամանկս կոչէին շանցն, որպէս Թիմոս, Լաբոս, Փիլաքս, Փոնիքս, Բրիմոն, Փոիքէ, Իրէ, այլոքն հանդերձ։ (Քսենոփ. յդ. որսոյ, էջ 987)։

6 Նոյն անդ էջ 987 և 996։

7 Նոյն անդ էջ 972։

լին ընդ ուղիս և ընդ արտուղի էլս, ընդ որս մար-
թէր երէոյն խոյս տալ [1]. և մեկնահանդերձ,
ցուպ 'ի ձեռին էլաք յորս [2]։ Լսպականին արձա-
կեաց զմի 'ի բարակաց. և իբրև ետես զնա ընդ
շաւիղս որսոյն հետազօտեալ, արձակեաց և զայլսն
զհետ. և նոքն հետային 'ի դուրս յարձակեցաւ
նապաստակն։ Լնդ ամենայն լինչ յաձախէր զզբ-
սանս տեսլեանն. հաջիւն բարակացն, բարբառ որ-
սորդացն որ խրախուսէին զնոսա [3], խուճապք և
հնարք երէոյն՝ որ 'ի քթթել ական ընդ դաշտն
և ընդ բլուրս սրացեալ, վազեալ ընդ փոսս, և
ընդ թաւուտս սուզեալ, մերթ երևէր, մերթ
գտնոտս լինէր, յետոյ ապա շաղեալ 'ի թակարդ-
սն՝ որ մնային նմա յանցան։ Լյ դէտ 'ի տեղւոջն
կացեալ եհաս 'ի վերայ որսոյն, և ձայնիւ և
նշանացի ազդ արարեալ որսորդացն՝ աւանդեաց
զայն նոցա [4]։ Լ հրձուանս յաղթութեան նորոգե-
ցաւ ձակատամարտն, բազումն նոյնօրին մղելով
մեր ձակատս [5]։ Լայց էր զի զերծանէր նապաս-
տակն 'ի հաղթից, անցեալ ընդ Ալելիսոս 'ի լայղ [6]։
Լ հանդէս զոհին, զոր Փսենոփոն ամի ամի
մատուցանէր Լքսեմեայ [7], գայլն 'ի Ալիզոն աբք
և կանայք՝ որք շուրջ բնակեալ էին։ Զարե-

1 Փսենոփոն, յղ. որսոյ, էջ 984։
2 Նոյն անդ, էջ 984։
3 Նոյն անդ, էջ 985։
4 Նոյն անդ, էջ 984։
5 Նոյն անդ, էջ 986։
6 Նոյն անդ, էջ 980։
7 Նոյն արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350։

կամն իւր ինքն ասպնջականէր[1]. իսկ այլոց եկաւ-
բաց 'ի գանձուց մեհենին ելանէր ոսկիկ[2], գինի,
հաց, աղուբ, միրգ, և մանն 'ի զոհիցն։ Բաշխէին
'ի նոսա և կինանք և եղջերուք և այծեմունք՝ հա-
բեալք 'ի մանկուցն շրջակայ վայրաց, որք ա-
ւուրքք ինչ յառաջ քան զոտնն եկեալ էին 'ի
Ակիղն 'ի զբօսանս աղգի աղգի որսոցն[3]։

Յորս վարազուց էին մեզ շամիրքք և գեղար-
դունք և դամք ստուարք։ Հետք կռնակաց զաղա-
նին այն ինչ տպաւորեալք յերկրի, աղգմանքք
Ժանեաց նորա դրոշմեալք 'ի կեղևս ծառոց, և
այլ ևս ցոյցք առաջնորդեցին մեզ 'ի Թաւուտս
ուրեմն մացառախիտս[4]։ Բրձակեցաք բարակ
մի լակնացի, որ ընդ հետս գազանին հասեալ
յամլոցն՝ ուր որջանայր, աղգ արար մեզ զգիւտ
որսոյն հաջելով։ Յետս կոչեցաւ բարակն, երա-
գաղք ձգեցան ընդ երս փախստի, և մեք կայաք
'ի դարանի։ Գիմեաց կինանն առ իս կոյս, և 'ի
բացեայ 'ի Թակարդիցն զկայ առեալ՝ վայրիկ մի
զգիմ կալաւ յարձակմանն գնդի բարակացն առ
հասարակ՝ որոց հաջիւն գոչեցուցանէր զանտառն,
և որսորդացն՝ որ մեհենին 'ի նա ձգել նետս և
քարինս։ Բայց յարձակեցաւ 'ի վերայ Արոբիս-
նի, որ կազմ կայր 'ի շամիրքել զնա. այլ սա-

1 Դիոդ. լայերտ. գիրք Բ. յոդ. 52։
2 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350։
3 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 350։
4 Նոյն յոդ. որսոյ, էջ 992։

հեալ շամիրոյն ընդ Թիկունս գաղանին՝ զերծաւ 'ի ձեռաց որսորդին, և որսորդն մնաբերեաց անկանել 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝։

Համարէի անշուշտ 'ի վերայ հասեալ նմա զկորուստ. և վարազուն ոչ ինչ գտանգիւտ լեալ 'ի նմա առ 'ի բառնալ զնա 'ի վեր, կոխեր զնա առ ոտն։ Այլ Պիտոդորի տեսեալ զնա, և հաս յօգնութիւն որսակցին. և 'ի նա ևս նոյն հետացն յարձակեցաւ կինն։ Այլ նորոյ ասիսին սիրողակազմն գտեալ կամ բախտաւորագոյն, անցոյց զշամիրն ընդ անրակ նորա։ Ընդ էր տեսանել զահագին կատաղութիւն գազանին. զի մնհացու հարուածովն կարեվեր, տակաւին յարձակեալ դիմէր զայրագին 'ի Պիտոդոր. և ինքնին իսկ նստոյց զերկաթն խորամուխ 'ի մարմին իւր մինչև ցերախակալն[1]։ Գազանն 'ի բարակաց մերոց անկան 'ի մարտի անդ մեռեալք կամ վիրաւորք, այլ բաղմագոյնք ևս յերկրորդումն մարտի՝ որում զօրն ողջոյն ժուժկալեաց գազանն։ Այլ ևս կինն հալածեալք 'ի բարակաց՝ անկան յորոգայթս որ ընդ սաղարթիւք թագուցեալ կային[2]։

Ի վաղիւ անդր և 'ի միւս վաղիւն եղջերուք բազմք ըստ նմին օրինակի հարան[3]։ Զ ընդումն ևս յորջոյն արտաքս ձգեցաք, և հոյլք բարակացն

1 Քսենոփոն, յղ. որսոյ, էջ 993։
2 Նոյն անդ։
3 Նոյն անդ, էջ 994։
4 Նոյն անդ, էջ 990։

մերոց այնպէս պարտասեցուցին զնոսա, զի զկայ առեալ նշաւակք նեռոյ մերոց լինէին, և կէսք 'ի լեռն և կէսք 'ի ծով զիմեալ անկանէին[1]։

Լինդ ամ՝ ժամանակս որսոցն՝ ոչ ոք զայլ ինչ երայ խօսեր. Ճառս արկեալ պատմէին միմեանց զՀնարս այլ և այլ աղգաց յորս առիւծուց, յովեաց, աղջուց, և այլոց աղգի աղգի գազանաց վայրի։ Ի տեղիս տեղիս խառնեն Թոյն 'ի լեռն և 'ի Ճարակս, յորս գազանքն մեզգայլեալ յագեցուցանեն զքաղց և զծարաւ իւրեանց. այլոք շուրջ պատին հեծեալք զիշերային զգազանսն, և ընդ այդն յարձակին 'ի վերայ նորա 'ի վտանգ խսկ յաՃախ գնելով զկեանս։ Եւ այլոք փոս հատեալ խոր և ընդարձակ, Թողուն 'ի միջի բլրակ մի հողոյ, և 'ի վերայ նորա կապեն այծ, ցցապատնեշ զխորխորատիւն ածեալ անել անԹափանց. գազանն 'ի բառաչ այծուն ձգեալ՝ վազէ զձորդեօքն, և անկանի 'ի գուբն, և ոչ ևս ելանել կարէ[2]։

Պատմէին և դաշն իմն նիզակակցութեամբ եղեալ բազմից ընդ բնակիչս միոյ 'ի կողմանց Թրակիոյ, հալածել ինքեանց զՀնՀոլիս և ինքուցանել զնոսա յերկիր, և որսակցացն սպանանել զնոսա բրօք կամ 'ի վարսն ընկնուլ, և ապա բաժանել զորսն յիւրեանս[3]։ Պատասխանք իրքն Թուին. սա-

1 Փանենոփոն, յԼ. որսոյ, էջ 991։
2 Նոյն անդ էջ 995։
3 Արիստոտ. պատմ. կենդան. գլ. գիրք Թ. գլ. 36. հատ. 1. էջ 940։ Եղիան. յԼ. ծննդ. կենդանեաց, գիրք Բ. գլ. 42։

կայն ոչ նորանչան ինչ է անհաշտ թշնամեաց միաբանել ընդ միմեանս 'ի հարստահարել զանաւագն անձողոպրելն։

Ոչիք ինչ առաւել ցանկալի քան նկատել 'ի միայնութեան զայր աւագ։ Զմանն ինչ աւուրն 'ի զրուցատրութիւնս պարապեաք ընդ Քսենոփոնի, լսել 'ի նմանէ և հարցանել զնա, և ուսանել զամենայն հանգամանս առանձնական կենաց նորա։ Զոյց նորա էր քաղցր և պերճ որպէս զմտաբերնագրութիւնս նորա. զերկայնմտութիւն յիրս մեծամեծս, և որ յոյժ առաւել չքնաղագոյնն է և կարևորագոյն՝ զերկայնմտութիւն 'ի դուշնաքեաց, միայնոյ յանձն իւր ձգեալ բեռն. միոյն զարիութիւն անյողդողդ և միւսոյն զհամբերութիւն անպարտելի ուղղեալ։

Զոհք ինչ յառաջ արիութիւն նորա մատուցաւ 'ի փորձ դժուարին յոյժ կարեկիր սրտի։ Գրիղոս անդրանիկն նորա, որ զենուորելն 'ի հեծելազնդին ամենացուց, անկաւ 'ի Ճակատամարտին Մանտինեայ. և զոյժ մահու նորա եհաս առ Քսենոփոն 'ի պահուն՝ յորում պար առեալ 'ի բարեկամանցն և 'ի ծառայից՝ զոհ մատուցաներ։ Մինչդեռ 'ի պաշտամունսն անդ էր, շշունջ ինն և ողոց ձայն խառն 'ի խուռն լսելի լինէին. և դուժկանին յառաջ մատուցեալ, ասէ. Յաղթեցին թեբացիք, և Գրիղոս... և այն ինչ նորա բանքն 'ի բերան կային, յորդեալ արտասուքն չեռուն նմա յանկ հանել զանն։ Իսկ

հայրն տառապեալ կորզելով զպատկն 'ի գլխոյ իւրմէ, ասէ. Եւ Գրիգոն մեռաւ, և ոչպէս։ Եւ գուժկանն ասէ. Յետ չքնաղ արութեանց, 'ի տխրութիւն ամենայն բանակին։ Զայն իբրև լուաւ Վասենոփոն, վերստին զպատկն 'ի գլուխ իւր եդեալ, կատարեաց զմատուցումն զոհին։ Եւ 'ի յիշելն իմում երբեմն առ նմա զԳրիգոս, ոչ ինչ էր պատասխանի. այլ յոգւոց հանեալ, ասէ. Ա՛հ, գիտէի զի մահկանացու էր։ և այլ ինչ խօսս 'ի մէջ մատոյց։

Եւ այլ երբեմն հարցաք զնա՝ թէ ոչպէս 'ի ծանօթութիւն եկեալ էր Սոկրատայ, և ասէ ցմեզ. Մանուկ էի, և հանդիպեցաք ընդ նմա յանձուկ ուրեմն ուղղոջ յԱթէնս. նա արդէլ ցպոմն զՀանապարհն, և ասէ ցիս. Ո՞ւր գտանիցին կարևորք առ 'ի կէանս։ Եւ ես ասեմ. Ի շուկայն։ Եւ նա ասէ. Լոկ կարևորք առ 'ի ստանալ զլաւութիւն։ Եւ 'ի տարակուսելն իմում, ասէ ցիս. Լոկ զկնի իմ, և ուսցիս զայն։ Ընդ զայ զհետ նորա, և ոչ էս մեկնեցայ 'ի նմանէ մինչև ցերթն իմ 'ի բանակն Կիւրոսի։ Եւ 'ի դարձին իմում գիտացի, զի աթենացւոց սպանեալ էր զարդարն քան զամենայն մարդիկ. և ոչ այլով իւիք կարացի սիրել զարտմութիւն

1 Դիոգ. Լայերտ. գիրք Բ. յոգ. 34։ Եղիան. զան. պատմ. գիրք Գ. գլ. 3։ Սոռբ. Հատ. 7. էջ 90։

2 Վաղ. Մաքս. գիրք Ե. գլ. 10։

3 Դիոգ. Լայերտ. անդ. յոգ. 48։

իմ, բայց առանդելով 'ի զրի զոյցս անմեղութեան նորա առ ամենայն աղգս Յունաց, թերևս և որոց առ յապայ գալոց են։ Եւ զարդիս չիք ինձ մեծ և սիրելուն, քան յիշատակել զնա և զառաքինութիւնս նորա ածել զմտաւ։

Եւ վասն զի 'ի միասին ընդ նմա կարեկցեալ կցորդեալք 'ի գութ զորոյց, մանրասպատում ապարանս մեզ գկարգ կենացն Սոկրատայ, և զվարդապետութիւնս նորա առաջի արար մեզ հատաստեառ՝ որպէս և էին, 'ի բարոյականին և էութեան հմտանս ամփոփեալ, առանց խառնելոյ յայն օտարոտի կարծիս, և առանց ամենայն բնաբանական և բնաբանցական խնդրոցն՝ զոր Պղատոն 'ի գէմն վարդապետին իւրոյ առանդէ՝։ Զկալ բեմ իսկ պարտաւել զՊղատոն, զայրն ինձ յոյժ մեծարոյ. այլ հարկ է խոստովանել, զի յոյժ առատել 'ի զուցատրութեանցն Քսենոփոնի քան 'ի նորայոցն է ուսանել զվարդապետութիւնս Սոկրատայ. զոր և ջանացայց պարզել 'ի գիրս յայս, յեռեալ խիտ ընդ խիտ զտեղեկութիւնս՝ զոր ընկալաց 'ի Ակիզն[1] 'ի խոստակցէն ընդ նմա ստէպ։

Քսենոփոն քաջահմուտ կարևոր գիտութեամբք, և պարապեալ զաղգում ժամանակս

[1] Ակիզոտոս. բնաբանց. գիրք Ա. գլ. 6. հա. 2. էջ 847։ Թէոպոմպոս. առ Ամենեսոսի. գիրք ԺԱ. էջ 508։ Դիոգ. Լայերտ. գիրք Գ. յոդ. 35։ Պլուտարքոս. պատմ. իմաստասիրաց. հա. 1. էջ 11 և 697։ Մոշեմ. 'ի Քուսոլորթ, հա. 1. էջ 241։

'ի խոկումն, զրեաց ասա զկրս առ 'ի լուսազոյնս յարդարել զմարդիկ ուսուցանելով զնոսա։ Եւ Հնամարտութեան 'ի նմա սէր այնքան, զի առ 'ի զրել զբաղաբաղարութենէ՝ քաջ տեղեկացեալ ուստ նախ զկարգս ազգի ազգի տեսչութեանց. և առ 'ի պատմագրել զնրոց ժամանակին էառ զկրս, որոց մեծի մասին լեալ էր ականատես. և զՀրահանգաց մարտի, յետ զինուորելոյ և զօրավարելոյ փառաւք մեծաւ, ապա զրեաց. և զարարչականին մասանց, մինչև իւրովի կատարեալ զիրատան զոր այլոցն ասայր՝ ոչ զրեաց։

Սակաւս ծանեալ յիմաստասիրաց հանգոյն նմին առաքինիս, և նուաղուն 'ի մարդկանէ իբրև զնա սիրելիս։ Բանի հեզութեամբ և վայելչաբար առնէր պատասխանի հարցուածոց մերոց։ Ամենայն աւուրց Պիսդոր և Փիլոտաս և ես Ն-մեամբ յեզը գետոյն Արլինեայ, և վիճեալ սատիկք եղեն մեզ զբանաւորութենէ կրկին. նոքա վիճեալ պնդէին՝ զի և ոչ սէր կարող է բանական լալ 'ի մեզ, իսկ ես զհակառակն պնդէի։ Եւ ահա եհաս ան զբբ Բանեոփան, և զզատաստան նոցա հարցաք. իսկ նա պատմեաց մեզ և ասէ.

Յետ Ճակատամարտին, յորում մեծն Պիւրոս յաղթեաց Լոբրեստանեայց, 'ի բաժինս աւարին պահեցան նմա խորան մի շքեղ, և 'ի գերեալն երիտասարդուհի գնեալ զգեստս Պանեթեա դշխոյ Լուժաստանի։ Եւ էր Լիբրա-

1 Գանոթ. կարգագր. Կիր. գիրք Ե. էջ 114։

զատ այլ նորա երթեալ յաշխարհն բակտրիա-
յում՝ խնդրել օգնութիւն բանակին Լուսոստա-
նեայց։

Ել կամեցաւ Կիւրոս տեսանել զՊանթէա. և
կացոյց պահապան նմա զգայեկորդի իւրզԼրասպ,
պատանի ազատորդի Մարազաւ։ Լս պատմեաց
Լրասպ՝ թէ յորպիսի կորանս կայր դշխոյն յոր-
ժամ եառեան զնա, և ասէ. Լսատեալ էր 'ի խորանի
իւրում 'ի գեանի՝ շուրջ պատեալ 'ի նաժշտաց իւ-
րոց, զգեցեալ որպէս զաղախին մի ստրուկ, խո-
նարհեալ զգլուխն և ծածկեալ քօղով։ Լսայսպէս
նմա յառնել, և առմ նաժիշտքն յոտն կացին ընդ
նմա։ Մի ոմն 'ի մէջ սփոփելով զնա, ասէ. Լսրա-
քէն այլ քո արժանի իսկ է սիրոյ քո սկզբնացեալ
բարեմասնութիւնք, այլ Կիւրոս՝ որում դուն հան-
դերձեալ ես լինել կնութեան՝ գերազանցեալ զատ-
նի յամենայն թագաւորս արևելից՝։ Յայնժամ
դշխոյն պատասխանեաց զքօղ իւր, և հեծութիւնքնորա
խառն ընդ ձիշնաժշտացն իւրոց զաղէտս թշուա-
ռութեան նորա յայտ առնէին. և անդ եղև
մեզ պարապով տեսանել զնա։ և գիտացէ տեր
ազգաց՝ զի չծնաւ ուրեք երբէք Լսիրա գեղ այն-
պիսի։ այլ ինքն տեր ազգաց իւրոցն ընդ հուպ ա-
ռաքացէ զնմանէ դատաստան։

Լս Կիւրոս ասէ. Լսա աւանիկ այդ իսկ յաձախեալ
զպատճառս զգուշութեանն ինչ առ 'ի չտեսանելոյ
զնա. զի 'ի տեսանելն զնա միանգամ, ցանկացայց

1 Քսենոփ. կիրդպդը. Կիր. գիրք Ե. Կէ 115։

սակայն տեսանելոյն. և յերեսաց նորա չիջցին յիս իղձք փառաց և աշխարհակալութեանց։ Բրասպա-սէ. Այս իցէ զեղոյ այնքան զօրութիւն, որպէս զի խոտորեցուցանել զմեզ բոլոր 'ի պարտուց մերոց. և ընդէր ասա՝ ոչ զամենեցուն սիրոս առ հաստատակ նուաճէ. առ իմ՝ չիշխեմք աչս մծրդնեայս ածել 'ի նոսա՝ յորոց ընկալաքն և որոց տուաք զլոյս։ Վանգի օրէնքք արգելուն զայն, ապա օրէնքն զօրաւորագոյնք են քան զսէր։ Վասկայն եթէ հրամայէին լինել անզգայ քաղցի և ծարաւոյ կամ ցրտոյ և տօթոյ, արհամարհեալ լինէին 'ի զգայութեանց ամենայն հրամանք նոցա. քանզի հզօրագոյն քան զօրէնս է բնութիւն։ Այլա ոչ ումեք մնրթէր հակառակ կալ սիրոյ, եթէ էր նա անպարտելի 'ի բնէ. ապա ոչ ոք սիրէ, բայց զի սիրել կամի [1]։

Պիւրոս ասէ. Եթէ 'ի կամն մնրգոյ էր յանձն առնուլ զլուծն, մնրթէր նմա և ընկենուլ զայն յորժամ կամէին. այլ ես տեսի տարփաւորս, զի հեզութիւն արտասուս ցուսագինս ընդ կորուստ ազատութեան իւրեանց, և խլտեին 'ի շղթայսն՝ զորս ոչ խորտակել և ոչ տանել կարէին։

Պատասխն ասէ. Դորա վատասիրտք զվատթարութեանն իւրեանց մեաս զսիրալ արկանեն. այլ շաղաստիրքք զկիրս իւրեանց նուաճեն ընդ պարտեաքն։

Յայնժամ Պիւրոս ասէ. Բրասպ Բրասպ, մի

1 Գ.ոսենոփ. կարգագր. Կիւր. գիրք Ե. էջ 116։

ստէպ 'ի զշխոյն հայիր ' ։ Լաւ զայս ասացեալ, եմեղ զնա և գնաց ։ Բայց Պանթէա ընդ գեղ կերպարանացն բերեր յանձին և այլ բարեմասնութիւնս, որք 'ի թշուառութեանն առաւել յուղէին զգութ ։ Պարտ համարեր Աբրասպ ինամ ունել զտիկնոջէն, և յաձախեր տակաւ զմնասին յանզգաստից. և վասն զի հարկ էր Պանթէայ մեծարանս փոխանակ հնարհացն առնել նմա, նա զցոյցս հնարհակալութեանն համարեր իրՀաճոյ լինելոյ [2], և տակաւ այնպէս 'ի նմա բորբոքեալ բոց սիրոյն՝ զի ոչ էաւ կարաց թաքուցանել զայն ։ Պանթէա բացէ 'ի բաց մերժեաց զՀրապպրոնորա, այլ ոչ ինչ զգացոյց զայնմանէ Կիւրոսի մինչև 'ի մտաբերել պատանեացն 'ի բռնաբարութիւն [3] ։

Լակ Կիւրոս առաքեաց ասել ցպատանին. Յորդորանաք և ոչ բռնութեամբ է քեզ վարել ընդ տիկնոջն ։ Որպէս 'ի շանթէ խմեինք հարաւ 'ի քանէ աստի Աբրասպ. շառագունեցաւ ընդ գործ իւր, և երկիւղ թագաւորին յաչաց եբանեալ՝ ծածկեաց զնա ամենայն և տրտմութեամբ. մինչև Կիւրոսի զթացեալ ընդ կորանս նորա, կոչեաց զնա առ ինքն և ասէ. Օ՞ երկնչիս զալ առ իս. քաջ իսկ գիտեմ՝ զի սէր զնմանատութիւն մարդկան և զզօրութեամբ զոյն խաղ առնէ. և ես

[1] Գաւենոփ. կարգագր. Կիւր. գիրք Ե. էջ 117։
[2] Նոյն անդ, էջ 117։
[3] Նոյն անդ գիրք Զ. էջ 153։

խոցս և եթե տալով զերծ կամ ի հարուածոց նոցա։ Ամենազորեմ քեզ զվիստագ՝ որում ես ինքնին եղեալ պատճառ. զի ի յանձնել քեզ զոչխոցն, արկի զքեզ ի վտանգ առաւել քան զկար քո։

Այնժամ զոչեաց պատանին, և ասէ. Բա՛ր է, մինչ թշնամիքն իմ ոտնհար լինին ինձ, և բարեկամք ահաբեկեալք խրատ տան ինձ փախչել յերեսաց բարկութեան քո, և ամենեքին ընկղմին զիս ի յուսահատութիւն, անմնացեալ բարերարութիւնդ քո զիս միթիթարել։ Ա՛վ Աւրբ, դու միշտ նոյն ինքն ես, ներող միշտ թերութեանց՝ յորոց դու անմասն ես, այլ անբասիր զնոսա առնես՝ ճանաչելով զմարդ։

Լ. Աւրբոս ասէ. Բ. յլ աղէ յօգուտ ի կիր արկցուք զպատրաստութիւն սրտի նոցա. կարեւոր է ինձ զիտել զզօրութիւնս թշնամեաց և զիսոր հուրդս. արդ անց ի բանակ անդր նոցա, և կեղծ փախստեամբ որպէս անկեալ ի պատուոյ՝ անկասկածելի լիցիս նոցա։ Լ. Բ. ասէ. Հաւասիկ կամ. և համարիմ զանձն երանելի, զի առաջի կայ ինձ զոյգն ինչ վաստակս ընդ իմումն ինամս փոխարինել։ Աւրբոս ասէ. Բ. յլ կարիցես մեկնել ի ջենաղազէն Պանթէայ։ Պատանին ասէ. Բ. ըդարև սիրտ իմ կեղեքի, և կարի խոկ զդամ արդ՝ զի կրկին ոգիք հակառակք իրեւաց են ի մեզ, մին յորդորիչ հանապազ ի բարին, միւսն առ ի ջարն հրապուրիչ։ Սակս

։ Բ. Ջենոֆ. Կարդագր. Գիրք. գիրք Զ. էջ 154։

մինչև ցայժմ լսելի. այլ արդ քոյով օգնականութեամբդ խրախուսեալ՝ երկրորդն յիս յաղթանակ ընդդեմ ասոխին [1]։ Եւ առեալ Բրասպեայ պատուէրս զաղանխս, յուղի անկաւ գնալ՝ի բանակն Բսորեստանեայց։

Եւ զկայ առեալ ասա Բասենոփանի, ըստայ. և իբրև մեք զարմացեալ կայաք, ասէ. Լուծան արդեօք խնդիրն։ Եւ Փիլոտաս ասէ. Բյո ամենեին, այլ Թերի է պատմութիւնն, և այն առաւել քան զլուծումն խնդրոյն ցանկալի մեզ։ Յարտեցաւ Բասենոփան, և յառաջ ածեալ զլանն՝ ասէ.

Բզգ եղև Պանթէայ՝ եթէ Բրասպ փախըստեայ գնաց առ Թշնամիս, և առաքեաց խոստացաւ Կիւրոսի զայլոք բարեկամ՝ի տեղի նորա փոխանակել, զևս հաւատարիմ, և պիտանի նեզոյն Թերևս քան զնա։ Բանզի կամէր հանել զԲրաղատ՝ի ծառայութենէ ազգային Բսորեստանեայց, վասն անիրաւութեան իրիք կրելոյ նորա՝ի նմանէ։ Եւ՝ի հաւանել Կիւրոսի ընդ այն, եկն Բրաղատ երկու հազարաւ հեծելոց և մատեաւ՝ի բանակն Պարսից. և Կիւրոս ետ վաղվաղակի ածել զնա առ Պանթէա [2]։ Յայն ազմուկ շփոթի խորհրդոց և կրից՝ զոր նեղդրծէ բարեբախտութիւն բաղձացեալ ընդ երկար և զրեթէ յեղակարծ, պատմեաց զԸշ-

1 Բասենոփ. կարդագր. Կիւր. գիրք Զ. կէ 154։
2 Նոյն անդ. կէ 155։

խոյն կարՃ 'ի կարՃոյ զդերութիւն իւր, և որ ինչ վիշտս կրեաց, և զկրս Աբրասդեայ, և զաւաբերարութիւն Կիւրոսի։ Իսկ Աբրադատ զիմեալ շնորհապարտ զոհութեամբ առ Կիւրոս, և բուռն հարեալ զձեռանէ նորա, ասէ. Ինդ ամենայն բարերարութեանց քոց, Կիւրէ, զինչ կարեմ քեզ ընծայել՝ բայց զսէր և զվաստակս իմ և զզօրս։ Եւ վասահ լեր, զի ամենայն խորհրդոց քոց հզօրագոյն զօրավիգն լցցի միշտ Աբրադատ։ Եւ Կիւրոս ընկալաւ զնա ցնծութիւն, և խորհուրդ կալեալ ընդ միմեանս՝ կազմեցին զկարգ Ճակատամարտին[1]։

Օրն Աղրեստանեայց և Լուդացւոց, և առաւելագոյն մասն Աշխոյ կային 'ի Ճակատ բանակին Կիւրոսի։ Աբրադատայ անկ էր յարձակել յահեղ փաղանգն եգիպտական. զի ինքն իսկ խնդրեաց զազգմանմանդ տեղին, և այլք 'ի զօրավարաց չթողուին նմա զայն, այլ վիճակաւ եհաս խնդրոյն[2]։

Եւ մինչդեռ հանդերձեր նա հեծանել 'ի կառս, եկն եբեր նմա Պանթէա զարահ՝ զոր զաղտ պատրաստեալ էր, և երևէին 'ի նոսա կողոպուտք զարդուցն՝ որոյ ինքն երբեմն պՃնէր։ Իբրև ետես զայն Աբրադատ, խանդաղատեալ 'ի նա՝ ասէ. Եւ ո՞չ 'ի զարդս քո խնայեցեր։ Եւ տիկնին ասէ. Ասա՛ր, և զինչ պիտոյ իցեն ինձ այլ

1 Քսենոփ. կարգագր. 2 Նոյն անդ. էջ 168։ Կիւր. էջ 155։

զարդք, եթէ դու այսօր երևեսցիս ամենեցուն որպիսի երևիս ինձ հանապազ։ Այլ զայս ասէ լսի՝ զազամիայլ զէնն զգեցուցանէր նմա. և արտասուք յաչաց նորա հեղուին, թէպէտ և Ջանայր ժուժկալել[1]։

Այլ իբրև բուռն եհար նա զսանձից կառայն, 'ի բաց արար Պանթէա զամենեսին որ անդն կային, և խօսեցաւ ընդ նմա և ասէ. Այթէ եղև որ երբէք ուրուք կին՝ բիւրապատիկ առաւել քան զանձն սիրօղ առն իւրոյ, իցէ քոյդ անելիբայելի. և զործք նորա առաւել վկայեն այսմ՝ քան զլանս։ Վասկայն հակառակ բռնութեան սիրոյս այսորիկ, երդուեալ 'ի կապանսն որ կցոր զեն զմեզ, լաւ իցէ ինձ մեռանել ընդ քեզ փառօք քան թէ կեալ ընդ առն՝ որոյ նախատանացն հարկ իցէ ինձ կցորդ լինել։ Յուշ լցցի քեզ թէ քանի՞ հնորհապարտ եմք Կիւրոսի. յիշեա զի 'ի կապանս էի, և նա արձակեաց զիս. 'ի վտանգ թշնամանաց կայի, և նա եղև ինձ պաշտպան. և զի զարձեալ զրկեցի զնա 'ի սիրելւոյն, և նա յուսացեալ 'ի բանս իմ՝ ակն ունի դտանել զքաջ ջաղոյն զոք և արդարև հաւատարիմ՝ քան զնա յիսն Աբրադատ[2]։

Լսեալ թագաւորն զարմացեալ ընդ այսպիսի բանս տիկնոջն, ձգեաց զաջ իւր 'ի գլուխ նորա, հայեցաւ յերկինս, և ասէ մեծաձայն. Զնմանէ

1 Քսենոփ. կարգադր. 2 Նոյն անդ։
Պիւր. գիրք Զ. էջ 169։

դիք, տ

՝ քնձ լինել յաւուր յայսմիկ արժանի բարեկամ Ալիբոսի, և մանաւանդ արժանի ամենայն Պանթէայ։ Եւ վաղվաղակի հեծաւ 'ի կառս. իսկ զշնոյն խառվեալ՝ ոչ ժամանեաց ողջունել զնա, այլ զկառաս և զթ զողոջ շրթամբք համբուրեաց։ Եւ խնայեղել ինն զՀետ կառայն արշաւակի ընթանայր 'ի դաշտին. զոր տեսեալ Ալբրադատայ, աղաչէր զնա յետս կալ, և քաջալերել արիաբար։ Յայնժամ մատեան առնաներ քինիք և նաժիշտք նորա, և տարան զնա 'ի բաց յաչաց ամբոխին. որ 'ի նա և եթէ պշուցեալ, ոչ կարաց նկատել զգեղ Ալբրադատայ, և զշքեղ սպառազինութիւնս նորա։

Յեզը Պակտոդեայ գետոյ մղեցաւ Ճակատամարտն. բանակն Կրեսոսի բեկեալ 'ի սպառ, փրկեաւ լիդական լայնածաւալ պետութիւն 'ի միում վայրկեանն ժամանակի, և պարսկայինն յաւելակս նորա ամբարձաւ։

Ի վաղիւ անդր յետ յաղթութեանն խնդրէր Ալիբոս զԱլբրադատ, և ոչ ևս տեսանէր զնա։ Եւ 'ի հոգս լեալ, եհարց զնմանէ [1]. և մի ոմն 'ի սպայէին պատմեաց նմա, զի զրեթէ անդէն 'ի սկզբան մարտին կէսք 'ի զօրաց նորա թօթափեալ էին 'ի նմանէ. սակայն նորա մեծաւ քաջութեամբ յարձակեալ 'ի փաղանգն եգիպտական, և յետ տեսանելոյ շուրջ զիւրև զամենայն բարե-

1 Քսենոփ. կարգագր. 2 Նոյն անդ, գիրք Ը. էջ 184։
Կիւր. գիրք Զ. էջ 170։

կամն իւր անկեալը զիտապատ՝ ասպա և ինքն անկեալ էր, և զի Պանթէայ ածեալ զգի նորա յեզը Պակտոլէայ՝ պատրաստէրնմա գերեզման։ Տրտմեցաւ յոյժ Պիւրոս, և հրամայեաց վաղ-վաղակի ածել անդր սպասս 'ի Թաղումն զիւցազնին։ Այլ ինքն յառաջեալ եհաս անդր, և եւ-տես զՊանթէա բազմեալ 'ի գեսնի առ արիւ-նաշաղախ գիսով առն իւրոյ։ Լցան աչք նորա արտասուօք. բուռն եհար զաջոյն որ փոխանակ իւր մարտուցեալն էր, և այն մնաց 'ի ձեռին իւրում. զի բազմախողխող երկաթոյն հատեալ էր զայն 'ի խոռն մարտին։ Այլ և խոռվեցաւ սիրտ Պիւ-ռոսի, և Պանթէա սրտառուչ ողբովք ՀԻՒ բար-ձեալ լայր։ Այլ առեալ զդաստակն՝ ողողանէր արտասուօքն, և խանդաղանօք համբուրէր զայն, և զետեղեալ անդրէն կամէր զոդել 'ի բազուկն. և ասպա հեկեկելով ասէ ցՊիւրոս. Տեսանես, Պիւրէ, զաղէտս որ հալածէն զիս. և ընդէր կա-միս ակամատես լինել թշուառութեան իմոյ։ Սա ընդ իմ և ընդ քո եդ զկեանս իւր. ես ան-միտ, ցանկացայ առնելոյ նորա անուն քաջու-թեան առաջի քո. և ինքն կարի հլու 'ի լուր խրա-տուց իմոց՝ զանձն 'ի վերայ քո փոխանակեաց։ Բայց՝ մեռաւ նա փառօք, այլ նա մեռաւ, և ես տակաւին տեսանեմ զարև։

Իսկ Պիւրոս վայրիկ մի արտասուեալ լռեցեայն, ասպա ասէ. Յաղթութիւն պատկեաց զկեանս նորա, և չմարթէր փառաւորագոյն ևս ունել նման վախ-

ման։ Լրդ ընկալ զլսորդքս 'ի սպաս գերեզմանի նորա, և զլսոհքս 'ի զենու�առ 'ի պատիւ անուան նորա. և լիցի ինձ հոգ կանգնել նմա շիրիմ յանմահ յիշատակ։ Լսկ զքեզ ոչ թողից 'ի ձեռանէ. ինձ յոյժ մեծարոյ են առաքինութիւնք քո և աղէտք. բայց միայն ցոյց ինձ ուր հանոյ իցէ քեզ գնալ։

Լչ Պանթէա խոստացաւ ցուցանել նմա ընդ հուպ. և իբրև մերկեցաւ 'ի նմանէ թագաւորն, 'ի բաց արար նա զնեբրբինիս իւր, և կոչեաց առ ինքն զզայեակ իւր նաժիշտ, և ասէ ցնա. Ի փակել աչաց իմոց, ընդ նովին քօղով զզիակն իմ ընդ առն իմում ծածկեսցես։ Լչ նաժշտին թախանձելով յոյժ զնա շրջել 'ի խորհրդոցն, իբրև եւեթ զի առաւել ևս յաճախեին թախանձանաքն իրաւացի վիշտք տիկնոջն, նստեալ առ նմա լայր։ Յայնժամ Պանթէայ առեալ զդաշոյն մխեաց 'ի սիրտ իւր. և մինչդեռ զօրն և ոգիքն 'ի նմա կային, հանգոյց զգլուխ իւր 'ի սիրտ առն իւրոյ, և մեռաւ։

Լնդ էր ասել զկոծ աշխարհանաց դառն և ողբալի զնաժշտացն, և զամենեցուն որ ընդ նմանցն էին։ Լրեք ոմանք 'ի նեբրբինեաց նորա զնենին անդ զմանչնա 'ի վերայ տիկնոջն իւրեանց՝ եղեալ զոհք ստուերաց նորա, և Լիւբոս ընդ զոյժ աղէտիցն անդր ընթացեալ, եղայ անդրէն զթագաւ-

1 Քաենոփ. կարդադր. Նիւ. գիրք Է. 185։

ւորին և զդշխոյին միանգամայն զթշուառութիւն. և էտ կանգնել նոցա շիրիմ, ուր անմիւնին նոցա խառն 'ի միասին եղան[1] ։

ԳԼՈՒԽ Խ.

Ուղևորել Անաքարսեայ 'ի Մեսենիա ։

Լսի մեկնեցաք 'ի Ակիղմնէ. և անցեալք ընդ Տրիփիղլա, հասաք յեղը գետոյն Լեդայ՝ որ բաժանէ ընդ Լոլոս և ընդ Մեսենիա[2] ։ Լսէ խորհուրդ կալեալ շրջել ընդ ծովեզերս զաւառին մեսենիացւոց, զոգաք 'ի Կիպարիսեայ նաւահանգիստն՝ մնանել անտի 'ի նաւ. և 'ի վաղիւ անդր հասաք 'ի Պիւղոս, որ առ Լդպաղեաւ լերամբ[3] ։ Օրվեղին անդ զրեթէ բոլորովին շուրջ պատեալ 'ի Ափիսերեայ կղզւոյ, է անդորը և խաղաղ հանգրուան նաւաց[4] ։ Ոչ այլ ինչ է տեսանել շուրջանակի, բայց մայրիս և ժայռս սեպագեալս և երկիր ամուլ, և խոր ամայութիւն[5] ։ Սարաստացւոց, որոց էր երկիրն յաւուրս պերզոպոնեսական մարտին, անտեսս արարեալ էր զայն 'ի տպառ. բայց աթենացւոց տիրեալ անդ, փաս-

1 Քսենոփ. կարգադր. Կիւր. գիրք Է. էջ 186։
2 Պաւսան. գիրք Դ. գլ. 20. էջ 327։ Սարաք. գիրք Ը. էջ 348։
3 Սարաք. անդ. էջ 359։
4 Թուկիդ. գիրք Դ. գլ. 8։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 113։
5 Թուկիդ. անդ. Պաւսան. գիրք Դ. գլ. 36. էջ 372։

թացան ամբոցուցանել զայն, և հալածեցին ընդ ծով և ընդ ցամաք զզօրս սպարապետաց և զնիզակակցաց նոցա։ Այլ յայնմհետէ Պիղոս, որպէս զամենայն վայրս յորս նախնիքք մարդկեղէն արեանց զոծիսն՝ ցանկալի եղև ուղևորաց 'ի տեսանել[1]։

Յուցին մեզ անդ զՅաղթութեան պատկերն զոր ահեղագոյց կանգնեալ էր անդ[2], և 'ի հին աւուրց աւանդութենէ պատմէին մեզ՝ անդ խոհականին 'Լեստրի թագաւորեալ։ Այլ Հոմերոս, ասէաք, 'ի Տրիփիղիա ասէ զնա թագաւորեալ[3]։ Այլ փոխանակ պատասխանւոյ ցուցանէին մեզ զսպարանս նորա և զկենդանագիր, և զզոմարջառոյ նորա[4]։ Իսկ մեք զհակառակն վիճեալ պնդէաք. այլ վաղ խելամուտ եղաք, զի և ազգաց առ հասարակ և իւրաքանչիւրոց մարդկան դժպհի է յերկրայս արկանել զնախնիս նոցա՝ յորս պանծան։

Այլ նաւարկեալ զծովեզերքն մինչև 'ի խորս մեսենիական ծոցոյն, տեսաք 'ի Մոնոն* ջրհոր մի՝ որոյ ջուր կպրատեսակ ունելով յինքեան մնանկունս, բերել զհոտ և զգոյն կիզկեան բաղատանի[5]։ Այլ 'ի Կողմնիզ տեսաք բնակիչս, որոց ոչ զբարս և ոչ զբարբառ ահեղագոյց ունելով՝

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 36. էջ 372։
2 Նոյն անդ։
3 Պարաբ. գիրք Ը. էջ 350։
4 Պաւսան. անդ. էջ 371։
* Որ այժմ կոչի Մոռոն։
5 Պաւսան. անդ. գլ. 35. էջ 369։

Համարին 'ի նոցանէ սերեալ. զի է մերձ յԹէկնա աւան մի՝ որոյ անուն Կոչն [1]։ Ընդդէմ եւս տեսաք զմեհեան Լուսնոյն հռչակաւոր որպէս զնախնին, ուր զիմին ախտաժէտք 'ի խընդիր բժշկութեան, և Համարին գտանել զայն։ Եւ անդրադարձն եւս զկորմնէա* քաղաքն գեռ եւս կառուցեալ հրամանաւ Լուսամինանդայ [2], և ապա զբերան Պամիս գետոյ՝ ուր մնաք հողմուռոյց աւռաղաստիւք, զի է նաւարկեալ մինչև ցտուն սապարէզս [3]։

Մեծադոյն քան զամենայն գետս 'ի Պերզպոնեա է Պամիս. թէպէտ և յանկանէ նորա մինչև 'ի տեղին ուր բերանացեալ յանգի 'ի ծով՝ ոչ ինչ աւելի է քան զՀարիւր ասպարէզ [4]։ Սուղ էն գնացք նորա, այլ ոչ անհնարն. զկարձանաւ կենալ բերի գնմանութիւն, որ ելցէ լի աւուրքն բարութեան։ Զուրքն նորա ականակիտք երանաւետեն զվայրս ընդ որս հոսին, և ձկունքն ընտիրքն ծովու յաշխարհն անդր յամենայն ժամանակս, և 'ի դարձ զարնայնոյ փութան 'ի վեր կոյս գետոյն արկանել զձուս [5]։

Ի մտանելն 'ի ցամաքն անդր, տեսաք նաւս տարաշխարհիկս նորաձեւս՝ որ գային Թիոլք և աւռաղաստիւ։ Մատեան յառաջ, և ուղեւորքն ծերքն և տղայք, արք և կանայք խուժեալ 'ի ցամաքն,

1 Պատան. գիրք Դ. գլ. 34. էջ 365։
* Որ արդ կոչի Քորոն։
2 Պատան. անդ։
3 Դոյն անդ, էջ 363։
4 Սարաբ. գիրք Ը. էջ 361։
5 Պատան. անդ, էջ 363։

երկիր պաղին, և ձայն բարձեալ ասէին. Լցա-
նի՛ և բիւրիցս երանի՛ առուն, որ զքեզ ըղձից
մերոց հնարէ. Թանամք զքեզ արտասուօք, եր-
կիր ցանկալի՝ զոր հարքն մեր ժառանգեցին, եր-
կիր սուրբ՝ որ զաՀիւն հարցն մերոց ծածկեաս։
Մատեայ առ մի ոմն 'ի նոցանէ ծերունի՝ որում
անուն էր Սենեկղէս, և Թուէր առաջնորդ
բազմութեանն, և ասեմ. Ո՞ էք դուք, և ուս-
տի գայք։ Լս նա ասէ. Մերունք եմք մեսե-
նիայուցն, ոչք յանդթութենէ սպարտացւոց էր
բեմն հալածեալք՝ Թողին զՀայրենիսն, և առաջ-
նորդութեամբ հաւոյն իսկ Կոմսի ապաստա-
նեցան 'ի ծայրս Լիբիոյ, յերկիր ուր չիք կցոր-
դութիւն ընդ ազգս Կլաղայ։ Լս ոչ գիտայաք ընդ
բազում ժամանակս, զի Կալամինդայ յառաջ-
քան զամս իբր հնգետասան յաղստութիւն դար-
ձուցեալ էր զՄՀեսենիա, և զնախնի բնակիչսն
անդր հրաւիրեալ։ Լս յետ հասանելոյ իրացն
առ մեզ, խուզք անյաղթելիք արգելին զմեզ. և
մնահ ևս Կալամինդայ յամեցոյց զդարձ մեր.
այլ արդ ահաւասիկ զամք վայելել 'ի բարերա-
րութիւնս նորա։

Լս մեր ընդ տարաշխարհիկսն ուղեկից լեալ,
և անցեալ ընդ դաշտս բերրիս, հասաք 'ի Մե-
սենէ քաղաք՝ որ հանդոյն Կոմսթոսի կառու-
ցեալ կայ 'ի ստորոտ լերին միոյ, պատնէշ կա-

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 26. էջ 342։

ցեալ որպէս զնա աշխարհին պէղոպոնեսացւոց [1]։

Պարիսպք քաղաքին 'ի կոփածոյ քարանց շինեալ, պատկեալ մեհարձանօք, և խիտ առ խիտ աշտարակօք ամրացեալ [*], հզօրագոյնք էին յոյժ և բարձրագոյնք քան զԼիւզանդեայն և զՀռոդոսին և զայլոց քաղաքաց Յունադայ [2]. և շուրջ ածեալ պարիսպին զլեառն Լեթոմ։ Ցեսաք մեք 'ի նեղքս անդ հրապարակ մեծ, զարդարեալ մեհենօք և անդրեօք, և աղբիւր յորդառատ 'ի նմա։ Շուրջանակի ամբառնային շինուածք գեղեցիկք, և 'ի սեմոց անտի յայտնի էր՝ որ ինչ 'ի քաղաքամիջի անդ մեծապարծութիւնս մնայր մեզ տեսանել [3]։

Լորեկ բնակիչքն մեծարանօք և բաղումք խնամովք ընկալեալ եղեն. և 'ի վաղիւ անդր չոգան յերկրպագութիւն 'ի մեհեանն Լատանդայ կառուցեալ 'ի ծաղ լերինն [4] 'ի միջնաբերդի, յորում հնալք արուեստին և ամրութիւն տեղւոյն օգնէին իրերօք։

Լեթոմ մի 'ի բարձրաբերձ լերանց է [5], և մեհեանն մի 'ի վաղեմի մեհենից աշխարհին պէղոպոնեսացւոց [6]. զորմէ այսպէս ունին զրոյցք, անդ

1 Պողէբ. գիրք Ի. էջ 505։ Սարաբ. գիրք Ը. էջ 361։

* Երեսուն հազար յաջորակաց ասաի կային գեռ. ևս յառաջքան զամն յիսուն. և Ֆուռանն եաես գնասա. (Յիշատ. բանակրական կառնաոյն, հտ. 7. էջ 335)։

2 Պաւսան. գիրք Դ. գլ. 31. էջ 356։

3 Յիշատ. բանաս. կառնաոյն, հտ. 7. էջ 335։

4 Պաւսան. գիրք Դ. գլ. 33. էջ 361։

5 Նոյն անդ, գլ. 9. էջ 301։

6 Նոյն անդ, գլ. 3. էջ 287։

յաւերժահարսանց զայնիկեալ զԱրամազդ։ Պատկեր ատուածոյն, յԱրքեղազայ զրօշեալ, պարի 'ի տան միոյ 'ի քրմաց՝ որ տարեւոր ժամանակաւ վարէ զքահանայութիւն, ընտրութեամբ կոչեալ զայն [1]։ Եւ որ յայնժամ զքահանայութիւնն ունէր՝ անուն կոչէր նմա Կեղենոս. և էր նորա կեցեալ զբազում աւուրս կենաց իւրոց 'ի Սիկիլիա։

Նոքին աւուր կատարէր մի 'ի տօնիցն տարեկանաց Արամազդայ, յոր դիմեն անդր բազմութիւն ժողովրդոց 'ի մերձակայ գաւառաց։ Ոչաճ կեալ էին կողք լերինն յարանց և 'ի կանանց, զոր 'ի կատար անդր փութային հասանել։ Եւ տեսանք մեք զորբազան պաշտամանցն արարողութիւնս, և կացաք 'ի լուր երաժշտացն մեղսոտի՝ որ 'ի վաղնջուց ժամանակաց սահմանեալ է անդ [2]։ Ոչնչութիւն մեսենիացւոցն լիբէականաց զամենայն զթատրն շարժէր 'ի գութ, և դէպք ինն յեղակարծ յաւելին զորովագոյն և առնել զտեսիլն. քանզի Կեղենոս քուրմ Արամազդայ ծանեաւ զցեղապետ տուռապեալ ազգատոհմիցն, զի եղբայր իւր էր, և գիրկս արկեալ նմա՝ չկարէր մեկնել 'ի նմանէ։ Ոչչեցուցանէին միմեանց զդժնդակ աղէտն, որ զնոսա բաժանեցին երբեմն 'ի միմեանց։ Եւ կացաք մեք զաւուրս ինչ ընդ երկոսին պատկառելի ծերունիսն, ընդ բա-

1 Պաւան. գիրգ Դ. դլ. 2 Նոյն անդ։

զումն յազգականաց նոցա և 'ի բարեկամաց։

Ի տանէ Կեղենեայ տեսանէաք զՄեսենիա ողջոյն, և ընդ սահմանս նորա շուրջանակի ձգեալն աչք մինչև ցասպարէզս ուղիղարիւր՝ 'ի հիւսիսոյ ընդ Բ.ըկաղիա և ընդ Լղիս, յարևմտից և 'ի հարաւոյ ընդ ծով և ընդ կղզիս մերձաւորս, և յարևելից ընդ գոտիս տայգետական լերանցն՝ որ բաժանեն ընդ Մեսենիա և ընդ Լակոնիա։ Լաւ ապա դեղերեալն աչք 'ի տեսարանն 'ի շրջապակի անդ ամիսոփեալ։ Յուցանեալն մեզ անդաստանս պտղալից՝ որ մերձ և որ հեռի, անջրպետեալս 'ի բլրոց և 'ի գետոց, և ծաղկեալս խաշամիջք և մարկոք՝ որ են մեծութիւնք բնակչացն[1]։ Յայնժամ ասեմ. Սակաւս տեսաք մեք մնալս 'ի դաշն մերում այսր. և ինձ թուի զի բնակիչք գաւառիս նուազ են յոյժ առ արդաւ սատրութիւն երկրին։ Պատասխանի ետ Վասենոկղէս, և ասէ. Լաւ մի այլ ինչ համարիցիս այդմ պատճառս, բայց զիսուժադուժան՝ զորոց լերինքս այսոքիկ ծածկեն յաչաց մերոց զդժպհի տեսիլ։ Ընդ դարս չորս անդադար ասպատակէին սպարտացիք 'ի Մեսենիա, թողլով բնակչացն բաժինս պատերազմ կամ աքսոր, մահ կամ գերութիւն։

Լաւ քանզի սուղ ինչ զբազմաղէտ խռովու-

[1] Սարաք. գիրք Ը. էջ 362։ [2] Եւրիպիդ. և Ցիրա. առ. Սարաքանի. գիրք Ը. էջ 366։ Պլաս. յԱզիկ. հա. 2. էջ 122։ Պաւսան. գիրք Դ. էջ 288 և 316։ Պլուտ. յԱգես. հա. 1. էջ 615։

թեանցն գիտէաք, Սենեքերիմ յոգւոց հանեալ՝ դարձան առ որդի իւր և ասէ. Ա՛ռ քնար, և նուագեա զողբս պահեալս առ մեզ. երկուս 'ի Կոմնէ և միւս այլ 'ի հօրէ իմմէ յԱվդետեաց երգեալ 'ի տիտիւնն վշտաց իւրեանց, և 'ի յաւժ յիշատակ աղետիցն որ հասին հայրենեաց քոց *։ Եւ լուաւ պատանին, և սկսաւ նուագել այսպէս.

ՈՂՔՈՒ

Յառաջին պատերազմն Մասենիական **։

ՏԱՐԱԳԻՐՔ Յիշատակ սահեալք նժդեհութեամբ առ ազգս օտարս, կարեկցութեամբ լոկով կցորդէաք ընդ մարդկան որ զթայլն 'ի մեզ։ Ո՞հ հաւատայր, զի յետ ալէկոծելոյ զայսքան ժամանակս ընդ ծով մնայր մեզ հասանել 'ի նաւահանգիստ այսր յեւեսպերեան ', 'ի զաւառ՝ զեղեալ ցանկալի պարգևօք բնութեան և խաղաղութեան։ Ա՛յստ երկիր յաղեցուցանէ զիղձս մնակին, հատուցանելով հարիւրապատիկ զհասն աւանդեալ նմա. գեղք խաղաղածաւալք զեռան 'ի դաշտին, մերձ 'ի հովիտ ուրեմն ընդարձակ՝

* Յեսայոյ մատենիս 'ի առեղեկութիւնն. թիւ ԺԷ։

** Սկիզբն եղև պատերազմս 743 ամաւ Ն. Ք. և վախճան յամին 723 նոքին թուականութեան։

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 26. էջ 342։

որում դամենիք և մնանենիք և հոյլք նոնանենեաց և այլ ևս ազգ ազգ ծառոց հոլանի առնեն ՝։ Ինքը ևս քան զնա են առաղուտք հրատապք, ազգք խուժադուժք, գազանք վայրենիք. այլ չիք անտի մեզ երկիւղ, չեն ՝ի նոսա սպարտացիք։

Ինակիչք գեղեցիկ ապաստանացն ողորմեալ ՝ի Թշուառութիւնս մեր, յօժարութեամբ եառուն մեզ ապաւէն. այլ տրտմութիւն մնալ զաւուրս մեր, և Թերի բերկրանք յաճախեն զդառնութիւն անձկութեանս մերոյ։ Լա՛ռ, քանի արտասուս ՝ի մէջ ծառաստանացս դեգերելով հեղլ ՝ի յիշել զԼեանիա։ Ո՛վ երանութիւնս ապուանք Պամիսեայ, մեհեանք վեհավայրք, մայրիք զիցանուէրք, դաշտք ոռոգեալք յաճախ յաբենեկ հարցն մերոց, մի ինձ, մի լցի երբէք մոռանալ զձեզ։ Լա՛ք, ո՛ վայրագ սպարտացիդ, երդնում յանուն մեսենիացւոցն հինգ բիւրուց՝ զորս ցրուեցեր ընդ երեսս երկրի, երդնում Թշնամութիւն անհաշտ հանգոյն անգթութեանդ քում՝, յանուն նոցա և զառակի նոցին, և որ յաւմենայն տեղիս և ՝ի ժամանակս իցեն մնրդիկ բարեգործով յանուն նոցա ամենեցուն երդնում։

Ոչուառականք Թշուառացուանիդ քաջազանց որդիք, իցէ Թէ եղեղերգութիւնքս իմ այսոքիկ նուագեալք ՝ի տիպ Տիրտեայն և Ալքիոզբեայ՝ հնչեսցեն ՝ի լսելիս ձեր որպէս զփող որ գոչիցէ

[1] Ակիլլաս. յաշխարհագիրս, հա. 1. էջ 46։ Պլին. գիրք Ե. գլ. 3. էջ 249։

'ի պատերազմի, և իբրև զԹնդիւն որոտման որ ընդոստուցանիցէ զվատ 'ի քնոյ։ Լոյծ Թէ զցայգ և զցերեկ յանդիման առնելով աչաց ձերոց զըստուերս հարց ձերոց սպառնալիցս, զործեացեն 'ի սիրտս ձեր խոց մշտահոս արեան։

Լ խորին խաղաղութեան 'ի դարուց բազմաց կիւին մեսենիացիք, յերկիր՝ որ զլիութիւն բաւականին նոցա մատուցանէր, և ընդ երկնաւ՝ որ միշտ արփաւոր զբաղցը ազդմունսն 'ի նոսա ներզործեր։ Լ զատք էին, և օրէնք հանձարեղք նոցա, բարք անկեղծք, արքայք ժողովրդասէրք', և տունք բազմապայծառք 'ի հանգիստ վաստակոց նոցա։

Ուխտին նիզակակցութեան, որ կցորդէին զնոսա ընդ սպարտացիս, հասին յանկարծ հարուածք հաստոցքը. յարեան բոլոր և զայրացան տատի և անտի, և բաղբանացն յաջորդեցին սպառնալիք։ Փառամոլութիւն որ կաշկանդեալն կայր ցայնժամ՝ օրինաքն Լիկուրգեայ, զայն ժամ՝ պատեհ գտեալ խորտակէ զշղթայսն, կոչ առինքն բարձրաձայն զանիրաւութիւն և զանտութիւն, և սանդարամետական արբանեկաքն սպրդեալ մտանէ 'ի սիրտ սպարտացւոց, և մղեալ ածէ զնոսա 'ի բաղինս յերդումն՝ մի 'ի բաց զնել զշէնս մինչև ծառայեցուցեալ զԼեսենիա[1]։ Լ խրոխտացեալ յաղթանակաւն՝ ածէ զնոսա

[1] Պաւսան. գիրք Դ. գլ. [2] Յուստին. գիրք Դ. գլ. Ա. 3. էջ 286։

'ի մի 'ի գահաւանդից Ցայդեստանի լերին, և անտի ցուցեալ նոցա ակներև զՆոյն դաշտորայս, մուծանէ զնոսա 'ի դղեակ մի ամուր որ էր նախնի նիզակակցացն նոցա, և՝ բաժանէր ընդ սահմանս երկաքանչիւրոցն պետութեան՝։

Լուր հանքաւոյն չհանդուրժեալ հարքն ձեր թշնամանացն, զիմն խուռն բազմութեամբ յարքունիս թագաւորացն մերոց։ Լափայէս յայնժամ թագաւորէր. լուաւ նա զիարատ զլխաւորսայ ազգին, և չբթունք նորա եղեն գործարան իմաստութեան։ Օ՜ արթոյց զեռանդն մեսնիաւցուց, և ամբեաց զայն մինչև ցժամ բարեպատեհ վերստին արծարծանելոյ նորա առ 'ի յաղթանակ՝։ Զոյգին ամբ առ 'ի մարդել 'ի հրահանգս մարտի զաղգն կարի ընդելացեալ զաւսանաց ընդ երկար խաղաղութեան. և ուստ նա յայնժամ կալ անմոռուն 'ի յաւիտեանել սպարտացւոց զՀունձս իւր, և 'ի հատուցանել նոցա զՀատուցումն ասպատակաց 'ի Լակոնիա։

Զկիցս ժամանակ վրէժխնդրութեան թուէր եկեալ հասեալ, և երկիցս զօրութիւնք երկաքանչիւրոց պետութեանցն մնաքառեցան ընդ միմեանս, այլ յաղթութիւն չիշխեաց սահմանել զվէՀն մեծ, և տարտամութիւն նորա ՀՀսպեցոյց զկործանումն մեսնիացւոյ։ Բանակ նոցա օր ըստ օրէ տկարանայր կորստեամբ բազմաց 'ի

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 2 Նոյն անդ։
8. էջ 292։

պատերազմողաց, պահս յամուրս նստուցանել-
լով, ստրկացն դասալիք վճարանողութեամբ, և
սրածութեամբ որ սկսանէր խամրել զերկիրն երբ-
բեանն յոյժ բարգաւաճ։

Ի վարանս տարակուսին խորհուրդ կալան ամ-
բանալ յԱթամ լերին [1], և խնդրել հրամանն պա-
տասխանւոյ 'ի Դեղփիս։ Վուրքն, և ոչ դիք,
ետուն զայս պատգամ. Երիտասարդն ելեալ ընդ
տրեալ վիճակաւ 'ի զոհ, փրկեսցէ զԱեսխա [2]։
Կանխակալ մտահոգութիւնք անտես արարին
զհնազանդութեանն դժնդակութիւն։ Ցաւ 'ի
մէջ մտահոգոյժ սատրոն, և դատապարտեաց վի-
ճակ զդուստրն Լեկիսկեայ. և անդէն Լեկիս-
կոս աներևոյթ զնա արարեալ, խոյս ետ ընդ նմա
'ի Սպարտա։ Ի մէջ մտտեաւ Երիստոդեմ քաջ
պատերազմողն, և զհեծութիւն ծնեալսէր զթոյն
ընդացուցեալ 'ի սրտի՝ մատոյց զդուստր իւր 'ի բա-
զին։ Երիտասարդն խօսեցեալ էր միում 'ի սիրե-
լեաց աղջկայի. սա հասեալ նմա յոգնութիւն,
ցուցանել զի չէր օրէն յակամայս փեսային մա-
տուցանել զհարսն 'ի զոհ։ Այլ ոչ անդ զկայ ա-
ռեալ, և զանմեղութիւնն արատեալ առ 'ի կեցու-
ցանել զնա. յայտ առնել կատարեալ զհարսա-
նիսն։ Սոսկումն ընդ զարարտութիւնն, երկիւղ
նախատանացն, գոռով հայրագութիւն, փրկութիւն
հայրենեաց իղձք, սիրութիւն խոստմանն, յոյզք

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 9. էջ 301։
2 Եւսեբ. պատրաստ. ա-
ւետ. գիրք Ե. գլ. 27. էջ 23։

բազմախուռն ներհակակիրքը այնպէս զղջրդեալ շարժեն զերիս Քրիստոդեմայ, մինչև մնաբեբել նմա յաղէտս դժնդակս խնդրել սփոփումն։ Զգէ զձեռն իւր 'ի դաշոյն, և անկանի դուստրն առ ոտս նորա դիակնացեալ. հեծէ տեսարանն։ Լակ քուրմն անյաղուրդ և անագորոյն գոչէ. Ով բարեպաշտութիւն, այլ զայրոյթ զրդեաց զքա զուկ սպանողին. միւս ևս խնդրի զոհ 'ի դից։ Նա ամբոխն աղաղակելով զայրագին, Հատասիկ միւս այլ զոհ, դիմէ 'ի վերայ Թշուառական տարփածուին. և փոքր միւս ևս և կորուսանէր զնա, եթէ ոչ Թագաւորն ողբանօք ցուցանէր նմա զՀրամանս դիցն լցեալ։

Նա քան զևս խստանայր Պարտա 'ի խորհուրդս աշխարհակալութեան, և հանդգնակեր զխորհուրդսն ստէպ Թշնամանօք և Նապաղեօք արեան։ Ի միում ուրեք 'ի Նակատուց Նոփայէս սպանաւ, և Թագաւորեաց փոխանակ նորա Քրիստոդեմ[1]. յայլում ուրեք Նակատու, ուր ազգք բազմաք պեղպտնեսացիք կային 'ի Թիկունս մեսենիացւոց[2], հարան Թշնամիք մեր. և երկք հարիւր 'ի նոցանէ զէն 'ի ձեռին գերեալք, Թացին զազգինս մեր արեամբ իւրեանց[3]։

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 10. էջ 304։

2 Նոյն անդ. գլ. 11. էջ 305։

3 Միրոն, առ Պաւսանիայ, գիրք Դ. գլ. 6. էջ 294։ Կղեմ. աղէքս. յորդոր. առ հեթանոսս, հա. 1. էջ 36։ Եւսեբ. պատրաստ. աւետ. գիրք Դ. գլ. 16. էջ 157։ Պլուտ. 'ի Հռոմուլ. հա. 1. էջ 33։

Դեռ և սպատեալ սպաշարեալ կայր Թոմ, և Աբիստոդեմ խնամին իւրով և արիութեամբ և վստահութեամբ 'ի զօրն, և դժնդակ յիշատակաւ դատերն ձգէր երկարէր զպաշարումն. այլ հրամանք դիցն խաբուսիկք և հրաշք ահաւորք սասանեցուցին զհաստատութիւն նորա։ Եւ յուսահատեալ 'ի փրկութենէ Աեսենիոյ, ջոգաւ զիւրովքն՝ հեծեծելով 'ի վերայ գերեզմանի դրստերն զվերջին հեծութիւնսն՝։

Պաշարեալքն ժուժկալեցին այլ և ամիսս բազում. այլ 'ի կորնչել զօրավարաց նոցա և քաջաց սպատերազմողաց, և 'ի սպառել համբարոց, յանհնարս մնեալ ետուն զքաղաքն 'ի ձեռս թշնամեաց. կէսք խոյս տուեալ առ աղգս շուրջ բնակեալս, և այլք յառաջին բնակութիւնս իւրեանց։ Աւր յաղթականացն 'ի վերայ հասեալ, երդմնի արարին զնոսա՝ մի՛ և չակառակ սպարտացւոցն իշխանութեանն առնել ինչ. գործել զերկիր իւրեանց, այլ զկէս արդեանցն ամի ամի մատուցանել նոցա. և 'ի վախճանել ուրուք 'ի թագաւորաց կամ յաւագանւոյն Սպարտայ, զգեստուլ զհանդերձ սգոյ արանց և կանանց[2]։ Այս պայմանք են, զորս յետ քսանամեայ մարտին եդ Լակեդեմոն հարցն ձերոց 'ի նախատինս։

[1] Պաւսան. գիրք Դ. գլ. 13. էջ 311։ Նեայ. գիրք Դ. գլ. 14. էջ 313։ Եղիան. զան. պատմ.

[2] Տիրտէոս, առ Պաւսան. գիրք Զ. գլ. 1։

ՈՂՂՐ

Յերկրորդ պատերազմն Մեսենիացւոց *

Ղարձեալ 'ի ձայն ողբելոցեաց եղերերգեմ զփառս դիւցազնին՝ որ ընդ երկար 'ի վերայ աւերակաց Հայրենեացն իւրոց պատերազմեցաւ։ Այլ, օրէն էր մահկանացուաց փոխել զուաշխս Ճակատագրին. աջ նորա յաղթական կանգնէր անշուշտ զկորանս մարտին և խաղաղութեան՝ որ երկոքին ևս էին դժուարին։

Բաբէ, որպիսի՞ էր խաղաղութիւնն այն։ Ընդ ամ երեսուն և ինն ոչ դադարէր 'ի ծանրացուցանելոյ զլուծն երկաթի եղեալ 'ի վերայ պարանոցի պարտելոյն[1], պարտասեցուցեալ ըզհամբերութիւն նոցա ամենայն ազգի ազգի ծառայութեամբք։ Ա՛ստ արեալք 'ի տաժանաւոր աշխատութիւնս, կորացեալք ընդ բեռամբ հարկաց՝ որ գնային 'ի Լակեդեմոն, բռնադատեալք 'ի լալ զմահ բռնաւորաց իւրեանց[2], և ոչ կարելով յայտնել զսպիկար ատելութիւն իւրեանց, ոչ այլ ինչ թողուին որդւոց իւրեանց 'ի ժառանգութիւն՝ բայց զաղէտս 'ի վշտակրութիւն, և

* Սկիզբն եղև պատերազմիս 684 ամաւ Ն. Ք. և վախճան յամին 668 նորին թուականութեան։

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 15. էջ 315։

2 Տիրտ. առ Պաւսանիայ, գիրք Դ. գլ. 14. էջ 313։ Պղտիր. գիրք Զ. էջ 300։

զԹշնամանս 'ի վրէժխնդրութիւն։ Այլ յայն ծայր չարեաց հասեալք, զի ծերք ոչ էս 'ի մանկանէ, զարհուրելին, և ոչ երիտասարդք յուսալին 'ի կեանս։

Այլ նոցա հանապազ յերկիր խոնարհեալ, ամբարձան յետոյ ուրեմն հայել Յիսուսին՝ որ 'ի նախնի թագաւորացն մերոց սերեալ, և որոյ անդստին յայգուէ կենացն իւրոց ցուցեալ էր 'ի դէմս իւր, 'ի բանս և 'ի գործս զոհսպս և զղջումն վերհանձին։ Այս պար առեալ յաշխոյժ պատանեաց, զորոց մերթ արծարծանէր և մերթ ամոքէր զեռանդն, հետաքրքրեաց զյաժարութիւն ազգաց մերձաւորաց. և զիտացեալ զի արդիւնքն և արկադացիք պատրաստք էին տալ նմա օգնականութիւն, յարեաւ ազգաւիմբ՝։, և յայնմ հետէ լսելի եղէն հեծութիւնք հարստահարութեան, և խրախոյս ազատութեան։

Ոակատամարտն առաջին մղեցաւ 'ի միում ուրեք յաւանաց Աբեսենիոյ, և եկաց երկուստեք անպարտելի։ Այդ Յիսուսեանցն պայծառացեալ քաջութեամբ, իբրև ամենեքին միաբարբառ անդէն 'ի Ոակատուն տեղւոջ կարդային զնա թագաւոր, նա հրաժարեաց 'ի պատուոյն՝ որ վասն ազգատոհմին, և առաւել ևս վասն առաքինութեանցն անկ էր նմա։

Կացեալ 'ի գլուխ բանակին, խորհեցաւ նոքանչան արիութեամբ ահաբեկ առնել զսպար-

1 Պատան. գիրք Դ. գլ. 14. էջ 314։

տացիս, և 'ի մեղրաբաղաքն անդր նոցա 'ի քուն առանդել զառհաւատչեայ ատելութեանն՝ զոր 'ի մանկութենէ ուխտեալ էր ընդդէմ նոցա։ Դէ՛ մէ 'ի Սպարտա, և մտեալ զաղտ 'ի մէհեան Աթենասայ, կախէ զրմեղ ասպար՝ զրոշմեալ 'ի նմա զայս. ՅԱրիստոմենեայ առ զիցուհին յաւարէ սպարտացւոց՝։

Սպարտա պատգամ ընկալեալ 'ի Դեղփիս, խնդրէր յայնժամ յաթենացւոց առաջնորդ զոր պատերազմին։ Նոցա երկուցեալ զօրավիգն լինել 'ի մեծութիւն ոսոխին իւրեանց՝ առաջի ա՛ր բարին նմա զՏիրտէոս [2], քերթող անշան՝ որ զքերութիւն դժնեայ կերպարանացն և զարկա՛ծիս դժբաղդութեանն ընդ արգասեաց վասն հանձարոյն, զոր աթենացիք զառանցանս իմն ցնորից համարէին [3]։

Տիրտէոսի հրաւիրեալ յօգնութիւն պատերազմող ազգին՝ որ նոյն հետայն հանգիստապատիւ քաղաքայնոցն գնա արար [4], ամբարձան միաբքն. և ետ զանձն բոլորովին 'ի բարձր առաջադրութիւնն։ Տաղք նորա եռանդունք ազգէին 'ի սիրտ զարհամարհանս վտանգաց և մահու. 'ի

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 15. էջ 316։

2 Ելիսուրգ. 'ի Լէսկի. էջ 162։ Յուսաբն. գիրք Դ. գլ. 5։ Պլուտ. 'ի Կլէոմ. հա. 1. էջ 805։ Պաւսան. անդ։ Ցիշատ. բանաս. կաշառ. հա. 8. էջ 144։

3 Դիոդ. լայերտ. գիրք Բ. յոդ. 43։

4 Պլատ. յդ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 629։

լուր այնոցիկ յարձակեցան սպարապետիք 'ի պատերազմ՝ ։

Լորատեղծ զեղոց խառնուածեան պէտք էն ատանօր, և չէ իսկ մարթ այլ ազգ նկարագրել զարիւնուշտ կատաղութիւնն՝ որ զերկաբանչիւր ազգն մղէր 'ի Ճակատ։ Որպէս որոտընդոստ բոցք եթէ 'ի վիհս Լանայ անկեալ՝ բորբոքիցեն զնոսա, դղրդի հրաբուղխն և մնչէ, և եռացեալ փրփրադէզ վերարերէ ալիս, ընդ հեր-ձուածս կողկոցն ժայթքէ զնոսա, և խանձողս հանդերձ հրոփն ընկենու 'ի վեր՝ ընդդէմ երկնից խիզախեալ. և շանթ դարձեալ վերստին հրալից 'ի յատակս ծանրացաստումն ընդ ժայրհուածիւն նորա՝ արագ քան զփայլակն ի ջեալ, խիտ առ խիտ հարկանէ զծաղ լերինն, և հատորս ժայռից ծխաշունչս 'ի բաց ոստուցանէ, և լուեցուցեալ զզորդումն վէրն՝ ծածկէ զայն յաՃիւն և յաւերած յաւիտենից. ըստ նմին օրինակի Լբրիտոմեն, առեալ զՀետ իւր զմանկտին մեսենիացի, անկանի սատակպէս 'ի վերայ ընտրելոց սպարապետացոյ՝ որոց զօրավարքն Լնաքսանդր։ Զ զրքն քա-ջամարտիկք օրինակաւ նորա իրախուսեալ, յարձակին որպէս առիւծունք զայլազգնեալք. այլ Ճգունք նոցա խորտակին ընդդէմ նիզակախուռն տմրակուռ զնդին, ուր կիրք բռնադոյնք լուցեալ բորբոքին, և ուստի նեռք մահացուք ոստ-

1 Պլուտ. Ալեքս. հտ. 1. էջ 805։ Ոմքասա. արուեստաքերթ. տող 402։

նուն անընդհատ։ Եւ իբրև նոքա արիւնայեղջը և վիրալիցք անկանին 'ի յուսոց յաղթութեան, Երիտասարդն խրախուսեալ զանձն և զիւրսն 'ի փախուստ դարձուցանէ զարին Ղնաքսանդր և ըզ գումարտակ նորա ահեղ՝ . և Ճախր առեալ ընդ գունդս Թշնամեաց, զկէսս բաղկաւ՝ զայլս ահիւ երեսացն 'ի բաց վանէ . և ցիր և ցան կացուցեալ զնոսա, և զՀետ փախստէիցն մնեալ մինչև 'ի բանակեալ անդր, ընկղմէ զնոսա յարհաւիրս խորս։

Կանայք մեսենիացիք նուագելին զյաղթութիւնն երգովք, զորս ցարդ յեղանակեմք՝ . և արք նոցա բարձր 'ի գլուխս պանծային, վերժ-ինդրութեն և յանդգնութեն 'ի սպառնալից Ճակատս նոցա տպաւորեալ 'ի դիցն զօրութեանց։

Պատմեա արդ, աստուածուհիդ յիշատակաց, որպէս զաւուրսն լուսաւորս ծածկեաց յանկարծ քօղ նեմ և տխուր։ Երբ բազում այն է՝ զի անկերպարանս խմն և ուժգոյնս ընծայես 'ի տեսիլ զպատկերս . զբազմահրաչակ իրացն զնշխարս և եթ հաստատանեն մեզ ամբ, հանդոյն ալեաց որք զբեկորս վարեն 'ի ծովեղերս զնաւաց տիրողաց երբեմն ընդ ծով։ Ղուարթաբ, մանկունք Ասենիոյ, ահա վկայ հաւատարիմ և դերարգոյ . տեսի ես զնա, և լուայ զձայն նորա 'ի մէջ մրրկալից գիշերոյն որ ցրուեաց զնաւատորմն, յածելն խմամ զայն 'ի Լիբիա։

1 Պաւսան . գիրք Դ . գլ . 2 Նոյն անդ , էջ 319 ։
16 . էջ 318 ։

Ինկեալ յանծանօթ ափունս կղզւոյն Հռոդոսի, զոչէի. Եվ երկիր, զոնեա զերեզման մեր լեր, զի մի զսակերս մեր առ ոսն կոխեսցեն սպարտացիք։ Լաւ ի հնչիւն դժպհի անուանն տեսի, զի եղանէր մրրիկ բոցոյ ծխախառն ի շիրմէն որ կայր մերձ առ իս. և ի խորոց շիրմին եղ եկայ ստուերս, և բարբառեալ ասէ. Եվ է մահկանացուդ այդ որ վրդովէ զհանգիստ Աքիստոմենեայ, և զրգռէ զդարանեալ յանձին նորա զանելութիւնն ընդդէմ խուժադուժ ազգին։ Լաւ ես ասեմ ինդուլեամբ. Եվեսենիացի է, սա ինքն է Կոմոն պայազատ ազգատոհմին՝ որ երբեմն քեզ ազգակիցն էր։ Եվ Աքիստոմենն, ո՞ մեծդ ի մահկանացուս, և անմարիս իցէ զի տեսանեմ զքեզ, և լեամ զբարբառս քո։ Եվ դիք, այժմ առատիկ միանգամ ի կեանս իմ օրհնեմ զձեզ, զի զԿոմոն ածիք ի Հռոդոս, Թէպէտ և թշուառ։ Պիւցանէն ասէ. Եվոդեակ, զու յամենայն կեանս քո օրհնեսցես զդին. Նոքա ազդեցին ինձ զգալուստս քո, Նոքին և հրաման տան յայտնել քեզ զծածուկս խորոց իմոստութեան իւրեանց։ Հասեալ գայ ժամնանակ, յորում իբրև զարև ի թզիայորդ ամպոյ Հառագայթաբաձակ ծագեալ՝ պայծառագոյն անդրէն երևեսցի Եվեսենիա՝ ի տեսարան աշխարհիս։ Պիւցանէն, որ սքանչելեացս լիցի պաշտօնեայ, առաջնորդեսցեն երկինք զանխուլ ազդեցութիւնք. այլ դժամնանակ իրսայն կատարածի ծածկեն ի մէջ հրա-

մանք Հակատագրին [1]։ Լրթ, և առ զինուորա-
կիցս քո որ մնան քեզ 'ի Լիբիա՝ զայսոսիկ տար
նոցա զրոյց։ Նա խաղաղութեամբ։

Լաւ ես ասեմ. վայրիկ մի և ես, հոգի վերհասն,
կամ մնա ինձ վայրիկ մի և ես. և 'ի բերկրալից յոյս
աւետեաց դիւ յաւել և զքաղցր սփոփանս։ Ինդեր
հարքն մեր թշուառացան, միթէ մեղապարտք
էին. ժամանակն զանմեղութեան նոցա ծախեաց
զփառս, և ամենայն ուրեք ազինք բերին զմինչ
կամակածանս 'ի կորանս մեր։ Արիստոմեն մատ-
նեալ, և թափառական քաղաք 'ի քաղաքէ շրջ-
ջեալ, և ամայի 'ի Հռոդոս զրաւեալ 'ի կենաց,
տեսարան թշնամանաղիր մեսենիացւոց արձա-
նացեալ կայ։

Յայնժամ դիւցազնին բարձեալ զձայն իւր,
ասէ ցիս. Ինթա, Երթ, վաղվաղեա որդեակ
իմ. ասա ընդ ամենայն երկիր, զի եռանդն քաջու-
թեան հարցն ձերոց բոցակիզազոյն քան զՇնիին
դտաւ, և առաքինութիւնք նոցա պայծառազոյնք
քան զարփին։ Լաւ եթէ գուցէ ինչ տակաւին
գթութիւն 'ի մարդիկ, շարժեսցես զնոսա յողբ
'ի լուր թշուառութեանց մերոց։ Արդ լուր ինձ.

Ձհանդուրժեալ Սպարտայ ընդ նախատինս
պարտութեանն, կոչեաց զզատերազմողս իւր 'ի
վրէժխնդրութիւն, զտարուկս յօգնութիւն [2]. և
զայր մի վատ քան զտարուկս իւր որ թաց 'ի

1 Պաւսան. գիրք Դ. գլ. ԿԶ 359։
26. ԿԶ 342 և 343. գլ. 31. 2 Նոյն անդ. գլ. 16. ԿԶ 319։

զլուխ պերճանայր՝ հրաւիրեաց 'ի մասնել զնի-
զակիցս իւր ' . զՔրիստոսիրատ ասեմ, որ հզօր
ազգին արիադայլոց Թագաւորեր , և զուսա-
ւորեալ էր նորա ընդ մեզ 'ի պատերազմ։

Մատեան առ միմեանս բանակքն երկոքին որ-
պէս մրրիկք , որ զսահմանսդ երկնից վիճեալ
մարտիցեն։ Ի տեսիլ յաղթականացն ընդունայն
ջանային Թշնամիք սրտասխդել , և 'ի տագնապ
ածաց նոցա նկարեալ կայր վատասիրտ երկիւղ
մահուն։ Ընդ Ցիրտհոս յառաջ մատեալ վըս-
տահութեամբ և սաստիւ , որպէս որ զի 'ի ձե-
ռին իւրում ունիցի զիրկութիւն հայրենեաց .
և տեսիլս պայծառս և յորդորականս ցուցայոյ
խիտ առ խիտ յաչս նոցա [2] ։ Պատկեր դիւցազին՝
որ յերեսաց նորա հալածին Թշնամիք , խառնեալ
ձայն աղաղակ ցնծութեան և զորովոյ՝ որ զյաղ-
թանակին նորա յաճախեն զիտառս , մեծարանք
ընծայեալ նմա յամենեցունց ամենայն ուրեք ,
և ծերութիւն պատուական 'ի խաղաղութեան ,
և խանդաղատելի և պատկեր քաջամարտիկ պա-
տանուոյ անկելոյ յասպարիզի փառաց , արարո-
ղութիւնք վեմք յուղարկաւորութեան նորա ,
սուգ և հեծութիւնք ժողովրդեանն առ հասա-
րակ 'ի տեսիլ դագաղայն , ծերք և կանայք և
տղայք Թաւալեալք արտասուօք զգերեզմնաւ
նորա , պատիւք յաւժարանք յիշատակի նորա ,

1 Պաւան . գիրք Գ . 17 . 2 Տիրտ . առ Սորաք . Հատ.
ԼՀ 321 . 49 . ԼՀ 334 .

այս ամենայն ազգի ազգի տեսարանք և կիրք նկարագրեալք սաստիկ և արագ Ճարտարիստութեամբ՝ եռանդն իմն անընդելական ածեն զբրականին։ Կապեն զոգին զլաւկաւ զանուն իւրեանց և զազգատոհմին, երանելի զանձինս համարեալ՝ եթէ ցուցցի գերեզման նոցա, և անուանեսցեն զնոսա յետին և սուսցեն. Հաւասիկ անկեալքն ի վերայ հայրենեաց։

Մինչդեռ քերթողն զայսպիսի եռանդն ի սպարտական բանակին արծարծանէր, ի մեծամբ զհաւատարժութիւն ի լուսին ածէր թագաւորն։ Համբաւք լարեաց սերմանեալք հլսամանաւ նորա, պատրաստեցին զսիրտ ահաբեկ զբրականին նորա ի լքումն. և նշան մարտին եղև նոցա ի նշան փախստեան։ Արիստոկրատ ինքնին ած զնոսա ընդ ուղին նախատանաց՝ հատեալ անցեալ ընդ գունդս մեր ի դժոգակ պահուն, մինչ մեք բոլանդակ զօրութեան փաղանգին թշնամեաց զդէմ ունէաք։ Ի քթթել ական ընտիրք ի մարակաց մերոց գտան խողխողեալ, և Ամեսենիա ի ծառայութիւն մնանեալ, այլ ոչ ի սպառ. զի ազատութիւն եգիտ իւր ապաւէն Լակոնա լերին։ Ընդդէմ սպառատանեցաւ նա, և զերծեալքն ի կոտորածէ զօրք, և քաղաքացիք խուսափեալք ի ծառայութենէ անդր ընդ նմա ամփացան։ Օ ստորոտովք լերինն ածին յաղ-

1 Ցուսամն. գիրք Դ. գլ. 5. 17. էջ 322։
2 Պաւսան. գիրք Դ. դէ. 3 Նոյն անդ. էջ 323։

թանկանք պատնեշ. և տեսանէին զմեզ ահիւ գեր 'ի վերոյ իւրեանց, որպէս նաւաղք 'ի մահատիպ գոյն գալկան՝ տեսանելով ընդ երկինս զսեաւ ամպ մրրկալից։

Ընդ սկիզբն եղև պաշարմանն, ոչ որպէս զԼ զլանին հուչակաւոր՝ այլ հանդոյն նմին հուչակելոյ արժանաւոր։ Ընդ էր տեսանել զքաջայաղթ արութիւնս նախնի դիւցազանցն նորոգեալ կամ մանաւանդ յարդիւնս ածեալ. և ձմերայնոյ դարձադարձք մեռոսան ոչ կարացին մեղկել զվայրագ յանհուութիւն պաշարողացն, և ոչ զանդրդուելն հաստատութիւն զպաշարելոցն։

Այրեաբիւր մեսենիացիք, նշանաւորք քաջութեամբ, ընկերեին ինձ յարշաւանս։ Հերձանեաք ստէպ զպատնէշն ածեալս շուրջ զստրոտոլք լերինն, և ածէաք արհաւիրս մինչև մերձ 'ի Սպարտա։ Ի միում նուազին լցեալք աւարաւ, պաշարեցաք 'ի զօրաց թշնամեաց. յարձակեցաք 'ի նոսա առանց յուսոյ յաղթութեան, և իմ անդէն հարեալ կարեվէր՝ գտայ անզգայեալ. և երանի՜ թէ ոչ անդրէն զարձուցանէին զիս դիք 'ի զգայութիւն։ Օ՜ արթեայ, և զինչ էր, բա՜ռ, զոր տեսի. եթէ սանդարամեաք համ՝ օրէն առաջի աչաց իմոց բանային, ոչ այնպիսի ազգեր յիս սոսկումն։

Գտայ 'ի զարհանս մեռելոց ընդ վիրաւորս

1 Հռիան. առ Պաւսանիայ, գիրք Դ. գլ. 17. էջ 323։

2 Նոյն անդ. գլ. 18. էջ 323։

կիսամեռս շեղջակուտեալս յաղջամղջին վայրի՝ ուր Ամիջ աղիողորմք լսելի լինէին, և նուաղ հեծութիւնք. և էին զինուորակցացն իսոց և բարեկամաց առ հասարակ։ Թշնամւոյն զնոսա 'ի վիհ անդր 'ի խոր հոսեալ էր, և զիս 'ի վերայ նոցա. կոչէի զնոսա յանուանէ, և ողբակիցք լինէաք միմեանց. և թուէր իմն սիրելի նոցա 'ի վիշտսն, տեսանելով զիս առընթեր։ Այլ որ առաւել քան զամենեսին սիրելին էր ինձ, ով զանն յիշատակ, ով պատկեր դժպհի. որդեակ իմ, դու ոչ կարիցես առանց հեծութեան լսել զայն. էր նա մի 'ի կարեւոր աղգականաց քոց. և զիտացի 'ի հեկեկանաց ինչ նորա՝ զի անկամաբ ի մամ վաղվաղեալ էր նորա մահ։ Վարեալ զնոսա բազկօք, թանայի զնա յարտօար ջերջերմ. և ոչ կարելով խափանել զելս հնչեալ վախճանին՝ որ 'ի շրթունս նորա հասեալ կայր, սիրտ իմ երիթացեալ առ վշտին սաստկութեան՝ արգելոյր յինէն և զսիրտս ողբոց և արտասուաց։ Այլ ըստ միոջէ անշնչանային զինև բարեկամք իմ, և ըստ նուաղել ձայնից նոցա զուշակէի զնչխարեալ վայրկեանս կենդանութեան նոցա, և անխուսով տեսանէի հասեալ զվերջինն՝ որ զրաւէր զվիշտս նոցա։ Լուայ ասա զյետին հառաչ զհուսկ յետին անշնչացելոյն, և լուութիւն գերեզմանի եղև 'ի վերն։

Այրեցս արփւոյն զասպարէզ իւր ընթացեալ էր, յորմէհետ ընդ մեռեալս հանգրեի։ Այլ

1 Պաւան. գիրք Դ. գլ. 18. էջ 324։

մինչդեռ անշարժ տարածեալ կայի 'ի մահճին ցաւոց՝ պատեալ 'ի կրկնոց իմ, և մեայի անձկա-նօք մահուն՝ որ յոյժ ծանրագնի զշորհսն ընձեռէր, աղղեցաւ յունկն իմ շշունջ. զի երկ-վայրի * ընդ զողոզի դեռնատիոր 'ի փոս անդր հասեալ էր։ Կալայ զնա, և նա խուստիէր. զհետ նորա սողսկեալ գնայի. չգիտեմ որպիսի ինչ խորհուրդք մղէին զիս, քանզի կեանք գժրն գակագոյն 'ի տանջանս թուէր ինձ յայնժամ։ Ի գիցն ոմն անշուշտ ուղղէր զշարժմունս իմ, և տայր ինձ զօրութիւն։ Ընդ կամակոր շաւիղս ընդ երկար սողեալ, տեսի ապա նշոյլ ընդ աղօտ. թողի յայնժամ զառաջնորդն իմ, և ինձէն բա-ցեալ ինձ անցս՝ ելի 'ի լոյս։ Եւ զտի զմեսենիա-յիս յոլովս, զի լային զիս իբրև զմեռեալ։ Ղե-ւեալ իմում անդ՝ հնչեաց լեառնն 'ի ձայն ցնծու-թեան, և 'ի պատմել զվիշտս իմ՝ հնչեաց դարձեալ 'ի գոչիւն սրտմտութեան։

Վրէժխնդրութիւն հուպ ընդ հուպ յաջորդեաց զհետ, վրէժխնդրութիւն իբրև զգիցն մեծասաստ։ Մեսենիա և Լակոնիա զոմն և զգիշեր էին ձարակ թշնամեաց սովելոց արեան մի-մեանց. սպարտացիք որպէս զլոյս 'ի հունձս ծա-ւալէին 'ի դաշտի, իսկ մեք որպէս զուղղ՝ որ զհունձս և զլոյս ապականէ։ Յոյզ եղև մեզ 'ի ծածուկ, զի կոխեցցիք զայնս յօգնութիւն Սպարտայ. և գիշերախառն սպրդեալ 'ի բանակ

* Մի յաղուէսաց։

անդր նոցա, 'ի քնոյ 'ի մահ զնոսա յուղարկեցաք '։ Մ.ԱԼ ընդունայն վաստակք, յոյս մնոտի։ Յանապատ գանձուց ամաց և զարուց Եհան ժամանակն 'ի հասանել պահուն զանձամեծ յեղափոխութիւնն երկնեալս 'ի ծոց յարիսենից, և զուշակեալս երբէք երբէք պատգամքս։ Որ ինչ դեղփական հարցկին նշանս տուեալ էր նախազգեկոյցս կործանման մերոյ՝ կատարեցան. և Լեոկրոս ըղձապատում ինձ իսկ զեկոյց յառաջագոյն, զի մօտաւուտ հասեալ կայր 'ի վերայ մեր կատարած բազմաղէտ տեսարանի[2]։

Մի ոմն 'ի հովուաց, երբեմն ստրուկ Լամբրամեայ զօրավարին սպարտացւոց, ածէր հանապազօր զխաշինս իւր արածել յեղը 'Լեռայ' որ հոսէ առ ոտամբ Լերայ լերին[3]։ Լաւ սիրէր նա զմի 'ի մեսենուհեաց բնակեալ 'ի զառ 'ի վայր լերինն, առ որում ազանէր՝ յորժամ առն նորա հասանէր պահ 'ի բանակի մերում։ Ի գիշերի միում եղեալ մրրիկ ահագին, զայ յանկարծ այրն մեսենեայցի 'ի տուն իւր. և 'ի պակուսել կնոջն ընդ յեղակարծ դարձ նորա, պատմէ զի մեռթն և մրրիկ յապահովէին զամրոցն, և չգոյր վտանգ հինից թշնամեաց, և ոչ ևս կայրն 'ի կարգեալ պահն, և զի վիրաւորեալ ևս էի, և հարկ էր ինձ կալ 'ի մահիճն։ Լակ հովիւն թա-

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 19. էջ 325։
2 Նոյն անդ. գլ. 20. էջ 327։
3 Նոյն անդ. էջ 329։

գուցեալ յերեսաց նորա, լսելով զայս ամենայն՝ անդէն վաղվաղակի գնաց և պատմեաց զիրսն զօրավարին սպարապետաց։

Պարտասեալ 'ի վշտաց և յաշխատութենէ՝ մինչդեռ քաղցր 'ի քուն թմբեալ կայր, երևեցաւ ինձ Հ՝ահապետն Պետենիոյ զգեցեալ հանդերձ սգոյ պնդնաւոր, քօղ զգլխով արկեալ, և ասէ ցիս. Կնջէս դու, Պրիստոմեն. ահա սանդուղքն սպառնալիցք յեցան զպարսպաքն. ահա մանկտին սպարապետի ընդ խարխուլ նեցուկսն վերեալկէ. Հ՝ահապետն Պարապետ յաղթանակէ 'ի վերայ իմ, տեսի զնա զի 'ի բարձուէ պարբսպացն ձայն տայր պատերազմողացն իւրոց ամենեցայ, աջ կարկառէր նոցա, և սաստիմնէր զիւրաքանչիւր կայեան։

Օ՜արթեայ ընդոստ 'ի քնոյ սրտաբեկ և մտաթափ, ապշեալ որպէս որ զիւրև շանթք թօթափիցին։ Դխմեցի 'ի զէն, և եհաս որդեանն իմ առ իս։ Որդեակ, ուր իցէն թշնամիք։ — Յամուրսն, ասէ, մերձ 'ի պատնէշս. պակուցեալք 'ի բարձրութենէ նոցա, ոչ ևս իշխեն յառաջ խաղալ։ Այլ ես ասեմ. Հ՝ատ է, անց զկնի իմ։ Այլ յուզոջ Ամէոկղոս թարգման դիցն, և կոչովին Անդիկղոս որդի նորա, և այլք 'ի զօրաւոր գլխոց հանդիպեալ՝ յաւելան ընդ մեզ՝։ Այլ աւ սեմ ցնոսա. Փութացարուք, 'ի զէն կարդացէք,

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 21. էջ 330։

ազգ արարիչ մեսենիացւոց, զի ընդ ծագել առաւօտու տեսցեն զզօրավարս իւրեանց 'ի մէջ թշնամեաց։

Հասանէ պահն անհրաժեշտ՝. պողոտացք, առնք և մեհեանք ողողեալք արեամբ, հնչեն ահագին կանչիւք. մեսենիացիք ոչ ևս լուեալ զբարբառս իմ, մոլեգնութեան ևեթ իւրեանց լսեն։ Պանայչ նոցա խրախուսեն զնոսա 'ի մարտ, և ինքեանք բիւր ազգի ազգի մահացու գործեօք զինուորեալ խուժեն 'ի թշնամիս, և տարատատանկանեն 'ի վերայ դիականց արանցն իւրեանց և որդւոց։

Օ՜ աւուրս երիս անդադար տեսարանս այս անողորմ՝ 'ի քայլափոխս իւրաքանչիւր և յիւրաքանչիւր վայրկենս գործեր յաղօտանշոյլ բոց փայլատականց, և յանընդհատ դղրդումն ոլորտընդոստ շանթից։ Սպարտացիք բազմագոյնք էին թուով, և հետ զհետէ հասանէին նոցա օգնական գունդք յառնուլ նոցա պարսպ. իսկ մեսենիացիք պատերազմէին անդուլ անդադար, կռուելով միանգամայն ընդ քաղց ընդ ծարաւ ընդ քուն և ընդ սուսերս թշնամւոյն[2]։

Ինդ երեկս երրորդի աւուրն Լեոնիդաս ըղձապատում դարձաւ յիս, և ասէ. Լաւ անդր 'ի բաց, զինչ օգուտ է քեզ յայդքան արիութենէդ և 'ի նահատակութեանց. կորուստ 'ի վերայ հա-

1 Պատան գիրք Դ. գլ. 21. էջ 331։
2 Նոյն անդ էջ 332։

սեալ կայ Մանեսիոյ, զկնք սահմանեցին զայն։ Փախիր Քրիստոսմէն, ապրեցո զանձն քո և զՏէր բարեկամն մեր. ինձ ընդ աւերակօք հայրենեացն խոց լաս իցէ Թաղիլ։ Այս ասացեալ՝ միջամուխ եղև 'ի խուռն մարտին, և անկաւ ազատ օրէն լի փառաք։

Դիւրին էր և ինձ զՏետ նորա տալ զանձն 'ի մահ. այլ ես 'ի կամն զիցն ապաստան, զմոռս ածի՝ զի մարթէր կենաց խնամք զերծանել բազմաթիւ անպարտ սպանելոցն, որ սրոյ ճարակ լինէին թշնամեաց։ Ի մի վայր ժողովեցի զկանայս և զմանկունս, և շուրջ զնոքաքս կացուցի պահ։ Կարծեցին թշնամիք զի 'ի փախուստ խորհէաք, լուծին զուազմ, և ետուն մեզ անցս՝ գնալ խաղաղութեամբ յերկիր արկաղացւոց*։ Ոչ եմ զիսորհուրդն զոր երկնեցի, դիմել 'ի Սպարտա և առնուլ զայն յեղակարծում, մինչ զօրականք նորա աւարաւ կայ լերինն մեծանային. և ոչ զդրժանս Քրիստոկրատայ արքային պատմեմ, որ գաղտնեաւն մերոց մնան եղև առ սպարտացիս։ Հաւատադրութիւն դատապարտեցաւ յատենի համազգեացն, իշխեցեալքն 'ի նմանէ զահիմք եղեն նորա, ընդ տարափով նետից անհնչացաւ, և դիակն նորա յերկիր օտար ընկեցեալ, սիւն 'ի վերայ

* Ազաւնն էրայ լերին եղև յառաջնումն ամի քսանեւրորդի ուխտերորդի սղմտիպոն, 668 ամաւ 'ն. Փ։ (Պատան. գիրք Դ. գլ. 23. էջ 336։ Քորմնի տարեգր. առտիկ. հա. 3. էջ 46։ Ֆրիրէ Ջատաղով. ժամանակագր. էջ 174։)

նորա կանգնեցաւ վկայ նախատանաց նորա և պատուհասին[1]։

Ընտիկեալ հարուածոն հանդարտակ յայտնեցան բախտին կամք. ոչ եւս ժամանակ էր ողբելոյ զնա, այլ մեծամարտելոյ ինձ ընդ նմա, և խնայելոյ ընդ հարուածոլք նորա։ Հեղն արտասուս 'ի վերայ մեռեալիցս՝ ողբ ոչ կարացին զալ ընդ իս, և ոչ լուայ արտասուաց եկեղցոյն՝ ողբ 'ի տար աշխարհ կամիին ածել զիս[2]։ Քանզի խոստանային արկադացիք բաժանել ընդ նոսա զերկիր իւրեանց[3]։ Հրաժարեցի յամենայն պարգևաց, զի մի 'ի խառնել ընդ բազմամարդ ազգին՝ կորիցէ անուն հաւատարիմ զինուորակցացն իմոց, և յիշատակ աղետիցն զոր կրեցին։ Բ. յԼ ետու նոցա զորդեակն իմ, զմիւս սիր զիս. և առաքէնորդեալք 'ի նմանէ չոգան 'ի Վիկիլիա, ուր կացցեն աւանդ մինչև ցօրն վրէժխնդրութեան[4]։

Զայս յետ դառնակսկիծ բաժանմանն՝ ազատ յամենայն երկիւղէ, 'ի խնդիր թշնամեաց սպարտացւոց շրջեցայ ընդ ազգս մերձաւորս։ Ի մանի եղեալ էր իմ զնալ ասպա Հ. Սիսիա, և զ Իւղացիս և զԱրաս զազգս Հզօրս շարժել 'ի զուարթ ընդ աղէտս մեր[5]։ Բ. յԼ օրհնաս մանուն կանխեալ 'ի

[1] Պողոս. գիրք Դ. էջ 301։ Պաւասն. գիրք Դ. գլ. 22. էջ 335։

[2] Պաւասն. անդ, գլ. 23. էջ 335։

[3] Նոյն անդ, գլ. 22. էջ 333։

[4] Նոյն անդ, գլ. 23. էջ 335 և 336։

* Յետոյագս մանանիս 'ի տեղեկութիւնն. Թիւ ԺԲ։

[5] Պաւասն. անդ, գլ. 24. էջ 338։

վերայ իմ՝ի Հռոդոս, արգել զխորհուրդս՝ որ կերպարանափոխ արդեօք առնէին զԱլեքսանդրս, ձգեալ ածեալ անդր զազգն զայնոսիկ։

Լա զայս առացեալ՝ լռեաց դիւցազնն, և էջ՝ի գիշեր շիրմին. և՝ի վաղիւ անդր մեկնեցայ անտի գնալ՝ի Լիբիա։

ՈԳԼՈՒՐ

Յերրորդ պատերազմին Մեսենիացւոց*։

ԴՈՒՈՒՆ է ինձ և դժոխքքեր յիշատակ հայրենեաց. դառն իբրև զջինդր, և հատու իբրև ըզսուր սայր սուսերի. ոչ զի և զբօսանաց և վտանգաց առնել զիս անզգայ։ Ա՝ աղայաբոյց նախ քան զծագել արեգական, թափառեալ շրջէի ընդ այգն՝ի դաշտին տարտամ՝ի ձեմ, և զոլ աչալրջոյն ոչ էա բերկրեր զդպայուիս իմ։ Լա ահա առիւծուն երկու վիթխարիք յարձակեցան՝ի մերձակայ անտառէն, և տեսիլ նոցա ոչ զարհուրեցոյց զիս. ոչ ինչ թէ նամանեցի զնոսա, և նոքա մեկնեալ՝ի բաց գնացին։ Ա՝նազորոյն սպարտայիք, զինչ չար արարին ձեզ հարքն մեր։ Ցիրեալք Լրայ լերին՝ բաշխեցէք նոցա պատիժս պատուհասից, և արբեալք յաջողութիւն՝ կամեցայք ընդ թշուառութիւն ամենեցուն՝ի բերկրանս ձեր։

* Սկիզբն պատերազմիս եղև յամին 454 նոբին թուականաց 464 ամաւ Ն. Ք. և վախճան նուիթեան։

Աբիստոմեն բարեբաստագոյն էտ մեզ յոյս. այլ թէպ իսկ մեզ չզգալ ազատիցն որ պատմեցան մեզ, և որ հասին 'ի վերայ մեր։ Այսանի՛ քեզ Աբիստոմեն, որ ոչ ակամատես եղեր չարեացս. զու 'ի քարշ ոչ տեսեր ածեալ զմեսենիացիս որպէս զյանցաւորս 'ի մահ, և վաճառեալս զնոսա որպէս զիաշինս անարգս[1]։ Զու ոչ տեսեր զաղէտս զաւակի նոցա որք ընդ դարս երկուս ոչ սպլինչ թողին որդւոց իւրեանց 'ի Ժառանգութիւն, բայց զՀայրենի նախատինսն[2]։ Հանգիր խաղաղութիւն 'ի շիրմիդ, ստուերդ վերհանդունին 'ի մարդիկ, և նեղեալ ինձ աւանդել յեռնոց զվերջին ողջոյնս սպարտացւոց։

Զատաւորք նոցա, թշնամիք երկնի և երկրի, մատնեն 'ի մահ զաղաչաւորս կորզեալ 'ի մէջենէ Պասիդոնի[3]։ Ընտաւածն ծանրայաստուն հարկանէ երեքժամեաւն զծալեալս Լակոնիոյ. սասանի երկիր, անդունդք պատառին, մի 'ի զահաւանդից Տայգետայ լերին 'ի հովիտսն տապալի. կործանի Սպարտա 'ի հիմանց՝ 'ի համակործանն աւերածէն հնգեակ ամեթ տունք ապրեալ, և առաւել քան զերկուս բիւրս մարդկան ընդ աւերակաւքն կորնչին[4]։ Հաւասիկ նշան աղատու-

[1] Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 1։
[2] Պաւսան. գիրք Դ. գլ. 24. էջ 338։
[3] Արիստոտ. յԱբարն. տող 509։ Պարապ. անդ։
Սուիդ. 'ի բառն Ταίναρ.
[4] Դիոդ. գիրք ԺԱ. էջ 48։ Կիկերո. յդ. հմայ. գիրք Ա. գլ. 50. հա. 3. էջ 41։ Պլին. գիրք Բ. գլ. 79. հա. 1. էջ 111։

թեան մերոյ, զոչէն առ հասարակ ամբոխս սարբ-
կաց։ Խելացեղ յանդգնութիւն. զիմն խառն
'ի խուռն անառաջնորդ 'ի Լաբեդեմոն. և յե-
բեսաց զնգի միջ սպարտացւոց, զոր Աբիդա-
մոս արքայի զումարեալ էր, կասին որպէս հողմք
արձակեալք Յոյզոզեաց՝ յերեսաց Ծովապետին
Պոսիդեայ։ Նա 'ի հասանել աթենացւոց և այ-
լոց ազգաց յօգնութիւն սպարտացւոց[1], ցրուին
բազմագոյնք 'ի նոցանէ որպէս 'ի սկզբնածագ
Հնագայլեթից արեգական սողոքք թանձուքք
ամբարձեալք 'ի լերն։ Այլ ոչ 'ի տարապարտուց
զէն առին մեսենիացիք. երկարժամանակեայ
ստրկութիւն ոչ ապականեաց զարիւնն ազնուա-
կան յերակունս նոցա. և որպէս արծուի ընդբա-
նեալ 'ի վարսս 'ի խզել զկապանսն խայտաց բարձ-
ձրանիչ, այսպէս ամրացան նոքա 'ի լեառն
Յոթոմ[2], և անտի վանեցին զօրութեամբ զխիտ
առ խիտ յարձակմունս սպարտացւոց, մինչև ստի-
պել նոցա կոչել զնիզակակիցս իւրեանց յօգնու-
թիւն։

Զոր հասին աթենացիք քաջավարժք 'ի պա-
շարումն, և Կիմոն առաջնորդ նոցա։ Կիմոն զոր
բազում անգամ յաղթութիւն անթառամ սար-
դիս պսակեաց. Հնձանէ փառաց նորա և քաջու-

1 Դիոդ. գիրք ԺԱ. էջ 48։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 101 և 128։ Պաւսան. գիրք Դ. էջ 233. գիրք Դ. էջ 339։ Պլուտ. 'ի Կիմոն, հա. 1. էջ 489։ Եղեան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 7։ Պղմեն. 'ի մարթամոն, գիրք Ա. գլ. 41։

2 Պաւսան. գիրք Դ. գլ. 24. էջ 339։

թիւն զօրացն արշաւիրս արկանէին 'ի սիրտս պաշարելոցն, և պակուցումն 'ի սպարտացիս։ Յանդուգն կասկած մնասնութեան եղև զսանէն մեծէ. և հրաւիրեալ մնոտի պատճառանօք ածել զզօրսն Լոտիկէ, չու առնէ։ Ցարաձայնութիւն որ շուրջ զանակաւն Հախոր առեալ սաւառնէր, զկայ առնու դիտելով յանձկութիւնն՝ որ ահա անկանէին 'ի վերայ Լակեդայ[1]. և շարժեալ զգլուխ իւր օձապատ, արձակէ զօղանջ խնդութեան և բարբառ ահարկու.

Սպարտա Սպարտա, որ թշնամանս ընդ վաստակոց միշտ հատուցանես, հայեաց 'ի պատերազմողդ որ դիմեալ գնան 'ի հայրենիսն, նախատինս 'ի Հակատ իւրեանց բերելով, և վիշտս 'ի սրտի։ Ոչ բա են որ ընդ քոյդ զումարեալ բեկին զՊարսս յառաջ քան զսակաւ մի 'ի Պղատիէս։ Փոխանակ զի դոքա քեզ 'ի թիկունս դիմէին, և զուծանկեցեր զնոսա նախատանօք, ոչ ևս տեսցես զդոսա ընդ բարեկամս քո՝ այլ ընդ թշնամիս։ Ի թէնք կարեվեր լեալ յամբարհատաճութիւն իւր, զինուորեսցէ ընդդէմ քո զազգս[2]. և զուգնոսա ընդդէմ նորա յարուսցես։ Օ՜ զօրութիւն քո և նորայն բաղխեսցին ընդ իրեարս անդադար, որպէս հողմք սաստկաշունչք որ խորտակին յանտառս։ Պատերազմ զպատերազմ դրդեսցէ, և

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 101։ Դիոդ. գիրք ԺԱ։

[2] Թուկիդ. անդ. գլ. 102։

* Ի պատերազմն պեղոպոնեսական անկարգիկ։

դուլ մի լցի զենուց՝ բայց որչափ կատաղանաց հան-
գիստ։ Խնդ ժանատ գժոխոց ընդ Լուսինեանսն եր-
թայց ես առաջի բանակաց. բոցածաւալ ջահիւք
մերովք տեղասացուք՝ ի վերայ ձեր զարածութիւն,
զսով, զանտութիւն, զդրժանս և զամենայն իսկ
զհարուածս ճաճանսսս բարկութեան և զմղեղմու-
թեան մարդկան։ Խնդրեցից զվրէժ զնախնի առաքի-
նութեանց քոց, և ցնծացայց ընդ սարտութիւնս
քո և ընդ յաղթութիւնս. բարձրացուցից և
խնարհեցուցից զոսոխս քո։ Ցեսից զքեզ առ ոտս
նորա՝ ի հող խնարհեալ. խնդրեսցես՝ ի նմանէ
զխաղաղութիւն, և խաղաղութիւն քեզ մի տայցի։
Վերեսցես զամբարս նորա, առ ոտն կոխեսցես
զնա, և՝ ի միասին անկջիք երկաթանգիր զրպես
վագերը որ զմիմեանս պատառեալ՝ առ միմեանս
սատակիցին։ Այս այսպէս հարթայատակ զքեզ
արարից, զի առ՝ ի նշմարել զհետս քո՝ հարկ լցի
անցաւորաց խնարհել։

Այս ահա քեզ յայտ յանդիման առհաւատ-
չեայ ճշմարտութեան բանից իմոց։ Կալցիս դու
զԱթամ՝ ի տանջերարդամ ամի պարարմանն, և
խորհեսցիս բնաջինջ առնել զմեռանիցս. այլ
դիք որ պահեն զնա առ՝ ի վաղվաղել զկործա-
նումն քո, խափանեսցեն զարիւնռուշտ խորհուրդս
քո։ Շնորհեսցես նոցա զկեանսն, բայց

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. Պարապ. անգ։
41։ Արիստոփ. վասն խաղաղութեան, տող 637 և 664։
2 Պաւսան. գիրք Դ. գլ. 24. էջ 339։

միայն զի 'ի տար աշխարհ բնակեսցին. և որ կա-
խեսցէ զք 'ի նոցանէ անդրէն 'ի հայրենիսն՝ արկ-
ցի 'ի շղթայս ։ Վասալ չարի բանիս այսորիկ, յի-
շեաջիր զայլն և սարսեսջիր։

Այսոսիկ խօսեցաւ այն չար, որոյ իշխանու-
թիւն յերկնից մինչև 'ի սանդարամետս դժոխոց.
և վաղ ընդ փոյթ մեկնեցաք յԱԹոռմէ։ Այ ես
յայնժամ զեռ ևս մանուկ մատաղ. և պատկեր
հասուցեալ փախստեանս այսորիկ տպաւորեցաւ 'ի
միտս իմ անջնջելի, և յաչս իմ էն հանապազ
սոսկալի և ողորմելի տեսարանքն զորս տեսի.
զաղգ մի ողջոյն վտարանդի 'ի հայրենի բնակու-
թենէն[1], պանդխտեալ թափառական առ ազգս
պակուցեալս ընդ աղէտս նորա՝ ոչ իշխելով սփո-
փել զնա, զօրականս վիրաւորս՝ որք զծնօղս իւ-
բեանց 'ի վերայ ուսոց բարձեալ բերին, կանայս
բազմեալս 'ի գետնի ոգեսպառ զրաւեալս 'ի կե-
նաց՝ հանդերձ որդեկօքն 'ի գիրկս իւրեանց. ատ-
ստուածութիւն և հեծութիւնք և սրտառուչ յուսա-
հատութեան բարբառք, անդ կսկիծ անմխիթար
և լռութիւն քստմնելի։ Այնք անողորմագունին
'ի սպարատացոց առաջի կայր նկարագրել զսպատ-
կեալս զայսոսիկ, առ սուղ ինչ հետոց գթութեամբ
սրտի անկանելոք գրիչն 'ի մատանց։

Այլ յետ երկայն և տաժանաւոր ուղեվնասու-
թեան, վարեցաք 'ի Կաւսակոն քաղաք՝ կա-

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 103։
[2] Պոլիբ. պատմ. գիրք Դ. էջ 300։

ռուցեալ յերդ Աբիսայ Ծոլոն։ Լ.թենայիք տի-
բեին անդ, և եռուն մեզ զայն 'ի բնակութիւն[1]։
և մեք բազում արութիւնս ընդդէմ թշնամեաց
քաջին աղգին զործեցաք։ Իմ իսկ 'ի պեղոսնեա-
սական մնարտին Ջակատիս միով 'ի Ծոլեզերս Ա-
սենիոյ հասեալ՝ սասպատակեցի զերկիրն, և ար-
տասուս զայրագին քամեցի յաչաց անագորոյն
հալածչացն մերոց[2]։ Լ.յլ զեկ դառնութիւն ընդ
հնոցս իւրեանց խառնեն միշտ, և բազում այն է
զի յոյս որոգայթ 'ի նոցանէ լարի թշուառաց։
Ա'ինչդեռ սկսանէաք վայելել 'ի խաղաղութեան,
և ահա տոմիկ նաւացն սպարտացւոց յաղթա-
նակեաց 'ի վերայ աթենական նաւատորմին, և
եկն թշնամանել զմեզ 'ի Դատպակոտն։ Լ.նա-
պարեցաք 'ի նաւս մեր, ոչ զայլ ոք 'ի զից երկուս-
տեք յօգնութեան կարդալով բայց զվրէժխնդրու-
թիւն։ Յաղթութիւնն երբէք ուրեք ոչ ար-
բեցաւ յայնքան զաղիր արեանէ և յայնքանեաց
անպարտ արեանց։ Լ.յլ զինչ զօրն անվեհեր
քաջութիւն ընդդէմ անչափ բազմութեանն։ Պար-
տեալք հալածեցաք Լ.ղեադայ որպէս երբեմն 'ի
Պեղոսնեայս. և բազմադոյնք զերծան Լ.ոտ-
ինս և 'ի Ակիլինս։ Լ.ուրեք հաղար այր յիս սպան-
տանեցան[3], և ածի զնոսա ընդ մերիկս և ընդ

1 Թուկիդ· գիրք Ա· գլ· 103։ Պաւսան· գիրք Դ· գլ· 25· էջ 339։
2 Թուկիդ· գիրք Դ· գլ· 41։ Պաւսան· գիրք Դ· գլ· 26· էջ 342։
3 Պաւսան· անդ։ Դիոդ· գիրք ԺԴ· էջ 263։

ժայռս 'ի ծովեղը այսր, որ 'ի նուազ եղերերգութեանց մերոց հնչեսցէ յաւէրժ։

ԳՅՍՊԷՍ կատարեցան երրակի նուագք ողբոցն։ Չէ ընկէց պատանին զքնարն. իսկ հայր նորա Պրսենոկղէս յաւել և զայն 'ի տակաւիկ մի յեւոյ քան զհասանել իւրեանց 'ի Լիբիա, 'ի յառնել խռովութեան 'ի Կիւրենէ մայրաքաղաք աշխարհին՝ յաւելան մեսենիացիք ընդ աքսորեալս, և բազմագոյնք 'ի նոցանէ անկան 'ի Ճակատամարտի ուրեք։ Չհարց տպա ցԿեղենոս. Չէ դու ոչպէս եկիր այսր, և զինչ անցք խռովութեանն եղեն։ Չէ նա ասէ.

Թողեացիք առաջնորդութիւն Չպամինոնդայ հարին զսպարտացիս 'ի Լեւկտրա յաշխարհին Բովոտացւոց*։ Չէ առ 'ի նոսուն առնել զիշխանութիւն նոցա մինչև 'ի սպառ, որպէս զի մի ևս կարասցեն 'ի տարաշխարհ ածել պատերազմ, խորհեցաւ այլն մեծ կացուցանել մերձ առ նոսա թշնամի զոր՝ որոյ ոիք ծանունք մթերեալ կայցեն 'ի սրտին. և առաքեաց հրաւիրել յամենայն կողմանց զՊեսենիացիս, դառնալ 'ի յատակ իւրեանց հայրենի։ Պիմեցաք 'ի հրաւէրն. և տեսի ես զնա 'ի գլուխ ահեղ բանակի, շուրջ պատեալ 'ի Ճարտարապետաց որ գծա-

1 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 263։ 26. էջ 342։ Պլուտ. յԱգես. հա. 1. էջ 618։
* Ն. Գ. 371 ամաք։
2 Պաւսան. գիրք Դ. գլ.

զրեին զօրենակ քաղաքին 'ի ստոյտ լերին։ Եւ ահա զօրավար արդիացւոց եկեալ մատոյց նմա սուիոր սղնձի, զոր յայտնութեամբ տեսլեան հանեալ էր յերկրէ, և 'ի վերայ նորա բաղեղն և մրտենի խառնեին յիրեարս զաղկակն ոստս իւրեանց։ Եւ բացեալ զայն Եպամինոնդայ, եղիտ 'ի նմա թիթեղունս կապարեայս գալարեալս իբրև զմագաղաթ, յորս 'ի վերնջուց Ժամանակաց գրոշմեալ կային արարողութիւնք պաշտամանց դիցն Դեմետրեայ և Պերսեփոնեայ։ Եւ զիտաց զի յարձան անդր յեցեալ կայր բախտ Մեսենիոյ, և զի Քրիստոմենի թաղեալ էր զայն յատնայի ուրեք վայրի Նթոմեայ լերին՝։ Դիւրաբս այս և հաւահմայիցն աւետաւոր գուշակութիւնք յաւելին զզրոշմ կրօնից յուսաջարկութեն նորա, որում հզօր զօրավիցն էին և շուրջ բնակեալ ազգք միշտ ոսոխք Սպարտայ։

Յաւուր նուիրանաց քաղաքին 'ի գումարել զօրացն առ հասարակ, սրկադացիք մատուցին զոհս, և թեբացիք և արդիացիք և մեսենիացիք ուրոյն զոպաշտամունսն կատարեցին առ դիս խնամակալս իւրեանց. և ամենեքին միանգամայն կարդացին առ դիւցազունս աշխարհին, պաղատելով զալ մնանել նոցա 'ի Ժառանգութիւն բնակութեան իւրեանց՝։ Յանուանց որ ցանկալի էին ազգին, Քրիստոմենեայն շարժեաց

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 26. էջ 343։
2 Նոյն անդ, գլ. 27. էջ 345։

'ի կայթս ցնծութեան զամենեսին. և 'ի զոհս և 'ի պաղատանս էանց օրն առաջին։ Ի վաղիւ անդր 'ի ձայն սրնգի սկսան արկանել զՀիմնունս պաշտպանացն և զմեհենաց և զտանց. և 'ի սուրբ ժամանակի կատարեցաւ շինուած քաղաքին, և անուանեցաւ քաղաքն Մեսենէ։

Եւ յառաջ ածեալ զբանսն Կեղենոսի, ասէ. Եւ այլ ազգք վտարանդի 'ի Հայրենեացն Թափառեցան ընդ երկար, այլ ոչ զբ կրեաց աքսորանս երկարատև որպէս զմերն. սակայն մեք զբարբառս և զսովորութիւնս նախնեացն մերոց անփոփոխս կալաք'. և իշխեմ իսկ ասել, զի արկածք բարեդրդովս ևս զմեզ յարդարեցին։ Սպարտացւոց զոմանս 'ի քաղաքաց մերոց տուեալ էր օտարաց'. և սոքա 'ի դառնալն մերում խնդրէին 'ի մէնջ գթութիւն. և թերևս էին նոցա իրաւունք խնդրելոց զայն. այլ եթէ չէին իսկ, զի՞ զդ էր չգթալ 'ի տառապեալս։

Յայնժամ Բաբենոկղի յոգւոց հանեալ, ասէ. Լաւ. դովին իսկ գթած և մարդասէր բարոյիւք ածաք 'ի վերայ մեր կորուստ։ Հարքն մեր սահմանակիցք բնակեալ Սպարտայ և Աքրկաղիոյ, ոչ վասն այլ ինչ իրաց ընկէցեցան ընդ քինու սպարտացւոց, բայց զի անփոյթ արարին զբարեկամութեամբ արկաղացւոց[3]. անզիտանային արդեօք, զի որոց խաղաղութեան ցանկան՝ ոչ ինչ նուազ

[1] Պաւսան. գիրք Դ. գլ. 27. էջ 346։
[2] Նոյնանդ. գլ. 24. էջ 338։
[3] Պոլիբ. գիրք Դ. էջ 300։

խնդրի 'ի նոցանէ ժրութիւն քան 'ի ցանկացելոցն աշխարհակալութեան։

Խնդիրս բաղումս արարի մեսենիացւոց զարգաւառութենէ գիտութեանց և արուեստից, և գիտացի զի չէր լեալ նոցա ժամանակ պարապելոյ յայնս. խնդրեցի զկարգաց տեսչութեան նոցա, և չև ևս հաստատուն ինչ կալեալ էր նոցա կարգ. հարցի զկարգաց որ էին նոցա յաւուրս պատերազմաց իւրեանց ընդ սպարտացիս, և էր թագաւորութիւն խառն ընդ սակաւապետութեան[1], և իբրև աշխարհին 'ի ժողով ամենայն ազգին սահմանէին[2]. հետազօտեցի զնախնեաց արքունի զսրմին՝ յորմէ վերջին թագաւոր նոցա եկաց, և իջուցանէն զայն 'ի Արեսփոնէ՝ որ ընդ այլ Հերակղեանսն էին 'ի Պեղոպոնես ութսուն ամաւ յետոյ քան զտրոյական պատերազմն։ Մեսենիա անկաւ նման բաժին, և ած նա կնութիւն զՄերոպէ դուստր արքային արկադացւոց, և դաւեցաւ ամենայն որդւոքն իւրոքն զբնութիւն առ հասարակ 'ի զլխաւորաց զրանն վասն կարի ժողովրդասէր բարուցն[3]։ Արքազանեցին վէպք զյիշատակ նորա, զդաւաղաց նորա յիշատակ դատապարտեալ յանէծս։

Ղու արարաք 'ի Մեսենեայ, և անցեալք ընդ Պաստիս, շրջեցաք ընդ արևելեան ծովեզր գաւա-

1 Պոլիբ. գիրք Դ. էջ 300։ Պաւսան. գիրք Դ. գլ. 24. էջ 338։

2 Պաւսան. անդ, գլ. 6. էջ 294։

3 Նոյն անդ, գլ. 3. էջ 286։

ովին։ Ընտանեօր որպէս և ամենայն ուրեք ՀԱՌ-
լադա, զղիցեալսուն ազգաբանութիւնս բնակ-
չացն է ասել յամենայն քայլափոխս։ Զիք քա-
ղաք կամ գետ կամ աղբիւր կամ անտառ կամ
լեառն, որ ոչ զյաւերժահարսին ուրուք կրեցեալ
զանուն, կամ զղիւցազին, կամ զգերահռչակե-
լոց ոմանց արանց՝ որ առ ժամանակօք իւրեանց
ոչ այնպէս հռչակաւորք էին։

Ի յոլով ցեղից որք երբեմն իշխէին 'ի Ասեն-
նիա պետութիւնք սակաւաւորք, Ընկղեպեան
մեծարի յոյժ յամենեցունց։ ՅԱբիա քաղաք
տեսաք զտաճար նորա[1], 'ի Գերենիա զշիրիմ
Ագաւոնի որդւոյ նորա[2], և 'ի Փերէ զմեհեան
Թառանց զԱիկմանքեայ և զԳորգասայ[3], որ
հանապազ զոհիւք և նուիրօք պաշտէին 'ի խրո-
նելոց անդր ազգի ազգի ախտաժետաց։

Մինչ դեռ զբանելիս յոլովս բժշկութեանց
պատմէին մեզ գործեալ 'ի տեղւոջն, մի 'ի տա-
ռասպելոց ախտաժետաց յոգիս ապաստան՝ ասէր.
Ընդսոյն 'ի ծնել իմմէ յաղբերական Պամիս գե-
տոյ ջրան ծնողք իմ բնակել, ուր զջուրս գե-
տոյն ասեն լինել առողջարար ախտակրելոց մանկանց՝. անցուցի զկեանս իմ առ դիս բարերարս՝
որ բաշխեն բժշկութիւնս մնհայուսոյ, մերթ
'ի մեհեան Ալպողենի մերձ 'ի Կորմնէա քաղաք[4],

[1] Պաւսան. գիրք Դ. գլ. 30. էջ 353։
[2] Նոյն անդ. գլ. 3. էջ 284։
[3] Նոյն անդ. էջ 287. գլ. 30.
[4] Նոյն անդ. գլ. 31. էջ 356։
[5] Նոյն անդ. գլ. 34. էջ 365։

և մերթ 'ի վայրս յայտասիկ, կատարելով զամենայն օրինաւոր պաշտամունս, ոչ ինչ խնայեալ 'ի զոհից և 'ի նուիրաց. և ամենեքին քաջայոյս առնելին զնս 'ի բժշկութիւն, և ես մեռանիմ աւասիկ։ Լաւ 'ի վաղիւ անդր մեռանիմ։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Ուղղորդել Անապարսեայ 'ի Լակոնիա։

Ի ՓԵՐԵԱՑ ելեալ 'ի նաւ, որ երթայր 'ի Ականդեայ նաւահանգիստն 'ի Կիթերա կղզեակ 'ի ծայր Լակոնիոյ։ Ընդդէմ յաճախեն արկանել խաբիսխ նաւք վաճառականք եկեալք Ադիպտոսէ և Ամփրիկեայ, և ընդ այն է Ճնճապարհ 'ի քաղաքն՝ ուր պահնակք սպարտացիք նստին. և ամի ամի դատաւոր 'ի Սպարտայ 'ի կղզի անդր արձակի 'ի տեսչութիւն[1]։

Մանկահասակք դեռ ևս էին, և ընդ հատակակից մանկտին ուղեկից մեր ընտելացեալք, 'ի լուր անուանն Կիթերայ խորհուրդք զուարթք 'ի միտս մեր զարթնուին։ Ընդ 'ի սկզբանց ժամանակաց և այսր պահի մեծաշուք հնագոյնն և գեղարդոյ քան զամենայն մեհեանս Աստղկան[2]. զի անդ նախ երևեցաւ նա մահկանացուաց[3], և տարփանք

[1] Թուկիդ. գիրք Դ. գլ. 53։ Սկիւլաքս. Կարիանդ. յաշխարհագիրս, հտ. 1. էջ 172։

[2] Պաւսան. գիրք Դ. գլ. 23։ էջ 269։

[3] Եսիոդ. Ծննդեան. գիր, տող 198։

ընդ նմա ժառանգեցին զերկիրն զայն մեստաթիթ մինչև ցայժմ պնեալ ծաղկամբք՝ որ 'ի ձեռն ոտին նորա ծաղկեցին։ Յայնմհետե ծանուցան անդ հրապոյրք ողոր չրթանց և մեղմիկ ժպտելոյն[1]. և ասէաք ցմիմեանս. Լաբէ, 'ի բարեբաստիկ գաւառի ստ կցորդել ընդ միմեանս քանի տարփալի լցէ սրտից, և երբ արդեաք բնակիչք երկրիս յառաստութեան և 'ի բարեկենդանութեան անցուցանիցեն զառուրս իւրեանց։

Լակ նաւապետն որ կայր զարմացեալ և լեր մեզ, ասէ. Հանդարտութի՞ն. Լոտոզ է կերակուր նոցա և պանիր երիեալ. է նոցա և գինի և մեղ[2]. այլ առանց քրտանց երեսաց նոցա ոչ ինչ բերէ երկիրն, զի անջրդի է և բաղնաժայռ[3]։ Գարձեալ և այնպէս արծաթասէրք են[4], զի և ժպիտ մեղմ ոչ ելանէ նոցա։ Ցեսեալ իսկ է իմ զվնասեմի մեհեան նոցա կառուցեալ 'ի փիւնիկեցւոց Աստղկան տիկնոջ երկնից[5]. զրօշեալ նորա բնաւ իսկ և անաղբեցող է ըղձից, պարարաձգեալ զինուք յոտից մինչև ցգլուխ[6]։ Բացաւ և ինձ որպէս ձեզդ զնմանէ, զի յեղանեալ 'ի ծովէ 'ի կղզի անդր լցէ ինքեալ, այլ լուայ և ևս զի անտի վաղ 'ի Ակարոս խոյս առեալ լցէ[7]։

1 Եսիոդ. ծննդաբան. գիր. տող 198 և 205։
2 Հերակլ. պտոմ. յոլ. քաղաքական. նախնի Յուն. հատ. 6. էջ 2830։
3 Սփոն. Ճանապարհ. հատ. 1. էջ 97։ Ա. էջբ. գիրք Ա. էջ 47։
4 Հերակլ. անդ։
5 Եսիոդ. գիրք Ա. դլ. 105։
6 Պաւսան. գիրք Գ. դլ. 23. էջ 269։
7 Եսիոդ. անդ. տող 193։

Ի բանից աստի 'ի միտ առաք, զի փիւնիկեցւոց անցեալ ընդ ծով, և 'ի նաւահանգիստ անդր Վկանդեայ մնացեալ, ածին անդր զպաշտօն Աստղկան, ուստի տարածեցաւ յաշխարհս մեր. և աստի առասպելքն անտեղիք ծննդեան Աստղկանն, և ելից նորա յալեաց ծովու, և գալստեանն 'ի Վիթերա։

Ոչ ևս կամեցեալ 'ի կղզի անդր իջանել, աղաչեցաք զնաւապետն Թողուլ զմեզ 'ի Ցենարան քաղաք 'ի Լակենիա, որոյ է ընդարձակ նաւահանգիստ՝ հանգրուան նաւաց բազմաց [1], առ համանուն հրուանդանաւն [2] յորոյ վերայ կառուցեալ կայ մեհեան, որպէս յամենայն սարաւանդս երևելիս Լեղադայ, 'ի յորդոր կրօնից նաւաստեաց՝ որք յաձախեն առնել նոցա ուխտս և նուէրս։ Մեհեանն որ անդ 'ի Ցենարան՝ նուիրեալ է Պիսիդոնի, և շուրջ զնովաւ անտառ սուրբ՝ ապաստան յանցաւորաց [3]. 'ի մուտս անդ կանգնեալ կայ պատկեր աստուածոյն [4], և 'ի խորան քարայր լայնատարդ անուանի յոյժ առ Յոյնս։

Համարին խլտի լեալ զայն 'ի սկզբանէ վիշապ օձի՝ զոր Հերակղէս հարեալ սպան, և թէ այլ ընդ այլոց կարծիցի որք չարաժանաց շանն Պղու-

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 19։
2 Պտեփ. 'ի բառն Ταῦ. Պարապ. Ապոլոն. արգոնաւ. գիրք Ա. տող 102։
3 Թուկիդ. գիրք Ա. գլ. 128 և 133։
4 Պաւսան. գիրք Գ. գլ. 25. էջ 275։

ասնի՝ որոյ մանՀացու էին խաՃուածք՝։ Այս այս կանխակալ կարծեացն՝ ի ՀԱՀ գայր՝ թէ քարայրն այն՝ ի նեռմնստուեր սահմանս սանդարամետաց ածիցէ ընդ գետնափոր շաւիղս, զորոց անՀնարին եղև մեզ գտանել զելն Հետազօտելով՝։

Այլ ցմեզ քուրմն. ԱՀաւասիկ մի՝ ի մնիցն դժոխոց՝. էն և այլք ուրեք ուրեք, որպէս Հրամիտ քաղաք Աբզղիս՝, Աբակլա՝ ի Պոնտոս՝, Աւրման Հայոց՝, և՝ ի Կումս մերձ՝ ի Լեռապոլիս. որք թէպէտ և ամենեքեան վերՃեալ սնդին զրաւել յիւրեանս զարԾանն, այլ ընդ քարայրս ընդ այս անուշոյլ ած Հերակլէս զԱերբերբ՝ և Որսիէոս զկին իւր։

Պատմեցից ինչ ՃեզՀ ցանկալի էս արդեօք քան զանանդուելիսնս զայսոսիկ։

Այ զորութիւն ինչ՝ ի քարայրս յայս, զոր և այլք բազումք՝ ի քաղաքաց ժառանգեն՝. զի դիւթք աստանօր կոչեն զտուեարս խաղաղաւէտս մեռելոց, և Հաղածեն՝ ի սանդարամետս դժոխոց զիսոովարարս կենդանեաց, սրբազան պաշտամանքք զաքանչելիսն գործեալ։ Պատուցանեն

1 Եկաս. միւս. առ Պասանեայ. գիրք Գ. գլ. 25. էջ 275։
2 Պաւասն. անդ։
3 Պենգ. պիւթ. 4 տող 79։ Պարապ. անդ։ Եւտասթ. յԵղիակ. հա. 1. էջ 286 և 287։ Մելա, գիրք Բ. գլ. 3։
4 Սարբար. գիրք Ը. էջ 373։
5 Քաւենոմ. արքաս. Կիւր. գիրք Զ. էջ 375։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 261։
6 Երոդոտ. գիրք Ե. գլ. 92։ Պաւասն. գիրք Թ. գլ. 30. էջ 769։
7 Եւրիպ. ի Հերակլ. տող 23։ Սարբար. գիրք Ը. էջ 363։
8 Պաւասն. գիրք Գ. գլ. 17. էջ 252։

զոհս, հեղուն նուէրս քաւութեան, առնեն սպա-
զատանս, ընթեռնուն ձեւս խորհրդաւորս բանից,
և զգիշերն 'ի գլուխ հանեն 'ի մեհենին, մինչև
ստուերքն երևութանան նոցա 'ի տեսլեան ան-
վրիպելի, որպէս պատմեն[1]։

Այսր փութան ողբել մանաւանդ զՀողիս սը-
բով կամ զեղով սպանելոցն։ Ամին իրի Կաղենդաս
երբեմն պատուիրանաւ զեղջական հարցկին եկն
այսր հաշտ առնել զզայրագին ստուերս Աքքի-
զբեաց քերթողի, զոր զրաւեալն էր 'ի կենաց։
Լուծաց և տաց օրինակ. Պատսանիաս զօրավար
զօրացն Յունաց 'ի Պղատիէս գժնդակ վրիպանօք
արկ զդաշոյն 'ի սիրտ Արդեմիկեաց սիրուհւոյն իւ-
րոյ, և խղճիւ չարեացն տագնապեր հանապազ.
տեսանէր զնա յանուրջս, և զամ զիշերս զահա-
զին սպառնալսն նորա լսէր՝ թէ մնայ քեզ պա-
տուհաս[2]։ Զոգաւ նա յԱքակլիա 'ի Պանտոս,
և ածին զնա զիւթք 'ի քարայրն ուր զմեռեալ-
հարցութիւնն առնեն. և երևեցաւ նմա ստուեր
Արդեմիկեաց, և ծանայց նմա զի 'ի Սպարտա հան-
դերձեալ էր լինել տանջանաց նորա վասնզի։
Այնհետայն գնաց նա անդր. և դատապարտեալ
յատենի, ապաստանեցաւ 'ի տնակ մի, և անդ
սովամահ եղև։ Հնչեաց ապա համբաւ զի ստուեր
նորա հեծէր 'ի սուրբ տեղիս. և կոչեցան իրդք

1 Պլուտ. յդ. մխիթ. հտ. 2. էջ 109։ Ժուց գից, հտ. 2 էջ 555. և 'ի Պիտն, հտ. 1. էջ 482։

2 Նոյն. յդ. յամբ վրի.

թէսաղոնից, և օրինաւոր պարարողութիւնքն հաստատ եւ բարին զնա՝։ Եւ յաւել քուրմն. Ալ իբր հաւատի զՀրաշն զայսոսիկ պատմեմ. զի թերևս ոչ կարելով այլ ազգ զարժանի արհաւիրս ազգելատ՝ի զգուշանալոյ՝ի մարդասպանութենէ, խնամատութեամբ հնարեցան զնիզակ չարեացն ասել հեծութիւնս ստուերաց՝ որ հալածեն զերդեռնագործս։

Յայնժամ Փիլոտաս ասէ. Ողջոյնս թէ մինչև ցոր վայր լաւ իցէ ժողովրդեան յաւելուլ՝ի զիտութիւն, այլ գէթ պարտ է պարապել զնոսա՝ի ծայրայեղ մեղրութենէ։ Թէսաղոնիցիք յառաջ քան զայս դար առին զդատն փոքմ ՀՀմարտութեանս։ Բանակեալ կային ընդդէմ փոկիսացւոց, և ահա թշնամիք՝ի լիալուսին զիշերի յառաջ մատուցին վեց հարիւր այր թաթաւեալս՝ի զամ։ Դանձք էր յոյժ դաւն. այլ թէսաղացիքս սոլորեալ՝ի մանկութենէ՝ի վէպս Հիւաղաց երևելոց, հանարեցան զզօրականն հոգիս իջեալս յերկինից յօգնութիւն փոկիսացւոց. և սուղ ինչ դիմամարտեալ, քան խողխողեցան որպէս զոհք ածեալք՝ի սպանդ[1]։

Յաւել և քուրմն. Հանգոյն ինն պատրանք զնոսն երբեմն և՝ի բանակի մերում գործեցին։

[1] Պլուտ. յզ. յամբ վրէ. ժուց գլց, հա. 2. էջ 360։ Նոյն՝ի Պարապ. Եւբիոյ. ՅԱնկեսա. տող 1128։ Պոլլ. պատասխանի առ ենդ. հա. 1. էջ 345։

[2] Երոդոտ. գիրք Ը. գլ. 27։ Պաւսան. գիրք Ա. գլ. 1. էջ 801։ Պոլիեն. ի մարթանան, գիրք Զ. գլ. 18։

Լինն զօրք մեր 'ի Մեսենիա, և Թուէր նոցա տեսանել զԼաստոր և զՊողիտևկիս երևեալս 'ի պայծառութեան տօնին որ կատարէր 'ի պաշտօն նոցա։ Այլ էին նոքա մեսենիացիք երկու պայծառացեալք առոյգ հասակաւ և գեղով, որք 'ի գլուխս բանակին երևեալ յերիվարս ահիպարանոցս, նիզակք կազմք 'ի յեցկի, զգեցեալք բաղէնս, և թիկնոց ծիրանի, և խոյր 'ի գլուխս եղեալ սրաձև՝ աստղ 'ի գագաթան, յար և նման երկոցունց դիւցազանց Պոլոկուրացւոց՝ որպէս զրօշմն առ 'ի պաշտօն։ Մտին նոքա, և անկեալ 'ի վերայ զօրացն որ առ ոտս նոցա խոնարհեալ կային՝ արարին ահագին կոտորած, և դարձան խաղաղութեամբ։ Այլ դիցն ցասուցեալ ընդ դրժանն, հեղին զարտասուութիւն իւրեանց ընդ հուսկ 'ի վերայ մեսենիացւոց։

Իսկ ես ասեմ. Թանձրէ, առ արս անիրաւս և անկ դիտացեալս իբրև զձեզ յամ՝ ոՀիրս փառամոլութեան և դրժանք համարիցին ինչ։ Պէրարխարհիկ ինն օրէնքդ ձեր Թուէին ինձ, այլ պատերազմունքդ ձեր ընդ մեսենիացիս կէզտ անՁնՁելի նախատանաց ածէն զձեզ։ Դուրսն ասէ. Լաւ լուեալ իցէ քո 'ի հաւատարիմ ուսեալ զՀաւատն. զի ոչ նոր ինչ է պարտելոց զյաղթողս իւրեանց ամբաստանել յանիրաւութիւն։ Արդ լուր ինձ վայրիկ մի։

Ի դառնալ զաւակին Հերակղեայ 'ի Պեղո-

1 Պաւան. գիրք Դ. գլ. 27. էջ 344։

պանեա, Արեսիան բռնակալեաց 'ի Աթենիա'. յետ ոչ բաղում Ժամանակի սպանաւ նա դա-ւսով, և որդիք նորա ապաստանեալք 'ի Սպարտա՝ թողին 'ի մեզ զնամ իրաւունս հայրենի Ժառան-գութեան։ Այլ թէպէտ օրինաւոր էր պարգևն հրամանաւ պատասխանւոյ դեղփական հարցկին հաստատեալ[2], այլ մեք ընդ բաղում Ժամանակս զերխանութիւն ոչ 'ի գործ արկաք։

Այսպա առ թագաւորութեամբն Ցելևկեայ՝ արձակեցաք բան սովորութեան զպար օրիորդաց ընդ նմա, տանել նուէրս 'ի մեհեան Լատեմայ Լիմնատեայ պահպանի նաւահանգստոյ, 'ի մէջ սահմանաց Աթենիոյ և Լակոնիոյ։ Օրիորդքն բռնադատեալք 'ի մեսենիացի մանկտւոյն, դաւեցին անձանց՝ զի մի կեցցեն 'ի նախատինս. և թագաւորն ինքնին սպանաւ, կամեցեալ պաշտպանել նոցա[3]։ Աթենիացիք առ 'ի ծածկել զվատ-թար ոճիրն՝ բարուրս անտեղիս հնարեցան. և Սպարտա համբեր ընդ թշնամանն առ 'ի չիոս-վելոյ զխաղաղութիւն։ Այլ երբև յաւելին նոքա պարտասեցուցանել զերկայնմտութիւնս նո-րա[4], արկ զկնմխակալ իրաւունս իւր 'ի գործ, և համարձակեաց զթշնամութիւն։ Ել փառամոլու-թեան էր պատերազմն այլ վրէժխնդրութեան.

[1] Պաւսան. գիրք Դ. գլ. 3 և 4։

[2] Խոսկր. յԱրքիդ հա. 2. էջ 20։

[3] Սարաբ. գիրք Ը. էջ 362։ Պաւսան. անդ, գլ. 4. էջ 288։

[4] Պաւսան. անդ, գլ. 4 և 5։

և այս յայտ իսկ յերդմանէն է, որով մանկանին սպասաւորի երդուաւ չգառնալ անդրէն 'ի Հայրենիսն՝ մինչև նուաճեալ զԼեհենիա, և 'ի նահանձուէն՝ որով ծերակոյտ բազմութիւնն յառաջ վարեաց զգործ մարտին[1]։

Ի կատարել առաջնոյ պատերազմին՝ մարթէր մեզ ըստ օրինաց Լչլադայ վարել զպարտեալս 'ի ստրկութիւն. այլ մեք հարկս ևեթ արկաք նոցա։ Պատամբութիւնք՝ որովք խռովէին նոքա ստէպ զգաւառն, ստիպեցին զմեզ յետ երկրորդի պատերազմին արկանել զնոսա 'ի կապանս. և յետ երրորդին՝ հալածել զնոսա հեռի 'ի սահմանաց մերոց։ Լթէ ոչ ըստ պատշաճի հասարակաց օրինաց ազգաց արարեալ էր զայս 'ի դաշինսն՝ որ նախ քան զՀնակատամարտն Լեւկտրայ կռուեցան, պահանջէին 'ի մէնք Յոյնք և Պարք դարձուցանել յազատութիւն զԼեսենիա[2]։ Բայլ ես խաղաղութեամբ եմ պաշտօնեայ. եթէ հայրենեացն խնդ հասանել հարկ զէն առնլոց, ողբամ զնա. իսկ եթէ անիրաւի, դատապարտեմ զնա։ Ի սկսանել մարտի, հեծեմ ընդ անգթութիւնս զորս գործէն մարդիկ ինձ նմանեալք, և թէր իսկ անգթանայցեն՝ ոչ զիտեմ. այլ զաղանիք դիցն են անդ, հարկ է խոնարհել առաջի նոցա և լռել։

1 Պաւսան. գիրք Դ. գլ. 2 Խոսկր. ՅԱբրեդ. հա. 2. 4 և 5։ Յուստին. գիրք Դ. գլ. 24։ գլ. 4. և 5։

Լբ մեկնեցաք 'ի Ցենարայ, շրջեալ նախ 'ի մերձակայ քարահատան՝ ուստի հատանի վեմ սեաւ ազնիւ իբրև զկիր[1]։ Լբ ջոգաք 'ի Գիթիոն քաղաք ամուր պարսպաւոր, և դիպող 'ի նաւահանգիստ, հանգրուան նաւային սպարտացւոց, ուր ոչ լինէ 'ի կարևորայ պակասէ նոցա[2]. և է նա հեռի 'ի քաղաքէն երեսուն ասպարիզք[3]։

Ընձուկ է գաւառն յորում բնակէին սպարտացիք. այլ այնպէս հռչակեալ 'ի վերայ Սպարտայ, զի և ընդ քաղաքս փոքրիկս և ընդ աւանս նորա այց եղեալ շրջէաք շուրջ զլակոնական ծոցովն և ընդ միջերկրայս նորա։ Ընմենայն ուրեք տեսանէաք մեհեանս և անդրիս և սիւնս և այլ արձանս, յորոց բազմադոյնք անհաղթք, և կէաք 'ի նոցանէ էին պատուականք հնութեամբն[4]։ ՅԱսովայ քաղաք 'ի կրեթարանի էին կմախք մարդկեղէնք հսկայաձևք անճոռնիք, ուր 'ի զնին նոցա զկայ առաք[5]։

Լբ ապա դարձ արարեալ յեղը Լբրոտայ, ուղևորեցաք ընդ վեր կոյս գետոյն նախ ընդ հովիտ մի ոռոգեալ անդատին 'ի նմին գետոյ[6], և ապա ընդ դաշտս որք տարածանին մինչև 'ի Լա-

1 Պլին. գիրք Լ.Ջ. գլ. 18. հա. 2. էջ 74. գլ. 22. էջ 752։ Սարաբ. գիրք Ը. էջ 363։

2 Քսենոփ. պատմ. Յունայց, գիրք Ջ. էջ 609։ Լիւ. գիրք ԼԴ. գլ. 29։

3 Պոլիբ. գիրք Ե. էջ 267։

4 Պաւսան. գիրք Գ. գլ. 22. էջ 205։

5 Նոյն անդ. էջ 267։

6 Սարաբ. գիրք Ը. էջ 343։ Լիւ. գիրք ԼԴ. գլ. 28։

կեղեմեն։ Յ. Հոսէր գեան յաջմէ մերմէ, և յա-
հեկէ ամբառնայր լեառն Ցայգեան. անձաւք
բազումք են և մեծամեծք առ ստորոտով նորա
անձեռագործք խոռոչացեալք 'ի ժայռս։

Ի Արիսկ քաղաք տեսաք զմեհեան Պիմնի-
սեայ, անմնանելի արանց, ուր կանանց ևեթ անկ
է մատուցանել զոհս. և զպաշտամունս. զորս կա-
տարեն անդ՝ ոչ է օրէն նոցա յայտնել ումեք[1]։
Ի տասմին օրինակի և 'ի միում 'ի քաղաքաց Ա-
կնեից տեսեալ էր մեր յառաջագոյն զմեհեան
Աբեայ, ուր ոչ էր օրէն կանանց լինել պաշտօ-
նեայ զոհից[2]։

Ի Արիսեայ քաղաքէ ցուցին մեզ 'ի ծագ մեր-
ձակայ լերին զվայրն կոչեցեալ Ցաղետ, ուր ընդ
այլ անասունս զոհեն ձիս արեգական[3]։ Ոչ ինչ
կարի հեռի 'ի տեղւոջէն բնակիչք միոյ 'ի փոքրիկ
առանց պանծան գտիչք լեալ երկանսի աղօրայ[4]։

Ինդէն և անդ յանդիսման եղև մեզ Ամիկդի
քաղաք յայլ կոյս Յ. բոռոտաս գետոյ, հեռի 'ի Ա-
կեղեմենէ ասպարէզս երբև քսան[5]։ Ինդր հա-
սեալք տեսաք 'ի վերայ սեան զանդրի միոյ 'ի նա-
հատակաց, որոյ այն ինչ զյաղթողականն ընկա-
լեալ պսակ յողիմպիական խաղս՝ զբաւեալ էր 'ի
կենաց։ Շ. ուրջ զնովաւ կային եռատանիք բա-

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 20. էջ 261։
2 Նոյն անդ. գլ. 22. էջ 267։
3 Նոյն անդ. գլ. 20. էջ 261։
4 Նոյն անդ. էջ 260։
5 Պոզիր. գիրք Ե. էջ 367։

զուսք նաիրեալք այլ և այլ դից 'ի սպասաւորս անտի վասն յաղթութեանց իւրեանց ընդդէմ աթենացւոց և մեսենիացւոց [1]։

Լոգնք լինէաք 'ի մեհեանն Լպողոնի հասանելոյ, որ մի 'ի բազմահռչակ մեհենացն է Հելլադայ։ Պատկեր նորին իբր երեսուն կանգնոյ 'ի բարձրութիւն [2], անհարթ իմն է, զեղխտական քանդակաց բերելով զնչմարանս։ Մատեր սիւն իմն պրնձի, և գլուխ զնոսա ծածկեալ սաղաւարտաւ, և ձեռք զնուսորեալք յաղեղն և 'ի նիզակ, և ծայրք ևեթ ոտիցն տեսանելի։ Այ աղեմի յոյժ է արձանն. զոր ապա Թաթիկղէս սին անուն անդրիադոյծ զետեղեաց 'ի բաղնաձև խարսխի, 'ի զահոյս՝ զոր 'ի վեր ունին Լամբ և Շնորհք։ Այն ինքն Թաթիկղէս դրուագեաց ապա զերեսս խարսխին և զամենայն մասունս գահոյիցն բարձր քանդակօք, այնչափ ազգի ազգի իրս և կերպարանս 'ի նոսա 'ի տեսիլ ածեալ՝ զոր ասել մի ըստ միոջէ տաղտուկ է դժոխրմբեր։

Զրմուհիք պաշտօնեայքն են մեհենին, որոց զլեառոր նոցա կոչի Այր. և 'ի մեռանելն նորա արձանագրեն 'ի վիմի զանուն նորա և զթիւ ամաց քրմութեանն։ Ցեսաք մեք զգաւազանս յաջորդութեան նոցա կարգեալս ժամանակագրութեան, և ընթերցաք 'ի կարգս նոցա զանուն Լուսոդամեայ գտեր Լմիկղայոսի որ Թագա-

[1] Պաւսան. գիրք Գ. գլ. 18. էջ 254։
[2] Նոյն անդ, գլ. 19. էջ 257։

ուրեք յաշխարհին յառաջ քան զամն աւելի քան զՀազար՝։ Եվ և այլ արձանագրութիւնք առ՝ի պատիւ տեղւոյն աւանդեալք անդր, յորս են պայմանք նիզակակցութեան ազգաց ընդ միմեանս[1], և հրամարտակք բազումք սպարտացւոց զաղարողութեանց կրօնից կամ զ զինուորութեանց, և ուխտք ուղերձեալք առ դիս՝ի Թագաւորաց կամ յիւրաքանչիւրոց ոմանց[2]։

Մերձ՝ի մեհեան անդր Աչդոնսի է և միւս այլ, որոյ երկայնութիւն ըստ բովանդակ թանձրութեան շինուածոյն ոչ ինչ աւելի է քան զեօթնեւտասն ոտնաչափ, և լայնութիւն զատսրն ոտնաչափ և կէս։ Հնգեակ վէմք անհարթք և թուիք, հինգ ոտնաչափք՝ի թանձրութիւն, կազմեն զչորեսին որմն և զյարկ մեհենին, և՝ի վերայ յարկին այլ ևս վէմք կրկին ատաղձանաձև եղեալ կան. և պատուանդանք երեք զշինուածն բովանդակ՝ի վեր ունին վէմք միապաղաղք։ Ի վերդրանն դրոշմեալ կան՝ի տառս վաղեմիս. ԵՒՐՈՏԱՍ ԱՐՔԱՅ ԻԿՏԵՒԿՐԱՏԱՅ ԱՌ ՈՆԳԱ։ Եվ թագաւորեաց Եվրոտաս ամաք իբր երեքհարիւրովք նախ քան զարոմական պատերազմն. իսկ Եվտեւկրատաք են նախնի բնակիչք Ակոնիոյ, և Ինդա մի՝ի դիցն փիւնիկեցւոց կամ Եգիպտացւոց

1 Ցիշատ. բանաս. կաձառ. հա. 23. էջ 406։

2 Թուկիդ. գիրք Ե. գլ. 18 և 23։

3 Ցիշատ. բանաս. կաձառ. հա. 15. էջ 395. հա. 16. էջ 101։

4 Նոյն անդ, էջ 402։

պաշտեալ առ նոսա որպէս Լ.Թենասա առ Յոյնս՝։

Շ Ինուածս այս, զոր ուրեք ուրեք յիշեցաք յուղղորել մերում Յոգիպտոսէ, բազում դա-
ղուք երիցագոյն է քան զՀնագոյն շինուածս Լ.Ը-
լադայ։ Զարմացեալ կայաք ընդ պարզութիւն
նորա և ընդ հաստատութիւն, և միտք մեր՝ ի
մեզ ամենիմիեցան ընդ տեսին. զորոյ սապա զպատ-
ճառսն հետազօտեալ խնդրէաք, և Փիլոտաս ա-
սէր՝ ի հիացմանէ լեալ զայն. քանզի, ասէ, զբազ-
մահոլով դարսն՝ ի շինուածոյ մեհենին և այսր
անցեալս զմնաս ածէաք նոքին հիացմանէ, որ
պատահէին մեզ բազում՝ ուրեք առ ոտս լերանց
՝ի կշռել ակսն զպակուցանողական բարձրութի-
նոյ. զի երկայնութի բազմաժամանակեայ տևո-
ղութեան զնոյն զորձէ զարմանս զոր երկայնաձիգ
տարածութիւն վայրաց։ Լսէ ես ասեմ. այլ սա
ազդեաց՝ ի մեզ տխրութի՝ որ՝ ի տեսիլ լերանցն
ոչ ազդէր. սապա ընդ տևողութիւնն քան ընդ
մեծութիւն միտք մեր յառեցան։ Զանզի այդ
ամենայն վաղնջուց աւերակք՝ յաղթանակք են
ամենաձախ ժամանակին, և բանի ձգեն զմիտս
մեր՝ ի խորհել զկենցաղականացս անհաստա-
տութիւն իրաց։ Զհաւասիկ արձանագրութիւնդ
առաջի առնէ զազգ անծանօթի քեզ և ինձ. անց-
նա, և մեհենեակդ ևեթ հետք նաւաբեկութե-
նորա՝ ի ծով կենցաղոյս՝ վկայէ երբեմն լինե-
լութեան նորա։

1 Սաեփ. ՝ի բառն ՇԳՀ. Հիսիւք. ՝ի բառն ՇԳՀ.

Լրսաբ գեղաձիծաղք՝ և ծառք ամբարձու-
զեշք շուրջ զԱմիկղեաս յօրինեն զարդ, և
պատուղք ազնիւք են յոյժ անդ[1]։ Օ ուարձալի է
բնակութիւն նորա և բաղմամարդ, և լի օտա-
բականաւք[2], որք դիմեն անդր զօրհանապաղ՝ի
պայծառութենէ տօնիցն ձգեալք կամ՝ի կրօնից։
Ընտի մեկնեցաք գնալ՝ի Լաակեդեմն։

Դամենաքս, որում՝ի Քսենոփոնէ յանձ-
նեալն էաք, ասպնջականեաց զմեզ։ Բայց Փիլ-
տաց գտեալ առ նմա նամակաւոր, հարկեցաւ՝ի
վաղիւ անդր դառնալ յԱթենս։ Այնչ էր խօսել
ցեալ արդ զսպարտայեցոց, տեղեկութիւնս ինչ
զգաւառէն առ հասարակ՝ի դէպ է ինձ տալ։

Յարևելից և՝ի հարաւոյ սահմանէ գնա ծով,
յարևմտից և՝ի հիւսիսոյ լերինք բարձրաբերձք
և կամ՝ բլուրք՝ որք՝ի ծնունոցա գործեն հովիտս
զուարճալիս։ Լերինք արևմտից կոչին տայգե-
տականք. ուստեք ուստեք՝ի ծագաց նոցա որ
յանդս ծրարին, ձգին աչք ընդ Պելոպոնեսս առ
հասարակ. և լանջակողմանք նոցա կրեթէ հա-
մակ ծածկեալք՝ի մանկախիտ մայրեաց, ասպաս-
տանք են այծից և արջուց և կնճիզ և եղջե-
րուց[3]։

Ընդ թեանն հանգոյ լեալ բաղմացուցանել անդ
զհոյլս երկոց, թռչի և՝ի սպառումն նոցին առա-

1 Սաաս. Թեբացի. գիրք Թ. տող 769։ Լիս. գիրք ԼԴ. գլ. 28։
2 Պողիբ. գիրք Ե. էջ 367։
3 Թուրման սասպագր. արքունական մատենադարանի։
4 Պաւսան. գիրք Գ. գլ. 20. էջ 261։

տաճեռնեալ զազգս բարակաց ցանկալիս ամենայն ազգաց [1], և դիպողագոյնս յորս վարազուց [2]. քանզի շրջաք են և սեթ ատիք և ամենիք [3], և սուր հոտոտելեօք [4]։ Լաքաստուր և բաճիցն են հոտոտելիք [5]. միւս և յոլովութիւն է նոցա, զի երկարակեացք են, և բազումք այնոքիկ են՝ որ կեան զամն երկոտասան, իսկ արուաց դունուրեք տոնամեայ երկարաձգին կեանք [6]։ Լաւ առ 'ի տալ նոցա աժխոյժ և և ամենհաղոյն ցմկնել կոբիւնս, զուգաւորեն զնոսա ընդ գամիուսնս մնոլսայիս [7]։ Լոեն և ընդ աղուեսունս երբէք երբէք խառնել նոցա, և թէ 'ի խառնից անտի ծնանի ազգ ինն տկար և տգեղ և լերկ շանց, ցուկի նոցա սուր, և նուազեալք յայլոցն աջողութեանց [8]։

Ի շունս լակոնացիս սեաւքն սպիտակախայտք երևելիք են գեղով [9], խարտեաշքն զգօնութիւն [10], և կաստորեանքն և մենեղաւեանք անուանակրութեամբ Կաստորի և Մենեղաւեայ՝ ոչք զսերունդ

1 Թեոփր. նկարագիրք, գլ. 5։ Եւստաթ. յՈդիսական հմտերի, էջ 1822։

2 Քսենոփ. յշ. որսոյ, էջ 991։

3 Կալլիմ. տալ յԱնահիտ, տող 94։ Սենեկա ողբերգ. Խրոնոզեգեայ, տող 35։ Վիրգիլ. մշակ. գիրք Գ. տող. 405։

4 Պղատ. 'ի Պարմեն. հտ. 3. էջ 128։ Արիստոտ. յշ. ծննդ. կենդան. գիրք Ե. գլ. 2. հտ. 1. էջ 1139։

5 Արիստոտ. պատմ. կենդան. գիրք Թ. գլ. 1. հտ. 1. էջ 922։

6 Նոյն անդ. գիրք Զ. գլ. 20. էջ 878։ Պլին. գիրք Ի. գլ. 63. հտ. 1. էջ 578։

7 Արիստոտ. անդ, գիրք Թ. գլ. 1. էջ 922։

8 Քսենոփ. յշ. որսոյ, էջ 976։ Թեոփրատ. Ճառ. 21. էջ 248։

9 Գուլ. յշ. Նախն. Լակեդ. հտ. 1. էջ 199։

10 Ովիտատ. տարերգ. 6. տող 5։

նոցա բազմացուցին[1]։ քանզի որք զբօսանք նախնի դիւցազանցն էին յետ զադարելոյ 'ի նոցանէ հարկի որսորդութեան։ Օ՛ի 'ի սկզբանէ հարկ էր նոցա 'ի պահ անձանց ընդ գազանս ահագին դիմամարտել։ և ընդ հուպ վտարելոյն զնոսա 'ի սահմանս վայրի։ Լ՛ի իբրև անզօրս զնոսա կացուցին 'ի վնասակարութեան, առ 'ի չյուսանալոյ յանզգաստութեան թշնամիս իւրեանց հնարեցան անդրէն, զբաղել ընդ նոսա 'ի մարտ։ Լ՛ի արիւն իսկ անպարտ աղանոյ հեղանէր, որպէս զի որոցն զպատերազմին հաւաստեաւ բերել զկերպարանս։

Լ՛ ցամանք կուսէ դժուարամատոյց է Լ՛ակոնիա[2], և չէ մարթ մտանել անդր առանց անցանելոյ ընդ բլուրս սեպացեալս և ընդ կիրճն դիւրապահս[3]։ Լ՛ Լ՛ակեդեմոն ոլորտածաւալ ընդարձակի դաշտն[4], և յառաջ կոյս ընդ հարաւակողմն են գաւառք բերրիք[5], թէպէտ և ուրեք ուրեք առ անհարթութեան երկրին տաժանաւոր է յոյժ մշակութիւնն։ Լ՛ դաշտի անդ ցան և ցիր սիռեալ կան բլուրք բարձունք ձեռագործք, յաճախաւորք քան 'ի մերձակայ գաւառս կանգնեալք նախ քան զՀնարս արուեստից, 'ի շրջիմ աւա-

1 Պոլիբիոս · անդ։ Պոլիբ · գիրք Բ · էջ 150։ Լիւ · գիրք ԼԴ · գլ · 28։

2 Եւրիպ · առ Սոփոբ · գիրք Ը · էջ 366։ Քսենոփ · պատմ · Ցուն · գիրք Զ · էջ 607։

3 Քսենոփ · անդ։ Պոլիբ · գիրք Բ · էջ 150։ Լիւ · գիրք ԼԴ · գլ · 28։

4 Ռուսա յոյ · աւերակաց Եղլագայ, հա · 2 · էջ 31։

5 Երոդոտ · գիրք Ա · գլ · 66։ Պաւս · Լակոնիք · հա · 2 · էջ 122։ Պոլիբ · գիրք Ե · էջ 367։

գազոյն իշխանաց աղգին*։

Հաւատի Թուի՝ ընդ Հողաբլրոցս այսոցիկ կա-ռուցելոց՝ի շրիմ փոխանորդեալ բրգանցն Յա-գիպտոս։ Այսպէս ամենայն ուրեք և յամենայն ժամանակի ամբարտաւանութիւն մարդկան իւ-րովն դաշնակից եղև ընդ ոչընչի։

Յաղագս բերոց Լակենիոյ գիտելի, է զի են՝ի նոսա բոյսք բաղումք պիտանիք՝ի բժշկութիւն՝. և ցորեան երկրին աղազուն է, ոչ յոյժ ստա-ծիչ[3]. և զԹզենիս հարկ է անդ յաձախ ոռոգա-նել, և չկր անտի յոռութեան պտղոցն վանանգ[3], և Թուզք կանխագոյն ժամանեն անդ քան այլ-ուր[4]. և զի դարձեալ ընդ ամենայն ծովեղերս Լակենիոյ, որպէս և Պիթերայ, գիւղք են ա-ռատք խղունջնաց՝ յորոց զծիրանաներին հանեն զաշնիս[5], ուստի երին կարմրութեան վարդից հարկանի[6]։

Սաստանութիւն երկրի յաձախ պատահէ՝ի Լակենիա[7]. քաղաքս հարիւր ասեն երբեմն

* Էն հանգոյն սոցին բլուրք և բաղում ուրեք՝ի դաւառս բնակեալս՝ի նախնի գերմա-նացւոց։

1 Թէոփր. պատմ. բուս. գիրք Դ. գլ. 6. էջ 367։

2 Նոյն անդ. գիրք Ը. գլ. 4. էջ 932։

3 Նոյն անդ. գիրք Բ. գլ. 8. էջ 92։

4 Նոյն յդ. պատմ. բուս. առ Ամենոսի. գիրք Գ. էջ 77։ Պլին. գիրք ԺԶ. գլ. 26. հա. 2. էջ 20։

5 Աբիսատոս. առ Սուէտ. ի բառն Κόκκος. Պաւսան. գիրք Գ. գլ. 21. էջ 264։

6 Պլին. գիրք ԻԱ. գլ. 8։

7 Սարաբ. գիրք Ը. էջ 367։ Եւստաթ. յԵղիսակ. Հոմերի, գիրք Բ. էջ 294։

լեալ 'ի նմա[1], այլ 'ի ժամանակին յայնմիկ և ա-
ւանդք փոքրիկք զմեծարանաց անուանն կրէին. բայց
հաւատի այն է, զի բազմանարդ է յոյժ աշ-
խարհն[2]։ Զնդ ամենայն տարածութիւն նորա հո-
սէ Լուսոյ, զվտակս և մանուանդ զուղիս որ
'ի մերձակայ լերանցն ինքանեն՝ յինքն ընդունելով։
Բաղում այն է զի չկք 'ի նմա հուն անցի, և գնայ
հանապազ ընդ ձոր անձուկ. և 'ի փքացեալ
առատութեանն իսկ՝ 'ի խորութեան քան 'ի լայ-
նածաւալ ընդարձակութեան էն նորին պաք-
ծանք։ Լ Երբեք զի ծածկեն զվկանունս նորա
կարապք ակնախտիղք, ձիւնաթոյր սպիտակու-
թեամբն[3]։ Լս շանթք եղեզանց են 'ի նմա, և
եղեզունքն ուղղորդք և բարձունք և գունագոյնք՝
խնդրեալք 'ի բազմաց[4]։ Պարարտացեալք 'ի բազում
ինչ զթուփս զայս 'ի կիր առնուն, այլ և փախա-
թըս 'ի նմանէ հիւսեն, և 'ի տօնս ուրեք նոսա
պսակեալք շրջին[5]։ Յիշեմ առանձօր զոր ոմն
յաթենացւոց 'ի Ճառէն երբեմն զմտաքառու-
թենէ մտրդկան՝ ասէր ցիս, թէ Լղեզունքն
տկարք բաւական եղեն նուաճել զմարդիկ և 'ի
դիտութիւն և 'ի զգօնութիւն ածել զնոսա։ Լս
յաղաչել իմում մեկնել ինձ զառակն, յաւել-

1 Սարաք. գիրք Ը. էջ 362։ Եւստաթ. 'ի Դանիա, տող 419։

2 Երոդոտ. գիրք Ա. գլ. 66։ Պոլիբ. գիրք Թ. էջ 125։

4 Երիպ. 'ի Հել. տող. 355 և 500։ Թէոփր. պատմ. բուս. գիրք Դ. գլ. 12. էջ 470։

5 Սոսիք. առ Ալթենէոսի, գիրք ԺԵ. էջ 674։

Օի 'ի բեկանուտ ցօղնոցդ կազմեցան նեռոք և գրիչք և նուագարանք[1]*։

Յաջ կոյս Խրոտայ ոչ ինչ կարի հեռի 'ի գետ եղերէն[2] բնակէ քաղաքն Լակեդեմոն, անուանեալ և Սպարտա։ Զէն նորա պարիսպք[3], այլ քաջութիւն և եթ բնակչացն պարսպէ զքաղաքն[4], և բլուրք ամանք՝ ուր պահ ունին զրոք 'ի յարձակել թշնամեաց։ Խարձաղոյնն 'ի բլրոց անտի է նոցա փոխանակ միջնաբերդի. և 'ի գագաթան նորա սարահարթ, ուր բաղում մեհեանք են[5]։

Շուրջ զբլրովն կան հնգեակ աւանք, տարակացեալք մերձ կամ հեռի լիրեբաց, յորս բնակէն հնգեակ ցեղք սպարտացւոց իւրաքանչիւր ուրոյն**։ Լայս է քաղաքն Լակեդեմոն. թաղք նորա ոչ որպէս զքաղաքին աթենացւոց կցորդին միմեանց[6]։ Ի սկզբանէ և քաղաքք աշխարհին պեղոպոնեսացւոց կազմէին 'ի շինից. որոց ապա 'ի միմեանս կցորդեալ 'ի մի շրջապատ պարսպէ ցան[7]***։

1 Պլին. գիրք ԺԶ. գլ. 36. հմ. 2. էջ 272։

* Բազում այն էր, զի յեղանց կազմէին սրինգք։

2 Պողիբ. գիրք Ե. էջ 369։

3 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Զ. էջ 608։ Նոյն յԱգես. էջ 662։ Լիւ. գիրք ԼԹ. գլ. 37։

4 Յուստին. գիրք ԺԴ. գլ. 5։

5 Պաւսան. գիրք Գ. գլ. 17. էջ 250։

** Յեռակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԺԹ։

6 Թուկիդ. գիրք Ա. գլ. 10։

7 Նոյն անդ։ Սարաք. գիրք Ը. էջ 337։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 40։

*** Յեռակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Ի։

Հրապարակն մեծ, յոր բազումք 'ի Հանապարհաց յանգին, զարդարեալ է մեհենօք և անդրեօք. երևելագոյնք 'ի շինուածս անդ են խորհրդարանք՝ յորս գումարին ուրոյն աւագանին և պարեալք և այլ ատեանք[1], և գաւիթն կամարակապ՝ զոր կանգնեցին սպարտացիք յետ Պղատեայ Հակատամարտին յաւարէ պարտելոյն։ Օ յարկ գաւթին ոչ սինք 'ի վեր ունին, այլ անդրիք հակայաձև պարսիկք սատակ հանդերձիւք[2]։ Բազում և այլ արձանք ընդ ամենայն քաղաքն կանգնեալ կան դիցն և դիւցազանց նախնեաց։

Ի վերայ բարձրագունի 'ի բլրոյն կայ մեհեան Լ՚թենասայ, ապաստան յանցաւորաց հանդերձ շուրջանակի անտառաւն և յարակից մեհենիւ և փոքրիկ տամբ, յորում Պաւսանիաս արքայ արգելեալ՝ սովամահ եղև[3]։ Բայց 'ի մեղս հանդարեցաւ այն սպարտացւոց, և հրամայն էտ նոցա հարցուցին առ 'ի հաշտ առնել զաստուածուհին՝ կանգնել արքային անդրիս երկու, որ դեռ ևս կան մեծ առ բագնին[4]։ Պղնձակերտ է մեհեանն[5], որպէս երբեմն դեղփականն[6]. և 'ի նեղբին կողմն նորա զրուագեալ կան բարձրքան-

1 Պաւսան. գիրք Դ. գլ. ԺԱ. էջ 231։
2 Վ խորուվ գիրք Ա. գլ. 1։
3 Թուկիդիդէս, գիրք Ա. գլ. 134։
4 Պաւսան. գիրք Դ. գլ. 17. էջ 253։
5 Թուկիդ. անդ։ Լիւ. գիրք ԼԵ. գլ. 36։ Սուիդ. 'ի բառն Χαλκ.
6 Պաւսան. գիրք Ժ. գլ. Ե. էջ 810։

դակաւ նահատակութիւնքն Հերակլեայ, և Ջինդարեանցն արութիւնք, և այլ ևս կիցք անդրեաց [1]։ Յաջմէ շինուածոյն կանգնեալ կայ պատկեր Աբրամնզդայ, հնագոյն թերևս քան զամենայն պղնձի պատկերս նորին՝ որ կան արդ, ժամանակակից դոլով ողիմպիական խաղուցն վերստին հաստատութեան։ Այլ է պատկերն ոչ միաձոյլ, այլ 'ի յօդուածոյից մնասնց հեղուսիւք կազմեալ [2]։

Շ Իրիսք երկոցունց ազգատոհմիցն, որ թագաւորէն 'ի Սպարտա, էն յայլ և այլ թագ [3]. ամենայն ուրեք կան յիշատակարանք դիւցազանց, զի այսպէս կոչին շինուածք և անտառք նուիրեալք նախնի դիւցազանցն [4]։ Զնդ սրբազան պաշտամամբք առնին յիշատակք Հերակղեայ, Ջինդարեայ, Կաստորի և Պոլիտեւկեայ, Մենեղաւոսի, և այլոց բազմաց՝ որ առաւել և որ նուազ հռչակաւորք 'ի վերս, և որ առաւել կամ նուազ արժանիք յիշատակի։ Շ նորհակալութիւն ժողովրդեան և յաձախ ևս հրամանք պատասխանոյ վաղ ուրեմն հայթայթեցին նոցա զպատիւս զայսոսիկ. այլ պատճառք վերհազոյնք ետուն կանգնել մեհեան Լիկուրգեայ [5]։

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 17. էջ 250։

2 Նոյն, գիրք Ա. գլ. 5. էջ 251։

3 Նոյն անդ. գլ. 12. էջ. 237. գլ. 14. էջ. 240։

4 Նոյն անդ. գիրք Գ. էջ 230 և այլուր։

5 Երոդոտ. գիրք Ա. գլ. 66։ Պաւսան. անդ. գլ. 16. էջ 248։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 55։

Վակաւուց յետ այնորիկ այնպիսի պատիւք սահմանեցան. տեսի ես սիւնս և անդրիս կանգնեալ գուսպարայաղթ նահատակացն սպարապացւոց յողնմնիական խաղն պսակելոց՝, իսկ յաղթականացն ընդդէմ թշնամեաց աշխարհին՝ ոչ ուրեք. քանզի ըմբշամն վայելեն անդրիք, իսկ զօրականին մեծապանք հասարակաց։ Յամենեցունց որք յառաջ քան զայս դար նշանաւորք եղեն՝ի մարտի ընդդէմ Պարսից և Լթենացւոց, ջրք կամ հինգ ևեթ ընկալան ուրոյն՝ի քաղաքին պատիւ դամբանական. և այն ևս հաղիւ արդեօք շնորհեալ նոցա։ Վասնզի յետ քառասուն ամաց՝ի վերայ անցանելոյ մահուն Լևոնիզայ, ածան ոսկեղք նորա՝ի ակեղեմեն, և եդան՝ի շիրմի առ տեսարանաւն։ Ի նմին ժամանակի և երեքարիւրոյն սպարապացւոց՝ որք ընդ մեծի առնն անկեալ էին, զրոշմեցան անուանքն՝ի սեան՝ անդ նախ արձանագրեալք։

Վազմագոյնք յարձանաց ասսի ազգեն պատկառանս տեսողաց, այնչափ ևս առաւել՝ զի ոչ հանդէս առնեն պերճութեանց, և զրեթէ առ հասարակ անհարթք են արուեստիւ։ Մյուր բաղում այն էր՝ զի արուեստ ևեթ Ներսեհին ածէր ինձ զարմանս. իսկ՝ի ակեղեմեն դիւցազնն ևեթ. վասն անհարթ բաւական էր առ՝ի յուշ ածել զնա ինձ. բայց կից ընդ յիշատա-

1 Պաւստ. գիրք Գ. գլ. 2 Նոյն անդ. գլ. 14. 240։ 13. էջ 240. գլ. 14. էջ 241։

կի նորա էր գեղանշոյլ պատկեր առաքինութեաց նորա կամ յաղթութեանց։

Ցունք 'ի Սպարտա փոքրիկունք էին և անպա-նոյնք. էին անդ սրահք և գաւիթք կամարակապք, ուր ժողովին քաղաքացիք խօսել զիրաց իւրեանց կամ զրուցատրել ընդ միմեանս '։ Ի հարաւակողմն քաղաքին է Զիրնթացն, ուր հեծելոց և հետեւակաց լինին արշաւահանդէսք [2]։ Ինտի 'ի Պղատանիստ էն անցք, 'ի կրթարան մանկաւոյն հովանաւոր 'ի սօսեաց առ ափն Լուրոտայ և միւս ևս փոքրիկ գետոյ, զոր առուիւ ընդ միմեանս հաղորդեալ՝ պատին զնովաւ։ Կամուրջք կրկին ածէն անդր. 'ի խելս միոյն կանգնեալ կայ անդրի Հերակղեայ կամ զօրութե՝ որ նուաձէ զամենայն. և 'ի խելս միւսոյն պատկեր Իկուրգեայ կամ օրինաց՝ որ բարեկարգէ զամենայն [3]։

Համառօտագիծս այս ցուցանէ պատկեր, թէ քանի հիացեալ զարմանացի գեղարուեստիցն ցանկացող, որ ձգեալ 'ի Սպարտա 'ի գերահռչակ համբաւոյ բնակչացն՝ փոխանակ մեծակառոյց քաղաքի զայգէ աւանս զծուծս, փոխանակ հոյակապ ապարանից հիւղս մթին յարդածածուկս, և փոխանակ զոռ պատերազմողաց անհանդարտից ապս խաղաղասէրս և թաղեալս 'ի կնկղաւոր խա-

1 Պաւսան. գիրք Գ. գլ. գիրք ԼԴ. գլ. 27։ 14 և 15։

2 Քսենոփ. պատմ. Յու. էջ 242։ Ղուկիան. յղ. մրց. նաց. գիրք Զ. էջ 608։ Լիւ. հտ. 2. էջ 919։

3 Պաւսան. անդ. գլ. 14։

բանն կրկնոցին՝ որ սովորական վերարկուն է նոցա։ Լա՛ որչափ և առաւել յամախեսցին զաղմանքն, եթէ քաջ և ծանիցէ զՍպարտա, և տեսցէ՛ի նմա հիացմունք զմի յաւագագունից աբանց աշխարհի, և զմի՛ի չքնաղագունից զարծոց մարդկան, զԼիկուրգոս և զսահմանաղրութիւն նորա։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Չքնակիչաց Լակոնիոյ։

Օ՚ԱՒԱԿՆ Հերակղեայ օգնականութիւն գնդի միոջ զորացուց տիրեալ՚ի Լակոնիա, խասն ընդ հին բնակիչս երկրին կեալը անդ։ Յետ սակաւ ժամանակի եղ՚ի վերայ նց հարկս, և կապտեաց զերաւունս ինչ՚ի նոցանէ։ Որք՚ի քաղաքաց հնազանդեցան նմա, կացին մնացին յազատութեան. իսկ եղուսացիք հակառակ կացին, և վաղ բռնաւ դատեալք՚ի զորութենէ՝ նուաճեցան զրեթէ՝ի պայման ստրկութեան՝։

Սպա և սպարտացիք երկպառակեալ յիւրեանս, հզօրագոյնք՚ի նոցանէ հալածեցին զանաւանն՚ի դաշտս և՚ի մերձակայ քաղաքս՝։ Որով զանազանին ցարդ և սպարտացիք բնակիչք մնայրա-

1 Սորաբ. գիրք Ը. էջ 365. Պլուտ. ի Լիկուրգ. էջ 274։ հտ 1. էջ 40։ 2 Խոսկր. համեմ. հտ. 2.

քաղաքին 'ի գաւառացնոցն, և տոքա և մայրաքա-
ղաքացիք 'ի բազմախուռն ամբոխէ տարկաց՝ որ
համատիպիւռ ցրուեալ կան ընդ գաւառն։

Բ. Հաջինքն՝ զոր յաՀախ անուանեմք սպար-
տացիս, են ազգն պատերազմող՝ յոր հատա-
տեալ կայ բախտ Լակոնիոյ։ Լծիւ նոցա, որպէս
լուայ, հասանէր երբեմն ցբիւր [1]. յաւուրս սը-
շաւանացն Մեդիքսեայ էր ութ հազար [2]. և
պատերազմունքն յետինք նուազեցուցին զնոսա
յոյժ, մինչև սակաւուց ոմանց 'ի հնոց ազգա-
տոհմիցն գտանել արդ 'ի Սպարտա [3]։ Լր զի տե-
սանէի 'ի հրապարակի բազմութիւն ջրեքհազար
արանց, և հազիւ 'ի նոսա քառասուն այր սպար-
տացի հանդերձ երկոքեանքն թագաւորօք նո-
յա ընդ պարէտս և ընդ աւագանին [4]։

Տանուտերքը բազմաց 'ի նորոց ազգատոհմիցն
են եղբսացիք ազատացեալք 'ի տարկութենէ, և
հանգիստասատիւ քաղաքացնոցն կարգի գտեալք
արժանի։ Սակայն ոչ կոչին նոքա սպարտացիք,
այլ ըստ զանազան ազատութեանցն յորմէ՝ այլ
այլ անուանքք՝ զառաջնոյ կենացն պայ-
մանի պահեալ զնշանակ [5]։

Բ. Զի երեք աւագք, Կալիկրատիդաս, Դիվիպպոս

[1] Արիստոտ. Յդ. հատ. գիրք Բ. գլ. 9. հատ. 2. էջ 329։
[2] Եր՝ոդոտ. գիրք Է. գլ. 234։
[3] Արիստոտ. անդ։ Պլուտ. Ագես. հատ. 1. էջ 797։
[4] Քսենոֆ. պատմ. Յունաց, գիրք Գ. էջ 494։
[5] Թուկիդ. գիրք Ե. գլ. 34։ Հիսիւք. 'ի բառն Ազ-ճաբ. Պոլլուքսի. գիրք Գ. գլ. 8. յոդ. 83։

և | լուսանցը, ծնեալք 'ի սմին պայմանի[1] մնդա-
կեցք եղեն ընդ մանկունս սպարտացւոց, որպէս
զամենայն տղայս եղեսացւոց ազատելոց 'ի տարբ-
կութենէ[2]. այլ յետ քաջայաղթ ապստամբեանց
զամենայն ազատութիւնս քաղաքացւոյ ժառան-
գեցին։

Քաղաքացւոյ անուն դուն ուրեք չնորհէր եր-
բեմն այնոցիկ, որք ոչ 'ի հօրէ և 'ի մօրէ սպար-
տացւոյ ծնեալ էին[3]։ | Սակ աւագութեան կամ
զօրավարութեան հասանել առանց այսր ոչ է
հնար[4]. և որ գործով ինչ անարժանութեան
չարահամբաւեալ լցէ, ոչ զամենայն նախասա-
տութիւնս քաղաքացւոյ ունի։ | Ի պահպանու-
թիւն նախասատութեանցն առ հասարակ հակէ
պետութիւնն, և երիցագոյնն խնամ ունի կենաց
բնիկ սպարտացւոյ։ Զ. ազատելոյ զսակաւս ո-
մանս՝ որ 'ի կղզւոջ ուրեք պաշարեալ կային 'ի
նաւատորմէն ամենացւոց, խոնարհեցաւ յաղերս
կորսնաց՝ խնդրել 'ի նոցանէ խաղաղութիւն,
թողուլ 'ի նոսա զպետութիւն ծովու[5]։ | Չէ միշտ
իսկ նուազունս ոմանս մատուցանել ընդդէմ հա-
բուածոց թշնամեաց. և յաւուրս յայսոսիկ յե-

1 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԲ. գլ. 43։
2 Ամենն. գիրք Զ. գլ. 20. էջ 271։ Կրագ. ՄՂ. հատ. Սպարտայ. գիրք Ա. գլ. 5։
3 Երոդոտ. գիրք Թ. գլ. 33։ Դիոն. ասիկ. հնութիւք հռովմայեցւոց, գիրք Բ. գլ. 17. հատ. 1. էջ 270։
4 Պլուտ. առակ. լակեդ. հատ. 2. էջ 230։
5 Թուկիդ. գիրք Դ. գլ. 15 և 19։

տինս Լգեսիդայոս և Լգեսիպոլիս աղբայք 'ի պատերազմունս ուրեք ոչ աւելի քան զարս երեսուն ածին ընդ իւրեանս։

Զաղաքք Լակոնիոյ, Թէպէտ և 'ի նախնի ազատութեանցն զրկեալք, համարին նիզակակիցք սպարտացւոց. և վասն այնորիկ պարտ է նոցա 'ի պատերազմի գումարել զզօրութիս իւրեանց ընդ սոսա, և 'ի խաղաղութենէ ունել անկորուստ զիրաւունս իւրեանց։ Լթէ զիրաց համարէն աղգին խնդիրքն ինչ իցեն, յղեն նոքա հրեշտակս յաշխարհաժողովն որ գումարի միշտ 'ի Սպարտա'. և անդ սահմանին զօրապահանջք և հարկք զորս պարտ է նոցա հատուցանել։

Զնակեալս նոցա դաստիարակութիւն ոչ իբրև զմայրաքաղաքացւոցն է. և Թէպէտ շինականագոյնք կենցաղով[2], այլ 'ի պայծառ քաջութենէ նոցա նուազեալ գտանին։ Զմին իրի քաղաքն սպարտացւոց եկաց նախնիքսն 'ի մէջ այլոց, որպէս Լղիս յելիսական գաւառի, և Լմենբէ 'ի քաղաքս Լփոլտիոյ։ Զայս դահերիցութեան զրդէ զնախանձ նոցա և զատելութիւն. և յարշաւանս ուրեք Լպամինոնդայ բաղումք 'ի քաղաքաց Լակոնիոյ յաւելան 'ի Թեբացիս։

Զնք ուրեք 'ի քաղաքս Լալադայ այնչափ բազ-

1 Քսենոփ. պատմ. Յու. Նոց. գիրք Զ. էջ 379։
2 Լիւ. գիրք ԼԳ. գլ. 27։
3 Երոդոտ. գիրք Դ. գլ. 148։ Թուկիդ. գիրք Ե. գլ. 31։
4 Քսենոփ. անդ. գիրք Գ. էջ 494։

մուԹՒ ծառայից ստրկաց, որչափ 'ի Սպարտա[1]։ Նոքա սպասաւորէն 'ի սեղանի[2], նոքա զգեցուցանեն զտեսարս իւրեանց և մերկացուցանեն[3], արքանեկէն հրամանաց տերանցն, մանքրեալ յարդարէն զասպարանս. այլ և 'ի բանակի բազմուԹիւն ստրկաց գնան ընդ կարասին[4]։ Այս վասն զի կանանց սպարտացւոց ոչ է պարտ աշխատել, աղախնայց ստրկաց տան նիւԹել զասր[5]։

Այլոսայնք Հայոց քաղաքէ ունին զկոչումն[6]. բայց մի՝ որ ըստ ոմանց 'ի մատենագրաց[7] այլ ընդ այլոց ընդ ընիկ ստրուկս առցէ գնոսա[8]. զի նոքա 'ի միջասահմանին իմն կան ընդ ստրուկս և ընդ ազատս[9]։ Պարքէն մեկնոցն զոր կրեն, և գլխարկ մաշկեայ, և խստուԹիւն տերանցն ընդ նոսա, և դատակնիք մահու առ ԹեԹև ինչ կասկածանաց ածեալ երբեմն գնոքօք, յիշեցուցանեն նոցա հանապազ զպայման իւրեանց[10], բայց և ոչ դոյզն ինչ փոխարինք քաղցրացուցանեն զլախտ նոցա։ Հանգոյն ծառայիցն 'ի Լակեստաղիա[11] 'ի վարձու ու-

1 Թուկիդ. գիրք Ը. գլ. 40։
2 Կրիա. առ Աթենէոսի, գիրք ԺԱ. գլ. 3. էջ 463։
3 Պլատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 633։
4 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Զ. էջ 586։
5 Նոյն յղ. հատ. Սպարտ. էջ 675։
6 Հելլան. առ Հարպոկր. 'ի բառն Εἵλωτ. Պաւսան. գիրք Գ. գլ. 20. էջ 261։
7 Խսոկր. Արքիդ. հտ. 2. էջ 23։
8 Պլատ. Աղկիբ. հտ. 2. էջ 122։
9 Պոլիանէ. գիրք Գ. գլ. 8. յոդ. 83։
10 Միրոն. առ Աթէն. գիրք ԺԳ. էջ 657։
11 Սուիդ. և Հարպոկր. 'ի բառն Πενές.

նին զերկիր սպարտացւոց. և սոքա առ'ի յարեւ-
ցուցանել զնոսա յիւրեանս խայծիւ շահու,
ապահանջէն'ի նոցանէ աւելի քան զսակ վաղնջուց
սահմանեալ հասիցն՝ որ առ բերովք երկրին ոչ
ինչ է, և ամենի համարի տերանց աւելի ինչ պա-
հանջել[1]։

Կէսք'ի նոցանէ'ի գործիական արուեստս պա-
բապէն, այնպէս յաջողեալք'ի նոցնա՝ զի ամե-
նայն ուրեք խնդրին ձեռագործք նոցա, բանա-
լիք[2], մահիճք, սեղանք և աթոռք սպարտա-
կանք[3]։ Ոչառայէն նոքա և'ի ծովամարտի նա-
ւաստականութեամբ[4], և'ի բանակս առ մէն մի
սպառազէն արքանեակ մի կամ բազումք'ի նո-
ցանէ կան[5]։ Ի Պղատեայ պատերազմին միւմ
միւմ'ի սպարտացւոց էին արքանեակք եօթն
յեղոսացւոց անտի[6]։

Ի վանդա ծանուցեալ արիանն նոքա յուսով
ազատութեան[7]. և ստացան երբէք երբէք զա-
զատութիւն գունդք բազմութիւք'ի վարձ արիա-
կան քաջութեանցն[8]։ Ի պետութենէ և եթ չնոր-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 54։ Նոյն, առակ. հտ. 2. էջ 216։ Նոյն, կարգադրական. էջ 239։

2 Արիստոտ. 'ի Թեսմոփ. տող 430։

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 45։

4 Քսենոփ. պատմ. Յունաց. գիրք Է. էջ 615։

5 Թուկիդ. գիրք Դ. գլ. 8։

6 Երոդոտ. գիրք Թ. գլ. 10 և 28։ Պլուտ. յԱրիստ. հտ. 1. էջ 325։ Նոյն յԼաբ. Երոդոտ. հտ. 2. էջ 871։

7 Թուկիդ. անդ. գլ. 26։ Քսենոփ. անդ. գիրք Զ. էջ 608։

8 Թուկիդ. գիրք Ե. գլ. 34։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 124։

հի նոցա պարզևս այս, զի առաւել աշխարհին են նոքա քան քաղաքացիքն՝ զորոց զորձեն զերկիր. վասն որոյ և ոչ օրէն է տերմանց նոցա ազատեցուցանել զնոսա կամ վաճառել 'ի տարաշխարհ[1]։ Հանդիսիւ հուչակի ազատութիւն նոցա, զի ածեն զնոսա մերկեալ 'ի մերկեան ծաղկասպակս 'ի տեսիլ ամենեցուն[2]. և ասպա օրէն է նոցա բնակել ուր և կամք լցեն[3]։ Լաւ ասպա այլոքք և վաստակովք ամբառնան 'ի կարգ և 'ի պատիւ քաղաքացւոյ։

Նղատին 'ի սկզբանէ ծառայք չհանդուրժեալք ընդ լծո

նել զնոսա պարգևօք, և յաճախս ևս տարապայ-
մանս խստութեամբ։ Պատմեն երկուս հազարս 'ի
նոցանէ երբեմն միանգամայն կորուսեալ, վասն
արիագոյնս խրախուսելոյ նոցա, ոչ ուրուք գիտա-
ցեալ զնոցանէ թէ զինչ եղեն[1]։ Բազում և այլ
անզթութիւնս[2] պատմեն ոչ ինչ նուազ զար-
հուրելիս[3], յորմէ յառակս եղև ասել. Զա-
տութիւն և ծառայութիւն 'ի Պարսս ծայրայեղ[4]։

Յոյսիկ չեղէ ակնատես, այլ տեսի զսպար-
տացւոց և զեղոսացւոց կասկածանս զմիմեանց,
և զլրտեսել նոցա զիրեարս ահիւ։ Տեսի զի
սպարտացիք առ 'ի նուաճել զեղոսացիս առնէին
ընդ նոսա խստութիւնս՝ որք ըստ իրաց ժամանա-
կին կարևորք թուէին. քանզի յոյժ իսկ դժուա-
րին է վարել զեղոսացիս. բազմութիւն նոցա և
քաջութիւն և մանաւանդ մեծութիւնք խրոխտս
զնոսա և յանդգնութս զործէն[5]։ Այսմ ինքն իրի և
մատենագիրքն քաջահմուտք երկպառակեալ, կէսք
դատապարտեն զխստութիւն ծառայեցուցչաց նո-
ցա, և կէսք անբասիր զնոսա առնեն։

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 80։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 117։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 57։

2 Միրոն. առ Աթենէոսի, գիրք ԺԴ. էջ 657։

3 Յեսայոյս մատենիս 'ի տե-
ղեկութիւնսն թիւ ԻԱ։

3 Պլուտ. անդ։

4 Արիստոտ. յոլ. հաս. գիրք Բ. գլ. 5. հա. 2. էջ 318։

5 Պլատ. յոլ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 776։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Տեսութիւն օրինացն Լիկուրգեայ առ հասարակ։

ՅԱՒՈՒՐՑ հետէ կայի 'ի Սպարտա, և ոչ որ զարմանայր ընդ իս. քանզի օրէնքն՝ որ յառաջագոյն գժուարաւ տային մեզս օտարաց անդր, թողացեալ էին։ Ոչ՝ այանդիմանն թագաւորացն էր. կացուցեալ՝ որ յայնժամ ունէին զաթոռն, Կղէոմենն թոռն Կղէոմբրոտեայ որ անկաւ 'ի ճակատամարտին Լեւկտրայ, և Ագիդամոս որդի Ագեսիլայոսի. երկոքին ևս հանձարեղք։ Կղէոմենն էր այր խաղաղասէր, իսկ Ագիդամոս պատերազմասէր և անուանի յոյժ։ Ոչանեայ անդ և զՆոտաղկիդաս, որոյ յառաջ քան զամս իբր երեսուն զուիստ խաղաղութեանն ընդ Լակեդա և ընդ Պարսս հայթայթեալ էր։ Ասէ Պատմողաքս՝ առ որում ի Ջևանեալն էի, թուեցաւ ինձ բազմահմուտ քան զամենայն սպարտացիս և յոյժար 'ի տեղեկացուցանել. շրջեալ էր նորա ստեպ առ ազգս օտարս, և իրաց իւրոյ ազգին ոչ ինչ նուազ էր հմուտ։

Ի յանձնել իմում երբեմն առնս զՀարցուածքս, ասէ ցիս. Լթէ ոք զօրինաց մերոց յայժմուբարուցս կամիցի առնել դատաստան, այնպէս է որպէս թէ զշինուածոյ իրիք զգեղջ՝ յաւերակաց նորա առնիցէ դատաստան։ Իսկ ես ասեմ.

Լ.յդպէս իսկ. անցցուք ապա մնոք 'ի ժամանակս յորս դեռ անեղծք էին օրէնքդ. համարիցիս թէ ընդ միմեանս յարմարեալ յօդիցին, և մարթ իցէ համբէին 'ի վերայ կալ դիտաւորութեան նոցա. զիւրին ինչ թուիցի քեզ անբասիր առնել զանընդեղական և զայլանդակ հրամանսն որ 'ի նոսա բովանդակին։ Դատեսջիս առէ. Լ.ոկն ած յերկոց հանձարոյ, որոյ դիտաւորութիւնք անսովորք և խորամուխնք՝ թուին տարապայմանք այնու, զի այլոց օրէնսդրացն երկչոտք են և անձուկք։ Դոքա շատ համարեցան յարմարել զօրէնս իւրեանց բնաւորութեան ազգացն։ Իսկ Լիկուրգոս իւրովքն փոխեաց զբարս ազգին. նոքա հեռացան 'ի բնութենէ՝ մատչել կարծելով առ նա, իսկ սա որչափ օտարացեալ 'ի նմանէ թուի՝ նոյնչափ մերձաւորագոյն գտանի։

Արամն առողջ և հոգիազատ սահմանեալ է 'ի բնէ մարդոյ մեծաւորի 'ի բարեկենդանութիւն. սոքին և ըստ Լիկուրգեայ են հիմունք բարօրութեան մերոյ։ Զդ դու քեզէն 'ի միտ առցես թէ ընդէր արգելեալ է մեզ ամուսնացուցանել զդստերս մեր 'ի տարաժամ հասակի, և թէ ոչ 'ի հովանի գեղջուկ յարկացն, այլ ընդ բուցակեզ տապով արեգական մանիցին նոքա 'ի փուշոջ կրթարանին, 'ի հրահանգս գօտեմարտին և արշաւանաց և արդնընկեց տեղընկեց խաղարկութեանց։ Օ՛ի առ 'ի ծնանել քաղաքացիս

1 Քսենոփ. յդ. հաս. Սպարտ. էջ 675 և 676։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 47։ Նոյն 'ի Նումա. էջ. 77։

կորովիս աշխարհին, պարտ է զոլ նոցա առողջս՝ պնդակազմս, զի նոյնպիսիք և որդիքն ծնանիցին։

Ի միտ առցես զարձեալ՝ թէ ընդէր այն ինչ ծնեալ մանկունքն 'ի դատաստան ածիցին, և տակաւք կազմածով 'ի մահ դատապարտին։ Զի զինչ ձեռնհաս իցեն նոքա առնել վասն աշխարհին, և զինչ օգուտ իցէ նոցա 'ի կենաց՝ եթէ ցաւօք կեցցեն։

Ընդսահին 'ի տղայութենէ վաստակք և մրցութիւնք անընդհատք աջողակս յարդարեն զմարմինս մեր և դիւրաշարժս և կորովիս, և ժուժկալութիւն խիստ յորկորատենէ խատանէ կամ փարատէ 'ի նոցանէ զախտս՝ ընդ որով գրաւեալ կան։ Ուստ անձանօթք են եկամուտ պէտք, և զկարևորսն հայթայթեն օրէնք։ Զքաղց, զծարաւ, զվիշտս, զմահ և զամենայն դժնդակս այնու արիութեամբ նկատեմք, զոր 'ի զուր ջանայ խնամատարութիւն սարասել յանձին։ Լատակրօնք յաղանդոց ոչ կարացին արհամարհել այնպէս զցաւս որպէս մանկտին սպարտացի։

Ա. Համարիցիս թերևս եթէ մարդիկ՝ յորս Լիկուրգոս զնութեանն սարգև հնարի դարձուցանել, չվայելիցեն յայնս ընդ երկար. զի 'ի մեռելնոցա առ իրեարս՝ կիրք 'ի նոսա դրդիցին, և բարօրութեանն ամբարտակ անդէն և անդ տապալեալ կործանիցի։ Ա. Ամ է յաղթա-

։ Պլուտ. 'ի Նում. հտ. 1. էջ 49։

նակ հանձարոյն։ Պիտաց օրէնսդիրն զի բռնա-
գոյն 'ի կրից նուաձէ զայլն ընդ իւրև. և ետ մեզ
զհայրենասիրութիւն՝ հանդերձ ամենայն ազգե-
ցութեամբն իւրով և խանդիւք և զմայլմամբ,
և զառանցասօքն իսկ։ Այս սերս այս բուռն և
մեծազօր յինքն զրաւէ զամենայն իղձս և զշարժ-
մունս սրտից մերոց. և այնուհետև մի կամք լինին
աշխարհին, նուվին իսկ և մի միտք. զի որ հանս-
կամքն իցեն, նոյնք և հանախորհուրդք զտանին։
Յայլ զաւառս Աղեղայ[2] մանկտին ազատորդի
յանձնի 'ի ինսան առն անազատի, կամ որում
ոչն է արժանի ազատութեան։ Բայց ստորուկք
և վարձկանք ոչ մնուցանեն սպարտացիս. զկա-
բևոր պաշտօնն հայրենիքն ունին յանձին։
Օ սկզբնաբոյս հասակն մեր թողու նա 'ի ձեռս
ծնողաց՝ այլ ընդ բանալ մտաց մերոց՝ 'ի կիր
արկանէ զիշխանութիւն իւր 'ի վերայ մեր։
Մինչև ցայնժամ յիշատակ ևեթ սրբազան ա-
նուան նորա բազում ըղձիւք սիրոյ և մեծարա-
նաց յեղյեղի 'ի լուր մեր. իսկ այնուհետև աչք
նորա ամենայն ուրեք հետազօտեալ արածեն
զմեզ։ Նա կերակրէ զմեզ և զգեցուցանէ. 'ի
դէմս նորա աւագանին և ծերակոյտն և ամենայն
քաղաքացիք առընթեր կան խաղուցն մերոց,
յանդիմանեն զթերութիւնս մեր, խնդրեն բող-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 55։
2 Քսենոփոն, յղ. հաս. Սպարտ. էջ 676։ Պլուտ. անդ. էջ 50։

բոլոր ինչ առաքինութեան 'ի բանս մեր կամ 'ի գործս գտանել, և գործակցութիւն խնամոյն յայտ առնեն՝ զի չիք աշխարհին պատուականագոյն ինչ քան զմեզ. և զի մանկունքս յայնժամ իւր՝ պարտիմք 'ի ժամանակի լինել նման 'ի սիրելումն և 'ի փառս։

Զոր խնամք որ յայսքան 'ի բարձուէ ձգին զմեօք, իբր ոչ ազդողագոյն և յարատեւակ գործեսցեն 'ի մեզ տպաւորութիւն։ Զոր իբր չիցեն մեզ պաշտելի օրէնք, որ զծայրագոյն բարութիւն կից ընդ բարձրագոյն իշխանութեան ուղղեցեն 'ի շահ օգտի մերոյ, և վաղ քաջ ուսուցանեն մեզ մեծարգել զանձինս։

Յայսքան բազմահոգ փութոյ հայրենեացս զմիջոց, և 'ի խանդակաթ սիրոյ մերոյ առ նա, ծնանի բնաւորապէս անաչառ խստութիւն նոքա, և միամիտ հլութիւն մեր։ Զայլ Լիկուրգեայ ոչ շատ համարեալ զինքնայօրդոյն, պարտս զայն 'ի վերայ մեր յաւել։ Զպարտս քան ամենայն ուրեք սաստկագոյն են օրէնք, նոյնք անսայթաքելի պահեալք. դատաւորք խստագոյնք, նոյնք և մեծարեալք։ Զայս գեղեցիկ յարմարութիւն, որ առանց սորա անհնար է արանց մնելոց յարհամարհանս մահու կալ ընդ իշխանութեամբ, արգասիք են դաստիարակութեանն որով նոքա կրթին համակ 'ի հնազանդութիւն, մանաւանդ թէ 'ի պարառութիւն առաքինութեանց։ Զնդ ուսանին զի առանց հնազանդու-

թեան չէր քաջութիւն, ոչ պատիւ և ոչ ազատութիւն. և զի անհնար է հնազանդել՝ առանց իշխելոյ անձնիւր կամաց։ Ընդ խրատք և օրինակք և դժկամնակաց համբերութիւն և ամենախստ հրահանգք պատրաստեն մեզ զիշխանութիւնս զայս՝ դժուարին 'ի ստանալ և 'ի պահել անկորուստ։

Մի ոմն յաւագագոյն զատաւորաց տեսուչ կայ ժողովոյս մերոյ հանապազ. և եթէ հարկ լիցի մեկնել նմա վայրիկ մի 'ի մէջ, ամենայն ումեք 'ի քաղաքացոց օրէն է կալ փոխանակ նորա 'ի վերայ մեր '. զի յոյժ կարևոր է սատ իշխանութեան յահաբեկութիւն մնաց մերոց։

Յաձախեն պարտք ընդ տիս, և վարժիցն ազգք կրոնին ըստ զարգացման մնաց, և կիրք դեւածինք ընկղմին 'ի բազմութեէ հրահանգաց, կամ 'ի պէտս աշխարհին ուղղին Ճարտարութիւն։ Ի ժամանակի իսկ յորում օկսանինն նոքա մոլել, անմտանչք երևիմք 'ի հրապարակի, և պատկառանօք զաչս 'ի խոնարհ ունելով, և զձեռս ընդ վերարկուաւ ծածկեալ[2], զձև և զդգնութիւն քրմաց Եգիպտացւոց յանձին բերելով, և որպէս զնորընծայեալս 'ի պաշտօն առաքինութեան։

Հայրենասիրութիւն 'ի նեղբս ածէ զյորդոր միաբանութեան 'ի քաղաքացիս, և իրէք հանձն լինելոց հայրենեաց վառեն 'ի նոսա զնախանձ նման

[1] Քսենոփ. յՀ. հաս. Սպարտ. էջ 678։
[2] Նոյն անդ, էջ 679։

նութեան։ Բստանսօր զմիաբանութիւն ոչ ապմկէն վտանգք, որ այլուր տապալէն զայն. քանզի ի կուրգոս զրեթէ զամենայն պատճառս մտքանաց 'ի բաց երարձ, հասարակաց առնելով և զրեթէ հաւասար զամենայն ինչ 'ի մէջ սպարտացւոց։

Հրաւիրիմք զօրհանապազ 'ի Ձեզ հասարակաց, ուր տիրէ պարկեշտութիւն և սակաւապիտութիւն. և այսուիկ մերժին 'ի բաց 'ի տանց իւրաքանչիւր կարօտութիւն և յղփութիւն, և որ յերկաքանչիւրոցն ծնեալ ախտք[1]։

Օրէն է ինձ ըստ հարկի պիտոյից 'ի կիր առնուլ զստրուկս, զկառս, զերիվար և զնամ ինչ զքաղաքակցացն իմոց[2]. քանզի ամենայն ինչ հասարակաց է առ մեզ, որպէս զի և 'ի կանայս և 'ի մանկունս մեր յեղանակաւ ինն ձգելոց աղաւութեանն[3]։ Որոն աղագաւ եթէ զոդ անարգասաւոր զուգէ զծեր ընդ երիտասարդուհւոյ, պարտ է նոսա փոխանակել ընդ իւր երիտասարդ զոք ընտիր գեղով և հանճարով, և զծնունդս նորոգ հարսանեացն ունել իւր յորդեգիրս[4]։ Սմին իրի և ամուրեայն, որ կամիցի կեալ 'ի յաջորդս, օրէն է վարել կնաւ բարեկամի իւրոյ, և մանկածնել 'ի նմանէ, խառնելով առն նորա զմանկ-

1 Քսենոփ. յղ. հասար. Սպարտ. էջ 680։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 46։

2 Քսենոփ. անդ, էջ 681։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 5. հտ. 2. էջ 317։

3 Պլուտ. անդ, էջ 50։ Նոյն կարգադրութիւն Լակոն. հտ. 2. էջ 237։

4 Քսենոփ. անդ, էջ 676։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։

կոնան ընդ որդիս իւր, առանց թողլոյ նոցա ժառանգութիւն՝։ Լ.թէ որդի իմ պատուհասեալ յումեքէ՝ ի քաղաքացոյց բողոք կալցի առ իս մեղապարտ զպատուհասօղն զատեցայց և արժանի պատժոյ, և զարձեալ պատուհասեցից զորդի իմ վասն ընդդէմ դառնալոյ նորա հայրենի իշխանութեանն՝ որում ամենայն քաղաքացիք էն բաժանորդք՝։

Լ.ինկուրգոս՝ի կապտեէն զմեզ յիւրաքանչիւր ժառանգութենէն՝ յորմէ յաձախեն հերձուածք՝ի մարդիկ, հոգացաւ յաւելուլ՝ի մեզ զնախանձ բարեաց. քանզի սա կարևոր էր առ՝ի խափանել զդառնութիւնս խիստ միաբանութեան, և առ՝ի ընուլ զտեղի առանին հոգոց յորոց անզբաղք եմք, և առ՝ի քաջալերել զմեզ՝ի պատերազմի և՝ի խաղաղութեան և յամենայն ժամանակի և՝ի տիս։

Այս տենչ նախասպատուութեանն և գերազանցութեան վաղ քաջ՝ի սիրտ մանկտւոյն՝ի վեր երևեալ, հանարի բոլորջ իմն բարենախանձ հակառակութեան։ Պաշտօնեայք երեք կացեալք յաւագանւոյն, ընտրեն պատանս երեքարիւր նշանաւորս քաջութիւն. և կազմեալ նոքօք դունդ ուրոյն, հրատարակէն վասն որոյ իրաց ընտրեցեանն՝։ Ընդէն արտաքսեալքն յընտրութենէ միաբ

1 Քանոնք. յդ. հասար. կոն. հա. 2. էջ 237։ Սպարտ. էջ 676։
2 Պլուտ. կարգադր. Լ.
3 Քանոնք. անդ, էջ 679։

բանին ընդդէմ նախասպասութեանն, որ թուի ածել նոցա նախատինս. և ահա կազմին զունդք կրկին, այր իւրաքանչիւր դէտակն կալեալ 'ի վերայ թերութեանց ոսոխին՝ ամբաստան լինել զմիմեանց դատաւորին, և համարձակապէս վէճ բերելով զլաւութեանց և զառաքինութեանց, եւ լինելոյ առնէն զանձամբք՝ կէսք առ ամբաստանչոյ յաստիճան պատուոյ, այլք առ 'ի պինդ կալ 'ի նմին։ Այսր աղագաւ օրէն է նոցա միշտ 'ի հանդիպել միմեանց, յարձակել յերեսաս և հանդէս առնել քաջութեան իւրեանց։ Այլ ոչ ինչ 'ի մարտից ասսի ծնանին աղէտք. զի 'ի նշմարել 'ի նոսա հետս ինչ սրտմտութեան, և զոյգն զբ 'ի քաղաքայնոց կարէ միով բանիւ առնել 'ի նոսա խաղաղութիւն։ Օ՛ի եթէ երբէք հետտեն, ձգէ զնոսա յատեան. և պատուհասի սրտմտութիւն նոցա իբրև զօրինաւանցութիւն[1]։

Սահմանաղրութիւն Լիկուրգեայ անփոյթս յարգարէ զմեզ ընչից, յորոց 'ի ստացուած բազում յոյժ կրին վնասք քան զվայելիցն բերկրութիւնս։ Պղնձի եւթ էն մեզ դրամք. քանակ նոցա և ծանրութիւն մատն լինին ագահին, որ ծածկել զինչս իւր կամիցի յաչաց ստրկացն[2]։ Ոսկի և արծաթ թուին յաչս մեր առաւել քան զամենայն թոյնս ապականիչք պետութեան. և թէ առ ումեք 'ի ժողովրդենէ կայցէ 'ի տան ու-

1 Քսենոփ. յՂ. հաս. 2 Նոյն անդ, էջ 682։ Պլուտ. Սպարտ. էջ 680։ 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 44։

բէք ծածկեալ, ոչ թագիցէ յանդգնար խու-
զարկութիւն խնդրակաց, և 'ի խստութիւն օրինաց
ոչ զերծանիցի։ Ընծանօթք են առ մեզ արուեստք
և վաճառաշահ և այլ ամենայն հնարք բազմա-
պատկելոյ զկէտս և զաղէտս ժողովրդեան։ Ը-
ինչ մեծութիւնք գանձուցն իցեն մեզ պիտա-
նացու. այլք յօրէնսդրաց ջանացան յաճախել
զշրջան նոցա, և իմաստասէրք 'ի չափու ունել
զպիտանութիւն նոցա. իսկ Լիկուրգոս անպիտանս
գնոսա արար մեզ։ Ի մեզ յարկ ծածկութեան
և զգեստ և հաց, են մեզ սուսեր և բազուկ 'ի
սպասաւորութիւն հայրենեաց մերոց և բարե-
կամաց, է մեզ սիրտ ազատ և արի անընկճելի 'ի
բռնաւորութենէ մարդկան և կրից. այսոքիկ են
գանձք մեր։

Փառամոլութիւն առ մեզ 'ի խօթամոլ-
թեան սակի է, և առաւելագոյն տենչ համբաւոյ՝
համարի ոճիր։ Ոչիք մեր վիպագիր, չիք Ճարտա-
բասոս, ոչ ոք գովասան, և ոչ արձանք՝ մնափա-
ռութեան ևեթ ազգաց յիշատակարանք։ Զգեղ
որոց յաղթեցաքն, աւանդեսցեն յետնոց զյաղ-
թանակս մեր, մեզ անկ է աւանդել որդւոց մե-
րոց զնմանութիւն քաջութեան և առաքինութեան
հարցն իւրեանց։ Որինակ Լեանիդայ մնտա-
յուշ 'ի միտս նոցա, խրախուսեսցէ զնոսա զտիւ
և զգիշեր. հարց գնոսա, և սակաւք իցեն որք
զերեքհարիւրոցն անկելոց ընդ նմա 'ի Թերմոպիլէ
չգիտիցեն զանուանս թուել 'ի բերանոյ [1]։

[1] Երոդոտ. գիրք է. գլ. 224։

Ձհամարն առ մեզ մեծութիւն, որ առ այլ ազգս ազատութիւն աւադ որերոյն յօրինաց։ Այլերասաւ նութիւն համարձակեալ անպատուհաս, և վաստութիւն՝ որ արհամարհ առնէ զիւրաքանչիւր ոք որ զառաջանսի յայնս, և զպետութիւն որ թողայցուցանէ զայն։ Ամէնք յորմէ աշխարհէ և իցէ, և յոր ծայր աւադութիւն և բազմիցի, և Աստուծոյ իսկ աշխարհին եթէ տէր իցէ, չհամարիմք 'ի վեր քան զանձինս. այլ յորժամ օրէնքն խօսիցին, եամ՝ խրոխտանն մեր ընկնի, և հզօրագոյնն քաղաքացոց մերոց դիմէ 'ի կոչ դատաւորի նուիրն հնազանդութիւն՝ որով տկարագոյնն։ Ձիք մեր երկիւղ, բայց միայն յօրինաց. քանզի Լիկուրգոս դեղփական պատգամաց հրամանաւ ետ մեզ զօրէնսն, և որպէս զկամն դիցն ընկալաք մեք զայնոսիկ[1]. և զի Լիկուրգոս առ 'ի ստոյգ պէտս մեր կարգեաց զնոսա, և 'ի նոսա յեցեալ կայ բարեկենդանութիւն մեր։

Ինախագիծ պատկերեմ ասել զիւրին է քեզ 'ի միտ առնուլ, զի ոչ օրէնդիր լոկ համարելի է զԼիկուրգոս, այլ ներհուն խնամատարէր, և քաջահմուտ ուղղիչ բարուց. և զի տահմանադրութիւնք նորա էն միանգամայն բարուց և քաղաքավարութեանն կարգք, և զի օրէնքն նորա ազդեն միշտ 'ի բարս մեր և յիմաստս. և զի դարձեալ ուր այլ օրէնդիրք շատ համարին խոսիանել

1 Պլեթոնի. յղ. հաս. 2 Նոյն անդ։
Սպարտ, էջ. 683։

զչարիս, սա ստիպէ զմեզ 'ի բարեգործութիւն և 'ի լինել առաքինի[1]։

Այս նախ խելամուտ եղև զօրութեան և տկարութեան մարդոյ. և այնպէս միաբանեաց զայնոսիկ ընդ պարտս և ընդ պէտս քաղաքացւոյ, զի շահ օգտի իւրաքանչիւր ուրուք է միշտ առ մեզ խառն ընդ հասարակաց օգտին։ Այ՛ի ոք ապա զարմասցի, զի մի 'ի կրտսերագունից պետութեաց Լեղադայ հզօրագոյն 'ի նոսա արդ կայցէ[2]. ամենայն ինչ աստ յարգի, և չիք մասն ինչ զօրութեան՝ որ ոչ յօգուտ հասարակաց ուղղիցի, և չիք գործ ինչ առաքինութեան որ անպիտան իցէ հայրենեաց։

Որչափ իկուրգեայ յարդարեն արս արդարս և խաղաղասէրս. այլ բուռն է ինձ ասել, զի եթէ չիցեն նոքա 'ի հեռաւոր և յանմատոյց կողմանս ուրեք պատսպարեալք՝ նուաճեսցին յախտից կամ 'ի զինուց դրացի ազգաց։ Ա՛ն որոյ օրէնսդիրն առ 'ի զառաջն առնուլ զկրկին վասանգաց, ոչ ներէ օտարաց մնանել 'ի Լակոնիա, բայց միայն 'ի յայտնի ինչ աւուրս[3]. և ոչ բնակչաց ելանել անտի[4], բայց միայն վասն կարևոր իրաց։ Տեղին իսկ օգնէ 'ի կատարումն օրինացն. քանզի

1 Քսենոփ. յԼ. հատ. Պլատոն. էջ 685։
2 Թուկիդ. գիրք Ա. գլ. 18։ Քսենոփ. անդ էջ 675։ Խոկր. յԱրքիդ. հատ. 2. էջ 53։
3 Արիստոտ. 'ի Հաւան. տող 1014։ Նոյն պարագայ. 'ի Խաղաղ. տող 622։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 144. գիրք Բ. գլ. 39։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 56։ Նոյն յԱգես. էջ 799։
4 Պլատ. 'ի Պրոտագ. հատ. 1. էջ 342։

շուրջ պատեալ կամք 'ի ծովուց և 'ի լերանց, և 'ի կիրձս և ԵԹ ուրեք պահ եղեալ՝ կարեմք նա-
հանջել զապականութիւն 'ի մնից սահմանաց մերոց։ Որչափ այս եղեն խափան վաճառակա-
նութեան և նաւարկութեան [1]. և 'ի խափանա-
ծոյ ասաւի զՀետ եկն անկրեալն օգուտ անկարօ-
ութեան յաճախելոյ զորչնս. զի քաղաքի
յորում չիք վաճառականութիւն, կիսով չափ
նուազագոյն պիտին օրչնք՝ այն իսկ է։

Դժուարագոյն էր նուաճել զմեզ քան զեղ-
ծուցանել. յայգուէ ցերեկոյ և 'ի մանկութենէ
ցծերութիւն զենակիրք, կազմք կամք ընդդէմ
թշնամեաց, խստագոյն զգուշացեալ հրահան-
գաց քան 'ի ձնկատ մարտի։ Դարձն զաչս քո
ՈՒՄ ուրեք, և թուեսցի քեզ քաղաքս բանակ-
ետղ [2]։ Վկանջք քո հնչեսցեն 'ի խրախոյս
յաղթութեանց կամ 'ի համբաւ արիական քա-
ջութեանց. աչք քո տեսցեն հանապազ արշա-
ւանս զօրաց և հոլովմունս և յարձակմունս և
բաղխմունս։ Վհաղին կազմութիւնքս այսոքիկ
ոչ միայն զբաղեցուցանեն զմեզ 'ի խաղաղութենէ,
այլ և կացուցանեն զմեզ յակաստանի, ահար-
կու առնելով և մեծարոյ մինչև 'ի տար աշխարհս
զանունն սպարտական։

1 Պլուտ. կարգադր. Լա-
կոն. հտ. 2. էջ 239։
2 Պղատ. յդ. հատ. գիրք
Բ. հտ. 2. էջ 842։
3 Նոյն յդ. օր. գիրք Բ. հտ.
2. էջ 666։ Պլուտ. 'ի Լիկուրգ.
հտ. 1. էջ 54։ Խսոկր. ՍՆՔ-
քիդ. հտ. 2. էջ 53։

Ի զինուորականս յայս պատկանին զօրութիւն յոլովք յօրինեալ մերոց։ Ի մանուկ տիոց կանխեալք օր ըստ օրէ յորս՝ ի նոյն և ապա հանապազորդեալք յառնուլ պարապ՝ ի կարևոր գործոց մերոց՝։ Օ ի առ՝ ի տիպս իմն մարտի և յաղթութեանէ զհրահանգս զայս ետ մեզ Իկուրգոս։

Եւ մանկտւոյն զակատելոյ յորս՝ օրէն է ապատակել՝ ի դաշտս, և աւար առնուլ զամենայն որ ինչ՝ ի պէտս իւր է[3]։ Նոյն օրէնք են նմա և ի քաղաքի. և անպարտք են և գովելիք իսկ, որոց ոչ ըմբռնին գոլոնք. իսկ որք ըմբռնին՝ ի գոլութեան, պարսաւելիք են և պարտաւորք պատուհասի։ Օրէնքս այս, զոր յեգիպտացւոց անտի եբեւի առեալ Իկուրգեայ՝, յարուցին ընդդէմ նորա դատախազս[3]. քանզի թուին իմն ազգել՝ ի մանկտին ախորժակս խակագործութեան և աւազակելոյ. այլ ոչ այլ ինչ ներգործէ՝ ի նոսա բայց Ճարտարութիւն և աջողակութիւն, և՝ ի քաղաքացիս յաւելուած զգուշութեան, և յամենեսին իսկ վարժս կանխատեսութեան խորհրդոց թշնամւոյն, և լարելոյ նմա թակարդս, և խուսափելոյ՝ ի նորայոցն[6]։

1 Խակր. համաթ. հտ. 2. էջ 291։
2 Քսենոփոն, յզ. հատ. Սպարտ. էջ 680։
3 Խակր. անդ։
4 Դիոդ. գիրք Ա. էջ 72։ Աբէ. Դեպ. գիրք ԺԱ. գլ. 18։
5 Խակր. անդ։
6 Քսենոփ. անդ, էջ 677։ Հերակղ. պոնտ. յզ. հնութեանց Յունաց, հտ. 6. էջ 2823։ Պլուտ. ի Լիկուրգ. հտ. 1. էջ 51։ Նոյն կարգադր. լակոն. հտ. 2. էջ 237։

Մինչ չև վախճան արարեալ բանիցս, դարձայց անդրէն ուստի սկսայ։ Արդոյ մինուարև մարմին առողջ և ուժեղ և հոգի ազատ 'ի վշտաց և 'ի կարեաց սահմանի 'ի բնէ առ 'ի բարեկենդանութիւն. իսկ միաբանութիւն և բարենախանձ հաւատարկութիւն 'ի քաղաքացիս յարգարէն զուարեաստութիւն որում պարտին ցանկալ բնակեալ 'ի միասին մարդիկ։ Արդ եթէ օրէնք Լ կուրգեայ ընուն զսահմանս բնութեան և զքաղաքաժողով միաբանութեան, ապա զչքնաղագոյնս քան զամենայն օրէնս ժառանգեմք։ Այլ յորժամ տեսցես զայնոսիկ մի ըստ միոջէ, յայնժամ տացես զերաւն. զի արդարև օրէնն է մեզ պանծալ 'ի նոսին։ Իսկ ես ասեմ ցԱտամենաքս. Լչ երբ մարթի սահմանադրութեանդ այդմիկ կալ. զի որով յենու դա յօրէնս և 'ի բարս առհասարակ, հարկ է դմա զնոցն պատուհաս 'ի վերայ ածել յանցուցելոցն յերկաքանչիւրան. արդ որ անպատեհս ինչ գործիցէ, առնիցէք դուք զնա մահապարտ իբրև զեղեռնագործն։

Պատմենաքս ասէ. Լչ առաւել ևս. զի նեբեմք նմա կեալ, այլ 'ի թշուառութեան։ Ի պետութիս յոռացեալս այր անուանարկ պարսաւի յամենեցունց, և ամենայն ուրեք է ընդունելի'. իսկ առ մեզ արհամարհանք զհետ նորա գնան, և խոշտանգեն զնա ամենայն ուրեք։ Պատուհա-

1 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 684։

սեմք զնա և յանձն և 'ի սիրելին իւրքան զամենայն ինչ. կինն նորա դատապարտեալ յողբս, ցաւրէ ելանել 'ի հլապարակ, և ինքն ևս եթէ իշխիցէ երևել անդ, հարկ է նմա գծուծ ձևով բերել յանձին զնշանակ նախատանացն, մեծարանօք տեղի տալ քաղաքացոց հանդիպելոց նմա զՀանապարհայն, և 'ի տոնս խաղուց կալ տարագիր 'ի տեղւոջ որ նշաւակ զնա կացուցանէ աչաց և նախատանաց առնեցուն։ Իսիւր մահունք չհաւասարեն այսմ պատժոյ։

Բ. սեմ. Միւս ևս խելթ է ինձ. կասկածեմ, զի Լիկուրգոս յընկնել 'ի ձեզ կարի հին զկիրս և 'ի բառնալ 'ի բաց զպատճառս ցանկութեան փառաց և օգտի՝ որ այլոց ազգաց են զրդիչք, 'ի յոյլ դատարկութեի զսիրտս ձեր զառաջեցոյց. զի զինչ այլ մնայ 'ի նմա։ Դամոնաքս ասէ. Բ. իւն քաջութեան, հայրենասիրութիւն մինչև 'ի զառանցանս, նախանձ ազատութեան, խրոխտութիւն բերկրական՝ որ խրախուսէն զմեզ յառաքինութիւնս, և մեծարանք բազմութեան քաղաքակցաց գերարգոյից։ Լա համարիցիս, զի 'ի ծուփս այսքանեաց բազմապատիկ յուզմանց անշարժ կարիցէ կալ սիրտ մեր և յուլանալ։

Արիստոտել անդրէն ասէմ. Լա իցէ մարթ ժողովրդեան առ հասարակ 'ի վերհ խնամատարութեան կոխել, և 'ի բարձունս անդ ստատնել կալ։ Դամոնաքս ասէ. Բ. 'ի կրթել զբարս ազգի, հարկ է յաւազանէն սկիզբն առնել։ զրդեալ նոցա

միանգամ և մղեալ 'ի զորձս մեծամեծս, աղխ աղխեալով ընդ իւրեանս ձգէն զսինքորոյ խուժանն՝ որ օրինակաւ քան իմաստիւք զրդի։ Օրինուոր որ զՀետ երկչոտ զօրավարի վատասրտի, զՀետ քաջազին կանգնէ քաջայաղթ արութիւնտ։

Արկնեալ անդրէն ասեմ։ Ա.յլ 'ի մերժել 'ի բաց զփարթամութիւն և զարուեստս, ոչ սպասքէն և 'ի բերկրութեցն՝ որ 'ի նոցանէ հայթայթին՝ զրկեալ գտանիցիք։ Յոյժ իսկ դժուարահասանելի իրք թուին, թէ հրաժեշտ 'ի բերկրանաց դիւրազոյն զբարեկենդանութիւն յարդարիցէ։ Այս դարձեալ առ 'ի դատել թէ իցեն օրէնքդ ձեր բարի, հարկ է գիտել՝ եթէ առաքինութեամբքդ ձերովք այդոքիւք իցէք դուք բարեբաստք որպէս զայլ ազգս Աշխարհաց։ Դամենաքս ասէ. Բարեբաստադոյնս իսկ յոյժ քան զնոսա համարիմք զանձինս. և այս եթէ կարծիք բաւական են 'ի յարդարել զմեզ այնպիսիս։

Այս վախճանեալ զբանս իւր, ասէ. Ա.յլ յուշ լիցին քեզ պայմանքս մեր, զի զդիտաւորութենէ եթէ օրինացն Աստուծոյ են մեզ բանք, և զնախնի սպարտացւոցն բարուց։

ԴԻԼՈՒՍ ԽՄԻ.

Զկենացն Լիկուրգեայ։

Օրէնսդիր Հերակղեայ հալածեալ երբեմն 'ի սահմանաց Պեղոպոնեսայ, որպէս 'ի նախաշաւիղ գրոցս այսոցիկ պատմեցաք*, դարձաւ անդրէն ուԹսուն ամաւ յետոյ քան զառուն Տրովադայ։ Տեմենէս, Արեսփոն և Էրիստոդեմ, որդիք Էրիստոմաքեայ երեքին, դիմեալ անդր դարձուցուցեալ՝ նուաճեցին զկողմն զայն Լակոնայ։ Էրգոդիս անկաւ քաժին Տեմենեայ, և Մեսենիա Արեսփոնի՝. իսկ երրորդ եղբայրն նոցա զայնու աղմկաւն զրաւեալ 'ի կենաց, որդիք նորա Լաբիսթենէս և Պրոկղոս ժառանգեցին զԼակոնիա։ Ի սոցանէ սերեցան երկոքին ազգաստոմքն, որ յետին դարուց հետէ Թագաւորեն 'ի միասին 'ի Սպարտա։

Յառաջին հերձուածոց և 'ի ծանուցս պատերազմաց յաճախս սատանեցաւ պետութիւնն. և մինչ կործանումն մեծալուստ 'ի վերայ կայր նմա, Պողիդեկտոս մի յարքայից նորա մեռաւ անորդի, և Լիկուրգոս եղբայր նորա յաջորդեաց նմա. զի չև ևս էր յայտ յղութիւն դշխոյին։ Լիկուրգոս իբրև իրաւեկ եղև, յայտ արար՝ զի 'ի

* Յառաջինումն մատենի գրոցս. էջ 67 և 68։

2 Պլատ. յղ. որ. գիրք Գ. հտ. 2. էջ 683։

ծնանել թագաժառանգ մանկանն, պատրաստ էր ինքն նախ 'ի թագաւորեցուցանել զնա. և 'ի հաւատարմութիւն բանիցն, որպէս խնամակալ արքայորդւոյն այնուհետև վարէր զթագաւորութիւնն։ Լակ զշէսոյն առաքեաց առ նա, և խոստմնայր կորուսանել զմանուկն, եթէ միայն առցէ զնա Լիկուրգոս կնութեան։ Կա առ 'ի խափանել զսոսկալի եղեռնագործութիւնն, պատաղեցոյց զնա 'ի յոյս մտոտի մինչև ծնաւ արու։ Կաւառեալ 'ի զիրկս իւր զմանուկն, յանդիմանն աբար զնա աւագանւոյն Պարտայ, և ասէ. Կա ծնաւ ձեզ արքայ։

Կայց ուրախութեամբն ընդ այն որով զրկէրն ինքն 'ի թագաւորութենէ, և խնամատուն տեսչութիւնն մեծարայ և սիրելի եղև բազմագունից 'ի քաղաքացւոց։ Կյլ առաքինութիւնքն նորա խելթէին մնաց գլխաւորաց աշխարհին, որոց օժանդակէր զշէսոյն՝ առ քէն վրիժու թշնամանացն զրգռելով ընդդէմ նորա զաղգականս իւր և զլաբրեկան։ Կանսարկէին թէ վտանգ էր զկենանս արքայորդւոյն հաւատալ առն, որում չգոյր մեծ և օգուտ քան զկարէել զայն։ Շունչք աղօտք 'ի սկզբան՝ հնչեցին ասպ բարձրաբարբառ, մինչև հարկ լինել նմա մեկնել գնալ 'ի բաց յաշխարհէն՝ առ 'ի լռեցուցանել զայնս։

Ի Կրեաւ զկայ էաւ ժամանակս բազումս 'ի խելամտութիւն օրինաց Մինոսյայ հանդէարեղ

։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 40։

արքայի. և զարմանայր ընդ յարմարական կարգն՝ որ նորօք պահէր յաշխարհին և առ իւրաքան-չիւր ումեք։ Զիմաստնոցն որ օգնեցին նմա հրամ-տութեամբք՝ ընտրեաց իւր մտերիմ զԱթաղէս քերթող, արժանի դատեալ զնա 'ի գործակցու-թիւն մեծի խորհրդոյն զոր երկնէր 'ի մտի։ Լուեալ խրատուցն նորա Աթաղէս, ջոգաւ բնակել 'ի Սպարտա. և յօրինէր նուագս՝ որ յորդորէին և պատրաստէին զսիրտս 'ի հլութիւն և 'ի միաբա-նութիւն։

Բ. 'ի քաջ խելամուտ լինել որ ինչ 'ի զանա-զանութենէ կարգաց տեսչութեան և բարուց յառաջ գան արգասիք, շրջեցաւ Լիկուրգոս ընդ ծովեղերս Բաբելոնի, և եգիտ անդ բնաւին թոյլ զօրէնս և զդիս։ Արեւտացիք խիստ և սա-կաւապէտ կենցաղոնն բարեբաստք էին. իսկ յա-նիացիք պանծացեալք 'ի բարեբաստութիւն՝ հե-ծէին ստրկաբար ընդ լծով բերկրանաց և համ-արձակութեան։ Զվիշտս դժպհի տեսարանին՝ որ ընծայէր աչաց նորա, սփոփեցին զիւրք իմն ցանկալի. քանզի անկան 'ի ձեռս նորա քերթածք Հոմերոսի, և եգիտ 'ի նմա անակնկալ զգերա-հանձար խնամս բարոյականին և քաղաքավարու-թեան ազնեալս զեղով բանաստեղծութեան, և եդ 'ի մտի ածել զգանձն զայն 'ի Յունաս-տան[1]։

[1] Սարբ. գիրք ժ. էջ 482։

[2] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 41։

Այլ մինչ դեռ շրջէր 'ի տար աշխարհս, պա-
բասպեալ ամենայն ուրեք 'ի քննել զմիտս և զգիրս
օրէնսդրաց, և 'ի ժողովել զսերմանս բարեբաս-
տութեան արկեալս 'ի նոցանէ այլ և այլ ուրեք,
սպարտացիք պարտասեալ 'ի հերձուածոց արձա-
կէին հրեշտակս զհետ միմեանց, ստիպել զնա
հաստատել յօգնութիւն հայրենեացն։ Օ՛ի նորա
միայն էր վարել զերասանակս աշխարհին տատա-
նեալս անդադար 'ի ձեռս թագաւորաց և ռամ-
կին։ Լիկուրգոս բազում հակառակ եկաց. այլ
յետոյ ապա զնջալ 'ի յոգնաթախանձ իղձս ամե-
նայն սպարտացւոց։

Բայց 'ի դառնալն իւրում 'ի հայրենիսն՝ զի-
տաց անդէն, զի ոչ խրատակարկատ առնել զօրէն-
սին առաջի կայր նմա, այլ կործանել բովանդակ
զշինուածն, և այլ 'ի վերայ նորա ամբառնալ
նորաձև. և զամենայն խոչս դիմակացս կանխաս-
անդստին տեսեալ՝ ոչ ինչ զարհուրեցաւ։ Բան-
զի օգնականք էին նմա մեծարանք ժողովրդեան
վասն ազգատոհմին նորա և առաքինութեանցն,
հանճար և գիտութիւնք, և արիութիւն մեծա-
սաստ՝ որ մղէ զկամ, և ողբ յանկուցիչ որ յին-
քին ձգէ զսիրտս[2]։ Դարձեալ և հրամանք դիցն
օգնէին նմա, զորս ըստ օրինակի այլոց օրէնս-
դրաց հոգացաւ հայթայթել իւր։ Հարցուէն
դեղփական ետնմա հրաման պատասխանւոյ. Ինչ-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 2 Նոյն անդ։
4. ԷՀ 42։

կալան զիք զզոհս քո, և շնորհօք նոցին տացես օրէնս քան զամենայն սահմանաղրութիւնս քաղաքավարութեան զերազանց։ Եւ յայտմ հետ Իկուրգոս համախոհ իւր միշտ զՀարցուէն կալաւ, որ վաւերականաւ աստուածպետական իշխանութեան տիրացուցանէր զամենայն օրէնս նորա։

Ասէ քան զձեռն 'ի գոլծ առնել, ետ զօրէնսն 'ի քննութիւն ընտրելոց բարեկամաց իւրոց և քաղաքակցաց. և ընտրեաց իւր 'ի նոցանէ երեսուն այր, գնալ ընդ նմա սպառազէն 'ի ժողովս համախումբս։ Եւ զումարտակն այն թիկնապահաց չլաւէր նմա 'ի խոտիանել զամենայն աղմուկս։ Ընդդէմ նորաձև օրինաց ինչ նորա յուզեցաւ ուրեք աղմուկ, և ձոիք այնպէս զայրացան 'ի վերայ նորա յարեան, մինչև փութալ զերծանել նմա 'ի մերձակայ ուրեք մեհեան։ Եւ յԼ 'ի խուսանէն իւրում՝ անդր՝ ասեն Հարեալ զնա յուժմեմբ սաստկապէս, և կորուսեալ զմի յաչացն։ Եւ 'ի դարձուցանել զարիւնաթաթաւ դէմս իւր 'ի տեսիլ հալածչացն՝ յոլովք 'ի նոցանէ զամենի Հարեալ տարան զնա առ իւրեանս մերձարանօք և կարեկցութիւն, գարշելեալք յեղեռանէն, և մատնեալ 'ի ձեռս նորա զեղեռնաւորն՝ առնել ընդ նա որ ինչ և կամք էին։ Եւ էր նա պատանի բուռն և ամենի։ Եւ ինչ կշտամբեաց զնա Լ ի-

։ Պողիեն. 'ի մարթանան, գիրք Ա. գլ. 16։

կուրդոս, և ոչ յանդիմանեաց զնա. այլ կալեալ զնա առ իւր, և 'ի բաց կացուցեալ զաղաղեկման և զսպասաւորս իւր, նմին ինքեան հրամայեաց սպասաւորել իւր և դարմանել զվէրսն։ Եւ ուստ պատանին լուութեամբ. և զփոքր առեալ հանապազ զաղաղութեանն և զհամբերութեան և զմեծամեծ առաքինութեանցն Լիկուրգեայ, զբարեջեաց զատելութիւնն 'ի սէր. և ըստ չքնաղ օրինակին նուաճեաց զբնութիւն բարուց իւրոց[1]։

Եւ ապա ուրեմն ամենայն կարգք պետութենն ընկալան զնոր սահմանաղրութիւն Լիկուրգեայ. որոյ ամենայն մասունք նորա այնպէս ընդ միմեանս էին պատշաճեալ, զի ընդ առնուլ զփոքր իրացն՝ վկայեցին ամենեքին զի չգոյր ինչ 'ի նմա թերի[2]։ Վերազանց էին օրէնքն, այլ չէ ևս յարատևութիւն նոցա անկասկած. նմին իրի Լիկուրգեայ զամենայն ազգն 'ի մի վայր ժողովեալ ասէ. Ինչ ինձ զկարևորագոյն մասն սահմանադրութեանս ցուցանել ձեզ, այլ պարտ է ինձ հարցանել նախ զհրամանս դիցն 'ի Դելփիս. արդ խոստացարուք ինձ մի ինչ 'ի սահմանելոց առտի օրինաց փոփոխել մինչև 'ի դարձն իմ այսրէն։ Եւ նոքա խոստացան։ Լիկուրգոս ասէ. Ցանք ինձ երդումն։ Եւ արքայք երկոքին և աւագանին և ամենայն քաղաքացիք երդուան 'ի դիս[3]։ Եւ էր աշխարհօրէն երդմանն նոցա պայ-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 45։

2 Նոյն անդ։

3 Նոյն անդ, էջ 57։ Դիկոդ. դամասկ. 'ի Զ գրէս. էջ 446։

ման անլուծանելի, զի 'ի մոլ եղեալ էր Լիկուրգ[1] ոչ ևս տեսանել զՀայրենիսն։

Զոգաւ նոցն հետայն 'ի Պերղիս, և Եհարց զնորոց օրինացն՝ եթէ իցէ թէ զբարեբաստութիւն սպարտացւոցն յարդարիցեն։ ՅԱ հարցումն ետ պատասխանի, թէ Սպարտա բարգաւաճագոյն քան զամենայն քաղաքս կացցէ՝ ցորչափ ժամանակս զգուշացի օրինացս։ Օ այն պատգամ Լիկուրգոս յղեաց 'ի Լակեդեմոն, և անձամբ զանձն դատապարտեալ յաքսորս[2], զրաւեաց զկենս իւր հեռի յազգէն՝ որում զբարեբաստութիւնն ետ։

Բայց ոչ զարժանին պատիւ ասէն ընծայեալ յազգէն յիշատակի նորա[3]. յայտ իմն արդեօք կամելով առնել, զի ամարթէր իսկ ըստ վայելուչն արժանեաց ընծայել նմա պատիւ։ Վասնզի կարոյց նմա ազգն մեհեան, ուր ամի ամի մատչին նմա զոհք[3]. և ազգականք նորա և բարեկամք կազմեցին ժողով[4], որ կայ մինչև յայսօր, և ընդ ժամանակս ժամանակս զումարի, առնել զյիշատակ առաքինութեանց նորա։ Հասանեալ երբեմն ժողովոյն 'ի մեհենի անդ, Լակղիդաս առբնակեալ անդ հոգին խնամակալ խօսեցաւ զՀառս զայս.

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 57։

2 Արիստոտ. առ Պլուտարքեայ, անդ էջ 59։

3 Երոդոտ. գիրք Ա. գլ. 66։ Պաւսան. գիրք Գ. գլ. 16. էջ 248։

4 Պլուտ. անդ։

Լակեալքս 'ի տնանխմբել զյիշատակ քո, զինչ անուն անուանեսցուք քեզ։ Հարցուկն երկրայեալ՝ թէ ասասուած ինչս եթէ մարդ՝, կամ չեաց զքեզ յերկրային բարեկամ զինչ, զի զու բարեկամ եղեր մարդկան։

Յանուցցուս սիրտ քո, վերհասցն, եթէ քեզ 'ի քաջութիւն համարեսցուք զի ոչ յանձն առեր անօրէնութեամբ հասանել թագի. և ոչ ընդ այն ախորժիցէ, եթէ զնուիրեալ զանձն քո և ըզհանգիստ առ 'ի բարեբարել մարդկան՝ առցուք 'ի գովեստ։ Օրհնուէրս զբազմաձգունս անկ է գովել։

Խազումք յօրէնսդրաց մոլորեցան ընդ կուռ պաղատայս. իսկ զու խելամուտ զտար ընդ արտուղղն գնացս երանաւետել զազգս։ Գովեալդ, զի 'ի խաւարի տգիտութեան խորագոյնս ծանեար զսիրտ մարդոյ՝ քան իմաստասէրք 'ի պայծառ գիտութեանս յայսմիկ։

Գոհանամք զքէն, զի եղիր սանձ իշխանութեան աղքայից, խեռութեան ռամկին, ամբարհաւաճութեան ճոխից, և կրիցս մերոց և առաքինութեանց։ Որ կացուցեր 'ի վերայ մեր իշխան ամենատես ամենազօր և անկաշառ, և բազմեցուցեր զօրէնս յաթոռ, և զզատաւորս մեր եղիր առ ոտս նոցա, մինչ այլուր մարդոյ բազմե-

1 Եւսեբիոս. գիրք Ա. գլ. 65։ 2 Քսենոփոն. յԳ. հատ Պլուտարքոս, գիրք Գ. գլ. Սպարտ. էջ 675։ 16. էջ 42։

լով յաթոռ, ընդ ոտիւք նորա դնին օրէնք։ Հանէ զոյն արմատենուց օրէնք զպտուղ իւր ջամբէ բաղմելոց առ հասարակ 'ի հովանւոջ իւրում. իսկ բնական որպէս 'ի բարձու լերին ծառ, առ որով իժք և անգղեղք բունին։

Յոհանամբ զքէն, որ թէթևաբեռն զմիտս մեր արարեր՝ նուազունս թողեալ 'ի սմա տիպս իրաց Հիգրիտս և օգտակարս, և ջունել մեզ իղձս աւելի քան զպէտս։ Որ քաջայոյս զմեզ արարեր, ջնդրել 'ի դից զարիութիւն այլ բայց առ 'ի տանել անիրաւութեան ' 'ի դէպ ժամանակի։

Որ տեսանելով զօրէնս քո վսեմն և գեղեցիկս գոգցես իմն ինքնաձեմն առանց բաղխելոց ընդ միմեանս և քայքայելոց, զուարճանայիր՝ որպէս 'ի տուչութենէ ուսեալ գիտեալք՝ հանգոյն գերազոյն էին, որ զուարճանայր 'ի տեսանել զտիեզերս նորատեղծեալս յիւրմէ՝ կատարելով ըզշարժմունսն գեղեցկայարմար կարգաւ։

Որ հետս անցից քոց ընդ երկիր զբարերարութիւնս քո թողեր. երանի է մեզ, եթէ անմոռաց յիշատակաւ նոցին՝ կարասցուք թողուլ թոռանց մերոց զաւանդս զայս որպէս հարքն մեր ընկալան։

1 Պլուտ. կարգադր. լամն. հա. 2. էջ 239։ 2 Նոյն 'ի Լիկուրգ. հա. 1։ էջ 57։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Կարգ տեսչութեան սպարապետաց։

ՅՈՐՄԻՀԵՏԷ քաղաքաժողով միաբանութիւնք հաստատեցան, թագաւորք զուն զործէին յաւելուլ զիշխանութիւն իւրեանց, և ժողովուրդք 'ի տկարացուցանել զայն։ Ազնուիք՝ 'ի հակառակ ջանից աստի զրդեալք, առաւել ևս 'ի Սպարտա 'ի վեր երևեցան քան այլուր։ Բանզի թագաւորք երկոքին, յաճախ այլակամք, և կուսակցեալ երկոքանչիւր ունելով բազում, զարձեալ և ժողովուրդն ազգ պատերազմող և ստահակ՝ ոչ հրամայել ուսեալ և ոչ հնազանդել։ վախից 'ի վախս մղէին փոխանակաւ զկարգ տեսչութեանն, մերթ 'ի չարաչար բռնաւորութիւն, և մերթ 'ի ծայրայեղ ազատութիւն ընկերհաշտութեան '։

Ոչ էր մարթ խնամութեանն Լիկուրգեայ թողուլ 'ի յեղյեղուկ կամն ամբոխին զտեսչութիւն իրաց աշխարհին ², և ոչ բոլորովին 'ի ձեռս երիցս ազգատոհմիցն արքայազանց. նմին իրի խնդրէր նա հնարս սանձահարելոյ խնամութեամբ զզօրութիւն, և եգիտ զայն 'ի Կրետէ։ Բանզի էր անդ ատեան զերագոյն 'ի վերայ

1 Պլուտ 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 42։

2 Նոյն առակ լոգոն. հտ. 2. էջ 228։

իշխանութեան Թագաւորին [1]. և հանգոյն իմն այնմ ատենի կացոյց 'ի Պարսս։ Ոչ երբք քան և զութ քաջահմուտք ընտրեցան բաժանորդք արքունի իշխանութեանն [2]. և սահմանեցաւ իրաց կարևորաց աշխարհին 'ի վերհափառ ծերակուտի անդ դատել՝ երկուց Թագաւորացն բաղմելով անդ գահերեց, և զի ըստ բազմագոյն Թուոյ կարծեաց տացի վճիռ [3], և վճիռն ածցի 'ի համախսումբ ժողով ազգին՝ որում անկ իցէ հաստատել կամ եղծանել զայն, ոչ ունելով իշխանութիւն բնաւ և ոչ մի ինչ փոփոխումն առնելոյ 'ի նմա [4]։

Բայց առ աղօտ բացատրութեան պայմանին, և կամ՝ զի քննութեան վճռոյն բնաւորապէս ըստ հետ գան խղճք փոփոխմունս առնելոյ 'ի նմա, տակաւ ժողովուրդն յաւիշտակեաց իւր իրաւունս փոփոխելոյ զայն յաւելուածովք և զեղչմամբք։ Անյաջողինագանցութիւնս զայս բարձին 'ի սպառ Պողիդոր և Լիկուրգոս, Թագաւորեալ ամօք իբր հարիւրեւերեսնիւք յետոյ քան զ Լիկուրգոս [5]. քանզի եռուն յաւելուլ դեղփական հարցկին միւս ևս պատգամ 'ի հրամանն. որով իշխանութիւնք իւրաքանչիւր բաշխեցան [6]։

Ոչ երակոյսն մինչև ցայնժամ 'ի կշիռ կալեալ

[1] Արիստոտ. յդ. հատ. գիրք Բ. գլ. 10. հատ. 2. էջ 332։
[2] Պղատ. յդ. օր. գիրք Գ. հատ. 2. էջ 692։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 42։
[3] Դիոն. ազիկ. հնութիւնք հռովմ. գիրք Բ. գլ. 14. հատ. 1. էջ 264։
[4] Պլուտ. անդ, էջ 43։
[5] Նոյն անդ։
[6] Նոյն անդ։

էր [1] զիշխանութիւն թագաւորաց և ռամկին. այլ քանզի Ծերոյն իշխանութիւն և թագաւորաց միանգամ ցկեանս տուէր, վասնզի էր կարի ինն միաբանելոյ նոցա ժամանակաւ, և ոչ էաւ միմեանց ընդդէմ դառնալոյ։ Զ,միս իրի իշխանակիցք նոցա կացուցանն դատաւորք հինգ՝ Եփորոսք անուանակոչեալք կամ պարէտք, վերէժխնդիրք իրաւանց ժողովրդեան։ Զովոպոսմն արքայ, նա զատեանս զայս միջնորդ կացոյց հաձութեամբ ազգին [2]։

Զ,թէ խմաստասիրացն ըմբռնեալք բանից, Զովոպոսմն ամփոփելով զիշխանութիւնն՝ հաստատագոյն զայն արար և տեւողագոյն [3]։ Զսկ եթէ յետ կատարածի իրացն հայեցիմք, առ 'ի խոստանել զվասնզն որ չէ եւս 'ի վերայ կայր, պատրաստեաց նա միւս այլ՝ զրուցմ հարկ էր վաղ կամ անագան հասանել։ Զոտ սահմանադրութեանն Զ,ի կուրգեայ՝ գեղեցիկ ընդ միմեանս խառնեին թագաւորութիւն՝ ազնուապետութեն և ընկերհաշտութիւն. Զովոպոսմն յաւել 'ի նոսա զդակապետութիւն [4], որ յաւուրս մեր 'ի բռնաւորու-

[1] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 43։ Պոլիբ. գիրք Զ. էջ 459։

[2] Արիստոտ. գիրք Ե. գլ. 11. հտ. 2. էջ 407։ Պլուտ. անդ։ Վաղ. Մաքս. գիրք Դ. գլ. 1։ Դիոն ոսկէբ. Հատ. 56. էջ 565։ Սիկէր. յղ. որ. գիրք Գ. գլ. 7. հտ. 3. էջ 164։

[3] Պլատ. յղ. որ. գիրք Դ. էջ 692։ Արիստոտ. գիրք Ե. գլ. 11. հտ. 2. էջ 407։

[4] Արքիտ. առ. Ստոբ. էջ 269։ Արիստոտ. յղ. հտ. գիրք Բ. գլ. 6. էջ 321։

[*] Յետոյոս մատենիս 'ի առ. զեկուցութիւնսն. Թիւ ԻԲ։

թիւն զառաջաւ [1]։ Յեսոյուք արդ 'ի հարևանցի զայլ և այլ մասունս կարգի տեսչութեանս որպէս այժմ էր, և ոչ որպիսիք էին երբեմն. զի այլ այլեալ էն այժմ զրեթէ առ հասարակ [2]։

Թագաւորացն երկոցունց պարտ է գոլ յայզմ Հերակղեայ, և ոչ օրէն է նոցա կին ածել օտարազգի [3]։ Պարէտք տեսուչք կան տիկնայ նոցա, զի մի զուցէ ծնանիցին ժառանգ խորթ՝ օտարասերմն 'ի մեծատառ զարմէն [4]։ Այլ եթէ ըմբռնեսցի ոք 'ի նոցանէ 'ի շնութեան, կամ կանաչած ծանր եթէ լիցի զուսմբէ, տարագրին որդիք նոքա 'ի դասս ժողովրդեան [5]։

Յերկաքանչիւր ազգատոհմն արքունի՝ անդրանկին յորդւոց է ժառանգութիւն թագին. և առ 'ի չգոյէ որդւոց՝ եղբօր արքային է անկ [6]։ Ի վաղամեռիկ լինել անդրանկանքան զՀայր իւր, կրտսեր եղբօրն է անկ. այլ եթէ անդրանկանն զուցէ որդի, նախասպատիւ է քան զՀօրեղբարսն [7]։ Իսկ առ 'ի չգոյէ մերձաւոր ազգականաց՝ ընտրին հեռաւորք, և ոչ ոք յօտար ազգատոհմէ [8]։

1 Պղատ. յԼ. օր. գիրք Դ. էջ 712։
2 Քսենոփոն, յԼ. հաս. Սպարտ. էջ 690։
3 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 800։
4 Պլատ. յԱգիսլ. հտ. 2. էջ 121։
5 Երոդոտոս, գիրք Զ. գլ. 63։ Պաւսանիաս, գիրք Գ. գլ. 4. էջ 212։ գլ. 8. էջ 224։
6 Երոդոտ. գիրք Ե. գլ. 42։ Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 493։
7 Պլուտ. անդ, էջ 796։
8 Նեպ. յԱգես. գլ. 1։

Ալէքսանդրութեան թագի դատին և վերնանին 'ի համախումբ ժողովս աղգին [1]։ Լինէ թագաւորի ամուլ պատահէ կին, պարտ է նմա արձակել զնա 'ի բաց [2]։ Ամսոյ զՆաքսանդրիդէս՝ որոյ զգուսար քեռ իւրոյ ածեալ էր կնութեան և յոյժ սիրէր զնա, կոչեցին պարէտք յատեան, և ասեն. Լէ մեզ արժան թողուլ, զի սպառեսցի տոհմն արքունի. արդ 'ի բաց արա զքեզ կին քո, և կալ քեզ զայլ ոք կնութեան, որ ծնանիցի ժառանգ աթոռոյն։ Նա 'ի ստոնգանել թագաւորին՝ համախոհութեամբ ծերակուտին ասեն ցնա. Զրա զոր ասեմքն, զի մի հարկ լիցի սպարտացւոցս ձեռնարկել 'ի խստութիւն առանց խղճոյ զկատարեալ քեզ ըղձալիս, արկ զքեզ միւս եւ՝ որ պատսպարան լիցի յուսոյ մերում։ Զգոյր ինչ հակառակ քան զայն օրինաց Սպարտայ, սակայն հնազանդեցաւ Նաքսանդրիդ, և ած միւս եւս կին՝ յորմէ ծնաւ նմա որդի, այլ ոչ էթող 'ի սիրոյ իւրմէ զառաջին կին իւր, յորմէ յետ սակաւ ժամանակի ծնաւ անուանին Լեւոնիդաս [3]։

Հանդերձեալ թագաժառանգն ոչ ըստ այլ մանկտին դաստիարակի [4], զի մի կարի ընտանութեամբն վերջասցին նորա 'ի մեծարանաց՝ զոր

1 Բանենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 493։ Նոյն յԱ. գեսս. էջ 652։

2 Երոդոտ. գիրք Զ. դլ 63։

3 Նոյն. գիրք Ե. դլ 39։ Պաւսան. գիրք Գ. դլ. 3. էջ 211։

4 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 596։

պարտին առ յապա բերել նմա։ Այլ ոչ ինչ նուազ խնամք լինին 'ի դատարարութիւն նորա. խելամուտ առնեն զնա արքունական փառացն, այլ առաւել ևս պարտուց իւրոց։ Մի ոմն 'ի սպարտացւոց ասաց երբեմն ցԱզեսիմն. Փութիցես զի պարտ է Թագաւորի լինել մարդասէր։ Այս նա ասէ. Փութեմ քաջ, այլ չէ պարտ նմա արհամարհ առնել զանձն։ Այս այլ ոմն 'ի Թագաւորացն սպարտացւոց ասաց ցազգականս իւր, զոր անիրաւ ինչ խնդրեին 'ի նմանէ. Զոսք ինքնին ուսուցիք ինձ անհնազանդել ձեզ յիրիս յայսմիկ [2], ուսուցանելով ինձ՝ զի պարտ է Թագաւորի առաւել քան զամենայն քաղաքացիս հնազանդել օրինաց։

Իկուրգոս կաշկանդեաց զձեռս Թագաւորաց, այլ եթող նոցա զպատիւս և զազատութիւնս՝ զորս ժառանգեն որպէս զենպետք և տեսուչք իրաց աշխարհին և զօրավարք։ Խրոմի զարարողութիւնս ինչ կատարին, զքրմութիւն յանձին բերելով [3]. և զամենայն կարգս հասարակաց պաշտամանց ինքեանք սահմանեն, կատարողպետք կացեալ [4]։ Զ 'ի կարող լինելոյ նոցա ուղերձել դից զուխտս իւրեանց և զաշխարհին [5],

1 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 223։

2 Խակր. յղ. խաղաղ. հտ. 1. էջ 431։ Պլուտ. անդ. էջ 216։

3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 56։

4 Նոյն անդ. գլ. 57։ Արիստոտ. յղ. հայ. գիրք Գ. գլ. 14. հտ. 2. էջ 356։ Դիոնիսիկ. հնութիւնք հռոմի. գիրք Բ. հտ. 1. էջ 264։

5 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Գ. էջ 493։

տայ նոցա աշխարհն յառաջնում՝ և յեօթներորդում՝ աւուր ամենեան զոհ և գինի և ալիւր դարձոյ [1]։ Զրկեն է երկաքանչիւրոցն ածել ընդ իւրեանս պաշտօնեայս երկու կամ հարցուկս, որք ոչ մեկնին 'ի նմանէ, և կոչին նոքա սիւնեանք։ զի ըստ պիտոյից արձակէ զնոսա Թագաւորն հարցանել զՊիւթիա, և ունի 'ի պահեստի զարատ զամն զոր ածեն [2]։ Մի 'ի կարևորագունից արդեօք իշխանութեանց աշխարհին է սա. զի որք զնշխանութիւնս զայս ունին՝ խորհրդակիցք են ընդ դեղչական քուրմն տուօղս պատգամաց, որովք յաճախ սահմանի բարեստ պետութեանն։

Թագաւորն 'ի տեսչութիւն իրաց աշխարհին բազմեալ յաթոռ, կարող է թողուլ քաղաքացւոյ զպարտս՝ որ պարտիցի ինչ նախորդի իւրում՝ կամ հասարակաց գանձուն [3] *։ Յողովուրդն սահմանեալ նմա բաժինս վիճակաց [4], զորս օրէն է նմա մինչև ցկեանս յօգուտ աղգականաց իւրոց 'ի կիր արկանել [5]։

Թագաւորք երկրքեան զահերէցք ծերակուտին բազմեալ, առաջի առնեն զիրս զորոց հարկ իցէ խորհել [6], և երկաքանչիւր տան զվարկ իւրեանց։ Իսկ եթէ 'ի բացեայ իցեն, տան 'ի ձեռն

1 Երոդոտ. գիրք Զ. գլ. 57։ Քսենոփոն, յղ. հաս. Սպարտ. էջ 690։

2 Երոդոտ. անդ։ Քսենոփ. անդ։

3 Երոդոտ. անդ, գլ. 59։

* Այս օրէնք էին և 'ի Պարսս։ Երոդոտ. գիրք Զ. գլ. 59։

4 Քսենոփ. անդ։

5 Պլոյտ, յԱգես. էջ 665։

6 Երոդոտ. անդ, գլ. 57։ Դիոն. ազիկ. հնութիք հռոմ. գիրք Բ. հտ. 1. էջ. 264։

միոյ ուրուք 'ի ծերոց ծերակուտին յաղգականաց իւրեանց [1]. և վասն նոցա զերկուց ունի զօրութիւն [2]։ Ի դատս որ ածին 'ի հանխաւմբ ժողովս աշխարհին, ըստ բազմանգոյն թուոց եղանէ վՃիռ։ Յառաջարկել երկուց թագաւորաց միաբան խորհուրդ ինչ, որ յայսմանպէս յօգուտ իցէ աշխարհին, ոչ է օրէն ումեք հակառակել այնմ [3]։ Ի միաբանութենէ ատի նոցա չէք ինչ վնասանգ հասարակաց ազատութեան. քանզի երկոքին ազգատոհմք արքունի նախանձընդդէմք են միշտ միմեանց [4], և դուն ուրեք պատահէ արքայիցն երկոցունց հաւասար ունել գիտութիւն առ 'ի Ճանաչել զստոյգ օգուտ աշխարհին, և հաւասար քաջութիւն առ 'ի կացուցանել զայն։ Դատք Ճանապարհաց յարդարելոյ, և կարգաց որդեգրութեան, և ընտրութիւն ազգականին՝ որում զղուստր որք և ժառանգ անկ իցէ առնուլ կնութեան, այս ամենայն 'ի նոցանէ սահմանին [5]։

Ոչ է օրէն թագաւորաց 'ի ժամանակի խաղաղութեան հեռանալ յաթոռոյ [6], և ոչ 'ի պատերազմի երկուցն միանգամայն [7], բայց եթէ բանակք կրկին կազմիցին։ Օ յ անկ է նոցա իւրովի

1 Երոդոտ. գիրք Զ. գլ. 57։
2 Թուկիդ. գիրք Ա. գլ. 20։ Պարապ. անգ։ Ղուկիան. Ներգաշնակ. գլ. 3. հտ. 1. էջ 855։ Մէօրս. յղ. պետուրեան սպարտ. գլ. 23։
3 Պլուտ. ԼԱգիս. հտ. 1. էջ 800։
4 Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 215։
5 Երոդոտ. անգ։
6 Պլուտ. ԼԱգիս. հտ. 1. էջ 800։
7 Երոդոտ. գիրք Ե. գլ. 75։ Քսենոֆ. պատմ. Յուն. էջ 562։

զօրավարել՝. և սահմանեաց Լիկուրգոս երևել նոցա 'ի բանակի ամենայն շքով և իշխանութեամբ, որ յորդորէն զզօրականն 'ի մեծարանս և 'ի հնազանդութիւն։

Լաւ առնել զօրականին, թագաւորն զոհ մատուցանել Արամազդայ. և մի 'ի պատանեաց առեալ 'ի բազնէն խանձող բոցաւոր, ածէ զայն առաջի զօրացն մինչև յելս սահմանաց աշխարհին, ուր միանգամ զոհ մատչի[1]։

Յաշխարհէն ելանել ռոճիկ զօրավարին և իւրոցն, որ են թիկնապահք նորա սովորականք. և Պիւթեանքն երկրին կամ հարցուկք՝ զորոց վերագոյն ասացի, և մարտպետք կամ աւագ սպայք՝ ընդ որս հանապազ խորհրդակցի, և պաշտօնեայք երեք 'ի ձեռանէ՝ օգնականք նմա յամենայն 'ի պէտս[2]։ Որով զերծեալ զօրավարին յամենայն առանին հոգոց, պատուղ 'ի գործս պատերազմին անզբաղ։ Այս անկ է ռազմ կարգել, և դուլ առնել մարտի[3], և ընդունել և արձակել զՀրեշտակս օտար ազգաց[4]։ Լակ պարետացն երկոցուն, որք ընդ նմա կան, ոչ այլ ինչ գործ է՝ բայց զգուշանալ անեղծութեան բարուց. և անհրաման 'ի զօրավարէն չխառնին յիրս ինչ[5]։

1 Քսենոփոն, յԼ. հատ. Սպարտ. էջ 690։ Արիստոտ. յԼ. հատ. գլուխ Գ. գլ. 14. հատ. 2. էջ 356։
2 Քսենոփ. անդ, էջ 688։
3 Նոյն անդ։
4 Թուկիդիդէս, գլուխ Ե. գլ. 60։
5 Քսենոփ. անդ, էջ 689։
6 Նոյն պատմ. Յուն. գլուխ Բ. էջ 477 և 478։ Նոյն յԼ. հատ. Սպարտ. էջ 688։

Յառաջ քան զաւուրս զայսոսիկ եղեն կապկածք զզօրավարաց ոմանց դաւաճանելոյ զազատութիւն հայրենեացն, և մնան լինելոյ օգտի նորա, կաշառակրծութեամբ կամ ունկնդրութեամբ հրապուրողաց [1]։ Յանցանացս այսոցիկ պատուհասաք ըստ հանգամանացն սահմանին տուգանք ծանուցեալք, կամ աքսոր, և կամ անկումն յաթոռոյ և 'ի կենաց իսկ։ Թագաւորաց ամբաստանելոց ոմն փախուցեալ 'ի մեհեան ուրեք ապաստանեցաւ [2]. և այլ ոմն ինդրեաց շնորհս 'ի ժողովոյն, և եղև նմա թողութիւն՝ բայց միայն զի յայնմ հետէ զամենայն արասցէ ըստ խորհրդոց տասանց սպարապետացւոց, զորս ինքն ժողովն կացցէ առ նմա 'ի բանակին [3]։ Ցակաւ թողանայ վստահութիւն ընդ թագաւորն և ընդ աւագանին, և ընդ հոպ 'ի պատերազմունս փոխանակ թիկնապահայ կացցեն զնոսաւ լրտեսք և չարախօսք ընտրեալք 'ի թշնամեաց իւրոց [4]։

Ժամանակի խաղաղութեան թագաւորք հաստատին աւագագոյնք 'ի քաղաքացիս ազատ քաղաքի. և հանգոյն քաղաքացւոյ առանց թիկնապահայ և առանց շքոյ ելանեն 'ի հրապարակ, և իբր աւագագունից քաղաքայնոց ընծայի նոցա

[1] Երոդոտ. գիրք Զ. գլ. 82։ Թուկիդ. գիրք Ա. գլ. 132։ Պաւսան. գիրք Գ. գլ. 7. էջ 221։

[2] Թուկիդ. գիրք Ե. գլ. 21։ գիրք Ե. գլ. 16։ Պաւսան. անդ։

[3] Թուկիդ. անդ, գլ. 63։ Դիոդ. գիրք ԺԲ. էջ 126։

[4] Արիստոտ. յՀ. հաս. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 331։

առաջին տեղին, և ամենեքին յառնեն առաջի նոցա, բայց 'ի պարետացն բազմելոյ յատենի [1]։ Ի խափանել նոցա գալ 'ի Ճաշ հասարակաց, առաքի առ նոսա զնին և ասելոք [2]. իսկ 'ի հրաժարել նոցա 'ի գալոյ առանց ինչ հարկի, չառաքի ինչ առ նոսա [3]։

Ի Ճաշս յայսոսիկ, և ուր ուրեք օրէն է նոցա Ճաշել առ քաղաքացիս, զնին առաջի նոցա կրկին բաժինք՝ առ 'ի բաժանակից առնելոյ նոցա զսիրելին ընդ իւրեանս [4]։ Պատշաճեցիս այսոցիկ մանրապատում Ճառք մի աւելորդք թուեսցին. զի պատիւք ամենայն ուրեք ոչ այլ ինչ են, բայց նշանք պայմանեալք ըստ ժամանակի և ըստ տեղեաց, և նշանակք պատուոյ տուեալք թագաւորացն սպարապետացոյ, ոչ ինչ նուազ պատկառելիք են ժողովրդեան քան զբազմաձեռն ամբոխ թիկնապահաց արքային Պարսից։

Թագաւորութիւն յարատեւեաց 'ի Պարսս. նախ զի բաժանեալ էր յերկուս ազգատոհմս, և զիշխանասիրութիւն միոյն վաղ սանձահարեր նախանձ հակառակութեան միւսոյն և վրէժխնդրութիւն աւագանւոյն։ Այլ դարձեալ զի ոչ երբէք նկրտելով թագաւորաց յաւելուլ զիւրեանց

1 Փաւստոսի, յղ. հաս. Սպարապ. էջ 690։ Հերակղ. պատմ. յղ. Հնութեանց Յունաց, հտ. 6. էջ 2823։ Պլուտարակ. Լական. հտ. 2. էջ 217։

2 Երոդոտ. գիրք Զ. գլ. 57։

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 46։

4 Երոդոտ. անդ. Փաւստոս. Ամգէս. էջ 665։

իշխանութիւն, չեղեն երբէք կասկածելիք ժողովրդեան՝։ Այլ մանաւանդ՝ ի չտիսն կալով սիրելիք են նմա՝ ի կենդանութեան[1], և սգալի է ամենեցուն մահ նոցա։ Այնդ վախճանել թագաւորի, կանայք ընդ փողոցս հնչեցուցանելով անօթս պղնձիս զուժեն զհասարակաց սուգն[2]։ Յաղագ՝ ի շուկայն սիրեալ տարածանեն, և ոչ ինչ գնի անդ՝ ի վաճառ զաւուրս երիս՝։ Արձակին հեծեալք զուժել ընդ աշխարհն, և հրաւիրել յազատաց և՝ ի ստրկաց զայնսսիսի՝ որոց անկ է գալ՝ ի հանդէս յուղարկաւորութեանն։ Իւիւրք բիւրուց ստրկաց խունին անդ, կէսք զնակատան ցտեղով, այլք ողջս առեալ ձիգս, զկական բարձեալ՝ թէ զնաղդ բարձաւ լաւագոյնն՝ ի թագաւորս[3]։ Այակայն բռնաւոր զնա հանարին թշուառականքն զորոց ստիպիցն աշխարել զմահ։ Գիտեն զայն սպարտացիք. բայց զի ինքեանց հարկ է ըստ օրինացն Լիկուրգեայ[4] ժողովել ողջոց և արտասուաց, կամին զի ստրկացն և ծառայից իւրեանց աշխար կեղծաւոր զանկեղծիկ սուգ սրտից իւրեանց յեզանակաւ իմն ածել՝ ի տեսիլ։

Յանկանել թագաւորի՝ ի մարտի, գնեն զպատ-

1 Քսենոփ. Ապեսս. էջ 651։
2 Խսակ. Ճառ՝ ի Փիլիպ. հտ. 1. էջ 269։ Նոյն յՍ. Խաղազ. էջ 431։
3 Երոդոտ. գիրք Զ. գլ. 58։ Պարապ. Թէոկր. ՝ի գեղծեան 2. տող 36։
4 Հերակլ. պոնտ. յՍ. հընդ. Թուեանց Յունաց, հտ. 6. էջ 2823։
5 Երոդոտ. անդ։ Եղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 1։ Պաւսան. գիրք Դ. գլ. 14. էջ 313։
6 Պլուտ. կարգագր. Լակոն. հտ. 2. էջ 238։

կեր նորա 'ի վերայ շքեղ անկողնոյ. և զաւուրս տան ոչ ժողովք զումարին, և ոչ սահմանք դա-տաստանաց զնին[1]։ Այլ զգին 'ի մեղ կամ 'ի մամ թաթաւեալ, և անասպական ածեալ[2] թաղեն օ-բինաւոր կարգօքն 'ի թաղ մի քաղաքին՝ ուր զե-բեղմնեալ թաղաւորացն են[3]։

Ծերակոյտն, որ յերկոցունց թաղաւորացն և 'ի քսանեւութ ծերոց կազմի[4], և զերազոյն ա-տեանն[5]. և անդ սահմանին պատերազմ, խռաղ-զութիւն, նիզակակցութիւնք, և ամենայն իրք ծանանեալ և կարևորք աշխարհին։ Յատուկն ան-դրբ մնանել այնպէս է, որպէս յաթոռ փառաց բազմել. ոչ ումեք շնորհին փառքն այն, բայց միայն որոց 'ի մանկութենէ պայծառացեալ խո-հական իմաստութիւն և վեհ առաքինութիւնքն[6], և 'ի վաթնամեայ տիս հասեալ իցեն. և ժառան-գեն զայն մինչև ցկեանս[7]։ Վասնզի չեր եր-կիւղ տկարանալոյ հանձարոյ նոցա. զի սպարտա-կան կենցաղովն և միաբ և մնամին նուաղ քան այլքն զառամին 'ի Սպարտա։

Ի վախճանել ուրուք 'ի ծերոց ծերակուտին,

1 Երոդոտ. գիրք Զ. գլ. 58։
2 Քսենոփ. պատմ. Յու-նաց. գիրք Ե. էջ 564։ Պլուտ. Ագես. հատ. 1. էջ 618։
3 Պաւսան. գիրք Գ. գլ. 12. էջ 237։ Նոյն անդ. գլ. 14. էջ 240։
4 Կրագ. յոյ. հատ. սպարտ. գիրք Բ. գլ. 3։
5 Պաւսան. անդ. գլ. 11. էջ 231։
6 Դեմոսթ. 'ի Ղեպտին. էջ 556։ Ուլպիան. անդ. էջ 589։ Եպին. 'ի Տիմարք. էջ 288։
7 Ելիատոս. յոյ. հատ. գիրք Բ. գլ. 9. հատ. 2. էջ 330։ Պոլիբ. գիրք Զ. էջ 489։

յառաջամատոյց լինին բազումք յաջորդել նմա. և պարտ է նոցա յայտ առնել անպատրուակ զկողձրս իւրեանց։ Զեռնտու ուրեմն եղև Լիկուրգոս փառասիրութեան [1]։ Եւ կարի խակ քաջայլ այնմ փառասիրութեան, որ փոխարէն սպասաւորութեանն հայրենեաց ինդրէ սպասաւորել նմա և ևս։

Ի հրապարակի առնի ընտրութիւնն, անդր գումարեալ ժողովրդեան ընդ թագաւորս և ընդ ծերս ծերակուտին և ընդ այլ և այլ դասս աւագանւոյն։ Երբաքանչիւր ոք յընտրելեաց առեալ զկարգն վիճակաւ [2], շուրջ գայ անբարբառ զաչս 'ի խոնարհ ունելով, և բարբառք դրուատեաց առաւել կամ նուազ հնչեն 'ի պատիւ նորա։ Եւ ալք թագուցեալք 'ի մերձակայ ուրեք տան, ուստի ոչ ինչ տեսանի, միտ դնեն բարբառոյ դրուատեացն որ լսին. և 'ի վճարել հանդիսին՝ յառաջ մատուցեալ յայտ առնեն յորմ՝ նուազի իղձք ժողովրդեանն սատակագոյն և երկարատև բարբառովն ծանուցան։

Եւ զհետ այսր մրցութեան, ուր առաքինութիւն յառաքինութենէ ևեթ յաղթահարի, յաջորդէ ազգ իմն յաղթանակի։ Ընծեն զյաղթականն ընդ ամենայն թաղս քաղաքին պտակաւոր, և զհետ նորա բազմութիւն երիտասարդաց և երիտասարդուհեաց՝ որ երգեն զառաքինու-

1 Արիստոտ. յզ. հաս. գիրք Բ. գլ. 9. էջ 331։
2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 55։

թիւնս նորա և զյաղթութիւն։ Այլ մնեալ՝ի մեհեանս՝ արկանէ խուսկս, և՝ի տունս ազգականաց իւրոց՝ ուր կարկանդակք և միրգք՝ի սեղանի տարածեալ կան, և ընտանեքն ասեն ցնա. Այս ընկալ զընծայքս, որովք մեծարէ զքեզ աշխարհս՝ի ձեռն մեր։ Այլ ընդ երեկս ամենայն կանայք ազգականք նորա ժողովին՝ի դուռն սրահին, ուր զայ նա ուտել ընթրիս. և հրաւիրեալ առ ինքն զմի՝ի նոցանէ, որ առաւել քան զամենեսին մեծարոյ է նմա, զմի յերկուց մնասցն որ գնին առաջի իւր՝ մատուցանել նմա, և ասէ. Ահեղ յանձն առնեմ զմրցանակս պատուոյ զոր ընկալա։ Այլ այլք առ հասարակ գովեն զընտրութիւնն, և ածեն անդրէն զընտրեալն՝ի տուն իւր մեծարանօք ցանկալեօք։

Յայսմ հետէ պարտ է նորոյ ատենակալին նուիրել զինացուած կենաց իւրոց՝ ի զոծս պաշտամանն իւրոց։ Վէսք պատկանին յիրս աշխարհին, որպէս վերագոյն ցուցաք. և կէսք՝ի զատս ինչ իւրաքանչիւրոց ոմանց, որ պահեալ են առենի ծերակուտին։ Զ՝ի սմանէ են ոչ միայն կեանքք քաղաքացեաց, այլ և ինչք նոցա[1], այս ինքն է պատիւ. զի ստոյգ սպարտացին ոչ գիտէ այլ մեծութիւնս։

Զաւուրս բազումս քննին ոՀիրք մահապարտութեան, զի՝ի սմա սիսալանք՝ անուղղելիք են։

[1] Պլուտ. ՝ի Լիկուրգ. հա. 1. էջ 56։
[2] Նոյն անդ, էջ 55։

Կարծեաք եւեթ ոչ դատապարտի ամբաստանեալն. բայց զանպարտ արձակելոյն խստագոյն եւ առնի դատաստան, եթէ նոր ինչ ցոյցք յանցաւորութեանն լեսոց 'ի յայտ գայցեն[1]։

Իշխանութիւն է ծերակուտին դատապարտելոցք 'ի քաղաքացոց 'ի նախատինս, որով զոկի յաղտութեանց ինչ. նմին իրի լերեսաց ծերոց ծերակուտին ոչ միայն պատկառեն ամենեքին որպէս յառաջինեաց, այլ եւ սարսեն փրկական ահիւ իբրեւ 'ի դատաւորէ[2]։

Եթէ մի 'ի թագաւորաց ամբաստանիցի յօրինազանցութիւն կամ 'ի մտանութիւն օգտի աշխարհին, ընդ քանեւութ ծերոն յատեան գումարին հնգեքին պարէտքն եւ միւս թագաւորն, յարձակել կամ 'ի դատապարտել զնա[3]։ Ա. յլ օրէն է նմա յատենէ անտի 'ի համնիսումբ ատեան աղգին բողոքել[4]։

Պարէտքն կամ վերատեսուչք, յընդարձակելոյ տեսչութեան իւրեանց յամենայն մտաւոր իրաց աշխարհին առեալ զյորջորջումն, են հինգեակ թուով[5]. և փոփոխին ամի ամի, զի մի իշխանութեամբն զեղծիցին[6]։ Ի մուտս տարւոյն,

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 132։ Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 217։

2 Եպին. 'ի Տիմարք. էջ 288։

3 Պաւսան. գիրք Գ. գլ. 5. էջ 215։

4 Պլուտ. յԱգիս, հտ. 2. էջ 804։ Կրագ. յդ. հատ. սպարտ. գիրք Դ. գլ. 8։

5 Սուիդ. 'ի բառն Էֆոր. Պարապ. Թուկիդ. գիրք Ա. գլ. 86։

6 Թուկիդ. գիրք Ե. գլ. 36։ Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 597։

որ սահմանեալ է 'ի ծնունդ լուսնին զկնի աշնայնոյն հասարակաւորութեան, առնուն զիշխանութիւնն [1]. և յանուն աւագագունին 'ի նոցանէ կոչի ամն [2]. զի 'ի ժամանակագրել զդէպս ինչ, շատ է ասել՝ յաւուրս այսր անուան պարեսի անցին իրքս այս։

Յողովրդեան անկ է ընտրել զնոսա, և յամենայն դատուց քաղաքացոց օրէն է ամբառնալ յիշխանութիւնն [3]։ Ինդ առնուլ նոցա զիշխանութիւնն, այնուհետև ժողովուրդն համարի զնոսա պաշտպանս իւր. յայն սակս իսկ և յաճախէ օրըստօրէ զարտունութիւնս նոցա։

Լիկուրգոս, որպէս յառաջ ասացաք, զատեանս զայս ոչ եմոյծ 'ի յօրինուած սահմանադրութեան իւրոյ. այլ երևի յետ իրր հարիւր և յիսուն ամաց թողեալ թագաւորաց սպարտացւոց բազում ինչ 'ի կարևոր մասանց իշխանութեան իւրեանց 'ի պարէտս, և ապա ջանիւք Ալստերոպեայ ուրումն աւագագունի նոցա զօրացեալ իշխանութեան առեալին [4]։ Որ և յաւարէ իշխանութեան ծերակուտին և թագաւորաց տակաւ մեծացեալ՝ բերէ արդ յինքեան զբարձրագոյն իշխանութիւնս, զդատաւորութիւն, զիսը-

1 Տոռուէլ. յղ. շրջանաց, հատ. 8. յոդ. 5. էջ 320։
2 Պաւսան. գիրք Դ. գլ. 11. էջ 232։
3 Արիստոտ. յղ. հատ. գիրք Բ. գլ. 9. հատ. 2. էջ 330։ Գիրք Դ. գլ. 9. էջ. 374։
4 Պլուտ. յԱգիս, հատ. 1. էջ 808։

նամակալութիւն ուղղութեան բարուց և զօրի-
նաց, զտեսչութիւն 'ի վերայ այլ աւագանոյն,
և զկատարումն վնասոյ հանմխումբ ժողովոյ աղ-
ղին։

Լուսեան պարետայ գնի 'ի հրապարակի [1]. և
զօր հանապազ անդր գումարին տալ վնիռ զամ-
բաստանութեանց, և սահմանել զվնաս իւրա-
քանչիւրոց ոմանց [2]։ Խչխանութիւնս այս յառա-
ջագոյն պահեալ էր թագաւորաց [3]. այլ յաւուրս
առաջին պատերազմին Մեսենիոյ հարկ լեալ նոցա
կալ յանախս 'ի բացեայ, աւանդեցին զայն պա-
բետայ [4]. այլ անկ է նոցա միշտ առընթեր կալ
դատաստանաց, և տալ զվարկ իւրեանց [5]։

Լաբ քանզի սպարտացւոց սակաւք են օրէնք,
և 'ի հատարակաց պետութեան հանապազօր 'ի
վեր երևին յոռութիւնք նորանորք, հարկ է դա-
տաւորաց թելադրութեամբ բանին ուղղել յա-
նախս զկրաւունս։ Ալին իրի յարմն հեռակ անի-
մաստք ոմանք սպրդեալ մտին 'ի կարգս դատաւո-
րաց, յանախեցին կասկածանք իրաւացիք զանի-
բաւութենէ վնասոյ նոցա [6]։

Պարետայ հոգ մեծ է զգաստիարակութենէ
մանկտւոյն. հանապազօր լրտեսին անձամբ զի մի

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 209։
11. էջ 231։
2 Պլուտ. յԱգիս, հտ. 4. 4 Պաւս. անդ. էջ 808։
էջ 807. Նոյն առակ. Լակեն. 5 Եղոգ. գիրք Զ. գլ. 63։
հտ. 2. էջ 21։ 6 Արիստոտ. յբ հաս. գիրք
3 Պաւսան. անդ. գլ. 3. էջ Բ. գլ. 9. էջ 330։

մանկտին փարիկասուն լեցի [1]. ընտրեն 'ի նոցանէ զլեսաւորս առ 'ի զարթուցանել 'ի նոսա նախանձ [2]. և երևին 'ի զլուխ նոցա 'ի հանդիսի ուրեք զինուորական և կրօնական տօնի, որ կատարի 'ի պատիւ Աթենասայ [3]։

Ա՛յլ աւազանին տեսուչք են կանանցն գնացեալ [4], իսկ պարէտք քաղաքացոց ամենեցուն։ Ամենայն որ ինչ կարէ իսկ պնասակար լինել բարեկարգութեան հասարակաց և սոլորութեանց հաստատելոյ, ընդ դատաստանաւ նոցա է։ Բազումք կոչեցան 'ի նոցանէ յատեան վասն վերջանալոյ 'ի պարտուցն իւրեանց [5], և բազումք վասն զթնամանս յանձն առնլոյ անդիմադարձ [6]. առաջինքն կրտամբեալք վասն անմեծար առնելոյ զօրէնս, և վերջինքն վասն անփոյթ առնելոյ ըզմեծարանս անձանց։

Բազում անգամ զհիւրս ընկալեալս 'ի հանդէս խաղուց՝ արգելին զեղջանել հանձարովն իւրեանց։ Ոմն 'ի հնարտարախօսաց յառաջամատոյց եղև հնռել զոր և պէտ իրաց զօրն ողջոյն. և նոքա հալածեցին զնա 'ի քաղաքէն [7]։ Հալածեցաւ երբեմն և Աբիդոսու վասն առանդելոյ խմաստ ինչ վատութեան 'ի գիրս իւր։ Եւ Տիմոթէոս

1 Ագատարք. առ Աթենէոսի, գիրք ԺԲ. էջ 550։
2 Քսենոփոն, յոլ. հատ. Սպարտ. էջ 679։
3 Պոլիբ. գիրք Դ. էջ 303։
4 Հիւսիսք. 'ի բառն Ա՛բրոնչ.
5 Պարապ. Թուկիդ. գիրք Ա. գլ. 84։
6 Պլատ. կարգադր. Լաքոն. հատ. 2. էջ 239։
7 Պլուտ. կարգադր. Լաքոն. հատ. 2. էջ 239։

երաժիշտ մինչ դեռ գեղգեղանօք նուագայն ըզ-
մայլեցուցանէր զսպարտացիս գրեթէ յաւուրս
մեր, մի 'ի պարետաց մատուցեալ առ նոս կտրոց
'ի ձեռին՝ ասէ. Դատաւէնիք 'ի վերայ քո ածաւ՝
հատանել զլոքեսին 'ի լարից քնարիդ, ընտրեա
քեզէն զորս հատից [1]։

Սոքիմքք 'ի միտ առնուլ է թէ որպէս խստիւ
ատեանն այն պատուհասէր երբեմն զյանցանս,
որ արդեամբք վնասակարք էին օրինաց և բարուց։
Լաւ զարդիս իսկ, մինչ զեղծումն ամենայն ուրեք
սպրդի մտանել, ոչ ինչ նուազ ահաւոր է ատեա-
նէն այն՝ թէպէտ և ոչ որպէս յառաջն մեծարոյ.
և խոտորեալքն յառաջնոց իւրեանց խնամտիցն՝ զա-
մենայն հնարս հնարին խոյս տալ յերեսաց դատա-
ւորացս այսոցիկ, որք այնչափ ևս առաւել խիստք
են առ այլս՝ զի ներողագոյնք երբեմն գտանին
անձանց [2]։

Պարետաց անկ է պահանջել 'ի բազմաց յա-
ւագանւոյն զհամար տնտեսութեան իւրեանց [3],
խափանել յիշխանութենէ զօրինազանցս յաւա-
գաց, ձգել զնոսա 'ի բանտ, մնանել բարձրագոյն
ատենի, և դատափետել զնոսա մինչև 'ի վտանգ
մահապարտութեան [4]։ Լաւ մնասամբ ինչ իշխա-
նութեան այսորիկ վարին ընդդէմ թագաւորաց,

[1] Պլատ. կարդագր. Լա-
կոն. հա. 2. էջ 238։

[2] Արիստոտ. յդ. հաս.
դիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ
330։

[3] Նոյն անդ։

[4] Քսենոփոն, յդ. հաս
Սպարտ. էջ 683։

նուաճեալ զնոսա ընդ իւրեւտիք յեղակարծ ինն և այլանդակ օրինակաւ։ Յամն ինն ներբեակս 'ի պարզ և 'ի հողմախառաղ զիշերի բազմեալ 'ի դիւրի, զիտեն զընթացս աստեղաց, և եթէ գոլորշի ինչ հրապարակ ընդ օդս տեսանիցեն սլացեալ, համարին աստղ 'ի կայիցն խախտեալ վասն թաւաւորացն յանցանելոյ առ դիս։ Այլ քարշեալ զնոսա յատեան, ընկենուն յանթառոյ. և ոչ ևս դառնան նոքա յիշխանութիւնն, մինչև դեղփական հարցկին արձակեալ զնոսա 'ի յանցանացն[1]։

Թաղաւոր ամբաստանեալ 'ի կասկածանս ծանուցանս յանցանաց ինչ ընդդէմ աշխարհին զոծելոյ, կարող է ստուգանել միանգամ և երկիցս կոչոյն յանդիմանն լինելոյ ատենի պարետացն. այլ յերրորդումն եկակոչի՝ հարկ է նմա հնազանդել[2]. ապա թէ ոչ, օրէն է նոցա կալեալ ածել զնա 'ի դատաստան[3]։ Այլ թէ ոչ յոյժ ծանուցեալ իցեն յանցանքն, իւրովք սահմանեն նոցա պարկաք զպատուհաս. որպէս ոչ բազում ժամանակք են, զի զ'Գեսիդայոս արքայ դատապարտեցին 'ի տուգանս վասն առաքելոյ նոցա պարգևս իւրաքանչիւր ումեք 'ի ծերոց ծերակուտին՝ 'ի մեռանել նոցա յիշխանութիւն[4]։

1 Պլուտ. յԱդիս, հտ. 1. էջ 800։
2 Նոյն անդ, էջ 809։
3 Թուկիդ. գիրք Ա. գլ. 131։ Նեպոս. 'ի Պաւսան. գլ. 3։
4 Պլուտ. յդ. Եղբայրութիւնեան, հտ. 2. էջ 482։

Եւ իշխանութիւն իսկ մնհու 'ի ձեռս է նոցա. քանզի կոչէն Ժողով Համախուռք[1], և առնէն թուարկութիւն[2]. և զզօրութիւն նոցա անդ մնրթի է 'ի միտ առնուլ 'ի Համեմատութենէ իսկ հրովարտակացն զոր Հանեն անտի, ընդ վՃիռս զոր յատենի իւրեանց տան։ Վանզի ասա 'ի սկիզբն դատաւիճքին գնի. ՀաՃոյ թուեցաւ արքայից և պարետաց. իսկ անդ, ՀաՃոյ թուեցաւ պարետաց և Համարէն Ժողովոյն[3]։

Լոցա յանդիման լինին հրեշտակք աղգաց թշնամեաց և նիզակակցաց[4]։ Լոցա է հոգ զբաժողովոյ և յուսոյ զօրականին[5], և նոքա յղեն զօրավարին զՀրահանգս մնրտին[6], ընդ որում և երկուս ոմանս յինքեանց կարգեն՝ լրտեսել ըզգնացս նորա[7]. և է ուրեք՝ զի դադարեցուցանեն գնոսա յասպարիզի յաղթութեանցն, և կոչեն գնոսա յետս 'ի շահ անՃանց ինչ կամ օգտի աշխարհին[8]։

Բայսան իշխանութիւն յաՃախէ նոցա մեծարանս. որում արժանի իսկ են պատուելով ըզ-

1 Բանեղոի. պատմ. Յունաց, գիրք Բ. էջ 460։
2 Թուկիդ. գիրք Ա. գլ. 87։
3 Բանեղոի. անդ, գիրք Գ. էջ 491։
4 Նոյն անդ, գիրք Բ. էջ 459 և 460։ Պլուտ. Լեգիս, հտ. 1. էջ 801։
5 Բանեղոի. անդ, գիրք Գ. էջ 503։ գիրք Ե. էջ 556. 563, 568։ Պլուտ. առակ. Լակոն. էջ 215։
6 Բանեղոի. անդ, էջ 479։
7 Նոյն անդ, գիրք Բ. էջ 478։
8 Թուկիդ. գիրք Ա. գլ. 131։ Բանեղոի. Լեգիս. էջ 657։ Պլուտ. անդ, էջ 211։

գործս առաքինութեան [1], և նախնեացն խնամ-
տից պատկառ կալով [2], և արիութեամբն՝ որով
յառաջքան զաւուրս զայսոսիկ ցրեցին զդաւա-
ճանութիւնս, խափանելով զմօտալուտ 'ի վերայ
հասեալ խռովութիւն աշխարհին [3]։

Օդեմ կալան նոքա ընդ ամն բազում իշխա-
նութեան ծերակուտին և թագաւորաց, և ոչ
դադարեցին 'ի կալոյ նոցա ոսոխ մինչև խնամա-
կալքն նոյ կացին։ Բդ հնարքս այսոքիկ և յատիրշ-
տակութիւնք, որոց անմարթ էր յաջողել այլ-
ոք առանց հեղեղս արեան գնացուցանելոյ,
որպէս 'ի Սպարտա թեթև ինչ հերձուածովք
վճարեցան։ Բանզի պարէտք ազատութիւն ա-
ռաջի դնէին ժողովրդեան. իսկ ոսոխք նոցա
չքաւորք իբրև զժողովուրդն, վարէին խոստա-
նալնմն մեծութիւնս։ Զի զի դարձեալ սէր միա-
բանութեան մուծեալ օրինաքն Լիկուրգեայ այն-
պէս հզօր էր քան զառանձին խնամն օգտի, զի
նախնի առագանին նախանձաւոր յորդորելոյ օրէ-
նակաւ իւրով զժողովուրդն 'ի հնազանդութիւն,
պարտ համարէր հրաժարել յիւրաքանչ իւրոց՝
իշխանասիրութեան պարտեալն տեղի տալով [4]։

Նմին սիրոյ միաբանութեան յորդորեալ ժո-
ղովուրդն, ոչ երբէք վերջացաւ 'ի մեծարելոյ ըզ-

1 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 615։
2 Քսենոփ. պատմ. Յու-նայ, գիրք Գ. էջ 496։
3 Նոյն անդ. էջ 494։
4 Քսենոփ. յոլ. հատ. Սպարտ. էջ 683։

թագաւորս և զծերակոյսն՝ թէպէտ և կասկածեալ 'ի նոցանէ զիշխանութիւն։ Հանդէս իմն մեծաշուք, որ ամիս յամենայ կատարի, յուշ ածէ նման զարարս մեծարանացն։ Բանզի թագքն ինքնագիմաբար, և պարտէրք 'ի դիմանց ժողովրդեան երդնուն հրապարակաւ, նոքա յիշխեալ ըստ օրինաց, և սոքա 'ի պաշտպանեալ իշխանութեան արքունի՝ ցոլչափ կայցէ յօրէնս '։

Պարտացւոց են օգուտք ինչ նոցին սեփականք, և են որ հասարակաց այլ և այլ քաղաքաց Լակոնիոյ. նմին իրի և կրկին ազգք ժողովոց են նոցա, յորս առընթեր կան միշտ թագաւորք և ծերակոյտն և այլ և այլ դասք աւագանւոյն։ Լինի զժառանգութենէ թագաւորութեան խնդիրքն առաջի կայցեն, կամ ընտրութիւն աւագանւոյ և կամ ընկերցումն ուրուք յատագութենէ, կամ վէճք հրապարակական յանցանաց, կամ սահմանադրութիւն կրօնական կամ օրինական, սպարտացիք ևեթ գումարին 'ի ժողովս, և կոչի այն ժողովակ [2]։ Լինէ գումարի ժողովն այն ըստ սովորութեան ամիս յամենայ 'ի լրման լուսնի [3], իսկ ըստ ոչ սովորութեան՝ յորժամ պէտք ինչ պահանջիցեն։ Ասէ քան զնորհել ժողովոյն զիրաց՝ պարտ է ծերակուտին տալ զայնցանէ վէճս [4]. իսկ

1 Քսենոփոն, յղ. հաս. Սպարտ. էջ 690։
2 Նոյն պատմ. Յունաց, գիրք Գ. էջ 494։
3 Թուկիդ. գիրք Ա. գլ. 67։
4 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 40։ Նոյն յԱգիս, էջ 798 և 800։

եթէ երկպառակութիւն կարծեաց խափանեսցէ զվիճիւն, յայնժամ սպարէտք ածէն զկրսն 'ի ժողովն [1]։

Ժողովականացն ամենեցուն անցեալոց զերեսնամենիւք անկ է յայտ առնել որ ինչ իւրաքանչիւր ումեք հաճոյ թուի. իսկ կրտսերագունից ոչ է օրէն խօսել յայտնապէս [2]։ Հարկ է զի և բարք անստգամանելիք իցեն նոցա. զի յիշի տակաւին ոմն, որոյ երբեմն զժողովուրդն Ճարտարախօսութեամբ իւրով մոլորեցուցեալ, և ապա իբրև խորհուրդ քաջ առաջի առնէր, մի ոմն 'ի ծերոց ծերակուտին յոսն եկաց սրամտեալ ընդ ներոզամտութիւն ժողովոյն՝ զի մոլորեցուցչին բարբառոյ լսէր, եւ այլում ումեք առաքինուց զնայն խորհուրդ առաջարկել, և ասէ. Մի՛ լսցի սպարտացւոց խրատու խաբուսիկ Ճարտարախօսին վարել [3]։

Լինի խորհուրդ պատերազմի կամ խաղաղութեան և կամ ուխտի նիզակակցութեան առաջի կայցէ, գումարի աշխարհաժողով յոր հրեշտակք յամենայն քաղաքաց Լակոնիոյ ժողովին [4], յաՀախ և 'ի նիզակակից ազգաց [5], և ոչք օգնականութիւն 'ի սպարտացւոց զան խնդրել [6]։ Մինդ

1 Պլուտ. յԱգես. էջ 799։ Նոյ, գիրք Զ. էջ 579։
2 Լիբան. հտ. 1. էջ 558։ 5 Նոյն անդ. գիրք Ե. էջ 554, 556, 558, 590։
3 Եսբին. 'ի Տիմ. էջ 288։ 6 Նոյն անդ. էջ 554։ գիրք Զ. էջ 579։
Պլուտ. յՊ. ունենդր. հտ. 2. էջ 41։
4 Քսենոփ. պատմ. Յու-

քննին պահանջմունք իւրաքանչիւրոց և բողոքք զմիմեանց, զլժել դաչանց միաբանելոց ազգայ, հնարք հաշտութեան, խորհուրդք պատերազմաց, և հարկապահանջութիւն։ Ասաւում այն է զի թագաւորք կամ ծերակոյտն առաջնորդ են անդ բանին. զի իշխանութիւն նոցա յորդորիչ է յոյժ, և առաւել պարետացն։ Քննել իրացն ըստ բաւականին՝ մի 'ի պարետաց հարցանել ըզկարծիս ժողովոյն, և անդէն բիւրք բիւրուց հնչեն բարբառք հաւանականք կամ արգելականք։ Այլ իբրև պարեան բազում անգամ փոքձեալ և ոչ կարէ ընտրել զբազմագոյն կողմն, թուէ զերկաքանչիւր կողմանն՝ բաժանել զնոսա 'ի միմեանց[1]։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Զօրինացն սպարապետաց։

Ասանիթիանն գրեթէ միշտ հակառակ է օրինաց[2]. զի նա հնարի յարդարել զբարեկենդանութիւն իւրաքանչիւր ուրուք ինքնուրոյն, իսկ օրէնքք զմիաբանութեամբք մարդկան յածին։ Ասութիւնն բազմակերպս յեղու զբարս մեր և զյաժարութիւնս. իսկ օրէնքք միումն ևեթ ուշունին, 'ի միաբանել ըստ կարի զամենեցուն իրաց

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 87։
2 Դեմոսթ. Ընդիսատակ. էջ 830։

և զարս։ Հարկ է ասպա օրէնսդրին, քանզի ա-
ռաջի կայ նմա եղծանել կամ զէթ միաբանել
զներհակն, հզօրագոյն յորդոր և կարևորագոյն
մասն քաղաքականին համարել զարոյականն,
հասանել՝ի վերայ ձեռակերտից ընութեան ան-
զէն յելս նոցա՝ի լոյս, կատարել զձև նոցա և
զհամեմատութիւնս, և առանց եղծանելոյ զնա-
խատիպ կերպարանսն՝ ամբել զնոսա. որպէս զի
մարդ անձնիշխան անցեալ ընդ կորզան կրթանի
նորա՝ լեցի քաղաքացի ազատ։

Օ՛ի արք իմաստունք ձեռնհաս եղեն երբեմն
զվայրագասուն մարդիկ ցան և ցիր սփռեալ ընդ
անտառս՝ ածել՝ի միաբանութիւն. և զի զօրհ-
նապաղ ուսուցիչք հանձարեղք կրթեալ ըստ
հաճոյից իմն կերպարանեն զարս մանկտւոյ՝ որ
յանձն է նոցա, չէ ինչ զարմանալի. այլ քանի՛
զօրութեան հանձարոյ սկսք էին առ՝ի փո-
խակերպել զազգ կերպարանեալ, և քանի՛ ա-
բիութեան՝ առ՝ի համարձակել ասել ցնա. Թող
ամիրսեցից զպիտոյս քո յանհրաժարելի կա-
րևորսն, և զևս դժնդակագոյն ներհակս կրից
քոց՝ի քէն պահանջեցից. մի՛ևս լեցին՝ի քեզ
հրապոյրք հեշտութեան. փոխանակեսցես զգրը-
գանս կենաց՝ի տաժանաւոր և՝ի դառնաշխատ
հրահանգս։ Օ՛կիսոց կողոպտեցից զինչս առ՝ի
բաշխել այլոց, և աղքատն բարձր՝ի գլուխ որ-
պէս զմեծատունն Ամեմտցի։ Հրաժարեսցես՝ի
կարծեաց քոց և յախորժակաց և՝ի սովորու-

թեանց և որ ինչ քեզ անկ թուին, ևս և 'ի զո-
բովականացն զեղեցիկ զգացմանց՝ զորս բնու-
թեանն խոր 'ի սիրտ քո դրոշմեալ է։

Բայց ահա [Լիկուրգոս զայս ամենայն սրար
սահմանադրութեամբքն բնաւ իսկ հակառակօր
այլոց ազգաց. ոչ զի որոց ուղղորինն 'ի Սպար-
տա, ընդ նոր ինն երկնաւ թուի նոցա շրջել։ Ա-
տարութիւն իրացն յորդորէ զնոսա 'ի նկատել
զայնս. և շլանան անդէն միտք նոցա 'ի խորա-
զնին տեսութենէ և 'ի վսեմութենէ հանձարոյն՝
որ ցոլանան յօրէնս [Լիկուրգեայ։

Ոչ վիճակաւ օրինադրեաց ընտրել զաւագա-
նին, այլ թուարկութեամբ [1]. կապտեաց զյարգ
'ի մեծութեանց [2], և զնախանձայուզութիւն 'ի
սիրոյ [3]։ Թէպէտ և սահմանեաց նշանակս ինչ
պատուոյ, այլ պետութիւնն լի նախանձու նորա
ոչ երբէք վատնեաց զայնս, և ոչ լաւորեարն իշ-
խեաց հետամուտ լինել այնմ. չքնաղագոյն 'ի
վարձս գտաւ գովութիւն, և նախատինք՝ դժբ-
դակագոյն 'ի պատուհաս։ Ցուաւ երբէք երբէք
և պատիժ մահու, այլ յետ խիստ քննութեան. զի
չէր ինչ պատուականագոյն քան զկեանս քաղաքա-
ցւոյ։ Այս դատաւնիքն զիշերային 'ի բանտի կատա-

1 Խոսք. հանեթ. հտ. 2. էջ 261։ Արիստոտ. յՂ. հատ. դիրք Դ. գլ. 9. հտ. 2. էջ 374։

2 Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 239։

3 Նոյն 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։

4 Թուկիդ. գիրք Ա. գլ. 132։ Պլուտ. առաք. Լակոն. հտ. 2. էջ 217։

բերցաւ [1], զի մի գուցէ արիութիւն յանցաւորին 'ի գութ զտեսօղս ածցէ. և սահմանեցաւ խեղդիւ զրաւել նմա 'ի կենաց [2], զի անօգուտ թուէր յաճախել զտանջանսն։

Յուցից յետոյ զբաղմաղոյնս 'ի կարգադրութեանցն Լիկուրգեայ. այլ աստանօր զբաշխից վիճակացն առաջի կայ ինձ ասել։ Բաշխարկութիւն իրացն յարբոյց աղմուկ մեծ, այլ յետ զայրագին հակառակութեանց՝ բաժանեցան սահմանք Պարտայ յիւրն հազար վիճակս [3], և Մեսցուած երկրին Լակոնիոյ յերեսուն հազար։ Վիճակաց իւրաքանչիւր սահմանելոց միւսմ միւսմ 'ի տանուտերաց՝ պարտ էր պտղաբերել, բաց 'ի գինւոյ և 'ի ձիթոյ, եօթանասուն չափ գարւոյ տանուտերառն, և երկոտասան տիկնանչ։

Օ՛ետ այսր սահմանադրութեան պարտ հանարեցաւ Լիկուրգոս հեռանալ յաշխարհէն, մինչև դադարեսցեն յոյզք խռովութեան ոգւոց։ Չ՛ի դառնալն իւրում անդրէն՝ տեսեալ 'ի դաշտս Լակոնիոյ զբարդս որպիսի հաւասարս, գրեթէ նովին խարոցաւ հեռի 'ի միմեանց դիզեալս, թուէր նմա տեսանել կալուած իմն լայնածաւալ՝ հաւասարաբաժին 'ի մէջ եղբարց զերեսն բաժանելով. և սոցա թուէր տեսանել զՀայր, որ հա-

[1] Երոդոտ. գիրք Դ. գլ. 146։ Վաղ. Մաքս. գիրք Դ. գլ. 6։

[2] Պլուտ. յԱգիս. հտ. 1. էջ 803 և 804։

[3] Ցեակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԻԴ։

[3] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 44։

ասսար գթով բաշխեր պարգևս որդւոց իւրոց [1]։

Ա. յլ զիսնդր մարթէր հաւասարութեանս այս միկ կալ. նախ քան զ Լիկուրգոս օրէնսդիրն կրետացւոց չիշխեաց սահմանել զայն, թողեալ ազատ զստացուածս [2]. և յետ Լիկուրգեայ Փաղէաս քաղկեդոնացի [3], Փիլոզայոս Թեբացի [4], և Պլատոն [5], և այլ ևս օրէնսդիրք և խմստասէրք հնարս հնարեցան, այլ ոչ բաւական եղէն լուծանել զկնճիռն։ Լիկուրգեայ պահեալ էր փորձ նորանշան փորձել, և միաբանել զներհակս. քանզի նա օրինադրէ ըստ թուոյ տանուտերաց ժառանգութիւնս [6], և այլով իւիք օրինադրութեամբ շնորհելով ազատութիւնս որոց իցեն ուստերք երեկք, և առաւել ևս՝ որոց իցեն չորք [7], հնարի եղծանել զհաւասարութիւնն՝ զոր սահմանէ, և սահմանել ընդ Հոխս և ընդ աղքատս զխտիր զոր եղծանէ։

Ի ժամանակի յորում էի ես ի Սպարտա, այլ այլեալ էր կարգ ժառանգութեան ազգատոհմից՝ հրամայարակաւ Լսիտադեայ պարէտի, կամելով նորա այնու վերէ ժ ինդրել յորդւոյ իւրմէ [8]։

1 Պլուտ. ի Լիկուրգ. հտ. 1. էջ 44։ Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 226։ Պորփիւրյ. ժուժկալ. գիրք Դ. յոգ. 3. էջ 300։

2 Պոզիբ. գիրք Զ. էջ 489։

3 Արիստոտ. յզ հաս. գիրք Բ. գլ. 7. հտ. 2. էջ 322։

4 Նոյն անդ. գլ. 12. էջ 337։

5 Պղատ. յդ. օր. գիրք Ե. հտ. 2. էջ 740։

6 Պոզիբ. անդ։

7 Արիստոտ. անդ. գլ. 9. հտ. 2. էջ 330։ Եղիան. զանպատմ. գիրք Զ. գլ. 6։

8 Պլուտ. յԱգիս, հտ. 1. էջ 797։

Այլ վասն զի չեղև ինձ փոյթ ուսանելոյ զՀին կարգս նոցա, չկարեմ ասասանօր բացատրել զմիտս օրէնսդրին՝ եթէ ոչ 'ի սկզբանէ օրինաց նորա անդրէն 'ի վեր ընթանամ։

Այլ էր օրէն տանուտեարն գնել կամ վաճառել մանն ինչ 'ի վիճակէ [1], ոչ տալ զայն 'ի կենդանութեան և ոչ թողուլ կտակաւ ում կամէրն [2]. և ոչ օրէն էր նմա բաժանել զայն որդւոցն [3], այլ անդրանկան նորա անկ էր ժառանգել զայն [4], որպէս յարքունի զարմէ անդրանիկն ժառանգէ զթագ [5]։ Այլ որպէս ասա կէին այլ որդիքն. օրէնք որ առ կենդանութեամբ հօր նոցա խնամէին զկէտս նոցա, 'ի մեռանել հօրն անտէս արդեօք առնէին զնոսա։

Ա. Թուի թէ օրէն էր նոցա ժառանգել զընտրուկս և զմնչս և զամենայն ազգի ազգի կահս։ Ի զնոց կարասւոյն մարթէր արդեօք առնել նոցա զգեստս իւրեանց. զի հանդերձք զորս զգենուին՝ դիւրագինք էին յոյժ, որպէս զի և կարի խակ չբաւորաց մարթել հայթայթել զայն անձանց [6]։

Բ. Ի Հաղաքացւոց ամենեցուն օրէն էր հաղորդել 'ի սեղան հասարակաց, և հասանէր իւրա-

1 Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 7. էջ 329։
2 Պլուտ. ՅԱգիս, հտ. 1. էջ 797։
3 Հերակղ. պոնտ. յղ. քաղաքական. Նախնի Յունաց, հտ. 6. էջ 2823։
4 Եմմ. ստորագր. հաս. Սպարտ. 'ի Նախնումն, հտ. 4. էջ 483։
5 Երոդ. գիրք Ե. գլ. 42.
6 Արիստոտ. անդ. գլ. 9. հտ. 2. էջ 374։ Բաեռնոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 682։

քանչիւր նոցա տալ չափ գաղտոյ իբր երկոտասան կեղեր։ Եթէ զի տանուտէրքն սպարտացիք իւրաքանչիւր առնուին 'ի վիճակաց իւրեանց եօթանասուն կեղեր, իսկ կանայքն նոցա երկոտասան, տպա յանելեալն 'ի տանուտէրաց բաւական էր 'ի կերակուր հնգից որդւոց։ Եւ քանզի չմարթէր Լիկուրգեայ բազմորդիս զտանուտէրաս վարկանել, 'ի զէպ է կարծել՝ զի անդրանկանն պարտ էր խնամել զպէտս ոչ միայն որդւոց իւրոց, այլ և զեղբարց։

Գ. Կարծելի է, զի կրտսերագունից և եթէ որդւոց օրէն էր առնուլ կնութեան զգաստերս, որք առ 'ի չգոյէ ուստերաց ժառանգէին զհայրենի վիճակս. զի առանց այսր զգուշութեան՝ մարթէր ժառանգութեանց խառնել 'ի մի։

Դ. Պատուոքք յետ քննութեան անդէն 'ի ծնանել նոցա սահմանէին նոցա զվիճակս՝ ազգատոհմից՝ որ անՀետ լեալ էին։

Ե. Եւ ժամանակս յայսոսիկ պատերազմունք յաՀախաւորքն զբազում ազգատոհմն անՀետ արարին. իսկ յառաջ քան զայս գաղթականք 'ի տարբ աշխարՀս գնային։

Զ. Եւ ինչ ծախք էին ամուսնացուցանելոյ զդքս տերս, քանզի արգելեալ էր չպատրաստել նոցա օժիտ՝։

¹ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։ Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 227։

² Յուսոֆն. գիրք Գ. գլ. 3։

է. Այր միաբանութեան և անտեսութիւն անձնիւր օգտի՝ առնէր յեղանակաւ իմն զամենայն ինչ հասարակաց 'ի քաղաքացիս [1], և բազումս այն էր զի ոչ այլով իւիք առաւելագոյր քան զընկերս, բայց միայն ձեռնհաս գոլով ընդ զպէտս նորա կամ նպաստել ոլիտոյիցն։

Յորքան ժամանակս այսոքիկ անեղծ կային, սահմանադրութիւն Լիկուրգեայ զդիմուներ հաբուաձոց՝ որ սկսանէին տատանել զնա։ Այլ՝ այսուհետև կալցի զնա անտատան, յորմէ հետէ հրովարտակաւ պարետաց, որպէս ասացի, հրամանն եղև քաղաքացոց իւրաքանչիւր՝ տալ օժիտս դստերաց իւրեանց, և բաշխել իշխանաբար ըզվիճակս իւրեանց։ Հանապազօր ձեռաց 'ի ձեռս փոփոխին ժառանգութիւնք, և զուգակշռութիւն մեծութեանց և հանդիստապատիւ հաւասարութեան ոչ ևս է։

Այլ անդրէն 'ի կարգադրութիւնս Լիկուրգեայ դարձայց։ Վիճակք երկրի, ազատք որպէս զմնարդիկ, ապահարիկք էին. ոչ գոյին գանձք աշխարհին [2], այլ 'ի դէպս ուրեք քաղաքացիք ձեռն տային ըստ կարի [3], և էր ուրեք զի ապաստան լինէին 'ի հնարս, որ զանհնարին չքաւորու-

1 Քսենոփ. յլ. հաս. Սպարտ. գլխք Ա. գլ. 8։ Պլուտարք. առ. էջ 679։ Արիստոտ. յլ. հաս. Նմին, գլխք Ա. գլ. 141։ գլխք Բ. գլ. 5. էջ 317։ Պլուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 217։

Պլուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 238։

3 Արիստոտ. անդ. գլ. 9։

2 Արիստ. առ Թուկիդ. հա. 2. էջ 331։

թիւն նոցա յայտ առնէր։ Հրեշտակք 'ի Պատմոսէ եկին երբեմն խնդրել զրսան 'ի փոխ. և Հասանխմբեալ ժողով սպարտացւոց, առ 'ի չգոյէ հնարքից, սահմանեցին պահս ամենեցուն՝ ազատաց և ստրկաց և անասնոց իսկ ընտանեաց. և որ ինչ 'ի խնայելոյ անտի յաւելան, ետուն հրեշտակացն'։

Յմենայն ինչ տեղի տայր հանձարոյն Լիկուրգեայ. ընչասիրութիւն տակաւ անհետանայր, և կիրք բռնաւորք ոչ ևս աղմկէին զբարեկարգութիւն աշխարհին։ Բայց խաղաղութիւնն այն յաւելայր 'ի թշուառութիւնս, եթէ ոչ օրէնսդիրն անշարժ հաստատէր զայն։ Օրէնք միայնակ զգործս զայս մեծ գործել ոչ կարէին. արհամարհութիւն ոչ յոյժ կարևորայն, և զկարևորս ընդ հուպ գնէ յարհամարհանս։ Օրէնք եթէ կարի յոյժ բազումք իցեն, եթէ բազում ինչ լուիցեն, կամ նսեմանայցեն եթէ տացեն պատգամս, եթէ դատաւորաց 'ի դէպ իցէ տալ զմեկնութիւն նոցա, և քաղաքայնոց տրանջել զնոցանէ, և եթէ ամենայն ուրեք և 'ի դուզնաքեայս յաւելցեն զսրբատաբեկ ստոյգ սպառնալեաց 'ի կարկանդել զազատութիւն մեր, 'ի զուր այնոքիկ 'ի վէմն դրոշմին՝ անդրոշմելիք 'ի սիրտս։

Լիկուրգոս խելամուտ լեալ անդիմադարձ զօրութեան տպաւորութեանց, որ ազգին 'ի մեզ 'ի մանկութենէ և յամենայն կեանս, ընտրեաց

1 Արիստոտ. յղ. անանս. հտ. 2. էջ 503։

զկարգաւորութիւն օրէնսցն՝ վկայեալ 'ի փոքանց 'ի Աբեակ։ Բ.Անդր մանկտին դաստիարակեալ 'ի միասին նոցին կրթութեամբ յիմաստս անցեալս յանդիման աչաց առաջանորդն և ժողովրդեան, ուսանին զպարտս իւրեանց 'ի կատարել անդ զայնոսիկ, և ապա սիրեն զնոսա 'ի սովորելն 'ի նոսին, և միշտ պատկառին 'ի նոցանէ՝ տեսանելով յամենեցունց զնոսա պաշտեալ։ Սովորութիւնք ժամանակաւ առնուն զօրութիւն անյաղթելի, հնացեալ և աշխարհակալեալ. և մշանջենաւորութեամբ օրինակաց, զոր առնուն և մատուցանեն միմեանց քաղաքացիք, այր ընկերի իւրում՝ օրէնսդիր լեալ՝ կացցեն իրերաց կանոն կենդանի։ Եւ 'ի հնազանդութիւն համարեսցին նոցա տեղի տալ զօրութեան սովորութեանն, և ազատաբար համարեսցին գործել՝ 'ի գործելն անձիկն։

Ապա շատ իցէ օրէնսդրի սահմանել ըստ մասանց տեսչութեան սակաւ ինչ թուով օրէնս՝ [1] որ զբազմաց լցցեն զտեղի, հաստատուն ունելով զսովորութեանցն իշխանութիւն՝ հզօրագոյն յոյժ քան զօրինաց։ Ապրեցեալ նա մի երբէք արձանագրել զօրէնսն [2] առ 'ի չհաստանելոյ սահման առաքինութեանց, զի մի զկատարելն որ ինչ ոք պարտիցի՝ բաւական համարեալ, հրաժարեսցէ յառաւելագունէն զոր կարէ։ Ապրել և ոչ թագուսցէ

1 Պրաս. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 47։
2 Նոյն առակ. Լակոն. հա. 2. էջ 232։
3 Նոյն անդ. էջ 227։ Նոյն 'ի Լիկուրգ. անդ։

զօրէնսն. ազգէ յազգ աւանդեսցին այնոքիկ՝ ըստ՝ սպ յամենայն դէպս յերկրեալ, և զիտասցէն զնոսա քաղաքացիք ամենայն՝ տեսօղք և դատաւորք գործոց իւրաքանչիւրոց։ ՀՅիցէ օրէն մանկըտոյ պարտաւորել զնոսա, և ոչ ընդ դատաստանաւ արկանել՝, որպէս երկնաւոր պատգամն ընկալեալ զնոսա. զի իշխանութիւն օրինաց հաստատեալ կայ 'ի պատկառանսն զոր ածէն։ Ոչ և պարտ էցէ գովել զօրէնս և զսովորութիւնս այլոց ազգաց՝. զի ազգ որ ոչ լաւագոյն քան զամենայն օրինադրութիւնս զիւրն համարիցի, վաղ 'ի խնդիր այլոց օրինաց զառաջանի։

Այդպս ոչ ինչ էն զարմանք՝ զի առաջին յառաքինութիւնս սպարտացւոց է հնազանդութիւն՝, և զի ազգն այն վայրագ ոչ զիմէ յատեանս՝ բնաբան օրինաց 'ի ձեռին՝ բողոքել զվնոյց դատաւորաց։ Այլ մի և ոք զարմացցի, զի Լիկուրգոս կարևորագոյն քան զամենայն հոգս օրէնսդրի ըզդաստիարակութիւն մանկտւոյ համարեցաւ՝, և զի առ 'ի նուաճել զսիրտ սպարտացւոց, անդստին 'ի մանկութենէ նեբրոյ արկ զնոսա կրթութեանցն՝ զորոց առաջի կայ մեզ ասել։

1 Պլատ. յդ. որ. գերք Ա. հա. 2. էջ 634։

2 Գեմոսթ. 'ի Ղեպտին. էջ 556։

3 Իսոկր. յԱրբիգ. հա 2. էջ 59։ Քսենոֆ. յդ. հաս. Սպարտ. էջ 682։

4 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 47։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Զդաստիարակութենէ և զչարամեծաց սպարապետացն։

ՕՐԷՆՔ սպարապետականք ծայրագոյն հոգովք հսկէին 'ի դաստիարակութիւն մանկտւոյն [1], ոչ ինչ խորհելով ընդ աղքատն և ընդ Ղոխ, այլ զամենեցունց զնոսին խնամ հասարակաց կալեալ [2]։ Լսէաք զՇնուանդ մանկանն ընդ յայտնել յղութեան մօրն՝ հրամայէն կախել 'ի սենեկի նորա կենդանագիրս, յորս փայլէ մանկութիւն և գեղ, որպէս զԼոլոնին, զՀարկիսեայն, զՀակինթեայն, զԱստղրին, զՊողիտեւկեայն, այլովքն հանդերձ. որպէս զի տպաւորութեամբ կերպարանաց նոցա հանապազ 'ի միտս մօրն, նշմարեսցի աղօտ ինչ նմանութիւն նոցա 'ի մանկանն զոր կրէ յարգանդի [3]։

Եւ 'ի ծնանել մանկանն՝ յանդիման առնէն զնա ժողովոյ ծերունեաց ցեղին, յորմէ է ազգատոհմ նորա։ Լուսի անդր դայեակ նորա, և փոխանակ ջրոյ՝ գինւով լուանայ զմանուկն, քանզի ասեն մանհատիթ տկարաց զոլ զլուացումն գինւոյ։ Եւ քննութիւնս ևս 'ի փորձ անդր յաւելեալ, ապա տան վՀիւ զմանկանէն. եթէ կեանք նորա լիցեն

1 Աբիստատ. յղ. հատ. գիրք Գ. էջ 374։
Ը. գլ. 1. հտ. 2. էջ 450։
2 Նոյն անդ. գիրք Գ. գլ. գիրք Ա. տող 357։
3 Պղպիան. յղ. որոշ։

յօգուտ իւր կամ՝ Հայրենեացն, արկանէն զնա 'ի վիհ ուրեմն մերձ 'ի Տայգետոն լեռան։ Իսկ եթէ առողջ իցէ և պնդակազմ, ընտրեն զնա 'ի զիմնց աշխարհին՝ լինել առ յապայ մի յախոյենացնորա[1]։

Դարձուցեալ զմանուկն 'ի տուն, հանդուցանեն զնա 'ի վերայ ասպարի. և առ նորանշան որբանաւն զնեն նիզակ, որպէս զի անդատին 'ի տըղայութենէ ընդելասցի զինուն տեսութեամբն[2]։ Ոչ կաշկանդեն խանձարրովք անշարժելի զմանտաղ տղայոյն անդամս փափկիկս, ոչ արգելուն զինքնայորդոր արտաքուս նորա, այլ և ոչ երբէք ոտառնալեօք կամ՝ գանիւ շարժեն զնոսա 'ի լաց։ Սովորի տակաւ 'ի միայնութիւն, 'ի խաւար և յանխտրութիւն կերակրոց[3]։ Ազատ յամենայն ազդմանէ զարհուրանաց, զերծ յամենայն անօգուտ բռնադատութենէ և 'ի տարապարտ կըշտամբանաց, և պատաղեալ բոլորովին 'ի խաղս իւր անմեղս, վայելէ լիով 'ի բերկրանս կենաց, և վաղ 'ի բարեկենդանութեան բարգաւաճեն զօրութիւնք նորա և աջողութիւնք։

Հասանէ 'ի տիս եօթն ամաց անգէտ ծառայաւ կան երկիւղն. և անդ ըստ սովորութեան զկայ առնու դատարարակութիւն նորա առ անմեր[4]։ Լաւապա հարցանեն զՀայր մանկանն, թէ կամիցի

[1] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։
[2] Նոնն. Դիոնիս. գիրք ԽԱ. էջ 1062։ Պարապ. թուղ. կէդ. գիրք Բ. գլ. 39։
[3] Պլուտ. անդ։
[4] Նոյն անդ, էջ 50։

մասանել նման ըստ օրինաց։ Այլեթէ հրաժարէ, զրկի և ինքն յիրաւանց քաղաքացւոյ՝. իսկ եթէ յանձն առնու, այնուհետև ոչ ծնողք և եթէ մանկանն ոստիկանք են նման, այլ և օրէնքն և աւագանին. և քաղաքացոց ամենեցուն օրէն է հարցափորձել զնա և խրատել և պատժել առանց երկիւղի բամբասելոյ՝ ի խստութիւն։ Օ. ի նոցին իսկ հատանէ պատուհաս, եթէ տեսանելով զմանուկ յանցուցեալ լռեսցեն խնայելով[2]։ Վերակացու մանկրտուոյն յեւ մեծարելոց զը կացեալ[3], ՝ի դատս դատս որոշէ զնոսա. և դատուց իւրաքանչիւր պատանի զը վկայեալ իմաստութեամբ և արիութիւնք կայ դատապետ։ Պարտ է նոցա հնազանդել անտրտունջ ամենայն հրամանաց նորա, և պատժոց զոր սահմանէ նոցա, և որոց պաշտօնեայք են մանկունք ոմանք խարազանաւորք յարբունս հասեալք[4]։

Օրէ ըստ օրէ խստանան նոցա կարգք. գերծուն զՀերս, և գնան բոկ, անզուբպայ և անկօշիկ. և առ՝ի սովորել՝ի խստութիւն եղանակաց, է զի և մերկք ամենեքին մրցին[5]։

Ի տիս երկոտասան ամաց մերկացեալ զպատմուճանն, վերարկուաւ և եթէ շրջին, զամ մի ողջոյն զնոյն կրելով հանդերձ[6]։ Ոչուն ուրեք հրա-

1 Պլուտ. կարգագիր. Լակոն. հա 2. էջ 238։
2 Նոյն անդ. էջ 237։
3 Քսենոփ. յԼ. հատ. Սպարտ. էջ 676։
4 Նոյն անդ. էջ 677։
5 Պլուտ. ՝ի Լիկուրգ. հատ. 1. էջ 50։
6 Քսենոփ. անդ։ Պլուտ. անդ, գիրք Գ. գլ. 3։

ման է նոցա 'ի բաղանիս մնանել և խնկովք ա-
նուշիւք օծանիլ։ Լաւագոյն նոցա յորս ենթին խրմ-
բովին՝ են ծայրք եղեգանց բուսելոց Լիբոստաս,
զորս առանց երկաթոյ ծայրաքաղ անուն են[1]։

Ընդ սկսանին մներմութիւք սեփականք սպաս-
տացուց, անծանօթք առ այլս յաղգաց, անա-
պակք 'ի Լակեդեմոն քան յայլ ամենայն քա-
ղաքս Լաղդայ։ Արանզի օրէն է նոցա առ 'ի հա-
նապազորդ խնամն՝ ունել իւրաքանչիւր առընթեր
պատանի զոր պարկեշտ, ընտիր գեղով, և առա-
ւել առաքինութեամբք՝ որոց նշանակ իմն հան-
ուին զգեղեցկութիւն[2]։ Որով մանկտին սպաս-
տացի յերկուս դասս թուի բաժանեալ, սիրողաց
և սիրելեաց[3]։ Ընդանիքն օրինակ հաստատեալք
երկրորդի դասուն, մինչև 'ի զնայլական իմն ար-
բեցութիւն զիանդոն ձգեն՝ ազնուականագունի
նախանձուն զրդիչս, որ զեղանմբ սիրոյ զՀայրե-
նի խանդակաթ գթոյն և զկաթողին եղբայրա-
կան զորովոյ բերեն զկիրս։ Յորժամ 'ի տեսիլ
ուրուք 'ի նոցանէ՝ աստուածարեալ իմն գտանին
բազումք, քանզի այսպէս կոչեն նոքա զընական
խանդիցն բերումն[4], ոչ նախանձընդդէմք մի
մեանց՝ այլ և սառաւել միացեալք համակամք, զսի-
բելոյն իւրեանց խնդրեն զյառաջադիմութիւն.

[1] Պլուտ. 'ի Լիկուրգ. գիրք Գ. գլ. 3։
[2] Նոյն անդ։
[3] Թէոկր. 'ի գեղջուն, 12. տող 12։ Պարսպ. անդ։ Աթ. տիմ. Տիւր. Ճառ. 24. էջ 284։
[4] Քսենոփ. յոյ. հաս. Սպարտ. էջ 678։ Նոյն 'ի խրա. խՃ. էջ 873 և 883։ Եղիսա. պատմ. գիրք Գ. գլ. 9։

զի ցանկութիւն նոցա այն է, առնել զնա մեծ-
ըց առաջի այլոց՝ որպէս մեծարէին զնա ինքեանք[1]։
Մի՛ ի կարի համեստագունիցն՝ ի նոցանէ պար-
տաւորեցաւ՝ ի տուգանս վասն չյարելոյ յոր՝ ի
մանկտոյն[2], և այլ ոմն վասն հեծութեան սի-
բելոյն իւրոյ՝ ի մարտի ուրեք[3]։

Կցորդութիւնքս այսոքիկ, որոց բաղում և մե-
ծամեծ եղեն արգասիք[4], հասարակաց են ուս-
տերաց և դատերաց[5]. և է զի ընդ կեանս նոցա
ձգին։ Ի բաղում ժամանակաց հետէ սովորու-
թիւնս այս ունէր՝ ի Կրետէ[6]. և Լիկուրգոս
յարգեաց զայն, այլ զվտանգաց նորա կալեալ զա-
ռաջս։ Զի դոյզն ինչ արատ՝ ի կցորդութիւնն
յայն՝ որում պարսն է սուրբ լինել ամենեքին և
է իսկ գրեթէ միշտ[7], ծածկէ յաւէժ նախատա-
նօք զյանցուցեալն[8], և մահապարտ իսկ՝ ի գէպս
լինչ առնել զնա[9]. և ոչ վայրկեան մի դարձեալ օրէն
է մանկտոյն հեռի կալ յաչաց երիցագունից,
որոց պարտ յանձին կալեալ՝ աւրնթեր կան միշտ
հրահանգաց նոցա և պատշաճիցն խնամ ունին,

1 Պլուտ. ի Լիկուրգ. գիրք Գ. հտ. 1. էջ 51։
2 Եղիան. զանս. պատմ. գիրք Գ. գլ. 10։
3 Պլուտ. անդ։ Եղիան. անդ։
4 Պղատոն, խրախճ. հտ. 3. էջ 178։
5 Պլուտ. անդ։
6 Հերակլ. պոնտ. յզ. քաղաքական. Նախնի Յունաց, հտ. 6. էջ 2824։ Սարաք. գիրք ժ. էջ 483։ Եղիան. յզ. կենդան. գիրք Դ. գլ. 1։
7 Քսենոփ. յզ. հտ. Պարտ. էջ 678։ Պղատ. խրախճ. անդ։ Մաքս. Տիւր. Ճառ. 26. էջ 317։
8 Պլուտ. կարգագր. Լակեդ. հտ. 2. էջ 237։
9 Եղիան. զանս. պատմ. գիրք Դ. գլ. 12։

և ոչ յայլոց վերհագոյն վարժապետին և դասապետաց իւրաքանչիւր։

Դասապետք են պատանիք քանանամեայք, որք 'ի վարձ քաջութեան և խոհականութեան իւրեանց հատանեն պատուոյ վարժապետութեան դասուն յանձնելոյ 'ի խնամս իւրեանց[1]։ Այդպա սուրնթեր կան մանկտւոյն 'ի հրահանգս մարտի, յանցանել նոցա ընդ Այրոտաս 'ի լաղ, 'ի գնալ նոցա յորս, և 'ի կրթել 'ի գօտեմարտս, յընթացս և յազգի ազգի ըմբշական մրցութիւնս։

Մանկտին 'ի զառնալն իւրում[2] 'ի բնակութիւն իւր՝ առնու կերակուր, պատրաստեալ զայն իւրոյոլի առողջ և անպաճոյճ[3]։ Օրաւորագոյնք 'ի նոցանէ ածեն փայտ, և տկարագոյնք բանջարս և այլ կերակուրս գողունիս, յարամիտ մնանելով 'ի պարտէզս և 'ի ճաշարանս հասարակաց։ Ցմբռնեալսն 'ի գողութեան կէսք գանին խաբազանաւ, և կէսք 'ի վերայ գանիցն և անսուաղ կան՝ անմատոյցք 'ի սեղան[4]. և ոմանք շուրջ ըղբաղնաւ ձգեալ ածին, երգելով տաղս 'ի թշնամանս անձանց[4]։

Այլ յետ ընթրեացն հրամայէ դասապետն կիսոց նուագել, և այլոց խնդիրս առաջի արկանել առ 'ի փորձ հանձարոյ նոցա և դատաստանի. զոր

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 30։
2 Նոյն կարգագրի. Լակոն. հտ. 2. էջ 237։
3 Պլուտ. 'ի Լիկուրգ. անդ։
4 Նոյն կարգագրի. Լակոն. անդ։

օրինակ, թէ ո՞ իցէ 'ի քաղաքիս լաւագոյն քան զամենեսին. կամ թէ զիարդ թուի քեզ այս ինչ կամ այս։ Լաւ պարտ է պատասխանւոյն լինել հակիրճ հանդերձ պատճառօք, և որք առանց խորհելոյ ինչ բարբառիցին, թեթև ինչ պատիժս կրեն առաջի դատաւորաց և ծերակուտին՝ որք առընթեր կան խօսիցն. և է զի ոչ հաճոյ թուի նոցա վճիռ դատապետին, այլ զի մի արհամարհեսցի առաջի իւրոցն՝ խնդրեն զնա միայնակ, և զկարի ներողութիւն նորա կամ զխստութիւն պատուհասին[1]։

Լ զիտութիւնս վեր'ի վերոյ ինչ կրթի մանկըտին, այլ ուսանին խօսել յստակ, և կերպարանել'ի պարս կաքաւեայց և երաժշտաց, և անմնահացուցանել'ի տաղս զյիշատակ անկելոցն 'ի վերայ հայրենեաց, և զմնանուցացն զնախատինս։ Լ տաղն յայնոսիկ իբս մեծամեծս պարզաբար առաջի առնեն, և իմաստս բարձրագոյնս լի եռանդեամբ[2]։

Հանապազօր այց առնեն նոցա պարէտք, և երբէք երբէք ինքեանք առ պարէտս գնան՝ տալ համար զդաստիարակութիւնն իւրեանց, զի մի իցեն անխնամ, և մի փափկութիւն ինչ յանկողնիս կամ 'ի զգեստս նոցա մուծցի, և զի մի դարձեալ միտիցեն 'ի գիրութիւն[3]։ Լանզի խստու-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 51։
2 Նոյն անդ, էջ 53։
3 Եղիան. զան. պատմ. գիրք ԺԴ. գլ. 7։

թիւն մեծ է 'ի վերայ յօրացելոցն. և որք քա-
ղաքացիք 'ի Սպարտա ձգեցան երբեմն 'ի դատա-
ւորաց յատեան ժողովրդեան, զի յոյրք զոլով՝
զիմաստութեան տային կասկածանս [1]։ Յա-
մենի հանդերձն առն սպարտացւոյ դէմք կանացի.
պարտ է մարմնոյ նորա զոլ աջողակ և կորովի,
'ի պատշաճ՝ հաստատութեանն [2]։

Սմին իրի մանկտին սպարտացի հանապազ 'ի
վաստակս կայ, զրեթէ զօրն ողջոյն 'ի նոցն պա-
տրաստեալ։ Զ մեծ մանն աւուրն անցուցանեն յրմբ-
շամարտս՝ յորս չեն որպէս յայլ քաղաքս մարտ-
ուսոյցք, որք ուսուցանեն մարտիկաց գայթա-
կղեցուցանել աջողաբար զոսոխն [3]. անդ դաւ 'ի
նախատինս է քաջութեան, և պարտ է յաղթուն
և պարտութեան լինել փառաւք։ Զ ամն որոյ և
'ի մրցութիւնս ուրեք չէ օրէն սպարտացւոց 'ի
պարտելն՝ աջ 'ի վեր ամբառնալ, զի համարի խու-
տովանել այնու զպարտութիւն [4]։

Զ՝ազգամ անգամ կացի 'ի զնին մարտիցն՝ զոր
մանկունք սպարտացիք յութուտասանամեանից և
'ի վեր տան ընդ միմեանս 'ի Պղատանիստ։ Հրա-
հանգին նախ 'ի վարժարանի որ 'ի Լեռաստնե-
աւան, երկոսեանքն՝ միումն հերակղեան գոչ-

[1] Ագատարք. առ Լամե-
նէսի, գիրք ԺԲ. էջ 550։
Եղիան. զան. պատմ. գիրք
ԺԲ. գլ. 7։

[2] Եղիան. անդ։

[3] Պլուտ. առակ. Լակոն.
հա. 2. էջ 233։

[4] Պլուտ. 'ի Լիկուրգ. հա.
1. էջ 52։ Նոյն առակ. Լա-
կոն. հա. 2. էջ 228։ Սենե-
կա, յոր բարեր. գիրք Ե. գլ. 5։

լով գունդ և միաստուն լինուրդեան [1]. և գիշերի զենուն 'ի միասին սենդուկ 'ի բաղին Աքիսի, ա-բիսադունին 'ի գից հաճոյադոյն զոհ հանարեալ զքաջագոյնն յընտանի անասնոց։ Այլ յետ զոհին գունդք երկաբանչիւր ածեն մէն մի կինձ զգօնաւ-ցուցեալ, և արձակեն զնոսա ծանօթ բարբա-ռոնն 'ի վերայ միմեանց. և որոյ կողմանն կինձն յաղթանակէ, յաւետիս յաղթութեան հանա-լի նմա։

Ի վաղիւ անդր զմիջաւուրբ յառաջ խաղան մանկտին կարգաւ 'ի ձակատուն տեղի ընդ այլ և այլ ձանապարհ, որպէս երևեալ նոցա վիճակ։ Այլ 'ի տալ նշանին՝ յարձակին 'ի միմեանս, վանեն և վանին, և տակաւ զայրանայ մարտն։ Արարքն չին աքացի և բռնցի, և կերդեքեն զերեարս ատա-մանքք և եղնդանքք, և պարտեալք և կարեվիր խոցեալքն ոչ դադարեն 'ի մարտէն՝ զիմագրաւեալ և ոչ տեղի տուեալ [2], այլ մանաւանդ ըստ նուա-զել զօրութեանն յաւելեալ 'ի յանդգնութիւն։ Ի ոմն 'ի նոցանէ 'ի զգեանել զոսոխն՝ զոչեաց յանկարծ. Իբրև զկին մի խածանես զիս։ Այլ նա ասէ. Ոչ իբրև զկին, այլ որպէս զառիւծ [3]։ Յանդիման հնգից դատաւորաց գործի սպատ-ռազմն [4], որոց իշխանութիւն է միով բարբառով

1 Ղուկիան. յղ. մրց. հա. 2. էջ 919։
2 Կիկեր. առաւկուլ. գիրք Ե. գլ. 27. հա. 2. էջ 383։
3 Պլուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 234։
4 Պաւսան. գիրք Գ. գլ. 11. էջ 231։

ցածուցանել զզայրոյթ մարտկացն, և առաջի բազմութեան տեսողաց. որք յանձնեն դրուատիս յաղթականաց և երգիծանս պարտելոց։ Լաւ վախճան լինի մարտին 'ի ստիպել միոյ կողմանն անցանել 'ի լոյ ընդ Լուրոտաս գետ, կամ ընդ վտակն որ կցորդեալ ընդ գետոյն, պարսպել զՊերզատանիստ '։

Տեսի և յայլ մրցութիւնս զանդագոյն արիութիւն ընդ դառնակսկիծ ցաւս մնքառեալ Լուտնս ուրեք տարեկանս՝ որ 'ի պատիւ Յորդորականն Լուսահատայ կատարի՝ կացուցանեն առ բազնաւնորա մանկունս սպարտացիս ահա հասեալս յարբունս, և ընտրեալս յամենայն կարգաց աշխարհին, և հարկանեն զնոսա խարազանաւ 'ի հարուածս սաստիկս մինչև ցհոսանս արեան։ Լաւ քրմուհին անդ առնէր կացեալ՝ բարձեալ բերբելով զպատկեր դիցուհւոյն փայտակերտ փոքրիկ և թեթև, եթէ երբեք հարկանողք խնայիցեն, աղաղակ ոչ ևս ժուժկալել բեռինն. յայնժամ և ևս սաստկանան հարուածք, և յաճախեն գութ տեսողացն։ Լսելի լինին ծնողաց և ազգականաց ձիչք խելացնոր, որք յորդորեն զտարապարտ զհոն [2] չհեծել բնաւ. և մնատուցեալքն իսկ 'ի զհ ձայն տան և կոչեն 'ի վերայ իւրեանց զխոշանգանս։ Տեսիլ բազմութեանն

1 Նոյն անդ. գլ. 14. էջ 243։ Սեբեոս յլ. Դարեհ. գլ. 4։
2 Պիկեր. առանձին. գիրք Սասան. թեր. գիրք Բ. տող Բ. գլ. 14. հա. 2. էջ 288։ 437։

որ դէտ կան ամենայն շարժմանց նոցա, և յոյս յաղթանակին որ պահի արիագունին 'ի հանբեր ել, այնպէս խստացուցանեն զնոսա, զի լուրջ դիմք և դժպհի ինն զուարթութեամբ կան 'ի քստմնելի տանջանան [1]։

Իսկ իմ հիացեալ ընդ հաստատութիւն նոցա, ասեմ ցԴամենաքս որ էին ընդ իս. Այս ուրեմն պահին 'ի Սպարտա երկիւղածութեամբ օրէնք։ Եւ Դամենաքս ասէ. Կա աւանիկ թշնամանին ատ չարաչար օրէնք։ Հանդէսդ զոր տեսանես՝ կատարեր երբեմն 'ի պատիւ դից խժականաց, զորոյ զպատկերն և զպաշտօն Վերեստեայ ասեն ածեալ 'ի Դաւրիժէ 'ի Սպարտա [2]։ Եւ հարցկին պահանջելով նմա 'ի զոհ զմարդիկ, Լիկուրգոս զոսկալի սովորութիւնն եղծ. այլ առ 'ի ընդունելոյ զբողբք մնապարտութեան՝ սահմանեաց սպարտացի մանկտւոյն դատապարտելոյ վասն յանցանաց 'ի գանա, անդ առ բաղնատ Նահատակ կրեալ զպատուհասն [3]։

Պարտ էր իմաստիչ և զօրութեան օրինացն պատկառ կալ, զի նա պատուհաս ինչ ևեթ դուշնաբերեայ սահմաներ [4]. այլ անհանձար գրուատիք մեր ատ և 'ի Պղատոնիստ զարթուցանեն 'ի մանկտին նոսխանձ ամենազարով։ Ցանջանք նոցա

1 Պլուտ. կարգադր. Լակոն. հա. 2. էջ 239։

2 Պաւսան. գիրք Ը. գլ. 23. էջ 642։ Հեգինեոս առակ. 261։ Մեսրոպ. յոյ. ասն. Ցուն. 'ի բառն Διαμαστίγ.

3 Պաւսան. գիրք Գ. գլ. 16. էջ 249։

4 Քսենոֆ. յոյ. հաս. Սպարտ. էջ 677։

ընծայեն մեզ տեսիլ ցանկալի, և նոցա յաղթա-
նակ։ Ընծանօթ էր հարցն մերոց այլ քաջու-
թիւն՝ բաց 'ի պիտանուցն հայրենեաց, և առա-
քինութիւնք նոցա ոչ 'ի վայր և ոչ 'ի վեր քան
զպարտս իւրեանց էին. այլ յորմէ հետէ մնաբա-
ռութիւն տիրեաց մերոց առաքինութեանցս,
այնպէս խրթնացոյց զտիպս կերպարանաց նոցա՝
զի ոչ ևս Ճանաչելի գան։ Յեղափոխութիւնս
այս, զհետ պերոսպնեսական մնարտին գործեալ
'ի մեզ, ակնարև նշանակ է զեղծմանն բարուց մե-
րոց։ Ընչափութիւն չարեաց ածէ արհամարհանս,
իսկ բարւոյն ծայրայեղ անչափութիւն կորզէ մե-
ծարանս. և պայծառութիւն նոցանչան գործոյն
թուի լինն ածել պարտս փոխարինաց անլուծա-
նելիս։ Եթէ անարժանս այս սովորութիւն կաց-
ցէ, մանկտին մեր վերջացեալ յամենայն քաջու-
թենէ՝ յանձնացոյց մնապարծութիւն զառաձ-
նիցի 'ի սպառ. խիզախեսցէ ընդդէմ մարհու առ
անահտական բաղնաւն, և յերեսաց թշնամւոյ
խոյս տուեալ փախիցէ [1]։

Յուշ լիցի քեզ պատանին զոր աւուրքք յա-
ռաջ դէպ եղև մեզ տեսանել. որոյ զաղուէանն
փոքրիկ 'ի ծոց իւր ընդ հանդերձիւն կրելով,
համբերեր լռութեամբ կեղեքելոյ գազանին ըզ-
կուրծս իւր՝ առ 'ի չխոստովանելոյ զդողմանն [2].
զարոյ անընդելական յամառութիւն եպերեցին

[1] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. Լակոն. հտ. 2. էջ 239։
[2] 1. էջ 51։ Նոյն կարգադր. [2] Նոյն 'ի Լիկուրգ. անդ։

և ընկելոք նորա համարձակ։ Այլ ես ասեմ. Աչալ նա զօրէնսն կատարեաց, զի եթ նա պատասխանի՝ թէ լաւ է կոմնչել 'ի տանջանս քան կեալ նախատանօք [1]. արդարանան ուրեմն խմաստասէրքն, զոր ասեն՝ հրահանգաց ձերոց տպաւորել 'ի սիրտ պատերազմող մանկտւոյն զվայրենութիւն [2]։

Զամենեսեան ասէ. Խմաստասիրացդ այդոցիկ եպերանք այնպէս է, որպէս թէ 'ի վերայ զգեստնեղոյն որ յարձակիցի։ Լիկուրգեայ քաջ զառաջքս կալեալ էր յորդեղոյ առաքինութեանցս մերոց, կանգնեալ նոցա թուսիս որ կացին անշարժ դարս չորս, և որոց տակաւին կան և մնան հետք։ Ոչ ապաքէն յառաջ քան զուսուրս զայսոսիկ ըղհետ քաջայաղթ արութեանցն պատուհասեցաւ սպարտացին վասն անասպարտ մարտնչելոյն [3]։ Աչալ ըստ զեղծանել բարուց մերոց՝ մնասիառութիւն ոչ ևս սանձահարի, տակաւ յամենայն կարգս աշխարհիս տարածեալ։ Այրբեմն կանայք սպարտացիք, խմաստնագոյնք քան զարդիս և պարկեշտագոյնք, 'ի լսել զգոյժ մահու որդւոց իւրեանց անկելոց 'ի Ճնկատամարտի՝ շատ համարէին զեր 'ի վերոյ քան զընութիւն հանդիսանալ. իսկ այժմ՝ պարծանս համարին ոտնհար լինել նմին, և առ չերևելոյ տարբ՝ անողորմն զանձինս ցուցանեն։ Այս ինձ պատասխանի եթ Զամենեսեան.

[1] Պլուտ. առակ. Լակոն. Ը. գլ. 4. հտ. 2. էջ 452։ հտ. 2. էջ 234։
[2] Արիստոտ. յոլ. հատ. գիրք էջ 615։
[3] Պլուտ. Ագես. հտ. 1.

այլ ես 'ի Ճառս դաստիարակութեան մանկտւոյն սպարտացւոց անդրէն դառնամ։

Ի բաղում քաղաքս Լակեդայ մանկտին յութ-ուտասանամեանից և 'ի վեր ոչ ևս ընդ դաստիարակաւ էն '։ Այլ Լիկուրգեայ որ քաջ խելամուան էր մարդկեղէն սրտի, չմարթէր թողուլ զնա անխնամ 'ի բազմամտանգ հասակին՝ զորմէ կախեալ կայ զրեթէ միշտ բախտ քաղաքացւոյ, և յաՃախս ևս աշխարհին իսկ։ Ի զարթնուլ 'ի նոսա կրկին՝ նոր կարգս հրահանգայ և վաստակոց ընդդէմ նոցա սահմանէ. դասապետք պահանջէն 'ի համբակացն առաւելագոյն պարկեշտութիւն, հլութիւն, ժուժկալութիւն և եռանդն։

Հիացումն է տեսանել զկայտառ մանկտին, զի փոխանակ պերՃանալոյ ընդ քաջութիւն և ընդ գեղ իւրեանց՝ չշխեն անգամ զոգցես բարբառել և ոչ զակն 'ի վեր ամբառնալ, այլ գնան հանդարտաքայլ պարկեշտք իբրև երկչոտ մի օրիորդ՝ նուիրաբեր զից [2]։

Սակայն եթէ ոչ հզօրագոյն իմն փոյթ յորդորէր զնոսա 'ի բարեկարգութիւնն, թէպէտ և պատկառանք 'ի դէմն նոցա տիրէին, այլ բռնակալէր ախտ 'ի սիրտս նոցա։ Ամին իրի Լիկուրգոս կացոյց 'ի վերայ նոցա գունդ դիտից և ոստխաց, լրտեսել զնոսա հանապազ։ Ձիք ինչ դիպողագոյն քան զՀնարս զայս առ 'ի փորձել զա-

[1] Քսենոփ. յՀ. հաս. [2] Նոյն անդ, էջ 679։ Պլուտարք. էջ 678։

ռաքինութիւն։ Լրթէ մանկան 'ի հասակակցացն զոք յօրինակ կացուցանիցես, ատեայ զնա 'ի Հաստատելն տային, և արհամարհէ եթէ դիւրաբերաբազանցէ քան զնա։ Լոկ եթէ գունդ առ գունդ կացուցանիցես, քանզի դիւրին է 'ի կշիռ կացուցանել զզօրութիւն նոցա և փոփոխել զկաղմութիւնն, պարծանք յաղթութեանն և նախատինք պարտութեան ոչ 'ի խրոխտումն յոյժ և ոչ 'ի կարի իմն կորանս զիւրաքանչիւր զոր 'ի նոցանէ ածէն։ Հաստատի 'ի միջի նոցա նախանձընդդէմ հակառակութիւն հանդերձ մեծարանօք միմեանց. ազգականք և բարեկամք նոցա փութան կցորդել այնմ, և զուշաբեայ հրահանգք թատրցանկալի այնու հետև ամենայն քաղաքացիացն կացուցանեն։

Խաղումք 'ի մանկուէն սպարտացւոց լքեալ զքաղաք, 'ի սաստկագոյն ևս հրահանգս թեւակոխեն։ Խանզի հրամայի նոցա՝ վառեալ զնոսա և բոկոսն սիրեալ ընդ գաւառն, բացօթեայգք ցերտակիզք գոլով և տօթակիզք, առանց ստրկաց 'ի սպասաւորութիւն, և ոչ ունելով ծածկոյթ առ 'ի ցրտոյ պահպանութիւն զցայգ[1]։ Վերթ սեղեկանան վայրաց աշխարհին, և թէ որպէս պարտ է պահ ունելնոսա 'ի հինից թշնամեաց[2], և մերթ զհետ մտանեն վարազուց և այլոց երիտոց վայրի[3]։

[1] Պլատ. յոլ. օր. գիրք Ա. 763։
հա. 2. էջ 633։
[2] Նոյն անդ. գիրք Զ. էջ Սպարտ. էջ 680։
[3] Քսենոփ. յոլ. հատ.

և է զի առ 'ի փորձ զենուորականին զանազան շարժմանց՝ 'ի դարանի կան 'ի տուընջեան, և 'ի հատանել գիշերոյ՝ 'ի դուրս յարձակեալ զգեստնն ընդ հարուածովք զեղծացիս, որոց գիտելով զվտանգն՝ յանդգնին ելեալ զեգերել զնմանապարհաւ նոցա [1] *։

Օրիորդք ոչ զարդեսս յԱթենս դաստիարակին 'ի Սպարտա. զի ոչ հրամայի նոցա արգելեալ կալ 'ի տան, զաստ մնանել, հրաժարել 'ի գենուց և 'ի կարի ստածիչ կերակրոց. այլ ուսանին յերգ և 'ի կաքաւ, 'ի մրցել ընդ միմեանս, յարշաւել թեթևընթաց յաւազի, և յարդնրնկեց տեգրընկեց խաղարկութիւնս [2]. զայս ամենայն հրահանգեալ առնել քաջընկեց և կիսամերկ [3] առաջի թագաւորաց և դատաւորաց և ամենայն քաղաքացոց, այլ և մանկտւոյն խակ գլխովին՝ զոր 'ի նախանձ փառաց զրդեն օրինակաւն իւրեանց և յորդորական զրուատեօք կամ երգիծական հեգնութեամբք [4]։

Այսր 'ի խաղս յայսոսիկ սկսանին երկոցուն պարուցն յարբունս հասելոց ընդ միմեանս ոգե-

1 Հերակլ. պանա. յղ. քաղաքական. Նախնի Յունոց, հտ. 6. էջ 2823։

* Այս պատերազմական հնարից ազգ կոչեր Κρυπτεία այսինքն է դարանակալութիւն։ Յետակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԺԹ։

2 Պղատ. յղ. պ. գիրք Է. հտ. 2. էջ 806։ Քսենոփ. յղ. հտ. Սպարտ. էջ 675։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 47։

3 Եւրիպ. Անդրոմ. տող 598։ Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 232։

4 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 48։

խառնութիւնք, որ պատրաստեն զնոցին առ յապայ բարեկենդանութիւն [1] * ։ Բայլ նորասէր տարփանացն իղձք ոչ պատկին վաղամուսին հարսանեաց ** ։ Յմենայն ուրեք ուր ազատութիւն է մանկտւոյ վաղվաղել 'ի սերունդ ազգատոհմի, փոքրկանայ ազգ մարդկան և վատթարի յայտնապէս [2]. բայց 'ի Սպարտա անվթարելի կայ, զի անդ մինչև մարմնոյ առեալ զանձուն և բանին զնոհական ընտրութիւն՝ չէ օրէն ամուսնանալ [3] ։

Ընդ բարեմասնութիւնս հոգւոյ ամուսնացն՝ խնդրի և մարմնոյն գեղ առնացի, կերպարան անձնեայ, և կայտառ առողջութիւն [4] ։ Եկուբ գոս և ըստ նմանէ խնամատարքք հանձարեղք յոյժ զարմանային, զի այսչափ հոգ և խնամն կալեալ մարդկան առ 'ի քաջատոհմն առնել ըզսերունդ ընտանի կենդանեաց՝ բնաւ անխնամ առնեն զմարդկան ազգի սերունդ [5] ։ Իղձք նորա կատարեցան, և բարեբաստիկ տուրևառիւք ամուսնութեանց զօրաւորագոյն իմն և մեծավայելուչ բնութիւն մարդկան երևէր [6]. և չիք իսկ

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 48։

* Յեռակոյս մասանիս 'ի տեղեկութիւնն. թիւ. ԻԵ։

** Յեռակոյս մասանիս 'ի տեղեկութիւնն. թիւ. ԻՉ։

2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Է. գլ. 16. հա. 2. էջ 446։

3 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 676։ Պլուտ. 'ի Ղուտ. հա. 1. էջ 77։ Նոյն առակ. Լակոն. հա. 2. էջ 228։

4 Պլուտ. յղ. գաստիաքակ. հա. 2. էջ 1։

5 Պղատ. յղ. հաս. գիրք Ե. հա. 2. էջ 459։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 49։

6 Քսենոփ. անդ։

որպէս զսպարտականն արիւն վՀիտ և գեղեցիկ։
Լ(ոտոլով զմնրասպատում Ճնուս արարողու-
թեանց հարսանեացն սպարտացւոց՝, յաւելից
զարժանի յիշատակի զնորանշան իմն սովորու-
թիւն նոցա։ Ի հասանել պահուն կատարման
հարսանեացն, փեսայն յետ դոյզն ինչ Ճաշուն
՝ի հասարակաց Ճաշարանի՝ յերեկոյ գնայ ՝ի տուն
խնամեացն, և գաղտագողացեալ զօրիորդն հարս-
նացու ածէ ՝ի տուն իւր, և նոյնհետայն զիմմ ՝ի
կրթարանն առ ընկերս իւր, և կայ ընդ նոսա
որպէս յառաջն։ Ի վաղիւ անդր և յետ այնորիկ
ստէպ զառնայ որպէս յարն ՝ի տուն հօր իւրոյ.
այլ հազիւ վայրկեան ինչ սուղ կարէ գողանալ ՝ի
զգուշութենէ՝ որոց շուրջ գնովաւ կան, և մնանել
առ կին իւր. զի յամոթ համարի նմա, եթէ
աք տեսանիցէ զեռս նորա յառագաստէ[1]։ Այն որք
զանն ողջոյն ՝ի գողացիկ ամուսնութեանն կեան,
գաղտնութենն յաւելլով բերկրանս մեծ ՝ի պատ-
ճանն և ՝ի գողնս։ Գիտաց Ի(ուրգոս զի ինքնք
յառնուլ վաղվաղակի և ստէպ լրումն՝ թողանան
և ՝ի տաղտկութիւն հատանին, և հոգացաւ յեր-
կարաձգել զայնոսիկ, մինչև ամուսինք ընդելաս-
ցին թերութեանց միմեանց, և սիրոյ նոցա տա-
կաւ մերկացեալ ՝ի ցնորից զգայութեան՝ հասցէ
՝ի կատարումն իւր, փոխեալ ՝ի բարեկամութի[2]։

[1] Ա(թէն. գիրք ԺԴ. էջ 646։ Պաւստն. գիրք Դ. գլ. 13. էջ 240։
[2] Բանեսք. յԳ. հատ. Սպարտ. էջ 676։
[3] Պլուտ. ՝ի Լիկուրգ. հատ. 1. էջ 48։ Նոյն առակ Լամկան. հատ. 2. էջ 228։

Բայց է՝ որ զբարեյարմար հանձնայնութիւնն յարդարէ առ անէն. ուր տանուտէրն և տիկին զնջեալ՝ի խրոխտմանէ առ ձայն միմեանց, վերբա-տէն իմն հանապազոր հաստատեն զընտրութիւն իւրեանց, և ընծայեն հանապազ՝ի տեսիլ ցան-կալի զծայրագոյն արիութիւն ընդ ծայրագոյն քաղցրութեան կցողդեալ։

Որէն է սպարտացւոյ վասն ծանուցոյ պատնա-ռաց ամուսնանալ՝. այլ այնպիսին՝ի ծերութե-ոչ որպէս զայլս՝ի քաղաքայնոց պատուի։ Որի-նակ իմն. Վերկիղիդաս զօրավարեալ՝ի բանակս փառաւոր [2], իբրև մտանէր՝ի ժողով մի ոմն՝ի մանկտւոյն ասէ ցնա. Ո՛չ քեզ յոսն կամ, զի չթողուս մանկունս՝ որ յաւուր միում յոտին կաց-ցեն ինձ [3]։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և չէ օրէն ամուրեաց առընթեր կալ կիսամերկ մրցանաց ա-ռիսորդացն, և օրէն է դատաւորաց հրամայել նա-ցա՝ի խիստ ձմերայնի շուրջ գալ ընդ հրապա-ռակն հոլանի, ցուցս բարձեալ թշնամանաղիրս անձանց՝ խոստովանեալ զի յիրաւի ըստ օրինա-զանցութեանն կրեն պատուհաս [4]։

1 Քսենոփ. յԼ. հատ. Սպարտ. էջ 676։
2 Նոյն պատմ. Յուն. գիրք Գ. էջ 490, և այլուր։
3 Պլուտ. ի Լիկուրգ. հատ. է. էջ 48։
4 Նոյն անդ։

ԳԼ ՄԻՍ ԽԷ.

Ջրաթաց և զովութեանցն սպարտացւոց։

Օ՛ՆՈՑՆ զառաջին Ձնոս աստանօր շարայարեմ, զի դաստիարակութիւն սպարտացւոց զոգցես ընդ ամենայն կեանս նոցա յարաձգի՝։ Ի քսանամենից և անդր ոչ ևս գերծուն զՏերս և զմերուս. զի հերք յաւելուն զդեղ, և վայելուչք են արանց ազատաց և պատերազմողաց՝։ Փորձի հնազանդութիւն նոցա և՝ ի կարի իսկ դուշնաքեայս. պարէտք՝ ի հասանելիս յիշխանութիւն, հրամանս հանեն՝ ի ձայն փողոց հրովարտակաւ՝ գերծուլ ամենեցուն զընչացս, և հնազանդել օրինաց՝։ Ամենայն ինչ աստ առ՝ ի խրատ սահմանեալ է. սպարտացւոց ուրումն հարցեալ թէ ընդէր զերկայնամորուսն կրեր, ասէ. Օ՛ի յորմէ հետէ ալիք՝ ի սուտ անկան, ազգեն ինձ հանապազ՝ լառնել նախատինս ծերութեանէ իմոյ՝։ Սպարտացիք անզարդս ամենեքին զգենուլ, և զեն՝ ի զարմանս օտար ազգաց, այլ ոչ զք՝ ի նոցանէ նախանձաւոր եղև նմանել նոցա։ Ալ ինչ և

1 Պլուտ. ՝ի Լիկուրգ. հտ. 1. էջ 54։

2 Երոդոտ. գիրք Ա. գլ. 82։ Քսենոփ. յՊ. հատ. Սպարտ. էջ 686։ Պլուտ. ՝ի Լիւանդրս, հտ. 1. էջ 434։

3 Պլուտ. յԱգիս, հտ. 1. էջ 808։ Նոյն յՊ. յամբ վերծուց գրեց, հտ. 2. էջ 550։

4 Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 232։

խոսիր 'ի Սպարտա ընդ թագաւորս և ընդ աւագանին և ընդ սինկլիտոս ասմիին ըստ արտաքին ձևոյն [1]. ամենեցուն նոցա պատմուճան է կարճ [2] և ասուի խոշոր [3], և վերարկու զնոսաւ կամ կրկնոց մեծ հնգղաւոր [4]. և օդք կամ կօշիկք յատս, սովորաբար շառաղոյն [5]։ Կաստոր և Պողիտևկէս զիւցազունքն Սպարտայ նկարագրին կրելով 'ի զլուխս իսկոյս, որոց բերան 'ի բերան կցորդեալ՝ բերեն զձև ձուոյն յորմէ ծնեալս զնոսա առասպելին. իբրև զմի յարտախուրակայ աստի կրեն ցայսօր սպարտացիք։ Կէսք 'ի նոցանէ սնդեն զայն փոկովք զուսնկամբքն [6], իսկ այլք սկսան կրել ընդ այնր զթաղհար զարդասէր կանանց Լակեդայ. զորոց քերթողն Հոմիսանէս ասէր յաւուրս իմ, թէ ոչ ևս անպարտելիք են սպարտացիք, զի վարսակալք ծիրանիք են նոցա [7]։

Յետ կրետացւոց նոքա առաջինք եղեն 'ի մերկանալ զամենայն հանդերձս 'ի հրահանգս մրցութեանց [8]. և սովորութիւնս այս եմուտ ապա 'ի

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 6։ Արիստոտ. յզ. հատ. գիրք Դ. գլ. 9. հատ. 2. էջ 374։
2 Պղատ. 'ի Պրոտագ. հատ. 1. էջ 342։ Պլուտ. առակ. Լակոն. հատ. 2. էջ 210։
3 Արիստոտ. յԻտալն, տող 474։ Պարսպ. անգ.։
4 Դեմոսթ. 'ի Կոնոն, էջ 1113։ Պլուտ. 'ի Փոկիոն, հատ. 1. էջ 746։
5 Մեսօրա. խմբարան Լակոն. գիրք Ա. գլ. 18։
6 Նոյն անգ. գլ. 17։
7 Անտիփ. առ Ամենէոսի, գիրք ԺԵ. գլ. 8. էջ 681։ Կասաբ. անգ. հատ. 2. էջ 610։
8 Պղատ. յզ. հատ. գիրք Ե. հատ. 2. էջ 452։ Դիոն. ազիկ. 'ի Թուկիդ. հատ. 6. էջ 856։

խաղս ողիմպիականս [1], և անպատեհութիւն յա-
Նախութեանէն բարձաւ [2]։

Խաղաղաբամիջն լսիտ 'ի ձեռին կրէն կուռծագ [3],
այլ ոչ է օրէն գնալ ումեք այնու 'ի ժողով. քան-
զի իրաց աշխարհին զօրութեամբ փաստից և ոչ
զինուք պարտ է սահմանել։

Տունք փոքրիկք են նոցա և անհարթք. 'ի կեր-
տուած դրանց նոցա ոչ հսկի գործի բաց 'ի սղ-
ցէ, և ոչ 'ի գերանս յարկացն բաց 'ի տասպարէ.
զբունս ծառոց վեր 'ի վերոյ ինչ տաշեալ հաս-
տատեն նեցուկս [4]։ Այս կահք նոցա, թէպէտ և
գեղեցկակերտք, զնոցն բերեն պարզութիւն. և
ոչ դարձեալ խառն 'ի խուռն զմիմեանսիք կուտա-
կին։ Յմենայն ինչ առ ձեռն պատրաստ կայ
սպարտացւոց 'ի պիտեն, զի ամենայն որ պարտ
անձին համարի գնել դարձեալ ուստի ինչ էառն [5].
և գումնաքէլեցս այսոցիկ փոյթ, պահէ 'ի նոսա
զսէր բարեկարգութեան և հրահանգաց։

Սուժկալք են յոյժ 'ի կերակուրս. այլազ-
գոյ ուրումն 'ի բանական ուրեք տեսեալ զնոսա տա-
պատ անկեալս զսեղանսով, լաւ համարեցաւ քան
զայնպիսի կեանս նոցա զայնպիսի մահ [6]։ Սակայն

1 Թուկիդ. գիրք Ա. գլ. 6։ Պարապ. անդ։
2 Պղատ. յոլ. հատ. գիրք Ե. հտ. 2. էջ 452։
3 Արիստոտ. 'ի հաւան, տող 1283։ Պարապ. անդ։ Թէոփր. Նկարագիրք, գլ. 5։
4 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 47։ Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 210 և 227։
5 Արիստոտ. յոլ. անտես. գիրք Ա. գլ. 5. հտ. 2. էջ 495։
6 Եղիսեն. զան. պատմ. գիրք ԺԳ. գլ. 38։ Սոբր. Հատ. 29. էջ 208։ Ամեն. գիրք Դ. էջ 138։

Լիկուրգոս ոչ արգելնոցա, բայց միայն զանեղծուածս. այլ նոքա առաքինութեամբ և ոչ 'ի հարկէ էին սակաւապէտք։ Եւ սպակասէ նոցա միս 'ի սպանդանոցս, և Ցայգեւոն լեառն մնոտակարարէ նոցա զաղջս աղջս որսոց առատութեամբ[1], և դաշտք աշխարհին նապաստակս և կաքաւս և զայլ աղգի աղգի որսս վայրի, և ծոլ և Լուրտաս ձկունս[2]։ Քանիս է յոյժ սպնիր Պիտիոնի[3] *. և էին նոցա դարձեալ աղգ աղգ ընդոց և մրգաց և հացի և փոխնոցս[4]։

Բայց խոհակերաց գործ է պատրաստել խորտիկս անպատճոյն, և մի 'ի կիր արկանել այլ ամենեանս՝ բաց 'ի սեաւ համեմոյն[5]։ Օ համեմոյս այսորիկ ոչ ևս յիշեմ զիատնութիւն** 'ի սմա սպարտացիք թաթախեն զՀայ, և քան զամենայն համադամ թոփ նոցա գերազանց[6]։ Օ՛ղմէ Դիոգ-

1 Քսենոփ. յղ. հատ. Սպարտ. էջ 680։ Պաւսան. գիրք Դ. գլ. 20. էջ 261։

2 Ա Թեն. գիրք Դ. էջ 144. գիրք ԺԴ. էջ 654։ Մեսրոպ. խմբարան Լակոն. գիրք Ա. գլ. 13։

3 Գուիկիան. յղ. պոռնիկ. հատ. 3. էջ 321։

* Պանիրս այս ցարգ իսկ ցանկալի է յաշխարհին։ (Տես ցեն զայսմանէ խնդրոյք 'ի հենն Լակեդեմոն. հատ. 1. 63)։

4 Մեսրոպ. անդ. գլ. 12 և 13։

5 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 46։ Նոյն յԱգիս. էջ 810։ Պոլիանէ. գիրք Զ. գլ. 9. յոգ. 57։

** Մեսրոպոս խմբարան Լակոն. գիրք Ա. գլ. 8։) կարծէ զսեաւ համեմն 'ի հիւթոյ խոզենուոյն հանգերձեալ ազիւ և քացախով։ Եւ թոփ իսկ այնպէս, զի խոհակերաց սպասաւորացուցոց ոչ էր օրէն այլ ինչ ամենաձոնս բաց յայգէ և 'ի քացախոյ 'ի կիր արկանել։ (Պլուտարգ. խնամոց առողջ. հատ. 2. էջ 128)։

6 Պլուտ. կարգադր. Լակոն. հատ. 2. էջ 286։

նեսիոս բռնաւորն Սիրակուսայ լուեալ, կամեցաւ զայն 'ի սեղան իւր։ Կոչեաց խոհանոցն զոմն ըստարտացի, և հրամանն եւ նմա հանդերձել զայն՝ ոչ խնայելով 'ի ծախս։ Բ. Ծառայ հանէին 'ի սեղան, և Թագաւորին Ճաշակեալ, մերժեաց զայն ցասմամբ։ Որում խոհակերն ասէ. Տէր, քանզի պակասէ 'ի դմա ինչ 'ի կարևոր հանդերձանաց։ Բռնաւորն ասէ. Լաւ որ այն ինչ։ Լաւ խոհակերն ասէ. Բ. Հաստատութիւն սատտիկ նախ քան զՃաշ'։

Բազում ազգք են գինւոյ 'ի Լակոնիա. և որ 'ի Հինգբլուրսն, եօթն ասպարիզաւ հեռի 'ի Սպարտայ, եւանէ գինին՝ Ծաղկահոտ է[1]։ Լաւ փեալ գինւոյն պարտ է եռալ 'ի հուր մինչև հինգերորդ մասն խաղմզին ցնդեսցի, և յետ չորից ամաց առնուն զայն յարբուն[2]։ Ի Ճաշս նոցա ոչ որպէս առ այլս յազգաց ձեռաց 'ի ձեռս անցանէ բաժակ, այլ իւրաքանչիւր ոք զիւրն սպառէ, և ընդ զայն անդրէն ստրուին սպասաւորիւր[3]։ Բ. Ցաստութիւն է նոցա ըմպել ըստ չափոյ պիտոյից[4]. և ախորժաբար վարին նովաւ առանց

1 Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 236։ Պիկերաուսկուլ. ինգ. գիրք Ե. գլ. 34. հտ. 2. էջ 389։ Սոսբ. Ճառ. 29. էջ 208։

2 Ազիմ. առ Ամենէոսի, գիրք Ա. գլ. 24. էջ 31։

3 Դիոմեկր. յոլ. մշակ. գիրք Ի. գլ. 4։ Պալլադ. առ մանանագիրս գեղջ. իրաց. գիրք ԺԱ. հտ. 2. էջ 990։

4 Կրիտ. առ Ամենէոսի, գիրք Ժ. էջ 432. գիրք ԺԱ. գլ. 3. էջ 463։

5 Քսենոփ. յոլ. հաս. Սպարտ. էջ 680։ Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 208։

զեղխեալս [1]։ Լքբեցելս սարկի դժպհի տեսիլ, զոր երբեք երբեք յանդիման առնէնոցա 'ի մանկութեան, զարշելացուցանէ զնոսա յոյժ յարբեցութենէ [2]. և խրոխտ մեծանձնութեամբն չառնուն յանձն 'ի նուաստութիւն անդր ինքանել։ Սոփին մեծանձնութիւն պատասխանեաց սպարտացին. որդ հարցեալ՝ թէ ընդէր չափով ըմպէր զգինի, ասէ. Արդէս զի մի մեռաց այլոց կարօտիցիմ [3]։ Լաց լրմնելելս ատտի, առնուն և զչինակ կաթին յարբումն 'ի ծարաւս իւրեանց [4]։

Լայ և այլ ճաշք ենոնցա հասարակաց, յանձնապարդոյն Փիլիտիայքն անուանեալք [5]։ Լքեալք, աւազանին և քաղաքացիք առ հասարակ ժողովին ճաշել 'ի միասին 'ի սրահս՝ ուր պատրաստեալ կան սեղանք բազումք, մէն միոյ հնգեւտասան ունելով սովորաբար բազմոցս [6]։ Բազմանկանք միոյ 'ի սեղանոց ոչ խառնին ընդ այլ բազմանկանս, և յակուրբ անդր սիրելեաց ոչ ոք կա-

1 Պղատ. յզ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 637։

2 Պլուտ. կարգագր. Լակոն. հա. 2. էջ 239։ Ամենն. գիրք գ. էջ 433։

3 Պլուտ. առակ. Լակոն. հա. 2. էջ 224։

4 Հիսիք. 'ի բառն Κίρρος.

* Չբմսելիս զայս գեռ ևս 'ի կիր առնուն բնակիչք աշխարհին։ (Տես 'ի հին Լակեդեմոն, հա. 1. էջ 64։)

** Ոմանք զճաշս զայսոսիկ Φειδιτίαι Փիդիտիայս կոչեն վասն սակաւապիտութեանն։ Իսկ այլք բազմագոյնք Φιλιτιαι, որ ուղղագոյն թուի՝ Նշանակելով զանուանս սիրելեաց։ (Տես Մեսրոպ խորարան Լակոն. գիրք Ա. գլ. 9։)

5 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 46։ Պորփիր. յզ. Ժուժկալ. գիրք Դ. յոգ. 4. էջ 305։

ըն մնանել առանց հաւանութեան ամենեցուն նոցա [1]։

Լազմին 'ի կարծը բազմոցս փայտակերտս 'ի կաղնւոյ, յեցեալ զարմանն 'ի վէմ կամ 'ի կոճղ փայտի [2]։ Պաշտի նախ հաւատն սեռ 'ի սեռան, ապա խոզենի խարշեալ՝ հաւասարաբաժին իւրաքանչիւր ումեք 'ի բազմականացն, և երբեմն 'ի կոտորակս փոքրիկս յոյժ՝ որ հագիւ կշռեն քառորդ մի մնատու [3]։ Լայլ գինի և փոխինդ կամ գարեհաց մատակարարի նոցա առատութեամբ։ Լ. զի յաւելուն 'ի հանապազորդ բաժինս նոցա և ձուին կամ ազգի ազգի որսք վայրի [4]։ Այք զոհս դիցն մատուցանիցեն և կամ յորս ելանեն, օրէն է նոցա 'ի դառնալ իւրեանց Ճաշել 'ի տունս իւրաքանչիւր. բայց միայն պարտ է նոցա յղել առ սեղանակիցս իւրեանց մնան յորսոցն կամ 'ի զոհից [5]։ Լ. բազմոցս իւրաքանչիւր դնեն կոտորակս խմորոյ հացի առ 'ի սրբել զմատունսն [6]։

Սովորութիւն է նոցա զրուցատրել 'ի Ճաշի զբաբոյական խնդրոց, կամ օրինակս առաքինութեանց 'ի մէջ բերել։ Պորձք առաքինութեան համարին առ սպարտացիս ընդ զբոյցս արժանա-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 46։

2 Աթեն. գիրք ԺԲ. էջ 518։ Սուիդ. 'ի բառն Αὐχὴν 'ի Φοῖ։ Պիկեր. Ճառ. վասն Մուր. գլ. 35. հա. 5. էջ 232։

3 Դիկեարք. առ Աթեն. գիրք Դ. գլ. 8. էջ 141։

4 Նոյն անդ։

5 Քսենոփ. յղ. հաս. Սպարտ. էջ 680։ Պլուտ անդ։

6 Պորփուկ. գիրք Զ. գլ. 14. յօդ. 93։ Աթեն. գիրք Թ. էջ 409։

լուրս։ Ինչք յաճախագոյնս արկանէն Ճառս, յստակ բերելով զխօսսն. և այլք պատկառանօք լսէն նոցա։

Ի պատշաճն յաւելուն և զզուարճալին [1], այսպէս պատուիրեալ Լիկուրգեայ բազմակա-նացն. յայն սակս իսկ կացոյց յանդիման նոցա զանդրի դիցն Ծաղու [2]։ Այլ 'ի զուարճութեան բանսն ոչ է պարտ նոցա խառնել երգիծանս. և եթէ յանկարծ զրոյց ինչ այնպիսի 'ի բերանոյ ուրուք 'ի խրախճանակցաց ելցէ, ոչ է օրէն պատ-մել զայն ումեք արտաքոյ։ Ներագոյնն 'ի նոցա-նէ ցուցանելով մտերոյ զզուռն Ճաշարանին՝ ազդ առնել նոցա, զի որ ինչ անդր մտանիցէ լսել՝ ոչ է պարտ թէ ելանիցէ ընդ այն [3]։

Դասք դասք համբակաց առընթեր կան սե-զանոյն, առանց ինչ Ճաշակելոյ. այլ մանկագու-նիցն 'ի նոցանէ գործ է բառնալ 'ի կերակրոց ան-տի Ճարտարութեամբ, զորս բաժանէն ընդ սի-բելիս իւրեանց. և այլք կան անդ 'ի լուր խրա-տուցն իմաստութեան և զուարճախօսութեանն։

Ճաշք հասարակաց, թէպէտ 'ի բանակէ մու-ծեալք 'ի քաղաք, և թէ յայլմէ իմէք առեալ պատՃառս [4], գործեն 'ի փոքրու պետութեան

1 Արիստոտ. 'ի Լիսիպդ. տող 1228։

2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 55։

3 Նոյն կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 236։

4 Նոյն 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 46 և 50։

5 Պլատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 625։ գիրք Զ. էջ 780։

զարմանալիս 'ի պահպանութիւն օրինաց [1]. 'ի ժամանակի խաղաղութեան զմիաբանութիւն, զԺուժկալութիւն և զհաւասարութիւն, իսկ 'ի պատերազմի հզօրագոյն յորդորանս հասանելոյ յօգնութիւն քաղաքացոյց՝ հաղորդութեամբն ընդ նոսա 'ի զոհս և 'ի հեղումն նուիրաց [2]։ Ի-նուազայ օրինադրեալ էր զայս յերկրի իւրում, և Իկուրգոս անտի ընկալաւ զսովորութիւնն՝ կապեալս ինչ փոփոխմամբք։ Ի Կրետէ 'ի գանձուց աշխարհին ընուն ծախքն [3]. իսկ 'ի Սպարտա 'ի հասից իւրաքանչիւրոց. զի պարտ է նոցա ամիս յամենայ տալ այսչափ ալիւր գաւազ և գինի և պանիր և թուզ և գրամ իսկ [4]։ Ի հարկապահանջութենէ աստի վասնզ էր չքաւորագունիցն արտաքս մնալոյ 'ի հասարակաց Հաշէ. զոր Լիքուրգոս ստացանէ յօրէնս Իկուրգեայ [5]։ Դարձեալ և Պղատոն զերկաքանչիւրն իսկ զՍինովս և զԻկուրգոս եպերեր, վասն զկանայս արտաքսելոյ նոցա 'ի հասարակաց կենաց [6]։ Լոգ ինձ ոչ է օրէն դատել զկարծիս այսքանեաց աւագ

1 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 780։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 45։ Նոյն առակ. Լական. հա. 2. էջ 226։

2 Դիոն. ազիկ. յղ. հնութեանց հռովմ. գիրք Բ. հա. 1. էջ 283։

3 Արիստոտ. յղ. հատ. գիրք Բ. գլ. 9 և 10. հա. 2. էջ 331 և 332։

4 Պլուտ. առակ. Լական. հա. 2. էջ 46։ Պորփիր. յղ. ժուժկալ. գիրք Դ. յօդ. 4. էջ 305։ Դիկեարք. առ Աթենէոսի, գիրք Դ. գլ. 8. էջ 141։

5 Արիստոտ. անդ։

6 Պղատ. անդ և գիրք Ը. էջ 839։

սպանց քաղաքավարաց և հանձարեղ օրէնադրաց։

Այն 'ի սպարտացւոց որք ոչ գիտեն զգսպրութիւն [1], և կէսք զՀաշիւ իսկ հաղիւ թէ գիտիցեն [2]. և բնաւին անծանօթ են առ նոսա աշխարհագրութիւն և աստեղաբաշխութիւն և այլ գիտութիւնք [3]։ Գիմնագոյնք 'ի նոցանէ զբօսանուն 'ի բերթածս Հոմերոսի [4] և Տիրպանդրի [5] և Տիրտեայ, վասն վերամբառնալոյ նոցա զմիտս։ Տեսարանք նոցա 'ի հրահանգս ևեթ սահմանեալ են [6]. ոչ ողբերգութիւնք և ոչ կատակերգութիւնք ընծային անդ 'ի տեսիլ, օրէնս է դեալ նոցա անձանց՝ մի երբէք մուծանել առ իւրեանս զթատերական բանաստեղծութիւն [7]։ Սակաւք ոմանք 'ի նոցանէ պարապեցին քնարերգակ բերթութեան, և յաջողեցան 'ի նմա։ Զգնման որ եկաց յառաջ քան զդարս իբր երիս, նշանաւոր գտաւ յարուեստին. քաղցունք են տաղք նորա. թէպէտ և հարկ 'ի վերայ կայր նմա մնաքաւել ընդ խստութեան դորացի բարբառոյն՝ որով խօսին սպարտացիք [8]. այլ կիրքն որ կրէին 'ի

1 Խակր. հատոր. հա. 2. էջ 290։

2 Պլատ. յերէցն Լպպ. հա. 3. էջ 285։

3 Նոյն անդ։ Եղիան. զան. պատմ. գիրք ԺԲ. գլ. 50։

4 Պլատ. յղ. որ. գիրք Գ. հա. 2. էջ 680։

5 Հերակլ. պոնտ. յղ. քաղաքական. նախնի Յունաց. հա. 6. էջ 2823։

6 Երոդոտ. գիրք Զ. գլ. 67։ Քսենոֆ. պատմ. Յունաց. գիրք Զ. էջ 597։ Պլատ. յԱգեսս. հա. 1. էջ 612։

7 Պլատ. կարգագր. Լաքոն. հա. 2. էջ 239։

8 Պաւսան. գիրք Գ. գլ. 15. էջ 244։

նմա, ամենեին զամենայն. զի զամենայն կեանս իւր նուիրեալ էր նորա սիրոյ, և յամենայն կեանս իւր երգեաց զսէր։

Լխորժելի է նոցա երաժշտութիւն որ ներ-զործէ 'ի հոգւոջ զխանդս առաքինութեան [1]. և անտեղեակք գոլով արուեստին՝ ըստ ազդեցութեան նորա 'ի բարս առնեն զնմանէ դատաստան, 'ի բաց մերժելով զնորաձևութիւնս՝ եղծիչս պարզութեան նորա [2]։

Օ Հակառակութիւն նոցա առ Հարտարիսաութիւն [3] յառաջիկայից իրացս 'ի միտ առցես։ Պատանւոյ ուրումն սպարտացւոյ վարժեալ արտաքոյ աշխարհին յարուեստն՝ իբրև դարձաւ անդրէն, պատուհասեցաւ 'ի սպարետաց՝ որպէս թէ մնա-բերեր խաբեալ զքաղաքացիս իւր [4]։ Լոյս այլ ոմն սպարտացի յաւուրս պեղոպոնեսական մարտին արձակեալ առ Տիսափեռն նախարար, յորդորել զնա զի թողեալ զԱթէնս՝ ընդ Սպարտայ միաբանեսցէ, սուղ ինչ բանիւ կատարեաց զպատգամաւորութիւնն։ Լոյս տեսեալ զի պատգամաւորքն աթենացւոց զամենայն շուք և պերճութիւն Հարտարիսաութեան 'ի Հնոյն յանդիմանն առ-

1 Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 238։ Քամել. առ Աթենէոսի, գիրք Դ. գլ. 25. էջ 184։

2 Արիստոտ. յղ. հատ. գիրք Ը. գլ. 5. հտ. 2. էջ 454։ Աթեն. գիրք ԺԴ. գլ. 6. էջ 628։

3 Կուինտիլ. հրահանգք Հարտ. գիրք Բ. գլ. 16. էջ 124։ Աթեն. գիրք ԺԴ. էջ 611։

4 Պէրա. Եմպիրիկի. ընդդէմ Հարտ. գիրք Բ. էջ 293։

նեէին, ձգեաց զիծս երկուս 'ի մի կէտ աւարտեալ, մին ուղիղ, միւսն կամակոր. և ցուցեալ զայն նա-խարարին, ասէ. Կնարեա՝։ Յառաջ քան զամն երկերիւր ընակիչք միոյ 'ի կղզեաց եգիպտեան ծովուն[2] նեղեալք 'ի սովէ՝ զիմեցին առ սպարտացիս, նիզակակիցք զոլով նոցա։ Դրա ետուն պատասխանի առ պատգամաւորն, և ասին. Օգ բուլթեան Ճառիցդ ոչ եղաք հաստ, և ոչ ևս զրս-կիզուն բանիցդ յիշեմք։ Բռաքեցաւ այլ հրեշ-տակ, պատուէր առեալ խօսել հակիրճ։ Յա նորա եկեալ ցուցանէր սպարտացւոց զպարկ ալեր դա-տարկ։ Գիտաց անդէն ժողովն, զի համբաւքք կար-ճեալ էին կղզւոյն. այլ խրատեաց դարձեալ ըզ-պատգամաւորն՝ մի ևս երկայնախօս լինել, թէ-պէտ և պատգամաւորին ոչ աւելի ինչ ասացեալ նոցա՝ բայց ընուլ զպարկն[3]։

Բ. յլ Զհանճար արուեստին մեծարին, թէպէտ և անգոսնին զարուեստ Ճարտարխօսութեան։ Ոմանք առ նոսա Ճարտարախօսք 'ի բնէ[4], ցուցին զՀանճար իւրեանց 'ի ժողովս համանգեացն և այլոց ազգաց, և յարձանական հանդէս՝ որ ամի ամի կատարին 'ի յիշատակ Պաւսանիայ և Լ է-ւոնիդայ[5]։ Յա Երասիդաս զօրավար, այն որ 'ի պեղոպոնեսական մարտին պատսպարան եղև փա-

1 Սկաս. Եմպիրիկ. ընդ-դէմ Ճարա. գիրք Բ. էջ 293։
2 Երոդ. գիրք Գ. գլ. 46։
3 Սկաս. Եմպիրիկ. Ը. անդ։
4 Ցպրին. 'ի Տիմ. էջ 288։
5 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 240։

ռայ հայրենեաց 'ի Մակեդոնիա, ընդ Հարտա-
բախօսս Համարէր առ աթենացիս իսկ՝ առ որս
մեծարեալ պատուի Հարտարիսօսութիւն [1]։

Հարտարիսօսութիւն սպարտացւոց միշտ 'ի
նպատակն դիմէ, և Հասանէ մեղր ընդ ուղղղ
Հանապարհ։ Խմաստակաց ոմանց օտարաց եղև
երբեմն հրաման մտանել 'ի Սպարտա, և հրա-
պարակախօս լինել. որք 'ի նոցանէ օգտակարս
Հաւիցեն՝ ընդունելիք էին, իսկ Համարտակողացն
ոչ ոք ունկն մատուցանէ։ Մի ոմն յիմաստակաց
աստի հրաւիրեր զմեզ յաւուր միում՝ 'ի լուր ներ-
բողէնի Հերակղեայ. և Կոտաղկիդայ լուեալ
զայն, գուեաց անդէն. Հերակղէայ, և ո՞ պար-
սաւիցէ զնա [2]։

Ել ամօթ Համարի առ նոսա տգիտութիւն, զի
աւելորդ վարկանին զգիտութիւնս. և 'ի կշտամ
բել աթենացւոյ ուրումն զանուսմնութիւն նոցա,
մի ոմն 'ի նոցանէ ասէ. Արդարև մեզ միայն չկա-
րացիք ուսուցանել զյոռութիւնս ձեր [3]։ Յան-
հրաժեշտ կարևորսն ևեթ պարապելով նոցա,
Հշգրտագոյնք էն տիպք իրաց 'ի միտս նոցա,
պատշաՀագոյնք առ իրեարս և կարգաւորագոյնք.
զի տիպք իրաց անՀարազատք, էն որպէս թևք
ապարանից անկանոնք՝ որոց 'ի գեղեցկայարմար
շինուածս չիք տեղի։

1 Թուկիդիդէս. գիրք Դ. գլ. 84։
2 Պլուտ. առակ. Լակոն. տե. 2. էջ 192։
3 Նոյն 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 32։ Նոյն առակ. Լակոն. հատ. 2. էջ 217։

Ա՝ ասն այսորիկ թէպէտ և տգէտ է ազգն քան զայլս, այլ յոյժ առաւել է ողջախոհ։ Թաղէոսի, Պիտակէայ և այլոց խնամտնոց Աշխադայ, 'ի նմանէ ասեն ուսեալ զարուեստ բուսնդակելոյ զնորատս բարոյականին 'ի համառօտ վէճիս [1]։ Ինձ իսկ դէպ եղև յաճախ զփորձ առնուլ իրացն, և զարմացեալ կայի։ Ունդ արս տգէտս և թանձրամիտս կարծելով խօսել, լսէի անդէն 'ի բերանոյ նոցա պատասխանիս լի հանճարով, և թափ անցեկս որպէս զնետ [2]։ Սոլոքեաքք 'ի մանկութենէ խօսել ազգու և հակիրճ [3], եթէ չլցեն ինչ նոցա կարևոր բանք՝ լռեն [4], և եթէ իցեն բաղումք՝ ներուին խնդրեն [5]։ Ա՛ՀԵՃԱՌՀՔ 'ի բնէ, զբազմաբանութիւն համարին ստրկի ա-զատաւորի անկ. զի հանգոյն նմին թուի փարել զոտիւք և խաղապատել զնոքօք՝ զորս համոզեն կամի։ Ոչ ընդ հակառակն համառօտութիւն խրոխտ է և մեծամտտ, և տեր անց հրամայողաց անկ [6]. և պատկանի բարուց սպարտացւոց, զոր յաճախ վարին նովաւ 'ի բանս և 'ի թուղթս իւրեանց։ Պատասխանիք նոցա երագունք իբրև զփայլակն, թողուն զՀետ իւրեանց մերթ լոյս

1 Պլուտ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 343։
2 Նոյն անդ, էջ 342։
3 Երոդոտ. գիրք Գ. գլ. 46։ Պլատ. յզ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 641։ Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 514 52։ Պաւսան. գիրք Դ. գլ. 7. էջ 296։
4 Պլուտ. անդ, էջ 52։
5 Թուկիդիդէս. գիրք Դ. գլ. 17։
6 Դեմոսթ. փաղեր. յզ. տիր. Ռոմեոս. գլ. 253։

պայծառ, և մերթ զբարձր կարծիսն՝ զոր բերէն նոքա զանձանց և զՀայրենեաց իւրեանց։

Օ. Հարիւրաւեայ արքայի զգովեստ մարդասիրութեանն լսելով արքայակցի նոցա, ասէ. Լա՛ հանարիցիք մարդասէր զայն՝ որ և առ չարս մարդասիրէն[1]։ Ի միում՝ ի քաղաքաց Լեղապայ քարոզ՝ ի վաճառ գերւոյն աղաղակէր. Ո՞ առնուցէ՞ զըսպարտացի։ Լա՛ ասդ ուրուն ըմբերանեալ զնա ձեռամբ, գոչէ. Ա՞ի զսպարտացի, այլ զգերի[2]։ Օ. օրավարք արքային Պարսից Հարցին ցՀրեշտակս սպարտացւոց. Ի՞նչ զայք խօսել՝ ի խաղաղութիւն, թէ պատգամաւորք։ Լա՛ նոքա ասեն. Լթէ չյաջողէ՝ զամբ իբրև՝ ի մէնջ, իսկ թէ յաջողէ՝ իբրև պատգամաւորք[3]։

Օ. նոյն համառօտութիւն է տեսանել և՝ ի թուղթս աւագանւոյն և զօրավարացն առ աւազանին զրեալ։ Պարետացն երկուցեալ զի պահապանք Դեկեղեայ յանկարծ պաշարեսցին՝ ի թշնամեաց՝ թողացեալք՝ ի հանապազորդ հրահանգացն, այսչափ ինչ գրեցին առ նոսա. Ա՞ի զբօմնոյք[4]։ Օ. քաղմանէտ պարտութիւնս և զպայծառ յաղթութիւնս նոցին պարզութիւն աղդ առնեն։ Ի սեղոպտեսական մարտին՝ ի բեկանել նաւատորմին նոցա՝ որում Հրամայէր Ա՞ին

1 Պլուտ. ՝ի Լիկուրգ. հտ. 1. էջ 42։ նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 218։
2 նոյն անդ, էջ 233։
3 նոյն՝ ի Լիկուրգ. հտ. 1. էջ 55։ նոյն առակ. Լակոն. էջ 231։
4 Եղիսա. զան. պատմ. գիրք Բ. գլ. 5։

դար, յերեսաց նաւատոլմին սթենացւոյ՝ պուտ առաջնորդեր Աքիբեպ, մի 'ի սպայից զրեաց առ պարէտս այսպէս. Ա՞տան բեկաւ, Ա՞ինդար անկաւ, սպառեաց Համբար, չկը հնար [1]։ Լուեալ ոչ բաղում աւուրց Լիւսանդր զօրավար բանակին զրեաց առ նոսա զլուր յաղթութեանն՝ որ առաւել քան զամենայն յաղթութիւնս յաՀախեաց փառս և օգուտ Սպարտայ, և պատՀէն զրոյն էր այս. Աթէնք առան [2]։

Աչալմի որ 'ի բանից սասի կարծեսցէ զսպարտացիս անժպիտս զոլ և խստաբարոյս. զի ազատութիւն մտաց և առողջութիւն պատրաստագոյնս առնէ զնոսա 'ի զուարթութիւն։ Աչքագարծարծանի 'ի նոսա բերկրութիւն, զի սթափ է և բնական. և Ճարակի զուարթախօսութեամբք, որք զերծ 'ի տգեղ և 'ի թշնամանող բանից՝ ամենեքին զամաստանին 'ի խեզկատակութենէ և յերդիծանաց [3]։ Ի մանկութենէ կրթին նոքա 'ի տուրեաւ այսպիսեաց բանից [4]. և ընդ ինդրել ուրուք ինայել յանձն իւր՝ լուին [5]։

Այսպիսի բանիւք ցածուցանէն երբեմն զմտապարծութիւն և զցաստուն։ Ոչ եղև զի մինչ

1 Քսենոփ. պատմ. Յունաց, գիրք Ա. էջ 430։
2 Պլուտ. 'ի Լիւսանդր. հտ. 1. էջ 441։ Նոյն առակ. Լական. հտ. 2. էջ 239։ Պարբաց. Դեմոն ասէր. Հատ. 64. էջ 106։
3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 55։
4 Հերակլ. պոնտ. յՀրաքլէական. Նախնի Յունաց, հտ. 6. էջ 2823։
5 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 46։

կայի էս ընդ Լաքիդամայ աղքայի, Պերիանդր բժիշկ նորա մատոյց նմա տաղս զոր այն ինչ ա-ւարտեալ էր։ Լաս թագաւորն ասէ ցնա մեր մեր-թեամբ. Լաս ընդէր Նարտար բժիշկդ գոլով, քերթող հետեւակ զանձն քո առնես՝։ Լաս յետ ոչ բաղում ամաց ծերոյ ուրումն գանգատելոյ առ Լգիս աղքայ վասն օրինազանցութեանց ինչ, իբր թէ բառնային օրէնք՝ ի սպառ՝ ի միջոյ, ասէ թագաւորն ժպտելով. Ոչ մարտիւ այդ այդ-պէս է, զի և հայր իմ վկայէր զայդ՝ ի մանկու-թեան իմում, և նորա՝ ի մանկութեան իւրում լուեալ էր զայն՝ ի հօրէ իւրմէ [2]։

Լյուեստաք շահեկանք, և մանաւանդ առիթք զեղխութեան, բնաւ իսկ արգելեալ են սպար-տացւոց [3]։ Ոչ է օրէն առ նոսա խառնել ընդ իւ-ղոյ անուշունս, և ոչ գունագեղել զասր՝ բայց միայն՝ ի գոյն ծիրանւոյ. նմին իրի ոչ իւղեփեսաք են առ նոսա և ոչ ներկարարք [4]։ Ոչ է պարտ նոցա ձմեռանել զսակի և զարծաթ, և ոչ զՆարտարս նոցա [5]։ Լյն նոցա՝ ի բանակի արուեստագէսք պիտանիք, որպէս քարոզք և փողարք և խոհա-կերք. բայց միայն որդի՝ ի հօրէ պարտ է նոցա ժառանգել զարուեստն, ոմն առ եգիպտացիս [6]։

1 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 218։

2 Նոյն անդ, էջ 216։

3 Նոյն՝ ի Լիկուրգ. հտ. 1. էջ 44։ Նղիան. զան. պատմ. գիրք Զ. գլ. 6։ Պողիբն՝ ի մարթանան, գիրք Բ. գլ. 1։

4 Ատէն. գիրք ԺԵ. էջ 686։ Սենեկա ինդ. բն. գիրք Դ. գլ. 13. հտ. 2. էջ 762։

5 Պլուտ. ի Լիկուրգ. անդ։

6 Նրոդոտ. գիրք Զ. գլ. 60։

Ա՛յնպիսի իմն բերէն կարծիս զաղատութենէ, զի զձեռագիտական արուեստս անլծորդելի համարին ընդ այնմ՝ [1]։ Այլ ոմն 'ի նոցանէ 'ի դառնալ իւրում յԱթենայ՝ ասէր ցիս. Զամ 'ի քաղաքէ, ուր չհամարի ինչ անպատեհ։ Յայտ իմն այսպէս առնելով ոչ միայն զայնոսիկ՝ որք կապէին տային պոռնկաց, այլ և զպարապետսն 'ի դուշնաքեայ տուրեւառս շահից [2]։ Եւ այլ ոմն 'ի քաղաք անդր երթեալ, և լուեալ զմիոյ ուրումն 'ի քաղաքացւոց դատապարտել 'ի տուգանս վասն անգործութեան, ինդրեաց տեսանել զնա որպէս զարմանալի իմն, զի յընկերահաշտ պետութեան պատուհասէր քաղաքացին՝ վասն ազատ գոլոյ յամենայն ծառայութենէ [3]։

Եւ զարմանաց նորա պատճառք, զի օրէնք ապարտականք բերին յազատեցուցանել զմիտս յամենայն ջանահնար շահից և յառանին հոգոց [4]։ Որոց կալուածք գոն, պարտ է նոցա տալ զայն եղուսացւոց 'ի վարձու [5]. և որոց վէճք են, վճարել զայն բարեկամութեամբ. զի չէ օրէն ծախել նոցա զպատուական ժամանակն կենաց իւրեանց 'ի դատս [6] և 'ի գործառնութիւնս վա-

1 Արիստոտ. յԶ. Ճարտ. գիրք Ա. գլ. 9. հա. 2. էջ 532։

2 Պլուտ. առակ. Լակոն. հա. էջ 236։

3 Նոյն անդ. էջ 221։

4 Նոյն կարդադր. Լակոն. հա. 2. էջ 239։

5 Նոյն 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 54։ Նոյն առակ. Լակոն. հա. 2. էջ 216։

6 Նոյն 'ի Լիկուրգ. անդ։ Նոյն առակ. Լակոն. հա. 2. էջ 233։

Հառակամուութեան [1], և յայլ հնարս զոր սովորութիւն է 'ի կիր արկանել 'ի յաճախութիւն մեծութեանց և 'ի զբաղումն։

Սակայն ազատք են ամենևին 'ի տարգելութենէ, զի ոչ երբէք միայնակ կան, և ոչ 'ի հանգրստեան [2]։ Լոգ, գօտեմարտ, ընթացք սպարիզակաւք, գնտակախաղ [3], և այլ ևս հրահանգք կրթարանին և զինուորական հոլովմանց զհարուստ մի մասն աւուրն գրաւեն [4]։ Լաւ ապա պարտ համարին և զբօսանս՝ կալ 'ի զնին խաղուց և մրցութեանց մանկուցոյն [5]. անտի գնան 'ի խօսարանս, որ են յայլ և այլ կողմանս քաղաքին կառուցեալ սրահք [6] ուր սովորութիւն է արանց յամենայն չափոյ հասակի գումարել անդր։ Օ՛ի յոյժ սիրողք են խօսակցութեան, և դուն ուրեք զշահից և զառաջարկութեանց ազգաց առնեն խօսս, այլ լսեն անձանձիր զկարատս ծերոց [7], և մտադրութեամբ ունկնդիր լեալ ուսանին ըմբռդկան և զդիւցազանց և զքաղաքաց [8] զուստն և զվարդն. և յաճախութեամբ զուարթարար բանից քաղցրանան 'ի լսելիս նոցա ճառք ծանունք։

Ի ժողովս յայսոսիկ և 'ի ճաշս և 'ի հանդէսս

1 Քսենոփ. յոյ. հաս. Սպարտ. էջ 682։
2 Պլուտ. 'ի Լիկուրգ. էջ 55։
3 Քսենոփ. անդ, էջ 684։
4 Եղիան. զան. պատմ. գիրք Բ. գլ. 5. գիրք ԺԴ. գլ. 7։
5 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 54։
6 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 240. գլ. 15. էջ 245։
7 Պլուտ. անդ։
8 Պղատ. յերէցն Խպպ. հատ. 3. էջ 285։

հրամանգաց առընթեր կան միշտ ալիք պատուա-
կանք։ Պատուականք ասեմ, զի ծերութիւն այլ-
ուր արհամարհ ամբառնայ 'ի Սպարտա զքա-
զաքացին 'ի ծայրագոյն պատիւ [1]։ Այլք 'ի քա-
զաքացոյց, և մանաւանդ մանկտին, ընծայեն նմա
զմեծարանսն զոր անկ է նոցա ընդունել ապա
յայլոց։ Հրամայեն նոցա օրէնք տեղւոյ տալ նմա
'ի հանդիսսն, յոսն կալ առաջի նորա, և լսել
յորժամ նայն խօսի. և 'ի համախումբ ժողովս
և 'ի սրահս կրթարանին ամենեքին լսեն նմա։
Այսպէս քաղաքացիք բարերարք հայրենեացն ոչ
միայն չխոտին 'ի վախճան կենաց իւրեանց, այլ
մեծարեալ պատուին կէաք իբր աւանդաւորք
փորձոյ, և այլք որպէս զարձանս՝ որոց նշխարք
պահին երկիւղածութեամբ։

Արդ եթէ սպարտացիք այսչափ ժամանակս
ծախեն 'ի պարապմունս զոսոց և 'ի համախումբ
ժողովս, 'ի կատարել զոսնս յաձախաւորս՝ զորս
յաւելուն պայծառացուցանել կաքաւ և երաժշ-
տութիւն [2], և զի դարձեալ զէօսանք հասարա-
կաց համարին ազգին զուարթագոյնք են յոյժ
քան զիւրաքանչիւրոց առանձինն, ապա ոչ միայն
չիցեն թշուառ կեանք նոցա, այլ և անընդհատ 'ի
զուարճութեան կան և 'ի տեսարանս ցանկալիս։
Ի տեսարանաց աստի երկուք զարմանալիք էին

1 Պլուտ. կարգագր. Լա-
կան. հա. 2. էջ 237։ Ցուս-
տին. գիրք Գ. գլ. 3։

2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա-
տ. 1. էջ 54։

յոյժ Պինդարոյ • տեսանել զեռանդուն աշխոյ-
ժըս քաջամարտիկ մանկուտոյն ամբեալ միշտ ծե-
բակուտին զերակատար զգենութեամբ, և զբազ-
մապայծառ յաղթանակս Պ՝ուտոյից կցորդեալ
միշտ ընդ բերկրալից ցնծութիւն հասարակաց ՝։

Պերեղմանք նոցա հանգոյցտանցն անպառնայնք,
ցուցանեն զի չիք խոիր ՝ի քաղաքացիս ՝։ Ա-
ըէն է կանգնել զնոսա ՝ի քաղաքամիջի, և առ
մեհենաբ իսկ։ Ոչ ՝ի յուզարկաւորութեան և ոչ
՝ի ժամ վախճանին ողբք և աշխար ՝. զի սպար-
տացիք ոչ առաւել կրեն կիրս ՝ի տեսիլ մահու-
քան ՝ի ժառանգելն զկեանս. և զմտաւ ածեալ՝
զի մահուն է սահմանել զկեանս, հնազանդին
հրամանի բնութեան նոսին միամտութեամբ՝
որով պիտոյից աշխարհին հպատակ կան։

Կանայք նոցա անձնեանք են և հուժկուք, քաջ-
առողջք և գեղաղեշք՝ պատկառելիք առնացի
գեղոին. որպէս զի մարթեր Փիղիայ զտանել ՝ի
նոսա նախատիպս բազումս իւրումն Ա՝թենասայ,
այլ Պրաքսիտելեայ գծուարաւ զոք ՝ի նոցանէ
առ ՝ի դրօշել զ՝ջտլիին իւր։ Օ գեներաւն բանկա-
նակ կամ շապիկս ինն կարձ՝, և սձնեաւոր զնո-
վաւ հանդերձ ՝։ Զիրոդք ողբ զոչն ողջոյն պա-
բապեն յլսիշամարտս, յարշաւ, ՝ի վազս, և յայլ

1 Պինդ. առ Պլուտարքեայ ՝ի Լիկուրգ. հտ. 1. էջ 53։
2 Հերակլիդ. պոնտ. յոլ. հնութեանց Յունաց, հտ. 6. էջ 2823։
3 Պլուտ. կարգադր. Լակոն. հտ. 2. էջ 238։
4 Ուոյն. Ընդհ. հտ. 1. էջ 823։

տարժանաւոր հրահանգս, միակ սովորէն զգենուլ հանդերձ թեթև և անթեղանի՝ կոձկէն զուսովք [1], զոր հանգուցն իմն մինչև ցծունկս 'ի վեր ժողովէն գօտւով [2]։ Սաղմոսք նորա հերձեալ են երկուստեք, որպէս զի անծածկցի գոլ նոցա կիսովն [3]։ Բան լեցի ինձ անբասիր առնել զսովորութիւնս զայս, այլ զպատանաւս այնորիկ և զարգասիս յաւելում ըստ պատասխանելոյ ինձ սպարապետաց ոմանց՝ 'ի ստգտանել իմում զայն։

Ել էր մարթ [4] ի կիսուրդեայ զնոյն հրահանգս ուստերաց սահմանել զուստերաց, առանց բառնալոյ զամենայն խոչ խասիանարար շարժման։ Խորհէր արդեօք զի բնութիւնս մեր յապականելն իւրում ծածկեաց զմերկութիւն, և ըստ յառնախեալոյ ախտից յառնախեցին զգեստք. և զի հրապոյրք զեղջ մոլորեցուցիչք՝ բազում այն է զի յառնախ տեսութեամբ անկանին 'ի զօրութենէ. և զի որք չիցեն վաղագոյն զեղծեալք, ոչ յոյժ դիւրին է նոցա տեսութեամբն զեղծանել։ Սովին խորհրդովք հնարէր զաշնակիցս միմեանց զառաքինութիւնս երկոցունց սեռիցն յարգարել, ընկեղելով զժպրհութիւն միոյն, և զտկարութիւն միւսոյն կազդուրելով։ Այսմն իրի պատուհաս մեղու 'ի վերայ պղծագործին սահմանեալ [5], սովո-

1 Եւսեբիոս. Յեղիսկ. հա. 2. էջ 975։

2 Կղեմ. աղէքս. գաստիարակ. գիրք Բ. գլ. 10. էջ 238։ Պիրգիլ. Ենէական. գիրք Ա. տող 320, 324, և 408։

3 Եւրիպ. Յանդիսատ. տող 598։ Սոփ. առ. Պլուտ. 'ի նեամ. էջ 77։

4 Մեսրոպ. խոնարհան Լամոն. գիրք Բ. գլ. 3։

բեցոյց զմանկտին ընդ չարիս և ևթ ամաչել[1]։ Պարկեշտութիւն անդ ըստ մասին ինչ քօղնկեց[2], պատկառելի եղև երկաքանչիւրոցն, և կանանին Սպարտայ ամբծութեամբ բարուցն գտաւ նշանաւոր։ Լ. յն զի և յիմաստասէրս եգիտ իւր համախոհ Լիկուրգոս. զի Պղատոն յիւրումն հասարակապետութեան 'ի կուսանոց անդր ընդշաց և զանաւագ 'բնութիւնն մուծանել, առանց խորհելոց զհասակ, զառաքինութիւն և ևթ ածեալ զնոքօք ծածկոյթ[3]։

Օրիորդք 'ի Սպարտա բացաւ երեսօք շրջին 'ի քաղաքամիջի մինչև ցհարմնութիւն. իսկ յետ հարսանեաց, զի իւրաքանչիւր առն ևթ իւրում պարտ է հաճոյ լինել, աքօղին[4]. և ոչ ումեք օրէն է գոլութիւնս խօսել զնոցանէ, զի ոչ է պարտ նոցա այլում ումեք՝ բայց միայն արանցն ծանօթ գոլ[5]։ Բայց քօղն այն նսեմև ամենեքեան լուութիւն իբր հարկ իմն ընծային համեստութեան. այլ ոչ ուրեք որպէս 'ի Սպարտա ազատք են կանայք և անարգեալք[6], և ոչ ուրեք նուազագոյն զեղծեալք ազատութեամբն։ Դրժեալ առն և զոյգն իսկ սեթևեռեթ 'ի զարդս երևելիս բնաւ

1 Պղատ. յՂ. հատ. գիրք Ե. հատ. 2. էջ 452։

2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 48։

3 Պղատ. անդ, էջ 457։

4 Պլուտ. առաք. Լակոն. հատ. 2. էջ 232։

5 Նոյն անդ. էջ 217 և 220։

6 Արիստոտ. յՂ. հատ. գիրք Բ. գլ. 9. հատ. 2. էջ 328։ Դիոն. ազիկ. յՂ. հուութեանցն հռոմ. գիրք Բ. գլ. 24. հատ. 1. էջ 287։

իսկ օտար էին երբեմն 'ի նոցանէ [1]. և թէպէտ արդ ոչ նոյն զգաստութիւն և ոչ նոյն պարկեշտութիւն է նոցա, այլ հաւատարմագոյնք են քան զամենայն կանայս Աղլաղայ։

Աւ բազք ևս նոցա զօրաւորք են, և այնու յաջողէ նոցա յիւրեանս նուաճել զարս իւրեանց, որք հարցանեն զնոսա մնագիւր զառնին և զաղգային իրաց։ Օ՛ի ազգ պատերազմող դիւրամէտ է 'ի սէր, փորձ իրացն յայտ առնէ. վկայէ այսմ և Աբիսին ընդ Աստղկան զուգութիւն, և օրինակ սպարտացւոց հաստատէ զայն [2]։ Մին յօտարաց ասաց երբեմն ցտիկին արքային Լեւոնիդայ. Ոչ ուրք միայն 'ի կանանց իշխէք արանց։ Աւ նա ասէ. Աւ կարի իսկ քաջ, զի մեք միայն արս ծնանիմք յաշխարհ [3]։

Յառաջ քան զամն ոչ բազում արիութիւն կանանց սպարտուհեաց պակոյց զամենայն Աղլաղա, զի 'ի տեսիլ բանակին Աղամենոնդայ լցին նոքա զքաղաքն աղմկաւ և արհաւրօք [4]։ Այլ թէ և բնաւորութիւն նոցա հանդոյն առաքինութեանցն սկսանիցի այլայլել. իցէ՞ և արիութեանն նոցա օրհաս, և վայրիկ մի վատութեան դրդուեցուցէ՞ զայնքան մեծամեծ և զգերաշխարհիկ նահատակութիւնս նոցա՝ որովք յամենայն ժա-

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։ Նոյն առակ. Լակոն. հտ. 2. էջ 233։

2 Արիստոտ. յզ. հատ. գիրք Բ. գլ. 9. հտ. 2. էջ 328։ Պլուտ. յԱգիս. հտ. 1. էջ 798։

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 48։

4 Արիստոտ. անդ։

մանակի պայծառացան և պայծառանան հանապազ։ Պատիւ և սազատութիւն զեր 'ի վերոյ է քան զամենայն ինչ 'ի միտս նոցա. և երբէք երբէք այսպէս 'ի խորհուրդս յայս խորասուզին, զի ոչ իսկ է մարթ սահմանել զկիրսն որ մէջն զնոսա։ Մի 'ի նոցանէ գրէր առ որդին իւր անձնապէս 'ի Ճանկատամարտէ. Օ ըոյց չար լսեմ զքէն, դադարեցո՛ զքա կի՞ դադարեա՛ 'ի կենաց[1]։ Իսկ յաթենացւոյ կանանց ոմն զնայն համբաւ զորդւոյ իւրմէ լուեալ, գրեաց առ նա. Շ նորհ ունիմ զքէն, որ պահեցեր զկեանս քո ինձ[2]։ Լուդ այնոցիկ իսկ որք զերկրորդս զայս անբասիր առնիցեն, անմարթ է չը զարմանալ ընդ առաջինն։ Լսբին դարձեալ զարմացին ընդ պատասխանին Լքգիղէոնեայ մեր երև եղոյն Լրասիդայ։ Օ ի թրակացւոյ ոմանց պատմելովնոնա զպանծալի մահ որդւոյ նորա, յայ ւեղին՝ թէ ոչ որ 'ի Սպարտա մեծ քան զնա զօրսավար եկաց։ Իսկ սպարտուհին ասէ. Լսարիք հիւրք. ոչ զորդին իմ միայն՝ այլ յոգոնս մնուցանէ Սպարտա 'ի ծոց իւր քաջագոյնս քան զնա[3]։

Յայս վայրնուազն բնութիւն, այլ ոչ հարըստահարի, և այս է ստոյգն արիութիւն. նմին իրի և պարէտք գերապանծ պատիւս սահմանեցին ինքն այնմիկ։ Լայլ ոմ զայն լսել կարիցէ առանց քստմնելոյ, զի իբրև գոյժ եհար միւմ 'ի

1 Պլուտ. կարգագր. Լակոն. հտ. 2. էջ 241։
2 Սատր. Ճառ. 106 էջ 576։
3 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 219 և 240։
4 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 122։

սպարտուհեաց մնոց՝ թէ որդին քո անկաւ 'ի մնարտի առ 'ի չլքանել զդաս իւր, ասէ. Թա-զեսցի անկեալն, և եղբայրն նորա փոխանակեսցէ 'ի տեղի նորա[1]։ Օ՛նոյն սոսկումն ածէն լսելեաց և այլոց ուրումն սպարտուհւոց բանք. զի մնայր նա արտաքոյ քաղաքին՝ առնուլ զրոյց զսատերազ-մէն, և իբրև եհաս սուրհանդակն՝ եհարց զնա. և սուրհանդակն ասէ. Հինգ որդիք քո անկան։ Կինն ասէ. Ուր զայն հարցանեմ, այլ գուցէ՞ ինչ վտանգ հայրենեաց։ Սուրհանդակն ասէ. Յաղ-թանակեն հայրենիք։ Նա սպարտուհին ասէ. Զոհանամ ընդ կորուսան իմ[2]։ Նա՞ դարձեալ ոչ սոսկացի տեսանելով զմարս, որք իւրովի զոր-դիս իւրեանց դասալքս սպանանէն[3]. և զայլս դարձեալ, որք 'ի Ճակատամարտին տեղի դիմեալ՝ խնդրեն տեսանել զդիակն միածնի իւրեանց, և դիտեալ հետազօտեն զվերքն՝ քանիք փառս և քանիք անարգանս գործիցեն նմա. և զսոսկալի հաշիւն կատարեալ, ապա խրոխտագոյնք առաջի յուզարկաւորաց բազմութեան ընթանան, կամ խուսեն 'ի տուն իւրեանց՝ թագուցանել անդ զողբս իւրեանց և զամօթ[4]։

Փառասիրութիւնս այս ծայրայեղ, մանաւանդ

1 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 242։
2 Նոյն անդ, էջ 241։
3 Նոյն անդ։ Ծաղկաբաղ. գիրք Ա. գլ. 5. էջ 5։
4 Նոյնան. զան. պատմ. գիրք ԺԲ. գլ. 21։

սակի իբրև թուին յետոյ գոլ քան զժամանակս, յորս օրէնք Լիկուրգեայ խաւիս պահէին. յետ թագաւորելոյ Նոցա՝ ապա ձախողակի արիութիւնս այս սիրեաց 'ի կանանցին և 'ի մանկա-տին Սպարտայ։

թէ եղեռնաւոր, այնպէս 'ի բաց վազեալ անցա-
նել քան զսահման մեծութեան որ անկ է մար-
զոյ, զի ոչ երբէք 'ի սպարտացւոց որ արանց 'ի
կարի իսկ փառամոլից եբեր զայն յանձին։ Լա-
պատճառք, զի 'ի նոսա հայրենասիրութիւն զոր-
ծէ վսեմարութիւնս. իսկ 'ի կանայս նոցա կիրք
անընդելական իրաց գործեալք։ Վանզի զեղ
և զարդ, ազնուականութիւն և բարեմասնու-
թիւնք մնաց ոչինչ զօրեն 'ի Սպարտա սահմա-
նել նախապատուութիւնս 'ի կանայս, հարկ եղև
սոցա հաստատել զգերազանցութիւն իւրեանց 'ի
բազմութիւն և 'ի քաջութիւն որդւոց։ Լը կեն-
դանութեամբ որդւոցն վայելեն մարք 'ի յոյս
պայծառութեան նոցա՝ փայլմամբ 'ի նոսա նշու-
լիցն, և 'ի մահուն նոցա ժառանգեն զհամբաւ
անուանն նոցա։ Լա այս դժնդակ ժառանգութիւն
վայրենացուցանէ զնոսա, կցորդելով երբեմն հայ-
բենասիրութեան նոցա զամենայն կատաղութիւս
փառամոլութեան և մնապարծութեան։

Լյլ մեծախոհութեանս այսմիկ, զոր ցարդ
ևս երբէք երբէք բերեն յանձին, յաջորդեսցեն
ընդ հուպ՝ առանց խափանելոյ զայն 'ի սպառ՝
խնամոտք նկունք, և կեանք նոցա լցին հիւսք իմն
փոքրոգութեան և մեծանձնութեան, վայրենու-
թեան և հեշտութեան։ Լյժամն իսկ բազումք
'ի նոցանէ 'ի քարշ ձգին 'ի ճաճանչ ոսկւոյ և 'ի
հրապոյրս զրկանաց [1]։ Լթենայիք որք յայտ-

[1] Արիստոտ. յՀ. հատ. գիրք Բ. գլ. 3. էջ 328։

հաբարբառ եպերէին զաղաւոութիւն կանանցն սպարտացւոց, յայլմանակին արդ տեսանելով զայն զառածեալ 'ի ցոփութիւն [1]։ Այս խնամաստ-սէրք իսկ սպարտաւէն զ[2] Լիկուրգոս, զի դաստիարակութեան արանց ևեթ ուշ եդ [3]։

Զամբաստանութիւնս զայս այլուր լցցի մեզ քննել, ուր և զպատճառս եղծման բարուցն սպարտացւոց հետազօտեսցուք [4]. զի ոչ ևս են նոքա որպէս յառաջ քան զդար մի, զայս հարկ է խոստովանել։ Վասն ամբարտաւանին մեծութեամբքն հանմբռնակ, այլք զառագութեան թեին ածեն՝ որում հարք նոցա շատ հանմբռնին արժանի յարդարել զանձինս [5]։ Ոչ բազում ինչ ժամանակ է, զի շուրջ զբաղաքաւ նոցա ըմբռնեցաւ կին ոմն 'ի շնութեան [6]. և որ ոչ ինչ ընդհատ վնասակարագոյնն է, Կինիսկա քոյր արքային Ագեսիղայոսի արձակեաց յՈղիմպիա կապաւ չորեքերիվարեանս վասն մրցանակին անդ 'ի կապաշաւս, և քերթողք նուագեցին զյաղթանակ նոցա, և աղխարհն կանգնեաց նմա արձան առ 'ի պարծանս [7]. այսոցիկ մեզէն իսկ ակամատեաք եղաք։

1 Պղատ. յղ. օր. գիրք Ա. հտ. 2. էջ 637։

2 Նոյն անդ, գիրք Զ. էջ 781. գիրք Ը. էջ 806։ Ընթասաս. յղ. հատ. գիրք Բ. էջ 329։

* Տես 'ի գլ. ԾԱ։

3 Քսենոփ. յղ. հատ. Սպարտ. էջ 689։

4 Նոյն պատմ. Յուն. գիրք Գ. էջ 495։

5 Պլուտ. առակ. Լակոն. հտ. 2. էջ 212։ Պաւսան. գիրք Գ. գլ. 8. էջ 222. գլ. 15. էջ 243։

Բայց թէպէտ և վատթարեալք, պահէն տա-
կաւին զմնացուածս նախնի մեծութեանն։ Ա-
երբեք յանձն առնուն զկեղծիս և զվատութիւն
և զոր և պէտ հնարս անարգս ոչ նուաստացու-
ցանեն զոգիս. ընչասէրք են առանց ագահութեան,
և փառասիրեն առանց չարարուեստ հնարիւ։ Հր-
զօրագոյնք իսկ 'ի նոցանէ ծածկեն զեռ ևս պատ-
կառանօք զդժպատեհ կեանս իւրեանց՝, որպէս
դասալիքք երկուցեալք յօրինացն զորովք ան-
ցին, և կարօտեալք ուղղութեանցն՝ զորս կորու-
սին։

Տեսի և սպարտացիս, որոց մեծանձնութիւն
նախանձելի էր. կային 'ի բարձու առաքինու-
թեանն անձիւն և առանց մնասարծութեան, և
ոչ յերկիր հակամիտեալք 'ի ձանձնչ աւագու-
թեանց կամ 'ի յոյս վարձուց։ Ա՛ 'ի կարօտու-
թենէ երկնչին, և ոչ 'ի մահուանէ զանգիտեն,
բայց միայն 'ի յանձն առնլոյ զվատութիւն։ Ի
վերջնումն նուազի ուղեորելոյ խնդ 'ի Սպարտա,
մինչ զեռ խօսէի ընդ Տաղեկրեայ որ յետին
չքաւորութեամբ տուայտէր, և ընդ Դամինդայ
որ բարեկեցիկն էր, 'ի վերայ եհաս մի 'ի պա-
տուիրակաց՝ զորս Փիլիպպոս արքայ մակեդոնա-
ցւոց 'ի վարձու ունէր առ 'ի յոլովել իւր կուսա-
կիցս։ Հարց նա զՏաղեկրոս. Օ՞ ինչ մեծու-
թիւնք են քեզ։ Նա զԹիկունս դարձուցեալ, ա-

[1] Արիստոտ. յղ. հաս. գիրք Բ. գլ. 9. էջ 330։

սէ. Կարևորն [1]։ Այս միտումն սպառնայր պատուիրակն մատնել ցասման Թագաւորին. իսկ նա ասէ. Երթ վատ արանց, զի՞նչ ձեռնհաս իցէ Թագաւորն քո առնել մարդկան՝ որք զմահ արհամարհէն [2]։

Լսան ընդ եկամուտ յոռութիւնն զնախնի առաքինութիւնս նոցա տեսանելով, և ուշիւ 'ի նոսա յառեալ, Թուէի 'ի հրդեհեալ ուրեք անտառի՝ ուր կէաք 'ի մայրեաց աձիւնացեալք էին, այլք կիսայրեացք, և էին որ անկէզ զերծոխտ զազաթունսն երկնաբերձ յամպս ծրարէին։

1 Պլուտ. առակ. Լական. հա. 2. էջ 232։
2 Նոյն անդ. էջ 219։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Զ-ԽԷՄՆԵՔ ՀԳԱՆԵԱՆ ԺԱՄԵՐ ։ (ԷՋ 64 ։)

Օրն յորում Մեհան գիտաց զկէսն ժամագիտակ ամառնամին, հանգիպի ի քսանեւեօթներորդ օր յունիսի մերոյս յուլեան ամի. և օրն յորում սկիզբն եղե նորոյ մեհանեան շրջանին՝ հանգիպի ի վեշտասաներորդ օր յուլիսի [1] ։

Ինեւտասներեակն Մեհանի արեգակնային ունէր 6940 աւուրս [2]. իսկ ինեւտասներեակն լուսնական, հանգերձ եօթմիջք աւելորդաց ամսոցքն, ունին 235 ամիսս լուսնականս երեսնօրեայս, յորոց միհամուռ գումարին աւուրք 7050, առաւելեալ 110 աւուրքք ։ Մեհան առ ի հաւասարել զնոսա՝ նուազեցոյց զհարիւրեսուն ամիսս լուսնականս երեսնօրեայս յաւուրս քսանեւեին, և մնացին աւուրք 6940 յինեւտասներեակն լուսնական ։

Բ. Զ-ԽԷՄՆԵՔ ԳՐԷՆՈՅ ՈՐԷՓՈԽՈՒԹԻՆ ԵՒ ԼՈՒՍՆԱԼԻՆՆ ԱՌՀՍԱՆԵԼ Ի ՄԷՀԱՆԷ ։ (ԷՋ 68 ։)

Հնգեակ ինեւտասներորդ մասունք աւուրն կազմեն ժամս 6, վայրկեանս 18, մանրերկրորդս 56, մանրերրորդս 50, և այլն ։ Վասն որոյ յարեգակնային ամի ըստ Մեհանի էին 365 աւուրք, 6 ժամք, 18′, 56″, 50‴ 3. իսկ ըստ արդի սասեպաշխից՝ 365 աւուրք, 5 ժամք, 48′, 43″ կամ 45‴ 4. որով ընդ մեանեանն ամ և ընդ մերս էր խորը 30 վայրկենաց և իբր 12 մանրերկրորդաց ։

Յամսական շրջանն լուսնի, ըստ Մեհանի, էին աւուրք 29, ժամք 12, 45′, 57″, 26‴, և այլն 5. իսկ ըստ արդի զնու-

1 Սկալիգ. յղ. ուղղ. ժամանակի, գիրք Բ. էջ 77 ։ Պեսաս. յղ. գիտ. ժամանակաց, հտ. 1. էջ 63 ։ Ռիչչիոլ. Ալմագ. հտ. 1. էջ 242 ։ Յիշատ. բանաս. կանոնաս. հտ. 18. էջ 144 ։ Տատուէլ ։

2 Կենսոր. գլ. 18 ։

3 Պեսաս. անդ. ։ Ռիչչիոլ. Ալմագ. գիրք Բ. էջ 242 ։

4 Լալանդ, աստղաբաշխ. հտ. 1. էջ 35 ։ Գալլ, պատմ. աստղաբաշխութեան. նորին. էջ 448 ։

5 Պեսաս. անդ ։

թեանց՝ 29 աւուրք, 12 ժամք, 44′, 3″, 10‴, և այլն 1։ Այն լուսնական, ըստ Մէնոնի, ունէր աւուրս 354, ժամս 9, 11′, 29″, 21‴։ Նուազեալ քան զարեգակնոյինն 10 աւուրս, 21 ժամս, 7′, 27″, 29‴ 2։

Գ. Ի ՅԱՄԱՅՑՍ ՆԱԽՆԵԼՈՅ։ (ԿԼ 70։)

Յ ժամացիսակ գործեացն նախնեաց մարդ է առնուլ զկերպարանս յօրինակէ ասսի։ Պալլասիոս հաւոդիլոս, որ ի հին գերսրդ դարու ըստ փրկչական թուականութեան եկաց, Ճառս մշակական աւանդելով՝ ի վերջ կոյս ամսոց եւ քաջանշիւք յաւելու գաւազանս հասնմատաութեան մասանց սուրբիկեան ըստ այլ և այլ երկայնութեան սատեբի ցուցակին 3։ Բայց գիտելի է նախ՝ զի հասնմատաութիւնս այս նոյն է յամիս, որ հաւասարապէս հեռի են ի յեղյեղակաց ամսաբայնոյ, և ձմեռայնոյ, որպէս յաւնուար և գեկտեմբեր, փեբրուար և նոյեմբեր, և այլն։ Երկրորդ՝ զի երկայնութիւնն սատեբին նոյն է ի ժամս, որ հաւասարապէս յետ և յառաջ քան զմիջօրէ այն ինչն։ Ահաւասիկ գաւազանք ժամուց յաւնուարի.

ժամք	Ա և ԺԱ	Ռանաչափք	29։
ի	Բ և ի	Ռ	19։
ի	Գ և Թ	Ռ	15։
ի	Դ և Ը	Ռ	12։
ի	Ե և Է	Ռ	10։
ի	Զ	Ռ	9։

Ժամացոյցս այս վասն հասմատական նահանգին թուի կազմեալ։ Ի վկայութեանց անտի, զոր ի բնագրիս ի ներքս ածի, է ի մեր առնուլ զի և վասն սեմենական նահանգին ժամացոյցս հանգոյն սմին կազմեալ էր։ Այլ որք զժամացուցից նախնեացն գիտեալ կամիցին, խնդրեսցին առ քաջահմուտս՝ որոց այն իսկ է առաջարկութիւն 4։

Դ. ՅՈՒՆՈՒՐԻՆ ՊՂՈՊՆԻ Ի ՍԻՒԼԼԱ։ (ԿԼ 95։)

Պղոպան երբիցս ուղղարեցաւ ի Սիւիլլա։ Նախ առ թագաւորութիւն Դիոնիսեայ երբիցսն, և ապա երբիցս յաւուրս կրսաբ-

1 Լալանս։ սասեբ զարաշխ։ հտ։ 2։ էջ 291։

2 Պէտաս։ յդ։ գիս։ ժամանակ։ հտ։ 1։ էջ 62։

3 Պալլաղ։ առ մասեն։ գիրս գէոգ։ իրաց, հտ։ 2։ էջ 905։

4 Սամսոն։ հրահ։ ի Սաղմն։ հտ։ 1։ էջ 632։ Կասսաբ։ յԱՌեն։ գիրք Զ։ գլ։ 10։ գիրք Թ։ գլ։ 17։ Պէտաս։ զան։ Ճառք, հտ։ 3։ գիրք Ի։ գլ։ 8։

լոյն Դիոնիսեայ՝ որ թագաւորեաց 367 ամաւ Ն. Ք։

Առաջին ուղղութիւն նորա հանդիպի 389 ամաւ նախ քան զնոյն փրկչական թուականութիւնն. զի ինքն իսկ Պղատոն ասէ, թէ էին նորա յայնժամ ամք քառասուն [1], և գիտեմք հաւատսի զի ծնաւ նա 429 ամաւ Ն. Ք։

Իսկ զժամանակ երկուց այլոց ուղղութիւնն ոչ ուղիղ հաշուէ Քրօնինի, որ յարդի խմբագրոց ինքն միայն՝ որպէս կարծեմ՝ խօսի զայնմանէ։ Առաջիկայքս շատ լեցին բանք ի սառուգել զժամանակագրութիւնս զայս։

Պղատոն չոգաւ ի Սիկիլիա առ ի հմտանել ի մէջ Դիոնի և ազգային սիրակուսացւոց, և եղև անդ գամ մի կամ գամիս ինչ աւելի. և ի գառնալն նորա՝ հանդիպեալ Դիոնի յոգեմտիպանն նազան, երազել արար զնա ձախողակի ելից երայն. որով ի յայտնել ամին, յորում խաղքն կատարէին, դացի ժամանակ վերջին ուղղութեանն Պղատոնի։ Ի գէպ է արդ երկայել՝ թէ յորում ոգեմտիպի գաւթ նորա հանդիպի յերեցուցեալ ասի 304, 205 և 306 ոգեմտիպդից, որ պատահէն յամսն 364, 360 և 356 Ն. Ք։ Ալ որ զինիս գայ բառնայ զամենայն երկայութիւն։

Յառաջին ամիս բնակութեան Պղատոնի ի Սիրակուսա, պատահեաց անդ նուաղումն արեգական [2]. և յետ երեսնեկոյ նորա ընդ Դիոնի, խորշուրդ կալաւ Դիոն գիմել զորոք ի Սիկիլիա. և մինչ հանդերձեալն էր նաւարկել ի Զակինթեայ ի խոր ամարային, պատահեաց խաւարումն լուսնի՝ յորմէ և զարհուրեցան զոլք նորա [3]։ Այս ուրեմն պարտ է նախ, զի ինդրեալ ամն ոգեմտիպական ելցէ յետոյ քան զնուաղումն արեգականն գիպեալ իբր ամաւ յառաջ ի Սիրակուսա. երկրորդ՝ զի կանխեսցէ միով կամ երկու կամ երիւք իսկ ամաւք քան զխաւարումն լուսնի գիպեալ ի ութամեայն ամարային ի Զակինթոս։ Արդ 361 ամաւ Ն. Ք. յերկուսասան երրորդում աւուր ամսեան մայիսի, ի չորրորդ ժամ երեկոյին նուաղեցաւ արեգականն ի Սիրակուսա, և 357 ամաւ Ն. Ք. յինն երրորդում աւուր ամսեանն օգոստոսի խաւարեցաւ լուսնն ի Զակինթոս. ապա ուրեմն երրորդ ուղղութիւնն Պղատոնի հանդիպի գարնայնոյ 361 ամին, և գիտուցին Դիոնի ի Սիկիլիա ամսեանն օգոստոսի 357 ամին Ն. Ք։ Եւ քանզի ի Թզիոյն Պղատոնի յայտնի է 4, զի ոչ աւելի քան զերկուս կամ զերիս ամս անցին յետ

1 Պղատ. Թուղթք. հտ. 3. էջ 324։

2 Պլուտ. ի Դիոն. հտ. 1. էջ 966։

3 Նոյն անդ. էջ 968։

4 Պղատ. հտ. 3. Թուղթ 3. էջ 317. Թուղթք. էջ 338։

դարձին իւրոյ յերկրորդ ուղևորութենէն մինչև յերրորդն, ապա մարթի է համարել զերկրորդն լեալ 364 ամաւ Ն. Ք.։

Առաջնորդ ինձ ի հաշիւս յայս կալայ զգուշական խառարմանցն զոր Լաւանա երկամբերեալ Հոգեհետայ ինձ, յորում են ամ խառարմունք արեգական երեսեալք ի Սիրակուսա, և լուսնի՝ երեսեալք ի Զակինթոս, յետ գահակալութեան կրասերոյն Դիոնիսեայ 367 ամաւ Ն. Ք. մինչև ցամն 350։ Տեսանի ի նմա յայտնապէս, զի բաց յերեքարիւր վեթեներորդ ողմպիական ամէ՝ այլում ամի ոչ ի ճաշ գան պայմանք առաջարկեալ ինդրոյս։

Տեսանի ի նմա գտնեալ և այլ ինն վերսպակ ժամանակագրութենէն Քրոնոսենեայ, որում մարթէր մտանելն առնել զայս։ Զի համարի այսն բազմահմուտ, Պղատոնի զերբ իրաց վերջին ուղևորութեանն իւրոյ պատմեալ Դիոնի ի տանս ողմպիական խաղուց 360 ամին Ն. Ք. որ և ինձ նոյնպէս թուի. այլ սխալէ ի պատճառսն, զի զխառարումն լուսնի, որ եղև 357 ամաւ Ն. Ք. վարկուցեալ յինեներորդ օր օգոստոսի 360 ամի նոցա քան զնոսն փրկչական թուականութիւնն, ածէ ի նոյն ամ և գրեթէ ի նոյն աւուրս զգիտումն Դիոնի ի Սիկիլիա, և զհաստատութիւն նորա ընդ Պղատոնի յողմպիական խաղն 1։ Ոչ է ինձ անկ եղծանել զատանոր որ ինչ զհետ բերէ վերսպակ հաշուոյ խառարմանն, թէպէտ իւր տարբերալ իցէ զայն և թէ յայլմէ ումեքէ ընկալեալ. այլ պարտ է յենուլ ի հաւատս։ Խառարումն լուսնի լեալ յինեներորդ օր ամենեան օգոստոսի. հանդիպի հաւաստեաւ յամին 357 Ն. Ք. ապա գիտումն Դիոնի ի Սիկիլիա գտանի լեալ յամենեան օգոստոսի 357 ամին Ն. Ք.։ Լոգ հանդիպումն նորա ընդ Պղատոնի եղև ի յետին ամս ողմպիականս նախ քան զամին զայն. ապա Պղատոն ի գառնալ իւրում յերրորդ ուղևորութենէն՝ գտաւ յողմպիական խաղս 360 ամին Ն. Ք.։ Մարթի երբ ինձ ցուցանել և եւ՝ ի ձեռն խառարմանս, զի արդարանայ ի մասինս յայսմիկ ժամանակագրութի Դիոգորի սիկիլացւոյ 2. այլ ասասնոր զկայ առցէ բանս։

Ե. Զ. Ն. Մ. (էջ 134.)

Լրջասով նշանակէ սիրելի, Ուրախիկ երկնային, Կայլիսպէ ընտրութիւն բարբառոյ, Եւսեբիոյ՝ հաճոյական, Թագիա ցնծալից ուրախութիւն, մանաւանդ որ ի խնդոյս լինին, Մելպոմենէ՝ երգասէր, Պղոմիկիա՝ բազմերգութիւն, Տերփսիքոր կաքաւասէր. Կլիոմ փառք։

1 Քրոսնին, Ճառ. յդ. տուրբ Ծննդ. Պղատ. հատ. 6. էջ 114։

2 Դիոդ. գիրք Ժ.Զ. էջ 413։

Զ. Զփոխելուն իմն ի տրոխունեան այր։ (էջ 135։)

Փոքր մի ինչ յետոյ քան զժամանակ ուղղորդութեանն Ա նոքարտեայ ի Լեթագիա, մի ի պարտեանէից արքային Դիմիտրեայ եկին առնուել հրման պատասխանւոյ ի տրփոնեան հարցկէն։ Բայց քաւրքիք կասկած կալան զդիտաւորութենէ մտայ նորա։ և մտանել եմուտ նա յայրն, այլ ոչ ևս էլ անտի։ Յետ աւուրց դի նորա ընկեցաւ պատաքը ընդ այլ եւ այրին, և ոչ ընդ որ յաձախ սովորութիւն էր մտանել։[1]

Է. Զչարքիրերունին փոխելն ինէրոյ։ (էջ 144։)

Ի քերթողական նկարագիրս Ղլեագայ, արարեալ ի Դիկիարքեայ 2, շրջապատ քաղաքին թերեցաց ասի լեալ 43 ասպարիզաց։ Իսկ յարձակ նկարագիր նորին մատենագրի (էջ 14.) ասի լեալ 70 ասպարիզաց։ և համարի երկրորդս այս վերագրեալ գրչաց ապրդեալ ի բնագիրն։ Բայց մարթէ և ևս համարել, զի մատենագիրին յատաքնումն խոսիցի զշրջապատ բուն քաղաքին, իսկ յերկրորդումն և զվիճաբերդն ի միասին առեալ։

Դիկիարք զՄերէ ոչ յետ կործանմանն Յունգէսանդրէ առաջի առնէ, որպէս ես ի մատենս յայս։ Ա՛լլ զի որպէս Պաւսանիաս վկայէ 3, Կասանդր ի կառուցանելն զայն, զհին պարիսպն վերսանն կանգնեաց, թուի թէ հեռոյն և նորոյն նոյն շրջապատ էր։

Ը. Զհամարոյ բնակչացն թիւոյ։ (էջ 145։)

Ոչ է մարթ ճշգիւ գիտել զհամար բնակչաց քաղաքին, այլ վերի ի վերոյ ինչ։ Յառնուլ Ղեգեսանդրի զԹերէ՝ կրեան անդ աւելի քան զրիւր մի մարդկան, և աւելի քան զերիս բիւր վաճառեցան ի սորկութիւն։ Եւ խնայեաց նա ի քուրմս և որոց միանգամ կցորդութիւն ասպիսիանութեան և կամ այլ իրք էին ընդ իւր և կամ ընդ հօր իւրում Փիլիպպոսոյ։ և բազմաց ևս արդեաք ի քաղաքացոցն փախաստեալք զերծան 4։ Ասասի ապա ի գէպ է գուշակել, զի բնակիչք քաղաքին և շուրջ զնովաւ էին բիւրք իրք հինգ, արք և կանայք, ծերք և ազայք,

1 Պաւսան. գիրք Թ. գլ. 39. էջ 792։

2 Ա՛ռ. աշխարհագիրս. հատ. 2. էջ 7. տող 94 և 95։

3 Գիրք Թ. գլ. 7. էջ 725։

4 Դիոդ. գիրք ԺԷ. էջ 497։ Պլուտ. յՍղէքս. հատ. 1. էջ 670։ Եղեան. զան. պատմ. գիրք ԺԹ. գլ. 7։

բաց ի սարկաց։ Սկենթբրուա աւելի քան համարի զհաշիւս զայս 1. այլ ինձ իշխելի է հաստատել զայն։

Թ. Թէ ոչ յուշիս արիւնէն հրեշտաւոր ի ծուռ Ամենիսխանոյն։ (էջ 170։)

Կարծիս մատենագիրքս ոչ միայնոյն զազգաց, որոց անկ էր արձակել հրեշտակս յարիւրաշաւղոյն։ Եպիսկոպոս, զոր ի բնագրիս ի սարէն նշանակեցի, և միայնութիւնն նորա գէթ ըստ ժամանակին յորում էկայն հաւատարիմ է քան զայլոցն ամենեցուն, զի և ինքն իսկ անդր հրեշտակ արձակեցաւ, ասնուանէ զմեսաղցիս, զբիսվաղցիս, զգաղցիս, զյոնիացիս, զպանեաբացիս, զմազանեատցիս, զեստացիս, զվիթիսվացիս, զմանիացիս և զիսվիկիացիս։ Բայց երկոտասանեարդեն վիճակաւ գրչագրաց ի բաց անկեալ է, զոր քանաբանք համարին զԻսրոպս։

Գ. Զանոյ Բարբարենն Ուղիղոյ ելին։ (էջ 203։)

Պլուտարքոս 2 արձանագիր ինչ վարդ մի ի ներքս ածէ, յորմէ երևի Քանանագորայ գտեալ զայսմ բարձրութեան Ուղիղակայ ելբին ասապարէզս սան, և քառակակ ունաչափ նուազ քան զերկայնութիւն միոյ արտաքսի։ Եւ էր արտաքսին 20 Սուիգայ վեցն բորգ մանն ասապարիզի, հաւասար 15 ձողոյ, 4 տարի և 6 մասանց. յորմէ բարձեալ զանաչափս 4, և զմանաչափս 6, մնան 15 ձողաչափք։ Եւրգ զսոսա ի վերայ 945 ձողաչափ. փիցն յաւելեալ, որ հաւասար են 10 ասպարիզաց, լինին միահանուռ ձողաչափք 960, չափ բարձրութեան Ուղիղակայ ելբին։ Բայց Պլինիոսլեան 3 համարի զայն ձողաչափս 1017։

ԺԱ. Զանոյ-ոյնն ալբիերն որ ի Դոդանէ։ (էջ 219։)

Ա. Յսոկիսի ինչ վերոյ պատմեին երբեմն և զկարծ եղեալ լուսատու ազբերէն, որ երբիք գազգեցայն փարատեալք հեռի է ի Դրատիանուպոլսէ, և ընդ բազում ժամանակս հանարեալ մի յեօթն հրաշից վիճակի անդրանկան թագաւորին։ Եալ ի հետացուցելն զպատճառս իրացն, անյայտ եղեն սքանչելիքն 4։

1 Քննաբան. պատմ. Ա. վերջ. էջ 46։

2 Ի Պօղոս Եմիլ. հա. 1. էջ 263։

3 Պլինիոս, յդ. ժամանակս բնութեան, էջ 303։

4 Յիշատ. բանաս. կանոնագիտութեանց, տմ 1699. էջ 23։ Պատմ. քննաբան. զանազան գպատաշաւութեանէ, հա. 1. էջ 44։

ԺԲ. ԶԴԵՂԱՑԱՅ ԷՒԼԵՆՈՅ։ (էջ 268։)

Նախնիք բազում ուրեք յիշատակեն զԴեղացայս ոմն սքեանչելի, որում ի ընծայեն զգիւս իրաց կարևորաց արուեստից և ձեռակերտաց. յորոց սակի են սղոց, ուրագ, գչիր, սնձ ձկան, առագաստք նաւու և թիակք, այլովքն հանդերձ։ Ի Կրետէ ցուցանէին զքաւ իկ նորա, ի Սիկիլիա զմիջնաբերդն և զքէրմուկս նորա, ի Սարգենիա զշինուածս հոյակապս, և ամենայն ուրեք զբազմութիւն անդրեաց։ Յաւելուն և ևս, զի նախ քան զԴեղացայ փակ էին անդրեաց աչք, և թիք ընդ իրանն կցեալք ի կոխ, և ոչք ի միմեանսդարք. նա ետ քաց զաբանանունս նոցա, և մեկնեաց զոսս և զբազուկս։ Սա ինքն և զանդրիս փայտակերտս գնացոյց ի Իպպակու, կամ մենքենաւոր ի նոսա ծածկեալ զորութեամբ։ Դիտելի է գաղձեալ, զի ժամանակակից համարիք սա կացեալ Մինոսայ. և զի գրամագոյնս ի գիւտից, որոց պարծանք սմա ընծային, այլք ի մատենագրաց ընծայեն Ճարտարաց կրետէրագունից յոյժ քան զնա ժամանակաւ։

Ուրդ մերձ առ միմեանս եղեալ զսա. ի յիշատակարանաց տեղեկութիւնս և զոսս մատենագիրք սան մեզ, ինձ թուի զի նկար և քանդակ սկսան բարգաւաճել առ Յոյնս ի նախորդ և ի հետեւորդ գարս առաջնոյն ոլմպիադին, որ հանդիպի 776 ամաւ Ն. Ք։ Զայս այսպէս յետ բազում խուզարկութեանցն իմաստասիրեաց Նօղ ընկարչութեանէ։

Վասն որոյ ի գէպ թուեցաւ զփոփոխումն զայն գործեալ ի ձև վաղնջուց անդրեացն՝ սկիզբնացուցոյս տալ Դեղացայ, զոր յաՃախս ուրեք յիշատակէ Պաւսանիաս 4, և որ զայնու ժամանակաւն եկաց ընդ մէջ վեցերորդի և եօթներորդի գարուն Ն. Ք. որում երաշխաւորին վկայութիւնքս այս։

Եղեն, ասէ Պաւսանիաս 5, որք աշակերտս Դեղացայ համարեցան զԴիպենոս և զՍկիւլլա, զորս Պլինիոս 6 նախ

1 Դիոդ. գիրք Դ. էջ 235 և 276։ Պլին. գիրք Ի. գլ. 56. էջ 414։ Պաւսան. գիրք Թ. գլ. 40. էջ 793։

2 Դիոդ. գիրք Դ. էջ 276։ Թեմիստ. Ճառ. 26. էջ 316։ Սուիդ. ի բառն Δαίδαλ.

3 Պլատ. ի Մէն. հտ. 2. էջ 97։ Արիստոտ. յՊ. Հոգւոց, գիրք Ա. գլ. 3. հտ. 1. էջ 622։ Նոյն յՊ. հաս. գիրք Ա. գլ. 4. հտ. 1. էջ 299։ Սկալիգ. յԻսեբ. էջ 45։

4 Պաւսան. գիրք Զ. գլ. 3. էջ 457. գիրք Ժ. գլ. 9. էջ 819։

5 Նոյն, գիրք Բ. գլ. 15. էջ 143։

6 Գիրք Լ. գլ. 4. էջ 724։

քան զԻագաւորեալ Կիւրոսի ասէ կացեալ ՝ի յիսնեւորդում ոլմպիադի , որոյ սկիզբն հանդիպի 580 ամաւ Ն · Ք · որով ժամանակ Դեղաղէայ կանխէ 610 ամաւ քան զնոյն Թուական նուազիւն ։

Աբիստոտէլ , ըստ աւանդելոյ Պլինիոսի [1] , համարեալ Նաբիքէայ ազգականին Դեղաղէայ առաջին նկարիչ առ Ցոյս կացեալ ։ Բդ եթէ Նաբիքս այս նոյն ինքն է անդրիստեղծն , որ ընդ Դեմարատայ կրօնեցաւոյ չոգաւ յԻտալիա [2] , այս հանդիպաւորութիւն ժամանակի հաստատէ զառաջին թուականութիւնն · քանզի Դեմարատս հայր էր Տարկուինեայ երիցոյն , որ գահակալեաց ՝ի Հռոմ 641 ամաւ Ն · Ք ։

Դարձեալ և Աղենագոր յետ յիշատակելոյ Հարտաքս բազմեմս կրօնեցեալս և սիկիոնացիս՝ որք կացին յետ Նոսիոգեայ և Հոմերի , յաւելու և ասէ · « Ցեռ սոցա կացին Դեդաղ և Թէոդոր մկնատաշիք , քանզի կազդուրք և անդրիստեղծք » ։

Ոչ ժիտեմ և զայլ ոմն Դեդաղ ՝ի վաղնջուց յոյժ կացեալ · այլ թէ Թուի՝ զի սկիզբն զարգացման քանդակագործութեան սկիզբնացոյն է ընդ այնչափ ։

ԺԳ · ԶԱՐԴՈՒՆՔԻՆ ԱՐՀԱՍՏԱՆ ։ (էջ 292 ։)

Մարթ է կարծել , զի Երեսուն և եօթանեքին պատկերքս այսոքիկ էին քերուբք գրուագեալք ՝ի գաւթս գահոյիցն ։ Մարթի դարձեալ զքանդակս ոսկեայ ամենայն զետեղել այլազգ ՝ի կարգէն՝ զոր կալայ ։ Ի կամին պարզարանել վասնզ սնարանաց ընդ առաջ ելանէ , իսկ ՝ի Ճշգրիտն Թարգմանել վասնզ անիմանալի գոլոյ ։

ԺԴ · ԹԷ ՈՐՔԻ ԻՐԱՔՍ ՅԱՐԻՆԻՆ ԽԱՆԴ ՝Ի ՀԱՆԴԷՍԻՆԷՆ ՀՂԱՆԻՆ ։ (էջ 306 ։)

Բազում փոփոխմունք ՝ի կարգս յայս եղեն յաւելմամբ և նուազմամբ Թուոյ մրցութեանցն , և յաճախ ևս ըստ պատշաճի երաց ժամանակին այլայլելով ։ Կարգն զոր ես կալայ , ոչ համանայնի բանիկ Քանոնոփանի 3 և Պաւսանեայ 4 · այլ տոքա և ոչ ընդ իրեարս քաջ միաբանին · և դարձեալ զերից կամ զարից ևեթ աւանդեն մրցութեանց · իսկ զկարգաւորութիւնն այլոցն չիք ինչ նոցա ասացեալ ։ Զայսպիսի տարակոյս առաջի ունելով ՝ի գէպ հանդիպեցայ բացայայտելեանն հետևել կարպէ , նախ զազգի ազգի արշաւանաց Հառելով ըստ

[1] Դիրք Ի · էջ 417 ։
[2] Պլին · դիրք ԼԵ · Դլ · 12 · էջ 710 ։
[3] Պաւմ · Ցոն · դիրք Ի · էջ 638 ։
[4] Դիրք Ե · էջ 396 ։

մարդկան և զեղիս և զկառաց, և ապա զմրցութեանց կրկիսականաց՝ զդռոճկու

մուծքս, ի Միւսոսի պրիենացւոյ սահել յարձակ չարագրի, և ի Հռիանոսի կրեսացւոյ քերթողի 1։ Բսա օրինակի երբ կորդեմ ի գէպ Մուսայս ինձ քերթողքն պատմագրել։ Բայց Հռիանոս գիւղական ինն յորինեն քերթած, զԱրիստոտենն կացուցանելով ի նմա գիւղացի 2, իսկ ես զեղերերգական ընթերցի եղանակ՝ յոր մտանեն արարածք գիւղական, և զոր մատենագիրքն հինք յաճախ ի կիր արկանեին ի նկարագրել զաղէտս ազգաց։ Զի այսպէս Տիրատոսի յեղերերգութիւնս իւր նկարագրեալ էր զմտն ինչ պատերազմացն սպարտացւոց ընդ Մեսենիացիս 3։ Կալինոսի զպատերազմունս՝ որ յաւուրս Նորա Նեղեցին զՅոնիա 4։ և Միմնեսերայ զպիտանացուցն ընդ Գիւգեայ արքային Լիդացւոց 5։

Յայտնի հայեցեալ և իմ, համարեցայ՝ զերծելոցն ի Լիբիա Մեսենիացւոց, յիշելով զնոսանիւնս հայրենեաց իւրեանց՝ արարեալ ոչխս ի վերայ Երից պատերազմացն, որ աւերեցին զաշխարհն։ Այգր ի ներքս ածի զկարևորագոյն մասնս իրացն ամենայն տուգութեամբ, այլ ինչ ինչ և յիմոց մտաց յաւելի, զորոց ներել մաղթեմ։

ԺԸ. Զ ԿԻՌՈՒԹԻՒՆՔ ՄԵՍԻՆԻԱՅ Ի ՍԻԿԻԼԻԱ։ (էջ 392։)

Պաւսանիաս ասէ՝ թէ յետ սահման Իրայ լերին, իբր 668 ամաց Ն։ Ք։ մեսենիացիք առաջնորդութեամբ Դորդոսի որդւոյ Արիստոմենեայ չորս յիսանչիս, և գումարեալ ընդ Ազգաբերայ բանաւորին հանգիստացուց՝ հայածեցին զբնակիչս Զանկլեայ քաղաքի՝ որ ի Սիկիլիա, և կոչեցին զքաղաքն զայն Մեսենա, որ արդ կոչի Մեսինա 6։

Այլ այս հակասակ է ամենեին տուգութեամբնցն Երոդոտոսի և Թուկիդիդեայ։ Քանզի Երոդոտ պատմէ, զի ի Նուաստ Ամ Դարուն հին որդւոյ Վշտասպեայ զՅոնիա զապստամբելն յիրմի, բնակիչք Սամոսի առ հասարակ և կենք ի մեծապացւոց անցին ի Սիկիլիա, և ըստ խրատուն Ազգաբերայ բանաւորին հանգիստացուց՝ կալան զքաղաքն Զանկլէ 7։ Եւ այս եղև իբր 495 ամաց Ն։ Ք։ և իբր 173 ամաց յետոյ քան զնշանա-

1 Պաւսան։ գիրք Դ։ գլ։ 6։ էջ 293։

2 Նոյն անդ։

3 Նոյն անդ, էջ 294։ գլ։ 13։ էջ 312։ գլ։ 14։ էջ 313։ գլ։ 15։ էջ 315։

4 Յիշատ։ բանաս։ կամաս։ հա։ 7։ էջ 365։

5 Նոյն։ գիրք Թ։ գլ։ 29։ էջ 766։

6 Պաւսան։ գիրք Դ։ գլ։ 23։ էջ 335։

7 Երոդոտ։ գիրք Զ։ գլ։ 22 և 23։

կեալն 'ի Պաւանիայ ժամանակ թագաւորութեանն Անաքսիղայ, և քան զփոփոխումն անուան քաղաքին Զանկլէայ 'ի Սեսենա։

Իսկ Թուկիդիդէս աւանդէ, զի բազմութիւն բնակչաց Սամոսի և այլոց յոնիացւոց հալածեալ 'ի Պարսից ապրաշխարհիկք եկին կալան զՁանկլէ քաղաք 'ի Սիկիլիա։ Յաւելու և ևս, զի յետ ոչ բազում ժամանակի՝ Անաքսիղաս բռնաւոր հռեգիոնացւոց տիրեաց քաղաքին այնմիկ, և կոչեաց զայն Մեսենա, զի ինքն իսկ մեսենիացի էր հայրենեաւք 1։

Հայրն Քորսինի, որ նախ կասկածէրն՝ զի Անաքսիղասք երկու լեալ իցեն 2, յետ վերատին քննութեան հաւանի՝ Պաւանիայ ազգակեալ զժամանակագրութիւն 3։ Քանզի 'ի բազում ինչ իրաց յայտ է՝ Անաքսիղայ յաւուրս մարաթոնական մարտին թագաւորեալ, որ հանդիպի 490 ամաւ Ն. Ք։ Երկու ինչ 'ի տեսութիւնսն Քորսինեայ յաւելում և ևս։

Նախ զի յառաջ քան զպատերազմն զայն եղև 'ի Մեսենիա խռովութիւն ապստամբութեան՝ զորմէ Պաւսանիաս ոչ ինչ յիշատակէ, որով ոչ կարացին ապարտացիք 'ի Ճակատամարտս անդր հասանել 4։ Այլ յաջողեաց յաղթութիւն ոչ ինչ ընդհատս յառաջնոցն. և յայնժամ արդեաք մեսենիացիք յետ պարտութեանն ապաւինեցան առ Անաքսիղաս բռնաւոր հռեգիոնացւոց, և յորդորեցին զնա նուաճել զՁանկլէ քաղաք, որ յայնմհետէ կոչեցաւ Մեսենա։

Երկրորդ՝ զի եթէ արդարև ըստ Պաւսանիայ իսկ և իսկ ըստ հետ երկրորդ պատերազմին Մեսենիոյ լեալ էր փոփոխումն անուան քաղաքիս այսորիկ, հարկ էր գրոշմածաց՝ յորս ապաւորեալ կայ Դանկլէ՝ երիցագոյնս գոլ քան զամն 368 Ն. Ք. այլ զայս ոչ ներել կարծել յօրինուածոյն նոցա տարալ։

ԺԹ. Զ[illegible] [illegible] [illegible]։ (էջ 424։)

Գրեթէ յամենայն մեծամեծ քաղաքս Եղլադայ բաժանէին բնակիչք 'ի ցեղս. յԱթենս էին տասն ցեղք, իսկ 'ի Լակեդեմոն համարի Կրագիոս 5 լեալ ցեղս վեց. Ազգեբակղեանս, Բ զեգեանս, Գ զիմենեանս, Դ զկինոսուրեանս, Ե զմեսոլեանս, և Զ զպիսանեանս։ Բայց զառաջնոյն չիք յայտնի ինչ վկայութիւն. և Կրագիոս հաստատէ զայն երիւք գուշակութիւնք։

1 Թուկիդ. գիրք Զ. գլ. 4 և 5։

2 Քորսինի, տարեգր. առ տիկ. հտ. 3. էջ 140։

3 Նոյն անդ, էջ 155։

4 Պլատ. յղ. օր. գիրք Գ. հտ. 2. էջ 698։

5 Կրագ. յղ. հատ. գիրք Ա. գլ. 6։

որոց տկարութեանն և ինքն խելամուտ է. վասն որոյ ինձ ի դէպ թուեցաւ թողուլ զայն ի բաց։

Հնդէքին այլ ցեղք յիշատակին յայտնապէս առ մատենագիրս կամ ի հին աւանդագիրս. եղեանցն Յերոդոտոսայ 1, կիներսուրեանցն և պիսանեանց ի Հիսիոդոսէ 2, մեսովնացն ի Սամփանոսէ բիւզանդացւոյ 3, և լիմնեանցն յայտնագրի սուրբք՝ զոր Ֆուտանն եգեա յաւերակս Սպարտայ 4։ Պաւսանիա զարձեալն ի ցեղից սասի յիշատակէ ի Հառս զոհին՝ որ անդաստն ի վանդիզուց ժամանակաց մատչէր Աբանեայ. և սակ՝ թէ եղև զայնմանէ հակառակութիւն ի մէջ լիմնեանց, կիներսուրեանց, մեսովնացց և պիսանեանց 5։

Աւիշք որ առասնոր. Եւ ընդէր, զի աւելի քան զհինգ ցեղս ոչ յիշատակին, հնդեակ եւեթ համարիցին լեալ ցեղք։ Բայց հիրր պատճառաք ի միջի կան ազգաբերդ զանազարգութիւնսն։ Ամենայնոյց, որպէս յառաջագոյն ասացաք, եին առեալք բազմամբ՝ իւրաքանչիւր ի տասանց գաւառս գումարեալ՝ ընտրելոց ի տասանց ցեղից. արդ գասանեմք և ի Սպարտա բազում առեանս՝ որոց հնդեակ եւեթ եին առեալ կալք, որպէս զպարեսացն զրիգեանցն 6, և զգաղամոլիրգեանցն 7. ապա ի դէպ է կարծել, զի մի մի ի ցեղից իւրաքանչիւր կային հնդեքին առեալաչքն։

Ի. Ի գեղեցիկ գաղափարն լինիցին։ (էջ 424։)

Բայց զգոյշ ինչ տեղեկութեանցն, զոր աւանդեն մեզ նախնի մատենագիրքք, համարձակիմ ասել տեսութիւնս ինչ զանազգութենէ Լակեդեմոնի առ հասարակ։

Բայց Թուկիդիդեայ՝ քաղաքս այս ոչ հանգոյն քաղաքին ասթենացւոյ էր միակցորդ, այլ յաւանս բաժանեալ, որ զվաղնջուց ժամանակաց քաղաքս Եղլոգայ 8։ Եւ ի քաջ խելամուտս լինելոյ այսմ՝ դիտելի է, զի նախնի Հելլէնք բնակեցին ի սկզբանէ յաւանս անպարիսպս, և ապա բնակիչք բազում աւանաց միաբանեալ ածին զիւրանցիք հասարակաց պարիսպ։ որպէս ի բազում քաղաքս է տեսանել զայս։ Զի Տեգեա մի նուազ աւանաց եկաց քաղաք մի 9, Մանտինէա ի չորից կամ

1 Երոդոտ. գիրք Դ. գլ. 149։
2 Հեսիոդ. ի բառն Κυγός, և ի Πειανάτ.
3 Սամփ. բիւզանդ. ի Μέσσ.
4 Փուտանն սասրարդ. ի մատենագ. արքունի։
5 Պաւսան. գիրք Դ. գլ. 16. էջ 249։
6 Նոյն անդ. գլ. 11. էջ 231։
7 Երոդ. գիրք Ա. գլ. 65։
8 Թուկիդ. գիրք Ա. գլ. 10։
9 Պաւսան. գիրք Ը. գլ. 45. էջ 692։

ի հնգից 1, Պասքաս յեօթանց, Դիմէ յութից 2, այլովքն հանգերձ։

Բայց բնակիչք աւանացն կցորդեալք այսպէս իբրեւ, ոչ խառնեցան ընդ միմեանս։ այլ բնակեալ յիւրաքանչիւր թաղս, կազմէին այլ և այլ ցեղս։ Նմին իբրև և Թաղիցն և որ ի Նոսա բնակեալ ցեղիցն նոցն անուանք էին, որպէս է անսանել զայս ասասէն իսկ ի Լակեդեմոն։

Կինոսուրս, ասէ Հիսիւքոս, և մի ի ցեղից Լակոնիոյ 3. և մինիչն Կաղլիմաքեայ ասէ՝ Թէ է տեղի ի Լակոնիա 4։ Մենաղա քաս Սուիգայ՝ է տեղի 5, և քաս Սամփանան բիւզանդացւոյ՝ է տեղի և ցեղ ի Լակոնիա 6, իսկ քաս Սարքանի՝ 7 զոր բնագիրն քաս յաջորդաւածոյ բարեսի ուղղագրեցաս ի Սալմասեայ՝ 8 Մենաղա և մասն է մասն Սպարտայ. և Պիտան մերթ ցեղ 9, և մերթ աւան 10 անուանակոչի։

Ասի ի մես առնուլ է՝ Թէ ընդէր զքերթողն Ադիման էէոր մեռաղայի ասէն և կէոր սպարտացի 11. քանզի Մենաղա է մի ի Թաղից Սպարտայ։ Եւ զայն դարձեալ, Թէ ընդէր Պլուտարքոս զԹրասիբուլոսայ սպարտացւոյ անկելոյ ի պատերազմի զդիան ոչ ի Լակեդեմոն ասէ ածեալ ի վերայ սապարտին, այլ ի Պիտան 12, զի էր նա ի Պիտան աւանէ, և անդ պարտ էր նմա Թաղել։

Արդ զի հնգեակ ցեղք էին սպարտացւոց, որպէս յառաջքան զտեղեկութիւնս զայս ասացաք, ապա քաղաքն նոցա ի հինգ աւանաց կազմէր։ Մինոյ մեզ արդ զպատճառս գրիցն տալ, յորս զնոսա գտանեմք։

Ա. Առաջ Ն շէէ էէՏեանց. Անուն սոցա ածանցի ի յոյն բառէս Λίμνη էէՏի, որ նշանակէ լիճ կամ ճահիճ։ Ըստ Սարքանի՝ արուարձանք քաղաքին սպարտացւոց կոչէին ճահիճք, զի էին երբեմն մօրուաք, արդ արուարձանացն Սպար-

1 Քսենոֆ. պատմ. Յուն. գիրք Ե. էջ 553։ Եփոր. առ Հարպոկր. ի բառն Μαντν. Դիոդ. գիրք ԺԵ. էջ 331։
2 Սարաբ. գիրք Ը. էջ 337։
3 Հիսիւք. ի բառն Κυνός.
4 Կաղլիմ. տաղ յԱնահիտ. տաղ 94։
5 Սուիդ. ի Μέσσ.
6 Սաեփ. ի Μέσσ.
7 Սարաբ. գիրք Ը. էջ 364։ Կասաւբ. անդ։
8 Սալմաս. ի պարապմ. Պլին. էջ 825։
9 Հիսիւք. ի Πίταν.
10 Պարապ. Թուկիդ. գիրք Ա. գլ. 20։
11 Սալմաս. անդ։ Մեօրս. խմբարան լակոն. գիրք Դ. գլ. 17։
12 Պլուտ. առակ. լակոն. հա. 2. էջ 235։

տայ պարտ էր լինել՝ ի հիւսիսոյ քաղաքին, զի յատնախագոյն ընդ այն կողմն էին մուտք։

Բ. Առն ի շէջ կինոսորէանց. Կինոսուր նշանակէ ոգի շան, և կոչէին այսպէս հրամանգիք և լերինք՝ ի մէջոյն տաճարք յորջորջումն։ Բազուկ մի Տայգետոսն լերին՝ ի նոյն մէջ երկայնեալ ձգէր մինչև՝ ի Սպարտա. և զի գոյր՝ ի Լակոնիա տեղի անուանեալ Կինոսուր, զայն ցուցաք յառաջագոյն։ Այս՝ ի դէպ է համարել՝ ի սպառուած այսր տայգետական բազկի զԿինոսուր տան։

Գ. Առն ի շէջ դիւռնէանց. Պատանիսս մեկնեալ՝ ի հրապարակէ քաղաքին, և գէմ եդեալ ընդ արևմուտս՝ անցանէ ըստ տարածման, և հասանէ՝ ի սրահն ուր Ժողովէին կրօնաւորք, որ են մասն պիտանեանց 1։ Պարտ էր տալս զնաւելդ զաւանս զայս հանդէպ տեսարանին։ և տեսարանին տեղի Դանիսի խակ է, քանզի հետք ինչ նորա գտու. ևս կան։ Զայս և Հիսիւքոս և Նշոգոս հաստատեն, վկայեալ զի էր տեսարանն՝ ի պատնէանցն տաճի 2։

Դ. Առն ի շէջ դիւռնէանց. Ի պիտանեանցն տաճիկ Պատանիսս անցանէ՝ ի Պղատանիսս 3, որ էր մերձ յատանն թեբատնէ, և հուպ առ Նեմին տան լինել զչերիմ Աղմնանեայ քերթողի 4, որում հարկ էր թաղել անդ, քանզի մեռեալի էր։

Ե. Առն ի շէջ Էգինէանց. Պատանիսս առաջնորդէ մեզ ապա՝ ի Աիմնանցն տաճն 5, զոր՝ ի հիւսիսակողմն քաղաքին ասացաք լինել. և զՏանտապարհայն պատահէ շիրմին Եգէոսի 6, յորմէ եդեանցն կոչումն կալաւ ցեղ 7։

Աայլ ևս զաւանս զայսոսիկ ոչ փակեցի՝ ի մի շրջապատս, զի առ ժամանակաք իրացս՝ զոր ի վերուստ՝ գտու. ևս անպարիսպ էր Սպարտա։

Իսկ զմեհեանս և զայլ շինուածս հասարակաց գրեթէ՝ ի նոյն տեղիս ըստ Պատանիսայ կարգեմ. զորոց և ոչ Ճշդրտութիւնդ բերի և զանազանի, այլ կարեւոր այն է՝ զնա քակաւոր քաղաքին տալ համարէն զանազանութիւն։

ԻԱ. Զիւռոնէանցն ոգորդոյ ընդ եղանոյն։ (էջ 436։)

Սպարտացիք ահաբեկեալք կոչտուեամբն Պիղծոյ զոր բարձին

1 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 240։
2 Երոդոտ. գիրք Զ. գլ. 67։ Հիսիւք՝ ի բառն Ստանատ.
3 Պաւսան. գիրք Գ. գլ. 14. էջ 242։
4 Նոյն անդ. գլ. 15. էջ 244։
5 Պաւսան. գիրք Գ. գլ. 16. էջ 248։
6 Նոյն անդ. գլ. 15. էջ 245։
7 Երոդոտ. գիրք Դ. գլ. 149։

'ի նշնել ամենայնիւ, խորհուրդ կարան յաւելուլ յղել գուցէ առ Բրասիոս զորմամբ ի բնութեանց՝ որ կայր 'ի Թրակիա. որպէս զի բաժանեալ կոյսն զորութիւն թշնամւոյն՝ բանագատելով ամենայնիւ զոյսահաստոյ լինելոյ 'ի տոր աշխարհ անդր, և զի գարձեալ դիմուորեալ և գունդ մի յեղծուացուց անմի՝ հեռացուցեն զնոսա 'ի Թրակիա, զի առդգ հասակ նոցա և կորով կասկածանս երիրեալ ոչ տարապարտս տային ապարատացուց։ Խոստացան ապա ազատութիւն այնոցիկ, որ յառաջ քան զայն 'ի պատերազմանս արիացեալ էին. և բաղմութիւն յոյժ յառաջ մատեան. ընդարձան 'ի նոցանէ երիս հազար, և կատարեցաւ առ նոսա խոստացեալն, և ծաղկապանակ ածան հաշակաւ 'ի մեհեանս. քանզի այս կարեւորագոյն մասն էր հանգիսի ազատութեան։ Եւ յետ սակաւ միոյ, ասէ Թեոկիդիդէս, եղեն անեւերոյթ, և ոչ ոք գիտաց թէ որպէս բարձան 'ի միջոյ 1։ Եւ Պլուտարքոս անդ ասէն 'ի Թոուկիդիդէսոյ առեալ յաւելու, թէ ոչ ոք գիտաց յայնժամ, և ոչ յետոյ ծանուցաւ, թէ որպէս սպանան երիս հազարքն 2։

Բայց թէպէտ և Դիոդորս սիկիլիացի հաստատէ սեռանց նոցա առեալ պատուէր խոստովել զնոսա լուսեալսն 'ի տուն իւրաքանչիւր 3, այլ էր մարթէր նմա գիտել զհանգամանս զայս իրացն՝ զոր ոչ կարաց գիտել Թոուկիդիդէս վիպագիր, որ կեալ էր 'ի ժամանակին՝ յորում խուժադուժ նախճիրքս այս գործեցան։

Իսկ այս որպէս և է, այլ ասա երկու ինչ 'ի գէպ է խնամով նկատել, որ յայլ և այլ պատմագաց ունին սկիզբն. մի զաղտատութիւն երկուց հազարաց եղուսացն, և միւս ևս ըղմանչ նոցա։ Սկսաքէն ազատութիւն հրամանաւ ասացանոյն և ժողովրդեան շնորհեցաւ նոցա, այլ ոչ հրովարտակաւ պատուիրանն սպանան։ ընդ այս չէք երկայնել։ Ոչ ոք յազգաց յայսքան գիմեալ եղեան նենգութեան անկղնանալոյ, և մանաւանդ զի ասասնոր առեանն ապարատացուց առ 'ի զնուռ բել ևեթ զեղուացիս 'ի Թրակիա՝ ազատեցոյց զնոսա։ Յառաջագոյն յայնոսիկ պարէաքս արձակեցին յոգնութիւն Բրասիոսոյ հազար այլ եղուսացիս 4։ և զի գնդացս այսոցիկ զեպ մնեալ երբեմն գիշերային չոր առնել 'ի Սպարտայ 5, հատարեցան ժողովուրդն՝ զի երիս հազարքն այնոքիկ ազատեալք 'ի ծառայութենէ՝ գնացին ուր պարան էր նոցա գնալ։ Եւ ապա 'ի յայտնել վիպակ կարծեացն՝ գիւրին էր պատրել զնոսա, իբրէ

1 Թուկիդ. գիրք Դ. գլ. 80։
2 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 56։
3 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 117։
4 Նոյն անդ։
5 Երգասս. գիրք Թ. գլ. 10։

թէ աւագանուոյն 'ի վերայ հասեալ համախոհութեան նոցա ընդ թշնամիս՝ տուեալ էր սպանանել զնոսա կամ հալածել 'ի սահմանաց աշխարհին։ Անմարթ է մեզ արդ զհաւատոյն գուշակել զիրաց, որ յաւուրս նորին իսկ Թուկիդիդեայ անգիտելի եղև։ Շատ է գիտել՝ զի ոչ համբէն ազգին էր ոճիրն, այլ ձախողակի քաղաքավարութեան պարտուցն՝ որ յիշխանութեան կային. որ հզօրագոյնք քան զնախորդսն իշխանութիւն և նուազեալք յառաջինութենէ նոցա, զամենայն ինչ օրէն համարէին արդեաք՝ վասն փրկութեան աշխարհին. քանզի օրէնք արգարութեան և ուղղութեան՝ սկսանէին 'ի ժամանակին յայնմիկ զառաջանալ 'ի թիւրութիւն։

Պատմին և այլ անգթութիւնք 'ի Սպարտա ընդ եղուսացիս գործեալ. զի առ 'ի յիշեցուցանել նոցա զպայման ստրկութեանն, ասէ Միւռոն ոմն պատմիչ, ամի ամի գանաձեռ առնէին զնոսա՝ սահմանեալ նոցա թուով հարուածս խարազանի 1։ Բայց եղուսացիք ոչ ինչ նուազ քան զտասն բիւրս էին 'ի Լակոնիա և 'ի Մեսենիա. արդ սեպեալ ամենայն ոք զանազանութիւն իրին, և զդժուարութիւն կատարման իրացն, և դատեսցի։ Յաւելու նոյն ինքն Միւռոն, զի պատուհաս 'ի վերայ կայր տերանց՝ որք ոչ խեղէին զկորովի ծնեալ մանկունս եղուսացւոց ստրկաց իւրեանց 2։ Այսպէս ուրեմն խեղանդամք էին առհասարակ եղուսացիք՝ որք զինուորէին, և երեսաւորք 'ի մարտս գտանէին։

Բազումս այն է՝ զի զբարուց ազգաց ըստ գործոց իւրաքանչիւրոց ոմանց յաղագս անուն առնին դատասանք, որոց ուղիղք ոմանք սկսեալք հանդիպեալ իցեն, կամ պատմիչք ոմանք զայնս աւանդիցեն։ Վասն որոյ Թէպէտ և Պլուտարքոս պատմէ, զի սպարտացիք առ 'ի դարձեցուցանելոյ ըղմանկտին յարբեցութենէ՝ ցուցանէին նոցա եղուսացի զոք գինեհարեալ 3, այլ ոչ անտեղի թուի ինձ կարծել՝ զի նա զմիոյ ուրուք գործ զամենեցունց անտահմանաբար ասիցէ, և կամ թէ ատանօր խառն 'ի խուռն զեղուսացիս ընդ այլ ստրուկս առնուցու, որ յոյժ նուաստագոյնք էին քան զնոսա։ Իսկ որ ինչ նոյն ինքն Պլուտարքոս պատմէ, զի արգելեալ էր եղուսացւոց նուագել զտաղս Աղկմանեայ և Տերպանդրի 4, անեղկ բայելի համարիմ. քանզի տաղք նոցա խրախուսէին 'ի սէր փառաց և ազատութեան. և 'ի գեղ էր խոհական քաղաքավարու-

1 Միւռ. առ Ամեն. գիրք ԺԴ. էջ 657։

2 Նոյն անդ։ Սպան. յԱրիստոտ. Պլուտ. տող 4։

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հատ. 1. էջ 57։ Նոյն կարդայր. Լակոն. հատ. 2. էջ 239։

4 Նոյն 'ի Լիկուրգ. անդ։

Թեան խափանել ի նուագելոյ ցայնս զմարդիկ՝ յորոց արիւնն յերեալ էր երկնչել։

ԻԻ. Յաղագս գործոց հոգեւոր-թէան ի Սղոբոս։ (էջ 465։)

Բազմագոյնք ի մատենագրաց զպարեաս ի Թէոպոմպոյ ասեն հաստատեալ, որ Թագաւորեաց առաւել քան զդար մի յետոյ քան զԼիկուրգոս։ Զայս այսպէս ասացեն Արիստոտել 1, Պլուտարքոս 2, Կիկերոն 3, Վալերիոս Մեծն 4 և Դիոն ոսկեբերան 5։ Ի սոսա մարթի է յաւելուլ և զԳանենսիսն՝ որ զսկիզբն հաստատութեան ասենիս Թուի ընծայել աւագաց սպարտացւոց 6, և զԷւսեբիոս՝ որ ի Ժամանակագրութեան իւր ասէ զայն յաւուրս Թագաւորութեան Թէոպոմպայ 7։

Երկու այլ ևս վկայութիւնք գտանին արժանի իշխատակի, վասն յայտնապէս ի նոսա նշանակելոյ Ժամանակին։ Զի ըստ Պլուտարքոսայ, Կղէոմէն երրորդ՝ արքայ սպարտացւոց՝ ի հաստատութիւն ժողովրդեան խօսեցաւ և ասէ. «Լիկուրգոս շատ հանաբերաւ իշխանակից երկուց Թագաւորաց կացուցանել զասեան ծերակուտին. և ընդ Ժամանակս բազումս ելեւեցաւ յաշխարհին այլ ասեան։ Պատերազմն Մեսենիոյ (յաւուրս Թէոպոմպայ) ևս քան զևս երկարատեւէր, և հարկ եղև Թագաւորաց յանձնել ի պարկաս զհոգ առնելոյ զերաւնոտ Ոգի ի սկզբանն պատրաստեալ եղեն իշխանութեան արքայից, և ապա յաջորդք նոցա յաջողակեցին զիշխանութիւնն։ և Զասերդասս ոմն ի նոցանէ կացոյց զնոսա ինքնիշխանս»։ 8։

Պղտառն 9 երբս պատմեաւս ասէ չգաւառանելոյ Թագաւորութեան ի բռնաւորութիւն ի Սպարտա, յորոց յետինք այսորիկ են։ «Այլ ոմն, ասէ զԼիկուրգեայ, ի գլոյ ուրեմն ազգեալ, ամբիծեալ զիշխանութի Թագաւորաց՝ ծերակուտին իշխանութեամբ։ Եւ ապա այլ ոմն փրկիչ՝ իշխանութեամբ պարեւանցն քաջ ի կշիռ կալաւ զիմագաւորացն և ծերակուտին զիշխանութիւնս»։ Արդ ո՞ այլ որ էրն փրկիչս այս, զորմէ խօսի Պղտառն, եթէ ոչ Թէոպոմպ։

1 ՅՀ. հաս. գիրք Ե. գլ. 11. հա. 2. էջ 407։
2 Ի Լիկուրգ. հա. 1. էջ 43։
3 ՅՀ. օր. գիրք Գ. գլ. 7. հա. 3. էջ 164։
4 Գիրք Դ. գլ. 1։
5 Ճառ. 56. էջ 565։
6 ՅՀ. հաս. Լակեդ. էջ 683։
7 Եւսեբ. Ժամանակագր. գիրք Բ. էջ 151։ Գրերէ. Քաղագրով. Ժամանակագր. էջ 171։
8 Պլուտ. ՅԱգիս, հա. 1. էջ 808։
9 ՅՀ. օր. գիրք Գ. հա. 2. էջ 691։

Իսկ, զի Երոդա 4 և Պղատոն գտանեալ 2, և Սոսիբիոս ոմն հին մատենագիր 3 համարին ի Լիկուրգեայ հաստատեալ զպատրեստս, ասելի է ըստ Երակղեդեայ պնդեալ՝ որ սակաւ ինչ կրասէ բազդոյն է ժամանակաւ քան զՊղատոն, զի ամենի ի մատենագրաց զամենայն կարգս տեսչութեան սպարտացւոց ընծայէին անխարդ Լիկուրգեայ 4։ Վկայեն այսմ յայտնագոյն Երկրորդն հաստատեալ, զորս ի վերս այսր ասի ի Պղատոնէ։ Դա ինքն և յումեր երորդում Հոգեին 5 ասէ անտահմանաբար, թէ զՏերակլյան և զպարեան կացոյց Լիկուրգոս, ուր ի Հնաս օրինացն 6 մանրապատում առանելով զերսն՝ յայլ և այլոց համարի զերկրորն առանանն հաստատեալ։

Ոչ կասեցուցաներ զնս առասնեար վկայութիւն Սոսիբիոսի, եթէ ոչ զբարվիդն լիներ այնմ Երոդա։ Զասեմ՝ Սարշրմայ 7 թէ վերկակաւ պարէնքն ելեն սպրգեալ ի բնագիր Երոդոտայ, այլ թէ մարդ է զվկայութիւն նորա ընդ այլոց մատենագրացն միաբանել 8։

Երեի իշխանութիւն պարէտայ ի բազում ժամանակաց հետ ելեալ առ ազգս բնակեալս ի Պեղոպոնես, և մանաւանդ առ մեսենիացիս 9, նոցն և առ հին բնակիչս Լակոնիոյ։ քանզի պարէտաք, ի սահմանել Լիկուրգեայ նոր օրէնս՝ յարուցին ընդդէմ նորա ժողովուրդն 10։ Դարձեալ զի Լիկուրգոս գոգցես իմն զ օրինակի սահմանագրութիւնն կրեսուցոյց զիւրն յերբեւրեայ։ արդ կրեսուցոյց էին Կոմոսքն անուանեալ առագաստաւորք, զորս Արիստոտել հաստատել պարէտացն սպարտացւոց 11։ Դարձեալ և բազուտք ի մատենագրաց, զորս յառաջագոյն յիշատակեցի, ոչ ի Թէոպոմպայ սահմանեալ ասեն զիշխանութիւն պարէտացն, այլ ասեմ իշխանութիւն Թագաւորացն եգեալ զայն։ Այսպս յոյժ հաւանելի է, զի Լիկուրգոս եթող իշխանութիւն ինչ պարէտացն՝ որք յառաջագոյն իսկ կային, և Թէոպոմոս յաւել զբարացուցանել զիշխանութիւն նո-

1 Գիրք Ա. գլ. 65։
2 Թուղթ 8. հտ. 3. էջ 354։
3 Դիոգ. լայերտ. գիրք Ա. յոգ. 68։
4 Հերակղիդ. պոնտ. յղ. քաղաքական. նախնի Յունաց, հտ. 6. էջ 2823։
5. Պղատ. Թուղթ 8. հտ. 3. էջ 354։
6 Նոյն հտ. 2. էջ 691։
7 Ժամանակագր. Եգիպտ. էջ 509։
8 Գիրքն Ջատագով. Ժամանակագր. էջ 170։
9 Պոլիբ. գիրք Դ. էջ 273։
10 Պլուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 227։
11 Արիստոտ. յղ. հատ. գիրք Բ. գլ. 10. հտ. 1. էջ 332։

ցա, որով ապա կարդ առաջուն թեանն զառաջաւ 'ի սակաւապէ-
տութիւն։

ԻԳ. Ի ԲԱՆԱ ՎԻՃԱԿՆ ԵՐԻՆԹԻՆԵԼ 'Ի ԼԻԿՈՒՐԳԵՍ։ (էջ 49։)

Պլուտարքոս երիս կարծիս զայսմանէ ածէ։ Ըստ առաջնումն
բաժանեալ Լիկուրգեայ զամենայն կալուածս Լակոնիոյ յե-
րեսուն և ինն հազար վիճակս, յորոց ինն հազարք տուան
բնակչաց Սպարտայ։ Ըստ երկրորդին՝ ոչ ինչ աւելի քան զվեց
հազար վիճակս տուան սպարտացւոց. յորս Պողիդոր արքայ՝
այն որ յետ սակաւ ժամանակի վախճան արար առաջնոյ մեան-
նիական պատերազմին, յաւել 'ի նոսա այլս երեքհազար։ Իսկ
ըստ երրորդին՝ յիններհարիւրոց վիճակաց ասսի զկէսս Լիկուր-
գոս և զմիւս կէսն Պողիդոր ետ սպարտացւոց 1։

Ինձ առաջին կարծիքն ընդունելի թուին. քանզի Պլու-
տարքեայ մատեանս բազում առընթեր ունելով, որ արդ կո-
րուսեալ են, թուի նախադասել զայն. բայց ոչ հերքեմ զայլ-
սն։ Երեի յաւուրս Պողիդորի յաւելուած ինչ լեալ 'ի վի-
ճակսն բաշխեալս սպարտացւոց. զի 'ի հատուած ուրեմն տա-
զից Տիրաէոսի՝ ժողովուրդ Սպարտայ խնդրէ վերատին առնել
բաշխս վիճակաց 2. և ետ պատմի Պողիդորայ յերթալն իւրում
'ի Մեսենիս ասացեալ, թէ գնամ յերկիր չև ետ 'ի վիճակս
բաշխեալ 3։ Եւ դարձեալ, զի աշխարհակալութեամբն Մեսե-
նիոյ յաւելան սպարտացիք 'ի մեծութիւն։

Այս ամենայն բազում խնդիրս զհետ իւրեանց ձգէն. զ-
բովք իմ զանց արարեալ, երկու ինչ 'ի դէպ համարիմ յառ-
նել անյիշատակ, խուսափեալս արդեօք 'ի տեսութենէ եր-
կուց արանց՝ որք եղեն փառք դարուն իւրեանց և ազգին, ա-
սեմ իսկ զԱրիստոտել և զՄոնթէսքիէօ։

Քանզի Արիստոտել ասէ, թէ օրէնսդիրն սպարտացւոց բար-
ուք արար արգելուլ նոցա չվաճառել զվիճակս իւրեանց.
այլ և զայն պարտ էր նմա արգելուլ, զամ նոցա զայնս 'ի կեն-
դանութեան, և ոչ կատակաւ թողուլ որոց կամէին 4։ Այլ ես
ոչկարծեմ՝ թէ Լիկուրգեայ թողացուցեալ էր նոցա զայն. զի
Եպիտագէս պարէս անժառանգել կամելով զորդի իւր, նա
զհրովարտակն զայն ետ հանել՝ զոր Արիստոտել ասդատանէ 5։
Եւ այն իսկ յաճախեմ զզարմանս, զի Արիստոտել ոչ բազում

1 Պլուտ. 'Ի Լիկուրգ. հա. 1. էջ 44։
2 Արիստոտ. յզ. հատ. գիրք Ե. գլ. 8. էջ 396։
3 Պլուտ. առակ. լակոն. հա. 2. էջ 231։
4 Արիստոտ. յզ. հատ. գիրք Բ. գլ. 9. էջ 329։
5 Պլուտ. յԱգիս, հա. 1. էջ 797։

ինչ ժամանակաւ յետոյ քան զԵպիփանէս զսաղմանս զայս գրէ։

Սողոն հրաման եւ եղբօր զքոյր համահայր յայլմէ մերէ առնել կնութեան, այլ զհամամայր յայլմէ հօրէ՝ ոչ եւ։ Արդ Մանթէսբիէս քաջ ցուցանէ, զի Սողոն օրինօքն այնուհետեւ կամեցաւ արգելուլ զնառնուսն երկուց ժառանգութեանց յերկոսին ամուսնութս 1. զի եղբօր ընդ քեռն համամօր և ոչ համահօր ամուսնաւորելով, միւսն մարթէր ժառանգել զառաջին այր մօր իւրոյ. և միւսումն զերկրորդն։ Եւ յաւելու Մանթէսբիէս, զի օրէնքն այն էին ըստ մամի հասարակապետութեանն Յունաց, և հակառակի բանիցն Փիլոնի՝ որ համարի Լիկուրգեայ հրամանն տուեալ ուստեր և գաստեր, որ համամարդ իցեն և ոչ համահարդ, ամուսնանալ ընդ միմեանս։ Եւ առ ի լուծանել զկնդիրն գժուարութենն՝ պատասխանէ Մանթէսբիէս վկայութեամբ Սարաբոնի 2, զի քոյր ի Լակեդեմոն լեալ եղբօր իւրում կնութեան, ածէր յաժիս զկէս վիճակին՝ որ անկանէր եղբօր իւրում։ Այլ Սարաբոն անդ յԵփորեայ վկապրի առեալ՝ զկրտական օրինաց խօսն և ոչ զապարասանութեան։ և թէպէտ զսուտ մեծաւ մասամբ ի Մենոնայ օրինացն համարի առեալ քան նոցին իսկ վկապրի, այլ չէ թէ հարկ՝ զի Լիկուրգեայ և զբէնս զայս, զորմէ մեր բանքս են, առեալ իցէ։ Յաւելումն եւս, զի և զմարթէբ իսկ նմա ի կարգս օրինաց իւրոց սահմանել յաժիս քեռ զկէս ընչից եղբօրն, զի նորա բնաւ իսկ և զաժիսս արգելեալ է։

Բայց թէպէտ և ընկալեալ իսկ էին ի Սպարտա օրէնքն յիշատակեալք ի Սարաբոնէ, այլ նեռ ոչ թուի յայն ակնարկել բանիցն Փիլոնի։ Զի Փիլոն ասէ՝ թէ ի Սպարտա օրէն էր առնել կնութեան զքոյր համամայր և ոչ զհամահայր։ Իսկ Մանթէսբիէս այսպէս մեկնէ զայն. Առ ի խափանել զի մի ինչք ազգատոհմի քեռն անցցեն յազգատոհմ եղբօրն, առնոյր քոյրն յաժիս զկէս ընչից նորա։

Արդ մեկնութիւնս այս երկու ինչ յառաջադրէ. մի զի հարկ էր սահմանել օժիս գուստր, այլ այս հակառակ է սպարտական օրինաց. և երկրորդ՝ զի հրաժարէր քոյրն ի ժառանգութենէ հօրն, առ ի ժառանգել զկէս հայրենի ընչից եղբօր իւրոյ։ Սակայն եթէ միմամբ էր գուստր, հարկ էր նմա ժառանգել զինչս հօրն, և չէր մարթ նմա հրաժարել անտի. իսկ եթէ գոյր նմա եղբայր համահայր, նմա անկ էր ժառանգութիւն. և յամուսնանալ նորա ընդ եղբօր համամօր և ոչ ի նմին հօրէ,

1 Ոգի օրինաց, գիրք Ե։ 2 Սարաբ. գիրք Ժ. էջ 482։ գլ. 5։

չէր ի միջի վանդգ խառնելոյ երկուց ժառանգութեանց ի մի։ Եթէ օրէնքն ի Փիլոնէ ակնարկեալք ի բաժանումն ընչից հաստատեալ էին, ընդ այսոր կնդիրն գժուարութեան ի մէնել զայն բան մասին. զի զոր օրինակ եթէ մոր յառաջնեկ առնէին էր գուսար միոյոր, և յերկրորդէն ուստերք բազումք, մարթէր ասպարէն ամուսնացուցանել նմա զդուստրն ընդ միում ի կուսերգագոյն ուստերացն, որուն ոչ անկանէր ժառանգութիւն։ Այս բան այսմ մարթէր ասպարացուցանել զքոյր համամայր յայլմէ հօրէ ածել կնութեան։ Եթէ Փիլոնի յայս ակնարկիցէն բանք, ոչ ինչ գժուարմամբ ինձ թուին. այլ զոր յաւելուն՝ թէ չէր օրէն ասպարացուցանել զքոյր համահայր յայլմէ մարէ ածել կնութեան, ոչ ևս խմանամ զայն. զի չգտանեմ ինձ բան բաժանման ժառանգութեանց խափան այսր հարատեւաց։

ԻԹ. Վասն հրամանացն ասպարգացոյ տնուանելոյ Կրպտեան.

(էջ 514.)

Զհրամանգացն ասասնոր խօսիմ, որ գտրանակալութիւն թարգմանի սովորաբար, և որ գրեթէ միշտ այլ ընդ այլոց առնեալ չփոթին ընդ հալածանս եղոսացւոց։

Ըստ Հերակղիդեայ պոնտացւոյ որ եկաց սուղ ինչ յետոյ քան զառաքս ուղևորութեան կրտսերոյն Անդրաբատեայ յԵլլադա, և բան Պլուտարքեայ՝ որ յետ սակաւ ինչ գարուց եկաց, ընդ ժամանակս ժամանակս հրամանն լինէր մանկուցն սրբել զմազսն սուսերբաւոր, և ի տուէ ի գարան մանեալ ի մացսոյն՝ գիշերային ի գուրս յարձակել, և սրսիոսկոյ առնել զեղոսացիսն՝ զոր գտանէին զնանապարհսն 1։

Դարձեալ և Արիստոտել ի հատուած ինչ բանիցն՝ պատեալ ի գիրս Պլուտարքեայ՝ ասադգէ, զի պարտեալ յամենալ զեղեսանութիւնն հալածանս ի վերայ եղոսացւոց ազգ առնէին, և օրէն էր ամենեցուն սպանանել զնոսա անպատուհաս 2։ Բայց ինչ ինչ հաւատսի ցոյց հաստատութեան հրամանիս այսորիկ յորինեցան Լիկուրգեայ. այլ և ամենեին իսկ հաւանելի է՝ զի էին ինչ հանգամանք ուղղիչք հրամանին։ Զի չմարթէր ասպարացուցանել հրատարակելաստուգութեամբ պատերազմիցն. ջնեաւոր ի վերայ մարդկան՝ որ մշակէին և ի վարձու ունէին զերկիր նոցա, ոչք զնեաւորէին նոցա ընդ Ծալ և ընդ ցամաք, և ոչք ի թիւս քաղաքացւոց յամենի խառնէին։ Այս գիտաւորութիւն հրամանի պարտեացն էր ազատ կացուցանել ի

1 Հերակղիդ. պոնտա. յՊ. Լիկուրգ. հա. 1. էջ 56։
քաղաքական. նախին Յուն. 2 Պլուտ. ի Լիկուրգ. հա. հա. 6. էջ 2823։ Պլուտ. ի 1. էջ 57։

գատաղարտութենէ զայր սպարտացի, որոյ զոչ յերդուցաց ձախողակի սպանեալ էր։ Եւ իշխանութիւն ունելով զք ի վերայ կենաց և մահու այլոց ուրուք, ոչ է հարկ թէ վարիցի միշտ իշխանութեամբն։

Տեսցուք արդ Նոմա՝ թէ զինչ գործ հրահանգացն այնոցիկ էր, և երկիրդ՝ թէ ինքն Լիկուրգոս օրինագրեաց զհաղածանս եղուսացուց։

Ա. Պղատոն կարևոր համարի [1] ի բարեկարգութիւն պետութեան, զի մանկանն յարբունս հասեալ՝ շրջիցի զերկեամ միւնգ աշխարհն վասն եալ զինու, արհամարհելով զնստութիւն ձմերայնոյ և ամարայնոյ, և խիստ վարելով կեանս ընդ սատիկ կրթանօք։ Եւ յաւելու ասել. Ցինչ անուն և կամիցի որ կոչել զմանկանն զայն՝ կոչեսցէ զնոսա, դարանակալս կամ գարակագէտս, այլ նոքա տեղեկանան վարաց աշխարհին, և ուսանին պահ ունել նմա։ Քանզի դարանակալութիւն առ սպարտացիս միայն վարէր, յայտ է զի Պղատոն զդործս այնորիկ ասասնոր ստուգապատում առնէ։ և առաջիկայ վկայութիւնք, առեալ անդ ասին ի Նոմի Ճառէ 2, սեռերիցայելի զերան կացուցանէ։ Զի մի ոմն ի սպարտացւոց, զոր Պղատոն ի զուգասարութիւն անդր մուծանէ, բարբառի այսպէս. «Էն մեզ դարանակալութեանն հրահանգք քաջագէպք յոյժ յընդելացուցանել մեզ զնստամբերութիւն. հարկ է մեզ բանի գնալ, ընդելանիցուք անձամբ անձին սպառասարել անօգնական ի սարկաց, և այսր անգր ընդ դաշտս արշաւել զայգ և զգիշերկ»։

Միաբանութիւն երկուց այսոցիկ վկայութեանց ակներև կայ ամենեցուն, և զդործս դարանակալաց բացայայտակի ցուցանեն, այլ սակս ինչ զի չիք անդ յիշատակ հաղածանաց եղուսացւոց։ Եւ ոչ դարձեալ ի մատեանն Արիստոտելի՝ որ պահին, և ոչ ի Թուկիդիդեայն, և ոչ ի Քսենոփոնին, ոչ յԻսոկրատայն, և ոչ ի գիրս այլոց մատենագրաց՝ որ ի Նմին դարու կացին, թէպէտ և յիշեին նոքա յաՃախս զուգաստանութեանս և զդասակարութիւնս եղուսացւոց, և բազում ուրեք սոգ տանեն զօրէնս Լիկուրգեայ և զտուրութիւնս սպարտացւոց։ Եւ այնչափ առաւել թուի ինձ սեռերիցայելի պակասանիս այս ցոյց, որչափ զի ոմանք ի մատենագրացս յայտնեալ սեռեիցիք են, և կեցեալք ի հասարակապետութեան՝ որ յոյժ քաջար էր ի վերայ սարկայ։ Որովք ինձ ի գէպ թուի կարծել, զի մինչև ի ժամանակս՝ յորս Պղատոն զՃառն յաղագս օրինաց գրէր՝

[1] Պղատ. յՀ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 765։

[2] Նոյն անդ, գիրք Ա. էջ 633։

դարանակալութեան հրահանգք ոչ յարիւնհեղութիւն եղուսացւոց սահմանեալ էին. այլ էին արշաւանք ինն, յորում մանկանն կրթէր 'ի գործ պատերազմի, ըստ սէր զդաշտավայրս, դարանակալ լինէր զէն 'ի ձեռին, և յարձակեալ գիշերային 'ի թագաւորն՝ հալածէր զեղուսացիս որոց հանդիպէրն։ Թուի ինձ՝ սուղ ինչ յետոյ քան զվախճան Պղատոնի տկարացեալ օրինացն, և յանդգնեալ այնուհետև մանկաւոյն ապանանել զեղուսացիս՝ որք հզօրագոյնս զդէմ ունէին նմա, և թերևս վասն այնորիկ իսկ պարէաք եռուն զհրովարտակն՝ զոր վերագոյն յիշատակեցի։ Եւ օրինազանցութեանն օր ըստ օրէ յաճախեալ, այնուհետև հրահանգք դարանակալութեան խառնեալ շփոթեցան ընդ հալածանս եղուսացւոց։

Բ. Անցցուք արդ յերկրորդ խնդիրն, թէ արդեօք զհալածանս զայս ինքն Լիկուրգոս օրինադրեաց։

Հերակղիդոս պոնտացի ասէ եթէ՝ թէ նորա համարէին օրէնքս այս. այլ ասա կարծեաք եթէ խօսի մատենագիրն, որ կրտսերագոյն իսկ էր ժամանակաւ քան զՊղատոն։ Առաջիկայս ևս վկայութիւն ոչ ինչ առաւել մեծարելի է. զի ըստ Պլուտարքեայ 1, Արիստոտել Լիկուրգեայ համարէր զօրինադրութիւն հրահանգացն դարանակալութեան. և որպէս Պլուտարքոս ըստ մոլորութեան ժամանակին այլ ընդ այլոյ առնուասա զդարանակալութիւն ընդ հալածանաց եղուսացւոց, 'ի գէպ է կարծել՝ զի և Արիստոտել այլ ընդ այլոյ առնոյր զայն։ Այլ այս կասկածանք են միայն։ Անգիտելի է մեզ՝ թէ Արիստոտել անդ բացատրէր արդեօք զգործս դարանակալութեան. և Պլուտարքեայ ոչ առ այլ ինչ թուի ածել զվկայութիւն նորա, բայց 'ի հերքել զայն. զի սուղ ինչ 'ի վայր 2 ասէ՝ թէ սկիզբն դարանակալութեան, որպէս ետս կարծեմ, յոյժ կրտսերագոյն քան զօրէնս Լիկուրգեայ դասանի լեալ։ Պլուտարքոս ոչ միշտ ստուգապատում է 'ի հանդամանս իրաց, և մարթէր ինձ ցուցանել զմոռացութեան նորա վրիպակս յիրիս յայսմիկ յաճախաւորս։ Այսոքիկ են վկայութիւնքն, առ որս պարտ էր ինձ տալ պատասխանի։

Ի քաջ զանազանել զժամանակն, ամենայն ինչ բարուոք միաբանի. զի Արիստոտել զհրահանգս դարանակալութեան 'ի Լիկուրգեայ համարի օրինադրեալ. և Պղատոն զգործս այնորիկ բացատրեալ՝ պիտանի յոյժ համարի զայն։ Իսկ յայլայլել սոլորութեանցն ապարատացւոց, զերծաւ մանկանն հրահանգքն՝ յանագորոյն ոճիրս անկցիսացեալ, որպէս աւանդեն։ Այլ

1 Պլուտ. 'ի Լիկուրգ. հա. 1. էջ 56։

2 Նոյն անդ, էջ 57։

ևս չհաստատեմ զայն, և կասկածեմ իսկ ասելի իմն զերան սուտաբացուցեալ. զի միթէ չգոյր հնար եղծանացոյ խուսափելոյ յերեսաց մանկաւոյն։ Կամ՝ զի սահմանեալ էր ազգեալ ժամանակ գարմանակալութեանն. երկրորդ՝ զի գժուարին էր մանկաւոյն սփռել գազար ընդ երկիր խառնեալ եղծանացուցեալ, որք զգուշացոյնս գէտ կային նոցա. և երրորդ՝ ոչ ինչ նուազ գժուարին էր սպարանացոյց իւրաքանչիւր, որք յարգեանց երկրի ի բերանց կէնին, չառնել ազգ եղծանացոյ որոց զերկիր իւրեանց առեալ էր նոցա ի վարձու, զմանդն՝ որ հասեալ կայր ի վերայ նոցա։ Որովք մարթէր եղծանացոյց ամրացեալ կալ ի տունս իւրեանց զգայլ, և թողուլ մանկաւոյն առնել զչիշանս իւրեանց։

Ի գէպ համարեն ցայ տեղեկութեամբս այսուիկ տալ զպատճառս, վասն որոյ այնպէսն բացատրեցի զդարմանակալութիւնն ի գիրս յայս. զի ինձ աւելորդ թուի՝ չարագոյնքան զոր ենն ցուցանել զմարդիկ, և հաստատեալ առանց հաստատեաց՝ անդգուութիւնս հանձարեալ օրէնսգրին սահմանեալ։

ԻԵ. Յաղագ ընդդէմ-ելեալ հաւրն սա սպարանոյն։ (էջ 515։)

Աղյաղգ ի միմեանց առանձնացեալ մանանեագիրքք զատնորութիւնս ազգաց Եգիպտոս. զի ըստ փոփոխել ժամանակաց՝ փոփոխեցան և սովորութիւնք։ Հաբատանիք ի Սպարտա բան ընդարութեան ամուսնաց կամ ծնողաց նոցա կատարէին, որպէս Թուխ. զի ահա Լիւանդրը նախ քան զմեռանել իւր՝ եւ զերկոսին գտեալ իւր երկուց տնանց սպարտացոց կնութեան 1. և օրէնք իսկ պարտաւոր առնէին տանէի զանպտաղամ հաբատիս 2։ Սակայն ըստ Երմիպպեայ 3 ասիցին հին մանանեագրի, փակեին ի խաւարի զորիորդս հաբտնացուս, և որ ի նոցանէ իւրաքանչիւր ումիք ի մանկաւոյն հանդիպէրն՝ զնա առնոյր կնութեան։ Սա. ի միաբանել զաւանդութիւնս զայսոսիկ, մարթի կարծել զի Լիկուրգեայ այնպէս օրինագրեալ էր, որպէս և աւանդէ Երմիպպոս, և զի յետոյ փոխեցին սպարտացիք զսովորութիւնն։ Զնոյն և Պղատոն ի հասարակապետութիւնն իւր յեղանակաւ իմն մուծանէ 4։

1 Պլուտ. ի Լիւս. հա. 1. էջ 451։
2 Նոյն անդ։
3 Երմիպպ. առ. Լաթին.
4 Պղատ. յՂ. հատ. գիրք Ե. հա. 2. էջ 460։
գիրք ԺԳ. էջ 555։

Ի՛Զ. Թէ յոյժ փոքր ուղղութիւն էր ամուսնանալ՝ ի Սպարտա։
(էջ 515։)

Զվաղամուսնութիւն վասնզի կանուխ ծանեան զոյնք։ Էսիոդ 1 ոչ յոյժ կրասէր քան զբնութեամբն ինդրէ մնել փեսային. իսկ հարսին զշնորհ տասանամեայն երեւի սահմանել սիս, թէ՝ պէտ և մինին է բնագիրն։ Պղատոն՝ ի հասարակապետութեանն եւրում 2 սահմանեալ արանց յերեսնամենի և կանանց՝ ի քսանամենի ամուսնանալ։ Արիստոտել 3 ասս իբր երեսուն և եօթն սահմանեալ արանց, և կանանց իբր ութսուն։ Ինձ թուի զի՝ ի Սպարտա արանց յերեսնամենի, և կանանց՝ ի քսանամենի սովորութիւն էր ամուսնանալ, պատուպարան կարծեացս այսոքիկ երկուս ունելով պատճառս։ Մի՝ զի Պղատոն, որ բազում ինչ յորինայն Լիկուրգեայ՝ ի կիր առնու, զնոյն սահմանեալ ասս սիս. և երկրորդ՝ զի էր օրէն ապարտացւոց, մինչև չեւ լեալ երեսուն ամաց. յառաջ բերել զկարծիս եւրեանց՝ ի համախուռմբ Ժողովս 4. յորմէ երեւի՝ թէ նախ քան զայն չհամարէին՝ ի ամուսնութեան։

1 Էսիոդ. գործք և տիւք, տող 695։
2 Պղատ. յՀա. գիրք Ե. հա. 2. էջ 460։
3 Արիստոտ. յՀա. գիրք Է. գլ. 16. հա. 2. էջ 446։
4 Լիբան. Նախադր. պատասան. 24. էջ 558։

Էջ.	Տող.	Գիրքն	Ուղիղ.
20	7	ցնծութիւն	Թախծութիւն
78	17	կիւթացիք	սկիւթացիք
148	21	ոսա գափնոց և՛ ձեւին	ոսա գափնոց՝ ի՛ ձեւին
174	7	փակիչնն	փակիչնն
207	23	՚ի սարգենեաց հովանն	՚ի սարգենեաց հովանն
220	21	՚ի ՃարՃատաբեն	գՃարՃատաբեն
265	10	իւրոց	իւրեանց
289	18	կառուցեալ բայ	կառուցեալ կայ
312	6	սիրագուսացուց	սիրակուսացուց
344	14	Գանաեւս	անեաեւս
404	15	Թոռանց	Թոռանցն
415	8	զպաշտամունս.	զպաշտամունս՝
444	8	քաղաղացիք	քաղաքացիք
488	14	բաժանել	բաժանեալ